ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՄՍԱԳԻՐ

HAIRENIK MONTHLY

© National Library of Armenia OCR by Portmind

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
ԽՄԲ.— Քառանուիրեալ մը	1
ՏՕԲԹ. Ն. Տ. Ս. ԹԱՇՃԵԱՆ.— «Հայրենիք» եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը Ամերիկայի մէջ	4
ՓՐՕՖ. Յ. Յ. ՉԱԿՄԱԿՃԵԱՆ.— «Հայրենիք» եւ իր Աշխատաւորները	17
Յ. ԱՄԱՏՈՒՆԻ.— «Հայրենիք»ը 1901-ին	35
Մ. ՍԱՆՏԱԼ.— «Հայրենիք»ի Տպարանը	37
Ա. ՇԻՐՎԱՆԶԱԴԷ.— Օտար Վայրերում	39
ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ.— Սասդի Վերջին Գարունը	59
ՀԱՄԱՅՏԵՂ.— Երնէ՛կ Այն Օրերուն	62
ԹԱՅԱԼ ՉԱՐԴԱՐԵԱՆ.— Դու կը մերժե՞ս	67
Phenix.— Անցորդները	68
Վ. ՄԵԼՈՅԵԱՆ— Դաւոթ Դաւառանութիւնը	70
ԵՂԻԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ.— Կտակ	81
Phenix.— Օրհնեմ	81
ԹԱՅԱԼ ՉԱՐԴԱՐԵԱՆ— Ամոան Երեկոյ	81
ԼՈՒԻԶԻ ՄԻՆԱՍ.— Յոբենը	81
ԱՐՍԷՆ ԵՐԿԱՔ.— Վերադարձ	82
Կ. ԷՕՔՍԻԼՉԵԱՆ.— Անցեալը	83
Յ. ՓԱՇԱՇՆԻՍԼԻ— Ապր եւ Հայրենիք	83
ԱՐՄԷՆ ԳԱՐՕ.— Ապրուած Օրեր	102
Մ. ՇԱՔԻՐԵԱՆ— Դրուագներ Մասիկ Անցեալից	11.
ԱՅԱՏՈՒՐ.— Աբեմն Գալս	121
ԴԻՈՐԴ ՄԵՍՍԻՊ.— Հայերը Աբեւելքի Մէջ	132
ԱՐՏԱՇԷՍ ԱՆԴԵԱՆ.— Դաշնագրեր	149
ԱՐՍԷՆ ՄԻՔԱԷԼԵԱՆ.— Ղարաբաղի Վերջին Դէպքերը	156
Ռ.— Հայ Յեղափոխականի մը Յիշատակները	167
Ն. ՀԱՆԴՈՅՑ.— Լեւոն Թազէոսեանի Յուշերը	176
ԱՐԱՄ.— Յուշեր	188
Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ.— Հայ Բազարական Մարի Դէպքերը	201

ԳԻՆԸ ՄԷԿ ՏՈԼԱՐ

© National Library of Armenia

Ահարոն - Վերիկ Թաղաեան

ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՄՍԱԳԻՐ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 7 — ՄԱՅԻՍ 1923 MAY — VOL. I, No. 7

ՔՍԱՆԵՒՀԻՆԳԱՄԵԱԿ ՄԸ

Մեր ամսագրին այս թիւը բացառիկ ծաւալով լոյս կը տեսնէ եւ նուիրուած է «*Հայրենիք*»-ի քսանեւհինգամեակին, աւելի ճիշդը՝ 25-րդ տարեմուտին:

«*Հայրենիք*» իր ետեւ ունի արդէն գրեթէ քառորդ դարու պատմութիւն մը, որ, թէեւ հեռաւոր գաղութի մը մէջ կատարուած, բայց ա՛յնքան անբաժանելիօրէն սերտ ու ջերմ կերպով կապուած է մայր երկրի հայ ժողովրդի դիւցազնական պայքարին հետ, միշտ հարազատ եւ խորունկ արձագանգն ըլլալով անոր սքանչելի խոյանքներուն, խանդավառ յոյսերուն, 'ուրբնցնող յաղթանակներուն, ահաւոր աղէտներուն ու ցնցող պարտութիւններուն:

Գրեթէ քառորդ դար մը «*Հայրենիք*» ապրեր է անձկութեամբ եւ նուիրածօրէն ոչ այնքան ամերիկահայ գաղութին կեանքով, որ միշտ նկատուեր է անցողական, ժամանակաւոր երեւոյթ մը, որքան մայր հայրենիքի մէջ ապրող ու տանջուող հայութեան հերոսական ճիգերով դէպի ազատութիւն:

Ճակատագրի քմահաճ բերումով, որուն մէջ ա՛յնքան դառն հեգնանք կայ, այս հեռաւոր բազոյն գաղութը քսանհինգ տարիներու ընթացքին մեր ազգային կեանքին մէջ խաղցած իր անշուք ու անշնչան դերէն հետզհետէ դուրս գալով, այսօր սկսած է դառնալ առաջնակարգ ազդակ մը բովանդակ հայ իրականութեան մէջ՝ ոչ միայն իր նիւթական պատկառելի միջոցներով, այլ եւ իր բարոյական ծանր կշիռով:

Տաճկահայաստանը՝ աւերակ ու գրեթէ դատարկուած հայութենէ, Կովկասահայաստանը՝ տաժանելի ռեժիմի մը տակ, որ կը ջանայ մեռցնել հայ ժողովուրդին մէջ ազատութեան ամէն տենչ, անկախութեան ամէն ձգտում ու խեղդել ամէն ազատ խօսք, ճգմել ամէն անկախ միտք, եւ վերջապէս աշխարհի չորս կողմը ցրուած մէկ միլիոնի չափ տարագիր հայութիւն մը, որուն խոշոր մասը, կիսամերկ ու անօթի, հանգիստ անկիւն մ'իսկ չունի իր յոգնատանջ գլուխը դնելու համար,— ահա այն մահասարսուռ ողբերգութեան տխուր պատկերը, որ մեր ազգի արդի վիճակը կը ներկայացնէ եւ որ խեղդող մղձաւանջի մը պէս չոքած է այսօր մեր բոլորիս հոգիին վրայ:

Ամէն տեղ հայուն համար անստոյգ ու անապահով կացութիւն. ամէն տեղ նիւթական անանխնութեաց կարիք, քայքայուած տնտեսութիւն, փախստականներու ահռելի բազմութիւններ, որոնք աւելի եւս կը խանգարեն թէ՛ կովկասեան եւ թէ՛ գաղութային հայերու սովորական կեանքը. ամէն տեղ յուսալքում ու բարոյալքում. ամէն կողմէ օգնութեան աղիողորմ աղաղակներ,— ահա այն ճնշող իրականութիւնը, որուն առջեւ գրեթէ յուսահատ շրջարումի մէջ կանգնած է այսօր ամերիկահայ գաղութը. այս ամենէն «բախտաւոր» մասը հայութեան:

Աւելի մխիթարական չէ պատկերը ե՛ւ ազգային մշակոյթի, լուսաւորութեան տեսակէտով:

Հայութեան երկու խոշոր հատուածներուն մտաւոր կեդրոնները՝ Պոլիսն ու Թիֆլիսը, որոնք գրեթէ ամբողջ դար մը հայկական մշակոյթի գլխաւոր որբանոցներն եղան, վերջին տարիներու ընթացքին տեղի ունեցած վերիվայրումներու հետեւանքով կորսնցուցին իրենց

21452-ԱՀ
29-2005
© National Library of Armenia

նախկին գերիշխող դիրքերը. հոն հաստատուած հայ մտաւորականութիւնը ոչնչացաւ, խեղդուեցաւ կամ ցրուեցաւ:

Վերջին դարու ամբողջ տեւողութեան ընթացքին հայութեան երկու կարեւորագոյն հատուածները երբեք այնպէս *միաժամանակ* ճգմուած չեն եղեր փիզիքապէս ու մտաւորապէս, որքան այժմ, այս մռայլ շրջանին մէջ: Յարական ռեժիմի ամենավատթար օրերուն անգամ հայութեան միտքը երբեք այնքան սպանիչ կերպով կաշկանդուած չէ եղեր, որքան այժմ: Ազգային ազատ միտքը, խօսքը եւ ստեղծագործութիւնը այսօր վտարուած են մայր հայրենիքի սահմաններէն հեռու, անմատչելիօրէն հեռու: Ճիշդ է, Թիֆլիսն ու Պոլիսն ալ գաղութներ են եղած Հայաստանի եւ հայ ժողովրդի համար, բայց եւ այնպէս այնքան մերձաւոր գաղութներ թէ՛ աշխարհագրօրէն եւ թէ՛ քաղաքականօրէն, որ դիւրութամբ կրցեր են միշտ անմիջական ու սերտ կապ պահպանել մայր երկրի հետ եւ տիպական կերպով ազդել հայրենի հողին կառչած հայութեան մըշակոյթին վրայ:

Կացութիւնը այժմ դժբախտաբար հիմնովին փոխուած է: Հայաստանի մէջ ապրող ժողովուրդը բացարձակապէս կտրուած է արտասահմանեան այն հեռաւոր գաղութներէն, որոնք իրենու բերումով — գէթ ժամանակի մը համար — կը դառնան լոյսի եւ յոյսի փարոսներ բովանդակ հայութեան համար: Հայաստանի այսօրուան տէրերը չինական պարիսպներով են շրջապատած մեր մայր երկիրը, որպէսզի լոյսի եւ ոչ մէկ նառագայթ հասնի անոր մէջ տանջուող ու պայքարող մեր ժողովուրդին: Եւ այսպէս ստեղծուած են երկու տարբեր, իրարմէ գրեթէ կտրուած աշխարհներ, որոնց փոխադարձ կղզիացումը եւ օտարացումը զինու զօրութեամբ եւ ահուսարսափի միջոցով կը ջանան յաւերժացնել մեր ազգի ազատութեան ու անկախութեան անհաշտ թշնամիները:

Այս անբնական կացութիւնը անչափելի վնասներ կը հասցնէ բովանդակ հայութեան. որովհետեւ ազատ ու կենդանի շփումի եւ կապի պակասը, գրեթէ բացակայութիւնը երկրի ու արտասահմանեան գաղութներուն միջեւ կը զրկէ երկրի մէջ բանտարկուած ժողովուրդը դրսի աշխարհի բարոյական ու նիւթական ազատ միջոցներէն եւ մասնաւորապէս ազատ մտքի բեղմնաւոր ներշնչումէն, իսկ գաղութները՝ մայր հայրենիքի թարմացնող ու հարազատ շունչէն, որ ա՛յնքան անհրաժեշտ է օտարացման վտանգին ենթակայ արտասահմանեան հայութեան համար:

Հակառակ սակայն երկրի եւ արտասահմանի միջեւ ստեղծուած այս արհեստական ու գրեթէ անմատչելի պատերուն, Հայաստանի մէջ ապրող մեր դժբախտ ժողովուրդը այսօր աւելի, քան երբեք իր աչքերը յառած է դէպի հեռաւոր գաղութները, որոնցմէ ամէն տեսակի օգնութիւն կը սպասէ իրեն համար: Ինչպէս Սուլթան Ապտիւլ Համիտը իր կիրառած արիւնոտ միջոցներով անկարող եղաւ կտրել մեր մայր երկիրը արտասահմանէն, որ անհերեւակայելի ճանապարհներով դարձեալ միշտ հնար կը գտնէր ազդելու դժոխքի մէջ գալարուող մեր ժողովուրդի հոգիին վրայ, այնպէս ալ այսօր, կարմիր Սուլթանէն ա՛յնքան շատ բան իւրացուցած կարմիր բոլշեւիկները իրենց բոլոր կատարելագործուած դաժանութիւններով ու դիւային հնարագիտութիւններով անզօր են բոլորովին փակել արտասահմանի հայութեան ազատ ու ազատատենչ մտքին ներթափանցումը դէպի երկիր:

Եւ իրենք՝ այդ բարբարոս իշխանաւորներն անգամ հարկադրուած են այսօր հաշուի առնել գաղութներու ձայնը, ուշի ուշով հետեւիլ անոնց ներքին կեանքին ու մամուլին եւ ջանալ բոլոր տրամադրելի միջոցներով թունաւորելու անոնց կորովի միտքն ալ, կասեցնելու համար անոնց ազատարար նիգերը, որոնց հեռաւոր արձագանգն իսկ ոյժ կուտայ երկրի հայութեան:

Եւ ի՞նչ կայ զարմանալի, որ մեր ազգի դահիճներու աչքի ամենէն մեծ փուշն է դարձած այսօր ամերիկահայ գաղութը՝ արտասահմանի հայութեան այս կարեւորագոյն կեդրոնը եւ երկրի հայութեան յոյսի այս փարոսը:

Քաղաքական փոքրոքիկներէ եւ տնտեսական քայքայումներէ զերծ մնացած այս խոշոր գաղութը, այո՛, արդէն այնպիսի պատկառելի ոյժ մըն է, որ չի կարող անհանգստութիւն չպատճառել մեր թշնամիներուն եւ յոյս չներշնչել մեր ժողովուրդին:

Ամերիկահայ գաղութի յարաճուն դերին

© National Library of Armenia

զգալապէս կը նպաստէ նաեւ այն մեծ փոփոխութիւնը, որ տեղի է ունեցած Ամերիկայի միջազգային դիրքին մէջ, համաշխարհային պատերազմէն յետոյ:

Ոչ միայն հայութեան, այլ եւ ամբողջ աշխարհի կեանքի մէջ Ամերիկան գրաւած է անանախընթացօրէն բացառիկ տեղ մը: Մինչ Հին Աշխարհը պատերազմներու եւ եղբայրասպան կռիւներու միջոցով քայքայուած, սպառած է սերունդներու աշխատանքով ամբարուած իր հսկայական հարստութեան մեծագոյն մասը, Ամերիկան՝ փոքրրիկներու արիւնոտ վայրերէն հեռու՝ կրցած է պահպանել եւ կուտակել իր մօտ համայն մարդկութեան դրամագլուխի կէսէն աւելին, որով հիմնապէս շրջեր է ի նպաստ իրեն միջազգային ոյժերու փոխյարաբերութիւնը:

Մասնաւորապէս մեզ՝ հայերուս համար անհամեմատ աւելի կարեւոր, եթէ չըսենք՝ բախտորոշ նշանակութիւն ունի այն դերը, զոր Ամերիկա կատարեց Մերձաւոր Արեւելքի մէջ 1918 թ. ի վեր եւ դեռ պիտի կատարէ ասկէ վերջն ալ անտարակոյս:

1918–19 թուականներուն, Ամերիկան իր հացով փրկեց Կովկասի հայութեան մէկ խոշոր մասը սովամահութենէ: 100,000-է աւելի հայ որբեր խնամելով ու մեծցնելով, Ամերիկա կը պատրաստէ հայ երիտասարդ սերունդ մը, որ քանի մը տարիներ ետքը թերեւս տիրական ազդեցութիւն (գէշ թէ լաւ) պիտի ունենայ մեր ազգային կեանքի ընթացքին վրայ: Անչափելի են նոյնպէս նախագահ Ուիլսընի քաղաքական գործին (դրական թէ բացասական) հետեւանքները մեր ազգի ներկայ վիճակին եւ ապագայ զարգացման համար:

Գաղափարապաշտ Ուիլսընիներու ծրագրած «մարդասիրական» կամ «քաղաքակրթական» մանտատները չյաջողեցան, բայց անոնց ետեւէն ահա կ'երթան աւելի գործնական Զեսթրրները, որոնք արդէն ոչ հայերու, այլ թուրքերու հրաւէրով կը պատրաստուին մտնել մեր պատմական հայրենիքը՝ անանախընթաց յեղաշրջում մը առաջ բերելու համար անխուսափելիօրէն անոր տնտեսական, ընկերային, քաղաքական ու քաղաքակրթական կեանքին մէջ: Եւ մինչ Ռուսիա ու Անգլիա կը մրցին իրարու հետ եւ իրարու ոտքի տակ հոր կը փորեն, մէջտեղէն փառաւորապէս կ'օգտուի «չէզոք» Ամերիկան, որ իր հսկայավիթխար դրամագլուխներու ոյժով կը ջանայ խաղաղ ներթափանցում մը կատարել Մերձաւոր Արեւելքի մէջ:

Բայց ո՞վ կրնայ երաշխաւորել, թէ դրամատէր Զեսթրրներու ետեւէն օր մը Զօրավար Փըրշինկները չպիտի հարկադրուին երթալ դէպի Անատոլու՝ կարգ եւ խաղաղութիւն հաստատելու համար հոն ամերիկեան դրամագլուխի համար: Եւ եթէ մարդասիրական, բարեգործական, որբախնամ, կրթական ու կրօնական հիմնարկութիւնները պաշտպանելու համար ամերիկեան զօրավարները կը դժուարանան տեղերնէն շարժուիլ, դրամատիրական մեծ ձեռնարկները ապահովաբար պիտի ունենան ամերիկեան բանակները շարժելու համար անհրաժեշտ ոյժը:

Անկասկած Ամերիկան դեռ իր վերջին խօսքը ըսած չէ Մերձաւոր Արեւելքի մասին, ուր թաղուած են այնքան մեծ հանքային հարստութիւններ ամէն տեսակի: Ուիլսընիներէն աւելի Զեսթրրները երաշխիք մըն են, թէ Ամերիկան օր մը իր հսկայ հասակով պիտի կանգնի հոն եւ իր կամքը ջանայ քալեցնել տիրաբար:

Այսպիսի մեծ պետութեան մէջ ապրող հայկական խոշոր գաղութի մը բնականաբար վերապահուած է շատ կարեւոր դեր մը մեր ազգային յետագայ զարգացման մէջ: Իսկ գաղութային կեանքի ամենէն ազդեցիկ գործօններն են քաղաքական կուսակցութիւնները եւ մամուլը: Մեր ժամանակի ազգային ինքնապահպանման եւ ինքնապաշտպանութեան ամենէն հզօր կեդրոնաձիգ ոյժերն են անոնք անկասկած, ինչպէս էին մինչեւ ասկէ քառասուն տարի առաջ մեր եկեղեցիներն ու վանքերը:

Անվիճելի իրողութիւն է, որ եթէ հայութիւնը գաղութներու մէջ կը պահպանուի, իբրեւ այդպիսին կը զարգանայ ու պիտի զարգանայ, ատիկա շատ խոշոր չափով արդիւնք է այն կազմակերպուած ու նպատակագիտակից աշխատանքին, զոր տասնեակ տարիներէ ի վեր կը թափեն մեր քաղաքական կուսակցութիւնները եւ մասնաւորապէս ամենէն շինարարը, ամենէն կենսունակը անոնց մէջ՝ Հ. Ց. Դաշնակցութիւնը:

Ամբողջ քառորդ դար մը գործեր է այս հերոսական գաղութին մէջ Հ. Ց. Դաշնակցութիւնը

© National Library of Armenia

եւ ո՞րքան մեծ նուաճումներ է կատարեր: Տասնեակներէ սկսելով՝ ան այսօր հաւաքած ունի իր շուրջը տասնեակ հազարաւոր անդամներ ու համակիրներ, որոնք հայ ազգի ազատագրութեան համար տուած են հարիւրաւոր ընտիր մարտիկներ, գաղափարական գործիչներ եւ միլիոնաւոր տոլարներու հասնող ելուէներներ:

Ապագայ անաչառ պատմութիւնը միայն պիտի կրնայ պարզել, թէ վերջին տարիներու ընթացքին որպիսի նախախնամական դեր կատարած է ու կը կատարէ տակաւին ամերիկահայ գաղութը ընդհանրապէս եւ Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի շրջանի կազմակերպութիւնը յատկապէս մեր ժողովրդի ինքնապաշտպանութեան եւ ազատութեան գործին մէջ: Եւ ասոր մէջ անտարակոյս «Հայրենիք» մեծ բաժին մը ունի:

Ահա թէ ինչու իրաւունք ունինք ըսելու, թէ «Հայրենիք»ի խանիինգամեակը ոչ միայն կուսակցական եւ տեղական տօն մըն է, այլ համազգային ու համահայկական:

"ՀԱՅՐԵՆԻՔ" ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Գրեց՝ ՏՕՔԹ. Ն. Տ. Ս. ԹԱՇՃԵԱՆ

ԵՐԲ կը ծրագրեմ իմ մասնակցութիւնս բերել «Հայրենիք»ի ներկայ բացառիկին, մտքիս առջեւ կը պարզուի անցեալ քառորդ դարու ամբողջ շրջանը, իր յոյսերով, պատրանքներով եւ փոթորիկներով:

Անկարելի է խօսիլ կամ գրել «Հայրենիք»ի կատարած գործի մասին, առանց գոնէ անցողակի կերպով անդրադառնալու ազգային-յեղափոխական այն բոլոր շարժումներուն, որոնք արձանագրուած են մեր գաղութի աւագ օրկանին մէջ եւ որոնց լուսաբանողն ու վերլուծողն է եղած ան ամբողջ քսանըչորս տարի: Եւ երբ այս աշխատանքին ձեռնարկենք, արդէն ինքնաբերաբար խօսած կ'ըլլանք Հ. Յ. Դաշնակցութեան հետապնդած նպատակին եւ անոր կատարած գործին վրայ, որովհետեւ այսօր պարզ է այլեւս ամէն հայի համար, որ այդ շրջանի գրեթէ միակ գործօն ուժն է եղած Դաշնակցութիւնը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, տեղաւորուելէ ետք Երկրին մէջ, սկսած էր նաեւ ունենալ իր օժանդակ մարմինները արտասահմանի մէջ — Պուլկարիա, Եգիպտոս, Ամերիկա եւ այլուր:

Հնչակեան կուսակցութիւնը, որ սկսած էր կորսնցնել իր ոտքին տակի հողը, աստիճանաբար տեղի կուտար, համեմատաբար զօրաւոր դոյութիւն մը պահպանելով տակաւին արտասահմանեան հայ գաղութներու մէջ եւ արագելք հանդիսանալով նոր կազմակերպութիւններու ծաւալումին:

Հոսանքը սկսած էր, սակայն, եւ անոր առջեւ կանգնեցուած արհեստական թումբերն անկարող էին կասեցնելու անոր ընթացքը:

Ամերիկայի Դաշնակցական շրջանակի առաջին գործիչ Վահանեանի եւ տեղական ուժերու ջանքերուն շնորհիւ կը կազմակերպուի Դաշնակցութիւնը 1896-ին:

Հայ յեղափոխական կեանքի փոթորկոտ մէկ շրջանն է այդ, որովհետեւ ճիշդ նոյն թուականին Հնչակեան կուսակցութիւնը կը պառակտի:

Դաշնակցական նորակազմ մարմնին համար խոստմնալից, բայց բաւական դժուարին ասպարէզ մըն էր Ամերիկան, ուր Հնչակեան կուսակցութիւնը կ'ուզէր միահեծան:

Հ. Յ. Դ. կոմիտէները կը սկսին կազմուիլ գաղութի զանազան կեդրոններուն մէջ. յաջորդաբար կը կազմակերպուին Լովելի, Փրավիդենսի, Լորէնսի, Լինի, Պոսթընի, Ֆիլատելֆիի, Նիւ Եորքի, Սաէմֆրտի, Ռուտրի, Թրոյի եւ այլ կոմիտէները, եւ հրապարակային ժողովներու բեմէն կը հնչէ Դաշնակցական փրոփականտի խօսքը:

Բեմը բաւական չէր, սակայն. յաջողապէս

© National Library of Armenia

պայքարելու համար կղերա–պահպանողական եւ հնչակեան հոսանքներուն դէմ, անհրաժեշտ էր ունենալ նաեւ թերթ: Դիմում կը կատարուի Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրոին, որ գոնէ տառերով օժանդակէ Ամերիկայի չրջանակին համար կիսապաշտօնական օրկան մը հրատարակելու: Դիմումը կը մերժուի: Ամերիկայի նոանդուն ընկերները չեն յուսահատիր այդ մերժումէն եւ կ'որոշեն իրենք իրենց միջոցներով սկսիլ թերթի մը հրատարակութեան եւ այդ նպատակին համար կը կազմեն «Հրատարակչական Ընկերութիւն» մը:

Այդ օրերուն կը գումարուէր Ամերիկայի Դաշնակցական չրջանակի Պատգ. Ժողովը: «Հրատարակչական Ընկերութեան» մէջ գտնուող ընկերներու ոմանց ջանքերով, Պատգ. Ժողովը անպաշտօն կերպով նկատի կ'առնէ թերթ հրատարակելու խնդիրը եւ կը յանձնարարէ կեդր. Կոմիտէին հարիւր տոլարի բաժին դնել «Հրատ. Ընկերութենէն»: Այս հարիւր տոլարին վրայ կ'աւելնայ անհատ ընկերներու նուիրատուութիւնն ալ եւ կը գոյանայ 2–300 տոլարի դրամագլուխ մը, որով կը սկսուի «Հայրենիք»–ի հրատարակութեան 1899 մայիս 1–ին:

Այս փոքրիկ դրամագլուխը հարկաւ անկարող պիտի ըլլար ապահովելու այս ձեռնարկին յաջողութիւնը, եթէ նուիրուած ընկերներ զանազան կեդրոններու մէջ իրենց նիւթական, բարոյական եւ ֆիզիքական զոհաբերութիւնները գործին ի սպաս չդնէին: Հոս թոյլ տանք, որ խօսի «Հայրենիք»ի անդրանիկ խմբագիր ընկեր Թ. Զարչաֆեան:

> «Նիւ Եորքի Դաշնակցական կոմիտէին կը պատկանի նախաձեռնութեան պատիւը. այսինքն, հերոս Վարդ Մանուչակին, աշխատակից ընկ. Մինասեանի, միջոց Դաշնակցական Ֆէրահեանի, սիւներէն մին — Պաղտասար աղբօր «Դրամատէր» եռանդուն Զախարիին, Տ. Քիւփէլեանին: Դացէք Փրավիդենս աշխատակից Մարկոսին, մելամաղձիկ Թ. Ճէլալեանին, զուարճախօս Նազարէթին, ողբացեալ Ալանին:
>
> Մոռէք Հէյվրհիլ, «Կարմիր» Կարօին, Լոէնս Ի. Գալուստեանին, Ճըրզիի բարձունքը՝ Ալիֆունարեանին, Գալիմբարին, Գոյամեանին եւ Պամամեան եղբայրներուն. Սոմֆիրա՝ զարձունեայ Զաղմաղեանին, Գէրպէրեանին եւ քանի մը ակամայ մոռցուած ընկերներու նիւթական, ֆիզիքական եւ բարոյական ծայրայեղ զոհաբերութեանց արդիւնքն է «Հայրենիք»ի ծնունդը եւ նախնական չրջանին ապրելու յաջողութիւնը»:

«Հայրենիք»ի առաջին դրասենեակը եւ գրաչարատունը կ'ըլլայ 628 Third Ave., դերձակ Պն. Ղումրիկեանի խանութին ետեւի կողմը, անչուք սենեակ մը՝ ուրկէ ան հետեւեալ կերպով կը պարզէ իր ուղղութիւնը.—

> «Բարոյապէս ոգեւորուած, նիւթապէս քաջալերուած, խումբ մը երիտասարդներ կազմեցինք «ՀԱՅՐԵՆԻՔ»ի հրատարակչական ընկերութիւնը եւ խմբագրական մարմինը եւ այսօր կը հրատարակենք «ՀԱՅՐԵՆԻՔ»ը սա որոշ ու կտրուկ ուղղութիւնով եւ ծրագրով, թէ, անիկա, յաւէտ պիտի նուիրուի զարգացնելու տեղական հայերուս միտքը, պիտի ազնուացնէ մեր սրտերը ու անշահախնդիր ու անկողմնակալ ուղղութիւնով մը, անկեղծ քննադատական ոգիով մը, պիտի առաջնորդէ տեղական հանրային գործերը:
>
> Անցողակի ըսինք արդէն, բայց չատ հասկընալի լեզուով եւ խոշոր տառերով ալ յայտարարելու ենք թէ, «ՀԱՅՐԵՆԻՔ»ը ՈՐԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԿԱՆԸ Չէ: Եւ ասկէ չի հետեւիր թէ հակայեղափոխական եւ հակակուսակցական օրկան մըն է մեր թերթը»:

Ծանօթ ըլլալով «Հայրենիք»ի հրատարակութեան ներքին մանրամասնութիւններուն, գիտնալէ վերջ, թէ ան ընկերներու եւ Հ. Յ. Դ. կեդր. Կոմիտէին կողմէ ղրուած դրամագլուխովն է որ իրականութիւն դարձած է, ինծի համար անբացատրելի կը մնայ ուղղութիւնը ղծող խմբագրականի այն մասը, ուր անհրաժեշտ կը սեպուի չեշտել թերթի «ՈՉ–ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ» հանգամանքը: Մէկ բացատրութիւն միայն կարելի է տալ.— կազմակերպական աշխատանքի մէջ տակաւին իրենց անփորձ ըլլալը եւ այն օրերու սուր պայքարը Դաշնակցութեան դէմ: Առժամապէս ծածկելով «Հայրենիք»ի իսկութիւնը, թերթին տալով չէզոք հանգամանք, ընկերները խորհած են թերեւս դիւրացնել անոր մուտքը եւ ծաւալումը մեր գաղութին մէջ՝ ազատելով զայն «հաւատաքննական հալածանքէ»:

Երկար չի տեւեր, սակայն «Հայրենիք»–ի անկուսակցական հանգամանքը, որովհետեւ անոր մէջ հետզհետէ արծարծուած հարցերու լուսաբանութենէն կը սկսի երեւիլ արդէն թերթի իսկական դէմքը: Թ. Զարչաֆեանէն եւ Միհրան Մինասեանէն զատ, որոնք յաջորդաբար կը վարեն թերթին խմբագրութիւնը, հրապարակ կուգան Լէօ (Արմենակ Լեւոնեան), Բարկէն, Ճէլալեան, Արզումանեանց եւայլն, որոնք կը քրքրեն կուսակցական հարցեր՝ յայտ-

© National Library of Armenia

նապէս երեւան բերելով Դաշնակցական տեսակէտները:

Վռամեանի Ամերիկա գալով, արդէն աւելի կը պարզուի «Հայրենիք»ի դիրքն ու անոր ուղղութիւնը:

Ուսարի կոմիտէին կողմէ սարքուած առաջին հրապարակային ժողովին մէջ, 1900. յունվար 28. ան ի միջի այլոց կը յայտնէ հետեւեալ մտքերը.— «Դաշնակցութիւնը միջոց մըն է դէնք փոխադրելու, ան ալ կատարելագործուած դէնք, հայ դիւղացին զինելու համար, որպէսզի ան պատրաստ կարենայ ըլլալ վճռական բոպէին իր բախտը որոշելու»:

Այս ուղղութեամբ՝ առանձնասնալի վերջ, հանդգնակութիւն կը բանայ «ի նպաստ Հայրենիքի ազատութեան գործին»:

Ուսարը Հայ կիսերա-պահպանողական դասին եւ Հնչակեան կուսակցութեան մայրաքաղաքն էր այն առանները: Դաշնակցութեան այս հակառակորդները չէին կրնար հանդուրժել, որ Դաշնակցութիւնը Ամերիկայի մէջ ոտքին տեղ չունենայ, թերթ հրատարակէ վերջն ալ համարձակութիւն ունենայ հրապ. հանդանակութիւններ կազմակերպելու: Հետեւաբար, Դաշնակցական այս ժողովը խանգարելու նախապատրաստութեամբ եկած են եղեր կարգ մը մարդիկ, նոյն առենի թղթակցի բնորոշ որակումով, «լեռնցիներ», որոնք Վռամեանի հանդանակութեան կոչն ընելուն պէս, ոտքի կը կանգնին, աղմուկ կը բարձրացնեն եւ կ'ուզեն դիտնալ, թէ ո՞ւր են Դաշնակցութեան զէնքերը եւ անոնց հաշիւը կը պահանջեն հրապարակով: Դուրս կը հանուին այս խառնակիչները, որոնք, կ'երեւի թէ արդէն հասած էին Ֆրենց նպատակին, որովհետեւ թղթակիցը ուեւ ակնարկութիւն չըներ հանդանակութիւն տեղի ունեցած ըլլալու մասին:

Ժողով խանգարելու եւ ծեծկուռքի դէպքեր շատ սովորական երեւոյթ եղած են ամերիկահայ կեանքին մէջ մանաւանդ այդ սկզբնական շրջաններուն: Այս առաջինը իրրեւ նմոյշ յիշելով, բաւականանաք:

Վռամեանի՝ առաջիկային վարած յարձակողական-քննադատական քաղաքականութեան վրայ անչուշտ մեծ ազդեցութիւն թողած ըլլալու է Ամերիկայի մէջ իր առաջին ժողովին ունեցած այս տպաւորութիւնը: Ան ոչ միայն չընկրկիր այս արգելքներուն առջեւ, այլ եւ կը շարունակէ նոյն ուղղութիւնը թէ՛ բեմով եւ թէ՛ մամուլով:

1900 փետրվար 17ին, «Հայրենիք»ի իր առաջին խմբագրականին մէջ, խօսելով «Ջարդի քաղաքականութեան» մասին, ի միջի այլոց, կը յայտնէ հետեւեալ մտքերը.—

«Թուրքին ծրագիրը պարզ է, մեկին, փորձուած. մենք ենք ապուշը, որ կը կարծենք, թէ մեր ցաւերը թաքցնելով, բողոքելու տեղ՝ լալով, դիմադրելու տեղ պաղատելով, սուրը կը հեռացնենք մեր վզէն:

«Թուրքին համար մեր լա՛ցն ալ պատրուակ պիտի ըլլայ ջարդի:

«1895-96-ի կոտորածներու առեն մեր հայրերը նախատեցին, որ զէնքի փոխարէն երգրան ու սաղմոս առած էին մեզ:

«Հայու վերջին խելքը դովելի է, կ'ըսենք եւ կը պարծինք. այդ վերջին խելքը չպահենք վերջին հայուն համար:

«Ամենապարզ՝ զէնք տանք հայ դիւղացիին, իր կեանքն ու պատիւը պաշտպանելու»:

«Հայրենիք»ի առաջին տարուայ թուերուն մէջ արծարծուող դլխաւոր հարցը հայ կազմակերպութիւններու միութիւնը կամ համերաշխ գործակցութիւնն է,— հարց մը, որ այժմէութիւն ստացած էր Հնչակեան պառակտումով: Հ. Յ. Դ. Ամեր. Կեդր. Կոմիտէի եւ Նոր Հընչակեաններու միջեւ տեղի կ'ունենան միութեան բանակցութիւններ, բայց Արփիար Արփիարեանի անձը կ'ըլլայ դլխաւոր, կարելի է ըսել, միակ արգելքը:

Դաշնակցականները հրապարակաւ ամբաստանած էին Արփիարը, եւ Հնչակեանները, դէպի միութիւն ուեւէ քայլ առնելէ առաջ, կ'առաջարկեն «պատուոյ առեանդ»ով մը նախ լուծել Արփիարի հարցը:

Կեդր. Կոմիտէն հակառակ չըլլալով հանդերձ Արփիարի խնդիրը պատուոյ առեանի կամ այլ միջոցով լուծելուն, այդ չի նկատեր սակայն իր պայման միութեան: Հնչակեանները կը պնդեն իրենց տեսակէտին վրայ, եւ միութիւնը չի յաջողիր:

Այս շրջանին «Հայրենիք»ի արտասահմանեան աշխատակիցներուն մէջ կ'արժէ յիշատակել երկուքը, Մ. Վարանդեան եւ Ռ. Զարդարեան, որ Զարման ծածկանունով կարեւոր թղթակցութիւններ դրկած է Խարբերդէն:

© National Library of Armenia

Դաշնակցութեան արագ ծաւալումը ամերիկահայ գաղութին մէջ եւ «Հայրենիք»ի կատարած գրաւումները կը ցնցէին հակառակորդները: Կղերականները կը սկսին անաթեմայի ենթարկել նոր հոսանքը, որակելով զայն իբրեւ անկրօն, անհաւատ, եկեղեցի քանդող: Իսկ Հնչակեանները, իրենք իրենց մէջ պառակտուած, արդելքներ կը յարուցանեն՝ իրենց հրատարակային ժողովներուն մէջ ըսելով ժողովուրդին. «Հեռո՞ւ կեցէք սխալ հիման վրայ դրուած կուսակցութենէն»:

«Հայրենիք» մօտ տարի ու կէս Նիւ Եորքի մէջ հրատարակուելէ եւ հինգ շաբաթ դադար առնելէ վերջ, կը փոխադրուի Պոսթըն. 1900, սեպտեմբեր 22-ին, խմբագրութեամբ Վռամեանի եւ արդէն ճանչցուած իբրեւ կիսապաշտօնական օրգանը Հ. Յ. Դաշնակցութեան:*)

«Հայրենիք» փոխադրուելով Պոսթըն, կը հաստատուի 86 Essex St. անշուք սենեակի մը մէջ, ուր թերթը կը շարուի. իսկ խմբագիրը, որ յաճախ նո՛յնպէս գրաշար էր եւ. դրաշարին ու կամաւոր ուրիշ ընկերներու հետ թերթը բաժանորդներուն ուղարկող,— իրեն համար ունի եղեր սեղան մը սրբագրութիւններ եւ. ուրիշ թերթեւ աշխատանքներ կատարելու: Խմբագրական բո՛ւն աշխատանքը կը կատարուէր խմբագրի ննջասենեակին կամ Պոսթընի հանրային գրադարանին մէջ:

Ատիճանական զարգացումով, գրաշարական սենեակը քիչ քիչ կը փոխուի եւ խմբագիրը կ'ունենայ իր առանձին սենեակը՝ 27½ Beach St., մօտիկը այն ամերիկեան տպարանին, ուր կը տպուէր թերթը եւ ուր վարձուած էր անկիւն մը մեր մէկ երկու գրաշարներուն համար:

Խմբագրատուն եւ գրաշարանոց իրարու հետ յարաբերութեան մէջ էին նեղ անցքով մը իրարմէ բաժնուած երկու չէնքերու պատուհաններն: Խմբագիրը իր ձեռագիրները չուանով մը կապած դուրս կը կախէր իր սենեակի պատուհանէն եւ շարժումով մը կ'ուղղէր դէպի գրաշարանները պատուհանը, որ յարկ մը վար կը գտնուէր: Գրաշարներն ալ, իրենց կարգին, փորձերը վեր կը դրկէին նոյն ճամբով եւ խմբագիր ու գրաշար՝ գլուխնին յաճախ դուրս ցցած պատուհաններէն՝ լրացուցիչ բացատրութիւններ կուտային իրարու:

Խմբագրական այս սենեակին մէջ իր ժողովները կը գումարէր նաեւ Հ. Յ. Դ. Ամերկեղը. Կոմիտէն:

Այս սենեակին մէջ էր, որ 1905ին ես հրաւիրուեցայ խանգարելու Վռամեանի առանձնութիւնը: Գործը կ'ընդարձակուէր ամէն օր եւ մէկ հոգիի համար, եթէ նոյնիսկ Վռամեան մը եղած ըլլար ան, շատ էր կատարուելիք աշխատանքը.— խմբագրական, վարչական եւ կազմակերպական աշխատանքները մինակը տարած էր Վռամեան մինչեւ այդ թուականը:

Շաբաթաթերթ էր այն ժամանակ «Հայրենիք» եւ կը հրատարակուէր փոքր ծաւալով. այնպէս որ, երկու հոգիով կարելի էր տանիլ գրասենեկային բոլոր աշխատանքները, իսկ շաբաթը մէկ անգամ ալ երթալ գրաշարանոցի կից տպարանը՝ թերթը «մէյլ» ընելու համար: Այս աշխատանքին մէջ մինակ չէինք արդէն. կամաւոր ընկերներ մասնաւոր հաճոյքով կուգային գայդ օրը օգնելու մեզ մեր կազմակերպութեան գրաւոր փրոփականտին նուիրուած հրատարակութիւնը դրկելու աշխարհի չորս կողմը:

Շա՛տ նախնական էին թերթը առաքելու մեր միջոցները — ձեռքով պիտի ծալէինք, ծրարները պատրաստէինք, եւ պարկերու մէջ լեցուցած տանէինք նամակատունը, որ բարեբախտաբար մեզմէ շատ հեռու չէր: Էքսփրէսի դրամ չէինք կրնար տալ ամէն ատեն, պիւտճէն չէր ներեր: Վռամեանի փափկակազմ մարմինը յաճա՛խ կատարած է այս աշխատանքը, մանաւանդ ա՛յն չրջանին, երբ դեռ Essex St. կը հրատարակուէր թերթը:

*) Թէեւ այդ օրէն «Հայրենիք»ը ճանչցուած էր արդէն իբր Դաշնակցական թերթ եւ ընկերներու բարոյական եւ նիւթական օժանդակութիւնով կ'ապրէր ան, սակայն ընկերներ այդքանով չեն բաւականանար եւ կ'որոշեն որ ամէն Դաշնակցական յիսունական ակնթ վճարէ՝ հրատարակիչներու հաւասար բաժնետէր նկատուելու, ուրիշ խօսքով, ընդարձակելու Հրատարակչականը եւ նոր դրամագլուխով հընարաւորութիւն տալու որ «Հայրենիք» ընդարձակէ իր գործը: 1905–1906ին տեղի կ'ունենան այս վճարումները:

© National Library of Armenia

Յորելեանական այս յուշերը թերի պիտի ըլլային, եթէ չյիշենք ընկեր Գօգոն, որու ծանօթ ճաշարանը քանի մը քայլ միայն հեռու էր խմբագրատունէն, եւ ուր կը դիմէինք խմբովին, վայելելու համար Գօգոի պատրաստած համով հոտով կերակուրները, որոնք ի՛ր իսկ ձեռքով կը հրամցուէին մեզ «յաւելեալ եւ ճոխացեալ»: Վռամեան միշտ պարզ կերակուրները կը նախընտրէր. կը խուսափէր բաղադրեալներէն. ա՛յն առարկութեամբ թէ անոնց մէջ անծանօթ եւ կասկածելի նիւթեր կրնան խառնուած ըլլալ: Գօգոի հաւաստիացումները, թէ «տօլմա»ներն ու «թիւրլի պաստի»ները մաքուր եւ ինամով պատրաստուած էին, անզօր էին տարհամոզելու մեր բծախնդիր Վռամեանը: Անոր ընտրած կերակուրներն էին սովորաբար խորոված, սպաննախի վրայ հաւկիթ, փիլաւ, միատեսակ բանջարեղէններ եւ մածուն՝ վրան սալոր քոմփոսթ, խառնուրդ մը, որուն «սեւ մածուն» անունը կուտար: Իսկ մինչեւ կերակուրին սեղանի վրայ գալը, Վռամեան կը զբաղէր անձեռոցով մաքրելու նա՛խ պնակը, յետոյ դդալ, դանակ եւ պատառաքաղ:

«Հայրենիք»ի աստիճանական զարդացումը ինքնին ապացոյց էր թէ Դաշնակցութիւնն ալ կը ծաւալէր հետզհետէ մեր զաղութին մէջ: Բացի Վռամեանէն, որ խմբագրական եւ կազմակերպական գրասենեկային աշխատանքէ զատ, ամէն կիրակի տեղ մը կը վազէր խօսելու հրապարակային ժողովներու, Դաշնակցական գրաւոր եւ գլխաւորաբար բերանացի փրոփականտին նուիրուած էին ուրիշ երկու ընկերներ, Ս. Տիգրանեան (Թ. Ղզմալեան) որ Ամերիկա եկած էր 1903 մայիսին, եւ Արամ-Աշոտ (Ս. Մինասեան) որ եկած էր նոյն տարուոյ նոյեմբերին:

1904 փետրվարին, երբ Վռամեան կը մեկնի Ամերիկայէն, մասնակցելու համար 4-րդ Ընդհ. Ժողովին, Արամ Աշոտ եւ Տիգրանեան փոխնիփոխ կը վարեն «Հայրենիք»ի խմբագրութիւնը:

Վռամեան ճանչցուած էր իբրեւ սուր պայքարող. թէ՛ թերթով եւ թէ՛ բեմով յարձակողական էր ան եւ խարանող. այս՝ անհատական նկարագրի խառնուրդ չէր միայն, ինչպէս կը կարծէին ոմանք, այլ այդ շրջանի կուսակցական պայքարի հարկադրողական անհրաժեշտութիւն:

Իրրեւ փաստ այս բանին, կարելի է յիշել իր բնաւորութեամբ չա՛տ հանդարտ եւ խաղաղ Արամ Աշոտը, որ ա՛լ չկարենալով համբերել հակառակորդ կուսակցութիւններու անարդար եւ յաճախ անվայել յարձակումներուն, մոռցաւ իր մեղմ գրիչը եւ ձեռք առաւ մտրակը՝ հարուածելու համար մեր «քննադատները»: 1904 հոկտ. 29-ի թիւին մէջ իր հրատարակած «Շաղալները» յօդուածը նմոյշ մըն է իր այդ ուղղութեամբ գրուածքներուն, ուր «Դրօշակ»ի «Թուրքիոյ Շուրջը»-ի տաղանդաւոր գրագէտը երեւան կուգայ իր հիանալի «հիւմօր»ով, կուռ փաստերով եւ լախտի պէս իջնող հարուածներով:

Եթէ բեմի վրայ պաղարիւն խօսող եւ իր խմբագրականներուն մէջ խոր վերլուծումներով զբաղող գրագէտ Արամ Աշոտը կը հարկադրուէր «որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ»-ի սկզբունքով վարուիլ մեր հակառակորդներուն հետ, ա՛լ կարելի է երեւակայել, թէ ո՛ւր հասած էր այդ օրերու կուսակցական պայքարը:

Տիգրանեան (Թ. Ղզմալեան) կը գրէր ա՛յն ուղղութեամբ, որ կը խօսէր: Ամերիկահայ բեմի լաւագոյն հռետորներէն մէկն է եղած ան՝ իր խանդավառ եւ փոթորկայոյզ ատենախօսութեամբ, գերելով տարագիր հայութեան սրտերը:

Կազմակերպական փրոփականտին ուժ տալու համար 1904 թուին Ամերիկա կուգայ նաեւ Սէհէնտեան, որու գործունէութիւնը կարճատեւ կ'ըլլայ եւ չի թողուր մեծ հետքեր: Օժտուած էր բարձր կարողութիւններով, բայց մեր շրջանին եւ կուսակցական պայքարին այդ օրերուն պահանջած մարդը չէր ան:

Վռամեան 1904 նոյեմբերին կը վերադառնայ Ամերիկա եւ կը վերսկսի իր եռանդուն գործունէութեան: Դաշնակցութիւնը այլեւս այն արհամարհելի ուժը չէր. մինչ մէկ կողմէն Հնչակեանները կը տկարանային՝ պառակտելով եւ իրարու դէմ պայքարելով, միանալով եւ երկրորդ անգամ պառակտելով, Դաշնակցու-

© National Library of Armenia

թիւնը հակայական զրաւումներ կը կատարէր մեր զաղութին մէջ: Դաղտնիքը՝ Դաշնակցութեան ունեցած ԳՈՐԾՆ էր Երկրին մէջ, եւ իր յայտնաբերած կենսունակութիւնը:

Սասունի ապստամբութեան օրերն էին: 1901 նոյ. 27-ին սկսուած կռիւները մեծ համեմատութիւններ ստացած էին: Թիւրք կառավարութիւնը մեծ քանակութեամբ զինուորական ուժ կեդրոնացուցած էր Սասուն, հայ կորիզները պարտութեան ենթարկելու համար: Երկրէն կը հասնէին հերոսական պայքարին յծուած մեր մարտիկներու «կոչ»ները, դիւանագիտական աշխարհին ուղղուած յայտարարութիւնները: «Հայրենիք» ամբողջովին նուիրուած էր հերոսական այդ շարժումի լուրերուն, դէպքերու վերլուծումին եւ լուսաբանութեան: Իսկ կազմակերպութիւնը զանազան ձեռնարկներ կ'ընէր՝ օգնութեան հասնելու «Երկրի կռուողներուն»: Գործը, սակայն բարձր էր կուսակցական հաշիւներէն եւ անհրաժեշտ էր զաղութային համատարած շարժում մը ստեղծել, ամբողջ ամերիկահայութեան աջակցութիւնն ապահովել այս մեծ շարժումին: Զէզոք հողի վրայ 1902 նոյ. 17ին արդէն կազմուած էր «Հայ Ինքնապաշտպանութեան Ցանձնախումբ»ը, որ, դժբախտաբար, չկրցաւ մեծ յաջողութիւն ունենալ: Մեր «զաղափարական» հակառակորդները հակափրոփականտ մղեցին, որովհետեւ Երկրի կռուողները Դաշնակցականներ էին: Մեր նեղմիտ եւ անորակելի հակառակորդները ա՛յնչափ առաջ զացին, որ Ցանձնախումբի զործունէութեան արդելք հանդիսացան՝ թունաւորելով նո՛յնիսկ հայասէր ամերիկացիներու շրջանակը՝ Անդրանիկը եւ իր ընկերները ներկայացնելով իբրեւ խռովարարներու խմբակ մը, որոնց պէտք չէ օժանդակել:

Հայասէր ամերիկացի Տիկ. Պարրօզ հրաժարելով յանձնախումբի անդամակցութենէն, 1903 ապրիլ 1-ին բացատրական նամակ մը կը զրէ «Հայրենիք»ին, եւ վերջաւորութեանը մէջ կուտայ հետեւեալ խրատը, որ, դժբախտաբար մինչեւ այսօր ալ արդարացիօրէ՛ն կրնայ նետուիլ հայերուս ճակատին.—

«Կ'երեւակայեմ որ եթէ ամերիկացի բարեկամները կարենային կարդալ հայ թերթերը, ծանր պիտի զայրին, տեսնելով թէ այս երկրին հայերը որքա՞ն հեռու են արժանի ըլլալէ Սր. Գրքի սա գնահատումին.— «Զի՞ բարի, զի՞ դեղեցիկ, զի բնակին եղբարք ի միասին»: Մինչեւ որ անոնք (հայերը) սովրին այս դասը, ապարդիւն է ակնկալել ամերիկացիներու աջակցութիւնը: Ազատութեան մեծ դատին մէջ ամէն անձնական խնդիր պէտք է որ վտարուի»:

Հայ Ինքնպ. Ցանձնախումբը, «որոշ դիտումով եւ սիստէմաթիք կերպով իր գործին դէմ հանուած արդելքներուն հետեւանքով, չը-կարենալով շարունակել հանգանակութիւնը, զուտ արդիւնքը եղող 587 տոլարը իր նպատակին զրկելէ վերջ՝ լուծուած կը յայտարարէ ինքզինք»:

Կռուողներու, ազատասէրներու սերունդը իր կարելին ըրաւ սակայն, Սասունը անպարտելի ընելու համար: Հ. Ց. Դ. Ամերիկայի շրջանակը, կարողութեան չափով կատարեց իր պարտականութիւնը՝ բարոյապէս, նիւթապէս եւ ֆիզիքապէս օգնութեան հասնելով Սասունին:

«Ի Նպաստ Երկրի Կռուողներուն» Հայրենիք»ի մէջ բացուած սիւնակէն եւ Հ. Ց. Դ. Կոմիտէներու հրապարակային հանգանակութեան ժողովներէն 1903-ի շրջանին Կ. Կոմիտէի գանձը կը մտնէ $10,823.61: Հակայ պահանջին առջեւ փոքրիկ գումար մըն էր սա. Կ. Կոմիտէն քանի մը «ունեւոր» ընկերներէ $2050.00 փոխառութիւն կ'ընէ՝ այդ նեղ օրերուն կարելի եղածին չափ մեծ գումար մը երկիր հասցնելու զերագոյն մտահոգութեամբ:

Սասունին եղած նիւթական այս օժանդակութեան քով կայ եւ ֆիզիքական օժանդակութիւնը, որ յուզումով, յարգանքով եւ հպարտութեամբ պարտք ենք յիշել:

Հ. Ց. Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէն, իրական մասնակցութիւն բերած ըլլալու համար հայկական միջնաբերդին մէջ մղուող զերագոյն պայքարին, իր լաւագոյն ընկերներէն մէկ քանին կը զրկէ Սասուն: Այս հերոսական դէմքերէն մին էր ԱՐՄԵՆԱԿ ԼԵՒՈՆԵԱՆ (Երկաթ), ծնած 1871 մարտ 10-ին, Բաղէշի Շէխեակուզ գիւղը: 1883 նոյեմբերին կը մտնէ Բաղէշի Ամերիկեան վարժարանը եւ 1891 հոկտ. 25ին աւարտելով կ'երթայ Սասուն ուսուցչութեան: 1892 յուլիսին կուգայ Ամերիկա:

Արմենակ կ'ըլլայ «Հայրենիք»ի հիմնադիր-

© National Library of Armenia

ԱՐՄԵՆԱԿ ԼԵՒՈՆԵԱՆ

ՄԻՆԱՍ ՏՕԼՊԱՇԵԱՆ

ներքն մին եւ իր եռանդուն գործունէութեամբ ու գոհոյ սրտով կը հանդիսանայ Ամերիկայի Դաշնակցութեան լաւագոյն ընկերներէն մէկը: Սասունի ապստամբութիւնը կը կանչէ զինք Երկիր, ուր ան կ'երթայ միանալու իր ղէնքի ընկերներուն: Կացութեան մասին տեղեակ պահելով Ամերիկայի Կեդր. Կոմիտէն, ան կը ղրկէ նաեւ հրաչունչ թղթակցութիւններ «Հայրենիք»-ին:

Իրեն վիճակուած էր նահատակուիլ այն դատին համար, որուն զինուորագրուած էր. 1904 յունիս 2-ին, քաջի պէս կը մեռնի Արծկէի մօտ, երբ փառաւոր եւ յիշատակելի կռուէ մը ետք կ'ոչնչանայ Թոխմախի խումբը, որ Սասունի օգնութեան կը փութար:

Ամերիկայէն դացած ընկերներու շարքին մէջ կը գտնուին նաեւ ՄԻՆԱՍ ՏՕԼՊԱՇԵԱՆ (Գայլ Վահան), որ նահատակուեցաւ Բագրեւանդի կռիւներուն մէջ: Բալուի Հաւաւ գիւղացի, ծնած 1872-ին, արհեստով կահագործ, Տօլպաշեան 16 տարեկան հասակին մէջ կ'երթայ Գոլիա (ուր կ'ըլլայ Հնչակեան եւ կը կատարէ ահաբեկումներ), յետոյ Ռումանիա, Գուլկարիա եւ ապա Ամերիկա: Փրավիտէնս հաստատուելով, Դաշնակցական կոմիտէին կը դիմէ հետեւեալ խօսքերով.— «Հնչակեան դրօշը իր սրբութեան բարձունքէն վար ինկած է, անկեղծները տեսակ մը դասալքութեան մատնուած են, ապարդիւր թողուած է խորթ եկուորներուն ու հին հիզութիւններուն, որոնք ղբրոշակը երկուքի բաժնած՝ կը շահագործեն. չեմ կրնար մնալ դրօշակի մը տակ որ միայն շահագործումի առարկայ դարձած է»:

Դաշնակցական ըլլալով ան կը ծրագրէ մտնել Երկիր եւ 1902 նոյեմբերին ճամբայ կ'ելլէ իր ընկերոջ Գարօին հետ:

Ամերիկայի Կեդր. Կոմիտէին գրուած 1903 սեպտ. 18 նամակին մէջ Մրդաստանի Կեդր. Կոմիտէն հետեւեալ կերպով կը ներկայացնէ Վահանի գործունէութիւնը:

... Մեր Հրջանի գործն է ապրանք փոխադրել Երկիր: Մօտ օրերս Վահանը պատրաստ-

© National Library of Armenia

ՏԻԳՐԱՆ Գ. ԽԱՐԲՈՒԹԼԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱՀԻԿԵԱՆ

ւում է նորից անպատճառ կատարելու չորրորդ երթը, մի ղժուարին, բայց անհրաժեշտ գործ, որին յաջողութեամբ ի կատար է ածում նա, մանաւանդ այժմ, որ լեռները սկսել են ձիւնել եւ ցրտել...»

Նոյն կեդր. կոմիտէն, տալով Վահանի մահուան գուժը եւ Ամեր. կեդր. կոմիտէին ղրկելով անոր մարմրիկի համազգեստով ձիաւոր նկարը, կը գրէր.— «Շնորհակալութիւն Ամերիկային, որ Վահանի նման մարդկանց է ուղարկում մեզ մօտ. պատիւ է բերում թէ՛ ձեզ եւ թէ՛ մեզ»:

ՏԻԳՐԱՆ Գ. ԽԱՐԲՈՒԹԼԵԱՆ *ծնած է Գագր Մատէնի մէջ 1880 ապրիլ 12ին, տասը տարեկան հասակին փոխադրուած Խարբերդ. արհեստով հիւսն: Ամերիկա եկած էր 1891–ին:*

Երեք տարի կը մնայ Ամերիկա, կը ստեղծէ սեփական չահաւէտ գործ:

1904–ին կը մեկնի Սասունի օգնող խումբին միանալու:

1904. յունիս 28ին, Խանասորի գծով կը փորձէ Վասպուրական անցնիլ, բայց չի յաջողիր:

1904 հոկտ. 24ին կը միանայ Փոխիկի խմբապետութեամբ կազմուած 15 հոգինոց զինակիր հեծեալ խումբին, որուն վիճակուած էր ամբողջովին ոչնչանալ՝ անհաւասար ուժերու դէմ կատաղի կռիւէ մը ետք:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱՀԻԿԵԱՆ, *Խարբերդի Հիսէյնիկ գիւղէն, ծնած 1878–ին. չորս տարի ուսանելով Խարբերդի միսիոնարական գօլէճը, 1894ին կը թողու Խարբերդը, կ'անցնի Պոլիս և ապա Ամերիկա: Ամերիկայի չրջանի ամենաեռանդուն ընկերներէն մին ըլլալով, չի կրնար հանգիստ մնալ օտար այս երկնքին տակ եւ 1903 յուլիս 9–ին կը ձգէ Ամերիկան:*

© National Library of Armenia

Կովկասի վրայով Երկիր մտնելու գացած ատեն, Կարսի մէջ, 1903 սեպտ. 11-ին, իր շորս ընկերներուն հետ զոհ կ'երթայ ռումբի պայթիւնի մը՝ մինչ կը պատրաստուէր Երկիր փոխադրել այդ ռումբերը եւ թշնամիի գլխո՛ւն պայթեցնել զանոնք:

Դժբախտաբար տրամադրութեան տակ չունիմ Ամերիկայէն այդ օրերուն Երկիր մեկնած բոլոր ընկերներու անուններն ու կենսագրութիւնները. ապագայ պատմագրին կը մնայ իւրաքանչիւրին տալ իր արժանաւոր տեղը մեր ազատագրական պայքարի պատմութեան ոսկեղէն էջերուն մէջ:

Սասնոյ ապստամբութեան ճնշումէն վերջ, 1904-ի գարնան, ամէն հայի համար ալ պարզ էր թէ հաւաքական մեծ աշխատանք անհրաժեշտ է հայ ազատագրական պայքարի հսկայ եւ դժուարին գործը յաջողութեամբ առաջ տանելու համար:

«Հայրենիք» երկար կը զբաղի այդ հարցով, կազմակերպութիւններու միջեւ տեղի կ'ունենան համերաշխական բանակցութիւններ, բայց առանց գրական արդիւնքի:

«Հայրենիք» օգնութեան հասնելու համար թիւրք բարբարոս ուժերու կողմէ աւերուած վայրերու հայութեան, սիւնակներ կը բանայ «ի նպաստ Տարօնի սովեալներուն», «Վասպուրականի կարօտեալներուն», որով կը գոյանան բաւական կոկիկ գումարներ:

Սասունի հերոսական պայքարին զուգընթաց, 1903ի աշնան, տեղի կ'ունենար ինչպէս ամբողջ հայութիւնը, նոյնպէս Ամերիկահայ գաղութը ցնցող ուրիշ դէպք մը — հայ եկեղեցական կալուածներու գրաւումի ցարական հրամանն էր այդ:

«Հայրենիք» լայն կը բանայ իր էջերը՝ հրատարակելով սեփական թղթակցութիւններ Թիֆլիսէն, ընդարձակ տեղ տալով «Հայ Ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէի», վերջը՝ Հ. Յ. Դ. Կովկ. Ինքնապաշտ. Կ. Կոմիտէի եւն., որոնք բոլորն ալ կը մերկացնէին Կալիցինեան հայակեր ռեժիմի այս դաւը եւ ժողովուրդը կը հրաւիրէին պաշտպանելու իր իրաւունքը: 1903 սեպտ. 2-ին, Բագուի մէջ, խումբ մը արհեստաւորներ առաջին անգամ դէնք ի ձեռին կռիւ կը մղեն ռուս կանոնաւոր զօրքի եւ բոզարներու դէմ՝ հայոց ազգային եկեղեցական իրաւունքներու պաշտպանութեան համար: Կռիւը կը ծաւալի՝ աւերելով տասնեակ հայ գիւղեր եւ թողլով բազմահազար կարօտեալ:

Հարուածը համազգային էր, պէտք էր որ շարժումն ալ բլլար համազգային:

Ամերիկահայ գաղութն ալ կը շարժի, եւ առաջնորդ Սարաֆեան Եպիսկոպոսի հրաւէրով գաղութային համագումար կը կազմուի հոկտ. 3-4-ին, պաշտօնական բողոք բարձրացնելու համար այս բռնութեան դէմ:

1905 փետրվար 14-ին Կովկասի մէջ կը կազմուի կարօտեալներու Կեդր. Յանձնախումբ մը, որու կոչը Ամերիկա հասնելուն՝ «Հայրենիք»ին կը սկսին գալ նուիրատուութիւններ: 1906 յունվար 27-ին Հ. Յ. Դ. Ամեր. Կեդր. Կոմիտէն օգնութեան կոչ մը կը հրատարակէ ուղղուած ամբողջ ամերիկահայ գաղութին: Օգնութեան այս կոչերը մեծ արձագանգ կը գտնեն այս հայրենասէր գաղութին մէջ. ուր, շորս ամսուայ ընթացքին՝ 10 հազարէն աւելի գումար մը կը գոյանայ:

Կալուածներու գրաւման առիթով սկսած ընդհարումները ծաւալելով, առաջ կուգայ հայաթաթար ընդհարումը:

Գաղութիս մէջ անմիջապէս ծայր կուտայ նոր շարժում մը՝ օգնելու Կովկասի կռուողներուն:

«Հայրենիք» օրը օրին կը հաղորդէ հայ մարտիկներու տարած յաղթութեան լուրերը՝ բարձրացնելով գաղութի տրամադրութիւնը:

Նիւ Եորքի եկեղեցիի հոգաբարձութեան հրաւէրով տեղին յեղափոխական եւ կրթական մարմինները կը սարքեն միացեալ հրապարակային ժողով մը, որուն մէջ կռուողներուն համար կը հանգանակուի $525.50, համեմատաբար մեծ գումար մը՝ այն օրերուն համար:

Ժողովրդային եւ յեղափոխական շարքերու տրամադրութեան եւ օրուայ պահանջին ընդառաջ երթալով, Հ. Յ. Դ. Ամեր. Կեդր. Կոմիտէն կը դիմէ միւս յեղափոխական կազմակերպութիւններուն, հաւաքական ներդաշնակ շարժումով մը օգնութեան հասնելու կռուողներուն: Կուսակցական ատելութեամբ կուրցած մարդոցմէ կարելի չէր այսպիսի ազնիւ շար-

© National Library of Armenia

ժում մը ակնկալել.— ինչպէ՞ս ընթացք տային ժողովրդային բաղձանքին եւ համերաշխօրէն հանդանակութիւն ընէին Դաշնակցականներուն հետ, երբ հայաթաթար կոիւը կը ղեկավարուէր Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ: Անգա՛մ մըն ալ յուսախաբ եղաւ Դաշնակցութիւնը, յեղափոխական մարմինները զործին շուրջ համերաշխեցնելու իր ջանքին մէջ: Ատիկա, հարկաւ, արգելք չեղաւ որ թաթարները եւ զանոնք զինող ու քաջալերող ցարական կառավարութիւնը ամսթալի պարտութեան մատնուին եւ հայ մարտական ուժը անգա՛մ մըն ալ յաղթական դուրս գայ ցեղին անարգ թշնամիներուն դէմ:

Շուրջ եօթ տարուայ բեղմնաւոր գործունէութենէ մը վերջ, Վռամեան մեկնեցաւ Ամերիկայէն 1907 յունվարին:

Իր անսպառ կորովին եւ յամառ ջանքերուն փառաւոր արդիւնքը տեսնելով, մասնաւոր գոհունակութեամբ կ'ըսէր ան — «Երբ ես կը պըղէի Ամերիկայի մէջ մեր կազմակերպական աշխատանքի անհրաժեշտութեան վրայ, ընկերներ կ'ըսէին.— գործի վայրը Երկիրն է եւ մեր բոլոր տրամադրելի ուժերը անո՛ր պէտք է յատկացնենք: Բայց հիմա որ արդիւնքը տեսան, իրենք ալ համոզուեցան որ չէինք կրնար լքել այս մեծ գաղութը»:

«Գաղութային գործունէութեան» հակառակ եղող ընկերներու ձեռքէն դժուարաւ ազատեր եւ Ամերիկա էր եկեր Հրդ Ընդհ. Ժողովէն վերջ, այն խոր համոզումով, որ այս գաղութին մեծ դեր է վիճակուած մեր ազգային կեանքին մէջ եւ չէր սխալած: «Հայրենիք» փոքրածաւալ չարաթաթերթի իր դիրքէն բարձրացաւ մեծածաւալ երկօրեայի եւ ապա օրաթերթի՝ իբրեւ անդրանիկ օրաթերթը ամերիկահայ գաղութին: Իսկ այն կազմակերպութիւնը, որու օրկանն էր «Հայրենիք»ը, արագօրէն ծաւալեցաւ: Հարիւրներով հաշուուող ընկերներու թիւը հազարներու բարձրացաւ եւ տարեկան հազիւ հազար տոլար մուտք ունեցող կեդրոնական կոմիտէն հարիւր հազարներով պատրաստեց իր տարեկան հաշուեկշիռները:

Վռամեանի մեկնումէն վերջ, թերթի խմբագրութիւնը եւ տեղական կազմակերպական աշխատանքները կը վարեն տեղին վրայ արդէն պատրաստուած ուժեր: Դաշնակցութեան Ամերիկայի շրջանակը այլեւս նոր ոտքի ելած երախան չէր, որուն ձեռքէն բռնող, առաջնորդող մը անհրաժեշտ ըլլար: Երբ կազմակերպական ընդհանուր աշխատանքներն այնպէս մը դասաւորուած ըլլային, որ արտասահմանեան ուժեր կարելի չըլլար տրամադրել մեզի, մենք արդէն ի վիճակի էինք մեր ուժերով շարունակելու գործը:

Վռամեանէն յետոյ, մինչեւ 1921, հետեւեալ տեղական ուժերը վարած են «Հայրենիք»ի խմբագրութիւնը.— Այս յուշերը գրողը, Փրոֆ. Յ. Յ. Զազմազեան, Շահան Նաթալի, Մ. Համբարձումեան, Ս. Զէյնեան եւ Ն. Տէստէկիլ:

1908-ին, Թրքական սահմանադրութեան հռչակումով, յոյսի նոր շրջան մը բացուեցաւ եւ վայրկեան մը այնպէս թուեցաւ որ մօտ է այն օրը, երբ պիտի իրականանայ բոլորիս բաղձանքը՝ վերադառնալու Երկիր եւ մեզ հետ տանելու նաեւ «Հայրենիք»ը: «Հայրենիք» կ'արձանագրէր սրտապնդիչ լուրեր Երկրէն. Հայ ժողովուրդը կը սկսէր կազդուրուիլ եւ ազատօրէն շնչել: Դժբախտաբար չիրականացան «սահմանադրական» Թիւրքիայի հետ կապած մեր յոյսերը, ընդհակառակը, 1909ի Ատանայի ջարդը երեւան հանեց Երիտասարդ Թիւրքերու սահմանադրական շղարշով ծածկուած հրէշային դիմագծութիւնը: Սարսափեցաւ հայ ժողովուրդը Երկրին մէջ եւ գաղութի հայութիւնը, որ կը պատրաստուէր կապել իր պանդուխտի ծրարը եւ վերադառնալ հայրենիք՝ անգամ մըն ալ ամուր կերպով նստաւ իր տեղը վիրաւոր սրտով:

Նոր յոյսերու բեկման այս շրջանին էր, որ այս հեռաւոր գաղութին այցելութեան կուգային հայ ժողովուրդի ընտրեալ զաւակներէն երկուքը — Սիամանթօ եւ Ակնունի:

Սիամանթօ Ամերիկա կը հասնէր 1909–ի վերջերը եւ դեկտ. 7–ին «Հայրենիք»ի էջերը կը զարդարէր իր «Հայրենի Հրաւէր»ի «Առաջին կոչ»ով: Ժամանակակից Թրքահայ մեծագոյն այս քերթողը 1910ի ընթացքին աշխատակցե-

© National Library of Armenia

լով «Հայրենիք»ի խմբագրութեան, իրարու ետեւէ հրատարակեց պանդուխտ հայութիւնը երկիր հրաւիրող իր քերթուածները՝ գոնելով մեծ ընդունելութիւն:

1910 սեպտ. 11ին եկաւ Ակնունին, «Դէպի Երկիր»ի անմահ հեղինակը, որ Ամերիկա կուգար իր անմահ լաւատեսութեամբ տողորելու զարիպական հայերս: «Հայրենիք»ի եւ «Աստղարէզ»ի մէջ հրատարակեց նոր ոգիով եւ բովանդակութեամբ «Դէպի Երկիր»ներ եւ իր հրապարակային ժողովներով փոթորկեց մեր գաղութը Նիւ Եորքէն մինչեւ Սան-Ֆրանչիսքո: Մարդարէական ներշնչումով կը յայտարարէր ան ամէն տեղ, թէ տասը տարիէն կը բացուի Հայկական Խորհրդարանը: Իրականացա՛ւ իր մարգարէութիւնը, բայց, աւա՜ղ, այդ Խորհրդարանին ամենափայլուն զարդն ըլլալու կոչուած այդ պատուական հայը բախտը չունեցաւ տեսնելու այդ օրը եւ ոչ ալ, դժբախտաբար, իրականացան իր լաւատեսութիւնները:

Ակնունիի Ամերիկահայ գաղութին այցելութեան թուականին կը զուգադիպէր դատավարութիւնը կովկասահայ մտաւորականներու, որոնք 1908-էն սկսած ձերբակալուած էին եւ կը հեծէին բանտերու խորը եւ որոնց թիւը 1910-ին կը հասնէր 500-ի: Ցարական կառավարութիւնը ձախողելով եկեղեցապատկան կալուածներու գրաւման իր ծրագրին մէջ եւ հայաթաթար ընդհարումներու միջոցով հայերը պատժելու իր դիւային հաճոյքին գոհացում չտանալով, այս անգամ փորձեց հայ մտաւորականութեան դէմ այդ անխնայ հալածանքը:

«Դէպի Կուռ»ի պերճ հեղինակը բեմով եւ մամուլով բողոքի ձայն բարձրացուց՝ խոր համակրանք արթնցնելով տարագիր հայութեան սրտերուն մէջ: Այս նիւթերուն նուիրուած իր խմբագրականներէն մէկը ան կը վերջացնէր հետեւեալ կերպով.—

«Բա՜ռ ձեր սրտերը, հա՛յ քաղաքացիներ, ուժգին՝ ձեր բողոքը, լայն՝ ձեր համակրանքը:

«Ո՛չ մի նոյլ թերահաւատութեան:

«Մենք համխեան սեւաւոր եւ մահաչունչ զնդաններէն Աբդարուբին գուրս բերինք՝ յաղթական եւ բարձրագլուխ. մինչ՞ պիտի ընկերկինք Բոստովեան բանտերի առաջ:

«Երբե՛ք:

«Մեր ժողովուրդը անմեղ զոհեր չատ տուեց. թող դարձեալ 500 հատ աւելանայ հազարաւորներին: Բանտերի եւ աքսորի մէջ արդարութիւնը չէ մեռեալ: Չի մեռնի ե՛ւ այս անգամ:

«Բա՜ռ ձեր սրտերը»:

Բողոքի մեծ միթինկներուն մէջ բանաձեւեր քուէարկուեցան գաղութիս գլխաւոր կեդրոններուն մէջ: Պէտք կա՞յ յիշելու, որ մեր «ազնիւ» հակառակորդները այս շարժումին մէջ ալ հակառակեցան մեզի եւ չատ տեղեր նոյնիսկ փորձեցին արգելք յարուցանել միթինկներու կայանալուն՝ կամ ջանացին խանգարել գումարուածները:

Ակնունի նոյն նպատակով ապրիլ 11ին այցելեց նաեւ Ուաշինկթըն, տեսակցութիւններ ունեցաւ նախագահ Թէֆթի, արտաքին գործերու պաշտօնատան եւ քաղաքական ուրիշ կարեւոր անձնաւորութիւններու հետ:

Բանտարկեալներու նուիրուած իր գրութիւններն ու բանախօսութիւնները վերջը ամփոփեց «Բողոքի Ձայն» հատորի մը մէջ, որ "Political Persecution" (քաղաքական հալածանք) անունով թարգմանուեցաւ անգլիերէնի՝ ցրուելու համար հայասէր ամերիկացիներու շրջանակին մէջ:

Ակնունիի յղացումն էր նաեւ «Ազատութեան կոթող»ի համար շարժումը, որ որդեգրուած եւ նախաձեռնուած Հ. Յ. Դ. Ամերիկայի այն տարուայ Պատգ. Ժողովէն՝ ներկայացուեցաւ մեր գաղութին:

Լաւատեսութեան այս աննման առաքեալը արդէն հասած կը նկատէր օրը, երբ պէտք էր սկսէինք ազատութեան կոթողներ կանգնեցնել Հայաստանի այն բոլոր վայրերուն մէջ, ուր հայ ազատագրութեան մարտիկները յիշատակներ թողուցած էին:

Մեր առաստաձեռն գաղութը կովկասի բանտարկեալներուն համար կարճ ժամանակի մը մէջ նուիրեց $10,000, իսկ «Ազատութեան կոթող»ին համար, ժողովրդային «սէնթ»երու նուիրատուութեամբ գոյացաւ $1122·89: Այս գումարէն $500 ղրկուեցաւ "Pour Les Peoples d'Orient" հայանպաստ թերթին՝ Փարիզ, հրնարաւոր դարձնելու համար անոր հրատարակութեան շարունակութիւնը, իսկ մնացածը կը պահուի հոս, յանձնախումբին քով՝ անձեռնմխելի եւ պատեհ առիթով ածեցնելու եւ նախնական գումարին բարձրացնելու առաջադրութեամբ:

© National Library of Armenia

«Կովկասեան Վէրքեր»ու սիրուած հեղինակը 1911 յունիսին մնաք բարո՛վ ըսաւ մեզի, մասնակցելու համար յուլիսին Պոլիս գումարուելիք Ե. Ընդհ. Ժողովին՝ անջնջելի յիշատակ թողլով մեր գաղութին մէջ:

1911–ի աշունէն սկսած «Հայրենիք»ի ընթերցողները հաճոյքը կունենան վայելելու «Աչք Եհովայի» (Ռ. Զարդարեան) գրութիւնները Պոլսէն՝ իբրեւ մնայուն թղթակից:

1913 յունիս 24–ին «Հայրենիք» կը վերածուի երկօրեայի:

1913–14–15 շրջանին տեղի կունենան տարագրութիւնները եւ հայկական ընդհ. շարժում՝ կամաւորներով պայքարելու դարաւոր թշնամիին դէմ: Ամերիկայէն կամաւորներ կը մեկնին Կովկաս, միանալու Ազգային Բիւրոի ղեկավարութեամբ կազմուած կամաւորական գունդերուն:

Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէն իր շարքերէն աւելի քան 600 մարտիկներ ճամբու կը դնէ դէպի Երկիր եւ միւս կողմէ ընդհանուր հանգանակութեան կը սկսի յօգուտ Ազգ. Բիւրոի: 1915–ի շրջանին այդ հանգանակութիւնը կը հասնի հարիւր հազար տոլարի մօտ գումարի մը:

Ցոյց տալու համար թէ Ամերիկայի Դաշնակցական շրջանակը հայկական ազատագրական պայքարը վեր կը բռնէր կուսակցական բոլոր հաշիւներէն, պէտք է հպարտութեամբ արձանագրել հոս, որ ան 1915ի Ազգ. Բիւրոի հանգանակութեան ընթացքին յայտարարեց որ ինք այդ հանգանակութիւններուն կը խառնէ այդ տարուայ իր կազմակերպական տուրքերէն գոյացած ամբողջ գումարը:

Օրուայ լուրերուն անհամբեր սպասող ամերիկահայ գաղութը իր բարոյական եւ նիւթական օժանդակութեամբ հնարաւոր դարձուց որ 1915 դեկտեմբեր 6–ին «Հայրենիք»ը վերածուի օրաթերթի՝ իբրեւ առաջին օրաթերթը այս գաղութին:

Հայ ազատագրական պայքարի այդ տաք օրերուն, հրամայական անհրաժեշտութիւն դարձած էր բոլոր հայ քաղաքական կազմակերպութիւններու համագործակցութիւնը:

Եգիպտոսը առած ըլլալով առաջին քայլը այդ ուղղութեամբ, 1917ին Ամերիկա կը ղրկէր Տամատեանէ, Հանրմեանէ եւ Սապահգիւլեանէ կազմուած պատգամաւորութիւն մը, որ Ազգ. Պատուիրակութեան կողմէ ալ մասնաւոր հրահանգներ ստացած կուգար Ամերիկա եւ հոս ալ մարմին կառնէր Հայ Ազգային Միութիւնը Ապրիլ 2–ին:

Մեր գաղութի տարեգրութիւններուն մէջ, առաջին անգամն էր որ կը կազմուէր այսպիսի հեղինակաւոր մարմին մը: Միութեան առաջին գործը կըլլայ կազմակերպել Կիլիկիա ղրկուելիք կամաւորական գունդը, որու թիւը հասաւ 1139–ի: Այս շարժումին զուգընթաց՝ ձեռնարկուեցաւ «Մէկ Միլիոն»ի հանգանակութեան, որուն մեր գաղութը օժանդակեց աննախընթաց առատաձեռնութեամբ եւ Միութեան սեղանին վրայ դրաւ 900 հազարէ աւելի գումար մը:

Անուրանալի իրողութիւն է, որ Միութեան սիւնը կը կազմէր Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ մէկ միլիոնի հանգանակութեան տուաւ հանգանակուած գումարի մեծագոյն մասը:

Երկար չտեւեց դժբախտաբար Միութեան ներդաշնակ եւ արդիւնաւէտ գործունէութիւնը, որովհետեւ հակառակ Դաշնակցութեան տրամադրած բարոյական եւ նիւթական զոհաբերութիւններուն, որ հաւասար էր բաղկացուցիչ միւս տարրերու զոհողութեան համագումարին, ան ունէր 18ի դէմ 3 ձայն միայն Միութեան մէջ՝ ուր յաճախ ուռնակոխ կ'ըլլային գաղութիս ջախջախիչ մեծամասնութեան կամքի արտայայտութիւնն եղող սկզբունքներ:

Այս անհանդուրժելի վիճակը, բնական է, երկար չպիտի կրնար տեւել: Ոգումի պատճառ դարձող բաղխումը տեղի ունեցաւ երբ 1918 մայիսին Արարատեան Աշխարհի մէջ հռչակուած հայ հանրապետութիւնը մեր կողմէն հրաշակուեցաւ իբրեւ կորիզ ապագայ Միացեալ Անկախ Հայաստանի, իսկ բաղկացուցիչ միւս տարրերու կողմէ արժանացաւ հեգնանքի:

Այս օրերուն, 1919 փետրվարին, հրաւիրուած էր հայկական համագումար Փարիզի մէջ, որուն Ամերիկան պիտի մասնակցէր չորս պատգամաւորով:

Փետրվար 2–ի կիրակին նշանակուեցաւ ընտրութեան օր: Դաշնակցութիւնը հրապարակ եկաւ իր չորս թեկնածուներով եւ ա՛յն փլաթֆորմով որ կը պաշտպանէր Միութեան ժողո-

© National Library of Armenia

վին մէջ եւ որուն հակառակ էին բաղկացուցիչ միւս տարրերը:

Տեղի ունեցաւ ընտրութիւնը, ուր Դաշնակցութիւնը չահեցաւ ջախջախիչ մեծամասնութիւն,— աւելի քան 10 հազար քուէ:

Այս հարուածը չչմեցուցիչ էր մեր հակառակորդներուն համար, որոնք ամէն միջոց գործադրեցին երեւան հանելու համար երեւակայական զեղծումներ ընտրութեան մէջ, բայց անօգուտ, որովհետեւ իրենք ալ շատ լաւ գիտէին, որ իրողութիւնը իրենց պարտութիւնն էր:

Այս ընտրութենէն յայտնի եղաւ որ Ամերիկահայ զաղութի տեսակէտը օրուայ ազգային հարցերու մասին, նոյնն էր Դաշնակցական տեսակէտին հետ:

Վիճը բացուած էր արդէն եւ Դաշնակցութիւնը չէր կրնար գործակցիլ զաղութի կամքին հակառակ քուէներէ կազմուած ժողովի մը, եւ հեռացաւ Միութենէն:

Դաշնակցութեան ուժի յարաբերական արժէքը երեւան եկաւ նաեւ ուրիշ առիթով, երբ, 1920-ին անդամալոյծ Ազգ. Միութեան «բոլորանուէր» օժանդակութեամբ, այլ սակայն միայն Անդրանիկի հմայքի ուժով (ինչ որ ի՛նքն կը նշանակէ Դաշնակցութեան հմայք) տեղի ունեցած Փրկութեան հանգանակութենէն վերջ, Հ. Յ. Դ. կեդր. կոմիտէն ալ առանձինն մեռնարկեց Բանակի հանգանակութեան եւ հանդանակեց աւելի մեծ գումար:

Փակելէ առաջ այս թոուցիկ յուշերը, պէ՛տք է յիշել երկու իրողութիւն եւս, որոնք երեւան կը բերեն մեր շարքերու զոհաբերութեան ոգին տարբեր ուղղութեամբ:

Առաջինը՝ Հ. Յ. Դ. Ամերիկայի Կարմիր Խաչերու Հայաստանի Հանրապետութեան տրամադրութեան տակ դնելն է: Հ. Յ. Դ. Կարմիր Խաչը իր երկարամեայ եւ արդիւնաւէտ գործունէութիւնը փակելէ առաջ, սակայն, բացաւ 25 հազար տոլարի հանգանակութիւն մը՝ որ պակուեցաւ յաջողութեամբ եւ որով առաջիկային, ազատ Հայաստանի մէջ պիտի կառուցուի հիւանդանոց մը՝ ի յիշատակ Հ. Յ. Դ. Ամեր. Կարմիր Խաչի:

Երկրորդը՝ «Հայրենիք»ը հայրենիքի մէջ մեծ շարժումն էր, երա՞զը «Հայրենիք»ի հիմնադիրներուն եւ մեր բոլորին: Կը յուսայինք թէ հեռու չէ այն օրը, երբ «Հայրենիք» դրօշակիրը պիտի ըլլար դէպի Երկիր վերադարձող պանդուխտներու թափօրին եւ հոն պիտի շարունակէր հրատարակուիլ՝ նուիրուելով Երկրի վերաշինութեան եւ վերածնունդի սրբազան աշխատանքին:

Այս շարժումն ալ պակուեցաւ յաջողութեամբ, գոյացնելով 30 հազարի գումար մը. կը սպասենք միայն որ քաղաքական պատեհ ատիթը ներկայանայ, իրագործելու համար այս ծրագիրը:

«Հայրենիք» աստիճանական զարգացումով, այսօր ունի ո՛չ միայն իր սեփական տպարանը, այլ եւ չէնքը, ուր օրաթերթ «Հայրենիք»-ի կողքին կը հրատարակուի նաեւ իր ամսագիրը:

«Հայրենիք»ի յոբելեանական այս հանդէսը մենք կ'ակնկալէինք տօնել ազատ հայրենիքի մէջ: Ուրիշ չա՞տ մը երազներու հետ, այս երազն ալ չիրականացաւ:

Ամո՛ւր պահենք, սակայն, մեր յոյսը լաւ ապագայի մասին. թոյլ չտանք որ մեր գլխին իջած հարուածները յուսահատութեան անդունդը դլորեն մեզ:

Հանդիսաւոր այս օրը, ամէն ազատասէր հայ, մանաւանդ ամէն Դաշնակցական, հպարտութեամբ պէտք է նայի քառորդ դարու այս հարուստ գործունէութեան վրայ եւ պիտի ուխտէ նո՛յն եռանդով շարունակել գործը զաղափարի նահատակ առաջնորդներուն՝ մի՛չտ անսասան պահելով հաւատքը դէպի հայ ժողովուրդի վերջնական ազատագրութիւնը:

© National Library of Armenia

«ՀԱՅՐԵՆԻՔ» ԵՒ ԻՐ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԸ

Գրեց՝ ՓՐՕՓ. Ճ. Ճ. ՉԱԳՄԱԳՃԵԱՆ

(ՏԱՍՆԵՒԵՕԹ ՏԱՐՈՒԱՅ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ)

Ա

ՇԵԱՐՀԱՒԵՐ պատերազմի բերմունքով Թիւրքիա ազատ զգաց՝ իր հայաջինջ քաղաքականութիւնը մինչեւ կարելի վերջակէտը տանելու: Հայերը աշխարհի ամէն կողմէն կամաւորներ փութացուցին ցեղին գոյութիւնը պաշտպանելու: Գոյշեւիկ յեղափոխութեան հետեւանքով ռուս զինուորները Հայաստանէն փախան. իսկ հայ ժողովուրդը ստիպուեցաւ ամիսներով պաշտպանել Կովկասի ընդարձակ ճակատը: Գրեստ-Լիթովսկի դաշնագրով Լենինի կառավարութիւնը ոչ միայն հրաժարեցաւ Թուրքաց Հայաստանէն, այլ եւ Թիւրքերու գթութեան յանձնեց ռուսահայ հոսարակութիւնը: Հայերը, չնորհիւ իրենց կազմակերպուած պզտիկ ուժին, իրենց երկիրը եւ գոյութիւնը խլեցին Թուրքերու ձեռքէն եւ՝ վեց հարիւր տարուան մէջ չտեսնուած երեւոյթով մը՝ անկախ Հայաստան մը հիմնեցին, եւ գրեթէ երեք տարի ամենէն աննպաստ պայմաններու տակ կառավարեցին զայն, մինչեւ որ ներքին եւ արտաքին դաւադրութիւններով ընկճուած մանուկ Հանրապետութիւնը տեղի տուաւ ժամանակաւորապէս:

Անկախ Հայաստանը երբ ալ վերականգնելու ելլայ, դալիք սերունդներու պատմութիւնը ճշմարիտ գնահատանքով պիտի արձանագրէ այդ դէպքը եւ անկէ նոր լոյս եւ նոր յոյս պիտի ճամբէ մեր իդէալներու աւանդապահներուն:

«Հայրենիք»ը իր համեստ բաժինը ունեցած է այդ մեծ գործին մէջ: Ի՞նչպէս դուրս եկաւ եւ ամեցաւ այդ դերը: Պատասխանը կարելի է գտնել հայրենիքի աշխատաւորներու կեանքին մէջ:

I

Երբ 1903-ի աշնան Ամերիկա հասայ, հայ կեանքը եռանկիւնի պայքարի մը մէջ գտայ: Հնչակեան պառակտումը եւ անոր յաջորդող եղբայրասպանութիւնները տակաւին թարմ էին, եւ թերթերն ու բեմերը բուռն վարկաբանումներով լեցուն:

Երկրէն նոր եկող մը, որ դեռ կորաքամակ կը զգայ Թուրք բռնութեան ծանրութենէն եւ անոր արհաւիրքները կ'ապրի իր երազներուն մէջ, աւելի գործնական մտայնութեամբ մը կը վերաբերի իր հայրենիքի հրատապ խնդիրներուն հետ:

Հրապարակի վրայ կային երեք կուսակցութիւններ երեք թերթերով, Հ. Ճ. Դաշնակցութիւնը իր «Հայրենիք»ով, Վերակազմեալ Հնչակեանութիւնը՝ իր «Ձայն Հայրենեաց»ով, եւ Ս. Դ. Հնչակեանութիւնը՝ իր «Երիտասարդ Հայաստան»ով:

Ինծի համար իրրեւ նորեկի նկատելի էր Վերակազմեալ Հնչակեանութիւնը, որուն աղմուկը ամենէն բարձրն էր, իսկ Ս. Դ. Հնչակեանութեան գոյութիւնը ենթադրելի էր իր հասցէին նետուած դատապարտութիւններով եւ իր պաշտօնական թերթի երեւումով: Վերակազմեալ ըլլալ տեսակ մը մօտա էր բոլոր այն հայրենասէրներու համար, որոնց սրտին մէջ հայրենիքի ցաւը կերպով մը սղիացած էր ազատ միջավայրի բերմունքով:

Եթէ չըլլար հայ ժողովուրդի մէջ առողջ բնազդի տէր տարր մը եւ չըլլային անձնուէր մշակներ այդ տարրը մշակելու՝ Հ. Ճ. Դաշնակցութեան եւ «Հայրենիք»ի համար հող չպիտի գտնուէր Ամերիկահայ կեանքին մէջ:

Աղմուկը տեսական յեղափոխութիւնը մըշուշի մէջ կը թաղէր, իսկ գործնական յեղափոխութիւնը անէծքի առարկայ կը դարձընէր: «Հայրենիք»ը եւ իր շուրջ բոլորուած գործիչները՝ Ա. Վոսմեան, Արամ Աշոտ եւ Տիգրանեան դժուարին առաքելութեան մը առջեւ կը գտնուէին:

Տիգրանեան Վասվուն երիտասարդ մըն էր, մարմնացած ողեւորութիւն մը, որ կը վազէր ու կը մտնէր ժողովուրդի ամէն խաւերուն մէջ: Բեմերէն՝ իր հրատապ ատենախօսութիւններով գիտէր հայու սրտին ամենախորունկ թելերը թունդ հանել եւ յափշտակել իր ունկնդիրները: Իր ուղերձները մէյ մէկ երգեր էին կամ արձակ բանաստեղծութիւններ՝ հե-

© National Library of Armenia

թասներու եւ հերոսութեան նուիրուած։

Տակաւին շատեր կը յիշեն ուսուցչական եկեղեցական կալուածներու գրաւման դէմ բողոքի ժողովի մը մէջ իր խօսած մէկ ճառը, որով ժողովուրդին երեւակայութիւնը յափշտակեց եւ իրեն հետ տարաւ «լեռից լեռ, ձորից ձոր»։ դէպի մի ժողովուրդ, որ «չարանչարան դնում էր, որ աղօթք ունէր, բայց եկեղեցի չունէր, հայրենիք ունէր, բայց իրաւունք չունէր»։

Այդպիսի վառ պատկերներով եւ բացատրութիւններով ան կը կենդանացնէր հայրենիքը եւ անոր հերոսները հոս հեռաւոր եղբայրներու առջեւ։ Դաշնակցական բեմերէն խօսելով ան որոշ պատգամներ ունէր տալիք. պատգամներ, որ ա՜յնքան մօտիկ էին հայու սրտին ու հոգիին։ «Հայրենիք»ի մէջ յաճախ կը գրէր, բայց դժբախտաբար իր գրութիւնները շունչին այն տաք չունչը, որ իր խանդավառ սրտէն կը բխէր, երբ ժողովուրդի բազմութեան հետ դէմ դիմաց կուգար։

Տիգրանեան երկար չմնաց Ամերիկա. շուտով գնաց Կովկաս՝ ուսուցչութեամբ ծառայելու հայ դպրոցին, հոն ալ մեռաւ համեմատաբար երիտասարդ հասակի մէջ։

Ամերիկայի մէջ իր ցանած սերմերէն ոմանք պարարտ հող գտած եւ բազում արդիւնք բերած են։

ՍԱՐԳԻՍ ՄԻՆԱՍԵԱՆ
(ԱՐԱՄ ԱՇՈՏ)

Արամ Աշոտ կամ իր բուն անունով Սարգիս Մինասեան, հմուտ դրագէտ մըն էր՝ մեղմ բնաւորութեամբ եւ ընկերական հակումով, իսկ իր յարգարկու արտաքինով՝ պետական մարդու մը տպաւորութիւն կը ներշնչէր։ Ան կը խօսէր բեմերէն հանդարտ, բայց ներհուն կերպով. իր խօսքերը իմաստալից էին եւ համոզիչ, իր ոճը՝ սահուն եւ գրաւիչ. յաճախ այնչափ վայելուչ եւ մշակուած, որ անրովանդակ եւ անուանարկու գրականութեամբ անած հոգիներուն համար անհասկանալի էր եւ անբաւարար։

Ան կը գրէր այնպէս, ինչպէս կը խօսէր եւ կը խօսէր այնպէս, ինչպէս կը գրէր։

Գիտէր իր հմտութիւնը իր վերցուցած խնդիրներուն կիրառելու արուեստը, բայց երբեք սիրտ չունէր երբեմն ուսանող մտաւորականներու այն ձգտումին, որով անոնք իրենց գիտութեան կամ մասնագիտութեան կիրառումը իմաստակութեան կը տանէին։ Հմտութիւնը իր մէջ ուժ մըն էր, եւ ոչ թէ յաւակնութեան աղբիւր մը։ Ուստի իր ոճը զերծ էր «պատմափիլիսոփայական», «ընկերապատմական», «տնտեսաընկերական» եւայլն ուռուցիկ ու անամէջ արտայայտութիւններէն։

Ամերիկահայ յեղափոխական մամուլը մանկական շրջանի մը մէջ էր եւ շատ քիչ անգամ կուսակցական պայքարը գաղափարական բնոյթ ունէր։ Արամ Աշոտի հանդարտ բնաւորութիւնը եւ իր քիչ մը մարմնեղ կազմութիւնը շատ աւելի նիւթ կը հայթայթէին իր հակառակորդներու յարձակումներուն, քան իր

© National Library of Armenia

խօսածները եւ գրածները, որոնք լուրջ էին եւ բանական։

Մահկանացու կեանքը սակայն շողշողուն եւ անստուեր մեծութիւններ չի ճանչնար. նոյնիսկ Վարք Սրբոցը կը պատկերացնէ իր հերոսները տկարութեան եւ զօրութեան հակադրութիւններով։ Արամ Աշոտ ունէր իր տկարութիւնները եւ կամ տկարութեան նոպաներ, որոնցմով իր անհատականութեան զօրաւոր կողմերը աւելի ցայտուն երեւոյթ մը կը ստանային։ Իր բնաւորութիւնը հանդարտ էր ոչ միայն վիճելի խնդիրներուն եւ վիճաբեր ժողովներու մէջ, այլ նաեւ աշխատանքի մէջ։ Փութկոտ շարժուձեւեր չունէր եւ չէր սիրեր ինքզինք ճնշել՝ բացառիկ ճիգերու համար, այսու հանդերձ չէր ալ խուսափեր անհրաժեշտ աշխատանքէ։ Իր օրով Հայրենիքը լոյս կը տեսնէր ընկերներու զոհողութիւններով, եւ ինք կը մասնակցէր նոյն իսկ թերթերը ծալելու գործին։ Ինքզինքը չճնշելու տկարութեան արդիւնքն էր, որ իր հաւաքած ուսումնասիրութիւններէն մնայուն գործ մը չմնաց մեզի։ Եւ երբ թուրք բարբարոսութիւնը խլեց անոր թանկագին կեանքը, գերեզմանեց նաեւ օժտուած միտք մը, որ ըսելիքներ շատ ունէր եւ յարմար ժամանակի մը կը սպասէր՝ զանոնք երեւան բերելու համար։

Օր մը, աւելի խաղաղ շրջանի մը մէջ, թերեւս ապագայ հայ համալսարանի ուսանող մը, իր պատմական խուզարկութեան ատեն, պիղծներ կատարէ «Դրօշակ»ի եւ «Հայրենիք»ի հաւաքածոներու մէջ եւ անոր գրութիւններէն արժէքաւոր նիւթեր հանէ։ Այդպիսի մէկը յանախ զոհունակութեամբ պիտի կարդայ անոր գրչին արտադրութիւնները՝ առանց հեղինակին ով ըլլալը գիտնալու։ Բայց ի՞նչ հոգ, ամբողջ անանուն, անանձնախոյզ գրութիւններու հեղինակութիւնը պիտի վերագրուի յեղափոխական սերունդին, որուն սիրուած անհատներէն էր Արամ Աշոտ։

Երբեմն իր տկարութեան բոպէներուն մէջ՝ տեղի կուտար իր անձին դէմ եղած տգեղ յարձակումներու առջեւ, անոնց կը պատասխաներ, թէեւ ոչ անպատշաճ ոճով։ Եւ անիմաստ վէճերու սիրահար հակառակորդներու փընտռածն ալ պատասխան մըն էր՝ նոր յարձակումներու նիւթ հայթայթելու համար։

Հայ ժողովուրդը որչա՜փ ժամանակ ուժ եւ պատեհութիւններ վատնած է եւ տակաւին կը վատնէ այդպիսի անարժէք եւ իսկական խնդիրները մշուշող վէճերու մէջ։ Թերեւսմիտ մարդիկ հաճոյքով կը փնտռեն այդ կարգի բանակռիւներ, ինչպէս ամերիկեան ստորին դասակարգերը կը փնտռեն միմիայն պէյսպոլի լուրերը օրաթերթերու մէջ։ Արամ Աշոտ սիրելի էր նոյն իսկ հակառակորդներէ ոմանց, որովհետեւ պատեհութիւն կուտար երբեմն սրամիտ բանավէճերու։

Դաշնակցութեան հանդէպ յարձակումները այնչափ շատ եւ բազմակողմանի էին, որ դաշնակցական տղաքներէ ոմանք կը սպասէին ուժգին պատասխաններու իրենց հրապարակախօսներէն։ Եւ ոմանց կարծիքով Արամ Աշոտ այդ գործին ընդունակ մարդը չէր։ Այդ պատճառով եղած են պարագաներ, երբ Արամ Աշոտ դժկամակութեամբ ընդունուած է իր ընկերներէն, թէեւ աւելի գիտակից խումբեր փնտռուած եւ պահանջած են իր ներկայութիւնը։

1904ի մէջ Վռամեան Եւրոպա զացած էր քանի մը ամսուան համար, իսկ Տիգրանեան իբրեւ գործիչ կը չրջէր, ուստի թերթը մնացած էր ամբողջովին Արամ Աշոտի ուսերուն վրայ։ Այն ատեն խմբագրին գործը իր անմիջական պարտականութիւններէն զատ նաեւ կուսակցական քարտուղարութիւնն եւ գործավարութիւնն էր։ Եղեռնէ Արամ Աշոտին համար բաժակը ծանր էր, բայց ան հպատակեցաւ պահանջին առջեւ եւ տարաւ գործը մինչեւ Վռամեանին վերադարձը։

«Հայրենիք»ը գրեթէ միշտ ինք իր ուղի մէջ տապկուած է, իր եկամուտներով փակելով իր ծախքերը։ Իսկ եկամուտները ինքնաբերաբար չեն գար. ծանուցումներու եւ բաժանորդագրութեանց գները չեն գար, մինչեւ որ աշխուրջ հսկող մը ժամանակին ազդագրերով պահանջը ներկայացնէ։

Արամ Աշոտ կը զբաղէր այդ գործէն, կ՚ընէր մինակ անհրաժեշտ հարկին տակ։ Այդ պատճառով գանձումներու գործը կերպով մը կաղ զացած էր։ Եւ, եթէ չեմ սխալիր, Վռամեանի վերադարձին երկու հարիւր տոլարի «հահաւոր բաց» մը մնացած էր, որուն փակումը Վռամեանի կորովի աշխատանքին եւ

© National Library of Armenia

հետապնդումին կը սպասէր:

Արամ Աշոտ աւելի գրագէտ քան օրագրող, խաղաղ ուսումի եւ ուսումնասիրութեան սիրահար էր եւ նուիրուած էր նաեւ իր ընկերներուն: Սիամանթօ ժրնեւի մէջ թոքախտէ կը բուժուէր. բժիշկները ամէն քաջալերութիւն կուտային, եւ Արամ Աշոտ իր շնչին թոշակէն բան մը կը խնայէր իր բանաստեղծ ընկերոջ հանգստին ու բուժումին համար: Ամէն պարագայի մէջ ամերիկահայ մթնոլորտը իր խառնուածքին չէր գար, եւ ան կ'ուզէր ժամառաջ ազատիլ: Վերջապէս, 1905-ի աշնան հրաժեշտ առաւ Պոսթընի ընկերներէն, եւ քանի մը շաբաթ Նիու Եորք մնալէ ետք գնաց Եւրոպա աւելի խաղաղ կեանք մը ապրելու եւ գոնէ ատեն մը անձնական գործերով զբաղելու:

1908-ին Թուրքիոյ խաբուսիկ սահմանադրութեան վաղանցիկ վերահաստատումէն ետք Պոլիս եւ իր ծննդավայրը վերադարձաւ եւ նուիրուեցաւ ուսուցչական գործին, որուն այնքան յարմարութիւն ունէր: Երբ համաշխարհային պատերազմը բռնկեցաւ, Թուրք բարբարոսութիւնը քշեց զայն՝ հայ մտաւորականութեան առաջին խմբին մէջ՝ դէպի անծանօթ գերեզմանը: Հանգի՛ստ իր ոսկորներուն...:

II

Արշակ Վռամեան, կամ իր իսկական անունով, Օննիկ Դերձակեան, իսկ պարագաներու բերմունքով երբեմն Վահագ, պարզ մտաւորական մը չէր: Ֆիզիքական եւ մտաւորական կորովի մարմնացումն էր ան, զոհողութեան եւ անխոնջ աշխատանքի հերոս մը:

Վահանեանէն ետքը Հ. Ց. Դաշնակցութեան առաջին գործիչ խմբագիրը եղած է Ամերիկայի մէջ: Վահանեան անպատմելի զրկանքներով եւ համբերութեամբ Հ. Ց. Դաշնակցութեան հիմը դրած է Ամերիկայի մէջ, իսկ Վռամեան այդ հիման վրայ կերտած է կազմակերպութեան շէնքը:

Վռամեան «Հայրենիք»ի համար ամէն բան էր, խմբագիր, գործակատար, քարտուղար, հաշուապահ, սրբագրիչ, թերթի ծալլիչ, ի հարկին գրաշար, իսկ կիրակի օրերն ալ գործիչ եւ ատենախօս: Թղթակցութիւնները

ՕՆՆԻԿ ԴԵՐՁԱԿԵԱՆ
(Ա. ՎՌԱՄԵԱՆ)

կը կատարէր օրը օրին, ոչ միայն թերթի, այլ նաեւ կազմակերպութեան ներքին եւ արտասահմանեան ամող մարմիններու հետ: Եկած թղթակցութիւնները աչքէ կ'անցնէր ամենայն խղճմտութեամբ, տեւական արժէք ունեցողները կը պահէր իրրեւ տօքիման, թերթի մէջ հրատարակութեան յարմարութիւն ունեցողները ձեւի կը բերէր եւ զրաշարներուն կը յանձնէր: Նիւթեր, որոնք գիրքի վերածուելու բնոյթ ունէին, անմիջապէս կը հաւաքուէին իր ձեռքի տակ եւ լոյս կը տեսնէին:

Հակառակ «Հայրենիք»ի տպագրական անբնաստ կացութեան՝ իր օրով համեմատաբար

մեծ թուով գրքեր եւ պրօշիւրներ տպուած են, որոնք արդէն բոլորովին սպառած են, ինչպէս Անդրանիկ՝ թարգմանուած Երանի կողմէն, Փափազեանի Արշալոյս տրամաբ, Վազգէն Երզարան, յեղափոխական կեանքէ քանի մը տետրակներ եւն,— գրքեր, որոնք այլեւս չեն երեւնար «Հայրենիք»ի հրատարակութեանց ցանկին մէջ: Վռամեանն էր նաեւ, որ ձեռնարկեց «Հայրենիք» ձայնագրուած Երզարանին, որ լոյս տեսաւ իր յաջորդներու օրով 1908-ի աշնան: Ի միջի այլոց Անգլիերէնի թարգմանել նուաւ նաեւ Ակնունիի Կովկասեան Վէրքեր գիրքը, որ ա՛յնքան այժմէական եւ հրատապ խնդիրներ լոյս աշխարհ կը բերէր իր յարմար ժամանակին: Դժբախտաբար 1907ի սկիզբը իր մեկնումէն ետքը, կազմատուն դիրքին մէկ մասը կորսնցուցած էր, եւ կարելի չեղաւ ամբողջ պրակներու յանձնման ընկալագիրը գտնել. եւ քիչ ատեն ետքը կազմատունը սնանկանալով, այդ ամբողջ աշխատանքն եւ ծախքն ալ փճացաւ:

Միշտ աշխատող, միշտ վազող, միշտ ճամբորդող, եւ յաճախ երկաթուղային վագոնի մէջ իր ատենախօսութեան եւ խմբագրութեան նիւթերը պատրաստող Վռամեանը չէր կորսընցներ իր աշխոյժը, իր եռանդը, եւ իր զուարթութիւնը: Անտրտունջ կը տանէր իր վրայ դրուած բեռը եւ անվհատ կը լսէր նոյնիսկ անբանաւոր քննադատութիւնները՝ իր ընկերներու եւ ոչ ընկերներու կողմէն: Իր հաւատքը մեծ էր իր ցեղին վրայ, ուստի եւ մեծ էր իր հաւատքը իր կազմակերպութեան վրայ, որ ցեղին տոկունութեան մարմնացումը, անձնուրացութեան դասաւանդուն եւ իտէալներու գործադիրն էր:

Այդպիսի հաւատքին հետ միացուցած էր նաեւ գործնական նկարագիր մը եւ միտք մը: Տեսական վէճերու եւ հեռաւոր խնդիրներու հանդէպ ուժ վատնելու հակում չունէր:

Հայութեան խնդիրը իրեն համար շատ պարզ էր. հայը կ՚անպատուէր, կ՚անիրաւուէր, կը կողոպտուէր եւ զարգացման ամէն միջոցներէ կը զրկուէր իր թուրք դրացիին ու բռնապետին միջոցով:

Գեղեցիկ ֆորմիւլաներով հայութիւնը, հայ աշխատող ժողովուրդը այդ անելէն փրկելու հնարաւորութիւն չկար, իսկ տառապանքի «պատմա-ընկերա-փիլիսոփայական» մեկնութիւններն ալ գործնական լուծումի մը չէին յանգեր:

Իրեն համար պարզ էր, որ հայութիւնը փրկել պէտք էր իր անողոք տէրէն, անկէ ետքը բոլոր փիլիսոփայութիւնները իրենց գործնական լուծումը կրնային գտնել: Ոմանք՝ չարիքը ընկերային կարգերու վերագրելով, խըզճերնին կը հանդարտեցնէին. եթէ տէրերուն իրենց ընկերային վարդապետութիւնը ընդունելտային՝ խնդիրը կը վերջանար: Բայց տէրը բնականաբար ընդունելու տրամադիր չէր, եւ բռժոժը կախող ալ չէր գտնուեր ընկերաբան իմաստասէրներու մէջ:

Վռամեանի սրտէն արիւն կը հոսէր, երբ կը լսէր հայ մտաւորականներ, որոնք իրենց զգացումները կը բթացնէին ընկերաբանական մեկնութիւններով եւ տեսակ մը բնական կը գտնէին թուրքին դիրքը. չէ՞ որ քանի մը վաշխառուներ կային հայոց մէջ, եւ չէ՞ որ հայը տնտեսապէս աւելի շուտ կը զարգանար, եթէ պատեհութիւն ունենար, քան թուրքը, ուրեմն «տնտեսապէս նեղուած» թուրքն ու քիւրտը պիտի կողոպտէին բարգաւաճող հայը:

Այս մտայնութեան Վռամեան այնքան հակառակ էր, որ Ս. Դ. Հնչակեանները զինքը ընկերվարութեան հակառակորդ ճանչցած էին, եւ ետքէն յաճախ հրապարակային ժողովներու մէջ հարց կը դնէին, թէ ի՞նչպէս հակաընկերվարական Վռամեանը 1907էն ետքը ընկերվարական դարձած էր*):

*) Խե՜ղճ Վռամեան, բախտը թոյլ չտուաւ քեզի Հայաստանի հանրապետութիւնը ողջունելու, բայց ան նաեւ խնայեց քեզ, որ չտեսնես եւ չլսես հայ անունը կրող «կոմունիստներու», սովիէթ «յեղափոխականներու» կոչերը քո պաշտած հայ ժողովուրդին, որպէսզի ան կամովին մատնէ հայ դատը եւ առանց ընդդիմութեան անձնատուր ըլլայ «ընկեր» Քեմալի ջարդարար ուժերուն: Քու հայու ազնիւ հոգիդ համար այդ հարուածը անտանելի պիտի ըլլար: Որչա՜փ իրաւունք ունէիր պժգալ այն անբնական եւ խորթ վարդապետութենէն, որ մարդկային բարոյականը կ՚ուրէ եւ հոգին կը սուլցնէ. Ղուրանի պէս՝ առողջ միտքը կը սպանէ:

© National Library of Armenia

Վոամեանին համար հայու փրկութիւնը առաջնակարգ եւ ամենասրբազան խնդիրն էր, իսկ ընկերային հարցը՝ երկրորդական: Նաեւ ուշադրաւակարգ չէր անոնցմէ, որոնց տեսակէտով հայու համար ուրիշ ընկերային հարց չկար: Ան գիտէր եւ կ'ընդունէր, թէ ո՛ւր որ ընկերութիւն կար, հոն կար նաեւ ընկերային հարց. իսկ վճռականօրէն համոզուած էր նաեւ որ հայու համար ընկերային բարեւոքում կարելի պիտի չըլլար, մինչեւ որ քաղաքական բարեւոքում չըլլար: Եւ ո՞վ պիտի փրկէր հայը քաղաքականապէս, եթէ ոչ ինքը հայ ժողովուրդը յեղափոխական միջոցներով:

Այս կէտի մէջ ալ իր գործնական միտքը տրամագծօրէն կը տարբերէր Հակառակորդներու մտայնութենէն: Վերակազմեալ Հնչակեանութիւնը (Ռամկավարութիւնը դեռ ծնած չէր) կը հաւատար յեղափոխութեան, բայց յեղափոխութիւնը սկսելու եւ զարգացնելու ժամանակն ու միջոցները կը թողուր մշուշի մէջ: Այնպէս կը թուէր, որ Վերակազմեալներու միակ առաքելութիւնն էր գաղտնիք քարոզել ու պոռալ: Եթէ տեղ մը արկածով յեղափոխական ձեռնարկ մը մատնուէր, եւ կամ եւրոպական թերթերէ լուր մը թարգմանուէր՝ մեր բարեմիտ յեղափոխականները վայնասուն մը կը հանէին, թէ Հ. Ց. Դաշնակցութիւնը գաղտնի գործել չէր գիտեր:

Անգամ մը, կը յիշեմ, Տիգրանեանը սրամիտ պատասխան մը տուաւ այդ կարգի հարցումի մը.

«Այո՛, մենք անզգուշապահ ենք: Հապա ի՞նչ ըսենք Հնչակեանութեան մասին, որ իր ահաւոր գաղտնիքներու անունով կը պոռայ եւ կը սարսափեցնէ Հայիրը, որ թերեւս մտածէ այդ գաղտնիքները արմատն ջնջել, հայութիւնը ջնջելով»:

Վոամեանին համար պարզ էր, որ եթէ յեղափոխութիւնը անհրաժեշտ էր, զայն սկսիլ պէտք էր այսօ՛ր եւ անմիջապէս: Գիտէր, որ դարերու տարկութենէն անցնող հայ ժողովուրդը մէկ օրէն յեղափոխական չէր կրնար ըլլալ, պէտք էր դաստիարակուէր, մարզուէր, եւ այդ բանը կ'ըլլար ընելով, կատարելով եւ ոչ թէ սպասելով:

Անշուշտ գաղտնիքին կը հաւատար, բայց երբեմն գաղտնիքը անխուսափելիօրէն երեւան պիտի գար գործունէութեան ընթացքին, նոր ազէնտներու տեղի պիտի տար: Բայց ի՞նչ ընել, կամ գործէ բոլորովին հրաժարիլ եւ տեսակցեալ յեղափոխութեամբ պարապիլ, որմէ միայն չարիք պիտի ծնէր եւ ոչ մէկ բարիք, եւ կամ, վտանգը յանձն առնելով, այդ փշոտ ճամբայն քալել:

Վոամեան իր բոլոր գրութիւններու եւ առնախօսութիւններու ատեն այնքան յստակ եւ այնքան զօրաւոր կերպով այս փաստերը կը պարզէր, որ կարելի չէր անտեսել զանոնք: Եւ իսկապէս հակառակորդները իր փաստերուն չէին դիմադրեր, միայն աղմուկի պատճառներ ու առիթներ կը փնտռէին՝ իրական հարցերը ժողովրդի մէջ խեղդելու եւ մշուշի մէջ թաղելու համար:

Վոամեան չափազանց զբաղած էր՝ կարենալ մոռանալու համար անհատական երջանկութեան մասին: Ուստի եւ ամուսնութիւնը մտքէ անգամ չէր անցներ: Անհատական նամակի մը մէջ, երբ ան իր ընկերոջ մը ամուսնութիւնը կը շնորհաւորէր, կը խոստովանէր, թէ ինքն ալ ընդունակ էր սիրելու, եւ խենդի պէս սիրելու, եթէ ինքզինքին թոյլ տար. բայց իր հետեւած ճամբան նուիրական էր իրեն համար, թէեւ փշոտ, ուստի եւ չէր ուզեր հոգի մը տառապեցնել իր հետեւէն քաշելով:

Ան ժամանակ չէ ունեցած նաեւ գիրք մը գրելու, թէեւ մէկէ աւելի գիրքերու համար նիւթեր եւ մտադրութիւն ունէր: Իր առնախօսութիւններէն ոմանք, եթէ գրի առնուէին, ապագայ դպրոցականներու համար արտասանութեան դասական գործեր պիտի ըլլային, այնպէս, ինչպէս Փէթրիք Հենրիի՝ ամերիկացի հայրենասէրին ճառը՝ ամերիկեան ուսանողներուն համար:

Այնչափ զզուած էր կարգ մը մտաւորականներու իմաստակութենէն, որ ուսանողական fund-ի մը առաջարկին հանդէպ համբերութիւն չէր ունենար, թէեւ կը սիրէր լուրջ ուսանողներ տեսնել,— ուսանողներ, որոնք իրենց միտքը կրնային դարպաս դնել իրենց ազգին, եւ ոչ թէ յաջողութենէն ետք ամօթ զգալ իրենց պատկանած ցեղին համար, եւ կամ ծաղրի ու նախատինքի ենթարկել ցեղին մաքառումը, յեղափոխութիւնը, պատուաւոր եւ

© National Library of Armenia

ազատ կեանքի մը պայմաններ ձեռք բերելու համար:

Իր մտածումները ա՛յնքան յստակ ու վըճիտ էին, եւ խորհուրդները այնքան պայծառ ու հարկադրող, որ ինք իր կարողութեան, դատողութեան եւ գործունէութեան մասին ալ զօրաւոր հաւատք մը ունէր. բայց այդ հաւատքը ոչ բռնապետութեան եւ ոչ ալ յաւակնոտութեան կը յանգէր: Ան կը մնար միշտ գործնական ոամկավարը: Ընկերային ժողովներու մէջ իր միտքը կը պաշտպանէր եռանդով, բայց, եթէ ժողովը մերժէր իր առաջարկը, ազնուութեամբ կը համակերպէր:

Ամէն բանէ աւելի դէմ էր մարդապաշտութեան եւ թոյլ չէր տար, որ զինք սիրողները իրենց յարգանքն ու հիացումը զուտ ընկերական սահմանէն աւելի անդին տանէին: «Հրամեցէք» բառին կամ արտայայտութեան դէմ զզուանք ունէր, որովհետեւ անկէ թրքական կամ ասիական ստրկութեան նմոյշը կը տեսնէր, «պուլուրուն էֆէնտիմ»ի հոտը կ'առնէր, եւ կ'արդիլէր այդ կարգի պատասխան մը իրեն հանդէպ:

Թերթը՝ Պիշ Սքրիբի վրայ խոշոր չէնքի մը երկրորդ յարկին մէջ՝ պզտիկ անկիւն մը կը գրաւէր: Անոր լուսաւոր մասը գրաշարներուն յատկացուած էր, ուր անոնք հաղիւ թէ շարժելու տեղ ունէին. իսկ խմբագրին գրասեղանը դրուած էր մութ կողմը, ուր ամենապայծառ օրն իսկ պէտք էր էլեկտրական լոյսով գործել: Երբ խմբագիրը դուրսը ելլար, տպարանատէրը ուրախ կ'ելլար, որովհետեւ լոյսը կը խնայէր:

Ամէն չորեքշաբթի իրիկուն, շրջականերէն քանի մը ընկերներ կուգային թերթը ծալելու եւ փոստին հասցնելու աշխատանքին մասնակցելու համար: Վռամեան ինքնայատուկ արագաշարժութեամբ թերթերը կը ծալէր, կը ծրարէր, խմբագրին դրկուելիք ծրարներուն հասցէները կը գրէր սեւ կաւիճով, եւ միեւնոյն ատեն գրական եւ ազգային խնդիրներու մասին ընկերական խօսակցութեան առաջնորդողն էր:

Այդպիսով, ընկերները թէ՛ կ'օգնէին, թէ՛ կ'զուարճանային եւ թէ՛ երջանիկ ժամանց մը կ'ունենային:

Վռամեան նաեւ կատակասէր էր, ամէնուն հետ սրամիտ ակնարկութիւններ կը փոխանակէր, որով իրիկուան աշխատանքի ժամը անզգալաբար կանցնէր: Քանի դեռ կ'անցնիմ այդ չէնքին առջեւէն, Վռամեանին պզտիկ, բայց վայելչակազմ պատկերը աչքիս առջեւ կը ներկայանայ, եւ իր կեանքին տրամերդութիւնը հոգիս կը լեցնէ:

Կուսակցական կեանքը դպրոցական տարբերութեան շատ քիչ երեւոյթ ունէր: Պայքարը եռանկիւնի էր, բայց, Ս. Դ. Հնչակեանութեան ակարութեան պատճառով, անոր սատկութիւնը, երկու կողմի վրայ կ'երեւնար, թէեւ, պէտք է ըսել, այդ կռիւը ամենալայն չափով անձերու եւ անձնականութեան կռիւ էր: Նոյնիսկ ամենէն յամառ Վերակազմեալ Հնչակեաններ, երբ յիշեն այդ մօտաւոր անցեալը, չեմ կարծեր թէ, իրենց յատուկ բերդեր, զօրաւոր տնսակէտեր գտնեն: Ընդհակառակը մանկական հակասութիւններու արձանագրութիւններ միայն պիտի գտնեն:

Հ. Ց. Դաշնակցութեան եւ «Հայրենիք»ի դէմ անոնց մղած պայքարը կարելի է ամփոփել հետեւեալ չորս կէտերու շուրջ. Ապակեդրոնացում, Ռուսահայ-տանկահայ յարաբերութիւն, Անգաղտնապահութիւն, եւ Միութեան հակառակութիւն:

Ապակեդրոնացումը գաղափարական տարբերութեան միակ հողն էր, որ գոյութիւն ունէր երկու կուսակցութիւններու մէջ, իսկ անոր շուրջ եղած վէճերը աւելի ամբոխային քան թէ սկզբունքային հանգամանք ունէին: Երբեմն հակառակորդներու ամենէն լրջամիտը արեգակնային դրութիւնը մէջ կը բերէր՝ իրեւ փաստ ընդդէմ ապակեդրոնացումի, անշուշտ առանց հասկնալու, թէ նոյնիսկ այդ դրութիւնը եղանակաւորող եւ կարելի դարձնող միւս ազդակը ապակեդրոնացումն է:

Ուրեմն նոյնիսկ տիեզերական օրէնքներէն փաստեր հաւաքող մտաւորականները, չունէին պէտք եղած պաշարը տեսնելու, թէ տիեզերքը կենդրոնացումի եւ ապակեդրոնացումի հաւասարակշռութիւն մըն է:

III

Ամէն պարագայի մէջ ապակեդրոնացումը հասարակութեան համար սքօլաստիկ խնդիր

© National Library of Armenia

մին էր եւ դուրկ բաժանում պատճառելու բնոյթէ։

Այնէն մեծ չարիք գործող եւ ազգային հիմախտի մանրէները հայթայթող խնդիրը սակայն ռուսահայ-տաճկահայ խնդիրն էր, որ այսօր ալ մեծապէս կը մնայ մեր անկախութեան դատին։

Այդ տեսակէտը Արփիարեանի համար անհնարին խնդիր մը էր, ինքնասիրութեան, մանկական բինախնդրութեան զգացում մը, որովհետեւ պատճառ ունեցած էր քանի մը ռուսահայ առաջնորդներու հետ չկարենալ ապրելու։ Եւ չարիքի այդ կոտակը, ինքնին ոչինչ եւ անարժան, ա՞նչքան արմատ գտաւ, որ նոյնիսկ այսօր կը շահագործուի ի վնաս հայ դատի։

Վռամեան այդ չարիքի դէմ պայքարելու ամէն յարմարութիւն ունէր, որովհետեւ կը ճանչնար թէ՛ ռուսահայը եւ թէ՛ տաճկահայը։ իր ուսումը առած էր թէ՛ Պոլիս եւ թէ Էջմիածին, եւ յարաբերութիւն ունեցած էր հայութեան երկու հատուածի լաւագոյն դէմքերուն հետ։ Ան նախանձախնդիր էր հայկական ամբողջութեան եւ միութեան համար, եւ իր ամբողջ հոգիով կը սիրէր բոլոր հայ գիւղացին, հոգ չէ թէ արուեստական սահմանի որ մէկ կողմը կը գտնուէր ան։

Այդ ուղղութեամբ իր գրած խմբագրականները Ճշմարիտ հայրենասէրի շունչն ունէին։

Գալով անդաղտնապահութեան խնդրին, պարզապէս կիրքերը վառ պահելու եւ միտքերը մոլորեցնելու միջոց մըն էր ան։ Յեղափոխական մը կը բռնուի, տեղ մը զէնք մը կը պայթի, կամ նամակ մը թշնամիի ձեռք կ'անցնի, եւ կամ Սասունի մէջ հարստահարութեան դէմ ըմբոստութիւն մը կը ծագի, լուրերը կը թարգմանուին օտար թերթերէն,— եւ ահա վայնասուն մը կը փրթի հակառակորդ թերթերու մէջ։

Վռամեան այդ կարգի յարձակումներու դէմ պարզ բացատրութիւն մը ունէր, թէ կրակ եղած տեղը մուխ կ'ելլէ, թէ կա՛մ պէտք է գործէ հրաժարիլ եւ չիսօսիլ յեղափոխութեան անունով եւ կամ տանիլ անխուսափելի չարիքները։

Կուսակցական կեանքը աննօրմալ հակասութիւններով լեցուն էր։ Այն կուսակցութիւնը որ ռուսահայ եւ տաճկահայ հատուածներու անջատման քարոզ կուտար, ազմուկ կը հանէր միութեան անունով։ Հնչակեան երկու հատուածներու միջեւ միութիւն մը փորձուած եւ յանդած էր տխուր եղրայրասպանութիւններու։ Միեւնոյն ատենախօսը բեմի վրայէն միութիւն կը պոռար եւ հատուածական ատելութիւն կը բորբոքէր՝ դժբախտ Մխոի եւ Զիթչեանի անունները բացագանչելով, չմոռնալով նաեւ անվայել բառերու կոյտ մը նետել «հակամիութենական» Դաշնակցութեան։

Ամերիկահայ կեանքի մէջ եռուզեռ մը կար, բայց ամէն պարապայի մէջ հաւաքական աշխատանքի անվարժութիւնը յայտնի էր։ Կուսակցական կռիւը անհատական կռիւ էր։ Դաշնակցութեան դէմ մղուած կռիւը դաշնակցական գործիչներու անհատականութեան դէմ դարձած էր, որմէ ամենամեծ բաժինը կ'իյնար Վռամեանին, որուն նետուած որակումներէն մէկն էր «Ոչնչութեան վիժածը»։

Ամէն գործիչ անուն մը ունէր, Տիգրանեանը շոշոբ էր, Արամ Աշոտը Աւշոտ կամ Սարգիս աղբար, որակումներու ամենէն անմեղը եւ անվնասը, Սահանտեանը (Յովնան Դաւթեան) խեղօք աղբար կամ Խեղօք Դաւիթ անշուշտ իր փիլիսոփայական հակումի եւ ազնիւ բնաւորութեան համար։

Այս չնչին պարագաները կը յիշեմ հոսանքներու ուղղութեան եւ Հայրենիքի խմբագիրներուն առջեւ դրուած խնդիրներու մասին գաղափար մը տալու...։

Անգամ մը ՃԷյմս Պրայսին ընդունելութիւն մը տրուեցաւ Պոսթընի Հօթէլ Ուէնտոմի մէջ, 1904ի Սասունի անկումէն քիչ մը ետքը։ Հայասէր անգլիացին, հայկական կացութիւնը բացատրելով ներկայ ամերիկացիներուն, Սասունի պարագան յիշեց եւ ըսաւ որ «այդ շարժումները այնչափ զօրաւոր չեն որ յաջողին»։ Պաշտօնական անձի մը կողմէն ասկէ աւելի համակրական ու անվերապահ յայտարարութիւն մը չէր կարելի սպասել։ Եւ սակայն, փոխանակ այդ շարժումները զօրացնելու միջոցներուն վրայ խորհելու, «Զայն Հայրենեաց» թերթը ամբողջ շաբաթներ զբաղեցաւ

այդ յայտարարութիւնով, զայն իբրեւ փաստ գործածելով Դաշնակցութեան դէմ, որ այդ շարժումներու մղիչ եւ ղեկավարող ոյժն էր եղած:

Կան մարդիկ, որ խմբագիրներէն կ'ակնկալեն պողպատի անշարժութիւն անուանարկութիւններու եւ յարձակումներու դէմ: Վռամեան միշտ չէր պատասխաներ, իսկ երբ կը պատասխանէր, ընդհանրապէս փաստերը կը վերցնէր: Թէեւ սղեղ բառեր չէր գործածեր, բայց ունէր խթանիչ ակնարկներ, որոնք արդար էին եւ խոր կը թափանցէին հակառակորդներու զգայնութեան մէջ:

Հասկնալի է, որ այս հանգամանքը ինչպէս նաեւ իր կազմակերպողի յաջողութիւնները, եւ անողորմ տրամաբանութիւնը ստեղծած էին իրեն դէմ բուռն ատելութիւն մը:

Շատ անգամ փորձեր եղած են զինքը ծեծելու: Անգամ մը Ուստրի մէջ հայ ժողովի մը մէջ կը խօսի հայասէր Ֆրանսացի մը, որ Հարվըրտ համալսարանի կողմէն Ամերիկա հրաւիրուած էր: Ժողովէն ետքը խումբ մը կարմամիտներ Վռամեանի կը նմանցնեն զայն եւ ծեծելու համար վրան կը յարձակին, բայց ճարպիկ Ֆրանսացին, իր զէնքը քաշելով, չարագործները փախուստի կը մատնէ: Ֆրանսացին, որուն անունը մոռցած եմ, յիշած է այդ պարագան իր գիրքին մէջ, որ գրած էր իր Ամերիկա այցելութեան մասին:

Վռամեան կը յարգէր ժողովուրդի կրօնական անկեղծ զգացումները: Երբ եկեղեցապատկան կալուածներու գրաման առթիւ բողոքի համազգային ժողով մը տեղի ունեցաւ, Վռամեանն էր, որ յիշեցուց թէ՛ յեղափոխականներուն եւ թէ՛ եկեղեցականներուն այն հերոսները, որ ազգային այդ դատի մէջ զոհուեցան, եւ առաջարկեց, որ անոնց յիշատակը յոտնկայս յարգուի եւ օրհնուի եկեղեցականներու կողմէ:

Վռամեանի գործունէութեան մասին անկատար գաղափար մը միայն պիտի տրուէր, եթէ չյիշուէր կամաւորներու խնդիրը: Իբրեւ գործնական յեղափոխութեան առաքեալ, Սասնոյ կռիւներուն օգնելու համար Ամերիկայէն մեկնեցաւ կամաւորներու պզտիկ խումբ մը, որ դիւցազնական կռիւներուն մասնակցեցաւ: Գացողներէն զոհուեցան Լեւոնեան*), Գոսթընէն, Տիգրան Խարբուրլեան Քէմպրիճէն, եւ Նահիկեան՝ Քանքերտէն:

Անոնց թանկագին արեամբ ցանուած սերմերն էին, որ բազում արդիւնք տուին: Տասներկու տարի ետքը հազարներ գացին Ամերիկայէն մեր դարաւոր թշնամիին հետ պատուաւոր կերպով չափուելու:

Այդ շրջանը ճշմարիտ զոհողութեան շրջան էր: Նոյնիսկ դրաշարները կ'աշխատէին՝ առանց ժամու եւ գործի բծախնդիր չափերու:

Կազմակերպութիւնը ամուր հիմերու վրայ դրուած էր, Հայրենիքը իր դերին մէջն էր եւ կը փնտռուէր հասարակութեան կողմէ. Վռամեանին առաքելութիւնը կատարուած էր: Առողջ յեղափոխութեան ուժը փաստուած էր: Անգործնական եւ տարտամ յեղափոխութեան քարոզիչները կրկին պառակտուած էին, եւ Հ. Ց. Դաշնակցութիւնը կը մնար մէկ եւ անբաժան:

Փորձաքար մը եւս կար Հ. Ց. Դաշնակցութեան համար, այդ ալ ընկերվարական սկզբունքի հանդէպ կազմակերպութեան դիրքը ճշդելն էր:

Ամերիկայի կոմիտէներու կողմէ Վռամեան, Թովմաս Ճէլալեան (նահատակուած Բալուի տեղահանութեան ատեն), եւ Վահագն (նահատակուած Ատանայի մէջ) ղրկուեցան Վիեննայի Ընդհանուր ժողովին, ուր մշակուեցաւ կազմակերպութեան վերջին ծրագիրը:

Այդ ժողովէն ետքը Վռամեան այլեւս Ամերիկա չվերադարձաւ: Իր երազն էր հայրե-

*) Լեւոնեան համիստ մտաւորական մը եւ անձնուիրութեան տիպար մը եղած է: Հայրենիքը Նիու Եորքէն Գոսթընն փոխադրուելէն ետք՝ դրամով եւ անձնական ձրի աշխատութիւնով անոր գոյութիւնը ապահովելու նպաստած է: Ցերեկները իր ապրուստին, իսկ գիշերները Հայրենիքի յաջողութեան համար կ'աշխատէր: Երբ առիթը եկաւ գերագոյն զոհողութեան, ան գիտակցօրէն գնաց եւ գիտակցօրէն ինկաւ իր հայրենի երկրին մէջ, պատերազմի դաշտին վրայ: Իր հայրը դիւցազն որդւոյն մահէն ետքն ալ չարունակեց Հայրենիքի մէջ իր ներշնչող թղթակցութիւնները՝ Հայրդ Խեղճ-ը ստորագրութիւնով:

© National Library of Armenia

նիքի համար եւ Հայրենիքի մօտ ապրիլ։ Գործը զինք կոչած էր Կովկաս։ Սահմանադրութենէ ետք՝ անցաւ պահ մը իբրեւ սիրելի վասպուրական, ետքէն փոխադրուեցաւ Պոլիս ու նորէն վերադարձաւ Վան, ուր եւ մնաց մինչեւ իր ողբերգական նահատակութիւնը, պաշտպանելով մինչեւ վերջին շունչ հայ ժողովուրդի իրաւունքները։

1905–ին Ամերիկա եկած էր նաեւ Սահակեան, կամ իր իսկական անունով, Յովհան Դաւթեան, որ «Դրօշակ»ի հիմնադիրներէն եւ խմբագիրներէն եղած էր. խիստ ազնիւ, մեղմ եւ իմաստասէր անձնաւորութիւն մը։*)

Ամերիկահայ միջավայրը շափազանց կուսակցամոլ եւ ամբոխային էր իր խառնուածքին համար, ուստի կարճ ժամանակէ մը ետք վերադարձաւ։ Գրած է Հայրենիքի մէջ զանազան յօդուածներ, ի միջի այլոց Կովկասեան տեսութիւններ Ա. Լեւ սոորագրութեամբ։ Զորս տարի առաջ ան ալ թողուց հայու համար ցաւոտ այս աշխարհը, հետը տանելով ցեղին կսկիծը։

IV

Վռամեանի մեկնումէն ետք խմբագրութեան գլուխը մնաց Նշան Տ. Ս. Թաւճեան, որ շարունակեց իր պաշտօնը մինչեւ 1909 յունուարի սկիզբը։

Վռամեանի շրջանին տեղական աշխատակիցներու մէջ էր նաեւ Բարկէն կամ Մարկոս Տէր Մանուէլեան, որ տարի մը (1906) վարեց նաեւ Հայրենիքի գործավարութիւնը։ Իր կարգադրութեամբ թերթը փոխադրուեցաւ Պիչ Սրբիրէն Ատլանտեան կամ «Լոյս»ի տպարանը՝ հաստատուած Միքայէլ Մինասեանի կողմէն։

Նոյն յարկին մէջ կը տպուէին «Լոյս» գրական եւ գիտական ամսաթերթը, ինչպէս նաեւ «Կոչնակ», կրօնական եւ գրական շաբաթաթերթը։

Գաղափարի եւ ձգտումի տարբերութիւնը շատ խորունկ էր այդ երեք թերթերու հետ կապուած անձերու միջեւ։ Անոնք՝ յաճախ նոյն սեղանի շուրջ նստած՝ իրենց պատկան թերթերու սրբագրութիւնները կը կատարէին, երբեմն թեթեւ վիճաբանութիւններու հետ սրամիտ կատակներ փոխանակելով։

Թաշճեանին հետ «Հայրենիք»ին սերտօրէն կապուած էր Տիգրան Ատիկեան, իբրեւ կեդրոնական կոմիտէի քարտուղար, որ հանդարտ բայց նուիրուած աշխատող մըն էր։ Իր ջանքերուն շնորհիւ 1908–ին «Հայրենիք» սեփական տպարանի մը տէր դարձաւ, 9 Knapp St.–ի ընդարձակ սրահի մը մէջ։ 1911–ին տպարանը փոխադրուեցաւ 7 Bennet St., ուր մնաց մինչեւ 1919, երբ Ներկայ շէնքը գնուեցաւ։

1908 յուլիսին մէջ վերահաստատուեցաւ Թուրքիոյ խարուսիկ սահմանադրութիւնը։ Այդ ասեն նոր սերունդի յիշողութեան մէջ տատապանքէ զատ ուրիշ բան չկար, ուստի այդ փոփոխութիւնը իրականացած երազի մը պատիր երեւոյթը ստացաւ, գոնէ քանի մը շաբթուան համար։ Եւ լուրերու անօթի ժողովուրդը ուզեց աւելի յաճախակի տեսնել թերթին հրատարակութիւնը։ Ուստի որոշուեցաւ «Հայրենիք»ը հրատարակել շաբաթը երկու անգամ։ Տասը շաբաթ այդպէս շարունակելէ ետք, մարդոց խանդավառութեան հետ «Հայրենիք»ը դարձաւ նորէն շաբաթաթերթ։

Ատիկեան, 1909–ին, Թոմաս Ճէլալեանի հետ պատգամաւոր ղրկուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան ընդհանուր ժողովին՝ որ տեղի ունեցաւ Պուլկարիոյ մէջ։ Այդ ժողովի կարգադրութեամբ ան անցաւ երկիր կազմակերպական գործով եւ վերջը հաստատուեցաւ Խարբերդ։ Բայց 1915–ի արհաւիրքներու ատեն՝ Խարբերդի բանտին մէջ հերոսական ժեստով մը՝ բազմաթիւ ընկերներու հետ մերժեց անձնատուր բլլալ թուրք եսթապանին եւ ընտրեց պատուաւոր մահը։ Բանտարկեալները վերջ տուին իրենց թանկագին կեանքին, հրդեհելով բանտը։

Ատիկեան կարճ ժամանակի մը մէջ սիրելի դարձած էր բոլոր ընկերներուն եւ նոյնիսկ ոչ ընկերներուն։

«Հայրենիք»ի մէջ յաճախ գրած է լաւ մտածուած յօդուածներ եւ կամ լաւ ընտրուած թարգմանութիւններ։

1907–էն ետք երկու նոր խնդիրներ աւելցած էին եւ հակառակորդներու ձեռքը ամէնի գործիքներ դարձած։ Այդ խնդիրներն էին ըն-

*) Տես «Հայրենիք» ամսագիր Թիւ 2, էջ 9։

© National Library of Armenia

կերվարական սկզբունքի որդեգրումը եւ Թրքահայ համաձայնութեան որոշումը:

Հ. Ց. Դաշնակցական խմբագիրներուն եւ գործիչներուն վրայ ահագին ծանրութիւն մը եւ պատասխանատուութիւն մը բարդուած էր: Պէտք էր խնդիրները յստակ կերպով բացատրել, ժողովուրդը թիւրիմացութիւններէ դուրս քաշել, եւ հակառակորդները դինաթափ ընել խեղաթիւրումներէ:

Եւ այդ դիւրին գործ մը չէր:

Սահմանադրութենէն ետք, պահպանողական հոսանքը ստիպ ունեցաւ կազմակերպուած եւ ոչ կազմակերպուած յարձակումներ գործել Դաշնակցութեան դէմ: Օրաթերթերուն եւ շաբաթաթերթերուն թիւր խիստ շատցաւ: Եւ, փոխանակ մտքի սնունդ տալու, իրար հասկնալու միջոցներ փնտռելու, անոնք սկսան արշաւանք մը Դաշնակցութեան դէմ:

Ամէն օր նոր եւ սնամէջ խնդիրներ յարուցանելով, հայու կեանքը խռովեցին եւ վրդովեցին, եւ երբեք ուշադրութիւն չդարձուցին այն ահաւոր խնդիրներուն եւ փոթորիկներուն, որ կը պատրաստուէին հայու գլխին պայթելու:

1909 ապրիլին վերջերը Ատանայի ահռելի կոտորածը տեղի ունեցաւ, ուր նորէն յեղափոխական իտէալին ընդունակ երիտասարդութիւնը ցեղին պատիւը փրկեց: Ամերիկայի մէջ «Հայրենիք»ը դարձեալ հոսանքն ի վեր երթալ ստիպուած էր:

Բայց որչա՜փ դժուար է իրողութիւնները իրենց պարզութեան մէջ ներկայացնել՝ կամաւորապէս բացասական դիրք բռնող հոսանքներու առջեւ: Դաշնակցութիւնը ընկերվարութիւնը որդեգրելով ազգային ձգտումէ հրաժարած էր՝ մակերեսային մտածողներու կամ մտածել չուզողներու համար: Իսկ ուղղափառ մարքսիստներու համար՝ Դաշնակցութեան ընկերվարութիւնը պարզ հերետիկոսութիւն մըն էր:

Թուրքերու հետ առժամեայ համերաշխութեան փորձը՝ փոխանակ զէթ սկեպտիկ համակրութեան մը հանդիպելու, սոսկալի աղմուկի եւ վայնասունի տեղի տուաւ, որ անվայել էր բարոյական մեծութիւն ունեցող ազգի մը արժանապատուութեան:

Այդ վայնասունը քանդեց շարք մը կարելիութիւններ: Դաշնակցութիւնը զիտէր, որ թուրքը անկեղծ չէր, անոր համերաշխութեան փորձը ժամանակ շահելու ձգտում մըն էր: Բայց հայը ամենէն աւելի պէտք ունէր ժամանակ շահելու եւ ինքնապաշտպանութեան պատրաստուելու: Անշուշտ, եթէ թուրքերը անկեղծութեամբ հայու ինքնավարութեան փափաքին ընդառաջ երթային, երկու ցեղերու միջեւ դրացիութեան եւ պետականակցութեան լաւագոյն յարաբերութիւններ աստիճանաբար կրնային մշակուիլ. եւ այսօր թէ՛ Թուրքիան աւերումէ կ՝ազատէր եւ թէ՛ հայութեան կը խնայուէր վերջին անօրինակ ողբերգութիւնը:

«Հայրենիք»ը ամէն բան պարզ չէր կրնար խօսիլ, եւ հակառակորդները զիտէին այդ, ուստի անխղճօրէն կ՝օգտուէին անոր դժուարութենէն:

1910ին «Հայրենիք»ը հրատարակութիւն մը ունեցաւ «Իմ Երազս» վերնագրով, որ կէս մը երգիծական եւ կէս մը ողբերգական նախազգացումով հայութեան ուշադրութեան կը յանձնէր հաւանական վտանգները: Բայց հայութեան կեանքը արուեստականօրէն չափազանց փոթորկուած էր մտածելու եւ գործելու նուիրուելու համար:

«Թրքահայ համաձայնութիւն», «ընկերվարութիւն» յանկերգները երբեմն իրենց ուժը կը կորսնցնէին եւ նոյնիսկ հակառակորդներու ձանձրանալի կը թուէին, ուստի պէտք էր յուզումը վառ պահել նոր մէթոտներով: Ատոր արդիւնք էին «ազատ սէրի», «բաց ու գոցի» եւն. անիմաստ վէճերը:

Տարակոյս չկայ, որ երբեմն Դաշնակցական անհատներու ընթացքը եղած է անբանաւոր եւ կամ դատապարտելի. այդպիսի անհատներ ի՜նչ ծանր բեռ եղած են կազմակերպութեան: Անհատին եւ ցեղին տկարութիւնը տարամերժօրէն վերագրուած է կազմակերպութեան:

Աշխարհի մէջ ոչ մէկ կազմակերպութիւն կայ, որ այնքան զօրաւոր ըլլայ, որ իր կազմին մէջ գտնուող բոլոր անհատներու բարքը միեւնոյն չափանիշի մէջ կարենայ պահել: Այդ բանի մէջ չեն յաջողած պետական, եկեղեցական, նահապետական, դպրոցական, եւ նոյնիսկ ընտանեկան հաստատութիւններ: Միեւնոյն բարի ծնողքի զաւակներու բարոյական

© National Library of Armenia

եւ մտաւորական մակարդակը կը զանազանի, երբեմն խիստ աչքառու հակադրութեամբ, եւ սակայն ծնողները կը սիրեն զանոնք:

Եղած են Դաշնակցականներ, որոնք մտացի երեւնալու մարմաջով եւ կամ երիտասարդի մը յատուկ ըմբոստութեամբ՝ հակակրօնական դաղափարներ արծարծած են, եւ Դաշնակցութիւնը ոչ մէկ իրաւունք կրնար ունենալ անոնց մտածելակերպին վերջ դնելու: Բայց այդ բաւական էր հակառակորդներուն նոր զէնք հայթայթելու համար:

Այս երեւոյթը տարօրինակ է. հակակրօնական վիճաբանութիւններ չատ եղած են զբաղոցական աչակերտներու մէջ, Դաշնակցութեան գոյութենէն չատ առաջ: Ես կը յիշեմ հակակրօնական վիճաբանութիւններ նոյնիսկ իմ ուսուցիչներու մէջ, որոնք չէին իսկ ծածկեր իրենց խօսակցութիւնը պատանի ուսանողներու առջեւ, եւ աչակերտները կը նայէին այդ կարգի վէճերու վրայ զուտ սfoլասթիք չահագրգռութեամբ մը: Բայց ոչ ուսուցիչները այն ատեն կը մեղադրուէին, որ եկեղեցական կալուածներէ կ'առնէին իրենց թոշակները, եւ ոչ ալ դպրոցը պատասխանատուութեան կը կանչէր զանոնք:

Բայց հանելուկ մըն է, թէ ինչո՞ւ հայ ժողովուրդը բարոյական աւելի եւ անբանաւոր քննթրոլ կը պահանջէ զուտ յեղափոխական կազմակերպութենէ մը, որ կրօնական եւ ազգային յարակից խնդիրները թողուցած է անհատներուն, որ կարգադրեն իրենց Աստուծոյն հետ, այնպէս ինչպէս իրենց խիղճը կ'արտօնէ: Եւ աւելի տարօրինակ է որ, այդ խստապահանջութիւնը ի գործ չդրուիր ուրիշ կազմակերպութեանց հանդէպ, նոյնիսկ եկեղեցիի հանդէպ:

Արդեօ՞ք ասիկա անուղղակի մէկ ապացոյց չէ Դաշնակցութեան բարոյական մեծութեան եւ ժողովուրդի ընդարձակ խաւերուն վրայ ազդած վստահութեան:

Այդպիսի առիթ մը կը յիշեմ տրուած ըլլալ «Հայրենիք»ի կողմէն:

Արիս Խրայէլեան ուշիմ երիտասարդ մըն էր եւ հետաքրքիր գրող: Իր ոճը երբեմն խայթող էր, մանաւանդ կրօնականներուն եւ պատուելիներուն դէմ: Իր քանի մը յօդուածները բաւական իրարանցում բերին նոյնիսկ Պոլսոյ թերթերու մէջ:

Այդ առիթները Արիսը թարգմանած էր նաեւ Ինկըրսոլի մէկ ճառը՝ իր անհատական ծախքով եւ պատասխանատուութեամբ, բայց չէ՞ որ տպուած էր «Հայրենիք»ի տպարանին մէջ: Ատիկա արդէն բաւական էր, որ «Հայրենիք», Դաշնակցութիւն եւ անկրօնութիւն իրար խառնուին:

Փրոֆ. Խաչատուրեան հետաքրքիր տողեր ունէր Արիսի նկատմամբ իր Յուշերուն մէջ: Դժբախտ երիտասարդը ձերբակալուած է Գոնիայի մէջ եւ տարուած ղէպի անծանօթ մահը:

Ամերիկահայ կեանքը երբեք ներքին խաղաղութիւն եւ սիրտ պնդող համաձայնութիւն մը ունեցած չէ: Եւ ի՞նչ անիմաստ պատճառներով իրարատելութեան հնոցը վառ պահուած է: Օրինակ մը բաւական է թերեւս զաղափար մը տալու համար:

1910ին էր, կարծեմ, Ս. Դ. Հնչակեան դործիչ մը եկած էր, Պանդուխտ անունով, որ նախապէս եղած էր Դաշնակցութեան զինուորական վարժարանին մէջ, Պուլկարիա: Իր մտաւորական պաշարը աղքատ էր, բայց անհամեմատ բառարանը ճոխ էր: Լրջութենէ զուրկ էր եւ ոչ ոք կարեւորութիւն կուտար իրեն: Բայց խեղճ մարդը անպատճառ հերոսանալ կ'ուզէր:

Օր մը քանի մը հնչակեաններ իրենց քլիպին մէջ դաշնակցական մը կը ծեծեն:

Զոհը դուրս կ'ելլէ ծեծուողի բնական ֆըրազով՝ «կեցէք որ ձեր դասը տամ»:

Հերոսութեան ծարաւի մարդը յարմար պատեհութիւն մը կը տեսնէ Քանատայի այդ ղէպքին մէջ, որուն ինքն ալ պատահմամբ ներկայ եղած էր, եւ անմիջապէս կը հեռագրէ «Երիտասարդ Հայաստան»ին, Պոլսոյ իրենց կեդրոնին եւայլն, թէ Դաշնակցութեան կողմէ իր դէմ փորձուած տէոորը անյաջող անցաւ: Սուտը չափազանց ծիծաղելի էր, եւ ոչ մէկ արուեստական ջանք կրնար լրջութեան դիմակ հագցնել անոր: Ուստի դէպքը վաղանցիկ վլվլուկէ մը ետք նետուեցաւ մոռացութեան ծոցը:

Հայութեան դատը կնճռոտ եղած է միշտ: Անոր լուծումը փոքրաթիւ եւ ցրուած ազգի մը ամբողջ ուժերու համերաշխ գործակցու-

© National Library of Armenia

թեանը պէտք ունէր. բայց հայու գովելի հայրենասիրութեան չափ զօրաւոր եղած չէ խոհականութիւնը, որ կարենար այդպիսի գործակցութիւն մը ստեղծել:

Որչա՜փ ուժեր անհարկիօրէն վատնուեցան, որչա՜փ թուղթեր անիմաստօրէն մրոտուեցան, որոնք սոսկ թիւրիմացութեան եւ իրերամերժ դասաւորումներու պատճառ դարձան:

Այս տողերը գրելով չեմ ուզեր այն գաղափարը տալ, թէ «Հայրենիք» ամենէն կատարեալ եւ անպարսաւ թերթը եղած էր: Քաղաքական խնդիրներու մէջ՝ մանկունակ հայ հասարակութեան ստեղծած հոսանքը շատ զօրաւոր էր՝ անոր քարշող հոսանքէն ազատ մնալու համար: Խմբագիրները իրենց հակումին, անհատական ուժին եւ տկարութեան ազդեցութիւնը անխուսափելիօրէն թողած են անոր կեանքին վրայ, ինչպէս թողած են նոյնիսկ ուղղագրութեան իրենց փայփայած ձեւը:

Բայց կազմակերպութիւնը, համեմատաբար ամենէն կենսունակ ըլլալով եւ ոամկավար սկզբունքներու վրայ հիմնուած ըլլալով, յաջողած է թերթի վրայէն մեծ մասով ջնջել անհատական դրոշմը: Ուստի պարզ քննութիւն մը ցոյց պիտի տայ, որ իտէալի եւ սկզբունքի աւելի ներդաշնակութիւն կը տիրէ «Հայրենիք»ի երկարամեայ հաւաքածոներուն, քան ուրիշ ոեւէ թերթի մէջ:

ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ
(ՍԻՄԱՆԹՕ)

V

1909-ի աշնան Սիմանթօն ալ Ամերիկա եկաւ, ընկերանալով Թովմաս Ճէլալեանին, որ Ութներորդ Ընդհանուր Ժողովին իբրեւ պատգամաւոր զացած էր Տիգրան Ատիկեանի հետ:

Սիմանթօ էականապէս բանաստեղծ էր, դիտող բանաստեղծ մը: Իր քնարը բոլորովին տարբեր յատկանշական մը ունէր: Անոր լարերը կը թրթռային միայն դիւցազներգութեան համար. Սիմանթօ իբրեւ հայ անհատ, Ատոմ Եարճանեանն էր,— ընկերական, սովորաբար մեղմ, բայց դիւրաբորբոք, ցասումի կարճ եւ վաղանցուկ բռնկումներով, նիհար, գրեթէ բարձրահասակ, ընդհանուր կերպով վայելչակազմ անձնաւորութիւն մը: Իբրեւ անհատ թերեւս ունեցած էր սիրոյ հակումներ. բայց անոնք երբեք արձագանգ գտած չէին իր քնարին վրայ: Կուսակցութեան հետ կապուած էր՝ մեծ մասամբ անոր հերոսներու հանդէպ ունեցած իր հիացումով: Իր տեսանող միտքը իւրացուցած էր անոնց համոզումը եւ անոնց փիլիսոփայութեան գործնականութիւնը:

Անձը եւ գրողը խիստ հետաքրքիր առընչութիւն մը ունին. յաճախ գնահատող միտքը երբ գրուածքի մը գեղեցկութիւնն ու ուժը կը գտնէ, կը տեսնէ այն կապակցութիւնը, որ կայ գործի եւ վարպետի միջեւ: Ընթերցողը գրուածքին ետեւ կը գտնէ հեղինակը, մար-

© National Library of Armenia

ղը, որ կերպով մը կ'աստուածանայ իր հիացող աչքերուն առջև։ Մենք հայերս այդպիսի կապով շատ քիչ կը հետաքրքրուինք։ Սովորաբար վարպետը, գործին ստեղծիչը կը մնանենք, երբ արդէն ան մահուան հովիտէն անցած եւ անդիի յաւիտենական մեծամասնութեան հետ միացած է։

Ամերիկահայ բեմերու վրայ Սիմանթոի բանաստեղծութիւնները արտասանուած էին անոր գալուստէն առաջ, ինչպէս հիմա կ'արտասանուին՝ առանց կուսակցական տարբերութեան։ Բայց, երբ Սիմանթո Ամերիկա եկաւ, շատ մը Դաշնակցականներու համար ան յուսախաբութիւն մը եղաւ։ Իրենց առջեւ պարզ Ատոմ Եարճանեանն էր, որ գործիչ չէր եւ ըլլալու յարմարութիւն ալ չունէր, իսկ տարբեր կուսակցութեանց անդամներու համար, ան «մոլի դաշնակցական» մըն էր, որ բերուած էր իր կուսակցութեան համար նոր հմայք մը ստեղծելու, ուստի եւ վտանգաւոր թշնամի մը։

Սիմանթո իր կուսակցութեան ոեւէ վստանգ մը չէր տեսած, որ՝ զայն փրկելու համար՝ եկած ըլլար։ Իր Ամերիկա գալու գլխաւոր շարժառիթը կարելի է բացատրել երեք փափաքով, սոսկ բանաստեղծի փափաքով,— բարձրանալ Ազատութեան արձանին ջահակիր ձեռքին վրայ, տեսնել Նիակարա ջրվէժը, եւ այցելել Էտկար Ալէն Փօի՝ իր պաշտած բանաստեղծի գերեզմանն ու արձանը։

Սիմանթո իր առաջին փափաքին գոհացում տուաւ իր Ամերիկա ցամաք ելնելու առաջին օրն իսկ, Նիու Եորքի Նաւամատոյցին մէջ։ Երկրորդ երազին իրականացումը տեսաւ երկիր վերադառնալէ անմիջապէս առաջ։ Իսկ երրորդ փափաքը, որչափ ես գիտեմ, մնաց անկատար։ Նիու Եորքէն՝ Պալթիմօր, ուր կը գտնուի Փօի արձանը, երազուած ուխտատեղին, քանի մը ժամուան եւ տասնեակ մը տոլարի արժէքով ճամբորդութիւն մը միայն կը պահանջէ. բայց ո՞ւր պէտք էր գտնել յաւելուածական այդ քանի մը տոլարը, որ կազմակերպականօրէն կարելի չէր հաշիւի առնել։

Հայ գաղութը ընդհանրապէս զլացաւ այն համակրութիւնը, որուն բանաստեղծը արժանի էր։ Իսկ կուսակցութիւնները հակակրութիւնը մինչեւ թշնամութեան տարին, այնպէս որ «Ազգ» թերթը նոյնիսկ մերժեց տպել անոր ամբողջական գործին ծանուցումը։

Հայ ժողովուրդը դիւանագէտ ժողովուրդ մըն է կ'ըսեն ոմանք, բայց աւելի ան բանաստեղծ ժողովուրդ մըն է։ Ամէն նորահաս բանաստեղծ Դուրեանական դպրոցի աշակերտ մը կը դառնայ, բայց հայ ժողովուրդը իր բանաստեղծական համաստեղութեան մէջ միայն մէկ Դուրեան կը համբէ։ Նոյնպէս յեղափոխական նորագոյն բանաստեղծներ՝ Սիմանթոի ոճէն եւ ուժէն սնունդ քաղել կ'աշխատին, անոր բացած արահետներէն ղեկերել կը ջանան, բայց Սիմանթոն միակ ասպետն է, որ իր նժոյգով չկոխկռտուած բարձրութիւններէն կը փայլի։

Կազմակերպութիւնը անոր զբաղում մը տուած էր «Հայրենիք»ի խմբագրութեան մէջ, ուստի օրուան մեծ մասը հոն կ'անցնէր։ Բայց ունէր նաեւ ուսումնասիրութեան մասնաւոր ժամեր Պոսթընի քաղաքային գրատան մէջ։ Ամերիկա գալէ առաջ իր սիրելի ընկերն ու բարեկամը, Արամ Աշոտ, նկարագրած է իրեն Պոսթընի գրատան գեղեցկութիւնն եւ ներսի Puvis de Chavannes-ի որմնանկարներուն գրաւչութիւնը։

Եւ իսկապէս այդ հաստատութիւնը սրբավայր մը դարձած էր Սիմանթոին համար։ Եւ անհրաժեշտ էր, որ ամէն օր իր հիացողի պաշտամունքը բերէր Մուսաներու եւ խորհրդանկարներու այդ տաճարին, եւ ներշնչումներ քաղէր անկէ։ Իր «Հայրենի Հրաւէրը» բանաստեղծութիւններու շարքը կերտած է այդ տաճարին մէջ։

Երբ խմբագրատան մէջ կը տեսնէի գինքը իր աթոռին վրայ կծկուած եւ հակած սեղանին վրայ, մարդու եւ մեքենայի ձայներուն համար բոլորովին անթափանցելի էութիւն մը, գիտէի, որ իր հոգին վերացած էր գաղափարներով եւ պէտք էր գինքը առանձին թողուլ։

Այդպիսի րոպէներու մէջ էր, որ ան կը տեսնէր պատկերը, եւ ուրուագիծը առնելէ ետք կը վազէր Մուսաներու սրահը՝ անոր վերջնական ձեւը տալու։ Այդպիսի րոպէէ մը ետքն էր, որ օր մը ան ինծի յայտնեց թէ, յղացած էր գաղափար մը, որ կամ իր յիմարութեան եւ կամ իր գեղարուեստին գլուխ գործոցը պիտի ըլլար։ «Մօր մը երազը»ին տեսիլքն էր այդ։

© National Library of Armenia

Եւ իսկապէս չեմ գիտեր թէ Սիամանթօ երբեք տուա՞ծ է այնքան ահռելի եւ միւնոյն ատեն քաղցր պատկեր մը: Ահռելի՝ Հայաստանի հերոսներու ուրուականներով եւ քաղցր՝ մայրական եւ որդիական սիրոյ խորունկ զգացումներով:

Ի՞նչ անթարգմանելի պատկերներ կը ստեղծէ մեր հոգիին մէջ, երբ կը կարդանք.

«Մայրիկ, մայրիկ, հին օրերու արշալո՛յս...
Մայրիկ, մայրիկ, հին օրերու սրբութիւն...
Մայրիկ, մայրիկ... նոր օրերու, նոր յոյսերու
թշուառութի՛ւն»:

Որչափ իրական եւ տպաւորիչ է այս բացատրութիւնը մեր օրերուն մէջ:

Սիամանթօ ամերիկեան վարք ու բարքին, մաքրութեան եւ գործնականութեան հիացող մըն էր: Ամերիկեան կեանքը շատ աւելի բարձր կը գտնէր, բաղդատելով եւրոպականի հետ: Միայն թէ կը զարմանար, որ Ամերիկան կըրնար այնքան մեղանչող ըլլալ գեղարուեստի հանդէպ կղմինտրէ թատրոններ, նոյնիսկ օփէրաներ չունենալով,— Ամերիկան, որ չէնքին ներսը թագաւորական պալատներէ շատ աւելի լաւ զարդարել գիտէր, իսկ դուրսը կը ձգէր կղմինտրէ պատեանով:

Բանաստեղծէ մը հազիւ թէ կարելի ըլլայ ակնկալել կեանքի մեքենական ազդակները դիտելու: Սիամանթօի աչքերէն գործնական ոչ մէկ երեւոյթ խոյս կուտար: Նոյնիսկ ճաշարանի եւ խոհանոցի միջեւ գտնուող բոլորակ ծակը իր ուշադրութիւնը կը գրաւէր, եւ ատով ամերիկեան ժամաչահութեան ձգտումը կը տեսնէր: Ցաճախ այդպիսի պզտիկ իրողութիւններ տեսնելով, վաղանցիկ փափաք մը կ'ունենար իր դիտարկութիւնները հաւաքել, կարգի բերել եւ գիրքի մը վերածել:

Տարակոյս չունիմ որ խիստ հետաքրքիր գործ մը պիտի ըլլար, եթէ իրականացնէր այդ դիտումը:

Սիամանթօ ֆիզիքական եւ հոգեկան տանջանքներ շատ ունեցած էր, իր ազգին ցաւը ծանր կը կշռէր սրտին վրայ: Տարիներ առաջ կորսնցուցած էր իր հայրը, որ յուսահատական բոպէի մը մէջ ծովամոյն եղած էր: Կը մտահոգուէր իրեններու տնտեսական վիճակով: Ատեն մը Թոքախտի ենթարկուած եւ չընորհիւ իր աննուազ կամքի եւ իրեն տրուած խնամքին բոլորովին բուժուած էր: Բայց հակառակ այս ամէն դժուարութիւններու՝ ընկերական շրջանակներու սէրը եւ զուարթ տրամադրութիւնը չէր կորսնցուցած:

Երբ ան Ամերիկա եկաւ պէխով եւ խնամքով շտկուած մօրուքով էր: Ամերիկեան ածիլելու սովորութիւնը աւելի հրապուրիչ դտաւ. 1910-ի սկիզբները Փրավիտենսի մէջ Պատգամաւորական ժողով մը կը գումարուէր, ուր ներկայ էր նաեւ Ակնունին: Սիամանթօ մտադրած էր ընկերներուն անակնկալ մը բերել՝ իբրեւ արդիւնք իր չարաճճի զուարճութեան: Առաւօտ մը, երբ ընկերները կը պատրաստուէին ժողովի երթալ, Սիամանթօ յանկարծ հօթկի սափրիչի խանութէն դուրս կը վազէ՝ բոլորովին ածիլուած եւ մանկացած: Կ'ըսէր, որ երբ Պոլիս վերադառնար, պիտի չարունակէր պէխերը ածիլելու սովորութիւնը:

Սիամանթօ վիճաբանութիւն չէր սիրեր, եւ եթէ երբեք վիճաբանութեան մը առջեւ գտնուէր, չէր կրնար առանց յուզումի մնալ դէպի մէկ կամ միւս կողմը: Ամբողջ հոգիով կ'ատէր քաղաքական բանակռիւները եւ կուսակցական հակամարտութիւնները: Հայոց պատմութիւնը կարդալու սիրտ չունէր, որովհետեւ անոր մէջ մեծ մասամբ ներքին կռիւներու եւ վատութիւններու արձանագրութեանց կը հանդիպէր, թէեւ հերոսներու պատմութեան տեղեակ էր:

Հակառակ իր այդ տրամադրութեան՝ «Հայրենիք»ի մէջ վիճաբանական խնդիր մը բացաւ,— խնդիր մը, որ անմեղունակ էր եւ դասական բնոյթ մը կը կրէր:

Թրքական «յեղափոխութեան» առաջին շրջաններուն Թուրք թերթեր ազգայնական թռիչներ առած էին, եւ ոմանք նոյնիսկ կ'առաջարկէին արաբական գրերէ հրաժարիլ եւ նոր այբուբէն մը որդեգրել, որպէսզի Թուրք լեզուին ուսուցումն եւ ընթերցումը դիւրանար: Թուրք թերթերէն մէկը թելադրած էր նոյնիսկ հայերէն տառերուն նախընտրութիւն տալ, քանի որ հայերը արդէն այդ տառերը յարմարցուցած էին Թուրք լեզուին: Սիամանթօ «Հայրենիք»ի մէջ հարցում մը բացաւ, թէ հայ գրերու որդեգրումը Թուրքերու կողմէ մեզի օգտակա՞ր թէ վնասակար պիտի ըլլար: Եւ յայտնի գրողներէն թեր ու դէմ մեծ թուով

պատասխան յօդուածներ հրատարակեց։

Սիամանթօ Ամերիկայի մէջ բաւական ոգեւորուած էր եւ ունէր բեղմնաւոր տրամադրութիւն։ Մտքին մէջ շատ նիւթեր ունէր։ Այն ընկերները որ զինքը մօտէն կը ճանչնային, քաջալերեցին զինքը, որ իր ամրողջական գործերը հատորի մը մէջ ամփոփէր եւ երկրորդ հատորի համար ալ նոր նիւթեր, նոր յուշերներ գտնել ջանար։ Ուստի հրատարակիչ մարմին մը կազմուեցաւ՝ բաժանորդագրութեան կոչեր ուղղելով։

Առաջին հատորը լոյս ընծայելու չափ գումար մը եկաւ, բայց բանաստեղծը մեծ քաջալերութիւն չգտաւ հրատարակութենէն ետք։ Գիրքերուն մեծ մասը Պոլիս դրկեց, ուր հրդեհի մը հարակ եղան անոնք։ Իսկ մէկ մասն ալ Ամերիկայի մէջ ցրուեց՝ առանց նոյնիսկ տեսնելու եւ մարդոց ցանկը առնելու։ Բաւական թուով դիրքեր ասդին անդին կորսուած ըլլալու են, գործակալներու տեղափոխութեամբ եւ ուրիշ պատճառներով։ Ուստի ան սիրտ չունեցաւ երկրորդ հատորին վրայ մըտածելու։ Ոգեւորութեան դիրաւ կը յաջորդէր ընկճումը։

Անշուշտ «Հայրենիք»ի այն օրուայ դրաչարները հանդիպով կը յիշեն Սիամանթօի ձեռագրերը, որ աւելի բեւեռագրի կը նմանէին քան թէ Մեսրոպեան արդիացած ձեւերուն։

Քանի մը անգամ իրեն հետ Պօսթըն Օփերա գացինք կարեւոր ներկայացումներ տեսնելու։ Շէնքին ներքին դեղեցկութեան եւ փառաւորութեան վրայ կը հիանար, անշուշտ դուրսի կղմինտրները կ'ատէր։ Անգամ մը դիցաբանական ներկայացում մը տրուեցաւ, ուր ընդծովեայ տեսարաններ կային ելեքտրական լոյսերու խիստ հիանալի կիրառումներով, այնպէս որ ծովի կապոյտ ալիքներու տակէն սպիտակ յաւերժահարսերու երթեւեկութիւնը եւ կամ թափորը կը տեսնուէր։

Մարդկային երեւակայութեան այնքան իրական պատկերացումը նոր աշխարհներ բացաւ բանաստեղծի մտքին առջեւ։ Այդ վայրկեանին մէջ՝ աշխարհի դեղեցկութիւններէն տարուած՝ ըմբոստանալ սկսաւ մահուան անխուսափելիութեան դէմ եւ դառնալով ինծի բացագանչեց. «Ա՜հ, աշխարհի մէկ տերեւէն անգամ հրաժարիլ չեմ ուզեր»։

Ապրելու ընազդը, աւելի կամքը կը խօսէր իր մէջ։

Սիամանթօ Ամերիկա մնաց երկու տարի, աւելի երկար, քան ինք կամ ուրիշներ կ'ակնկալէին։ Թերեւս այնքան երկար չմնար, եթէ Ակնունին Ամերիկա եկած չըլլար։ Ակնունի 1910-ի աշնան Ամերիկա եկաւ եւ մնաց աւելի քան վեց ամիս։ Քանի ան Ամերիկա էր, թէեւ միշտ Պոսթրն չէր կրնար դտնուիլ, Սիամանթօ դոհ էր։ Բայց երբ ան 1911-ի գարնան մեկնեցաւ դէպի Պոլիս՝ Սիամանթօի վրայ տիրեց հայրենաբաղձութեան զօրաւոր զգացում մը։ Արցունքը աչքերուն դիտեց կառաչարը, որ կը տանէր «կոունկ»ը դէպի Երկիր։

Ցաջորդ աշնան ինք ալ մեկնեցաւ, մտածելով իր մօր, քոյրերուն եւ եղբօր երջանկութեան եւ իր վայելելիք ընկերական հարազատ կեանքի մասին։ Գնաց այդպէս, նոյնիսկ թուրք թակարդի մէջ իյնալու վտանգը յանձն առնելով։

VI

Ակնունի Ամերիկա եկած էր՝ երկու գլխաւոր նպատակներով — Ա) Գաղութի մէջ համերաշխութիւն ստեղծել եւ Բ) Դէպի Երկիր հրաւէր կարդալ։

Այդ շրջանը անիմաստ վայնասունի, ազատութեան ձգտող ժողովուրդի մը անվայել անավէճերու շրջանն էր։ Իրերու եւ իրողութիւններու իմաստուն հասկցողութիւն մը՝ կրնար գաղափարական շարժումին շուրջ ուժերը համախմբել եւ հայ դատին համար աւելի ամուր հող մը գտնել։

Այս նպատակով Ակնունի, ամէն տեղ Դաշնակցական ժողովներ սարքելով հանդերձ, կ'աշխատէր նաեւ միջկուսակցական ժողովներ ալ սարքել։ Ինքը շափազանց յաւատես էր ու կը հաւատար, որ թուրք առաջնորդ տարրերը եւ կառավարութիւնը՝ իրենց պետական ապահովութեան համար՝ հայերու անկաշկանդ զարգացման եւ ինքնավարութեան գաղափարին հետ պիտի հաշտուէին, ուստի պէտք էր կանուխէն մեր երկիրը զարգացնել տնտեսական, բարոյական եւ թուական յառաջդիմութեամբ։

Բայց երդուեալ հակառակորդները անկեղծութիւնը տեսնելու ընդունակութիւնը

ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱԼՈՒՄԵԱՆ
(Ի· ԱԿՆՈՒՆԻ)

կորսնցուցած էին: Համերաշխութեան փորձերը կամ չատ զաղջ ու ձեւական ընդունելութիւն մը գտան եւ կամ ամէնի հակառակութիւններ արծարծելու պատրուակներու տեղի տուին: Փողովուրդը հանոյքով կը լսէր զինք ընդհանրապէս, ինչ որ տանելի չէր կարդ մը մարդոց համար, ուստի պէտք էր Ժողովուրդը արդիլել Ակնունին լսելու պատեհութենէն: Այդ ուղղութեամբ փորձեր եղան միեւնոյն օրը ուրիշ ժողովներ սարքելով եւ նոր առնախօսներու ոէքլամներ ընելով:

Այդ միջոցները ընդհանրապէս ապարդիւն եղան՝ բացի Նիու Եորքէ:

Ակնունի կ'աշխատէր նաեւ ամերիկեան հանրային կարծիքը դարձնել ի նպաստ կովկասահայ բանտարկեալներուն, որոնց մեծ մասը Դաշնակցականներ էին: Ուստի որոշուած էր կարեւոր ժողով մը սարքել Նիու Եորք, Գառնէկի Հոլին մէջ:

Ռամկավարները, ժողովը տկարացնելու համար, նոյն ժամուն ժողով սարքելու պատրաստուեցան, յուսալով որ Մուշեղ Եպիսկոպոսը ժողովուրդը իրենց ժողովին կրնար դարձրնել: Բայց երեւոյթները ցոյց կուտային, որ ժողովուրդը կ'ուզէր Ակնունին լսել: Եւ, որպէսզի Ակնունին ժողով չունենայ, կը դիմեն Գառնէկի Հոլի վարչութեան՝ իբրեւ թէ հոլը վարձող անձինքը իրենք են եւ կը յայտարարեն որ ժողովը տեղի չպիտի ունենայ կարեւոր հայ առաջնորդի մը մահուան պատճառով: Ուստի Հոլի դեկավարը կամ համոզուած եւ կամ կաչառուած, կիրակի օրը կը մնայ իր տունը:

Հայերը՝ բնականաբար անցուդարձէն անտեղեակ՝ իրիկունը խուռն բազմութեամբ, որ աւելի էր քան սրահը կրնար առնել, կը խոնուի դրան առջեւ եւ համբերութեամբ կը սպասէ հակառակ տեղատարափ անձրեւին: Բայց դուռը չբացուիր, եւ ժողովը անխուսափելիօրէն կը մնայ խանգարուած:

Անշուշտ մեր նպատակը չէ անցած եւ մոռցուած դառնութիւն մը վերանորոգել: Անցածը պէտք է մոռացութեան տալ, բայց միեւնոյն ատեն պէտք է յիշեցնել նոր սերունդին, թէ այդ կերպերը ազգի մը զարգացման չեն նպաստեր, այլ ընդհակառակը ազգի մը պատեհութիւնները կ'ոչնչացնեն: Եթէ հայ ժողովուրդը այդպիսի ոգիով սնած չըլլար, իր վեց հարիւր տարիէ ի վեր կորսնցուցած եւ վերստին գտած ազատութիւնը ողջունելու եւ ապահովելու պարտականութեան մէջ չպիտի թերանար: Նոր սերունդին պէտք է ուղիղ դաստիարակութիւն տալ եւ զայն չիտակ ճամբէն առաջնորդել:

Ինքնայարգանքի պակասը ուրիշ անգամ մը եւս երեւան եկաւ համեմատաբար աննշան պարագայի մը մէջ:

Ֆրէզնօի մէջ Ակնունի ամերիկեան խմբագիրներու հետ տեսակցութիւն ունեցած եւ անոնց բարեացակամութիւնը գրաւելու չափ լաւ տպաւորութիւն թողուցած էր: Հակառակորդի հովեր առնող մը անիսորհրդարար կ'երթայ եւ այդ խմբագիրներուն կը փսփսայ, թէ Ակնու-

© National Library of Armenia

նին ընկերվարական է, առանց կշռադատելու, թէ այդ կերպով հայերու հանդէպ անհարիւ ատելութիւն մը ստեղծելու վտանգը յանձն կ'առնէր, եւ թէ Ակնունիի համար՝ անձնապէս, իրեւ անցորդի, անոնց համակրանքը կամ հակակրանքը մեծ նշանակութիւն չպիտի ունենար: Բարեբախտաբար գործնական ամերիկացին, անհատական ատելութեան հոտն առնելով այդ չուղուած յայտնութեան մէջ, կը պատասխանէ, թէ ինք հակառակ է տեղացի ընկերվարականներուն, իսկ օտար ընկերվարականներու հանդէպ ոչ մէկ հակառակութիւն ունի, քանի որ քաղաքական այդ սկզբունքը՝ ատելի կամ զովելի՝ զանազան երկիրներու ներքին խնդիրն էր:

Նման երեւոյթներ կրկնուեցան մեր անկախութեան օրերուն, երբ մարդիկ եղան, որ մեր կատարմութիւնը իբրեւ պոլշեւիկ եւ Թուրքի նուէր փոխադրին օտարին առջեւ:

Հակառակ իր շափազանց լաւատեսութեան, Ակնունի մեկնեցաւ 1911-ի գարնան՝ քիչ մը յուսախաբ եւ մասամբ յոռետես, Թուրքերու նոր շարժումներու մէջ շար հետեւանքներ նախագուշակելով եւ ազատութեան կոթողներու խնդիրը տակաւ թոյլով:

Լաւատեսութիւնը ազգերու փրկութեան եւ յառաջդիմութեան մեծ ազդակ մըն է. բայց այդ չնորհուած առաքինութիւնը, շարժիչ մեծ ուժը, ոմիր մը կը թուի դժբախտութիւններու մէջ մարդուած մեր ցեղին:

Այսու հանդերձ հակառակ մեր շարաբաստիկ պայմաններուն՝ ամէն հայու սրտի խորքին մէջ թաքուն լաւատեսութիւնը կ'ապրի եւ կ'ապրեցնէ անոր մէջ ազգային զգացումները: Թող երկինք տայ քիչ մը աւելի լաւատեսութիւն, եւ մենք այս խոր վիրապէն ալ կ'անցնինք եւ կ'ողջունենք մեր երազած լաւագոյն արշալոյսը:

Ակնունի գնաց Փոքր Ասիոյ խորերը, դէպի իրեն համար պատրաստուած անծանօթ դերեզմանը, լաւատեսութեան նոր սփոփանքներով: Աքսորի ցուպը եւ խաչը առնելէ առաջ ասաց՝ իր գրիչն առաւ ան, եւ իր հայաձեպի վայրկեաններուն՝ հայ ժողովուրդին իր վերջին պատգամը հասցնել ջանաց «Հայրենիք»ի միջոցաւ: Իր սրտի խորէն կանչելով, թէ «Հայ ժողովուրդ, ամուր կաց. քեզի շատ տառապանք կը սպասէ, բայց հետու չէ փրկութիւնը»:

Ակվրի դաշնագրի օրերուն՝ աքանչելի մարգարէութիւն մըն էր այն, որ կատարուած կը թուէր: Այսօր մենք կը տեսնենք որ այն դեռ չէ կատարուած, բայց գիտենք, որ պիտի կատարուի: Հերիք է որ հայ ժողովուրդը մնայ լաւատես եւ գործէ՛: Այդպիսի լաւատեսութեամբ էր որ պատերազմի շրջանին երկու անգամ կամաւորական շարժումներ կազմուեցան:

Լաւատեսութիւնը շարիք եղաւ երբ պետութեանց տարտամ խոստումներէն գատելով անդոսնեցինք մեր ուժով ձեռք բերուած պզտիկ հանրապետութիւնը, եւ արգելք եղանք անոր կենսունակութեան:

Ազատութեան համբուն վրայ ինկած մեր բոլոր գործիչներու, հերոսներու եւ զոհերու առջեւ՝ ինքնագիտակցութեան խորհուրդներու մէջ մտնելով, մեր սրտերու մէջ կը զգանք ներմեռանդ սպասողութեան մը մեղեդիները. ինչպէս մեր եկեղեցական բանաստեղծ հայրերը կը զգային, երբ կ'երգէին «Ցիչատակն արդարոց օրհնեալ եղեցի»:

«Հայրենիք»ի ուրիշ աշխատաւորները դեռ մեր մէջն են, մեզ հետ մեր հաւատքին հետ կ'ապրին: Ապրող մարդու գործը դեռ չէ վերջացած:

«Հայրենիք»ի շուրջ բոլորուած ուժերը ներհայեցողութեամբ մը ըմբռնեցին մեր անկախութեան նշանակութիւնը եւ ողջունեցին զայն իր ծննդեան առաջին օրն իսկ:

Եթէ հայ ժողովուրդը ունենար այդ պայծառատեսութիւնը, արդեօ՞ք մեր բախտը քիչ մը տարբեր չէր ըլլար ի նպաստ մեզի, հակառակ աշխարհի իրողութիւններու մեզի դէմ անպուտ դասաւորումին:

© National Library of Armenia

«ՀԱՅՐԵՆԻՔ»-Ը 1901-Ի՛Ն

Գրեց՝ Ե. ԱՄԱՏՈՒՆԻ

ՀԱՄԱՏՐԻ, յոյսի եւ խանդավառութեան օրեր էին...

«Հայրենիք»ի շուրջը հաւաքուած սակաւաթիւ ուժերը, միակ խմբագրի մը առաջնորդութեամբ անսասան հաւատքը ունէին պայքարելու հասարակական զանազան տեսակ շարիքներու, արմատացած ախտերու եւ նախապաշարումներու դէմ, որոնք բոյն դրած էին ամերիկահայ կեանքին մէջ եւ որոնց սերմանող եւ քաջալերող գործիչները քիչ թիւ չէին կազմեր, ինչպէս նաեւ դասախարակելու եւ պատրաստելու նոր սերունդ մը:

Այսպիսի խոշոր առաջադրութեամբ ճամբայ ինկած՝ այս փոքրիկ շաբաթաթերթը եւ անոր շուրջը հաւաքուած խմբագիրն ու փոքրաթիւ աշխատակիցներու խումբը, նիւթական ու ֆիզիքական ի՞նչ ուժ կը ներկայացնէին՝ սահմանուած առաքելութիւնը յաջողութեամբ կատարելու:

Essex St.-ի եւ Harrison Ave.-ի մեծ շէնքին, չեմ յիշեր, քանիերորդ յարկին մէկ անկիւնը փոքրիկ տեղ մը վարձուած էր խմբագրական եւ վարչական աշխատանքի համար, իսկ գրաշարանոցին մէջ ալ մէկ գրաշարի տեղ: Աւելորդ չըլլայ թերեւս ըսել, թէ խմբագրական եւ վարչական պաշտօնները կը վարէր մէկ ընկեր միայն, ընկեր Վռամեան, իսկ գրաշարանոցը՝ մէկ գրաշար, ընկեր Ֆորէն Գալուստեան: Իւրաքանչիւրը կը ստանային ապրուստի համար շատ չնչին գումար մը, շաբաթական 6 տոլար: Անոնք միաժամանակ եռանդուն մասնակցութիւն ունէին բանաւոր փրոփականտին:

Գրասենեակի կարասիներն էին՝ երկու պարզ աթոռներ եւ խղճուկ սեղան մը: Այցելուները, եթէ սխալուէին երկուքով մտնելու գրասենեակը, մէկը պէտք էր դուրս մնար, քանի որ անկարելի էր աւելորդ տեղ եւ աթոռ ճարել:

Ուրիշ պաշտօնեաներ չկային, թերթը ծալելու, հասցէները գրելու եւ փօսթ տանելու: Գործին կ՚աջակցէին Գոսթընի ընկերները:

Եթէ չեմ սխալիր, թերթին շաբաթական ամբողջ պիւտճէն 35–40 տոլարէն անդին չէր անցներ:

Նոյն միջոցին «Հայրենիք» եւ իր աշխատակիցները Միացեալ Նահանգներու ամբողջ տարածութեան վրայ ունէին միայն 70–80 ընկերներ, որոնք նիւթապէս ու բարոյապէս կ՚աջակցէին «Հայրենիք»ին եւ եռանդուն աշխատանք կը թափէին անոր տարածման:

Ֆիզիքական ու նիւթական այսպիսի համեստ ուժերով, բայց եւ այնպէս անշեղ հաւատքով՝ ու խանդավառութեամբ աշխատանքը առաջ կը տարուէր այնպիսի ատեն մը, երբ ամէն տեսակի եւ գոյնի հակառակորդներ կը կազմէին լեգէոններ, որոնք զինուած ժողովուրդի տգէտ ընազդներն ու նախապաշարումները փայփայող ամէն տեսակի զէնքերով, կանգ չէին առներ ոչ մէկ միջոցի առջեւ:

Տիրացուներու հսկայ բանակը, վարդապետ, տէրտէր, պատուելի, լուսաբար, ժամկոչ, բժիշկ, փաստաբան եւլն.— ահեղ պայքար մը բացած էին «Հայրենիք»ի դէմ, եւ ամէն տեսակի ստութիւն ու զրպարտութիւն ներելի կը համարէին վարկաբեկելու համար զայն:

Օրինակի համար, եթէ «Հայրենիք» յայտարարէր, թէ կրօնքը խղճի գործ է, այդ բանակը հրապարակը կ՚աղմկէր, ըսելով, որ «Հայրենիք» անհաւատութիւն կը քարոզէ:

Երբ «Հայրենիք» քննադատէր Կաթողիկոսարանի կամ Պատրիարքարանի եւ կամ ուրիշ ազգային հաստատութեան մը մէկ թերութիւնը, անմիջապէս կը սկսէր դիտումնաւոր ահազանգ մը.— «Հայրենիք» իբր թէ կ՚ուզէ քանդել ու կործանել հայ ժողովուրդի հաստատութիւնները եւ եկեղեցին: Երբ «Հայրենիք» քննադատէր ընտանեկան յոռի բարքերը, հակառակորդները պատրաստ էին յայտարարելու, թէ «Հայրենիք» «ազատ սէր» կը քարոզէ եւ կ՚աշխատի մեր ընտանեկան սրբութիւնները հիմնայատակ կործանել:

Շատ անգամ պէտք ալ չկար նման առիթներու. մութին մէջ կը դարբնուէին բազմաթիւ երեւակայական զրպարտութիւններ եւ կը

© National Library of Armenia

հրամայուլին ոգէն ամբոխին՝ զայն զրգռելու համար թերթին եւ անոր խմբագիր–աշխատակիցներուն դէմ:

Սակայն, երբ կը տեսնէին, թէ նման միջոցներով կարելի չէր լաւագոյն խափանել «Հայրենիք»ի հրատարակութիւնը, կը փորձէին կիրարկել զանազան անիծոյլատարելի միջոցներ, զրգռելով ամբոխը փիլիսիական յարձակումներու անոր խմբագիր–աշխատակիցներուն դէմ: Այս հոլին վրայ կատարուած են բազմաթիւ անխորժ դէպքեր եւ երբեմն հասած են մինչեւ ամերիկեան դատարանները:

Ամերիկահայ հասարակութիւնը շատ լաւ կը յիշէ, թէ Հանդուցեալ ընկեր Վռամեան քանի՞ քանի՞ անգամներ ենթակայ եղած է նման կոպիտ յարձակումներու:

Ահա՞ այսպիսի պայմաններու տակ էր, որ «Հայրենիք» իր նիւթական ու ֆիզիքական համեստ ուժերով պիտի կատարէր իր պատմական առաքելութիւնը ամերիկահայ դատին մէջ:

Այս դժուարին պայմաններուն մէջ գտնուեցան ընկերներ, որ վճռեցան ու երդմնեցան եւ առաջարկեցին մեկմտնել պայքարի սուր բնոյթը՝ լուծելու համար հակառակորդներու բանակը: Սակայն, ի պատիւ հանդուցեալ ընկեր Վռամեանի պիտի ըսեմ, թէ իր պարտականութիւնը լաւ ըմբռնող վիրաբուժի մը հաստատակամութեամբ եւ խղճմտութեամբ մնաց անեղծիւղ ու անսասան. առանց խնայելու դանակը կ'ելլեցնէր մինչեւ վէրքին խորերը — այն հաստատ համոզումով, թէ ուրիշ կերպով կարելի պիտի չըլլար բուժել հասարակական քրոնիկ դարձած վէրքերը:

«Հայրենիք»ի այս անվհատ եւ հաստատակամ աշխատութիւնը կարճ ժամանակի մը մէջ տուաւ իր բարերար արդիւնքը: Ան կարողացաւ էր պատրաստել երիտասարդ սերունդ մը հայ սրտով եւ հայ հոգիով,— սերունդ մը, պատրաստ մահը դիմաղրաւելու՝ իր հայրենասիրական պարտքը կատարելու համար:

Անտարակոյս երիտասարդ եւ անպարտ հոսանքն էր, որ ստուերապէս ընդունակ պիտի ըլլար ըմբռնելու եւ խորացնելու նոր ճշմարտութիւնը, քան տարեց՝ կամաւոր նախապաշարեալները եւ կոյրերը: Այսպիսի երիտասարդ սերունդի մը արտօրէն հրապարակ գալուն ատիթ էր, որ ամերիկահայ դատին մէջ անոնք մկրտուեցան «տղերք» մակդիրով:

Հաստատի, յոյսի եւ խանդավառութեան այդ օրերուն, ծայրայեղ գոհոյութեանց եւ դրկանքներու ընդմէջէն, անվհատ եւ եռանդոյ աշխատանքը եղաւ մեծագոյն ատաստը «Հայրենիք»ին, որ հիմնաւորուեցաւ, ուռճացաւ եւ ասոյնանական զարգացումով, մեծ թափով մը ատանց ատանուելու չարունակեց իր պատմական առաքելութիւնը 25 երկար տարիներ եւ այսօր ատանձին հպարտութեամբ կը փակէ իր 21ամեակը, տակաւին երիտասարդ եւ առոյգ, պատրաստ՝ նոր եւ աւելի ուժեղ աշխատանքի մը նուիրուելու:

Նկատի ունենալով մեր քաղաքական ու հասարակական նեղկայ տխուր իրականութիւնը եւ վաղուան մեր սկսելիք նոր աշխատանքը, անտարակոյս «Հայրենիք» իր այժմու ճոխ վիճակով հնարաւորութիւն պիտի ունենայ իր շուրջը հաւաքելու նոր սերունդի լաւագոյն ներկայացուցիչները, պատուաւոր կերպով կատարելու իր առաքելութիւնը, մինչեւ որ օր մը կարենանք նուաճել մեր վերջնական ազատութիւնը եւ «Հայրենիք» հնարաւորութիւն ունենայ իր ամբողջ հարատեւութեամբ փոխադրուելու Հայաստան՝ դառնալու համար մեր լուսաւորութեան փարոսներէն մէկը:

© National Library of Armenia

«ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի ՏՊԱՐԱՆԸ

1906—1916

Գրեց՝ Մ. ՍԱՆՏԱԼ

Ա ՌԱՋԻՆ անգամն էր, որ կ'այցելի «Հայրենիք»ի տպարանը 1906-ի դարնան, Kingston St.-ի վրայ, Պոսթընի մէջ:

Այդ թուականին «տպարանը» կը բաղկանար ընդարձակ սրահէ մը, որուն մէկ անկիւնը կային դրաշարական մէկ երկու սովորական կազմածներ, մաս մը դրեր, մէկ երկու սեղաններ, իսկ պատուհանին առջեւ խմբագրական դրասեղանը: Որոշ չեմ յիշեր, թէ որո՞ւ հսկողութեան տակ էր տպարանը. սա դիտեմ միայն, որ ընկ. Վռամեանի խմբագրութեան ատենն էր այդ եւ Թերեւս ինքն ալ էր թէ՛ քարտուղարը, թէ՛ գործավարը եւ թէ՛ խմբագիրը:

Թերթը կը խմբագրուէր, կը շարուէր եւ էջերը կը կապուէր այդ սրահին մէջ, իսկ ֆորմերը կը ղրկուէին մեծ տպարան մը թերթը տպելու համար: Այսպէս էր մօտաւորապէս վիճակը այդ ատենուայ բոլոր հայ թերթերու, որոնց մէջ սակայն «Հայրենիք» ամենէն լաւագոյնը կարելի էր համարել իր ընդարձակութեանը եւ յարմարութիւններուն համար:

Թէ ինչպէ՞ս եղաւ «Հայրենիք»ի տպարանի աստիճանական զարգացումը՝ չեմ գիտեր, միայն որոշ էր, որ տարուէ տարի տպարանը կը ճոխանար, կը զարգանար եւ իր տեղը նեղ, սահմանափակ ըլլալուն կը փոխադրուէր աւելի մեծ, ընդարձակ տեղեր. եւ այսպէս յաջորդաբար հաստատուեցաւ Beach St., Knapp St. եւ Bennet St.: Այս վերջինը արդէն շատ ընդարձակ եւ ամէն յարմարութիւն ունեցող տպարան մըն էր: 1921-ին «Հայրենիք» ունեցաւ իր սեփական շէնքը եւ հոն փոխադրուեցաւ՝ Shawmut St.-ի վրայ:

Երբեմն երբեմն կը տեղեկանայինք, որ «Հայրենիք»ի տպարանէն ներս մուտ գործել սկսած են տպագրական փոքր կամ մեծ մամուլ ու զանազան գործիքներ: Ատոնք թէեւ ինքնին շնչին, քանի որ այս երկրի մէջ ամէն մէկ հասարակ, փոքր տպարան անգամ կ'ունենայ նմանօրինակ մէկ երկու մեքենաներ, սակայն նկատելի կերպով կը շեշտէին որ «Հայրենիք» մեծնալու, բարգաւաճելու համբուն մէջ է եւ շուտով կը հասնի իր արժանաւոր գիրքին:

Արդէն զարգացման այդ շրջաններուն «Հայրենիք» իր խմբագրական մարմիններու կողքին հաստատած էր նաեւ վարչական կազմ, որուն պատասխանատուութիւնը յաջորդաբար ստանձներ էին ընկերներ Արտաւազդ Թատիկեան, Մանուկ Համբարձումեան, Ահարոն Սաչաքլեան եւ Խորէն Գալուստեան: (Ընկ. Սաչաքլեանի օրով արդէն թերթը լոյս կը տեսնէր երկու օրը անգամ մը եւ թերթը կը տպուէր «Հայրենիք»ի ուրոյն մամուլին վրայ):

Տարիները սահեցան եւ երկրորդ անգամ բլլալով ատիթը ունեցայ կրկին այցելելու «Հայրենիք»ի տպարանը՝ 1913-ին, ՊէնՆէր Սթրիթի մէջ: Այս անգամ սակայն տեսարանը բոլորովին այլ էր: Աչքիս առջեւ պարզուեցաւ տպարանական հաստատութիւն մը՝ եթէ ոչ իր կատարելագործեալ վիճակին մէջ, գէթ մեծապէս բարգաւաճ եւ յուսատու: Ընկեր Խ. Գալուստեանի գործավարութեան շրջանին եւ անոր նախաձեռնութեամբն էր, որ տպարանին մէջ հաստատուած էր տողաշար (linotype) մեքենայ մը, ամենավերջին տեսակի, թերթը մեքենայով շարելու համար՝ փոխան ձեռքով շարելու: Այդ մեքենան կը կազմէր տպարանին զարդը եւ կ'արժէ ըսել, որ մինչեւ այդ թուականը դէպի յառաջդիմութիւն կատարուած ձեռնարկներուն ամենէն յանդուգնը, ամենէն խոշորը եւ ամենէն օգտակարն էր: Տողաշարը ամենավերջին տեսակի, 3 մէկէզինոնց. էր, որ կարող էր 3-4 դրաշարի գործը առանձինն մէկ հոգիով ընել եւ ի վիճակի էր թերթը ամբողջութեամբ շարելու մէկ օրուայ մէջ: Իր ատենին համար պարծենալու արժանի երեւոյթ մըն էր, որ ամբողջ Ամերիկայի մէջ «Հայրենիք»ն էր, որ առաջինը ըլլալով ունէր կատարելագոյն տողաշար մեքենայ մը իր տպարանին մէջ (հայկական տպարաններուն հետ բաղդատած): Թէեւ ատիկ մէկ քանի տարիներ առաջ Նիու Եորք «Կոշնակ»ը կը շարուէր տողաշարով, բայց միայն գրերու «մայրերը»

© National Library of Armenia

իրենց կը պատկանէին եւ ոչ թէ մեքենան։ Հոս կ'արժէ միջանկեալ յիշատակել, որ տողաչար մեքենայի համար հայերէն գրերու պատրաստութեան նախաձեռնութիւնը կը պարտինք «Կոչնակ»ին։

Տողաչար մեքենայի գործածութեամբ ամէն պատեհութիւն կը ստեղծուէր թերթերը լոյս ընծայել աւելի արագ, կանոնաւոր եւ մաքուր։ Պէտք էր օգտուիլ այս պատեհութիւններէն. պէտք էր թերթը ընդարձակել, օրաթերթի վերածել։ Շուտով երկրորդ տողաչար մը եւս աւելցաւ տպարանի կազմածներուն վրայ։ Շարելու բաժինը ապահովուած էր, խնդիրը տպելուն վրայ էր եւ սակայն կարելի չէր մեծ մամուլին վրայ մեծ յոյսեր կապել, քանի որ ան թերթի մեքենայ չէր եւ չունէր պահանջուած արագութիւնը։

Եւ ահա դեղեցիկ օր մըն ալ տպարանին մէջ կը հաստատուէր ինքնատիպ մեծ մամուլ մը (Duplex Press), որը ի վիճակի պիտի ըլլար թերթը ինքնաբերաբար տպելու, ծալելու եւ դիզելու։ Առաջին անգամն էր, որ հայկական տպարանի մը մէջ այսօրինակ մամուլ մը կը հաստատուէր, եւ եթէ չեմ սխալիր, մինչեւ օրս ալ չկայ ոեւէ մէկ հայ տպարան, ոչ Ամերիկա եւ ոչ ալ արտասահման, որ ունենայ ինքնատիպ մեծ մամուլ։ Նոյնիսկ Վիեննայի եւ Վենետիկի Մխիթարեան տպարանները չունին։

Ուշագրաւ էր դիտել ոգեւորութիւնը, խմբագրական բաժնէն մինչեւ տպագրականը, երբ առաջին անգամ այդ մեծ մամուլը շարժման մէջ պիտի մտնէր։ Երջանկայ քաղաքներէն իսկ ընկերներ փութացեր էին գալու եւ առաջին հանդիսատեսի վայելքը ունենալու։

Այդ մեծ մամուլի հաստատումով «Հայրենիք» կ'ամրողջացնէր միջնակարգ տպարանի մը յատուկ կարեւոր կազմածները։ Տողաչար մեքենայ, ինքնատիպ մեծ մամուլ, տպագրական մեծ եւ պզտիկ մամուլներ, գրեր եւ զանազան ուրիշ գործիքներ «Հայրենիք»ին կուտային բաւականին ճոխ տպարանի մը երեւոյթը։

Եւ այսպէս, 1906–1916-ի տասնամեակին «Հայրենիք»ի տպարանը կրեց հսկայական փոփոխութիւններ դէպի կատարելութիւն, բարգաւաճում։ Եւ չպէտք է զարմանալ, որ փոփոխութիւններու կարեւորագոյնները տեղի ունեցան տասնամեակի վերջի կէսին, 1912–1916ի ընթացքին։

Փոփոխուող վարչութիւններ ցանկացեր էին զիրար գերազանցել ճոխացման հսկայաքայլ ոստումներուն մէջ եւ պէտք է ըսել, որ շնորհիւ իրենց անխոնջ ջանքերուն եւ ընկերներուն փոխադարձ օժանդակութեան, հնարաւոր եղած էր օրէ օր ճոխացնել «Հայրենիք»ի տպարանը եւ զայն դնել իսկապէս նախանձելի վիճակի մը մէջ։

Այս էր պատկերը, 1916-ին, երբ բաժնուեցայ «Հայրենիք»ի տպարանէն։



© National Library of Armenia

ՕՏԱՐ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Գրեց՝ Ա. ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

ԴԷՊԻ Կ. ՊՕԼԻՍ

1919 թ. օգոստոսի վերջին օրն էր, երբ իտալական «Ֆերդինանդ» շոգենաւը սկսեց դանդաղօրէն հեռանալ Բաթումի նաւահանգստից: Մեծ էր նա, գեղեցիկ, մաքուր եւ մի հինգյարկանի տան չափ բարձր: Առաջ նա ալ պատկանել էր Աւստրիական Լլոյդին. պատերազմից յետոյ նրան գրաւել էր Իտալիան, որպէս յաղթութեան աւար, ինչպէս եւ բոլոր միւս նաւերը նոյն ընկերութեան: Բայց գրաւել էր նաւը եւ ոչ նրա հողին: Նաւապետից սկսած մինչեւ վերջին նաւաստին ատում էին Իտալիան, իրանք լինելով ազգով իտալացիներ:

Իրիկնադէմ էր. մէկն այն վերջնամառային պահերից, երբ բնութիւնը պճնւում է մի առանձին չքեղութեամբ, կարծես, մօտալուտ աշնան թախիծը մեղմացնելու համար: Արեգակն իր վերջին ճառագայթները ոսկեզօծ հովհարի ձեւով տարածել էր վարդագոյն երկնակամարի վրայ: Ծովն անդորր էր. նրա հայելու պէս հարթ եւ լեղակի պէս կապոյտ մակերեսի վրայ մակոյկները սահում էին լուռ ու արագ, ինչպէս երկչոտ մկներ:

Մանկական երազի չափ հաճելի էր Թիֆլիսի խեղդուկ տօթերից ու թունաւոր փոշիներից յետոյ ազատ թոքերով ծծել ծովային մաքուր անապական օդը: Հաճելի էր մանաւանդ դիտել ծովի ու երկնքի վառվռուն գոյները, որ, ամէն վայրկեան փոխւում էին, ինչպէս թատերական բեմի վրայ: Կարծես, երկու արեւելեան թագուհիներ էին, որ, իրարու հետ մրցելով, ձգտում էին դիտողին շլացնել իրանց երփներանգ զգեստներով:

Բայց ի՞նչ հաճոյք կարող էր փարատել այն դառը մտքերը, որ տանում էի հետս եւ որ ճնշում էին սիրտս կապարի ծանրութեամբ: Ո՞ւր էի գնում: Երկա՞ր պիտի տեւէր իմ ճամբորդութիւնը եւ ի՞նչպէս պիտի տեւէր: Տեսնելո՞ւ եմ, արդեօք, նորէն իմ մերձաւորներին ու մտերիմներին: Եւ այն ընտանի վայրերն ու շրջանները, ուր անցել է դրեթէ ամբողջ կեանքս:

Զգիտէի: Գիտէի միայն, որ փախչում էի այլ եւս անտանելի դարձած մթնոլորտից, ուր օր օրի վրայ աւելի ու աւելի էի զգում ուղեղիս տկարացումն ու զգացումներիս բթացումը: Փախչում էի ինքս ինձնից:

Երկու տարի շարունակ ամէն առաւօտ նստել էի գրասեղանիս քով, երդուելով անպատճառ սկսել մի որեւէ գործ, եւ ամէն անդամ գրիչն ընկել էր ձեռքիցս եւ գլուխս անզօր թեքուել կրծքիս: Ի՞նչ գրել եւ ո՞ւմ համար գրել մի կիսաւեր երկրում, որ սպառնում է հիմնովին աւրուել: Գրականութեա՞մբ կերակրել մի ժողովուրդ, որի ստամոքսն է սընունդ պահանջում

Ո՛չ, գրողը դեր չունի այստեղ, գոնէ առ ժամանակ: Նա պէտք է լռէ, եթէ չի կամենում իր փոշմանը դաւաճանել, կամ քաղաքականութեամբ զբաղուիլ, եթէ կամենում է ատելի դառնալ ինքն իր աչքում:

Սիա՞լ էր այս միտքը: Թո՛ղ լինի: Բայց նա ծծում էր իմ մէջ եռանդս եւ հեռացնում ինձ գրասեղանիցս՝ անզօրութեան մաղձը սրտումս:

Եւ ահա մի առաւօտ ես որոշեցի այսպէս թէ այնպէս վերջ տալ այս մղձաւանջին: Ճամբորդութիւն — ահա ինչը գուցէ կարողանայ ինձ փրկել: Եւ վճեցի ճամբորդել: Կ՝երթամ ուրիշ երկիրներ, կ՝այցելեմ անծանօթ վայրեր, կը դիտեմ, կ՝ուսումնասիրեմ: Վերջապէս, կայ հայ գրողի համար մի պարտականութիւն, որ չեմ կատարել — կը կատարեմ, այն է՝ կը ծանօթանամ հայ ժողովրդի այն ցիրուցան բեկորներին, որ ընդհանուր անունով կոչւում է գաղթականութիւն:

Բի՛ւր շնորհակալութիւններ այն հաստատութիւններին եւ իմ անձնական բարեկամներին, որոնք նիւթապէս ու բարոյապէս աջակցեցին ինձ ձեռնարկելու ներկայ ճամբորդութիւնը:

*
* *

Շոգենաւը մեղմիկ լողում էր, վրդովելով ծովի հանդիստն իր հսկայական մեքենաների խուլ թնդիւններով:

Առաջին կլասի ճամբորդների թիւը մեծ չէր,— մի քանի յոյներ, մի քանի իտալացիներ, մի ֆրանսիացի կոմս՝ զուիցերիական

© National Library of Armenia

կարմիր Խաչի լիազօր, երեք–չորս անխուսափելի հրէաներ եւ մի տասնեակ հայեր:

Հայ ուղեկիցներիս մէջ կար մի զոյգ, որ մի զարմանալի տաղանդով խօսոն եւ եթ շահեց ընդհանուրի համակրանքը: Մարդ էակը խօսում է ոչ միայն լեզուով, այլ եւ քայլուածքով, ձեւերով ու շարժումներով: Երկուսն էլ տակաւին երիտասարդ, երկուսն էլ կուշտ ու ինքնագոհ դէմքով, թէեւ ոչ տգեղ, բայց դէր ու ձարպոտ: Նրանք ձեռում էին տախտակամածի վրայ փռուած հնդկահաւերի պէս, աջ ու ձախ ձգելով զոռոզ հայեացքներ: Եւ երբ անզգուշարար զիպչում էին մէկին, չէին բարեհաճում պարտաւորական «պարտոն»ը ասելու: Նրանց իւրաքանչիւր շարժումն աղաղակում էր. «Մենք հարուստ ենք, ուրեմն ե՛ւ ձեր ամենքից բարձր եւ ամենքիդ համար անմատչելի»:

Առաւօտեան ութ ժամին շոգենաւը մօտեցաւ Տրապիզոնին եւ կանգ առաւ ափից բաւական հեռու:

Գեղեցիկ չէ այդ քաղաքը, բայց նրա անֆիտիատրի ձեւով դիրքը, իրարու կոնակին դարսուած արկղանման ձերմակ տներն իրանց անթիւ լուսամուտներով՝ ունին մի ինքնուրոյն հրապոյր:

Մինչ ես երեւակայութեամբ թափառում էի հայ արիւնով ներկուած փողոցներն ու տները սձիրներով հռչակաւոր քաղաքի, քովս լսեցի մի մանկական ձիչ: Նայեցի ետ եւ տեսայ 10–11 տարեկան մի աղջիկ, որ դողդոջ ձեռներով կառչել էր մի սեւազգեստ կնոջ:

— Մի՛ վախենար, Սաթիկ, նրանք չեն համարձակուիլ մեզ մօտենալ,— հանգստացնում էր կինը, շոյելով իր հագստի ծալքերի մէջ թաղնուած սեւահեր գլխիկը:

Ցայտնուեց, որ աղջիկը վախեցել է թիւրք մրցավազաններից, որոնք իրանց կեղտոտ նաւակներով, գիշակերների պէս շրջապատել էին շոգենաւը: Կինը փոքրիկի մայրն էր, Տրապիզոնի Արաբեան հարուստ գերդաստանից, որ բազդի բերմամբ ազատուել էր թիւրքի եաթաղանից: Բայց Սաթիկը տեսել էր շատ արիւնոտ տեսարաններ, եւ այժմ սարսափում էր ամէն մի կարմիր ֆէսից:

— Անիծուիք դուք, անիծուիք,— կրկնեց մայրը մի քանի անգամ արտասուալի ձայնով եւ, բռնելով փոքրիկի թեւը, հեռացրեց նրան տախտակամածից:

Սեւ մարդը պաշարեցին ինձ: Ոչ այնքան անցեալի, որքան ապագայի վերաբերմամբ. քանի՜ քանի հաղարաւոր եւ տասնեակ հազարաւոր հայ փոքրիկներ կրում են իրանց մատաղ արտերում այդ սարսափը կարմիր ֆէսից, ոճիրների այդ սիմբոլից: Թունաւորուած է նորածիլ հայ սերնդի հոգին սարսափի, ատելութեան եւ վրէժխնդրութեան սոսկալի թոյնով: Եւ ո՞վ կարող է երաշխաւորել, որ այդ թոյնը չի անցնելու սերնդէ սերունդ եւ չի քայքայելու հայ ժողովրդի ապագան...

*
* * *

Կարմիր ֆէսերը հեռացան, տանելով իրանց վայրենի գոռում–գոչիւնները եւ փոխադարձ զազրելի հայհոյանքները:

Շոգենաւը շարժուեց, եւ նրա սուր կտուցը սկսեց կտրել ծովի հարթ մակերեսը, աջ ու ձախ շպրտելով ճերմակ կոհակներ:

Ես շարունակ կանգնած էի տախտակամածի վրայ եւ, դիտելով ափերի կանաչազարդ բլուրներն ու ձորերը եւ կինամոնագոյն լերկ ժայռերը, մտքով թափառում էի դժոխային երկրի խորքերում: Եւ ոչինչ չէի տեսնում այնտեղ, բացի աւերից ու կոտորածից, արիւնաներկ դաշտերից, զետերից, փողոցներից ու այրուած, ամայի տներից:

Երկրորդ կարգի տախտակամածից սանդղխտով բարձրացաւ մի պարսկահայ եւ արտասուալի ձայնով պատմեց իր կողոպտուիլը Բաթումի մէջ: Ուղեւորուելու նախընթաց օրը պանդոկ են խուժում մի խումբ սրիկաներ ոստիկանների համազգեստով ու սուիններով եւ խուզարկելու պատրուակով խլում են ամէն ինչ, որ ունէր:

— Մոռացէք, բարեկամս, մոռացէք,— մխիթարում էր հային մի հրեայ, որ նրա հետ բարձրացել էր նոյն սանդխտով,— այժմ ո՞ր ազնիւ մարդը չի կողոպտուում: Այնպէս չէ՞, պարոն,— դարձաւ նա ինձ, իր փոքրիկ եւ աչնանային տերեւի գոյն ունեցող աչքերի աղիւսագոյն կոպերը արագ արագ փակելով ու բանալով,— այժմ կողոպտուիլը նոյնքան սովորական երեւոյթ է, որքան շուտ հարստանալը:

© National Library of Armenia

Եւ անմիջապէս պատմեց, թէ ինչպէս ինքը մի քանի ամսում վաստակել է մի միլիոն ոսկի, աւելացնելով, որ եթէ այսօր կողոպտուի, վաղը նորէն կը վաստակէ: Եւ հազալով ծիծաղեց խուսոտ ձայնով ու փոչտաց:

— Սեսիլիա, Սեսիլիա, ես քեզ եմ փրնտռում,— ընդհատեց նա յանկարծ իր խօսքը, վազելով մի տիկնոջ մօտ, որ այդ պահին հեռուում զրոյց էր անում մի իտալացի սպայի հետ:

Սեսիլիա կոչուածը մի բաւական սիրուն էակ էր, սաթի պէս աչքերով ու մազերով եւ սաստիկ վավաշոտ շրթունքներով:

Դեղնագոյն աչքերով եւ կեղտոտ հագնուած հրէայի կողակիցն էր: Իսրայէլի միլիոնատէր զաւակն իր քնքուշ ամուսնուն տեղաւորել էր առաջին կլասում, ինքը ճամբորդում էր երրորդով: Ի սէր այն զազրելի ախտի, որ կոչւում է ինայողութիւն եւ որ աղքատ հոգիների անողոք բռնակալն է: Բայց հրէան ունէր իր նման մի հայ բարեկամ նոյնքան ստրուկ այդ բռնակալին: Այս մէկն իր հետ տանում էր զոյնզոյն ու կեղտոտ թաշկինակի մէջ կէս միլիոն ֆռանկի թղթադրամ, որ յանձնել էր պահել ու պահպանելու համար առաջին կլասի մի ճամբորդի եւ ինքը ճամբորդում էր երրորդով:

*

* *

Երրորդ առաւօտեան ես զարթնեցի սովորականից կանուխ:

Բօսֆորը տակաւին հեռու էր, իսկ ես՝ անհամբեր: Եղանակը մռայլ էր, մաղում էր մանր անձրեւ: Մոխրագոյն երկինքը, որ երէկ այնպէս զուարթ ժպտում էր, այժմ նայում էր ծովին սպառնալի: Իսկ ծովն անդորր էր եւ չէր վախենում:

Ցիկիս հարեւանը մի չատախօս իտալացի էր: Որովհետեւ համայն աշխարհում ընդունուած է, որ մի ազգի քաղաքական սայլը տիղմի մէջ խրուելիս նրա զաւակներն անպատճառ հայհոյեն Անգլիային, հարեւանս այդ պարտականութիւնը կատարում էր ամենայն եռանդով եւ իր ցեղին յատուկ աւիւնով:

Կէսօրին դէմ մօտեցանք Բօսֆորի սկզբին: Շոգենաւը կանգ առաւ մի փոքրիկ ծովածոցի բերնում: Երրորդ կարգի ճամբորդներին ոչխարների հօտի պէս թափելով նաւակների վրայ, քշեցին, տարան ախտահանութեան կայարանը: Ժլատ հայը քիչ էր մնում կատաղութիւնից պայթէ, որ ստիպուած էր առժամանակ հեռանալ իր մեծարժէք թաշկինակից: Միլիոնատէր հրէան վարից վեր տխուր ժպտում էր իր քնքոյշ Սեսիլիային, որ անհոգ սեթեւեթում էր երիտասարդ իտալացու հետ, մերթ ընդ մերթ լոծեսի ծայրով քնքշօրէն շօշափելով նրա դեղեցիկ քիթը, կարծես, համոզուելու համար, որ նա արուեստական չէ:

— Այդ կեղտոտ խուժանի պատճառով երկու ժամ պիտի սպասենք այստեղ,— լսեցի ռուսերէն լեզուով մի բարձր ձայն:

Ցեւտ նայեցի: Ամբարտաւան հայ զոյգն էր: Նա զուգուել ու զարդարուել էր ամբողջ շուքով Գօլիս մտնելու համար:

Շոգենաւը, վերջապէս, շարժուեց: Մի քանի րոպէ եւս, եւ ահա մենք տիեզերահռչակ նեղուցի մէջ ենք:

Բարեբաղդաբար անձրեւը դադարել էր, եղանակը պարզուել: Բամբակի պէս ճերմակ ամպերը սահում էին կապոյտ երկնքի վրայ խուռն երամներով: Կարծես, չտապելով հասնել մի որոշ տեղ, աշխատում էին իրարու առաջել: Դա մի հանդիսաւոր թափոր էր, որ ուղեկցում էր մեզ օձապտոյտ նեղուցի երկայնութեամբ:

Տեսարանն աջ ու ձախ մոգական էր: Սալոնից լսում էին դաշնամուրի թախծալի հընչիւնները: Զգիտեմ՝ ո՞վ նուագում էր Լիստի մի ռապսոդիանին: Եւ այդ անտառազարդ բլուրները, այդ թաւշապատ ձորերն ու խորշերը, այդ մէկը միւսից կոկիկ վիլլաները իրանց գեղեցիկ աշտարակներով ու քմահաճ լուսամուտներով ու ցցուն պատշգամբներով չոյում էին տեսանելիքը, որպէս գերերկրային տեսիլք:

Բայց, աւաղ, ես հայ էի: Իսկ ո՞ր հայը արտասուելու չափ չի յուզւում Կ. Գօլսին մօտենալիս: Որի՞ աչքերի առջեւ չեն պատկերանում իր ցեղի դարաւոր տառապանքները մէկը միւսի ետեւից, յաջորդաբար: Սիբարիտ փաշաների այդ ամառնային ապարանքները, որ այնպէս մրցում են իրարու հետ, քանի՞ քանի՞ ոճիրներ են տեսել: Գոռոզ դեսպանների այդ

© National Library of Armenia

Եւրոպական վիլլաները քանի՛ քանի անգամ են եղել մեծամեծ եղեռնների լուռ վկաներ։ Իսկ այդ նենգ գեղեցկուհին, որ Բոսֆոր է կոչւում, զուր չէ դարաւում վիշապի պէս։ Իր վճիտ ջրերի տակ քանի՛ քանի անմեղների դիակներ է պահում։

Ճակատագրի կծու հեղնանք. հին աշխարհի գեղեցկագոյն մասն ընկել է այն ցեղի ձեռքը, որ բնաւ ընդունակ չէ գեղեցիկն զգալու։ Ասում են՝ մարդը բնութեան զաւակն է եւ նրա պատճէնը. հապա ինչո՞ւ այստեղ նա չի նմանւում իր ծնողին, ինչո՞ւ բնութիւնն այստեղ այնքան սիրուն է եւ մարդու հոգին այնքան տգեղ։

Քանի մտնում էինք Կ. Պոլսին, ա՛յնքան տեսարանն աւելի ու աւելի ընդարձակւում էր եւ այնքան իմ սիրտը ճնշւում։ Ահա ե՛ւ տիեզերքի մեծագոյն չարագործի արիւնոտ ապարանքը — Իլդիզ-Քիոշքը, անարգ Դոլմա-Բախչէն, Զիրաղանն՝ իր այրուած դռների ու լուսամուտների սեւ խորշերով, հեռաւոր Սթամբուլն իր սրածայր մինարէներով, սքանչելի մզկիթներով։ Վերջապէս, ահա Բիւզանդիոնի թագուհին — Այեա Սոֆիան իր ոսկեզօծ գմբէթով։

*

* *

Շոգենաւը դանդաղօրէն մտնեցաւ քաղաքին եւ կանգ առաւ։

Անմիջապէս տախտակամածը լեցուեց դիմաւորողներով եւ բեռնակիրներով։ Գոռոմզոչումներ եւ Արեւելքում անխուսափելի հայհոյանքներ ու սպառնալիքներ մի տասնեակ լեզուներով։

Վայրկենարար մեր ճամբարկղները չքացան։ Ակնթիկս հաղիւ կարողացաւ խուռն ամբոխի մէջ գտնել չքացողին։ Ցոյն բեռնակիր էր։ Ուժից վեր բեռան տակ տնքալով, չէր մոռանում աջ ու ձախ արձակել տաճկերէն լեզուով յիշոցներ։

Կասէ՛ չգտանք կամ, ճիշտն ասած, բեռնակիրը չկամեցաւ, որ գտնենք։ Զգուշացնելով գրպանահատներից, նա մեզ տարաշնորհեց դէպի Ֆունիկիւլէր։ Մի ստորերկրեայ գիծ, որ քարափը կապում է Ղալաթիայի հետ։ Օրուայ այն միջոցին էր, երբ առանձին ջանք է հարկաւոր այդ գծի վրայ տեղ գտնելու համար։ Մեզ յաջողուեց գտնել բաւական հրհրուելուց եւ տրորուելուց յետոյ։

— Թոքաթլեան,— հրամայեցի բեռնակրին։

— Այնտեղ ապատ սենեակ չէք գտնի,— ասաց նա,— ես ձեզ կ՝առաջնորդեմ մի շատ լաւ տեղ։

«Շատ լաւ տեղը» դուրս եկաւ մի կեղտոտ ու մութ պանդոկ երրորդ կարգի։ Ուշ երեկոյ էր. ստիպուած էինք գիշերել։ Բայց ի՞նչ գիշեր. մինչեւ լոյս չկարողացայ քնել յատակի տակ եւ առաստաղի մէջ արշաւող մկների ծլվըլոցներից եւ, որ աւելի անախորժն էր, յոյն տիրուհիների ու սպասուհիների զոռում-զոռումներից։ Բոլոր ազգերից յոյներն են աւելի բարձրաձայն խօսում։ Ճաճախ թւում է, թէ կռւում են, այն ինչ՝ զրոյց են անում միայն։

Հետեւեալ օրը գնացի Թոքաթլեանին։ Ինքը տէրը հիւրանոցումն չէր։ Նրա խալացի թէ Ֆրանսիացի կառավարիչը, ծիծեռնակի թեւերի պէս սեւ ու սուր ընչացքն աւելի սրելով, բարձրագոյնս յայտարարեց, թէ բոլոր սենեակները բռնուած են։ Այցեւորմաս ուղարկեցի Հայկական Հանրապետութեան ներկայացուցիչ Պ. Ֆերդինանդ Թախթաճեանին, որ այդ միջոցին նախաճաշում էր սեղանատանը։ Սիրալիր մարդ եւ կատարեալ եւրոպացի։ Նա անմիջապէս եկաւ, խօսեց կառավարչի հետ, եւ ինձ տրուեց մի մաքուր ու լուսաւոր սենեակ դէպի փողոց։

II

Կ. ՊՕԼՍՈՒՄ

Ահա մի գեղեցկուհի, որին պիտի նայել հեռուից, եթէ չէք կամենում նրա ապականուած մարմնի վերքերը տեսնել։

Բնութիւնն ստեղծել է մի աննման շքեղանակ, մարդն այդ շքեղանակի մէջ դրել է մի այլանդակ ձեռակերտ։

Եթէ կամենում էք Բիւզանդիոնի մասին պահել մի անուշ երազ, մի իմնէք նաւից, նայեցէք հեռուից եւ հեռացէք։ Այլապէս պիտի զղջաք։ Գեղեցիկ է եղել թէ չէ Կ. Պոլիսը յոյների ժամանակ, չգիտեմ, բայց այժմ նա ինքն ապականութիւն է ներսից։

© National Library of Armenia

Այս եղաւ իմ առաջին տպաւորութիւնը, երբ անցայ նրա խորտ ու բոտերով լի եւ աղբակոյտերով լեցուն պողոտաները, երբ տեսայ նրա անոճ եւ անճաշակ տները, երբ մանաւանդ զգացի նրա անտանելի զարշահոտութիւնը:

Բայց ԵԹԷ զեղեցիկ չէ Կ. Պոլիսը, շահագրգիռ է յափշտակելու չափ: Ոչ միայն իր պատմական հատուկտոր դանձերով, այլ եւ իր ժամանակակից նկարագրով, իր բազմերանգ ազգաբնակութեան բարք ու վարքերով եւ ինքնայատուկ գծերով: Այս տեսակէտից գուցէ չկայ երկրագնդի վրայ աւելի գրաւիչ քաղաք: Այս տեսակէտից, ԵԹԷ կամենաք, նա նոյնիսկ զեղեցիկ է:

Եւրոպական ճամբորդները, որ յաճախ իրենց նախորդների ասածներն են կրկնում առանց վերաստուգելու, սովորաբար արհամարհանքով են խօսում Կ. Պոլսի Եւրոպական «արուարձանի — Պերայի մասին», միշտ հրճուելով Սթամբուլով:

Բայց իրապէս ճիշդ այդ մասն է քաղաքի, որ բնորոշում է ժամանակակից Բիւզանդիոնը: Հարկաւ, ոչ իր բարձր շէնքերով, ոչ հարուստ խանութներով եւ ոչ սալայատակների համեմատաբար մաքրութեամբ, այլ իր բնակչութեամբ: Գոնէ այն ամբոխով, որ առաւօտից սկսած մինչեւ կէս գիշեր անցուդարձ է անում Ղալաթա Սէրայից մինչեւ Թաքսիմ: Այստեղ է, որ տեսնում էք ազգերի, կրօնների եւ գոյների նմուշներն ամբողջ մարդկութեան: Այստեղ է, որ զգում էք Եւրոպայի եւ Ասիայի տեսակցութիւնը, մրցումը, փոխադարձ ատելութիւնը կամ մերձաւորութիւնը, արհամարհանքը կամ համբերողամտութիւնը: Եւ այստեղ է, որ նշմարում էք կիսախաւարի մէջ Արեւելքի եւ Արեւմուտքի հոգեբանութիւնները:

Սթամբուլը զուտ Թրքական է եւ, ԵԹԷ այնտեղ տեսնում էք հրէական փողոցներ, կը կամենաք գիտնալ՝ ո՞րն է աշխարհի այն վայրը, ուր չկան հրէաներ կամ չէք զգում նրանց աներեւոյթ ներկայութիւնը:

Երբ քայլում էք Պերայի շիտակով, կէս ժամուայ մէջ տեսնում էք ամբողջ մարդկութիւնն իր բոլոր տարազներով ու գոյներով:

Առաջին օրն իսկ սենեակիս պատշգամբից վերից վար դիտելով այդ աղմկալի խառնիճաղանճը, լսելով նրա բազմաբարբառ վլվլուկը, թուաց ինձ, որ գտնւում եմ ազգերի ու ցեղերի մի անօրինակ ցուցահանդէսում:

Պերան մի հսկայական կալէյդօսկոպ է: Պատկերացնելով ապագայ Կ. Պոլիսը, երեւակայում էի, որ այստեղ եւ ոչ մի ուրիշ տեղ պիտի դարբնուի ազգերի ու կրօնների, լեզուների ու շահերի համերաշխութեան ու եղբայրութեան ադամանդեայ շղթան եւ այստեղ պիտի սիրով գրկախառնուին Արեւելքն ու Արեւմուտքը: Մի՛ ասէք, որ Կ. Պոլիսը օսմանցիների ձեռքումն է: Իրապէս նա ոչ ոքի չի պատկանելու, ոչ միւսիւլմանին, ոչ քրիստոնեային, ոչ Արեւելքին, ոչ Արեւմուտքին: Նա համայն մարդկութեան սեփականութիւնն է: Թո՛ղ նա այժմ մրուր արտադրէ, բայց ճիշդ այդ մրուրից է, որ պիտի կազմուի ապագայ մարդկութիւնը...

*
* *

Երբ հայ լրագիրներից յայտնուեց իմ Կ. Պոլիս գալը, այլ եւս ժամանակիս մեծ մասն իմը չէր: Մի քանի պարտաւորական այցեր եւ անթիւ հաճելի այցելուներ, որոնցից շատերի համակրելի կերպարը առ միշտ պիտի մնան իմ յիշողութեան մէջ:

Մի օր, վերջապէս, ժամանակ գտայ Սթամպուլ գնալու: Հարկաւ, առաջին ցանկութիւնս էր տեսնել Սուրբ Սոֆիայի տաճարը: Ձյաղողուեց: Դռների առջեւ ցցուած ոստիկանները անցագիր պահանջեցին: Զունէինք, թողել էինք պանդոկում: Ցեսոյ իմացանք, որ միեւնոյնն է՝ անցագրով էլ չպիտի ներս թողնէին մեզ, որովհետեւ մուտքն արգիլուած էր հայերի եւ յոյների համար:

Փոյթ չէ, օրէնքով չլինի, կը գտնենք ապօրինի միջոց հռչակաւոր տաճարը մտնելու համար:

— Իսկ առ այժմ նայենք դրսից եւ գնանք Սթամբուլի փողոցները թափառելու,— ասացի ես աղջկանս, եւ գնացինք:

Ինձ համար, որ ծնուած եմ զուտ արեւելեան քաղաքում եւ տեսել եմ նրա ինքնայատուկ բոլոր պատկերները, Սթամբուլը չէր կարող

© National Library of Armenia

լինել ապշեցուցիչ, ինչպէս է Եւրոպացու համար: Այդ նեղ ու զառիվեր փողոցները, այդ մութ անցքերը, կեղտոտ քարվանսարաները, գեղեցիկ ալրիւրները եւ նրանց առջեւ խմբուած ոտաբոբիկ աղջիկներն իրանց պղնձեայ սափորներով, խանութների դունագեղ փորագրուած փեղկերը, Ջրկիր հէլեն իրանց փիլիսոփայական դէմքերով, բոժոժներով զարդարուած ուղտերն իրանց վեհապանծ քայլուածքով եւ միշտ ու միշտ հեռու նայող երազուն աչքերով Թրքուհիներն իրանց փակ բերանոցներով, մերկ սրունքներով,— այս բոլորն այնքան ընտանի էին ինձ, որ կարծում էի, թէ վաղուց, շատ վաղուց եմ տեսել Սթամբուլը: Չէ՞ որ իմ ծննդավայրն էլ մի փոքրիկ Սթամբուլ է, գոնէ եղել է իմ մանկութեան օրերում: Այն տարբերութեամբ, որ այնտեղ իշխում է Թախարի սեւ փափախը, իսկ այստեղ օսմանցու կարմիր ֆէսը:

Ամենից հետաքրքրականն էր ինձ համար Թրքուհու տիպարը, որի գեղեցկութեան մասին առասպելներ էի կարդացել ու լսել:

Գեղեցի՞կ է, արդեօք, Թրքուհին այնպէս, ինչպէս նկարագրում են նրան Եւրոպացի ճամբորդները: Չեմ կարող ասել: Երկու ամսուայ ընթացքում ես կ. Պոլսի բոլոր արուարձաններում դիտելով հարիւրաւոր Թրքուհիներ, աւելի չհիացայ նրանց, քան հայուհու, հրէուհու կամ յոյնուհու գեղեցկութեամբ կամ պակաս տգեղութիւններ չտեսայ, քան այլուր: Պատահում են, հարկաւ էակներ, որոց երկնագոյն կամ ածուխի պէս սեւ աչքերը ընդունակ են մի հայեացքով խոցոտել դիտողի սիրտը, բայց ո՞ւր չկան այդպիսիները: Նոյնիսկ Եւրոպական ամենատգեղ ազգի, զուիցերիացիների մէջ կարող էք գտնել գեղեցկուհիներ...

Ես կարծում եմ, որ Եւրոպացի ճամբորդին մոլորեցնողը Թրքուհու դէմքի քօղն է եւ նրա ազգային զգեստը: Հագցրու նրան Եւրոպական տարազ, եւ նա կը դառնայ մէկը սովորական Եւրոպուհիներից ու այնքան չի շլացնի Արեւելքի ամէն ինչը չափազանցացնող եւ ամէն ինչը գունաւորող Եւրոպացի ճամբորդներին, որքան այժմ: Թրքուհու թալիսմանը միւսիւլմանական «արդելքի» մէջ է. վերցրէք այդ արդելքը, եւ նա շատ բան կը կորցնէ, ինչպէս ե՛ւ արդէն սկսել է կորցնել այն օրից, երբ ճաշակել է Եւրոպական քաղաքակրթութեան առաջին պտուղները: Պարիզում եւ Հռոմում ես տեսել եմ բաւական թուով Թրքուհիներ Եւրոպական տարազով: Գոնէ փողոցներում եւ Թատրոններում նրանք ոչնչով չէին տարբերւում Եւրոպուհիներից արտաքուստ եւ չէին գրաւում բացառիկ ուշադրութիւն: Բայց բնական էր, որ մարդիկ դիտնային, թէ Թրքուհիներ են, եւ արդէն նրանց երեւակայութիւնը բորբոքում էր եւ ստեղծում շեղած զեղեցկութիւններ: Ա՛յնքան մեծ է սնօբիզմի ոյժը:

Մի բան ինձ համար անակնկալ էր — ամօթխածութեան չքացումը Թրքուհու մէջ, երբ նա հանդիպում է քրիստոնեայ տղամարդի:

Թրքուհու երեսը միշտ վարագուրուած է հերմակ ծակոտիկ քօղով իր կրօնակցի առջեւ եւ յաճախ բաց քրիստոնեայ այրերի համար: Երբ Թրքուհին ապահով է, որ ոչ մօտիկից ու ոչ հեռուից միւսիւլմանի խանդոտ աչքը չի լրտեսում իրան, անմիջապէս քօղն ընկնում է փողոցում նրա երեսից, եւ նրա տարփելի կրծքի վրայ իրարուց բաժանւում են սեւ «չարչաֆի» եղրերը, իբր թէ պատահաբար: Այն ժամանակ քրիստոնեայ այրը կարող է, որքան կամենում է, հիանալ նրա մելամաղձոտ եւ թաւչամորթ դէմքով, որ մեծ մասամբ գունատ է, եւ նրա երկայն իրանով, որ չի ներդաշնակում նրա կարճ ոտներին: Եւ թո՛ղ նայողը վստահ լինի, որ յաճախ կ'արժանանայ նրա սեղմ շրթունքների խրախուսիչ ժպիտին ու նրա որոնող աչքերի հրահրող խաղին:

Պօլսահայերն այս համարձակութիւնը բացատրում են իւրովի: Ասում են, իբր թէ Թրքուհին քրիստոնեայ տղամարդին մարդու տեղ չի դնում, արհամարհում է: Բայց, եթէ մի կողմ դնենք Թրքամոլ Լոտիի պարծենկոտ ու հնարամիտ արկածները իսկ, այդ բացատրութիւնն ինձ թւում է բռնազբօսիկ: Ես կարծում եմ, որ Թիւրք կինը հետաքրքրւում է քրիստոնեայ տղամարդով ոչ պակաս, քան Թիւրք տղամարդը քրիստոնեայ կնոջմով: Չէ՞ որ արգիլուած պտուղը գայթակղեցուցիչ է, լինի նա խնձոր թէ դեղձ, եւ չէ՞ որ Թրքուհին էլ Եւայի դուստրն է: Վերջապէս նա իր ամուսնու համար միակը չէ...

© National Library of Armenia

III

ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Կ. Պոլիս մտնելուս յաջորդ օրից հաճոյք ունեցայ ինձ շրջապատուած տեսնելու մի շարք համակրելի երիտասարդներով:

Մի մասը թատերականներ էին, ունէին մի դրամատիկական ընկերութիւն եւ կանոնաւոր պերասանական խումբ, որոնք քաղաքակրթութեան տեսակէտից զուցէ անհամեմատ աւելի մեծ գործ էին կատարում, քան մեր անթիւ «քաղաքական» գործիչները:

Խմբի մէջ կային մի քանի անվիճելի ձիրքեր:

Դրամատիկ ընկերութիւնը, որի ղեկավարների թւում էր Ն'. «Կավոշ» զաւեշտաթերթի խմբագիր սրամիտ եւ մի քիչ ստանայ Թոյլանը, իմ ներկայութեամբ Կ. Պոլսում եւ նրա շրջակայքում խաղաց իմ պիեսներից մի քանիսը «ի պատիւ հեղինակի»: Այդ ներկայացումներն ինձ պատեհութիւն տուին շրջուելու Կ. Պոլսի հայութեան հետ եւ յուզմունքով վայելելու նրա յարգանքի այնքան խանդավառ ցոյցերը: Ցոյցեր, որոնց ես ամբողջովին վերագրում եմ Պոլսահայերի ջերմ սիրոյն դէպի մայրենի գրականութիւնն ու թատրոնը:

Տեղն է ասելու, թէ այդ ներկայացումներին ես կրկնակի համոզուեցի, որ արեւմտահայերի եւ արեւելահայերի համազգային համերաշխութեան ամենաամուր շաղախը կարող են լինել գրականութիւնն ու թատրոնը, այսինքն՝ մայրենի լեզուն: Քաղաքականութեան հողը չափազանց լպրծուն է: Ցամենայն դէպս մեր այժմեան քաղաքագէտների ու ղեկավարների մանկական ոտները շատ թոյլ են այդ հողի վրայ հաստատուն կանգնելու համար:

Թատերականներին կից իմ բարեկամներն էին երիտասարդ գրողները: Ցիշում եմ եւ երբեք չպիտի մոռանամ Վ. Եարմանեանին, որի ոտանաւորները նոյնքան զօրեղ թուացին ինձ, որքան եւ իր ողբացեալ եղբօր Սիմանթոյի երկերը: Ցիշում եմ Կոստանդին Զարեանին, որ այն ժամանակ թողել էր իր գրականական գրոյցները հայերէն եւ աշխատակցում էր իտալական լրագրներին, որպէս թափառական թղթակից: Ոչ պակաս հաճելի է ինձ համար մտաբերել իրաւաբան Բախտիարի բովանդակալի գրոյցները, կատակները եւ հետաքրքրական տեղեկութիւնները թիւրքերի կեանքից:

Բայց այդ բոլորի հետ միասին ինձ համար վշտալի էր չգտնել Գրիգոր Զօհրաբին, Սիմանթոյին, Վարուժանին, Ռուբէն Զարդարեանին, Ակնունուն (Խաչատուր Մալումեանին): Դառն էր տեսնել նրանց տեղերը թափուր եւ չդիտնալ իսկ, թէ որտեղ են նեխուել նրանց յօշոտուած մարմինները...

*

* *

Իմ թափառող ու որոնող հոգու համար մի սփոփանք էր տեսնել մեր տաղանդաւոր երգիծաբանին, որի անուան անմահացման համար բաւական է միայն «Ծապլվարը»:

Պատահեցի ես Երուանդ Օտեանին առաջին անգամ Թոքաթլիի ճաշարանում ճիշդ այն երանելի վիճակում, որ միակ հաճելին է իր համար: Առանց դիտնալու ով լինելը, զգացի, որ սովորական մահկանացուներից չէ: Տաղանդները փոքրիկ արեգակներ են, որ ունին իրանց ճառագայթները: Միշտ հասակ, նրբակազմ, ոսկաւ ինչ կորամէջք (արդեօք մտքերի ծանրութիւնի՞ց), յստակ սափրած երեսով ու շրթունքներով, խորաթափանց ու ժպտուն աչքերով — ահա Օտեանը: Ի՜նչ մեղմ եւ ծաղակոծող, բարի եւ սուր, ի՜նչ մարդասէր եւ մարդատեաց նայուածք: Եւ ի՜նչ թաւշեայ անուշ բարիթոն:

Ես ոգեւից ըմպելիքների թշնամիներից չեմ, ինչո՞ւ մեղքս թագցնեմ, բայց երբեք ոչ մի բաժակ այն հաճոյքով չեմ պարպել, որով պարպեցի Օտեանի ինձ առաջարկած առաջին բաժակն անգլիական «ուսկիի»: Եւ այդ օրից ես դարձայ նրա ամենօրեայ բաժակակիցը: Ճշմարիտ է, շատ անգամ Օտեանը սրճարան գալիս էր արդէն «պատրաստ», բայց ես էլ չէի զլանում չուտով պատրաստուել, թէեւ երբեք չէի կարողանում հասնել նրա աստիճանին: Եւ մենք, գլուխներս տաքացրած, ժամերով խօսում էինք, երբեմն մինչեւ ուշ գիշեր: Նա պատմում էր տաժանակիր աքսորում կրած իր տառապանքները, ես պատմում էի Կովկասի կեան-

© National Library of Armenia

քից: Բայց մեր զրոյցները գլխաւորապէս գրականութեան ու արուեստների շուրջն էին պտըտում: Սիրում էի նրա սրամիտ դիտողութիւնները գեղեցիկի մասին, նրա կարկառուն մտքի անակնկալ թռիչքները: Եւ այսօր դժուարանում եմ յիշել ամբողջ հայութեան մէջ դրչի մի ուրիշ մարդ, որ ունենար Օտեանի չափ նուրբ ըմբռնողութիւն գեղեցիկ գրականութեան եւ գեղեցիկ արուեստի մասին:

Երուանդ Օտեանը մի զրող է եւրոպական իմաստով, որի արժէքը տակաւին չի գնահատուել հայութեան կողմից: Եւ ինձ համար ցաւալի էր տեսնել, որ մեր միակ երգիծաբանը իր օրուայ պարէնը վաստակելու համար ստիպուած է իր ամբողջ ժամանակը նուիրել լրագիրներին:

Լրագիրը խոշոր մտքի ուտիճն է:

Ցաւում եմ, որ միայն մի անգամ պատեհութիւն ունեցայ տեսնելու Թրքահայ գրականութեան մի ուրիշ ներկայացուցչին՝ բանաստեղծ Վահան Թէքէեանին, այն էլ շատ կարճ միջոցով: Զունեցայ առիթ եւ ոչ մի վայրկեան հնան ընկերաբար խօսելու, որովհետեւ ստիպուած էի պաշտօնական քոչ պահել երեսիս վրայ ի պատիւ ինձ տրուած թէյասեղանին Հայկական Ակումբում մի պատկառելի եւ զուսպ ընկերութեան մէջ: Այնտեղ էր, որ հանդիպեցի Թէքէեանին:

Տեսայ Սուրէն Պարթեւեանին, որ Թիւրքահայ անուանի գրողներից մէկն էր: Նա տըուեց ինձ կարդալու իր նոր գրած երկու թատերական երկերը, որ պիտի խաղացուէին: Կար մի ծանր միտք, որ այդ մարդուն հալածում էր, դարձնելով նրան լռակեաց եւ մտախոհ: Նա թափառում էր քաղաքից քաղաք իր սրտի ընտրեալի հետ, ինչպէս բունից արտաքսուած թռչուն: Եւ ոչ մի տեղ հանգիստ չէր գտնում անհանգիստ լեզուների բամբասանքներից...*)

Ռուսահայերը մի քիչ թիւր գաղափար ունին Կ. Պոլսի հայութեան մասին: Տարիների ընթացքում Թիֆլիսի գրողները, սկսած դիւրարարբարոյ Գրիգոր Արծրունու «Մշակ»ից, նրանց ականջներն ընտելացրել են «հոսհոս» ածականին: Իմաստակներն այսօր էլ երբեմն կրկնում են այդ բառը առանց խղճի խայթի:

Եթէ «հոսհոս» նշանակում է թեթեւամիտ, հապա ես ի սէր ազգիս կը փափաքէի Թիֆլիսի եւ Բաղուի հայութիւնը տեսնել այնքան թեթեւամիտ, որքան Կ. Պոլսի հայութիւնը: Արդեօք, Պոլսահայը հոսհոս է այն պատճառով, որ իր մայրենի լեզուն խօսում է այնքան մաքուր, այնքան գեղեցիկ, դիտնալով միաժամանակ մէկից աւելի եւրոպական լեզուներ: Իսկ ռուսահայը խելամիտ եւ ծանրաբարոյ է, որովհետեւ չդիտնալով իր մայրենի լեզուն, չդիտէ յաճախ նաեւ ոչ մի օտար լեզու կանոնաւոր:

Հասարակական վայրերում, ընկերական շրջաններում, թատրոններում եւ ընտանիքներում Պոլսահայը գիտէ իրան պահել աւելի վայելուչ, քան ռուսահայը: Նա զուսպ է, շրջահայեաց, գիտէ կշռել իր իւրաքանչիւր խօսքն ու այնպէս արտասանել: Նա մոլար չէ եւ չգիտի չփոթուել: Զուարթ է ռուսահայի չափ, բայց կիրթ է աւելի: Այն, ինչ որ ռուսահայն անուանում է պարզութիւն, Պոլսահայի հայեացքով կոպտութիւն է: Եթէ լաւ դիտենք, կը տեսնենք, որ այս տեսակէտից շատ դէպքերում Պոլսահայն իրաւացի է: Արդարեւ ռուսահայը յաճախ պարզութեան կամ անկեղծութեան քողի տակ մի կոշտ խօսքով վիրաւորում է իր բարեկամի սիրտն ու թունաւորում նրա օրը: Եւ կարծում է, թէ յաւիտենական ճշմարտութեան դանձարանի մէջ մի անգին գոհար ձգեց:

Իմ ճամբորդութեան ժամանակ երեք զանազան քաղաքներում երեք ռուսահայեր առանձին առանձին պարծեցան ինձ մօտ, որ գռեհիկ խօսքերով վիրաւորել են Պողոս Նուբար Փաշային: Եւ իւրաքանչիւրն իր արածը համարում էր մի տեսակ հերոսութիւն: Ես դժուարանում եմ երեւակայել, որ Պոլսահայը թոյլ տայ իրան այդպիսի վարմունք մի որեւէ պատկառելի անձի դէմ: Ցամենայն դէպս, եթէ թոյլ էլ տայ, չի պարծենալ իր արածով:

Ռուսահայի համար չողոքորթութիւն է, երբ Պոլսահայը իրան դիմաւորում է Ժպիտն երեսին եւ կոմպլիմանը շրթունքների վրայ: Նա չգիտէ, որ այդ Ժպիտն ու այդ կոմպլիմանը որոշ քաղաքակրթութեան չողերն են: Բայց մի-

*) Այս տողերը գրած էի, երբ լրագիրներում կարդացի Սուրէն Պարթեւեանի մահուան լուրը: Ցաւալի կորուստ մի շնորհալի հրապարակախօսի եւ աւելի շնորհալի հռետորի:

Շիրվ.

© National Library of Armenia

Ենոյն ժամանակ նա զմայլուում է Ֆրանսիացու քաղաքավարութեամբ, երբ սա ամէն քայլափոխում արտասանում է իր աւանդական "pardon"-ը կամ "je vous en prie"-ն:

Ճշմարիտ է, Գօլսահայը ընկերական յարաբերութիւնների մէջ զուսպ է, զգաստապահ: Նա իր խօսակցին չուտ չի բանում իր սիրտը եւ զգուշանում է անմիջական վստահութիւն արտայայտելուց: Նուրբ կամ վտանգաւոր խնդիրների մասին խօսակցելիս՝ նա յանկարծ լռում է եւ իր հայեացքը սեւեռում պատերին կամ առաստաղին: Նա թողնում է, որ դուք զուշակէք նրա միտքը, եթէ կարող էք: Ճշմարիտ է, յաճախ Գօլսեցու դէմքը սքօղւում է Սֆինքսի խորհրդաւորութեամբ երբ այդ բոլորովին աւելորդ է եւ երբեմն ծիծաղելի: Ճիշդ է, դուք շատ անգամ դժուարանում էք զուշակել կատա՞կ է անում Գօլսահայը, թէ լուրջ է խօսում, ծաղրո՞ւմ է ձեզ իր մտքում, թէ յարգում:

Այդ բոլորը ռուսահային՝ շփոթեցնում է եւ կասկածներ յարուցանում նրա մէջ: Բայց ամէն ինչ հասկանալի է դառնում, երբ յիշում էք այն սոսկալի պայմանները, որոնց մէջ Գօլսահայը ծնուել է ու սնուել: Վերջապէս, ինչո՞ւ պիտի կարծել, թէ ռուսահայի պարզախօսութիւնը միշտ էլ խելացի է կամ հաճելի:

Գնդում են, թէ Գօլսահայը չահամոլ է: Ահա մի մոլորութիւն, որ պէտք է հալածել, ինչպէս եւ պէտք է միանգամ առ միշտ դէն ձգել ռուսահայի բառարանից «հոսհոս» բառը:

Շահամոլութիւնը ազգերի կամ քաղաքների արտօնութիւնը չէ: Շահամոլ կամ ոչ շահամոլ են անհատներ: Երբ Կ. Գօլսում մի ակնավճառ չի կամեցել մի ռուսահայի ադամանդի գինը որոշել՝ առանց կանխաւ վարձ ստանալու, Թիֆլիսում եղել են հայեր, որ չեն ամաչել Ամերիկեան Որբախնամ Ընկերութեան վստահութիւնը մէկից աւելի անգամ չահագործել իրանց գրպանի օգտին: Մի օր ես չզիտէի ամօթից գլուխս ուր թաղցնեմ, երբ Ամերիկեան Բլլիֆի ներկայացուցիչն ինձ գանգատւում էր Թիֆլիսում, թէ ինչպէս մի նախկին նաւթարդիւնաբեր եւ այժմ միլիոնատէր Ադուլեցի հայ մի միլիոն ռուբլու տասն օր ժամանակուայ փոխառութեան համար իրանից պահանջել էր իրբեւ տոկոս ... հարիւր հազար ռուբլի: Սակայն այդ փոխառութիւնը հայ սովեալների համար էր... Համեմատեցէք այդ երկու փաստերը, եւ դուք կը տեսնէք, որ, եթէ Գօլսահայի արածը չահամոլութիւն է, Ադուլեցի հայի արածը ոճիր է...

Ժլա՞տ է, արդեօք Գօլսահայը բարի գործերի համար, ինչպէս սովոր են կրկնել ռուսահայերը: Ո՛չ. կամ նոյնչափ, որչափ բոլոր հայ մարդիկ բոլոր երկրների: Ո՞վ է պահպանում Ազգային հսկայական հիւանդանոցը, կենտրոնական Վարժարանը, միջնակարգ ու տարրական դպրոցները, բազմաթիւ որբանոցները, տասնեակ ընկերութիւնները, լրագիրները եւն., եւն.:

Այո՛, Գօլսահայը չունի ռուսահայի թափը ազգային հանգանակութիւնների մէջ, բայց նա չի ունեցել եւ նրա միջոցները: Չի ունեցել ոչ նաւթային չատրուաններ, ոչ պղնձի հանքեր, ոչ հսկայական կալուածներ ու անտառներ: Չի ունեցել արագ հարստանալու ոչ մի միջոց: Նա իր համեստ հարստութիւնը վաստակել է փարա փարա, մրցելով ոչ ռուսների, թաթարների եւ վրացիների պէս տկարների, այլ գերմանացիների, անգլիացիների, յոյների եւ հրէաների պէս վազրերի հետ: Ահա ինչու այսօր վաճառականութեան մէջ նա բիւր անգամ աւելի ճարպիկ է, քան ռուսահայը, եւ ոչ պակաս բարեգործ, քան նա, եւ ոչ աւելի ժլատ, քան նա:

IV

ԳՕԼՍՈՒՀԻՆ

Բաղդն ինձ վիճակել էր Կ. Գօլսում աւելի յաճախ չփուիլ կանանց շրջանների հետ, քան կարող էի ենթադրել:

Ժամանումիս երկրորդ թէ երրորդ օրը, պատիւ եւ հաճոյք ունեցայ ընդունելու Հայ Կանանց Նորակազմ Լիգայի նախագահուհին իր օգնականուհու հետ: Կարծում եմ համեստութեան դէմ մեղանչած չեմ լինիլ, եթէ երկուսի էլ անունները գրեմ: Տիկին Անայիս (Աւետիսեան) եւ Տիկին Գահարի,— երկու նրբամիտ հայուհիներ, երկուսն էլ բանաստեղծ:

— Եկել ենք մեր յարգանքները ձեզ մատուցանելու եւ խնդրելու, որ առաջիկայ կիրակի ձեր ներկայութեամբ պատուէք մեր կոնֆերան-

սը.— ասաց Տիկին Անայիսը։

— Հաճոյքով, բայց ինչի՞ մասին է ձեր կոնֆերանսը,— հարցրի ես,— եթէ քաղաքական խնդիրների, հապա ներեցէք...

— Քաւ լիցի, աճապարեց ընդմիջել Տիկին Պահարի, հեղնօրէն ժպտալով։— Մեր Լիզայի միակ նպատակն է հայ կնոջ մտաւոր զարգացումը եւ բարոյական կրթութիւնը։

— Միջոցնե՞րը կրթութեան։

— Դրականութիւն եւ արուեստներ։

— Սքանչելի է ձեր նպատակը։ Քաղաքականութիւնը ջախջախուած դաշնակ է կնոջ մտաւորի համար։ Կարծեմ, Աստուած Եւային ստեղծելիս ասել է. «Եղիր ինչ կամենաս, նոյնիսկ խմբագիր, բայց երբեք քաղաքագէտ, եթէ չես ուզում Ադամից զրկուիլ»։

Չեմ երաշխաւորում, որ ճիշդ այս խօսքերն ասացի, բայց նման մի բան էր ասածս։

Ես սիրով ընդունեցի նրանց հրաւէրը։ Գընացի կոնֆերանսին եւ շատ լաւ արի, որ գնացի։

Սիլոգոսի դահլիճը գրեթէ լիքն էր Պօլսուհիներով։ Այդտեղ էր եւ Զաւէն Սրբազան պատրիարքը. մի համեստ եւ համակրելի դէմք, որ ինձ վրայ թողեց հաճելի տպաւորութիւն։ Բանախօսեց մանկավարժ Ռէթէոս Բէրբէրեանի որդին, որ իր հերթին նոյնպէս մանկավարժ է եւ շարունակում է իր հանգուցեալ հօր գործը։

Որպիսի՜ ուշադրութեամբ էին լսում այդ հարիւրաւոր էակները բանախօսի տարբերական մաքերը ֆէմինիզմի մասին։ Դա ծարաւ հողինների մի ծաղկանոց էր, որ բառերի հեղեղը կըլանում էր ագահութեամբ որպէս մի կենդանարար անձրեւ...

Այդ օրն էր, որ ես հաճոյք ունեցայ ծանօթանալ բազմաթիւ Պօլսուհիների հետ եւ ստանալ մի քանի ընտանեկան հրաւէրներ։ Կարո՞ղ էի մտածել որեւէ մերժման մասին, քանի որ այնքան մեծ էր իմ փափաքը զէթ մի հեռաւոր հայեացք ձգելու Պօլսահայ կնոջ ներքին աշխարհի վրայ։

Ներքին աշխա՞րհ։ Դիւրին է ասել եւ ո՞րքան դժուար թափանցել։ Դոստոեվսկին ասում է, թէ կնոջ հոգու բանալին չողոքորթութիւնն է։ Ես չողոքորթութեան փոխարէն պիտի ասէի՝ լռութիւնը։ Փակեցէք ձեր բերանն ամուր եւ լայն բացէք ձեր ականջները, մի վիճաբանէք, մի հերքէք, միայն լսեցէք եւ կարող էք ապահով լինել, որ հետաքրքիր կը բացուի ձեր առջեւ կնոջ հոգին։

Սակայն Պօլսահայ կնոջ հետ այնքան հաճելի է խօսել, որ չէք կարող լռել։ Միւնոյնն է, գեղեցիկ է նա, թէ ոչ, երիտասարդ է, թէ ոչ, նա գիտէ անմիջապէս բանալ ձեր լեզուն եթէ ոչ իր արտաքինով, զէթ իր նրբամիտ խօսքերով, իր հիւրընկալ ժպիտներով, իր փոպաքուչ ձայնով։ Վերջապէս, իր մաքուր, երաժշտական բարբառով։ Երբ հիւր էք նրա տանը, ուշադիր է ձեր իւրաքանչիւր խօսքին, չարժմանը, զէմքի արտայայտութեանը։ Նա մի վայրկեան անդամ թոյլ չի տալիս ձեզ ձանձրանալ։ Ֆրանսիական քաղաքակրթութեան ազդեցութի՞ւնն է այս, թէ՞ մայրական ժառանգութիւն Պօլսուհու, որի քաղաքային նիստ ու կացը զարերի յարատեւութիւնն ունի։

Փոյթ չէ, որ Պօլսուհու մտաւոր զարգացման պաշարն աւելի չէ, քան ռուսահայ կնոջ պաշարը։ Փայթ չէ, որ նա պակաս է տեսել օտար թատրոններ եւ աւելի քիչ ճամբորդել, քան ռուսահայ կինը։ Փոյթ չէ նաեւ, որ նա աւելի վատ է նուագում, աւելի վատ է երգում եւ շատ էլ խստապահանջ չէ թէ՛ մէկի եւ թէ՛ միւսի վերաբերմամբ։

Այնու ամենայնիւ, նրա հետ աւելի հաճելի է զրոյց անել, քան ռուսահայ կնոջ հետ։ Եւ դա ոչ միայն այն պատճառով, որ Պօլսուհու այնքան անուշ եւ այնքան երաժշտական արտասանութիւնը հայ լեզուի՝ շոյում է ձեր լսելիքը, թէեւ հէնց միայն այդքանը մի մեծ հրապոյր է մանաւանդ հայ զրոյի համար։ Կայ եւ մի ուրիշ բան. Պօլսուհին գիտէ իր ունեցած փոքրիկ զանձը ծախսել աւելի դեղեցիկ եւ աւելի արուեստագիտօրէն։

Պօլսուհին աւելի արտիստ է, քան ռուսուցիչ կամ պատգամախօս։ Ինչպէս դերասանուհի նա միշտ բեմի վրայ է, այսինքն՝ գիտէ ոչ միայն խօսել, այլ եւ լսել, իսկ լսելը մի մեծ եւ հաղուագիւտ արժանաւորութիւն է առ հասարակ կին էակի համար։

Բանաստեղծ է Պօլսուհին թէ տնտեսագէտ, սալօնի զարդ է, թէ խոհանոցի կամ կարուձեւի վարպետ, հասարակական գործիչ է, թէ վարժուհի, հարուստ թէ ոչ, գիտէ յար-

© National Library of Armenia

պել դիմացինի ներքին աշխարհը եւ ամօթխածօրէն ու համեստութեամբ դիմադրել նրան, եթէ համաձայն չէ նրա գաղափարներին: Նա երբեք իր ցուցամատը չի բարձրացնի մանկավարժօրէն եւ ձեզի խրատներ չի կարդայ, ինչպէս այդ անում է ռուսահայ «ինտելիգենտ» կինը, երբ նա զպրոցի տեսչուհի է կամ «հասարակական գործիչ» եւ կամ համբերատար լրագիրներին «յօդուածներ» մատակարարող, մանաւանդ երբ նրա տարիքն անցել է քառասունից...

*
* *

Շատ էի լսել Պօլսուհու գեղեցկութեան մասին զովասանքներ: Բնական է, որ փնտռէի այդ գեղեցկութիւնը:

Մեղքը Պօլսուհունը չէ, որ ես մի փոքր հիասթափուեցի:

Հռչակը ձիւնի գունդ է, որքան հեռու է թաւալում, այնքան մեծանում է: Ե՞րբ է իրականութիւնը վաւերացրել երեւակայութեան թռիչքը: Նիւ Եորքի «երկինք քերողներն» ինձ այնքան բարձր չերեւցան, որքան լսել էի ու երեւակայել: Երկրագնդի վրայ գուցէ միայն Նիագարայի ջրվէժն է, որի հռչակը շատ վար է իր իրական հզօրութիւնից:

Թօքաթլեանի սեղանատանը մի օր տեսայ երկու գեղանիներ: Հայերէն էին խօսում, հետեւաբար հայուհիներ էին: Մէկը սեւահեր էր, սեւաչեայ, ժպտուն, կրակոտ, միւսը՝ խարտեաշ, կապտաչեայ, ցնորական—հուր եւ լոյս: Բայց ըստ երեւոյթին Պօլսուհիներ չէին, այլ համբորդներ:

Հրաւիրուած էի այցելելու Հայ Կանանց «Կարմիր Խաչի» հիւանդանոցը: Գնացի պատուցի բոլոր սենեակները: Տեսայ մայրական հոգացողութիւն փախստական թշուառների վերաբերմամբ յայտնի գերդաստանների տիկինների եւ օրիորդների կողմից: Տեսայ տասնեակ երիտասարդ բժիշկների անխոնջ եւ անվարձ ջանքերն՝ ամօրելու ազգի մեծ թշուառութեան մի փոքրիկ մասը: Հիացայ սենեակների մաքրութեամբ, կերակրի առատութեամբ եւ հիւանդների անրիծ ննջեակներով:

Յետոյ հրաւիրուեցի թէյասեղանի: Այդտեղ էր ահա, որ տեսայ մի զմայլելի փունջ հայուհիներից: Մի փունջ, որ կարող էր ամենախստապահանջ գեղարուեստական ճաշակը գոհացնել:

Եթէ Պօլսուհին չունի Շամախեցի կնոջ գեղեցկութիւնն ու դէմքի զմայլելի գոյնը եւ ոչ Ղարաբաղցի կնոջ կայտառութիւնը, նա նուրբ է գրեթէ առաջինին հաւասար եւ երկրորդից աւելի:

Պօլսուհին գիտէ հագնուել: Նա բաւական ծանօթ է գոյների ներդաշնակութեան օրէնքին, գոնէ այնչափ, որչափ ռուսահայ հարուստ դասի տիկինները, որոնք ամէն տարի գնում էին (աւա՜ղ, «էին») Պարիզ իրանց ճաշակը կրթելու համար: Պօլսուհին գիտէ եւ՛ սիգանքով ձեմել, եւ՛ սեթեւեթ ժպտալ, եւ՛ սիրակէզ հառաչել ու բանաստեղծօրէն տխրել, ինչպէս վարուում ուզենի: Նա դիակ նաեւ չափաւոր գործածել սնդոյին ու անուշահոտ իւղերը, նոյնիսկ նաղելի չարժել հովհարը եւ նազելի բռնել լոռնեանը:

*
* *

Պօլսուհին բանաստեղծութեան սիրահարն է: Սիրահար թէ՛ կարդալու եւ թէ՛ գրելու. թերեւս աւելի գրելու, քան կարդալու:

Ձկայ ընտանիք, որի սալօնում չտեսնէք մի քանի փառակազմ հատորներ: Եւ ոչ մի սալօնի սեղան, որի վրայ չլինի ոտանաւորներով լեցուն ալբոմ, երբեմն մէկից աւելի:

Ալբոմը, ի հարկէ, մի անմեղ զբօսանք է: Նա յիշեցնում է ռոմանտիզմի դարը: Մի զբօսանք, սակայն, որ բաւական սուղ նստեց իմ ժամանակին: Հարկաւ, ես անկեղծ հաճոյքով էի ընդունում ինձի առաջարկուած ալբոմները եւ գրում, ինչ որ կարող էի գրել: Բայց ամէն հաճոյք ունի իր լեղին, երբ չափից աւելի ես հաճակում: Շատ անգամ տատանւում էի ինչ գրել, որովհետեւ չգիտէի՝ ում համար եմ գրում: Ամէն անգամ սարսափում էի, երբ պանդոկ վերադառնալով դրասեղանիս վրայ տեսնում էի մի նոր բլուր ալբոմների, որոնց տէրերին ոչ ճանաչում էի եւ ոչ տեսել էի:

Մի անգամ մի տիկնոջ ալբոմում պիտի պատասխանէի երեք հարցերի. «Ի՞նչ էք սիրում, ի՞նչ էք ատում, ինչի՞ց էք վախենում»:

© National Library of Armenia

Աղջիկս անմիջապէս գրիչ վերցրեց եւ երբորդ հարցի դէմ գրեց՝

— Ալբոմից։

Այո՛, Պօլսուհին ռոմանտիկ է եւ մի փոքր սանտիմանտալ։ Ռէալիզմը տակաւին արմատներ չի ձգել նրա հոգու մէջ, եւ այս նրա արժանաւորութիւնն է։ Գուցէ չսխալուիմ, եթէ ասեմ, որ այժմ էլ, նրա կատարելատիպը Տիկին Սիրիլն է։ Արդարեւ, մի եզակի կին, տաղանդաւոր գրող լինելուց զատ, մի երազող էակ, որի հետ կարող էք ժամերով խօսել ու վիճաբանել եւ դարձեալ վշտանալ, որ չուտ բաժանուցիք։ Գոնէ ես այս տպաւորութիւնն ըստացայ։ Գրնալը կղզում հազիւ մի ժամ հետը զրուցելուց յետոյ։ Այն էլ նշանաւոր վիպասանի կեանքի դառը պահին, երբ նա իր անբուժելի հիւանդ ամուսնուն, Հրանդ Ասատուրին, նոր ճամբել էր Ազգային Հիւանդանոց...

Ընդհանրապէս, Պօլսուհին վարպետ է ոչ միայն խօսելում, այլ եւ գրելում։ Ինչ ուզում էք — ասացէք, բայց ռուսահայերը չունին ոչ Դիւսաբ, ոչ Սիրիլ եւ ոչ Զարէլ Եսայեան։ Կայ, այո՛, մի փայլուն Մարիետա Շահինեան, որի հաւասարը չունինք հայ գեղեցիկ սեռի մէջ, բայց նա պատկանում է հայ անուան հռչակին եւ ոչ հայ գրականութեանը։ Եւ թող ռուսահայ բանաստեղծուհիները չվշտանան, եթէ ասեմ, որ Տիկին Անայիսի հօր Բէրբէրեանի ոտանաւորներն ես աւելի սիրեցի, քան նրանց գործերը։ Եթէ ոչ գաղափարի խորութեան, գոնէ ոճի գեղեցկութեան, յանգերի հարստութեան եւ համեմատութիւնների սիրունութեան տեսակէտից։

Ցիշեմ, արդեօք, ուրիշ անուններ։ Տիկին Պահարիի, Տիկ. Զարուհի Գալէմքերեանի, Օր. Քալանդարեանի գրիչներն առնական ոյժ ունին։

Պօլսուհին բանաստեղծ է նոյնիսկ սովորական թղթակցութիւնների մէջ։ Տիկ. Մարի Սթամբուլեան, Տիկ. Անայիս, Տիկ Պահարի եւ ուրիշներ նամակներ ունին քովս, որոնք զմայլելի տողեր են պարունակում։

Ռուսահայ կինը շատ բաներ ունի իւրացնելու Պօլսահայուց, եւ ամենից առաջ նրա սէրը դէպի մայրենի լեզուն...

V

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

Ես ստիպուած էի մերժել շատ առաջարկներ՝ այս ու այնտեղ բանախօսելու, որպէսզի ժամանակ շատ ունենամ թափառելու։ Ես եկել էի ոչ ուսուցանելու, այլ ուսանելու համար։

— Եթէ հաճիք, ես ձեզ կ'առաջնորդեմ Այնա Սոֆիա,— դարձաւ ինձ մի օր մի հայ երիտասարդ, զինուորականի համազգեստով։

— Ձեր անո՞ւնը։

— Պօղոս Քէչիշեան։ Ես անգլիական ծառայութեան պաշտօնեայ եմ եւ կրնամ ձեզ տանել տաճարի ներքը։

Հաճընցի էր, խրոխտ ձայնով, աւելի խրոխտ ձեւերով, շարժուն, ինչպէս սնդիկ։ Գրելթէ պատանի՝ իր աչքերի ու դէմքի անմեղ արտայայտութեամբ։ Ցետոյ նա դարձաւ իմ հաւատարիմ ուղեկիցն ամենուրեք, եւ ես սիրեցի նրան ինչպէս հարազատ զաւակիս։ Աւա՜ղ, նա չկայ այժմ։ Մի տարի անցած՝ նա սպանուեց Կիլիկիայում։ Անգլիական ծառայութիւնը թողնելով, նա անցել էր հայ կամաւորների շարքը, իբրեւ խմբապետ։ Նա մահ էր փնտռում մի անաչող սիրոյ վշտից ազատուելու համար։ Եւ գտաւ։

Ես ուրախութեամբ ընդունեցի սիրալիր երիտասարդի առաջարկը, եւ հետեւեալ օրն իսկ գնացինք Սթամբուլ։

Տաճարի ներքին դռների առջեւ թիւրք պահապանը մեր ոտներին հագցրեց քրիստոնեայ այցելուների տանջանքը — աւանդական բարուշները։

Մտանք ներս։ Սկսուեց մի ծիծաղելի ոստոստում հնամաշ գորգերի վրայ։ Մեր գլուխների վրայ բարձր ու բարձր ոսկեզօծ կամարը որպէս աստղազարդ ամարային երկինք մագնիսի ուժով քաշում էր մեր աղահ նայուածքը վեր, իսկ բարուշները ստիպում էին նայել վար։ Ամէն քայլափոխում նրանք սահում էին մեր կօշիկների վրայից, կարծես, հրաժարուելով ծառայել քրիստոնէի պիղծ ոտներին։ Այն ինչ՝ ծնկաչոք աղօթող հաւատացեալները, մեր ակամայ ծիծաղներից սթափուելով, սպառնալի հայեացքներ էին ձգում մեզ վրայ։

Այնու ամենայնիւ, ի՜նչ սքանչելի տպաւորութիւն։

© National Library of Armenia

Սուրբ Մարկոսի տաճարը Վենետիկում մանկական խաղալիք է Այնա Սոֆիայի քով: Հարկաւ, ոչ միայն իր չափերով, այլ եւ գեղեցկութեամբ: Ոճը նոյնն է, տպաւորութիւնը՝ տարբեր: Այնտեղ ներսում ու դրսում ոսկու շողալութիւնն է ձեզ շլացնում, այստեղ՝ նրա չափաւոր եւ զարմանալի վարպետ գործածութիւնն է զմայլեցնում:

Երեք դլխաւոր պայմաններ ունի արուեստը իր բոլոր ճիւղերում,— պարզութիւն, ուժ եւ չափի զգացում: Երեքն էլ խստիւ պահպանուած են Այնա Սոֆիայի կառոյցի մէջ:

Ինձ համար բիւզանդական ոճը ճարտարապետութեան մէջ աւելի յաղթական է, քան կոթականը: Նա հաճելի է իր հանճարեղ պայծառութեամբ, որովհետեւ ուրախութիւն է ներշնչում: Գոթիկն ինձ գրաւում է իր անհուն ուժով. բայց ճնշում է իր մռայլութեամբ: Այդ բազմաթիւ հսկայական շարիչար սիւները, այդ նեղ ու ձիգ կամարներն իրանց մութ խորշերով, այդ մշուշապատ լուսամուտներն, այդ կիսախաւարն ու խաւարը, իրանց երկնային վեհութեամբ հանդերձ, սեղմում են իմ սիրտը եւ տխրութեամբ համակում հոգիս:

— Ամէն ինչ վեր, դէպի Աստուած,— ա՛յս է ներսի իրարու դրկախառնուած եւ իրար վեր հրող գոթական կամարների եւ դրսի սուր նիզակների պէս ցցուած աշտարակների խորհուրդը:

— Ամէն ինչ պարզ, լուսահեղ եւ հեզ,— ասում է բիւզանդական հրաշակերտի կամարն ա՛յնքան ընդարձակ, ա՛յնքան պայծառ, ա՛յնքան ժպտուն իր առատ լոյսով եւ երկնանման տեսքով:

Գոթական տաճարի մէջ ես անջատուում եմ կեանքից եւ դնում մթութեան մէջ Աստծու հետ մեն միայնակ եւ դէմ ու դէմ: Այնտեղ ես լսում եմ մահուան երգը եւ, ճշմարիտ է, հաչուում եմ նրա հետ, բայց ցաւում եմ, որ կեանքը, դուրսը մնալով, ինձ ձգել է խաւարի դիրկը:

Այլ է Այնա Սոֆիան: Նա իմ հոգին չի մռայլեցնում, իմ սիրտը չի ճնշում: Այնտեղ կեանքն ինձ հետ է: Նա իմ բարեկամն է եւ հետեւում է ինձ: Եւ այնտեղից ես դուրս եմ ելնում պայծառ հոգով եւ աւելի ուրախ ու զբաղթ, քան մտնելուց առաջ:

Պատմութիւնն ասում է, որ Յուստինիանոս Առաջինը, որի հրամանով է վերակառուցուած Այնա Սոֆիան իր այժմեան տեսքով, առաջին անգամ այնտեղ մտնելով, գոչել է.

— Սողոմոն, ես քեզ յաղթեցի:

Այո՛, նա յաղթել է «Ունայնութիւն ունայնութեանց» իմաստունին: Նա հաստատել է, որ կեանքը, չնայելով իր դառնութիւններին, այնու ամենայնիւ թանգ է աւելի, քան մահը, նոյնիսկ Աստծու համար...

*
* *

Այնա Սոֆիան տեսնելուց յետոյ՝ ի՞նչ միտք ունէր այցելել միւս մզկիթները: Նրանք արտաքուստ եւ ներքուստ այնքան նման են իրարու, որ, կարծես, բոլորը միեւնոյն հետեւողութեամբ են կառուցուած:

Բայց ի՞նչպէս դիմանալ Փանոս Թէոլէմէզեանի, այդ միշտ ծարաւ եւ միշտ որոնող ու ուսումնասիրող արուեստագէտի յամառութեանը:

— Անպատճառ պէտք է տեսնել Էիւբի մզկիթը եւ Կահրիէ Ջամին:

— Շատ լաւ,— ասացի մի օր եւ հետեւեցի նրան:

Անցանք Ոսկեղջիւրը նաւով, հասանք վերջին կայարանը: Սթամբուլի ամենահեռաւոր արուարձանումն ենք, հռչակաւոր գերեզմանոցների աշխարհում — Էիւբում: Այստեղից է, որ Ոսկեղջիւրը ցոյց է տալիս իր ամբողջ հմայքը:

Փողոցները լեցուն են կանանչ, մանաւանդ ճերմակ եաղմաներով: Նրանք այնքան շատ են, որ կարմիր ֆէսերն անգամ աչքի չեն ընկնում:

Որքա՜ն ծերունիներ, ի՞նչ փառահեղ դէմքեր եւ ձիւնի պէս ճերմակ մօրուաներ: Կարծես Բիբլիական նահապետներին յատկացուած մի առանձին աշխարհ է այդ արուարձանը: Պատերի տակ, շէմքերի վրայ, զահֆէխանաների ներսում ու դրսում, նստած կամ կրկղած, նրանք ծուլօրէն ծծում են նարգիլէն խորհրդաւոր դէմքերով եւ մերթ ընդ մերթ դանդաղօրէն մօտեցնում իրանց շրթունքներին զահֆէի մատնոցաչափ գաւաթները:

Նայելով այդ պատկառելի դէմքերին եւ յիշելով դեռ մերձաւոր անցեալի դէպքերը,

© National Library of Armenia

մարդ ակամայ մտածում է՝ միթէ այդ մարդիկ կարող էին լինել այնպէս արիւնարբու, որպէս նկարագրում են նրանց: Եւ ի՞նչ է այն դիւային ուժը, որ մերթ ընդ մերթ ստիպում է նրանց դէն ձգել այդ թմբեցուցիչ նարգիլէն եւ եռթաղանը վերցնել անմեղ մանուկներին ու անպաշտպան կանանց կոտորելու համար:

Ցիշում եմ, մի օր, երբ Իշխանաց կղզում հիւր էի մի հայ ընտանիքում, ճաշից յետոյ դուրս եկանք պատշգամբ սուրճ խմելու: Անցորդների մէջ իմ ուշադրութիւնը գրաւեց մէկը: Դա մի պատկառելի ծերունի էր՝ բարձրահասակ, պարթեւ, երկայն ու ճերմակ մօրուսով, վեհ քայլուածքով, զեղեցիկ: Կատարելապէս Աբրայ էր:

— Ի՞նչ սքանչելի մարդկային կերպարանք, գոչեցի ես, հիացած:

Այնպէս սիրելիս գալիս ժպտաց եւ, տխուր հառաչելով, արտասանեց.

— Այո, սքանչելի, բայց այդ ծերունին մի օր պարձենում էր, որ մի անգամ ութ ժամ չարունակ հարիւր է կոտորել: Եւ զանգատւում էր, որ ձեռքը յոգնել էր:

Ես ցնցուեցի: Օ՜ա, Սաթանայ է Հրեշտակապետը կերպարանքով:

Էրզրումի մարմարեայ մզկիթն ամենանուիրականն է մուսուլմանների համար: Մահամմէդ Յայթոնն է չինել տուել նրան ի յիշատակ Մեծ Մարգարէի դրօշակակիր Էրզրի, որ 668 թուին Կ. Պօլսի պաշարման ժամանակ սպանուել է: Այդտեղ է պահւում Մարգարէի սրբազան սուրը եւ այդտեղ են նոր սուլթաններն իրանց գահակալութեան առաջին օրը գօտեւորւում Օթթոմանի թրով: Մի յատուկ նշանակուած հոգեւորական զիշեր ցերեկ հսկում է նուիրական իրերը, խուլ ձայնով կարդալով սրբազան Ղուրանը:

Կահրիէի մզկիթը նշանաւոր է իր մոզաիկներով: Ամենահինն է բոլոր մզկիթների մէջ: Նա նախկին վանք է, կառուցուած Երրորդ դարի վերջերում Յուստինիանոսի օրերով: Այդ վանքի մէջ է իր օրերն աւարտել նշանաւոր պատմարան Նիկիքոր Գրիգորասը:

Փանոս Թէոլէմէզանը հիացմամբ դիտում էր կիսաւեր մոզաիկները: Ես շատ էլ չէի բաժանում նրա հիացումը: Ինձ վրայ զեղեցիկն ազդում է, երբ նա միացած է ուժի հետ: Նրբութիւնը, իրաւ է, շոյում է իմ տեսանելիքը, բայց չի ցնցում իմ հոգին, չի կլանում իմ կութիւնն ամբողջովին, ինչպէս օրինակ երաժշտութիւնն ու գրական — արուեստների այդ երկու քոյր թագուհիները...

Բարձրացանք բլուրի վրայ ցրուած գերեզմանոցները, անցանք գերեզմանների անվերջ շարքերի միջով:

Զուր չէ ժողովրդի երեւակայութիւնն ըստեղծել այնքան առասպելներ մահմեդական գերեզմանների մասին: Այդ ցից տապանաքարերն անչուշտ սարսափ են ներշնչում գիշերներն, ինչպէս կանգուն ուրուականներ: Բոլորն ունին մարդկային ձեւեր եւ իւրաքանչիւրն իր գլխնոցը, ֆէս կամ եաղմա, նայելով հանգուցեալի դիրքին եւ աստիճանին: Ոմանք ներկուած են, մեծ մասամբ կանանչագոյն:

Կանգ առանք բլուրի գլխում: Կ. Պօլիսն, այն ներքուստ այլանդակ, ազատու քաղաքը, կերպարանափոխուեց, հագնելով իր կախարդական զգեստը:

Բաւական է, այդ տեսարանից չի կարելի կշտանալ: Վերջապէս, անօթութիւնն աւելի զօրաւոր է, քան զեղեցիկի սէրը: Իսկ մենք անօթի ենք:

Իջանք էիւր: Մերունի թիւրք խոհարարը աշխոյժ պատանու շարժումներով մեզ համար պատրաստեց ոգոչինի շատ մանր կտորներից մատի չափ չամիչների վրայ խորոված: Ես կերայ տասնումէկ չամիչ, Թէոլէմէզանը կերաւ տասնութ չամիչ: Ես հարամ չկերայ, նա հարամ էլ կերաւ: Ահա տարբերութիւնը նրա եւ գրողի միջեւ:

Ի՞նչ սիրալիր են թիւրքերը, որքա՞ն քաղաքավարի ու որչափ կիրթ իրանց ձեւերի եւ վայելուչ՝ իրանց խօսքերի մէջ: Մարդ ապշում է, տեսնելով այն անդունդը, որ կայ թիւրքի արտաքինի եւ ներքինի միջեւ:

Ահա այդ խարուսիկ արտաքինն է, որ այնպէս կաչառում է եւրոպացուն եւ այնքան նրպատատաւոր տպաւորութիւն թողնում նրա վրայ թիւրք «քաղաքակրթութեան» մասին:

Արեւելքի մէջ ամէն ինչ եւրոպացուն թըւում է խորհրդաւոր եւ խորիմաստ, նոյնիսկ ամենաչնչին բաները: Յաճախ նրա երեւակայութիւնն է ստեղծում իմաստ եւ խորհուրդ՝ իրերը թանձր զունաւորելու մի զարմանալի

© National Library of Armenia

ցանկութեամբ:

Շատ էի լսել Կ. Պոլսի «պարող» եւ «գոռոզ» դերվիշների մասին: Ժամանակս ներեց տեսնել միայն պարողներին կամ պտտողներին:

Հետաքրքրուելի իմանալ՝ կա՞յ արդեօք որեւէ խորհուրդ այդ տարօրինակ ազանդի մէջ, բայց ահա տեսարանը, որ կրկնուում է շաբաթը հինգ անգամ Կ. Պոլսի զանազան մասերում:

Բեմը մի ընդարձակ սրահ է հայելու պէս ողորկ ու փայլուն յատակով: Ներս են մտնում մէկը միւսի եւեւից մէկ ու կէս տասնեակ ազանդաւորներ: Նրանք ոտաբոբիկ են, հագած են կանացի լայն ու ճերմակ շրջազգեստ, վրէն սեւ ծածկոց եւ գլուխներէն երկայն թագիրեայ գլխակներ. բաժանուում են երկու կարգերի եւ կանգնում են դէմ ու դէմ: Գալիս է նրանց աւագը նոյն ձեւով հագնուած, միայն կանանչագոյն բաճկոնով: Նա հանդիսաւոր քայլերով մօտենում է սրահի ծայրում ծալապատիկ նըստած «Միհրաբ»ին եւ արտասանում է մի աղօթք:

Աղօթքին հետեւում է Ղուրանից մի հատուած երգի եղանակով եւ նուագարանի ներդաշնակութեամբ: Յանկարծ լսւում է թմբուկի մի թնդիւն: Դա նուագարանապետի նշանն է: Բոլոր դերվիշները, որ այդ ժամանակ նըստած են, արագութեամբ ոտքի են ելնում, ձեռներն ուժգին զարկելով յատակին եւ սկսում են պտտել սրահի շուրջը: Աւագը կանգնում է Միհրաբի քով: Իւրաքանչիւր դերվիշ նրա առջեւով անցնելիս, գլուխը խոնարհեցնում է ի նշան երկրպագութեան եւ, ոտը ոտին զարկելով, երեսը դարձնում է դէպի իրան հետեւող դերվիշը: Յետոյ ամէնքը կանգ են առնում իրանց տեղերում մի քանի րոպէ եւ երաժշտութիւն լսում: Յանկարծ մի շարժումով ձգում են իրանց ուսերի վրայից սեւ ծածկոցները եւ սկսում են կանոնաւոր պտտել իրենց շուրջը եւ սրահի շուրջը: Նրանց թեւերը տարածուած են հորիզոնաձեւ, մէկը ձեռներից բաց ափը դէպի վեր, ողորմութիւն աղերսում, միւս ափը դէպի վար, իբր թէ ողորմութիւն է տալիս:

Պտոյտները զեղեցիկ են, թեւերի պահուածքը կանացի, շրջազգեստների սաւառնումն ողային: Մարդիկ նմանւում են թեւատարած կարապների, ճերմակ ու թեթեւ: Այդ պտոյտները կրկնուում են երեք անգամ, իբրու յաջորդելով կարճատեւ դադարից յետոյ: Վերջապէս, դերվիշները նստում են յատակի վրայ: Մէկը ձգում է նրանց ուսերի վրայ սեւ ծածկոցները: Նրանք ոտքի են ելնում, մօտենում են աւագին եւ. ջերմեռանդօրէն համբուրում են նրա աջը:

Տեսարանը տեւում է մի ժամ: Աւագն արտասանում է «Մերհաբա», դերվիշները միաձայն երեք անգամ կրկնում են «Ամին»:

Ես դուրս եմ գալիս տարակուսած. ի՞նչ է նշանակում այդ բոլորը: Նայում եմ Բեղեկերի սարուկ անդրանիներին եւ նրանց սերկեւիլպոյն գլխարկների վրայ կարդում եմ նոյն տարակուսանքը...

VI

Կ. ՊՕԼՍԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

Սքիւթարը Թիւրքիայի համար պատմական կրկնակի արժէք ունէ: Այդտեղ է հիմնուել Օթթոմանների դինաստիան եւ այդտեղից է մահմեդականութիւնը տարածուել դէպի Եւրոպական Թիւրքիա: Այժմ նա Կ. Պոլսի կեղտոտ արուարձաններից մէկն է եւ նշանաւոր միայն իր գերեզմանատներով, որոնցից մէկը, ի միջի այլոց, նուիրուած է հայկական կոտորածների հերոս այրանացիներին:

Սքիւթարի կունակի բարձունքներից Կ. Պոլիսը ներկայացնում է մէկն իր կախարդական տեսարաններից:

Շոգենաւը Բոսֆորի նեղուցը կտրելիս՝ ճամբորդի ուշադրութիւնը գրաւում է մի փոքրիկ կղզի, վրէն մի տնակ եւ մի աշտարակ:

«Ղրգ Գիւլէսի» է այդ կղզու անունը, թէեւ եւրոպացիները նրան անուանում են «Լէանդրի Աշտարակ»:

Թիւրքերը հետեւեալ աւանդութիւնը ունին այդ աշտարակի մասին:

Մի թափառական գնչուհի Սուլթան Մահմէդին զուշակում է, թէ նրա աղջիկը Մեհար-Շեհիրին մեռնելու է օձի խայթումից: Սուլթանն իր զաւակի կեանքն ապահովելու համար չինել է տալիս Ղրգ-Գիւլէսին Բոսֆորի մէջ եւ այնտեղ է բնակեցնում նրան ապահով, որ ոչ մի սողուն չի կարող անցնել կղզի:

© National Library of Armenia

Մեհար-Շեհիրի գեղեցկութեան համբաւը հասնում է պարսկաց շահի որդուն, որը առանց տեսնելու սիրահարւում է նրա վրայ: Իբրեւ իր սիրոյ ցոյց մի օր նա գեղեցկուն ուղարկում է մի փունջ: Ճակատագրի կամքով ծաղիկների մէջ սպրդած է լինում մի թունաւոր օձ, որ խայթում է Մեհար-Շեհիրին: Գալիս է շահի որդին եւ, թոյնը ծծելով գեղեցկուհու վէրքից, փրկում է նրա կեանքը: Երախտագէտ սուլթանը շահզադէի անձնուիրութիւնը վարձատրում է, ամուսնացնելով նրան իր աղջկայ հետ*):

Կարծում եմ վատ նիւթ չէ ժողովրդի ստեղծագործութիւններից այնքան օգտուող բանաստեղծների համար:

* *
*

Իմ պիեսներից մէկի ներկայացման հետեւեալ օրը Սքիւթարում հրաւիրուած էի այցելելու Հայ կարմիր Խաչի տեղական ապաստանարանը: Այնտեղ երկրորդ անգամ տեսայ Գոլսուհու մայրական խնամքը թշուառների համար: Ընդարձակ եւ լուսաւոր սենեակների իտէալական մաքրութիւն, առատ սնունդ, փոքրերի համար դպրոց եւ ամէն ինչ, որ կարող է ամոքել թշուառութիւնը:

Սենեակներից մէկում որբերը ճաշի համար բանջարեղէն էին մաքրում: Կառավարչուհին ականջիս չչնկաց.

— Ուշադրութիւն դարձրէք այն կողմ, ուր պիտի երթամ:

Եւ մօտեցաւ մի խումբ դերահաս աղջիկների՝ ինչ որ պատուիրելու պատրուակով: Նրանք կանգնած էին պատի տակ քով քովի, պատժի ենթարկուած աշակերտուհիների դիրքում: Բոլորը նիհար էին, բոլորի վաղաժամ թառամած հողագոյն դէմքերի վրայ երեւում էր յուսահատութեան եւ ամօթի կնիքը: Ամէն մէկի ուսերի վրայ կար մի շալ: Նկատեցի, որ իրաքանչիւրն աշխատում է նրա ծայրերով թաքցնել իր որովայնը: Մէկը երեսը դարձրեց պատին եւ հեկեկաց:

Գղձուած կոյսեր էին: Նոր էին բերուել Անատոլիայի խորքերից — Հայ Դժոխքի կենտրոնից...

*
* *

Կատի-Քէօյը կամ, ինչպէս Գոլսահայերն են գրում, Գատի-Գիւղը, նախկին Քաղկեդոնն է: Հիմնուած լինելով Բիւզանդիոնից տասն եւ եօթ տարի առաջ, նա ունի պատմական անցեալ, որի բեկորները հազիւ հազ նշմարւում են այս ու այն տեղ: Այժմ Կատի-Քէօյը չունի առանձին արժէք, բացի իր նորաձեւ տներից եւ համեմատաբար կանոնաւոր փողոցներից:

Գեղեցկութեան տեսակէտից Կ. Գոլսի շրջակայքում առաջին տեղը պատկանում է Գրինկիպոյի՝ որ Իշխանաց ինը կղզիների մայրն է: Նա ամենամեծն է, ամենաբարձրը եւ ամենից չքեղն իր փարթամ վիլլաներով, պարտէզներով եւ բարձունքներից երեւացող աքանչելի տեսարաններով դէպի ծովն ու ցամաքը:

Այդ կղզու վրայ են վայելել իրանց զրօսանքի եւ անկման ժամերը միջին դարերի Բիւզանդական իշխանները: Այժմ նրանց փոխարինում են ռուս պաշտօնեաները, ժեներալներն ու սպաները, որոնք իրանց հետ բերել են ցարական շրջանի ամբողջ «քաղաքակրթութիւնը»

Դիտելով այդ նախկին հզօրների կենցաղը պանդխտութեան մէջ, ապշում էի ռուսի անհոգութեան վրայ: Կարծես, իրանց հայրենիքի թշուառ եւ անօթի վիճակը ոչ մի վիշտ չէր պատճառում նրանց: Կանայք կարճ խուզած մազերով եւ տղամարդու գլխարկներով ամբողջ օրը ձի կամ էշ հեծած, բարձրաձայն քրքջալով, արշաւում էին այս ու այն կողմ: Տղամարդիկ իրանց վերջին գոհարեղէնը հերոսական ժեստով չպրտում էին շամպայնի շիշերով ծանրաբեռնուած սեղանների վրայ: Որպէս թէ ուզում էին իրանց «ազգային վիշտը» եւ հայրենիքի կարօտը խեղդել ոգելից ըմպելիքների մէջ: Եւ դեռ իրանց հայրենիքը չփրկած երազում էին այն օրը, երբ պիտի տիրեն Կ. Գոլիսը: Միեւնոյն ժամանակ չէին թաքցնում իրանց արիւնակցական սէրը դէպի Թիւրքը ու ամէն

*) Այս աւանդութիւնն ինձ պատմեց մէկն իմ ուղեկիցներից: Յետոյ ես ստուգեցի եւ նոյնը գտայ Գ. Գրիգոր Զիլինգարեանի «Ուղեւորութիւն ի Կոստանդնուպոլիս» հետաքրքրական գրքոյկի եւ Սերվատիի "Voyage en Orient" ուղեցոյցի մէջ: Շիրվ.

ինչ, որ Թիւրքական է եւ ատելութիւնը դէպի իրանց կրօնակից յոյները: Ա՛յսքան մեծ է ատավիզմի ուժը:

Եղայ ե՛ւ մի քանի ուրիշ կղզիներում, բայց նրանք ինձ վրայ պակաս տպաւորութիւն գործեցին: Գրինկիպօն մի գեղեցկուհի մայր է, որի զաւակներից ոչ մէկը չունի նրա գեղեցկութիւնը:

Իմ թափառումների ժամանակ ես աշխատում էի ծովի վրայ լինել իրիկնադէմին, երբ արեգակը հրաժեշտ է տալիս ծովին ու ցամաքին: Ով մի անգամ օրուայ այդ պահին տեսել է Կ. Պօլիսը ծովի վրայից, չի կարող երբեք մոռանալ տեսարանը:

Կ. Պօլսի գլխաւոր հմայքը նրա մզկիթներն են եւ նրա աժուռ մինարէթները: Թիւրքն ամէն բանից զրկել է երկիրը եւ ոչինչ չի խնայել երկնքի համար նոյնիսկ վերջին կաթիլը խղճի եւ բանականութեան: Համեմատեցէք Կ. Պօլսի մզկիթները տների հետ եւ դուք կ'ապշիք այն տարբերութեան վրայ, որ կայ Աստծու տան եւ մարդու կացարանի միջեւ:

Մզկիթը Թիւրք հանճարի ստեղծագործութիւնն է: Մի հատիկ պարզեւը գեղեցիկին, որով նա կարող է պարծենալ: Ժամանակը մարդկութեան մտքից կը ջնջէ բոլորը, ինչ որ արել է Օսմանցին իր հինգ դարուայ պատմութեան ընթացքում, կը մնայ երկու բան՝ Ոճիրը եւ Մզկիթը. վերջինն որպէս նախատինք անկաշառ Աստծուն, որ Թոյլ է տուել իրան այդպէս կաշառուելու:

Մի անգամ Հալբի կղզուց վերադառնում էի մենակ: Դարձեալ իրիկնադէմ էր: Շոգենաւի ծայրում կանգնած սքանչանում էի տեսարաններով: Գուցէ այդ քսաներորդ անգամն էր: Այնտեղ, երկնակամարի վրայ նկարուել էր Կ. Պօլիսն այնպէս, որ, կարծես, անջատուել է երկրից: Արեգակի ոսկեղէն շողերի մէջ լողում էին անթիւ գմբէթներն ու մինարէները, սոսիներն ու նոճիները: Տեղ տեղ լուսամուտները փայլփլում էին արեւի չափ զօրաւոր լոյսով: Դէպի աջ Այեա Սոֆիան իր արքայական գմբէթով ու ոսկեզօծ մահիկով, դէպի ձախ՝ Մեհմեդ-Ջեմին եւ Ենի-Ջեմին, որոնք ձգտում էին հասնել իրանց Թագուհու բարձրութեանը, որպէս խանդոտ իշխանուհիներ, ու չէին կարողանում:

Ահա սրածայր մինարէների վրայ երեւացին մուէզինների մթին սիլուէտները, մրջիւնների մեծութեամբ: Հեռու են. նրանց ձայները չեմ լսում, բայց երեւակայութիւնս արձագանգ է տալիս նրանց: Ահա գեղեցիկ է այդ բարձրութիւնից Աստծուն փառաբանելը ե՛ւ զօրաւոր, ե՛ւ ազդու: Ինչո՞ւ քրիստոնեաները չունին այդ սքանչելի սովորութիւնը: Ահա Թոփ-Գափու Սերայը կամաց կամաց խորասուզւում է խաւարի մէջ, բայց ես տեսնում եմ նրա մարմարեայ պատերը, սադափի դռները, մեղկութեան ոսկեթել օթոցները եւ ոճիրների մթին խորշերը՝ դարձեալ երեւակայութեամբ:

Արեգակը թաղուեց անհունութեան ովկիանոսի մէջ եւ իր թագուտից մոգական վրձինով փոխեց երկնքի տեսքը: Նոր գոյներ, նոր երանգներ, ցիրուցան ամպերի նոր ձեւեր այս անգամ տարբեր ֆոնի վրայ: Ո՞ր հանճարը կարող է այդ բոլորը փոխադրել կտաւի վրայ: Նա դեռ չի ծնուել:

Ես կատարեալ անուրջի մէջ էի, ոչինչ չէի տեսնում չուրջս եւ ոչինչ լսում... Եւ ով գիտէ, ո՞րքան ժամանակ պիտի մնայի այդ վիճակում, եթէ յանկարծ մի ձեռք չբռնէր թեւս եւ մի ձայն չարտասանէր ականջիս.

— Գիւզէ՞լ, հէ, գիւզէ՞լ:

Ես սթափուեցի: Քովս կանգնած էր մի ծերունի Թիւրք համակրելի դէմքով եւ ալեխառն մօրուսով:

— Գիւզէ՞լ Սթամպուլ,— կրկնեց նա, ձեռը տարածելով դէպի քաղաք:

Հասկացայ միտքը: Մարդն ուզում էր օտարականից լսել գովասանք իր ծննդավայրին:

— Զօք գիւզէլ, չօք գիւզէլ,— կրկնեցի ես անկեղծ ոգեւորութեամբ:

Ծերունու թառամած աչքերը փայլեցին ներքին հաճոյքից:

Այդ պահին ես այնքան յափշտակուած էի, որ եթէ ամօթի կեղծ զգացումը չզսպէր ինձ, պատրաստ էի գրկել ծերունուն եւ ասել.

— Բարի մարդ, ե՛կ մոռանանք մեր կրօնները, ե՛կ իրարու չուտենք, ապրինք եղբայրաբար եւ սիրով: Տեսնո՞ւմ ես՝ ինչ սիրուն է բնութիւնը: Ահա նա է քո եւ իմ կրօնը:

Այս զգացումը գեղեցիկի ներշնչումն էր: Աւա՜ղ, նա նոյն վայրկեանին թունաւորուեց, երբ հայեացքս ընկաւ Իլդիզ-Քիոսկի վրայ...

© National Library of Armenia

VII

ANDREA DORIA

Դաշնակիցները Կ. Պոլիսը լեցնելով ցամաքի զորքերով, աւելորդ չէին համարում նրա դէմ կանգնեցնել մի տոմնակ ծովային հրէշներ, որոնց կարող էին մի հարուածով հիմնովին տալ նոր Բիւզանդիոնը:

Մեծ դժուարութեամբ է թոյլ տրուում օտարներին այդ գրահաւորների վրայ ոտք դնելու: Սակայն չկան դռներ, որ չունենան բանալի: Իտալական ինժենիր Մկրտիչ Բասմաճեանը, մի վերին ատիճանի կիրթ ու սիրալիր երիտասարդ, կարողացել էր Andrea Doria զրահնաւի հրամանատարին համոզել, որ Իտալիայի ծովային հրամանատարութիւնը ոչ մի վտանգ չի սպառնում մի հոյ գրոյի եւ նրա դատի կողմից: Եւ ահա մի օր Բոսֆորի ափի մօտ մեզ տրուում էր մեր կոկիկ չորս մարդոց հանդուցեալ նաւապետով: Մենք երանք նրա վրայ եւ ուստ բոլոր չանցած արդէն տիտանի վրայ էինք:

— Դուք այստեղ կը տեսնէք զիտութեան վերջին խօսքը,— ասաց նաւապետի երիտասարդ օգնականը իր պաշտօնակիցների խմբով դիմաւորելով մեզ պողպատեայ տախտակամածի վրայ:

Եւ դեկցիկ է Անդրէա-Դորիան եւ զարհուրելի՝ իր անունով եւ արտաքին տեսքով, զարհուրելի՝ իր դժոխային ուժով եւ իր նշանակութեամբ:

Հեռուից Անդրէա-Դորիա-ն նմանւում է մի նոգելի կարապի, որ թեւերը ծալած հանգչում է ջրի երեսին անշարժ: Նրա պողպատեայ կըռատոյը ցցուած է վեր հպարտ: Նրա արծաթափայլ կողերի ու կրծքի վրայ ջրի վէտ վէտ շողերը բեկբեկւում են բիւրաւոր ադամանդների պէս:

Իր վեհութեան մէջ Անդրէա-Դորիա-ն անդորր է, ինչպէս ինքնավստահ թագուհի դահի վրայ: Իր ուժի գիտակցութեամբ նա արհամարհում է ամէն ինչ, որ իր շուրջն է: Եւ ամէն ինչ փոքր ու տգեղ է երեւում նրա քով:

Ասում են Անդրէա-Դորիա-ն երկիւղ չունէ ծովերից ու ովկիանոսներից: Մրրիկներն ու փոթորիկները նրա համար զբօսանք են:

Այժմ նա անշարժ է: Մարմարայի կատաղի ալիքներն են խաղում նրա հետ: Ուժգին կերպով աբչաւելով նրա վրայ, յետ են մղւում ջարդ ու փշուր եղած: Եւ զայրանում են, որ չեն կարող մագս չափ երերել այդ տարօրինակ կենդանուն:

Մէկն Անդրէա-Դորիայի հսկայ ծխնելոյզներից դիւրեր ցերեկ ծուխ ու բոց է ժայթքում, ինչպէս Վէզուվիի հրաբուղխը: Բոցի կայծերը չթանում են օդի մէջ, իսկ ծուխն երկնակամարի վրայ ձգում է մի ապեղնաձեւ ժապաւէն:

*

* *

Մի ամբողջ քաղաք է Անդրէա-Դորիայի որովայնը: Այնտեղ հազար ու վեց հարիւր մարդ է բնակւում՝ պատրաստ ամէն վայրկեան ծառայելու մահու առաջուն: Ոչ մի կին, ոչ մի երեխայ, ոչ մի ծերունի: Թոյլերն այնտեղ զորձ չունին:

Ամէն ինչ նախատեսնուած է այդ ահագին բաղմութեան համար: Այնտեղ կան ամէն տեսակի արհեստանոցներ: Այնտեղ չկայ միայն դպրոցի զորձարան, վասն զի ծովագնացները, միայն մի գրագրոն ունին ու մի դերեզման — Ծովը: Բայց այնտեղ կան հիւանդանոց, դեղատուն, զրաղարան, տպարան, թատերական բեմ, սալոններ, դաշնամուր, եւն. եւն.:

Այս բոլորը ջրի տակ է, Անդրէա-Դորիան միայն կրծքից վեր է ջրի երեսին: Նրա ահռելի մեծութիւնը աչքով չափելու համար պէտք է ներս մտնել: Պէտք է անցնել անթիւ անցքեր, որ այդ ծովային քաղաքի փողոցներն են: Դա մի ամբողջ ճամբորդութիւն է լաբերինթոսի մէջ: Մի ճամբորդութիւն, որ առանց ուղեցոյցի անհնարին է կատարել:

Ջրից վեր միայն այն մասերն են, որոնց պաշտօնն է մահ սփռել չորս կողմ: Վարը՝ կեանքը, վերը՝ մահ: Տեսնո՞ւմ էք հեռուից այն կլոր ծակերը, որ զարդարում են տիտանի կողերը: Նրանց մէջ են տեղաւորուած մահուան զորձիքները: Իւրաքանչիւր ծակից նայում է մի մի հրէշի կոկորդը նաւթահոտի լայնութեամբ: Խոշորագոյն թնդանօթները տեղաւորուած են տախտակամածի վրայ, իրանց զրահների մէջ: Պողպատեայ աշտարակներ են շինուած յատկապէս նրանց տոկալի բերան-

© National Library of Armenia

նեն այս կամ այն կողմ դարձնելու համար: Նոկայն մի մանուկ կարող է պատեցնել այդ աշտարակները, այնքան հարատարաուեսար դիրացրել է նրանց պատյար:

Մեծ թնդանոթների ռումբերն ունին 10-12 արիկան մանուկների բարձրութիւն: Ասելի բան բաստատն քիրմեսար են թաչում նրանք: Եւ մասնմասիկական հշգութեամբ ընկնում ու պայթում այնտեղ, ուր յրել է նրանց՝ մարդու կամքը:

Մի դեհեն է Անդրկա-Դօրիայի մեքենանների բաժինը, սակայն ոչ խաւար եւ ոչ խեղդուկ: Ելեքտրականութիւնը նրան մատակարարում է եւ լոյս եւ ոգ: Մաքրութիւնն իսկական է. պղինձն ու պողպատը փայլում են ոսկու ու արծաթի փայլով:

— Մենք ենք նաի սիրաը,— ասաց մեքենապետը համեստ ժպիտով,— եթէ մենք պայթենք, նա կործանուած է:

Այո՛, մեքենան նաի սիրտն է, իսկ նրա գլուխը հրամանատարն է: Եւ այդ գլուխն է միայն, որ գործում է կռուի ժամանակ: Նա է մտածում ամենքի փոխարէն եւ նա է կարգադրում պողպատեայ կամքի այն բարձունքից, ուր տեղաւորուած է նրա խցիկը:

Մարդիկ լուռ են ինչպէս ուրուականներ, երբ սկսւում է ոմբակոծութիւնը, լոյսերն են խօսում ու բանակցում: Իւրաքանչիւր լոյս իր գոյնն ունի եւ իւրաքանչիւր գոյն՝ իր լեզուն ու իր իմաստը:

*
* *

Այո, զարհուրելի է Անդրկա-Դօրիա-ն, սակայն անյաղթելի չէ: «Սարսափ» անունը կրելով, նա ինքն էլ ունի իր սարսափը: Ահա այն փոքրիկ առարկայից, որի նմանն ունի իր որովայնի մէջ հարիւրաւոր:

«Ական» է այդ առարկայի անունը: Նա նոյնպէս պողպատեայ է եւ ունի ոչ պակաս բարդ կազմուածք, քան ինքը Անդրկա-Դօրիան: Դժուար է, գրեթէ անհնարին է նրա հետ պայքարելը: Բոլոր միջոցները, որ մինչեւ այժմ հնարել է գիտութիւնը, անզօր են այդ փոքրիկ ձկնանման սատանայի դէմ:

Նա միշտ ջրի տակ է, միշտ աննկատելի: Ոչ ոք չգիտէ, թէ ո՞րտեղ է նա եւ ո՞րտեղից պէտք է յարձակուի: Նա մի կոյր ոգ է, որ միայն նրան է խաղիում, որ դիպչում է իրան:

Սոսկալի է նրա հարուածը եւ անխուսափելիորէն մահաբեր: Նա ինքը կործանելով, կործանում է իր թշնամուն: Թող լինի այդ թշնամին ռմբկիանոսների ռազմանաւը: Քանզի նա ատելիի պատիւնամբ կլցում է իր գոյին մէջից, ինչպէս կրակ: Այդ դէպքում մի բանի վայրկեանում ծովի յատակ են գնում հազարաւոր մարդիկ եւ սատանակ մեքենների հարստութիւն:

*
* *

Ես դուրս եկայ տարտարոսից, անգրագրած ու ընկճուած, այնքան ազդել էր ինձ վրայ այդ գժոխային ծնունդը մարդկային ուղեղի: Ահա, ուրեմն, դիտութեան վերջին խօսքը: Եւ ո՞ւմ համար է արտասանուած այդ խօսքը... Այն չար Աստծու, որ սատանը դիտութեան ոգեութեան էլ ամենազօրն է բոլոր աստուածների մէջ:

Սալոնների մէկում մենք հիւրասիրուեցինք շամպայնով եւ անուշեղէնով:

Բաամաձեանն իտալերէն թարգմանեց իմ խօսքը, որ արտայայտում էր իմ շնորհակալութիւնները սիրալիր հիւրընկալներին եւ իմ հիացումը Իտալիոյ հանճարին...

VIII

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐ Կ. ՊՕԼՍՈՒՄ

Մի քանի օր եւս եւ պէտք է հեռանալ Կ. Պոլսից: Առջեւս կայ ահագին ճամբորդութիւն. Աստուած գիտէ՝ ո՞րքան պիտի տեւէ նա:

Խոստումներ ունիմ, որ պարտաւոր եմ կատարել: Նախ մի քանի փոխ այցելութիւններ, ապա.. Ոչ, այս մէկն ինձ դիւր չի գալիս — ատենախօսութիւն: Ահ, եթէ Հայ Կանանց Լիգայի Վարչութիւնը բարի լինէր վերադարձրնելու ինձ իմ անզգոյշ խոստումը:

Բայց նա յամառում է:

— Զրլլար, պիտի բանախօսէք, մենք ար-

© National Library of Armenia

դէն ծանուցեր ենք օրաթերթերի մէջ,— կրկնում է եռանդուն նախագահուհին իր սեռին յատուկ կամակորութեամբ:

— Բայց, տիկին, ես բանախօս չեմ, իմ պերճախօսութիւնը կազում է: Վերջապէս, գրողի լեզուն գրիչն է:

— Աղէկ, այն ատեն կարդացէք ձեր գործերէն մէկը:

— Լաւ: Ես կը կարդամ իմ «Արմենուհի» պիեսը: Կը լսէ՞ք:

— Ուրախութեամբ:

Ցեմ թաղցնել, ընտրութիւնս նենգամիտ էր: Ես ուզեցի փորձել, ինչպէս պիտի վերաբերուի Պօլսուհին իմ խեղճ հերոսուհուն, որ այնպէս քարկոծուեց մի քանի լրագրական խմբագրակներ եւ մի խումբ փարիսեցիների կողմից:

Կարդացի «Արմենուհին» մի ընդարձակ հասարակական դահլիճում, որի անունը մոռացել եմ:

Խոստովանում եմ, եթէ այդ օրը դէթ մի հատիկ պարապ աթոռ նկատէի, պիտի վիրաւորուէի: Ոչ իմ ինքնասիրութեան համար, քաւ լիցի, այլ Արմենուհու համար: Պէտք էր վշտանայի նոյնպէս, եթէ հերոսուհուս հոգեկան տառապանքներն այնպէս չյուզէին իր ունկնդիրներին եւ նրա բուռն բողոքները հայ կնոջ ընտանեկան կիսաստրուկ վիճակի դէմ չարժանանային նրանց յուզմանն ու ծափերին:

Այդ օրն ինձ համար եղաւ մի նոր ապացոյց, որ հայ կինը, ուր եւս լինի, Թիֆլիսում թէ Կ. Պօլսում, բարոյապէս շատ ու շատ բարձր է հայ տղամարդից:

*
* *

Գնալը Կղզում ունեցայ մի թեթեւ անախորժութիւն:

Մի երեկոյ այնտեղ դերասանական խումբը ներկայացնում էր «Աւերակների Վրայ» պիեսը: Առաջին թէ երկրորդ միշնարարին եկաւ Թիւրք ոստիկանութիւնը եւ խաղն արգիլեց: Պատճա՞ռը: Իբր թէ պիեսը դրաքնիչից թոյլտուութիւն չունի:

Խումբը բողոքեց, հասարակութիւնը նոյնպէս: Ոչինչ չօգնեց, նոյնիսկ չնորհալի դերասան Նշանեանի ահեղ ձայնի որոտները: Խեղճ Քէչիչեան. անգլիական զինուորականի մըտրակը այնպէս էր շաչում նրա ձեռքում, որ գուցէ իմնէր թաղական ոստիկանապետի գլխուն, եթէ ես չզսպէի նրան:

Հասարակութիւնը լուռ ցրուեց, թողնելով տոմսակների վճարը մի ուրիշ ներկայացման համար:

Ցետոյ մի քանի անձինք Թիւրք ոստիկանութեան վարմունքն ինձ բացատրեցին այսպէս: Որպէս թէ մի երկու տարի հայեր նրա ականջին չչնչացած են լինում, թէ պիեսի բովանդակութիւնը հակաթրքական է, թէ «Աւերակների Վրայ» վերնագիրը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ Հայաստանի աւերակներ եւն.: Ոստիկանութիւնը հաւատում է տարի հայերին: Որքան ճիշդ է այս — չգիտեմ: Գրում եմ այն, ինչ որ ինձ ասացին:

Մի ուրիշ դէպք աւելի վաղ պատահել էր Սքիւթարում: Ես հրաւիրուած էի այդտեղ բանախօսելու Հայաստանի Հանրապետութեան մասին: Լրագիրներից արդէն յայտնի էր, որ իմ վերաբերմունքը դէպի Պ. Ալեքսանդր Խատիսեանի կառավարութիւնը թշնամական չէ, ուրեմն եթէ չդովեմ էլ, չպիտի պարսաւեմ նրան: Այս բանը դիւր չէր եկել չգիտեմ ինչ որ «կուսակցականների»: Եւ ահա տարօրինակ երեւոյթ. դուրս եմ գալիս բեմ եւ դահլիճը տեսնում եմ կիսից աւելի դատարկ: Ցայտնը-ւում է, որ դարձեալ մի քանի հայեր մինչեւ իմ գալը կանգնում են դռների քով եւ եկողներին ասում, թէ ես յանկարծակի հիւանդացել եմ եւ չպիտի բանախօսեմ: Հարկաւ, հասարակութեան մեծ մասը հաւատում է սուտ լուրին ու ցրւում:

Ծիծաղելի եւ բնորոշ:

Բայց բաւական է, ժամանակ է հեռանալ Կ. Պօլսից:

Հոկտեմբերի 29-ին իտալական լաւագոյն շոգենաւերից մէկն Իզմիր է ուղեւորւում:

© National Library of Armenia

ՍԱԱԴԻԻ ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆԸ

Գրեց՝ Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՍԱԱԴԻՆ*) երեսուն տարի իմաստութիւն ուսանեց մեծ գիտունների մօտ, երեսուն տարի թափառեց Հնդու աշխարհից մինչեւ Բիւզանդիօն, Թուրանից մինչեւ Հէջազ, եւ հոգին ծանրաբեռն ապրումների եւ յուշերի թանկագին գանձերով ծեր հասակում վերադարձաւ հայրենի Շիրազը:

Ոռքնաբաղ գետի ափին, որ բիւրեղի պէս փայլում է ու երգում, շինեց իր տնակը, եւ մենութեան ու անդորրի մէջ հեռաւոր, հէքեաթագեղ աշխարհներից քաղած անուշ վարդերն ու պտուղները ամփոփեց՝ ածու-ածու քանդակելով իր ոսկի Գիւլիստանի եւ Բոստանի մէջ, որոնք ժամանակից ու միջոցից դուրս ծաղկում են ու բուրում յաւերժապէս:

Գարուն էր. մէկը այն անհամար գարուններից, որ ծաղկել են երկրի վրայ. որոնցից հարիւր եւ եօթը հատ ապրեց ու տեսաւ երջանկութեան ու տխրութեան բանաստեղծը Սաադին:

Առաւօտ չա՞տ վաղ վերկացաւ Սաադին, իջաւ պարտէզ լսելու համար բլբուլների երգը եւ նորից տեսնելու գարնան հրաշքը:

Նայեց Շիրազի դաշտին, որ մանկութեան շնորհով ու պերճանքով ծաւալուած նորափթիթ վարդերի վրայ՝ առտուան նիրհն էր առնում՝ պարուրուած բուրալից ճերմակ շղարշներով:

Նստեց ծաղկած յասմիկենու տակ, վարդի թփերին մօտիկ, Սպահանի գորգի վրայ եւ բռնեց դողդոջ ձեռներով վարդենու նոր բացուած կարմիր-կանաչ կոկոնը, եւ մրմնջաց իւրովի.— «Ինչպէս մատաղ աղջիկը ժպտում է գգուող սիրականին, այնպէս էլ վարդը իր շրթներն է բանում առաւօտեան հովիկին»:

Թէեւ չա՞տ էր ծերացել Սաադին, սակայն նրա հոգին երազի աչքերով ու ականջով տեսնում էր ու լսում աշխարհի չքնաղ իրերն ու ձեւերը, երգերն ու լռութիւնը անյայտ ոլորտների, որովհետեւ տակաւին զրոյց էր անում նրա հետ բանաստեղծութեան կախարդ ոգին, Զմրուխտ-թռչունը, որ իր յաւերժական բոյնն է կերտել Կաֆ լեռան գագաթին, աստղերի մէջ...

Երգում էին բլբուլները գորշ զգեստ հագած ու լուսեղէն աչուկներով. երգում էին իրենց դիւթական ռուբայեաթները սիրոյ կրակով կբռակուած,— ու երգում էին Սաադիի սրտի մէջ:

Ինքուշ հովը վարդերի ականջներին կուսական շնչով բարեւագրեր էր չշնչում, որ բերել էր հեռաւոր սիրահար վարդերից.— եւ կարդում էր Սաադիի հոգին սիրոյ բարեւագրերը...

— Սիրող սիրտը լսում է միշտ այն բոլոր խօսքերը, որ մրմնջում են իրերը. աշխարհը լի է հնչուն դաշնակութիւններով. աշխարհը թրթռում է անվախճան եւ սիրավառ արբեցումով,— յիշեց Սաադին իր հին խօսքերը:

Ականջը բլբուլների երգերին եւ սպիտակ գլուխը կարմրափթիթ վարդերի մէջ սուզած՝ ծծեց Սաադին հեշտութեան բոյրերը, ծծեց անյագ, եւ գինով՝ աչքերը գոցեց, եւ տեսաւ աշխարհը իր հոգու մէջ, ինչպէս երազի մէջ մի երազի:

Տեսաւ Հնդու խաղաղութեան գետերը սբբազան լոտոսներով օծուն. տեսաւ իմաստուն փղերը, որ խորհում են մթին ջանգելների մէջ, եւ Դեհլիի ոսկեդիպակ ապարանքների մէջ սիգաճեմ աղջիկներին՝ գիշերագեղ մազերի մէջ կարմիր նունուֆարներով:

Տեսաւ Թուրանի մրրկաչունչ տափաստանները եւ մրրիկների մէջ խոյացող ամէհի յելուզակները կայծակէ թրերով. եւ տեսիլն

---

*) Մուշէրրիֆ-էդ-Դին Սաա'դի ծնուել է Շիրազում 1184 թուին եւ մեռել է 1292 թուին, 107 տարեկան հասակում, պահելով իր գիտակցութիւնն անվթար, նոյնիսկ կենսունակութիւնն ու առողջութիւնը:

Նա երեսուն տարի ուսանել է զանազան վարպետների մօտ, սովորել է լեզուներ, նոյնիսկ լատիներէն. թափառել է ամբողջ երեսուն տարի Հնդկաստանից սկսած մինչեւ Կ. Պոլիս, Եգիպտոս եւ Արաբիա. եւ 1257 թուին, ուրեմն 73 տարեկան ժամանակ վերադարձել է հայրենիք եւ սկսել է գրել ու դասաւորել իր «Գիւլիստան ու Բոստան» գրքերը:

Ա. Ի.

© National Library of Armenia

ունեցաւ արքայական Իրանի աստուածախօս բանաստեղծներով եւ եղնիկի նման նազելի աղջիկներով, որոնց դեղեցկութեան խայթը դեռ ցցուած էր իր սրտի մէջ:

Տեսաւ Կուէի-Նուէ (լեռան*) երկնամուխ գագաթը, եւ նրա ոտների ներքոյ դինու բուրալից հնձանները եւ ոչխարների բարի հօտերը ալբիւրների շուրջ մակաղած:

Տեսաւ նոյնպէս անապատը բոցակէզ. Բեդուինների սրաբաւ նժոյգների վազքը ամիւսների լեռներից, արծուի թեւերի տակ, եւ երկիրգած ուխտաւորների անծայր քարաւանները երգով ու ազօթքով Մեքքայի դարպասների առջեւ ծնկի դալը:

Ապա տեսաւ Մարայ աշխարհի հնագեղ հրաշքները եւ կապոյտ ծովերի ծփուն բիւրեղը. Թամուսկոսի թաւիշ աղջիկները լուսնակայ մարմնով, որոնց երկար ու քնքուշ ձեռները մանեակի պէս փաթաթուել էին երիտասարդ Սաա'դիի պարանոցով...

Եւ տեսաւ նորից վարդեր ու մարգարտաշուք շատրուաններ, սիրամարդներ եւ բլբուլներ, նորից միա՛յն վարդեր ու աղջիկներ... եւ խմեց, ծծեց տեսիլի մէջ բոյրերն ու համբորները վարդերի եւ աղջիկների...

Սաա'դին հառաչեց աչքերը բանալով.

— Աւա՜ղ, անցաւ հարիւր տարիս մի գիշերուայ երազի պէս, թռաւ թեթեւ մի վայրկեանի պէս, որովհետեւ դուք միշտ ուղեկցում էիք ինձ, ո՛վ հէքիաթ, ո՛վ բլբուլներ ու վարդեր, եւ դուք վարդերի քոյր չնորհազեղ աղջիկներ...

Եւ ի՞նչ գեղեցիկ էր աշխարհը,— հրաշք ու հէքիաթ, գեղեցիկ եւ միա՛յն գեղեցիկ:

Երկնքի վարդէ պարտիզների միջից դուրս ըղխեց վարդագոյն արեգակը եւ հուրհրացին ամէն թերթ ու փերթ, ամէն քար ու դուզձ, որովհետեւ գիշերը ադամանդի փոշի էր շաղ տուել բոլոր նրանց վրայ:

Սաա'դին նայեց շուրջը, խորունկ եւ հեռաքրքիր հայեացքով նայեց երկնքի կապոյտ վրանին՝ արշալոյսի մէջ թաթախուն արեւով, ոսկու մէջ ճախրող թռչուններով եւ ծպիկներով հագարարոյր: Նայեց այնպէ՛ս զարմացած ու սքանչացած:

— Այս. հրաշք է աշխարհը, հէքիաթ է, գեղեցիկ եւ անհուն զարմանալի:

Եւ ամէն օր նայում եմ աշխարհին, եւ ամէն օր զարմացած, կարծես, առաջին անգամն եմ տեսնում աշխարհը,— աշխարհը առօրեայ եւ միշտ հիասքանչ, աշխարհը հնօրեայ եւ միշտ նորաստեղծ, յաւիտենական մի անծանօթ հրապոյրով առինքնող:

Այս չքնաղ թռչունները, որ ճախրող երգեր են միայն, ա՛յս պայծառ ալբիւրները, որ բղխում են մայրերի հոգուց, ա՛յս աստեղնագոծ ծպիկները, որ խօսում են բոյրերի լեզուով — սքանչելիք են անհասկանալի, զարմանալիք են անբնական, զարմանալիք են բոլոր իրերը, բոլոր-բիւրաւոր, իրենց գոյների եւ ձեւերի բանաստեղծութեամբ եւ իմաստութեամբ: Եւ ո՞վ կարողացաւ հասկանալ, ո՞վ կարողացաւ իմանալ խորհուրդը հունտի եւ իմաստը մեր մտածման ու տենչանքի:

Եղայ դիտունների մօտ, կարդացի իմաստութեան գրքերը, շրջեցի երկրէ երկիր ըմբռնելու համար տիեզերքի անյայտն ու անծանօթը, նպատակն ու գաղտնիքը,— եւ ո՛րքան խորհեցի ու խորացայ, ա՛յնքան աւելի մեծ հրաշք տեսայ, միայն անհուն հրաշք՝ բոլոր, բոլոր իրերի մէջ, թէ՛ մեծի եւ թէ՛ փոքրի, թէ՛ հեռաւոր հսկայ աստղի թէ՛ մարդկային սրտի մէջ, թէ՛ ծովը յուզող կէտ-ձուկի եւ թէ՛ հողը պատուող վախկոտ ծիլի մէջ:

Հրաշք է տիեզերքը՝ գերաքանչ եւ խորախորհուրդ առեղծուած... եւ տեսայ որ մարդը բնաւ աւելի իմաստուն չէ մեղր չինող փոքրիկ ճանճից, եւ միայն մի օր արեւը ճաշակող թիթեռնիկից...

Եւ մանաւանդ ո՞րքան անմիտ չափով յանդուգն եղայ իմ շնչին հէքեաթների մէջ թոթովելու տիեզերքի մեծ առեղծուած-հէքեաթը»...

Սաադին նայեց աշխարհին, տարերքի այս բազմազան ու հրաշազան խաղին, եւ նայում էր անյագ ու զարմացած, երբ աչքին ընկաւ երկու տատրակ, որ կարմիր տոտիկներով շրջում էին կանանչ մարդերի վրայ անուշ-անուշ գլուգլուալով, եւ նորից խօսեց ինքն իրեն.

— Կախարդուած է աշխարհը եւ բոլոր ի-

---

*) Արաբատեան Մասիսը, այսինքն՝ Նոյի-լեռն, պարսկերէն:

բերը հմայուած են մի անտեսանելի վհուկի դիւթական զաւազանով եւ հէքիաթացած է ամէն բան։

Եւ սէր է այս հրաշագործ վհուկի անունը, որ բոյր ու գոյն է տալիս, ձեւ ու շունչ այն ամէն ինչին, որ հպում է իր կենսատու շունչը։

Բոլոր իրերը գլխիվայր հոսում են, քայքայում ու ձեւալուծւում, եւ ի՞նչն է, որ նորից կերտում է ու կաղապարում այս հոյակապ աշխարհը, եւ մեր հոգու շուրջը փռում այս հրաշքն ու հէքեաթը։

Ո՞վ ստիպեց եղնիկին, որ պապակ սրտով մաղլցի սեպ ժայռերը՝ եղջիւրները քարերին փշրելով ու տարփալից մռունչով թաւուտները թինդ հանէ։

Ո՞վ ստիպեց վարդը, որ ճեղքէ իր զմբուխտեայ զրահը եւ բուրէ հեշտանքով։

Եւ վերջապէս ո՞վ ստիպեց մարդուն, որ անյայտից բղխէ ձեւ ու հոգի առած՝ մտածելու եւ տառապելու համար, ղղալու հուրը մեզ այրող ըղձանքի եւ շիփաքի երբեք մեռնելու։

Ո՛վ սէր, դու անպարտելի ստիպմունք, դու քաղցր բռնութիւն, ես վաղուց ճանաչում եմ քեզ, սակայն երբե՛ք չհասկացայ քո խորքն ու խորհուրդը...

Եւ տեսանողի հոգով նախազգաց Սաա՛դին որ այս վերջին գարունն է, որ ինք ապրում է. վերջին գարունը. եւ տեսաւ անսահման ոչնչութեան մթին անդունդները, որ լի են անանուն գարհուրանքով։

Սարսուռ անցաւ Սաադիի արիւնի միջով, եւ խամրած աչքերով նայեց իր դեղին ձեռներին եւ չշնչաց.

— Բիւրաւոր նաւեր են սուզուել այս անդունդների մէջ, եւ այս խորտակումից ո՛չ մի հետք չի մնացել. ի՞նչքան սարսափի դիւերներ եմ անցրել այս անհունի հանդէպ. եւ ո՞վ կարող է քո առջեւ ասել, թէ ես կամ։

Մարդ պիտի ղէնքերը ձգէ եւ փախչի, եւ եթէ դիպուածով մէկին յաջողի ներս մտնել խորհուրդների քաղաքը, դռները կը զոցուին նրա վրայ եւ վերադարձ չկա՞յ։

Եւ սակայն, աւա՜ղ, բնաւ չհասկացայ իմաստը մահի, որ անողորմ թշնամին է սիրոյ խորհրդի։ Ու դիտեմ, որ վաղը պիտի փշրուի այս խարխուլ հողէ չէնքս եւ փոշի պիտի դառնամ յաւիտեան մոռանալու համար տիեզերքը իր հրաշքներով եւ հէքիաթներով, յաւիտե՞ն ու յաւիտեանն է՞ր։

Եւ Սաա՛դին տխուր աչքերով նայում էր հրաշակերտ աշխարհին, փերուզի մէջ թեւող թռչուններին, որ երգում էին անհոգ ու զուարթաղին, թաղուտու պէս հպած ու թաղ կապած ծառերին ու ծաղիկներին, եւ նայում էր անծայր կարօտով, ցաւագին կարօտով, ինչպէս վանգաւոր եւ հեռաւոր ճանապարհ մեկնող սիրականը նայում է անյաղ իր հեքնաղ սիրուհուն։

Պարտիզի դունակը բացուեց, սպիտակ շըղարշները հովին ծփծփուն՝ ներս մտաւ Նաղիաթ, Սաադիի սիրած Շիրազուհին, որ միշտ այցի էր գալիս ծերունի բանաստեղծին։

Նաղիաթի հրաշագեղ աչքերը, դինաւէտ շրթունները եւ հոլանի թեւերի լոյսն ու կրակը չա՞տ անգամ արեւազարդել էին դարեւոր Սաադիի անբուն գիշերները։

Սաա՛դին սիրում էր նրան իր անթառամ սրտի երիտասարդ աւիւնով, եւ ոսկի բառերով անմահացրել էր նրա պատկերը Գիւլստանի մէջ։

Նաղիաթ՝ վարդերի փունջը գրկին՝ մտեցաւ բանաստեղծին եւ անուշ ձայնով ողջունեց։

Տխուր էր Սաադին, հառաչանքը թրթռում էր նրա գունատ շրթներին։

— Ինչո՞ւ ես տխուր, դու ամենաերջանիկը մահկանացուների մէջ, ինչո՞ւ ես տխուր։

Սաա՛դին լուռ էր։

— Ես սիրում եմ քո տխրութիւնը, Սաադի, իմաստուն է քո թախիծը, եւ դու ասել ես քո սաստուածային լեզուով, թէ մարգարիտը վէրքից կը ծնի եւ խունկը այրուելով է որ իր անուշ հոգին կը բուրէ։

Սաա՛դին նայեց Նաղիաթին դալուկ ժպիտով։

— Տե՛ս, վարդեր եմ բերել քեզ, իմ պարտիզի թաւիշ վարդերից։

Եւ ծերունին պարուրեց վարդերով եւ լուսեղէն մատներով շոյեց բանաստեղծի ճակատի մռայլը։

© National Library of Armenia

— Քո տուած վարդերը, ո՛վ դրախտի աղջիկ, աշխարհի ամենաչքնաղ վարդերն են եղել միշտ եւ երբեք չեն թառամել:

— Այո՛, Սասդի,— «ինչո՞ւ վարդը հոտոտելիս խորհել նրա վաղանցուկ շնորհի մասին. պահի՛ր յիշատակը բոյրի եւ դիւրին կը լինի մոռանալը, որ վարդը թառամած է...»

Արծաթի ձայնով արտասանեց Նազիաթ Սասդիի վաղեմի խօսքերը:

Եւ իր երազաբոյր վարսերը գգուեցին Սասդիի դէմքը, երբ Նազիաթ ծունկի եկաւ բանաստեղծի մօտ. պարտիզում մի անուշ հով ծիածանի թեւերը թափահարեց Սասդիի գլխի վերեւը — այդ Զմրուխտ-Թռչունի չքնաղ թեւերն էին, որ ծուփ եկան, երբ Սասդին դողդոջ մատներով չոյեց Նազիաթի երազաբոյր վարսերը...

Եւ ապա Սասդին հոգու խորին յատակից նայեց մէկ՝ իր չուրջը բռնկուած հէքեաթ-աշխարհին, մէկ՝ իր առջեւը՝ լուսաժպտուն հրաշք-աղջկան,— զգաց տաք արցունքի մի մեծ կաթիլ իր հին սրտի մէջ,— ապա բռնելով աղջկայ ձեռքը, համբուրեց ու դրեց լացող սրտի վրայ ասելով.

— Քո չուչան մատներով գրի՛ր Գիւլստանիս յետին էջի վրայ իմ այս վերջին խօսքերս.—

«Մնում ենք ստիպուած, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարօտով...

ԵՐՆԷԿ ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ

Գրեց՝ ՀԱՄԱՅՏԵՂ

— Էս փայտը երկնցուցեր ես, որ անցած ատեն աչքս մխուի, հա՞: Ես չ'պի մեռնիմ Մխսի, Մխսի: Քեզ պէս քառասուն քաւթառները որ չթաղեմ...

Կը պոռար, կը դրդռար Մնուշ պառին իր տանիքէն փոուած լաթերը վար առնելով:

Մխսին՝ կերակուրի խոնջային շուրջ դեռ նոր նստած՝ կը լսէր Մնուշին ձայնը, կը ջղայնանար, դգալը վար կը դնէր ու բարձր ձայնով կը խօսէր ինքնիրեն.

— Տէր Աստուած, դուն սապր ու լռանք տաս: Սատանան կ'ըսէ...

— Զեմ, չեմ ուզեր, որ թոռներդ էս իմ տանիքիս կողմը անցնին, էս տեղերը փորփըրեն: Հեղ մըլ տեսնեմ՝ ծնկները կը կոտրեմ,— կը շարունակէր Մնուշ:

Մխսին ինչպէ՞ս համբերէր:

— Հէ՛յ ջատու, ջատու, ալ հերիք եղաւ որ եկեմ... (Մխսին կ'ելլէր) որ կնիկմարդ է վար պի մնամ՝ ալ ի՞նչ բանի համար էս պեխերը,— կը խօսէր ինքնիրեն ձեռքին փայտը փնտռելով:

Մնուշ ալ իր կարգին կօշիկին թէմը կը քաշէր. թերեւս նորէն սկսէր երկու ծերերու կռիւը, եթէ սովորականին պէս Մխսիի տղան չմիջամտէր:

Մխսիի ու Մնուշի կռիւը նոր չէր: Ուղիղ երեք տարի էր: Օր չէր անցեր, որ չդրդռային, չհայհոյէին, չպոռային իրարու: Ըլլար այդ տանիքը կամ եկեղեցիին ճամբան: Դրացիները շատ բան չէին գիտեր. շատ բան չէր գիտեր նաեւ Մխսիին տղան՝ Արութը:

* * *

Այն օրերուն Մխսին սուգի մէջ էր. հազին տասնհինգ օր կար, որ թաղեր էին իր միակ ընկերը, կինը: Մխսիի համար շատ դժբախտ կորուստ էր, որովհետեւ իր կնոջ, Աննիկին հետ մէկ բարձի վրայ ծերացեր էր:

Է՜հ, ի՜նչ լաւ օրեր էին: Ամառները, երբ գիւղն ամբողջ կալի աշխատանքի լծուած էր, երկու ծերերը դռան սեմին վրայ կը նստէին պահ մը:

Երբ արեւը իրենց վրայ զար ու դիմացի կիսապատին վրայ իյնար, Մխսի ու Աննիկ այս անգամ իրենց թոռներուն հետ ցածկեկ տանիքը կ'ելլէին ու՝ արեւոտ պատին կռթնած՝ կը նստէին հանդարտ:

Անոնք հանդարտ էին ու լուռ, սակայն անոնց չուրջ, միջոցին մէջ, կը յորդէր գիւղին կեանքն ու առատութիւնը:

Թոռները տանիքին վրայ փայտերով ձի կը խաղային: Հեռուէն կը լսուէր աղմկոտ աշխատանքը կալերուն: Միջօրէին, երբ ըստուերները սոթթուէին, շատ անգամ երկու ծե-

© National Library of Armenia

բերու վերեւէն կ'անցնէին մեղունները խուռնախիտ, իրենց ետեւ ձգելով հազարաւոր լարերով հակայ նուագարանի մը խուլ ձայնը:

Երկու ծերերը, որպէս հովանի, իրենց ձեռքերը ճակատներուն վրայ բռնած, մեղուներու անցքին ի զուր կը փորձէին հետեւիլ: Անոնց համար կարեւոր էր գիտնալ, թէ ո՞ր ծառի կամ ո՞ր այդիի մէջ մեղունները պարս տուին:

— Տեսա՞ր որ կողմը անցան,— կը հարցնէր Մխոյին:

— Ես ի՞նչ տեսնեմ, տնաշէն, ալ ծեր եմ ծեր, աչքերս շատ չեն զատեր. միայն շուքի պէս բան մի տեսայ,— կը խօսէր Աննիկ:

— Ինձ էնպէս կը թուայ, թէ Մարկոսենց ուռիներուն վրայ պարս եկան:

— Ես էնոնց ձէնը լսեցի միայն. շատ խստակ էր:

— Մինասենց էքուն մէջ պարս տուին,— ձայն կուտար Թոռներէն մէկը, որոնք նոյնպէս իրենց խաղերէն դադրած կը դիտէին հետաքրքրութեամբ:

— Հա՞, էդպէ՞ս: Կ'երեւի Արեւիկենց մեղուներն են: Դէ՛հ վազէ, իմ ասլան Թոռնիկ,— կը խօսէր Մխոյ.— գնա՛ Արեւիկենց կալը. հիմա էնոնց տունը մարդ չկայ. բանի, գործի ատեն է, ի՞նչ պի դիտնան: Գնա՛, ըսէ, որ ձեր մեղունները պարս տուին Մինասենց էքին: Թո՛ղ երթան առնեն, քանի չեն հեռացեր:

Թոռները, բոլորը մէկ, կը վազէին, թարվառ հաւերը փախցնելով, թէ իրենցմէ ո՛րը պիտի խլէ լուր տալու առաջնութիւնը:

Ամառ ժամանակ, երբ գիւղին մէջ մարդ չկար, երկու ծերերու աշխատանքներէն մէկը կ'ըլլար այդ: Այդ աշխատանքէն յետոյ երկու ծերեր նորէն կը նստէին քով քովի: Հեղ մ'ալ տեսնես՝ երկու աքլորներ կըտ, կըտ կտուցին գետնին ծեծելով իրարու կը մօտենային ու կռուի կը բռնուէին ճիշդ Մխոյի ձեռնափայտին քով:

Մխոյ, երբ կը տեսնէր աքլորներու կռուտուքը, իր մէջ կը զգար հրճուանք մը, որ հեթանոսական էր: Թող կուտար, որ կռուէին. շատ անգամ ինք կուտ կը նետէր, իրարու մօտ բերելով կը կռուեցնէր: Այդ պահուն էր, որ Մխոյ կատակ մը կը փորձէր Աննիկին հետ, իր չպուխին ծուխը կնոջ երեսին կը փչէր, թեւը անոր վզին շուրջ կը փաթթէր, լաչակին ձեւը կ'ուրէր, եւ, կամ կապ մը երկնցնելով, կը խօսէր.

— Դէ՛հ, Աննիկ, փորձէ կտրել էս կապը: Տեսնեմ՝ ուժդ տե՞ղն է:

Աննիկ կը խնդար իր նիհար ծնօտով ու կապոյտ լինտերով: Կ'առնէր կապը եւ ի զուր կը փորձէր կտրել, մինչ աքլորները կը կռուէին՝ յօրինելով նկար մը նաւասարդեան հին օրերու:

Օր մը սակայն եկեղեցիին ճամբան, Աննիկ ըսաւ Մխոյի, թէ եկեղեցիին մէջ, երկրպագութիւն ըրած պահուն, կռնակը ցաւ մը շուլլուեցաւ: Ու Աննիկ ուղիղ անկողին գնաց: Երեք օր պառկելէ յետոյ մեռաւ շատ հանգիստ մահով մը:

Մխոյ ինքզինք մինակ զգաց այն ատեն, երբ գերեզմանէն վերադարձին տեսաւ, որ իր հարսը ծալլած վերցուցած է մեռելին անկողինը:

Մխոյ որքան կը բաղձար, որ միասին մեռնէին, որովհետեւ միասին ապրած էին բարի ու չար օրեր:

Ամիս մը վերջ Մխոյ մոռցաւ իր կինը այնպէս, ինչպէս կը մոռցուին բոլոր մեռելները: Սակայն Մխոյ իր մինակութիւնը չկրցաւ մոռնալ:

Այս անգամ, առանձին տանիք կ'ելլէր, աքլորները կը կռուեցնէր, Թոռներուն հետ կը կատակէր, կալի աղմկոտ աշխատանքին կ'ունկընդրէր, սակայն մինակ էր, մինակ: Մխոյ օր մը տեսաւ, որ դրացի Մնուշը իր լաթերը փռելու համար իրենց տանիքէն կապ մը կը կապէր:

— Կեցիր Մնուշ, էդպէս չըլլար,— խօսեցաւ Մխոյ:— Կեցիր, վարէն երկաթէ հալխիկը բերեմ: Էնպէս լաւ է:

Մխոյ բերաւ երկաթէ օղակը, կապը ինք անցուց, միւս ծայրը սիւնի մը հաստատեց ու օգնեց, որ Մնուշ լաթերը փռէ:

Երեկոյին, երբ Մնուշ լաթերը վար կ'առնէր, Մխոյ մօտեցաւ նորէն ու ուզեց օգնել: Աշխատանք մը, որ իր կեանքին մէջ ցոյց տըւած չէր դրացիներուն, ոչ իսկ իր կնոջ: Մնուշ զարմացաւ լուռ:

Ու ալ ամէն օր Մխոյ՝ կռնակը պատին կռթնցուցած կը սպասէր, որ Մնուշ տանիք

© National Library of Armenia

ելլէ։ Մխսի ինքն ալ չէր գիտեր, թէ ինչո՞ւ այդ սպասումը։ Չէ՞ որ ծեր էին ինք եւ Մնուշ։

Մխսի եւ Մնուշ երկար տարիներու դրացիներ էին։ Մնուշ վաղուց կորսնցուցած էր իր էրիկը. այժմ, մօտ յիսուն տարեկան, Մխսիենց պատկից, իր բրիշակը քաշուած, ապրելու համար ջայլ կը մանէր, հաց կ'ելիէր ու իրիկուն առաւօտ եկեղեցի կ'երթար։

Օր մը ալ հաց ելած տեղէն Մնուշ տանիք ելած էր ու ձայնը ձգած ՀՈ՛Ւ–ՀՈ՛Ւ–ՀՈ՛Ւ, հաւերը կը կանչէր։

Մխսին հոն՝ պատին կոթնած՝ իր համբիչը կը քաշէր։ Այդ օրը Մնուշին ձայնը եկեղեցիին մէջ երգուած սաղմոսին չափ անուշ եկաւ, մանաւանդ որ Մնուշ՝ հացեփոց լաթերուն մէջ փաթթուած՝ աւելի դէր կ'երեւէր։ Երեսը թոնիրի բարկ կրակէն կարմրած, ճակատին, երեսին վրայ քրտինքը կը պոպէր։

— Ի՞նչ կ'ընես Մնուշ, հաւերը կը կանչես։ Հա, ձեր հաւերէն մէկը էդ բակը անցաւ, — խօսեցաւ Մխսի, ձայնը երերցնելով։

Մնուշ Մխսիենց տանիքն անցաւ ու, բակին հաւերը կանչելու համար, նորէն իր ձայնը ձգեց։

— Հա՞ց ես ելիր, Մնուշ. եկ, նստէ, հէր օրհնած, աշխարհը մեռնիլ կայ,— շարունակեց Մխսին։

Է՛հ, ի՞նչ ընենք, քանի ուժ կայ՝ ապրուստնիս ճարենք։

— Որ բանի պէտք ունիս, ինծի ըսէ, Մնուշ. ախրը դրացիներ ենք։

Եւ աւելի մտաենալով ու ձեռքը պեխերին տանելով, ըսաւ։— Էս տարի մեր կալը լաւ էր։ Թէ որ ցորենի պէտք ունիս, մի քանի պարկ ցորեն ձեր տունը կը ձգեմ. Թո՛ղ տղաս, Արութը, չգիտնայ։

Մնուշ կասկածեցաւ։

Զորս կողմերէն, բակէն, բարձր տանիքէն, ամենուխներէն հաւերը եկած հաւաքուած էին Մխսիի եւ Մնուշի շուրջ։ Փոքրիկ կենդանիները վիզերնին տնկած կը թրվռային եւ ի զուր կը ոսպասէին անհամբեր, որ Մնուշ իրենց կուտ ցանէր։ Բոլորովին անդիտակ այն ողբերգութեան, որ պիտի պայթէր անձրեւով յղի ամպի մը պէս։ Մխսի յարմար առիթը դրտած էր իր ցանկութիւնը յայտնելու։ Գիւղն ամբողջ աշխատանքի մէջ էր։ Թոռները վար, փողոց դրկած էր։ Ցածկիկ տանիքին վրայ հաւերէն զատ ոչ ոք կար։

— Հա, փառք Աստծոյ, ինծի պէս ուժդ տեղն է,— շարունակեց Մխսին, աչքերը խլրտցընելով ու Մնուշին ձեռքը բռնելով։— Երեսդ ալ, ըսես, Մնուշ, վարվռան վարդ է դարձեր։

Մնուշին կասկածը ճիշդ էր։

Երկինք ինչո՞ւ չէր փլիր, արեւն ինչո՞ւ չէր խաւարեր...

Մնուշ, հակառակ որ հայհոյող, պորպլոան կին էր, լուց։ Է՛հ, ի՞նչ պիտի ըսեն, երբ դրացիները իմանան։ Ու հերսոտ՝ ատենուխներէն վար իջաւ, իր եւեւ ձգելով հաւերու երամը։

Մխսին յանցաւոր աշակերտի մը պէս պահ մը զգջացած՝ մնաց իր կանգնած տեղը, շրթունքներուն տակով սուլելու ձեւ։

Մխսին ինքն ալ գիտէր, որ այդ կատակը ծերերու համար չէ։ Է՛հ ի՞նչ կ'ըլլար, դրացիներ էին, կրնային քով քովի նստիլ. մինակութիւնը չէր քաշուեր...

Յաջորդ օրը Մխսի նորէն իր սովորական տեղն էր, արեւուտ պատին ներքեւ։ Մնուշն ալ երդիքին փայտը շտկելու համար տանիք ելաւ. պորպոաց, բարկացաւ ու իր տանիքի սահմաններէն անդին քշեց Մխսիին թոռները, անոնց եւեւէն նետելով իր կոշիկը, որ քիչ մնաց Մխսիի գլխին վրայ իյնար։

Մխսի գիտցաւ պատճառը։ Գրեթէ ջղայնացած՝ անորոշ բաներ մը մրթմրթաց։ Ի՞նչ պիտի ըսեն, եթէ դրացիները իմանան։ Զգաց, որ յանցաւորը ինքն էր ու լուց շատ դժուարութիւնով։

Ուրիշ օր մը Մխսիենց աքաղաղը Մնուշին կիսապատին վրայ թառեցաւ, թեւերը թափահարեց, վիզը երկարեց ու սկսաւ երգել։ Կո՛ւ կո՛ւ հաղիւ բրած էր, երբ Մնուշ վրայ հասաւ, իր պատէն վար քշեց աքաղաղը, ձայնը կէս խեղդելով։

Մխսի կը տեսնէր այս բոլորը։ Ինչպէ՞ս համբերէր։ Ալ ի՞նչ բանի համար էին իր պեխերը։

— Ինչո՞ւ աքլորը վար ձգեցիր,— պոռաց Մխսին՝ ձեռքը ոտքը դող ելած։

— Ինչո՞ւ պատին վրայ կը թառի։

© National Library of Armenia

— Գիտի թառի։

— Չգիտի թառի. որ թառի՝ գլուխը կը կտրեմ։

— Ես ալ քու ծնկներդ կը ջարդեմ։

Թերեւս կռիւը աւելի տաքնար, եթէ դրացիները վրայ չհասնէին։

— Աքլորը պատին վրայ է թառեր. ի՞նչ կ'ըլլայ եղեր,— կը խօսէին դրացիները, ի հարկէ ոչինչ գիտնալով։

Ուրիշ անգամ Մխի կը թելադրէր իր թոռներուն, որ Մնուշին երդիքէն վար քար ձգեն, ցուիքը քակեն։

Մնուշ կը դրդռար, կ'անիծէր, տանիք կ'ելլէր, Մխիի թոռներուն ետեւէն կը վազէր։ Եւ դրացիները նորէն կը լսէին անոնց կռիւն ու հայհոյութիւնը։

Մխիի եւ Մնուշի ատելութիւնը հետզհետէ խորացաւ։ Մխի նոյնիսկ չէր ուզեր, որ Մնուշին փռած լաթերուն շուքը իրենց տանիքին վրայ իյնար։ Վա՜յ այն օրուան, որ Մնուշին մէկ հաւը իրենց տանիքին կողմն անցնէր։

Ի՜նչ լաւ օրեր էին. երկու դրացի աքաղաղները, հակառակ իրենց ասպետական կոչումին, գրեթէ միշտ հաշտ էին իրարու հետ։

Է՜հ, մարդիկ զարմանալի են. ի՞նչպէս հաւերու հաշիւներուն կը թափանցեն, գիշեր ցերեկ իրենց քայլերը կը հսկեն,— կը մտածէր Մնուշենց աքաղաղը. որովհետեւ Մխի իր ձեռքի փայտը կը նետէր ամէն անգամ, երբ աքաղաղն ուզէր Մխիենց պատին տակ կտկըտացող նաշխուն հաւին մօտենալ։

Մխի իր ձեռափայտով Մնուշին հաւերուն կէսը հաշմանդամ դարձուցած էր։

Անձրեւոտ երեկոյ մը, Մնուշ սաւան մը ձգած վրան, տանիք ելաւ՝ տեսնելու, թէ կըտուրն ինչո՞ւ կը կաթէ։ Տեսաւ, որ ճռթոնը խախտած էր, այն ճռթոնը, ուրկէ երկու տանիքներու ջուրը վար կը վազէր։

Անձրեւոտ, այդ աղմկոտ տարափին մէջ Մխի ի՞նչպէս իմացաւ Մնուշին ոտնաձայնը։ Վեր ելաւ ու տեսաւ, որ ճռթոնը իր դրած տեղը չէր, եւ, նորէն իրենց տանիքին կողմը տեղաւորելով, վար իջաւ։

Մնուշ նկատեց, որ հաղիւ կաթիլը դադրած էր, նորէն սկսաւ։ Նորէն վեր ելաւ, Մըխին ալ իր տեղէն։ Ու ցուիքին վրայ իրարու հանդիպեցան։

— Էդ ճռթոնը չմօտաս,— խօսեցաւ Մըխի՝ բարկացած։

— Հէ՛, անասնուած, դժոխքի կրակ, ընկողինս ջուրերու մէջ մնաց,— ձայն տուաւ Մնուշ մուրթին մէջէն։

— Էս ճռթոնին տեղը, էստեղ է, էստեղ. հասկցա՞ր,— կը խօսէր Մխի։

— Երսուն տարի է էս տունն եմ, ես էս ճռթոնը հոս եմ տեսեր։

— Է՜հ, դուն ի՞նչ գիտես, ջատու. ես իմ պապիս օրով կը յիշեմ, որ էս ճռթոնը հոս դընելու իրաւունք չունէք։ Թուղթ, կառավարութիւն կայ։

Մխի եւ Մնուշ մուրթին, անձրեւին մէջ կը պորպռային։

— Որ բռնեմ՝ ցուիքէն վար կը նետեմ,— կը պոռար Մխին։

Դրացիները կը հաւաքուէին, կը միջամըտէին։ Մխի եւ Մնուշ դրդռալով վար կ'իջնային, իրենց ետեւ ձգելով աղմուկն անձրեւին։

Այլեւս ամէն անձրեւի Մխի ու Մնուշ իրար կը հսկէին, իրարու ոտնաձայն կ'առնէին, կ'ելլէին, կը պորպռային։ Դրացիները ձանձրացած էին։

Գիշեր մը, սկսած էր միայորդ տարափ մը անձրեւի։ Գարանքներուն դուռները կը բացուէին կամաց ու կը գոցուէին ժիր։ Ամպը լեռներու ուժգնութիւնով կը պայթէր։ Մերթ ընդ մերթ կայծակն էր, որ մթութեան մէջ կը ճեղքուէր։ Փողոցներուն մէջ, հովը ամպկոտ թիթեղէ կտոր մը կը գլտորէր եւ կամ տանիքներէն քշուած հին վերարկու մը իր թեւերով բարտիներուն կը փաթթուէր։

Այդ ահաւոր գիշերին Մխի եւ Մնուշ, երկու ուրուականներու նման, ցուիքին վրայ իրար կը քաշքշէին։

— Էս ճռթոնը հոս պի ըլլայ։

— Հո՛դ չպի ըլլայ։

— Հոս պի ըլլայ։

Հեղ մըն ալ, չգիտես, ինչպէ՞ս եղաւ, Մխիին ոտքը սահեցաւ ու թըփ, ցուիքէն վար ինկաւ։

Տանիքը բարձր չէր, սակայն իր ծեր ոսկորները ի՞նչպէս դիմանային։

Մխին ինկաւ անկողին։

Մխի իր մեռնիլը չէր հոգար։ Է՜հ, որո՞ւ

հասկցնես, թէ իր ոտքը սահեցաւ, այլապէս կնիկմարդէ վար մնացող չէր: Մխսի ամբողջ երեք ամիս անկողին մնաց. իր կոնակը չէր կրնար շարժել, ոսկորները իրարմէ կը փըրթէին կարծես:

Դրացիները կ'ացելէին Մխսիին: Կը պատմէր, որ էդ ճոթոնը իր հօր ժամանակ իրենց տանիքին կողմ եղած է: Եթէ ուզէ, նոյնիսկ փողոցին վրայ բացուած Մնուչենց տան երդիքն ալ կը դոցէ: Թուղթ, կառավարութիւն կայ:

Դրացիներու շարքին օր մըն ալ գիւղի քահանան այցելեց:

— Օրհնած, զալածը ծնունդ է. էս լաւ բան չէ, ձեզ պէս ծերերուն վայել բան չէ. ե՛կ, հաշտեցեցնենք:

— Տէրպապ, գերեզմանիս վրայ մէկ թիզ խոտ բուսնի՝ նորէն ես չեմ հաշտուիր: Վա՜յ, կողս... դու չգիտես էդ կնիկը, տէրպապ. ողորմած հոգի էրիկը էդ կնկան սէպէպով մեռաւ: Վա՜յ, ոսկորներս... թէրս է, Տէրպապ, թէրս: Ըսէ, տեսնեմ, դուն գիր Նարեկ գիտցող մարդ ես:

Կը փորձէ հստիլ, սակայն ոսկորներու ցաւէն գլուխը նորէն բարձին վրայ կը դնէ:

— Ըսէ տեսնամ, ինք մենուճար կնիկ, էդքան հաւերն ի՞նչ ընէ: Թէրսութիւն է, Տէրպապ, թէրսութիւն: Էդ հաւերը օրէ օր, կը շատցնէ, որ մեր ցուիքը փոտեն: Հեղ մը տեսնես՝ էդ մեր տանիքը պիւթիւն իրեն հաւերուն ծրտով է լեցուն: Հա, հա, մեր հաւերը ատանկ բան չեն ըներ: Վա՜յ մէջքս... է՜հ, որ էս ընկողնէս ելլեմ, ես գիտեմ ընելիքս: Էն գիտէ, որ ես ընկողինէն չիմ կրնար ելլել, վիրա վիրա մեր տանիքին վրայէն կ'անցնի, էնպէս կ'ացնի, որ կ'ըսես առաստաղը վար պիտի գայ: Հա, հա, ինքն է, ուրիշ մարդ չէ: Ո՞ր ըսեմ, Տէրպապ. ես էսպէս կը մեռնիմ. էդ կնկան հետ չեմ հաշտուիր:

Քահանան ի զուր յորդորեց. Հին Կտակարանէն, Թուղթ Առաքելոցէն վկայութիւններ ի զուր բերաւ. Մխսին հաշտուող մարդ չէր, նոյնիսկ եթէ Աստուած վար իջնէր իր կրակէ աչքերով:

Մխսի բժշկուելու համար նոր մորթուած այծի փոսդի մէջ պլլուեցաւ, մէջքը, կոնակը ճիպար ձգեց ու վերջապէս ելաւ անկողնէն:

Վա՜յ Մնուչի գլխին...

Ծնունդի օրն էր: Մխսի իմացաւ, որ Մնուչ եկեղեցի գացեր, հաղորդութիւն առեր էր:

Մխսի ամբողջ երկու տարի իր ոտքը եկեղեցիէն ներս չդրաւ, քահանային հետ չխօսեցաւ:

— Սուտ է, Տէրպապ, էդ քու եկեղեցիդ, էդ քու սուրբերդ սուտ են: Աստուած որ եկեղեցիին մէջ չպատժեց էդ կինը, էդ հաղորդութիւն տուած ատեն էդ քու ձեռքերդ որ չքաշեց, ալ ի՞նչ բանի հաւատամ: Եկեղեցի չեմ գար, կը մեռնիմ էսպէս: Էհ Աստուած, որ ինձմէ հաշիւ հարցնէ, ես իմ հաշիւս տէրն եմ, Տէրպապ, գիտցած ըլլաս,— Մխսի խօսեցաւ քահանային, երբ օր մը քահանան ուզեց եկեղեցի տանիլ:

Անցաւ երեք տարի:

Վրայ հասան տեղահանութեան օրերը: Գիւղացիները վաղուց սարսափի մը հոտը առեր էին: Իրենց երազներուն մէջ մարդագէլ, հարսնիք տեսած էին:

Կէս գիշերին՝ տակաւին Մարկոսենց աքաղաղը իր առաջին ձէնը չձգած՝ դռները թակուեցան:

Գիւղին մէջ ինկաւ շուարում մը: Սայլերը լծուեցան: Ախոռի կենդանիներուն մէջ ինկաւ օտարոտի բառաչ ու անհանգստութիւն: Մէկն իր պղնձէ պարոցը չալկած էր, ուրիշ մը տանիքէն անկողինը վար կը ձգէր, մայր մը՝ հացի ծրարին հետ իր կոնակէն կապած էր մատղաշ մանուկը. աւելի ուրիշ մը իր ձեռքին տան ակիչը, մաղն ու տապակը բռնած էր: Մնչիկը ուռենիներու ճիւղերով շինուած վանդակի մը մէջ իր լաւագոյն աղաւնիներէն դրած էր:

Ու բոլորը մէկ հաւաքուեցան կալատեղին: Ո՞ւր պիտի երթային՝ ոչ ոք գիտէր:

Այդ բոլորին մէջ ուրախ ու գոհ երեւոյթ մը պատցնողը Հայրապետենց Դանիէլն էր: Հազած էր իր սուրբ օրերու նոփնոր լաթերը ու շատ բան գիտցողի մը պէս կը յորդորէր եւ կը պատուիրէր գիւղացիներուն, որ հետերնին շատ բան առնելու պէտք չկար. որովհետեւ ինք լաւատեղեակ աղբիւրէ իմացեր էր, որ իսկական Հայաստանը՝ Պիտ Կէօլի կողմերը պիտի երթան, հոն, ուր մեղրը գետակով կը հոսի:

© National Library of Armenia

կը պատմէր, որ ինքը էդ կողմերը եղած է եւ մանաւանդ կը պատուիրէր, որ որքան կրնան խաչիաչի հունտ վերցնեն հետերնին, որովհետեւ էն կողմերը չկայ:

Մխսին ալ՝ իր տան դռները իր ձեռքով զոցած եւ փայտեայ խոշոր բանալին իր գոտին մէջ դրած՝ կեցած էր անկիւն մը ու կը հարցնէր հարսին, թէ տանիքին երդիքը ծածկեցի՞ր: Կը հաշուէր, որ եթէ անձրեւ գայ ամբողջ ջուրը վար պիտի իջնէ, մանաւանդ որ ճութոնին նայած չէր. արդեօք Մնուշ ձեռք զարկա՞ծ էր: Մխսի չէր հաւատար, որ իսկապէս կը բաժնուէր իր տունէն:

Հրամանի մը վրայ շարժուեցան: Ճամբայ ինկան սայլերու եղերական ճչոցներուն հետ, իրենց ետեւ ձգելով արտ ու այգի, տուն ու տնաւար:

Ճամբու ընթացքին իրենց խառնուեցան կարաւաններ զանազան գիւղերէ: Ցաջորդ գիշեր եղերական գիշերն էր. երիտասարդ տղամարդիկ զատուեցան, կիները յափշտակուեցան. մայրը հարաւի, իսկ զաւակը հիւսիսի ճամբան բռնեց: Այս բոլորը գէշ երազի մը պէս եկաւ: Մխսի ցնցուեցաւ, այլեւս հասկցած էր, որ բաժնուած էր իր տունէն ու սիրելիներէն:

Ո՞ւր մնաց Արութը, հարսը. Թոռներն ո՞ւր մնացին...

Ու ինք քշուեցաւ անծանօթներու հետ անծանօթ վայրեր:

Երեք օր վերջ՝ միջօրէի բարկ արեւին տակ, երբ Մխսինց կարաւանը հանգիստ կ'առնէր, հեռուէն տեսնուեցաւ, որ փոշոտ մառախուղին մէջէն կը մօտենար ուրիշ կարաւան մը:

Ամէն անգամ, որ կարաւան մը տեսնէին, ճամբուն վրայ կեցած անոնց մօտենալուն կը սպասէին. իրենց սիրելիները կը փնտռէին, իրենց ամեցիներուն մասին տեղեկութիւններ կը հարցնէին:

Մխսին ալ իր ձեռափայտին վրայ ծռած, իրենց տան փայտեայ խոշոր բանալին գոտին մէջ, աչքերը յառած կը սպասէր կարաւանին, որ կը մօտենար փոթորիկի մը պէս:

Երկու կարաւաններ իրար խառնուեցան, կը հարցուփորձէին. ոմանք կը գտնէին զիրար: Մխսին ալ հարցուց իր սիրելիները, աչքերը պտտցուց եւ ո՞վ տեսնէ,— Մնուշը:

Մխսի ձեռափայտը ձգեց, դողդողաց, թեւերը լայն բացած կանչեց, կարծես մէկ բարձի վրայ ծերացած երկու ամուսիններ ըլլային:

— Մնո՜ւշ:

— Մխսի՜:

Մխսի ու Մնուշ իրարու գիրկ ինկան ու լացին երկու փոքրիկ մանուկներու նման:

Մխսի արցունքներուն մէջէն հազիւ ինքզինք զսպեց ու, կարմիր թաշկինակով աչքերը սրբելով, խօսեցաւ.

— Է՜հ, Մնուշ, երնէ՜կ այն օրերուն:

ԴՈՒ ԿԸ ՄԵՐԺԵ՞Ս

Դու կը մերժե՞ս ուրեմն, իմ սառած սրտին, գարնան արեւներէդ երկու շո՛ղ, երկու շո՛ղ: Քո անսպառ լոյսերուն մէջ, քո անհատնում շքեղութեան սահմաններուն մէջ՝ ուրեմն աղքա՞տ ես դու այդքան:

Պիտի գայ գարունն իմ աշխարհի՛ն ալ: Իմ տնակը պիտի ծնի ձիւնին տակէն, եւ աստղերս, աստղերս պիտի ծորին տառապանքի ամպերէն ա՛յս կողմ: Պիտի գայ գարունն իմ աշխարհին ալ:

Եւ երբ հովերն սկսին հիւսիսէն, երբ բարտիները մեռնին սառած լճակին սրտին, երբ քո բնակարանն ալ պատանքուի վերջին պատանքով ձմռան... Դու պիտի դառնաս իմ աշխարհի աստղերուն:

Այն ատեն, առաւօտի շողերուն հետ, պիտի բանամ դուռը պարտէզիս: Պիտի համբուրեմ տժգոյն նակատդ մարմար եւ պիտի ըսեմ.— Ահա՛, ինչ որ կը տեսնես, ինչ որ կը լսես, ինչ որ կը զգաս՝ քոնն են բոլո՛ր, բոլո՛ր: Քոնն է ե՛ւ իմ սիրտը:

Զէ՞ որ ես հարո՛ւստ եմ այսքան:

ՌԱՖԱԷԼ ՋԱՐԴԱՐԵԱՆ

© National Library of Armenia

ԱՆՑՈՐԴՆԵՐԸ

Ամենէն աւելի ես կը սիրեմ անցորդները,—
Անոնք, որ յաւիտենապէս շարժուն,
Անհանգիստ ու անկայուն,
Կը թռին անսահմանական տարածութեանց մէջ,
Որպէս յաւիտենական անցորդներ՝
Դէպի հեռո՛ւն, հեռո՛ւներ,
Որոնց ամբողջ կեանքը հապշտա՛պ, խօլական ու անընդհատ վազք մըն է
երազական...

Այսպէ՛ս, ես կը սիրեմ ամպե՛ր,
Որոնք կ'ելլեն, ո՛վ գիտէ, ո՛ր կապուտակ ջուրերէն
Կը սահին, ո՛վ գիտէ, ո՛ր ալեկոծ ափունքներէն
Ու կը բարձրանան վե՛ր, սպիտակ ու մշուշ լեռներու վրայ,
Ու կը վազեն անհանգիստ ու անհանգրուան՝
Մերթ օդակելով լուսինն ու արեւը,
Մերթ ողբայելով երկինքը կապոյտ
Ու մերթ արցունքներով վա՛ր, երկրի վրայ մռայլ.
Ամպերը, որոնք որպէս տարագնաց անցորդներ՝
Կը նաւե՛ն յաւիտեան
Դէպի հեռո՛ւն, հեռո՛ւներ...

Ես կը սիրեմ ալիքները կապուտակ ջուրերուն,
Որոնց ամբողջ կեանքը յաւիտենական շարժում մըն է,
Վազք մը դէպի ա՛ջ ու ձախ, առա՛ջ ու աւելի՛ առաջ,
Հեռաւոր ափերէ դէպի աւելի հեռաւոր ափունքներ,
Ալիքներ, որոնք կը յուզուին շարունակ,
Սպիտակ փրփուրներ կը ցայտեն միշտ,
Կը բիւրեղանան կամ կը հոսին,
Կը պարեն կամ կը նուագեն,
Սակայն մի՛շտ ու յաւիտեան անցորդներ են թափառական՝
Դէպի հեռո՛ւն, հեռո՛ւներ...

Ու հովը կը սիրեմ ես, որ կը բարձրանայ անտառներու մէջ,
Լեռներու ու ծովերու վրայ,
Կ'անցնի մե՛ծ, մո՛ւթ ու անստոյգ ճանապարհներով,
Իր թեւերուն վրայ կ'առնէ փոշի ու տերեւ,
Կը գգուէ ծաղկաստաններու ծաղիկները բոլոր
Եւ կ'անցնի ամենէն հեռաւոր երկինքներէ
Աւելի հեռաւոր երկինքներ՝
Անհանգիստ ու անհանգրուան...
Հովը, որ կը սուլէ ճամբաներուն վրայ,
Կը ծիծաղի ծաղկանց հետ,
Կ'ողջունէ ամէ՛ն, ամէ՛ն անցորդ,
Որ կուլա՛յ ու կը պարէ՛, կ'երգէ՛ ու կը նուագի՛,
Ու, ալիք ալիք տարածուելով ամէն ուր,
Կը մնայ յաւիտենա՛կան անցորդ՝

© National Library of Armenia

Անծանօթ տարածութիւններէ դէպի անծանօթ տարածութիւններ—
Դէպի հեռո՛ւն, հեռո՛ւներ...

Ես կը սիրեմ ժամանակը,
Որ սկսեր է, ո՞վ գիտէ, ե՞րբ,
Որ վազեր է անընդհատ, ո՞վ գիտէ, որքա՞ն
Ու պիտի մեռնի, ո՞վ գիտէ, ե՞րբ՝
Ու թերեւս երբե՞ք, ու թերեւս երբե՞ք...
Ժամանակը, որ կը հիւսուի ամէն երկվայրկեան
Ու կը քանդուի ամէն երկվայրկեան՝
Նորէն հիւսուելու համար, սակայն՝
Մի՛շտ ու յաւիտեա՛ն...
Ժամանակը. որ ստեղծե՛ր է ամէն ինչ
Ու մեռցուցե՛ր է ամէն ինչ՝
Նորէն ստեղծելու համար, սակայն՝
Մի՛շտ ու յաւիտեա՛ն....
Ժամանակը, տիեզերական ցաղթականը
Ու անսահմանական Անցորդը՝
Անսահմանութենէ դէպի անսահմանութիւն՝
Դէպի հեռո՛ւն, հեռո՛ւներ...

Ես կը սիրեմ անցորդներն ամէն,—
Լուսինը, որ կը սահի ամէն գիշեր,
Երկիրը, որ կը շրջի միշտ,
Աստղերը. որոնք կը թափառին շարունակ
Ու արե՛ւը, Արե՛ւը կը սիրեմ ես,
Որ կը ճառագայթէ անհո՛ւն տարածութիւններ
Հոգիիս մէջ
Ու կ'անցնի ճառագայթելով անհուն տարածութիւններ.—
Դէպի հեռո՛ւն, հեռո՛ւներ...

Ես կը սիրեմ նաեւ իմ Սէրը,
Որ հիւսուած է ժամանակի մե՛ծ երկունքին մէջ.
Ու կը հիւսուի ամէ՛ն անգամ
Ու կը քանդուի՛ ամէն անգամ՝
Նորէն հիւսուելու համար
Ու նորէն քանդուելու համար սակայն...
Իմ սէրը, որ տարագնաց է, ինչպէս վարդագոյն ամպը կապուտակ երկինքին.
Ու սարսուռներով բռնկուած, ինչպէս ալիքները յուզուող ջուրերուն...
Ես իմ Սէրը կը սիրեմ, որ կ'անցնի թափառական,
Ինչպէս Հովը մե՛ծ ճանապարհին
Ու կ'ողջունէ՛ ամէն ծիլ ու ծաղիկ
Ու կը մոռնա՛յ ամէն ծիլ ու ծաղիկ
Եւ որ հապշտա՛պ ու խանդոտ Անցորդ մըն է օտարական,
Հիւսուած ժամանակի մեծ երկունքին մէջ
Ու ժամանակին պէս ինքն ալ անսահմանական Անցորդ՝
Դէպի հեռո՛ւն, հեռո՛ւներ...

Թեհրան PHENIX

© National Library of Armenia

ԴԱՒՈՅ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

(ԽԱՂ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՎ)

Գրեց՝ Ղ. ՄԵԼՈՅԵԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՄԵԼԻՔ	Կ. Կոմիտէի անդամներ
ԿԱՄՍԱՐ	
ԵԴՈՒԱՐԴ	
ՇԱՀԷՆ	
ԹԱԹՈՒԼ	Կոմիտէի նախկին անդամ
ԴԱՒՈ	Գործակատար
ՄԱՐԻԱՄ	Դաւոյ մայրը
ԱՐՓԻ	Դաւոյ սիրածը
ՆԱՐԿԻԶ	Արփիի քոյրը
ԴԱԴՕԼ	Գործակատար
ԱՐՍԷՆ	Գործակատար
ՏԱՃԱՏ	Պատանի մը

Հայդուկներ, Երիտասարդներ, Արհեստաւորներ, Ժողովուրդ, Մուրացկաններ

Ա. ԱՐԱՐ

Բեմը կը ներկայացնէ պարզ սենեակ մը։ Զէթի ճրագը կ'արձակէ աղօտ լոյս։

I ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՓԻ, ՆԱՐԿԻԶ

(Լուսամուտի քով սպասողական դիրքով)

ԱՐՓԻ.— Հը՞, Լուսի՞ն։

ՆԱՐԿԻԶ.— Միայն թէ չուտ հասնէին։

ԱՐՓԻ.— Գետինը սառեր է։

ՆԱՐԿԻԶ.— Ձիերու համար գէշ։

ԱՐՓԻ.— (Կը փաթթուի Նարկիզին)։

ՆԱՐԿԻԶ.— Հա՛, ի՞նչ կայ որ։

ԱՐՓԻ.— (Սարսափահար անկիւնը կը նայի)։

ՆԱՐԿԻԶ.— Է՜հ, վերջացեր է։

ԱՐՓԻ.— Իսկ եթէ դեռ չէ՞։

ՆԱՐԿԻԶ.— Խե՞նթ ես, չլսեցի՞ր վերջին խուռոցը։

ԱՐՓԻ.— Այդ վերջի խուռոցն է, որ ինձի կը սարսափեցնէ։

ՆԱՐԿԻԶ.— Ցիմար մի՛ լինիր, յեղափոխութեան մէջ գործողը պէտք է ամուր սիրտ ունենայ. դաւանան մ'ալ պակաս։

ԱՐՓԻ.— Հա՛, դիտեցի՞ր անոր աչքերը։

ՆԱՐԿԻԶ.— Հա՛, ի՞նչ որ։

ԱՐՓԻ.— Աչքերուն փայլը, երբ...

ՆԱՐԿԻԶ.— (Շատ կամաց) Սո՛ւս, քայլեր (կը լսեն)։

ԱՐՓԻ.— Մերո՞նք։

ՆԱՐԿԻԶ.— Ճրա՛գը։

ԱՐՓԻ.— (Կը մարէ ճրագը)։

ՆԱՐԿԻԶ.— Թուրք զօրքեր են...

ԱՐՓԻ.— (Փսփսալով) Կը նային...

ՆԱՐԿԻԶ.— (Ձեռքի շարժումով կը լռեցնէ Արփիին. կը մօտենայ, կը գոցէ պահարանի բացուածքը, վրան կը քաշէ կապերտ մը, կը վերադառնայ նախկին տեղը եւ լուսամուտէն գաղտագողի կը նայի)։

ԱՐՓԻ.— (Ծունկի կուգայ, ձեռքերը կըցած կը դողայ)։

(Լռութիւն)

ՆԱՐԿԻԶ.— Ա՜հ, կը հեռանան։

ԱՐՓԻ.— (Վեր կ'ելլէ եւ զգուշութեամբ պատուհանին կը մօտենայ նայելու) Ի՞նչ շատ են։

ՆԱՐԿԻԶ.— Վախցար, հէ՞։

ԱՐՓԻ.— Իսկ դո՞ւ։

ՆԱՐԿԻԶ.— Քեզմէ պակաս։

ԱՐՓԻ.— Հապա ինչո՞ւ վազեցիր դէպի պահարանը։

ՆԱՐԿԻԶ.— Զգուշութիւնը միշտ լաւ է։

ԱՐՓԻ.— Լսէ՛։

ՆԱՐԿԻԶ.— Վե՛ր ջապէս. վազէ՛, դուռը բաց։

ԱՐՓԻ.— (Կը հեռանայ)։

ՆԱՐԿԻԶ.— (Կը վառէ ճրագը)։

ԴԱՒՈ.— (Ներս կը մտնէ)։

II ՏԵՍԱՐԱՆ

Արփի, Նարկիզ, Դաւո

ՆԱՐԿԻԶ.— Որքա՜ն վախցանք։

ԴԱՒՈ.— Մտածեցի։

ՆԱՐԿԻԶ.— Դուն տեսա՞ր։

ԴԱՒՈ.— Մօտ էի. երբ նկատեցի, որ զօրքերը կ'առաջանային, անկիւնը, ծառին ետեւ պահուըտեցայ։

ԱՐՓԻ.— Եթէ հանդիպէի՞ք։

© National Library of Armenia

ԴԱՒՕ.— Տասնոցս պատրաստ էր, կա՛մ ես, կա՛մ իրենցմէ մէկ երկուքը:

ԱՐՓԻ.— Ա՜խ, փառք Աստուծոյ:

ՆԱՐԿԻԶ.— Իսկ ձիե՞րը:

ԴԱՒՕ.— Դաղօլ հետերնին թողի, որ առաջնորդէր. ես այգիներէն եկայ: (Կը դիտէ պահարանը) Գոցեցի՞ք, լաւ ըրիք: (Արձակեր է գլխանոցը եւ ձեռքերը կը շփէ):

ԱՐՓԻ.— Զօրքերը ինչո՞ւ այդքան երկար կեցան մեր տան առջեւ:

ԴԱՒՕ.— Ո՞վ գիտէ, հոտն առեր են երեւի:

ՆԱՐԿԻԶ.— Խեղճ մարդ, Դաւո՛, տանտունը Թոնիրի վրայ նստեր է. եկաւ քեզի փնտռեց, երբ իմացաւ որ այս գիշեր պիտի գաս. մնաց որ քեզ անպատճառ տեսնէ. շատ կարեւոր բան ունի քեզի ըսելիք:

ԴԱՒՕ.— Կարեւոր բան, է՛հ, գիտեմ մօրս կարեւոր բանը:

ՆԱՐԿԻԶ.— Խե՛ղճ կին, կուլայ ու կուլայ:

ԴԱՒՕ.— Ա՜խ, այս լացերը, այս լացերը, գետնի տակը թող անցնին այս արցունքները. լացի ժամանա՞կ է այժմ:

ՆԱՐԿԻԶ.— Դէ՛հ, Դաւո, մայրդ է խեղճ պառաւը:

ԴԱՒՕ.— Ըսէ՛ք, որ չեկաւ:

ԱՐՓԻ.— Ես յայտնեցի արդէն:

ՄԱՐԻԱՄ.— (Խարխափելով ներս կը մըտնէ):

III ՏԵՍԱՐԱՆ

Արփի, Նարկիզ, Դաւօ, Մարիամ

ՄԱՐԻԱՄ.— Ա՜խ, որդի, եկա՞ր: Տասը օր է, որ քեզ չեմ տեսեր. ո՞ղջ ես, առո՞ղջ ես, փառք Աստծու:

ԴԱՒՕ.— Ի՞նչ, սատանա՞ն պիտի տանէր:

ՄԱՐԻԱՄ.— Սատանան թէ դեւը, տանողը կը տանի. ո՞վ տարաւ հայրդ:

ԴԱՒՕ.— Հը՛, փաստաբանը տեսա՞ր նորէն:

ՄԱՐԻԱՄ.— Ատոր համար է, որ քեզ կը սպասեմ:

ԴԱՒՕ.— (Նարկիզին) Ըսի՞, որ գիտեմ:

ՄԱՐԻԱՄ.— Երէկ գացի տունը. կինը, գիտե՞ս, էֆէնտիին կինը շատ սիրով ընդունեց ինձի, խահուէ ալ հրամցուց:

ԴԱՒՕ.— Է՛, յետո՞յ:

ՄԱՐԻԱՄ.— Ի՞նչ տուն, ի՞նչ տեղ: Մարդիկը հարուստ են, հարուստ:

ԴԱՒՕ.— Հէ լա՛ւ. գիտենք, որ հարուստ են: Ըսէ՛ նայիմ՝ ի՞նչ ըսաւ, ե՞րբ պիտի ըլլայ դատը:

ՄԱՐԻԱՄ.— Զըսաւ, թէ երբ պիտի ըլլայ դատը, միայն թէ ըսաւ՝ կուտ պէտք է, կո՛ւտ:

ԴԱՒՕ.— Որքա՞ն պէտք է:

ՄԱՐԻԱՄ.— Տղաս, գիտես, որ կովս ծախեցի եւ դրամը անոր տուի: Այժմ ի՞նչս մնաց որ ծախեմ:

ԴԱՒՕ.— Գիտեմ այդ, ըսէ՛ նայիմ՝ ինչքա՞ն կ'ուզէ:

ՄԱՐԻԱՄ.— Կ'ըսէ, որ գործը չա՛տ դըժուար է, որովհետեւ կ'ըսէ քու տղուդ ըրած գէշութիւնները, կ'ըսէ, օր աւուր կը շատնան. կ'ըսէ, որ մարդ կը սպաննես եղեր. կ'ըսէ, քա՛, ալ ինչե՛ր... ինչե՛ր... Զէ՛, չէ՛, ըսի իրենն, երդում պատառ ըրի. ըսի, թէ սուտ է, տղաս ազգի համար կ'աշխատի, ազգ կը չինէ, գէշ բան չըներ:

ԴԱՒՕ.— Լա՛ւ, լա՛ւ ազգ կը չինէ. յետո՞յ, ինչքա՞ն կ'ուզէ:

ՄԱՐԻԱՄ.— Կ'ըսէ, որ, եթէ հինգ ոսկի տաք, կրնամ....

ԴԱՒՕ.— Լա՛ւ, լա՛ւ, հասկցայ, հինգ ոսկի, վաղը կը ստանաս հինգ ոսկին:

ՄԱՐԻԱՄ.— (Լալով) Զմոռնաս, տղաս, չմոռնաս, խե՛ղճ ծերունի հայրդ այս ձիւն ձմեռնոցով բանտի մէջ, քու պատճառովդ...

ԴԱՒՕ.— (Զայրացած՝ ոտքերը գետին կը զարնէ): Իմ պատճառովս, ի՛մ պատճառովս. հերի՛ք է, հերի՛ք է, ի՛մ պատճառովս...

ՄԱՐԻԱՄ.— Հապա ճիշդ չէ՞. եթէ դուն փախստական չըլլայիր, եթէ այս գործերուն չխառնուէիր, խեղճ հայրդ իր ծերութեան օրերուն...

ԴԱՒՕ.— (Նարկիզին) Տեսա՞ր, կարծես առաջին անգա՞մն է (կը ծխէ եւ արագ կը քաշէ):

ՄԱՐԻԱՄ.— Ա՜խ, հինգ տարի է, հինգ տարի է, որ օրերս արցունքով կ'անցնին, գիշերներս լալով կը լուսնան: (Ձեռքերը կը տարածէ դէպի Դաւօն) Դուն էիր, դո՛ւն իմ միակ յոյսս: Ա՜հ, գիտեմ, ազգին համար գացիր դուն, բայց ե՞ս, դուն ազգին համար, իսկ հա՞յրդ (կուլայ):

ԱՐՓԻ.— (Մօտենալով) Մի լար մայրիկ,

© National Library of Armenia

մի՛ լար, չուտով կ'ազատուի։

ՄԱՐԻԱՄ.— Կ'ազատուի՞, ո՞վ կ'ազատուի, ե՞րբ կ'ազատուի... Հինգ տարի փախըստական։ Ա՜խ, իմ Դաւո, ի՞մ Դաւո, ինչե՞ր կը պատմեն, ինչե՞ր կը խօսին դրացիները...

ՆԱՐԿԻԶ.— (Պատուհանին քով) Ահա՛։

ԴԱՒՕ.— Մերո՞նք, (կը մօտենայ լուսամուտին) Բայց ի՞նչ էլեր են, ի՞նչ անզգամներ... Արփի՛, դուռը։

ԱՐՓԻ.— (Կը մեկնի)։

ՆԱՐԿԻԶ.— (Կը մօտենայ Մարիամին) Երթանք, մայրիկ, երթանք տան-տուն. այստեղ մարդիկ պիտի գան։

ՄԱՐԻԱՄ.— Դաւօս կը մնա՞յ։

ՆԱՐԿԻԶ.— Հա՛, հա՛, նա այստեղ է տակաւին։ (Նարկիզ ու Մարիամ կը մեկնին)։

ԴԱՌՕԼ.— (Կը մտնէ ցատկռտելով ու թռչկոտելով. գլուխը. թեւերն ու կուրծքը բաց)։

IV ՏԵՍԱՐԱՆ

Դաւօ, Դաղօլ

ԴԱՌՕԼ.— Եկա՛նք, եկա՛նք...

ԴԱՒՕ.— (Ապտակ մը կ'իջեցնէ Դաղօլի երեսին) Շո՛ւն, դուն հարիւր քայլ առջեւէն չքալէ՞ր։ Եթէ յանկարծ զօրքերու հանդիպէ՞ք...

ԴԱՌՕԼ.— Հա՛, հա՛, (Կը թռչկոտի եւ միւս երեսը ցոյց կուտայ ապտակ մը եւս ստանալու) Հը՛, զօրք, ի՞նչ կ'ընէ զօրքը։

ԴԱՒՕ.— (Հրամայական) Ձիերը ախոռը տարէք, իսկ բեռները այստեղ փոխադրեցէք։

ԴԱՌՕԼ.— (Թռչկոտելով) Հա՛, ձիերը ախոռ, հա՛, (Կը մեկնի)։

ԴԱՒՕ.— (Կը բանայ պահարանը)։

ԴԱՌՕԼ.— (Ներս կը մտնէ եւ Դաւօի օգնութեամբ գետինը կը դնէ կոնակի բեռը)։

ԴԱՒՕ.— Գնա՛, միւս բեռն ալ բեր. քիւրտերը թող նստին հացի։

ԴԱՌՕԼ.— (Կը մեկնի)։

ԴԱՒՕ.— (Կը նայի պահարանին մէջ)։

ԴԱՌՕԼ.— (Կը վերադառնայ եւ կրկին Դաւօի օգնութեամբ վար կը դնէ բեռը)։

ԴԱՒՕ.— Իջի՛ր, այստեղ (Կը ցուցնէ պահարանը)։

ԴԱՌՕԼ.— (Ցատկելով պահարանին մէջը կ'իջնէ)։

ԴԱՒՕ.— (Ճրագը պահարանին վրայ կը դնէ) Տե՛ս, այս կողմ, այդ պարկը վեր բարձրացուր, ես կը քաշեմ։

ԴԱՌՕԼ.— (Պահարանին մէջէն) Ո՛ւյ, ի՞նչ կայ մէջը։

ԴԱՒՕ.— Հարցնելու ժամանակը չէ, բարձրացո՛ւր։

ԴԱՌՕԼ.— Ծանր է։

ԴԱՒՕ.— (Կը ծռի, թեւը կ'երկնցնէ պահարանին մէջ)։ Տո՛ւր ինձի պարկին ծայրը։

ԴԱՌՕԼ.— Չի՛ շարժիր։

ԴԱՒՕ.— Պարկին ծայրը, քեզի կ'ըսեմ։

ԴԱՌՕԼ.— Հա՜, (սարսափած՝ դուրս կը թռի պահարանէն)։

ԴԱՒՕ.— Սո՛ւս, լռէ, թէ չէ քեզ տեղն ու տեղը կը սատկեցնեմ։

ԴԱՌՕԼ.— Զեռքե՞րը... (Կը դողայ)։

ԴԱՒՕ.— (Ոտքը կը վերցնէ, որ զարնէ) Վար իջի՛ր, անզգամ։

ԴԱՌՕԼ.— (Պահարանին մէջ կը ցատկէ կրկին) Հը, հը, հը, (Կը վրնջէ ձիու մը պէս) Աստուա՛ծ, երկի՛նք, սատանա՛յ, դեւ...

ԴԱՒՕ.— Պարկին ծա՛յրը, եթէ չես ուզեր այդտեղ մնալ։

ԴԱՌՕԼ.— Արի՛, մարդ, մեռած ես թէ կենդանի։ Ահա՛, քալէ՛։

ԴԱՒՕ.— Հա՛, բռնեցի, դուն տակը մտիր ու բարձրացո՛ւր։

ԴԱՌՕԼ.— Ոտքե՞րը... ոտքե՞րը...

ԴԱՒՕ.— Մի՛ խօսիր. (Դուրս կը հանեն պարկը)։

ԴԱՌՕԼ.— (Պահարանէն դուրս, ակնարկը՝ պարկին) Ո՞վ է, ո՞վ կայ մէջը։

ԴԱՒՕ (Ապտակ մը Դաղօլի երեսին) Քեզի՛ ի՞նչ, անզգա՛մ, գործիդ չնայիս։ Գնա՛, չո՛ւտ, այդիին գլուխը, մեծ բարտիի ծառին տակ փորուած փոսը լա՛ւ մը խորունկցո՛ւր։

ԴԱՌՕԼ.— (Կը մեկնի, դրան առջեւ կը հանդիպի Արփիին)։

V ՏԵՍԱՐԱՆ

Դաւօ, Արփի, յետոյ Նարկիզ

ԱՐՓԻ.— Խեղճ մայրդ՝ թոնիրի շուրթին նստած՝ կուլայ ու կուլայ։

ԴԱՒՕ.— Ա՜հ, արիւն եղած տեղը արցունքն ի՞նչ է որ։

ԱՐՓԻ.— Երանի՛ ձեզ այրերուդ, երանի՛ ձեզ, որ կին չէք, կնոջ սիրտ չունիք (Կը քաշ-

© National Library of Armenia

ուի անկիւն մը եւ երեսը կը դարձնէ)։

ԴԱՒՕ.— (Կը մօտենայ եւ ձեռքը Արփիի ուսին կը դնէ)։ *Հը, ի՞նչ կայ... ինչու կուլաս։ Մայրս կուլայ, պատճառ ունի։ Իսկ դո՞ւն, երիտասարդ աղջիկ, դուն ի՞նչ ունիս։*

ԱՐՓԻ.— *Ամէն մարդ իր դժբախտութեան համար կուլայ։*

ԴԱՒՕ.— *Ի՞նչ դժբախտութիւն*. (Կը բռնէ ձեռքը եւ դէպի ինքը կը քաշէ) *Խօսէ՛ տեսնեմ։*

ԱՐՓԻ.— *Զըսուիր, որ ըսեմ։*

ԴԱՒՕ.— *Դէ՛հ, մի՛ պահեր ինձմէ*. (Կը համբուրէ)։

ԱՐՓԻ.— (Կուլայ աւելի ուժով)։

ԴԱՒՕ.— *Ա՛յ աղջիկ, խենթեցա՞ր, ի՞նչ է. այժմ ներս մտնողը ի՞նչ պիտի կարծէ։*

ԱՐՓԻ.— *Ինչ կ'ուզէ, թող կարծէ. եղածն եղեր է արդէն։*

ԴԱՒՕ.— *Բայց ի՞նչ է եղեր։*

ԱՐՓԻ.— *Ցետոյ կ'իմանաս։*

ԴԱՒՕ.— *Ըսէ՛, այժմ ըսէ։*

(Ոտնաձայն. Դաւօ կը հեռանայ Արփիէն)։

ՆԱՐԿԻԶ.— (Կը մտնէ) *Սա՛ քիւրտերդ անօթի գայլերու կը նմանին, կշտանալ չունին։*

ԴԱՒՕ.— *Ուշադրութիւն ըրէք լուսամուտներուն. Մելիք պիտի գայ* (Կը մօտենայ ու կը կտրէ մէկ հակին կապերը)։ *Ի՞նչ եղաւ այդ լակոտը։*

ՆԱՐԿԻԶ.— *Դաղօ՛լ, ինչո՞ւ այդքան խիստ կը վարուիս խեղճին հետ։*

ԴԱՒՕ.— *Ինչո՞ւ համար հաց կ'ուտէ։ Ամենահաւատարիմ ընկերս է Դաղօլ, ճիշդ չանցեղ է. ըրէ՛, ըսէ՛ ինչ կ'ուզես. որքան շատ չարչարես, այնքան աւելի ոտքդ կը լզէ։*

ԱՐՓԻ.— *Բայց մեղք է տղան, խեղճ է։*

ԴԱՒՕ.— *Խե՜ղճ, այդպէս կղածաւոր մէկը տեսնո՞ր էք։ Նախ քան մեր մօտ գալը՝ ճըգնաւորի անուն ունէր, լեռը կ'ապրէր, հաց չէր ուտեր եղեր. եւ ամէն անգամ, որ վանքը կ'իջնէր, համեղ պատառներ կը հաւաքէր, որովհետեւ ճգնաւոր էր Դաղօլ, հաց չէր ուտեր եղեր, բերանը չէր դներ։*

ՆԱՐԿԻԶ.— *Լե՞ռը կ'ապրէր Դաղօլ։*

ԴԱՒՕ.— (Բանալով հակը) *Հապա՞, այրի մը մէջ կը բնակէր. մարդ տեղը չգիտէր, երեւցած ատենը գրեթէ մերկ էր, գութդ կը շարժէր։ Օր մը գացեր էի ժայռերուն մէջ նոր թաքստոց մը փնտռելու. յանկարծ՝ ի՞նչ տեսնեմ. մեր ճգնաւորը՝ այրի մը մէջ, լաւ պատրաստած անկողնի մը վրայ փռուած՝ կը ծըխէր։ Ծօ՛, դուն այստե՞ղ, Դաղօ՛լ։ Ցանկարծակիի եկած վեր թռաւ տեղէն ու սկսաւ թոչկոտել ու պարել։ Շուրջս նայեցայ. տեսնեմ, ի՜նչ ճերմակ լաւաշ հացեր, ի՜նչ պտուղներ, ի՜նչ հագուստնե՜ր. հին աղուէսի որջ մը։*

ՆԱՐԿԻԶ.— *Հա՛, սա՛ մեր Դաղօ՛լ։*

ԴԱՒՕ.— *Հապա՛, է՜հ, ըսի իրեն, այժմ բռնուեցար, մեր տղայ։ Ոտքերուս ինկաւ ու սկսաւ լալ։ Աղաչանք, պաղատանք, որ մարդու չյայտնեմ իր գաղտնիքը։ Խոստացայ — միայն այն պայմանով, որ ինձի թողուր իր այրը — ծերպերու մէջ թաքնուած անկասկածելի անկիւն մը, հրաշալի թաքստոց։— Շատ լաւ, համաձայնեցաւ աղուէսը, հապա ե՞ս։— Դո՞ւն, դուն Այգեստան կ'իջնես եւ իմ քովս կը մնաս։ Ահա թէ ի՞նչպէս գործի մէջ եմ բերեր այդ ճգնաւորը։*

ՆԱՐԿԻԶ.— *Մարդ չհաւատար, ի՞նչ խեղճ կ'երեւի։*

ԴԱՒՕ.— *Խենթ կը թուի, չէ՞, բայց քանի՞ խելօքներ կը խաղցնէ։ Միայն ե՛ս կը հասկընամ Դաղօլ, եւ ինքը այդ շատ լաւ գիտէ ...* (Կը վերցնէ տասնոց ատրճանակ մը ու կը դիտէ)։

ՆԱՐԿԻԶ.— *Ի՜նչ աւլ ըլլայ, աչքերը գոնէ խենթի աչքեր են։*

ԴԱՒՕ.— *Հարցնող չկայ, թէ լեռը եղած ատեն քանի՞ սիրուհի ունէր։*

ՆԱՐԿԻԶ.— *Սիրուհի՞։*

ԴԱՒՕ.— *Եւ սիրուհիներն էին, որ ամէն բան կը հայթայթէին քու խեղճ Դաղօլիդ։ Երբ գիշեր մը զէնք կը փոխադրէի անոր այրը, ճանապարհին մէկը բռնեցի, հը, անզգամը, նախ չուզեց յայտնել, բայց նեղն ինկած՝ խոստովանեցաւ, որ Դաղօլին այցելութեան կ'երթար։*

ՆԱՐԿԻԶ.— (Զարմացած) *Ո՞վ կը հաւատար։*

ԴԱՒՕ.— *Ինձի թողէք, յեղափոխութիւնը շատ պէտք ունի այդպիսի աղուէսներու։ Գընա՞ց այժմ իր գործին։* (Դժուարութեամբ կը հանէ տասնոց ատրճանակ մը տուփէն)։

ՆԱՐԿԻԶ.— *Բահն ու փետատն առաւ ու քրթմնջելով այգին ելաւ։*

© National Library of Armenia

ԴԱՒՈ.— Թո՛ղ գերեզման փորէ, ատկէ լաւ արհե՞ստ։ Պէտք է մաքրել այս ատրճանակները, նախ քան պահարան իջեցնելը։ Դէ՛հ, պարապ կենալու ժամանակ չէ. ես կը հանեմ տուփերէն, իսկ դուք կը մաքրէք։

ՆԱՐԿԻԶ.— Տո՛ւր, գողնոցս հին է արդէն (կը սկսի մաքրել)։

ԱՐՓԻ.— Ի՞նչ պիտի ընէք այսքան զէնք։

ԴԱՒՈ.— Ա՛ս, զաղտնիք է, մանաւանդ կանանց համար։ Կ'ըսեն, որ կիները զաղտնիք պահելը մեղք կը համարեն։

ՆԱՐԿԻԶ.— Ինչո՞ւ հապա այնքա՛ն կարեւոր գործերը անոնց միջոցով կը կատարէք։

ԴԱՒՈ.— Ստիպուած։

ԱՐՓԻ.— (Կը ձգէ ձեռքի ատրճանակը) Եթէ այդպէս է, ձեռքս բանի չեմ զարներ այլեւս։

ԴԱՒՈ.— Տե՛ս, տե՛ս, ինչքա՜ն դիւրազգած է Արփին։ Գիտե՞ս, մենք ուժի մարդ ենք. թէ կամաւոր չընես, բռնի կը ստիպուիս. կը տեսնե՞ս Դաղօլը։

ԱՐՓԻ.— Խեղճ տղայ ես դուն։

ԴԱՒՈ.— Ցեղափոխութի՛ւն. սա մի անիւ է, որ կը դառնայ խելակորոյս արագութեամբ։ Բաւ է քղանցքդ անգամ մը անիւին դպի, ա՛լ ազատուելիք չունիս. պիտի դառնաս, պիտի դառնաս անիւին հետ, մինչեւ որ...

ՆԱՐԿԻԶ.— Ոսկորներդ ջարդուփշուր ըլլան։

ԴԱՒՈ.— Հէնց այդպէս։

ԱՐՓԻ.— Խե՛ղճ մարդ, կը քնանայ այժմ հանգիստ։

ԴԱՒՈ.— Անոր ո՞վ կ'ըսէր, որ դաւաճանութիւն ընէ։

ԱՐՓԻ.— Ի՞նչ էր ըրեր։

ԴԱՒՈ.— Ես չա՞տ գիտեմ, անշուշտ բան մը ըրեր էր, որ կոմիտէն տեռոր էր որոշեր։

ՆԱՐԿԻԶ.— Կոմիտէ՞ն է, որ կ'որոշէ տեռորը։

ԴԱՒՈ.— Հապա ո՞վ. դո՞ւն պիտի որոշէիր։

ՆԱՐԿԻԶ.— Իսկ եթէ արդար էր մա՞րդը։

ԴԱՒՈ.— Է՛հ, այն ատեն կ'երթայ մեղաւորներուն օրինակ ծառայելու։ Կարեւորն այն է, որ գացողը կ'երթայ, որպէս մեղաւոր, եւ վաղը՝ թռուցիկն այդպէս կը յայտարարէ։

ՆԱՐԿԻԶ.— Կ'ըսեն, որ գացողներուն մէջ անմեղներ....

ԴԱՒՈ.— Ես երբե՛ք անմեղ մարդու վրայ ձեռք չեմ բարձրացներ. ես կը սպանեմ, որպէս մեղաւորի. կոմիտէի որոշումն է. ես ի՞նչպէս կրնամ ստուգել։

ԱՐՓԻ.— Խե՛ղճ մարդ, աչքիս առջեւէն չհեռանար։ Ինչպէ՞ս կը տառապէր։ Գիտե՞ս դրան մէկ ձեղքէն կը նայէի, ինչպէ՞ս... երբ պարանը վիզը կը...

ԴԱՒՈ.— Հը՞, (ետ կը դառնայ, պարկը կը դիտէ. ապա լուռ՝ իրար կը նային)։

ՆԱՐԿԻԶ.— Կինն իմացե՞ր է։

ԴԱՒՈ.— Չեմ կարծեր։

ԱՐՓԻ.— Կը սպասէր, որ գիշերը տուն երթար։

ԴԱՒՈ.— Հրաւիրեր էինք կարեւոր գործի մը համար։

ԱՐՓԻ.— Ուրեմն, որպէս բարեկա՞մ եկաւ։

ԴԱՒՈ.— Այդպէ՛ս կը կարծէր։

ՆԱՐԿԻԶ.— Խե՛ղճ մարդ։

ԴԱՒՈ.— Դէ՛հ, կիներու հետ է գործերնիս, նորէն պիտի սկսիք լալ։

ԱՐՓԻ.— (Կը սրբէ աչքերը) Խե՛ղճ զաւակներ։

ԴԱՒՈ.— Ազգի զաւակներու մասին հապա չէ՞ր մտածեր։

ԱՐՓԻ.— Ի՞նչ սիրտ ունիս, Դաւո։

ԴԱՒՈ.— Քարէն ամուր։

ՆԱՐԿԻԶ.— Դուն կտրիճ ես։

ԴԱՒՈ.— Վարժութեան խնդիր է, տասներկուերորդն է։

ԱՐՓԻ.— Տասներկո՞ւ։

ԴԱՒՈ.— Հապա ի՞նչ կը կարծէիր։

ՆԱՐԿԻԶ.— Ճիշդ որ քաջ պէտք է ըլլալ։

ԴԱՒՈ.— Քա՞ջ, քաջութեան բան չկայ։ Անգութ պէտք է ըլլալ։

(Իրար կը դիտեն։ Ջիւնի հատիկներ կը զարնուին լուսամուտի ապակիներուն)

ԴԱՒՈ.— (Դէպի լուսամուտը) Դո՛ւռը, մերոնք են։

ԱՐՓԻ ԵՒ ՆԱՐԿԻԶ.— (Կը մեկնին)։

ՄԵԼԻՔ.— (Կը մտնէ Արսէնի հետ)։

© National Library of Armenia

VI ՏԵՍԱՐԱՆ

Մելիք, Դաւо, Արսէն

Մելիք.— Բարեւ, Դաւо:

ԴԱՒՕ.— Աստծու բարին, Պ. Մելիք:

Մելիք.— (Վառարանին քով, կը բանայ գլխանոցով փաթթած դէմքը, ցուցնելով առատ մազերն ու մօրուքը) Սենեակը լա՞ւ է՞ք տաքցրել, փայտ ունի՞ք:

ԴԱՒՕ.— (Փայտ կը դնէ վառարանը):

Մելիք.— (Նստելով) Օ՛խ, լաւ է, չէ՞. տաքութիւնը լաւ բան է: Մօտեցի՛ր, Արսէն, մրսել ես: Համբեցի՞ր տանոցները, Դաւо:

ԴԱՒՕ.— Այո՛, Պ. Մելիք, քսանչորս հատ. միւս հակը թերթեր ու գրքեր են:

Մելիք.— Տաքցո՛ւր ձեռքերդ, Արսէն, եւ տե՛ս, թէ ի՞նչ նոր թերթեր են դրկել: Իսկ նամակնե՞րը (դառնալով Դաւօին):

ԴԱՒՕ.— Դեռ չեմ ստացեր. երթամ հարցնեմ: Սուրհանդակ քիւրտերը ախոռն են:

Մելիք.— Լա՛ւ, գնա՛. ես վաղը կը տեսնուիմ դրանց հետ. ասա՛, որ պարոնը շատ է զբաղուած այսօր:

ԴԱՒՕ.— (Կը մեկնի):

Մելիք.— (Կը դիտէ անկիւնի պարկը, կը մօտենայ պարկին ու անոր կը դպի ոտքով):

ԱՐՍԷՆ.— (Կը բանայ հակը):

ԴԱՒՕ.— (Կը վերադառնայ, ծրար մը կը յանձնէ Մելիքին) Քիւրտերը յոգնած են, կը քնանան:

Մելիք.— Լաւ. (Կը պատռէ կնքուած ծրարը, կը հանէ քանի մը նամակներ, ամէնը միասին գրպանը կը խոթէ):

ԴԱՒՕ.— Քոնիաք մը կ'ուզէ՞ք, Պ. Մելիք:

Մելիք.— Ունի՞ք (Կը շփէ ձեռները):

ԴԱՒՕ.— (Կը լեցնէ բաժակ մը):

Մելիք.— (Կը խմէ) Օ՛խ, ի՞նչ լաւ է, ցուրտ է, ցուրտ. մարդու ոսկորները սառում են:

ԴԱՒՕ.— Բաժակ մ'ալ, Պ. Մելիք:

Մելիք.— Չէ՛, Արսէնին տուր:

ԴԱՒՕ.— (Լեցուն բաժակը կուտայ Արսէնին):

Մելիք.— Քանի՞ ձիաբեռ եկաւ այսօր:

ԴԱՒՕ.— Տասներկու. ձի էր ընդամէնը. երեքը սուրհանդակներն էին հեծեր, իսկ ինը բեռնաւորուած էին:

Մելիք.— Ո՞վ է եկողը:

ԴԱՒՕ.— Հայտարանցի Ահմէտն է:

Մելիք.— Հանդիպո՞ւմ:

ԴԱՒՕ.— Շատ լաւ են եկեր, չորս գիշեր. պէտք է երեւակայէք խեղճ ձիերու վիճակը: Այն քսանհինգ լիրանոց ձին, որ այնքա՛ն խնամեցի, նորէն կը կաղայ խեղճ կենդանին. անզգամները քսաներկու հրացան են բարձեր վրան: Երբ տեսայ, զարմացայ, հայհոյեցի. բայց նորէն պիտի խնամեմ, ես իմ ձեռքովս պիտի խնամեմ:

Մելիք.— Ուրիշ ի՞նչ են ուղարկել:

ԴԱՒՕ.— Հինգ բեռ միայն փամփուշտ: Այդ եստան չփոխադրեցի. պահեստները բոլորը լեցուած են այնտեղ. Թողի վանքը, վաղը կ'երթամ ու մեծ պահեստը կը դնեմ:

Մելիք.— Շատ լաւ ես մտածել:

ԴԱՒՕ.— Երկու բեռ ալ հրացան, ընդամէնը քառասունի չափ կարծեմ, նոյնպէս վանքը թողի. փայտեր չունին. յետոյ ամառանոցը կը փոխադրենք փայտերը դնելու համար:

Մելիք.— Նախորդ հրացաններու փայտերը դրուեցա՞ն:

ԴԱՒՕ.— Դեռ չէ, Շատախէն խոստացուած ընկուզենի փայտերը կ'ուշանան միշտ:

ԴԱԴՕԼ.— (Հեւալով, թոչկոտելով ներս կ'իյնայ) Դէ՛հ, դէ՛հ, չո՛ւտ, պատրաստ է, փոսը պատրաստ է:

ԴԱՒՕ.— Բաւականին խորո՞ւնկ է:

ԴԱԴՕԼ.— Ցարութեան օրն իսկ չի կրնար դուրս գալ:

Մելիք.— Ո՞րտեղն է այդ:

ԴԱՒՕ.— Այգիի գլուխը:

Մելիք.— Ապահո՞վ տեղ է:

ԴԱԴՕԼ.— Գետնի տակէն աւելի ապահով տե՞ղ:

Մելիք.— (Մտածկոտ) Հետքը կորցնելու է:

ԴԱԴՕԼ.— Ձիւն կուգայ, պարոն, ձիւնը կը ծածկէ. մինչեւ որ ձիւնը երթայ, նոր կանաչ կը բուսնի վրան:

Մելիք.— (Դադօլին) Մրսո՞ւմ ես, տաքցի՛ր:

ԴԱԴՕԼ.— Ո՛չ, պարոն, ո՛չ. Դադօլ չի մրսիր, ան միշտ կը վազէ (թոչկոտելով անդադար): Է՜հ, ի՜նչ կը հրամայէք...

© National Library of Armenia

ԴԱՒՕ, ԱՐՍԷՆ.— (Պարկը Դաղօլի կըռնակին կը դնեն):

ԴԱԴՕԼ.— (Տնքալով) Տէրտէրն ալ, ժամհարն ալ ե՞ս պիտի ըլլամ:

ԱՐՍԷՆ.— Նաեւ լուսարարը:

ՄԵԼԻՔ.— Արսէ՛ն, գնա՛ հետը:

ԱՐՍԷՆ.— (Հանելով թերթերը կը հետեւի Դաղօլին):

ՄԵԼԻՔ.— Որքա՞ն փող է հարկաւոր:

ԴԱՒՕ.— Զիւրէն երեքը իրենցն էր,— երեքական ոսկի. հինգական ոսկի ալ մարդգըլուխ՝ կ'ընէ 24 ոսկի:

ՄԵԼԻՔ.— Լա՛ւ. այն միւս գո՞րծը, ի՞նչ է ասում վաճառականը:

ԴԱՒՕ.— Մօտենալը շատ է վտանգաւոր:

ՄԵԼԻՔ.— Տղաներից մէկը հետդ առ:

ԴԱՒՕ.— Ա՛հ, վախկոտները, ոչ մէկը չուզեց հետս գալ անցեալ օրը: Գնացի միս մինակս: Կը յաջողէի անցնիլ, բայց լուսին չուտ դուրս ելաւ: Անկարելի էր առաջանալ, կը նըկատուէի: Թէեւ բոլորովին ճերմակ էի հագնըւեր — չապիկ ու վարտիկ — ձիւնի վրայ չնկատուելու համար, լուսինը դուրս գալուն պէս, փորիս վրայ ինկայ ու սողալով անցայ ամբողջ դաշտը... Կը լսէի պահապան զօրքերու քալելու աղմուկը:

ՄԵԼԻՔ.— Ձէ՞ր կարելի պահապաններից մէկը կաշառել:

ԴԱՒՕ.— Մտածեցի այդ մասին, բայց ամէն ժամին կը փոխուին պահապանները:

ՄԵԼԻՔ.— Զօրքերի հետ յարաբերութիւն պահելը հե՞շտ է:

ԴԱՒՕ.— Ո՛չ այնքան, բայց դրամի միջոցով՝ զուցէ: Մօտիկ օրերս կրկին պիտի փորձեմ:

ՄԵԼԻՔ.— Բայց զգուշութի՛ւն. լաւ էր մէկ ուրիշը գնար. դուն շատ ես վտանգուել. եթէ բռնուես...

ԴԱՒՕ.— Ես ողջ ողջ չեմ բռնուիր, Գ. Մելիք:

ՄԵԼԻՔ.— Ո՞վ գիտէ:

ԴԱՒՕ.— Վանքի պահեստը գրեթէ լեցուեր է. շուտով նոր սուրհանդակներ կը հասնին. պահեստի մասին ի՞նչ նոր կարգադրութիւն է ըրեր կոմիտէն:

ՄԵԼԻՔ.— Կամաորը այդ մասին քեզ հետ չի՞ խօսել:

ԴԱՒՕ.— Ո՛չ:

ՄԵԼԻՔ.— Նա այժմ այդ գործով է զբաղուում. (կը վերցնէ թերթ մը ու կը սկսի կարդալ ճրագին մօտենալով): Արսէնը չա՞տ պիտի ուշանայ, գնայինք:

ԴԱՒՕ.— Գ. Մելիք, մայրս եկել էր ինձի տեսնելու:

ՄԵԼԻՔ.— Մա՞յրդ:

ԴԱՒՕ.— Այո՛:

ՄԵԼԻՔ.— (Շարունակելով կարդալ) Երբե՛ք տուն չե՞ս գնում:

ԴԱՒՕ.— Ո՛չ յաճախ:

ՄԵԼԻՔ.— (Շարունակելով կարդալ) Հա՞: (Լռութիւն):

ԴԱՒՕ.— Հօրս վիճակը ծանր է բանտում:

ՄԵԼԻՔ.— Հօրդ վիճա՞կը:

ԴԱՒՕ.— Այո՛, երեք ամիս է, եւ դեռ նախնական քննութիւնները չեն վերջացուցեր:

ՄԵԼԻՔ.— (Շարունակելով կարդալ) Նախնական քննութի՞ւնը:

ԴԱՒՕ.— Այո՛, պարոն:

ՄԵԼԻՔ.— Ինչո՞ւ:

ԴԱՒՕ.— Ի՞նչ գիտնամ:

ՄԵԼԻՔ.— Ինչո՞ւ են բանտարկել:

ԴԱՒՕ.— Նախավերջին տեսօրին՝ փողոցի մէջ զարնելու ժամանակ ինձի ճանչցողներ են եղեր: Եւ, որովհետեւ դիւրին չէր զիս ձեռք ձգելը, խեղճ ծերունի հայրս բռնեցին:

ՄԵԼԻՔ.— Բայց ի՞նչ իրաւունքով:

ԴԱՒՕ.— Իրաւո՞ւնք:

ՄԵԼԻՔ.— (Շրջելով թերթը) Ինչպէ՞ս կարելի է որդու յանցանքի համար հայրը ձերբակալել:

ԴԱՒՕ.— Նոր չէ՛ այդ:

ՄԵԼԻՔ.— Լա՛ւ, ի՞նչ են ասում հօրդ:

ԴԱՒՕ.— Որդուդ տեղը ցոյց պիտի տաս:

ՄԵԼԻՔ.— (Ծպիտով) Հայրդ չա՞տ գիտէ քու տեղը:

ԴԱՒՕ.— Եւ ահա հայրս կը պահեն իմ փոխարէն:

ՄԵԼԻՔ.— Ի՛նչ պնմիտ օրէնքներ:

ԴԱՒՕ.— Մայրս եկեր էր կուլար:

ՄԵԼԻՔ.— Սիրտ տուր, սիրտ տուր մօրդ: (Լռութիւն. Շամիլը կը շարունակէ թերթը կարդալ):

ԴԱՒՕ.— (Նեղուելով) Մայրս երէկ փաստաբանի մօտ էր գացեր:

© National Library of Armenia

Մելիք.— Ի՞նչ փաստաբան։

Դաւիթ.— Հօրս դատը պաշտպանողը։

Մելիք.— Այդ սրիկայ փաստաբանները...

Դաւիթ.— Ըսեր է, որ...

Մելիք.— Է՛, ե՞րբ պիտի բաց թողնեն հայրդ։

Դաւիթ.— Ըսեր է, որ դրամ պէտք է...

Մելիք.— Դրա՞մ, հը՛, փող...

Դաւիթ.— Այո՛, հինգ ոսկի եւս...

Մելիք.— Մինչեւ հիմա մի բան տուե՞լ էք։

Դաւիթ.— Հապա՞, քանի՞ անգամ։

Մելիք.— Ահա՛ թէ ի՛նչպէս կ'անբարոյականանան պաշտօնեաները։

Դաւիթ.— Մայրս ծախեց իր կովը եւ դրամը...

Մելիք.— Ի զուր...

Դաւիթ.— Ի՞նչպէս, թէ ի զուր. հայրս կը մեռնի այնտեղ, եթէ չաշխատինք ազատել։

Մելիք.— Բայց դրանք իրաւունք չունին հայրդ բանտարկելու, հայրդ չէ եղել ոճիր գործողը։

Դաւիթ.— (Աչքերը լայն բացած) Ոճի՞ր։

Մելիք.— Հապա՛, հայրդ չէ եղել գործողը։

Դաւիթ.— Բայց հայրս բանտարկուեր է իմ պատճառով։

Մելիք.— Ի զուր, իրաւունք չունին պահելու. վերջ ի վերջոյ ազատ պիտի թողնեն։

Դաւիթ.— Երեք ամիս եղաւ, իսկ. հայրս ծեր է. պառաւ մայրս գիշեր ու ցերեկ լալէն նիհարեր է, ես այս վիճակի մէջ, փախստական. մօրս արցունքները սաստիկ կ'ազդեն վրաս...

Մելիք.— Սիրտ տուր, սիրտ տուր մօրդ։

Դաւիթ.— Խօսքը կորսնցուցեր է իր արժէքը...

Մելիք.— Ցոյս տուր, յոյս...

Դաւիթ.— Խոստացեր է վաղը փաստաբանին յանձնելու հինգ ոսկին։

Մելիք.— Ի զուր։

Դաւիթ.— Բայց հինգ ոսկին ինչպէ՞ս գտնէ խեղճ մայրս։

Մելիք.— Փողը ջուրն է ձգում։

Դաւիթ.— Բայց չունի, որ տայ։

(Լռութիւն)

Մելիք.— (Թերթ կը կարդայ)։

Դաւիթ.— Պարո՛ն Շամիլ։

Դաւիթ.— Կրնայի՞ք արդեօք օգնել մօրս։

Մելիք.— (Պահ մը լռելէ յետոյ) Հը՞։

Մելիք.— (Անտարբեր) Ճիշդ ա՛յդ եւ նըման խնդիրների մասին մտադիր եմ կեդրոնական կոմիտէի մէկ ժողովի մէջ հարց բարձրացնել, թէ արդեօք մեր կուսակցութիւնը մի բարեգործական ընկերութի՞ւն է։

Դաւիթ.— Գոնէ իբրեւ փոխ...

Մելիք.— Այդպիսի մի նպատակի յատկացուելիք տրամադրելի գումար չունինք։

Դաւիթ.— Ինչպէ՞ս...

Մելիք.— Մենք ներկայացնում ենք յեղափոխական մի կազմակերպութիւն եւ ոչ թէ մի բարեգործական ընկերութիւն։

Դաւիթ.— Բայց այս պարագային։

Մելիք.— Պարագայ չկայ, այլ սկզբունք։

Դաւիթ.— Ներեցէ՛ք, Պ. Մելիք, ես սկզբունքներէ չատ բան չեմ հասկնար. հայրս իմ պատճառով բանտարկուած է, ես վտանգուեր եմ ձեր գործին մէջ, մայրս կը խնդրէ հինգ ոսկի, որ հայրս ազատէ. կրնա՞ք ինձի փոխ տալ հինգ ոսկի։

Մելիք.— Խնդիրը հինգ ոսկու վրայ չէ, խնդիրը սկզբունքի վրայ է,— պէ՞տք է օգնել թէ ոչ։ Եւ յետոյ, պէ՞տք է եւ կարելի՞ է կաշառել կառավարական պաշտօնեաները, ահա՛ հարցը։

Դաւիթ.— Կաշառելու հարցը ինձմով չէ, որ կը սկսի եւ ինձմով չէ, որ պիտի վերջանայ։

Մելիք.— Բայց պէտք է վերջակէտ դնել միանգամ ընդմիշտ. թէ չէ հարցնող չկայ, կազմակերպութիւնը ի վիճակի՞ է ամէն մի բանտարկեալի համար ոսկիներ համրել։

Դաւիթ.— Նախընթացներ շատ կան։

Մելիք.— Գիտեմ, բայց պէտք է դադրեցընել։

Դաւիթ.— Ես մօրս խօսք տուի. վարը, տանտունը նստեր կուլայ խեղճը։

Մելիք.— Ի զուր...

Դաւիթ.— Ի՞նչ պատասխանեմ մօրս. ես տաս փարա չունիմ գրպանս։

Մելիք.— Թո՛ղ պատասխանէ փաստաբանին, թէ փող չունի։

© National Library of Armenia

ԴԱՒՕ.— Բայց մայրս կը մեռնի յուսահատութենէն, եթէ չգտնի այդ դրամը:

ՄԵԼԻՔ.— Կը վարժուի, երբ չգտնի:

ԴԱՒՕ.— Բայց ես խօսք տուի:

ՄԵԼԻՔ.— Ասա՛ թէ չեղաւ:

ԴԱՒՕ.— Անկարելի է. այս առտու մօրս պիտի հասցնեմ հինգ ոսկի:

ՄԵԼԻՔ.— (Կը վերցնէ ուրիշ թերթ մը) Եթէ կարող ես գտնել...

ԴԱՒՕ.— Կոմիտէն պարտաւոր է տալ այդ դրամը:

ՄԵԼԻՔ.— Սխալւում ես, սիրելիս. կոմիտէն չի կարող տալ:

ԴԱՒՕ.— Ես կը պահանջեմ:

ՄԵԼԻՔ.— (Գլուխը բարձրացնելով) Պահանջ, Դաւո, այդ ի՞նչ պահանջ է. լաւ մտածո՞ւմ ես, թէ ի՞նչ ես պահանջում:

ԴԱՒՕ.— (Լացակումած) Ո՛չ, չե՛մ մտածում. մտածելու ժամանակը չէ: Ես չեմ կըրնար, չե՛մ կրնար ալ «ոճիր» գործել, ինչպէս դուք կ'ըսէք եւ օր ու գիշեր մօրս արցունքները տեսնել:

ՄԵԼԻՔ.— Ցեղափոխական լինելը հեշտ բան չէ:

ԴԱՒՕ.— Բայց հինգ ոսկի, հինգ ոսկին ի՞նչ է որ...

ՄԵԼԻՔ.— Սկզբունքի խնդիր է. քեզ ասում եմ, որ չի՛ տրուի այդ փողը:

ԴԱՒՕ.— Մինչեւ առաւօտ հինգ ոսկին պիտի ունենամ:

ՄԵԼԻՔ.— Ինձնից չես ստանայ:

ԴԱՒՕ.— Պարտաւոր էք տալու, փոխ տալու գոնէ:

ՄԵԼԻՔ.— Ո՛չ:

ԴԱՒՕ.— Զեռ չեմ տար բանի:

ՄԵԼԻՔ.— Սպառնալի՞ք, Դաւո. ընտրածդ միջոցը քեզ նպատակիդ չի հասցնի:

ԴԱՒՕ.— (Զայրացած) Սպառնալիք, այո՛, սպառնալիք: Ձեր ծախսերը, կոմիտէի անդամների ծախսերը իրենց արդուզարդերու համար յեղափոխական են եղեր, իսկ իմ հօրս ապատութեան համար խնդրած քանի մը ոսկիները բարեգործական են եղեր: Ո՛չ, պարոն Մելիք, ո՛չ. մինչեւ առաւօտ հինգ ոսկի...

ՄԵԼԻՔ.— Դաւո, Դաւո, դու չես մտածում...

ԴԱՒՕ.— Շատ լաւ եմ մտածում: Ես մըտքէս չէի կրնար անցնել, թէ դուք պիտի մերժէք ինձի հինգ ոսկի: Հինգ տարի է, որ ամբողջ կեանքս ձեր հրամաններու գործադրութեան ի սպաս է դրուած, հինգ տարի է...

ՄԵԼԻՔ.— Վարձատրութի՞ւն:

ԴԱՒՕ.— Ո՛չ, ո՛չ վարձատրութիւն. հինգ ոսկի չէ իմ վարձս: Զգիտեմ, չեմ ուզեր խօսիլ այդ մասին. ես պէտք ունիմ միայն հինգ ոսկու:

ՄԵԼԻՔ.— Ձեւս ստանայ:

ԴԱՒՕ.— (Կ'արձակէ տասնոց ատրճանակի կապը եւ կը նետէ տասնոցը սեղեակի մէջտեղը) Առէ՛ք, ձեզի ձեր զէնքը. այսուհետեւ ինձի պէտք մի՛ ունենաք:

ՄԵԼԻՔ.— Դաւո, մտածո՞ւմ ես արդիւնքի մասին:

ԴԱՒՕ.— Ինչ կ'ուզէ, թո՛ղ լինի. դուրս կուգամ, չեմ ուզեր, չեմ կրնար այսուհետեւ աչխատիլ ձեզ հետ:

ՄԵԼԻՔ.— Շատ լաւ, կը յայտնեմ կոմիտէին:

ԴԱՒՕ.— Յայտնեցէ՛ք... Դուք, պարոններդ... Հը՛... Պարոններդ... Կը կարծէք... (Կը երթի սեղեակի մէջ կատաղած) Կը կարծէք... պարոններդ...

ՄԵԼԻՔ.— (Կը դնէ գլխանոցը):

ԱՐՍԷՆ.— (Կը մտնէ) Վերջացաւ:

ՄԵԼԻՔ.— (Արսէնին) Արսէն, վերցրու այդ տասնոցը (ցուցնելով Դաւօի տասնոցը յատակի վրայ):

ԱՐՍԷՆ.— (Կը վերցնէ ատրճանակը, զարմացած իր շուրջը կը նայի):

ՄԵԼԻՔ.— Գնա՛նք:

(Կը մեկնին Արսէնի հետ):

VII ՏԵՍԱՐԱՆ

Դաւո, Դադոյ

ԴԱԴՈՅ.— (Հեւալով ու թռչկոտելով ներս կ'իյնայ) Ա՜հ, թաղեցի, հողը գլխին. այնպէ՛ս թաղեցի, որ յարութեան փողն իսկ փչեն՝ չի արթննար... Այժմ յարդին նայինք... (Կը դիտէ դառն. լռութիւն. մատը շրթունքին դրած՝ կը մօտենայ Դաւօին, ապա ետ կը քաշուի թռչկոտելով) Կը վազեմ, կը թռչիմ... Գիշերը, ի՞նչ է գիշերը... Զղջիկներու ընկերն եմ ես... Մառի ճիւղ մը... պատի ծակ մը... իմ

© National Library of Armenia

անկողին... Հը՞, հը՞, ի՞նչ կայ, ի՞նչ կայ...

ԴԱՒՕ.— (Լուռ ու մտածկոտ կը դառնայ ու Դաղօլը կը դիտէ):

ԴԱԴՕԼ.— Ես խենթ Դաղօլն եմ. մէկ մարդ կայ միայն, մէկ մարդ, որ լաւ գիտէ, թէ ես ո՞վ եմ...

ԴԱՒՕ.— Ո՞վ է այդ մէկը:

ԴԱԴՕԼ.— Դաղօլի տէրը:

ԴԱՒՕ.— Ա՛յ կեղծաւոր:

ԴԱԴՕԼ.— Բոյնս քանդեցիր տնաչէ՛ն... Թագաւորի պէս կ'ապրէի... Թագուհիները...

ԴԱՒՕ.— Այցելութի՞ւն:

ԴԱԴՕԼ.— Հեռու են, շատ հեռու...

ԴԱՒՕ.— Մօտիկնե՞ր:

ԴԱԴՕԼ.— Այնքա՜ն շատ... անոնց ոտքերու չունն եմ ես... Խենթ Դաղօլին կը ծաղրեն. ինձի պէս ուրիշ չուն գոյութիւն ունի՞... բայց չունը հոտ կ'առնէ... Հը՛մ... լաւ հոտ չեմ առներ. ի՞նչ է պատահեր, տէր:

ԴԱՒՕ.— Ի՞նչ սատանան ես, Դաղօլ, (կը մօտենայ): Ես քեզի շատ եմ հարշարեր չէ՞:

ԴԱԴՕԼ.— (Կը թռչկոտէ նայելով աջ ու ձախ) Դու միայն:

ԴԱՒՕ.— Ես իմ մասիս կը խօսիմ:

ԴԱԴՕԼ.— Աշխարհը գայլ է... Գայլերը շատ են... Ո՞րն է չունը...

ԴԱՒՕ.— Դուն լաւ գիտես:

ԴԱԴՕԼ.— Չունը երբ պոչը կը շարժէ, կը նշանակէ, որ հոտ կ'առնէ. ի՞նչ է պատահեր...

ԴԱՒՕ.— Չուն կ'ըլլաս թէ կատու, եզ թէ գոմէշ, այդ քու գիտնալիքդ է. բայց այժմ լրջացիր ու ինձի լսիր: Դադրի՛ր ցատկելէ, յետոյ շատ կը պարես:

ԴԱԴՕԼ.— (Արձան կը կտրի):

ԴԱՒՕ.— Այդպէ՛ս, նախ ներողութիւն քեզի պատճառածս տառապանքին համար:

ԴԱԴՕԼ.— (Նոյն դիրքով) Չունը կրթելու:

ԴԱՒՕ.— (Խօսքը կտրելով) Լռի՛ր ու լսի՛ր, բայց եւ այնպէս քեզի միշտ սիրեր եմ թաքուն... Այժմ ես պէտք ունիմ մէկու մը, մէկու մը, որ իր կեանքի գնով, կը հասկնա՞ս, կեանքի գնով հաւատարիմ մնայ ինձի: Կըրնա՞մ արդեօք վստահիլ քեզի:

ԴԱԴՕԼ.— Տէրը չի հարցներ այդպէս բաներ չունէն:

ԴԱՒՕ.— Չունը չորս ոտք ունի:

ԴԱԴՕԼ.— Տէրը չի հարցներ

ԴԱԴՕԼ.— (Ձեռքերու վրայ կ'իյնայ) Կուզես այսուհետեւ այդպէս կը քալեմ):

ԴԱՒՕ.— (Բռնելով թեւէն վեր կը հանէ) Ես շատ լուրջ կը խօսիմ, լսի՛ր: Հայրս ազատելու համար հինգ ոսկի ուզեցի Գ. Մելիքէն, մերժեց տալ. զայրացայ, ձգեցի տանոցս. նա վերցուց ատրճանակս ու գնաց....

ԴԱԴՕԼ.— Ականջներս բաց են:

ԴԱՒՕ.— Զգիտեմ, թէ ի՞նչ արդիւնք պիտի ունենայ. պարոններուն չխնայեցի:

ԴԱԴՕԼ.— Մէկ չուն մէկ տէր կ'ունենայ:

ԴԱՒՕ.— Թէեւ ընկեր, բայց ամէն մէկը իր հաշիւն ունի: Իմ թշնամիներս շատ են, պիտի աշխատին առիթէն օգտուիլ. երեսանց՝ բարեկամ, որովհետեւ կը վախնան, իսկ ետեւէս կը խածնեն: Այժմ քե՛զ տեսնեմ, Դաղօլ. ամբողջ ճարպիկութիւնդ, որի վրայ չեմ կասկածիր, հաւաքի՛ր, երկու ականջներդ տասը չինիր, երկրի վրայ գտնուած բոլո՛ր կենդանիներու ձեւերը վրադ մարմնացո՛ւր, ոտքերնին լուա ու ջուրը խմի՛ր սողալով: Սլքտա՛ դուռներու ետեւը, պահարաններու մէջը ծածկըւի՛ր, պատուհաններէն վե՛ր մագլցիր... ծառերու ճիւղերու մէջ թաքնուիր... կանանց վարտիկը մտիր ու իրրեւ միջնորդ ծառայիր, գողցի՛ր ու ուրացի՛ր, երդուի՛ր ու պատժըւի՛ր, օրհնի՛ր ու նզովի՛ր, միայն թէ ինձի հաստուր օրը օրին, ժամը ժամին, թէ ի՞նչ կ'ըսեն իմ մասիս, թէ ի՞նչ կը խօսին իմ մասիս...

ԴԱԴՕԼ.— (Կ'իյնայ Դաւօի ոտքերուն) Քու չունդ եմ ես, քու հաւատարիմ չունդ. հաւատա՛ ինձի, վստահի՛ր ինձի...

ԴԱՒՕ.— Վե՛ր, (կը բռնէ թեւէն) կը հաւատամ, կը վստահիմ:

(Լռութիւն):

ԴԱՒՕ.— (Ձեռը գլխին կը մտածէ):

ԴԱԴՕԼ.— Ի՞նչ կը մտածես:

ԴԱՒՕ.— Ափսո՛ս, որ կարդալ չգիտես:

ԴԱԴՕԼ.— (Կը մօտենայ Դաւօի ականջին, աջ ու ձախ նայելով) Գիտե՛մ:

ԴԱՒՕ.— (Զարմացած) Ի՞նչ:

ԴԱԴՕԼ.— Գրել ալ, կարդալ ալ:

© National Library of Armenia

ԴԱՒՕ.— Ուրեմն:

ԴԱԴՕԼ.— Խաբեցի:

ԴԱՒՕ.— Իմ նամակնե՞ր:

ԴԱԴՕԼ.— Ծանօթ, բոլորը...

ԴԱՒՕ.— Վա՛յ...

ԴԱԴՕԼ.— Ես Դադօլն եմ, քու չունդ է Դադօլը:

ԴԱՒՕ.— (Կը բռնէ Դադօլի ականջէն) Դուն ինձի խաբեցի՞ր:

ԴԱԴՕԼ.— Ա՛, ա՛յ, ա՛յ ոտքդ պաքնեմ, ոտքդ պաքնեմ, ների՛ր... ների՛ր...

ԴԱՒՕ.— Ստախօ՛ս, անզգամ, կը ներեմ այս անգամ, պայմանով որ նպատակիդ հասնելու իրր միջոց գործածես: (Կը թողու ականջը): Եթէ գտնես թուղթ մը կամ տետրակ, նամակ թէ արձանագրութիւն, կասկածես, թէ իմ մասիս ոեւէ ակնարկութիւն կրնայ պարունակել, գողցի՛ր նամակը, պատռի՛ր թերթը, բա՛ց ծրարը... մի՛ կենար ո՛չ մէկ միջոցի առջեւ եւ ինձի հասցուր լուրը իմ մասիս:

ԴԱԴՕԼ.— Դադօլ քու ծառան է, բայց այնչափ կը փափաքի լեռը դառնալ:

ԴԱՒՕ.— Լե՞ռը դառնալ, ա՞յժմ, երբ դուն այնքա՛ն պէտք ես ինձի:

ԴԱԴՕԼ.— Այրս կը վերադառնամ:

ԴԱՒՕ.— Այրդ պահեստն է այժմ:

ԴԱԴՕԼ.— Ուրիշ մը կը գտնեմ:

ԴԱՒՕ.— Քեզի կը սպաննեմ...

ԴԱԴՕԼ.— (Կուլայ) Օ՜ իմ ազատութի՛ւնս (ձեռի կոուփով գլխուն կը զարնէ) Իմ ազատութի՛ւնս...

ԴԱՒՕ.— Ազա՞տ, դուն իմս ես, կը հասկընա՞ս: Դուն ինձի կը ճանչնաս, չէ՞, տասներկու գլուխ եմ կերեր. ինձի համար դժուար չէ տասներեքերորդն ալ քուկինդ ջախջախել: Գիտես, որ ըսածս կ'ընեմ. ես Դաւօն եմ, ոչ մէկէ վախ չունիմ. կոմիտէ՞ն. կոմիտէի պարոնները գրպանս կը դնեմ. այսօրուան օրս մի հսկայ յեղափոխական կազմակերպութեան ամենամեծ գաղտնիքները իմ ձեռիս են... Լաւ կը հասկնա՞ս...

ԴԱԴՕԼ.— Դադօլ խենթ մըն է, նա ի՞նչ կը հասկնայ... չո՛ւն, չո՛ւն, (գլխին կը զարնէ):

ԴԱՒՕ.— Ես կ'երթամ գիշերս... վաղը ինձի կը գտնես...(Կը դնէ գլխանոցը) Լո՛ւր... լուրե՛ր... Թաթուլի քով:

ԴԱԴՕԼ.— Բայց դուն զէնք չունիս:

ԴԱՒՕ.— Հը՛մ (Կը վերցնէ բացուած բեռի տասնոցներէն մէկը) Իմ՛ը պահեստը եւ բե՛ր փամփուշտկալ մը:

ԴԱԴՕԼ.— (Պահարանը կ'իջնէ ու կը վերադառնայ լեցած փամփուշտկալ մը ձեռին):

ԴԱՒՕ.— (Կը լեցնէ ատրճանակը եւ փամփուշտկալը մէջքը կը կապէ):

ԱՐՓԻ.— (Ներս կը մտնէ):

VIII ՏԵՍԱՐԱՆ

Դաւօ, Արփի, Դադօլ

ԱՐՓԻ.— Կը մեկնի՞ք:

ԴԱՒՕ.— Հա՛:

ԱՐՓԻ.— Մնացէ՛ք, Դաւօ, տեղ ունինք. քոյրս մօրդ հետ տանտուն, Թոնիրի վրայ կը քնանան, ես անոնց քովը կը պառկիմ, դուն ու Դադօլն ալ այստեղ:

ԴԱՒՕ.— Չէ՛:

ԱՐՓԻ.— (Կը բռնէ Դաւօի ձեռքէն) Դաւօ, ինչո՞ւ ես զայրացեր:

ԴԱՒՕ.— Ոչի՛նչ. (Կը քաշէ ձեռը):

ԱՐՓԻ.— Դաւօ:

ԴԱՒՕ.— Գիշեր բարի, գնա՛նք. (Դադօլին):

(Կը մեկնին միասին):

ԴԱԴՕԼ.— (Կը վերադառնայ քանի մը բոպէ յետոյ՝ մոռցած պայուսակն առնելու) Մինա՞կ ես. (Կը փսփսայ Արփիի ականջին):

ԱՐՓԻ.— Հա՛:

ԴԱԴՕԼ.— Քիչ յետոյ (Կը ցուցնէ լուսամուտը ու դուրս կը թռի):

IX ՏԵՍԱՐԱՆ

Արփի

ԱՐՓԻ.— (Կը պատրաստէ անկողինը, հայելիի առջեւ կը սանտրէ մազերը, կը մարէ ճրագը, կը պատրաստուի անկողինը մտնել երբ կը լսուի լուսամուտի ապակիի ճչումը: Կ'երեւի Դադօլի դէմքը ապակիի միւս կողմէն: Արփի կը բանայ լուսամուտի փեղկը, Դադօլ լուսամուտին մէջ՝ ծիծաղը դէմքին):

(Վարագոյր)

© National Library of Armenia

ԿՏԱԿ

Երեքի տեղ ինը արծաթ կը թողում
Գերեզմանս փորողին,
Ըսէ՛ք իրեն,—
Երեք անգամ խոր փորէ...
Քար չեմ ուզեր,
Թո՛ղ անունս մոռցուի,
Անունիս հետ
Թաղուած տեղս կորսուի.
Հա՛, չմոռնա՛ք,
Երեք անգամ խոր փորէք.
Զ'ըլլայ *քունս* խանգարէք....

ԵՂԻԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՕՐՀՆԵՐԳ

Սիրելի *ՎԻԳԷՆ ՕՀԱՆՋԱՆԵԱՆԻՆ*

Մանկիկս!
Ծաղկեր ես, ծաղիկի պէս բացուեր ես,
Առաջին ձիւնծաղիկն ես,
Մանկիկս!
Զարի չար աչք թող չի հասնի քեզ...

Առաջին գարուն դուն,
Երկնքի օրհնութիւնն ես դուն,
Զուարթուն թռչուն դուն,
Մե՛ղր դուն,
Անմե՛ղ դուն,
Մայրենի երա՛զ դուն,
Մանկիկս!
Հաշտութեան ծիածա՛ն դուն...

Թող ամպն ու թուխպը երկինքդ չի փակեն,
Արե՛ւ լինի թող,
Թող աստուն ու ձմեռն անցնին,
Գարո՛ւն լինի թող,
Օրերուդ բեռը օրօրիդ պէս թեթե՛ւ լինի թող.
Մանկիկս!
Օրերդ օրօրո՛վ հիւսուին թող,
Օրօրդ արեւո՛վ ծաղկի թող,
Արեւդ պայծա՛ռ լինի թող...

Թեհրան PHENIX

ԱՄՈՒԱՆ ԵՐԵԿՈՅ

Տիեզերքի ակերը բացուա՛ծ են նորէն. անտառներն անշարժ՝ խորհուրդին մէջ փաթաթուա՛ծ. եւ ծառախումբեր՝ իրիկուան ոսկի բազուկներու մէջ՝ բազկատարա՛ծ:

Ճամբաները նորէն վարդագոյն են եւ անհուն. բոսոր ամպերուն տակ թեւն արծաթէ թեւահարե՛ց սլացա՛ւ. մարգագետնին վրայ, լուսածագին, պիտի ծագին արցունքներ, նորէն:

Կը լսեմ՝ քայլերդ կ'անցնին, եւ քղանցքներդ, կը զգամ, որ աչերուս կը քսուին. դո՛ւ, որ սափորները պարպեցիր արարչութեան մէջ, եւ հոգիս խառնեցիր արարչութեանդ նորէն:

Անշարժ, տժգոյն, մարմինս մոռցած բուներուն տակ սլացիկ... ծնրադրած եմ ճամբուդ վրայ, որ անցնելու ատեն իմ թեւերով պարուրուիմ եւ շփոթած ու արբած արցունքներս ծորին՝ ոտներուդ վրայ Աստուածի:

ՌԱՖԱԷԼ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՑՈՐԵՆԸ

Աշուն էր խարտեաշ, ժամանակ ցանքի,
Արտն ակօս ակօս ինձ արգանդ, հոգի:
Ու մշակն յոգնած
— Երկրաւոր աստուած —
Ձիս բուռ բուռ ցանեց
Հողին մէջ բարի
— Քոյրը արօրի—:
Ու մշակն յետոյ արտն ամբողջ տափնեց,
Վէրքերը ծածկեց...
— «Վաղը այս գանձէն
Գամ ոսկի հնձեմ.
Վաղն ամէն ցորեն
Ինձի տայ դարձեալ
Ամբար մը պարէն,
Որ զաւակներս ուտեն ու մեծնան
Ցորենի նման»:
Ան այսպէս բաղձաց
Թեւերը լոյսին, յոյսին վերամբարձ:

© National Library of Armenia

Հողը գիս առաւ
Եւ մօր մը նման կողին մէջ պահեց:
Ու մէջս անցաւ երակ մը բոցի
— Կարօտը հացի—:
Ու արեւն օր մը՝ թեւերէս բռնած՝
Հողէն դուրս բերաւ, իր լոյսին դիմաց:
Մշակն անձկագին
Կանանչ, խատուտիկ մարմինը տեսաւ,
Խնդաց՝
Սրտին մէջ ամրան երկիւղը հատած:
Ջուրէն ու ջերմէն ա՜յնքան շուտ մեծցայ,
Հասկերս կոյզ կոյզ ծանրը ու յղի,
Հասակս նիհար՝ թել մը բաղեղի:

Տարիքս էր լեցեր,
Դարձայ ոսկի ծիր:
Հովն ըսաւ օրօր
Հովն անցնող մի լոր,
Ու դաշտը համակ
Ծովի նմանակ
Ծփա՜ց, սրսփա՜ց...
— «Ամառ է ամառ
Ցորեանն հրաւառ,
Քիստերը ահա մեր խած կիներուն
Մազերն են դարձեր
Արեւի՝ բոցեր»
Այսպէս խօսեցան մշակներն հուժկու
Ու ծովն հնձեցին
Իրենց շրջներուն մեծ երգը հացին:
Ածու առ ածու
Աղօրք մ'համբարձաւ
Դէպի Աստծու,
Ետեւնին ձգած որա առ որա
Գիս մարմնիս վրայ:

Կալ կալ
Եզները հիմա չեն սիրեր խոկալ:
Կամ կամ
Հասկերը ահա կայծքարին կուգան:
Կը ծնիմ բուռ բուռ
Անթիւ, աստղաշատ
Յարդին գիրկը սաթ:
Բլուր եմ բլուր,
Ամբարին կ'երթայ խրախի մի լուր:
Սայլերը կ'երգեն
Կը դառնայ ճամբան
Հարսնեստունն ամրան:

Քար քարի վրայ
Ամպ մը կը զոռայ:
Ակիւր կը մաղուի
— Ջիւնը աղօրի —
Հացը կը ծնի
Հուրէն բոնիրի,
Հացը միշտ արդար,
Ինչպէս երկնքի լուսընկան վառվառ:

ԼՈՒԹՖԻ ՄԻՆԱՍ

ՎԵՐԱԴԱՐՁ

Գուն չեղար ինձ մտերիմ,
Սրտէս փախար յաւիտեան,
Հին պատկերի մը նըման,
Ուր երանգներ կը մարին...

Բայց քու տարտամ երազի
Էութենէդ, այնքան ուշ,
Խորհուրդ մը նոր եւ անոյշ
Իմ հոգիս կը խօսի...

Մարած հրաբրբն անցեալին
Կը վառէ սիրտս նորէն,
Կը զգամ, որ քեզ կը սիրեմ
Աստղի մը պէս երկնային...

Աստղի մը պէս հեռաւոր,
Որուն ցոլքն է համբուրած,
Ճակատիս վրայ տրժգունած՝
Այս խոկումները բոլոր...

Աստղի մը պէս իրիկուան,
Որ մեղմօրէն ժըպտելով՝
Արտասուքի շիթերով
Կը լեցնէ սիրտը, միայն

Եւ բարութիւն տարփելի,
Խոնարհ ճրագի սըգաւոր,
Սըգաւոր քո՜յր, միշտ աղուո՜ր
Գեղեցկութիւն Ստուերի...

Լէյզրն ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

© National Library of Armenia

ԱՆՑԵԱԼԸ

Անո՜ւշ, անո՜ւշ կը հնչեն մարող ձայներն անցեալին,
Մեռնող վարդին յիշատակն հոտեւան է աւելի.
Երգեր, բառեր կան լսուած, որ կը յուզեն հեշտալի
Արձագանգի պէս աղուոր՝ սրտի խորո՜ւնկ հայելին:

Ու երէկէն երկարող հմայքի լուսեղ թելեր կան,
Որ կը կապեն մեր հոգին սիրուած անդարձ բաներուն.
Ցոյսեր, իղձեր վաղեմի՝ ծաղիկներու պէս սարսռուն՝
Ցիշողութեան փայլին տակ ի՜նչ քաղցրօրէն կ'արթննան...

Մենք անցեալի լոյսերուն ու վարդերուն
կը փարինք.
Ու չենք տեսներ՝ շուրջը մեր, երբ լոյս ու բոյր
ծաւալին.
Ներկային մէջ՝ կը տեսնենք մթինն ու սոսկ
ցաւալին,
— Մենք վաղեմի սէրերու կարօտովը կը սպառինք:

Զի ո՜հ, անո՜ւշ կը հնչեն մարող ձայներն անցեալին.
Մեռնող վարդին յիշատակն հոտեւան է աւելի.
Երգեր, բառեր կան լսուած, որ կը յուզեն հեշտալի
Արձագանգի պէս աղուոր՝ սրտի խորո՜ւնկ հայելին:

Կ. ԷՕՔՍԻԻԶԵԱՆ

ԱԶԳ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

Գրեց՝ Ց. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Մի նոր գիտական հետազոտութիւն չէ այս գրուածքը, ոչ իսկ գոյութիւն ունեցող հետազոտութիւնների ամփոփում: Ինքնուրոյն հետազոտութիւն կատարելու համար հեղինակին պակասում է հարկաւոր գիտական պաշարը, իսկ ամփոփումներ անելու համար նա չունի բաւականաչափ ծանօթութիւն խնդրին վերաբերուող ընդարձակ գրականութեան:

Մի պարզ զրոյց է սա,— կէսգրագէտ մարդու զրոյց:

Հեղինակը միշտ հայ է զգացել իրան ու ամբողջ կեանքը երազել է հայրենիք ունենալու մասին: Բնական է, որ հարց է տուել իրան, թէ ի՞նչ ասել է հայ լինել եւ ի՞նչ ասել է հայրենիք ունենալ, ի՞նչ տեղ ու արժէք ունի ազգութիւնը համամարդկային կեանքի մէջ եւ ի՞նչ արժէք ունի հայրենիքը ազգութեան համար:

Գիտութիւնը տուե՞լ է արդեօք պատասխան այս հարցերին,— այնպիսի պատասխան, որ լուսաբանէր բոլոր երեւոյթները, փարատէր բոլոր կասկածները եւ գոհացնէր ամէնքին:

Ոչ. չի տուել. յամենայն դէպս՝ հեղինակին անյայտ է այդպիսի մի պատասխան:

Բայց պատասխան պէ՛տք է ունենալ: Խնդիրը տեսական չէ կամ միայն տեսական չէ, նա գերազանցօրէն կենսական է (մանաւանդ վտանգի ենթարկուած ազգութիւնների համար) եւ ոչ մի օր չի կարող թողնուիլ հարցական նշանի տակ: Մնում է, որ ամէն մարդ ինքը որոնի ու ինքը գտնի իրան բաւարարող պատասխան, քննութեան առնի իր գիտցածը, համեմատի, լրացնի, ընտրութիւն անի ու մի որոշ եզրակացութեան յանգի:

Լա՛ւ է, եթէ ունի ընդարձակ ու ստոյգ տեղեկութիւններ այն բոլոր գիտութիւններից, որոնց վրայ պիտի հիմնի իր պատասխանը (պատմութիւն ընդհանրապէս եւ մշակութի պատմութիւն յատկապէս, աշխարհագրութիւն լայն իմաստով, ընկերաբանութիւն ու զանգուածային հոգեբանութիւն, ազգագրութիւն ու ազգագրական վիճակագրութիւն, պետական սահմանադրութիւններ ու ազգութիւններին վերաբերուող յատուկ օրէնսդրութիւններ...):

Իսկ եթէ չունի՞ կամ ունեցածը անբաւարա՞ր է:

© National Library of Armenia

Պէտք է անի իր լաւագոյնը՝ ունեցած բնչից:

Հեղինակը այդպէս էլ պրել է, որոնել է ու աշխատել է գտնել: Կարդացել է, ինչ որ իրան մատչելի է եղել, հետեւել է ուշի-ուշով ազգային բնոյթ ունեցող երեւոյթներին իր շրջապատի մէջ եւ այդ շրջապատից հեռու, ապա՝ երկարօրէն մտածել է:

Եւ ահա այդ մի փիչ կարդացածի, մի փիչ դիտածի ու շատ մտածածի արդիւնքն է այս գրուածքը:

Իրաւունք ունի՞ հեղինակը հանդէս գալու այսպիսի մի անկատար աշխատանքով:

Նա ինքը այն կարծիքին է, որ՝ այո՛, ունի:

Որքան էլ պակասաւոր, թոյլ, վիճելի եւ նոյնիսկ սխալ լինեն իր այս կամ այն հիմնաւորումները, հեղինակը այնուամենայնիւ համոզուած է խորապէս երկու բանի մէջ.

Ա) Որ իր տեսակէտը՝ ճիշտ եւ առողջ տեսակէտ է,

Բ) Որ այսպիսի մի գրուածք՝ իր բոլոր թերութիւններով հանդերձ՝ օգտակար է հայ ընթերցողի համար:

Թո՛ղ ընթերցողը մի անգամ եւս մտածի այստեղ արծարծուած խնդիրների մասին, մի անգամ եւս անդրադառնայ երեւոյթների վրայ — սա պէ՛տք է իրան, եթէ նոյնիսկ տարբեր կամ հակառակ եզրակացութիւնների յանգելու լինի:

Այս գիտակցութիւնով է ահա, որ հեղինակը՝ առանց վախի ու առանց տատանումների՝ ներկայացնում է ընթերցողի ուշադրութեանը այն փիչը, որ ինքը ունի:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Ի՞նչ է ազգը:

Բառը շատ սովորական է արդի (ինչպէս եւ հին) հայերէնի մէջ, միշտ մեր շրթունքների վրայ: Գրքերում ու լրագրներում չարունակ կարդում ենք «ազգի» մասին, չարունակ լսում ենք ուրիշներից եւ ինքներս չարունակ գործածում «ազգ», «ազգութիւն» ու «ազգային» բառերը:

Եւ շատ կը զարմանանք, եթէ մէկը հարցնի՝ ի՞նչ ասել է «ազգ»:

Մեզ թւում է, թէ շատ լաւ հասկանում ենք այդ ամենասովորական բառը: Եւ թւում է այդպէս հէնց այն պատճառով, որ սովորական է այն: Մեր ականջը մանկութիւնից վարժուել է բառին,— այնքան է վարժուել, որ նա այլեւս չի դրաւում մեր ուշադրութիւնը, չի արթնացնում կասկածող, որոնող ու քննող միտքը:

Մեզ թւում է, որ երբ ասում ենք «ազգ», գիտենք, թէ ի՞նչի մասին ենք խօսում եւ թէ մեզ լսողն էլ ճիշտ մեզ պէս է հասկանում բառը:

Բայց, եթէ մի օր նեղն ընկնենք, հարկադրուած լինենք հաշիւ տալու մեզ, լրջօրէն վերլուծելու ու ստուգելու մեր ունեցած հասկացողութիւնը, կը տեսնենք,— թերեւս մեծ զարմանքով,—որ այդ հասկացողութիւնը շատ էլ յստակ չէ, որ նա բաւականին աղոտ է ու անորոշ, կասկածելի ու վիճելի:

Զարմանալու բան չկայ սակայն. «ազգ» կոչուած հաւաքականութիւնը այն բարդ միութիւնն է ու «ազգ» գաղափարը այն բարդ գաղափարներից, որոնք շատ դժուար է բնորոշել եւ մանաւանդ դժուար է՝ ամփոփել մի ֆորմիւլի մէջ:

Եւ այս դժուարութեան առաջ կանգնած են ոչ միայն սովորական մարդիկ, այլ եւ գիտնականները, որոնք տարիներ ու տարիներ նուիրել են հարցի ուսումնասիրութեան:

Երեւոյթի ու գաղափարի բարդութեան պատճառով, տարբեր մարդիկ (նոյն իսկ գիտնական մարդիկ) տեսել են ու ըմբռնել նրանց տարբեր տարրերը միայն, անգիտակցելով կամ հարկաւոր արժէքը չտալով միւս տարրերին: Այսպիսով ծնունդ են առել միակողմանի, միմեանցից տարբերուող, նոյնիսկ միմեանց հակասող եւ՝ յամենայն դէպս՝ ոչ-լրիւ մեկնութիւններ: Առաջ է եկել մտքի չփոթ ու փոխադարձ անհասկացողութիւն այնտեղ, ուր՝ թւում էր՝ ամէն բան պարզ է ու հասկանալի:

Շփոթը այնքան մեծ է, որ նոյն իսկ առիթ է տուել կասկածելու, թէ կա՞յ արդեօք այն հաւաքական իրը կամ այն երեւոյթը, որ «ազգ» ենք անուանում:

Եղել են հետազոտողներ (այսօր էլ կան), որոնք՝ ուղղակի կամ անուղղակի, աւելի կամ պակաս վճռականօրէն՝ հերքել են ազգերի գո-

© National Library of Armenia

յութիւնը. կամ — առնուազն — յայտարարել են այն չատ վիճելի: Israel Zangwill-*ը, օրինակ, կարծում է, որ «ազգ» կամ «ազգութիւն» բառերը չեն արտայայտում որ եւ է իրականութիւն: Պրոֆեսոր* Santayanna-*ն համարում է ազգը մի տեսակ պատահականութիւն, անցողակի ու աննշան երեւոյթ: Իսկ* M. T M. Robertson-*ը ուղղակի ասում է, որ «ազգ» անուանուած բանը ցնորք է...:*

Ազգեր, ազգային բաժանումներ, ազգային հաւաքականութիւններ չկան իրականութեան մէջ, ասում են այս կարգի մտածողները: Իսկ եթէ կան, արտայայտուած են այնքան անորոշակի, սահմանուած են այնպիսի երեւոյթներով, անկայուն ու փոփոխակի սահմաններով, որ պատահական ու միանգամայն անարժէք երեւոյթներ են մարդկային համակենակցութեան մէջ: Ազգը մասամբ ֆիկցիա է, ցնորք, մասամբ էլ (եւ խոշոր չափերով) խաբէութիւն, արհեստականօրէն շինուած ու ներշնչուած գաղափար:

Մի կողմից — ասում են — տգէտ մարդիկ, չկարողանալով ըմբռնել երեւոյթների իսկական էութիւնը, «ազգ» են անուանել տարբեր բնոյթ ունեցող մարդկային խմբակցութիւնները: Իսկ միւս կողմից՝ ճարպիկ մարդիկ,— օրինակ, տիրող դասակարգերը (անցեալում՝ աղնուականութիւնն ու հոգեւորականութիւնը, ներկայում՝ բուրժուազին)— օգտուելով ժողովրդային զանգուածների տգիտութիւնից, դիտակցօրէն մեծ արժէք են տուել անարժէք գաղափարին, գոյութիւն չունեցող բաժանումներ են յօրինել ու արհեստականօրէն մտցրել մարդկային ընկերակցութիւնների մէջ, որպէսզի հակառակութիւններ առաջ բերեն եւ՝ այդ հակառակութիւնների վրայ յենուած՝ ամրացնեն իրանց դասակարգային իշխանութիւնը:

Եթէ «ազգը» թիւրիմացութիւն կամ նախապաշարմունք չէ, եթէ ազգային միութիւնները իրօք գոյութիւն ունեն, ապա ուրեմն նրանք կապուած պիտի լինեն այնպիսի կապերով, որոնք յատուկ են միայն «ազգ» անուանուած հաւաքական մարմիններին եւ յատուկ չեն ուրիշ կարգի պատկանող, ուրիշ անուններ կրող միութիւններին:

Արդ՝ որո՞նք են այդ կապերը, որո՞նք են ազգային յատկանիշները: Ուրիշ խօսքով՝ ի՞նչ է ազգ կոչուած հաւաքականութիւնը:

Եւ դրութեան դժուարութիւնը հէնց նրանումն է, որ եթէ քննութեան առնենք մի առ մի այն բոլոր յատկանիշները, որոնք վերագրուել են ու վերագրւում են «ազգ» երեւոյթին, կը տեսնենք, որ նրանք իրօք հեռու են գոհացուցիչ լինելուց: Յաճախ խառնում են իրար տարբեր գաղափարներ, մի բան աւելի են տալիս կամ մի բան պակաս, չատ լայնացնում են կամ չատ նեղացնում ազգային սահմանները եւ՝ վերջի հաշուին՝ չեն տալիս հարցին մի պարզ ու լրիւ, որոշակի ու անվիճելի պատասխան:

* * *

Փորձենք վերլուծել «ազգային» անուանուած տարբերն ու յատկանիշները, ստուգենք, թէ ո՞ր աստիճանի «ազգային» են նրանք եւ թէ ի՞նչ առարկութիւններ կարելի է ունենալ նրանց դէմ:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

I

Ամենից աւելի տարածուած հասկացողութիւնը հետեւեալն է.

Ազգը այնպիսի հաւաքական միութիւն է, որի անդամները —ազգը կազմող մարդիկ— կապուած են միմեանց հետ արիւնակցական, ազգակցական կապերով, սերունդ են ընդհանուր նախահայրերի: Ուրիշ խօսքով՝ ազգը — բազմացած ընտանիք է, աւելի կամ պակաս հեռաւոր ազգականների միութիւն:

Գիտնական մարդիկ վաղուց արդէն հրաժարուել են այս բացատրութիւնից, բայց լայն զանգուածների հասկացողութեան մէջ սա մինչեւ այսօր էլ մնում է գերիշխող:

Դժուար չէ նկատել, որ այստեղ «ազգ» գաղափարը պարզապէս չփոթւում է «ցեղ» կամ «տոհմ» գաղափարի հետ:

Բայց ազգային միութիւնը ցեղային միութիւն չէ եւ ազգը ցեղ չէ, հակառակ նրան որ մեր հրապարակախօսները ու բանաստեղծները (առաւելապէս արեւմտահայերը) չատ յաճախ «ազգ» եւ «ազգային» բառերի փոխարէն գործադրում են «ցեղ» ու «ցեղային» բառերը:

© National Library of Armenia

Եթէ ազգը ցեղ լինէր,— իսկապէս որ ժամանակակից քաղաքակիրթ ազգերի գոյութիւնը շատ վիճելի կը դառնար:

Վերցնենք մի ինքնատիպ, լաւ արտայայտուած ու որոշակի կազմաւորուած ազգ,— անգլիական ազգը, օրինակի համար:

Ո՞րն է այդ ազգի ցեղային միութիւնը,— ո՞րն է անգլիական ազգային արիւնը:

Նախապատմական ժամանակներից բրիտանական կղզիների վրայ ապրել են զանազան կելտական ցեղեր,— անգլեր, բրիտներ, սկոտներ, պիկտեր: Պատմութեան արշալոյսին եկել են հեռաւոր հարաւ-արեւելքից, Միջերկրականի աւազանից, հոմմէական աշխարհակալները, կռուել են տեղացիների հետ, տիրել են երկրի մի մասին, նստել են այստեղ, խառնուել բնիկների հետ: Ապա եկել են հիւսիսից, Սկանդինաւեան թերակղզիից ու Դանեմարքից, նոր ցեղեր, ապա եկել են Սաքսոնները գերմանական անտառների խորքերից, ապա՝ նորմանները ֆրանսիական ափերից ... կելտական, գերմանական ու լատինական մեծ ցեղերին պատկանող զանազան հատուածներ— անգլեր, բրիտներ, սկոտներ, հոմմէացիներ, նորուեգացիներ, դանեմարքցիներ, սաքսոններ, նորմաններ — շերտաւորուել են յաջորդաբար, դարերի ընթացքում, իրար վրայ, խառնուել են միմեանց եւ տուել են ցեղայնօրէն բազմապիսի մի սերունդ, որից կազմուել է այսօրուայ անգլիական ազգը:

Եւ այսօր էլ դեռ չի դադարել, դեռ այսօր էլ շարունակւում է ցեղերի խմորումը: Ճիշտ է, բրիտանական կղզիները դարերից ի վեր չեն ենթարկուած նոր նուաճումների, զանգուածային նոր տեղափոխութիւններ այլեւս չեն կատարուած այս երկրում: Բայց, չնորհիւ միջժողովրդական յարաբերութիւնների զարգացման ու հաղորդակցութիւնների հեշտացման, մի կողմից, եւ անգլիական ազգի աշխարհակալութեան միւս կողմից,— այսօր էլ բազմաթիւ անգլիացիներ կապւում են ամուսնական կապերով ոչ-անգլիացիների հետ եւ նոր բարդութիւններ են մտցնում իրանց «ազգային արեան» մէջ, որ առանց այն էլ շատ բարդ է արդէն:

Եթէ անգլիացու անգլիացի լինելը ուզենանք հիմնաւորել ու հաստատել նրա «անգլիական արիւնով» միայն, անյաղթելի դժուարութիւնների կը հանդիպենք:

Անգլիայում կայ այսօր ազգային մի շատ որոշ միութիւն, բայց ցեղային միութիւն չկայ: Կարելի է եւ պէտք է ընդունել իբրեւ փաստ անգլիական մեծ «ազգը», բայց խօսք չի կարող լինել անգլիական «ցեղի» մասին: Անգլիական ազգ կայ, բայց անգլիական ցեղ գոյութիւն չունի:

Մի ուրիշ օրինակ,— հայ ազգը:

Ո՞րն է մեր ցեղային կազմը: Հաւանականօրէն՝ հետեւեալը.—

Շատ հին ժամանակներում (Ք.-ից աւելի քան տասը դար առաջ) Ուրարտու կոչուած երկրի մէջ — Վանայ լճի աւազանից մինչեւ մէջին Արաքսի (գուցէ եւ Սեւանի) աւազանը— ապրել է մի խայդիական մեծ ժողովուրդ, թերեւս հատուած մի ուրոյն ցեղի, որ պրոֆ. Ն. Մարրը «յաբէթական» է անուանում: Ուրարտացի խալդերը մշտական պատերազմների մէջ են եղել իրենցից հարաւ-արեւելք ապրող ասորացիների ու բաբելացիների հետ, յաճախ մեծաքանակ զերիներ են բերել այդ տաք տափարակներից կամ իրանք նուաճուել տափաստանների բնակիչներից եւ երկու դէպքում էլ՝ խառնուել են նրանց հետ:

Ապա (Ք. Ծ.-ից մօտ վեց դար առաջ) մի մեծ մարդկային հոսանք — այս անգամ արիական (հնդեւրոպական) ցեղի — եկել է Ուրարտու աշխարհը հեռու արեւմուտքից, բալքանեան թերակղզիից ու Փրիգիայից, նուաճել է երկիրը, նստել այստեղ ու խառնուել բնիկների հետ:

Ահա այս յաբէթական (քալդէական) ու արիական ցեղերի պատկանող ժողովուրդների խառնուրդն է, որ՝ մեր պատմութեան նախօրեակին՝ հիմն է դրել ապագայ հայ ազգին:

Յետագայում — արդէն պատմական շրջանում — մեր երկիրը մշտական կայան է եղել ցեղերի ու ժողովուրդների շարժման մեծ ճամբու վրայ: Ո՞վ ասես, որ չի տրորել իր ոտների տակ հայկական բարձրաւանդակը: Հայաստան մտել են, Հայաստանի վրայով անցել, մասամբ նստել ու ձուլուել են տեղացիների հետ՝ յաջորդաբար, տարբեր ժամանակներում՝ շատ տարբեր ժողովուրդներ,— պարսիկներ, պարթեւներ, միդիացիներ, ալաններ,

© National Library of Armenia

քուրդեր, հրէաներ, հոմոմէացիներ, բիզանդական յոյներ, արաբներ, վրացիներ, թուրք-թաթարական ցեղեր...

Սրանք բոլորը խառնուել են իրար,— խառնուել են ոչ թէ միակերպ ու հաւասար չափերով՝ միատոն բարդ արիւն կազմելու համար, այլ տարբեր շրջաններում տարբեր բաղադրութիւններով ու տարբեր չափերով եւ կազմել են ցեղային շատ տարբեր, շատ բազմերանգ խառնուրդներ:

Եթէ որեւէ տեղ (Եկեղեցիում, թատրոնական սրահում, շուկայում, ուխտատեղիում, հրապարակական միտինգում) հաւաքուած են մի քանի հարիւր հայ մարդ,— ուշադիր դիտողը կը դտնի այդ բազմութեան մէջ մի քանի տարբեր ցեղային տիպեր, աւելի կամ պակաս չնչտուած (մանաւանդ եթէ հաւաքուածները զանազան վայրերից են). տարբեր դիմագծեր, գանգերի տարբեր ձեւեր, մորթու եւ մազերի տարբեր գոյներ, աչքերի ու շրթունքների տարբեր նկարներ: Մէկը յոյնի է նման, միւսը՝ վրացու, երրորդը՝ հրէայի, չորրորդը՝ ասորու, քուրդի ... բայց եւ այնպէս՝ բոլորն էլ հայ են:

Ես ունէի մի շատ հետաքրքրական հաւաքածու՝ մի քանի տասնեակ լուսանկարներ իսկական հայ մարդկանց, որոնք ներկայացնում էին շատ տարբեր ցեղային տիպեր:

Եթէ հնարաւոր լինէր ենթարկել մարդկային արիւնը ցեղային վերլուծման, շատ հաւանական է, որ ամէնից աւելի չնչտուած, իսկական ու անվիճելի «հայ-քրիստոնեայի» երակների մէջ հետազօտողը գտնէր աւելի քրդական կամ պարսկական արիւն, քան հայկական:

Ի՞նչպէս որոշել ազգային պատկանելութիւնը այն մարդու, որի ծնողները տարբեր ազգերի զաւակներ են. ի՞նչպէս անուանել մէկին, որի հայրը անգլիացի է, մայրը՝ ֆրանսուհի,— արդեօք անգլո-ֆրա՞նկ ... բայց այդպիսի ազգութիւն չկայ: Իսկ, եթէ անգլո-ֆրանկը անզգուշութիւն արաւ մի զաւակ ունենալու գերման-իտալուհի կնոջից, ի՞նչ անուն տալ այդ խեղճ փոքրիկին,— արդեօք անգլո-ֆրանկո-իտալո-գերմա՞ն անուանել. կամ ասել թէ նա ոչ մի ազգութեան չի պատկանում, ազգային միութիւններից դուրս է, ապազգային է... Իսկ եթէ՝ բաղդի կատակով՝ այդ խառնուրդ արարածի անունն է Դերուլեդ կամ Տրեօչկէ, Մուսսոլինի կամ Մուստաֆա Քեմալ, Մկրտ. Խրիմեան կամ Ֆ. Դոստոեւսկի,— դարձեա՞լ ասել, որ նա ապազգային է:

Ռուսական հանդուցեալ ցար Նիկոլայը, գերմանական նախկին կայսր Վիլհելմը եւ Անգլիայի Գէորգ Ե. թագաւորը արիւնով շատ աւելի մօտ են իրար, քան իրանց ազգակից ռուսներին, գերմաններին ու անգլիացիներին: Արդ, եթէ կարելի է կասկածի ենթարկել Նիկոլայի ազգային տիպը, նրա ռուս լինելու աստիճանի բարձրութիւնը, յամենայն դէպս ոչ ոք չի կասկածի, թէ Գէորգ Ե. թագաւորը իսկական անգլիացի է եւ թէ՝ մանաւանդ՝ Վիլհելմ Բ. իսկական, անվիճելի ու շատ գունաւորուած գերմանացի է:

Արիւնը չէ (աւելի ճիշտը՝ միայն արիւնը չէ), այլ մի ուրիշ արիւնից աւելի զօրեղ բան կայ, որ անում է Վիլհելմին իսկական գերմանացի եւ սեմիթական շրթունքներ ունեցող մի հայ մարդուն՝ իսկական հայ:

Իրականութիւնն այն է, որ ժամանակակից քաղաքակիրթ մարդկութեան մէջ արիւնակցական միութիւնների, ցեղային հաւաքականութիւնների մասին կարելի է խօսել մեծ վերապահումներով միայն:

Շատ հին ժամանակներում, երբ բացակայում էին հաղորդակցութեան մատչելի միջոցներ եւ հաղորդակցուելու կարիքն էլ չնչին էր, երբ մարդկութիւնը ապրում էր միմեանցից կտրուած, անջատ հատուածներով (ինչպէս ապրում են այսօր վայրենի ժողովուրդները Աֆրիկայի խորքերում կամ Մեծ Ովկիանոսի կղզիների վրայ),— այն հին ժամանակները թերեւս դոյութիւն ունէին ցեղային ինքնատիպ, անխառն ու որոշակի սահմանուած ցեղային միութիւններ:

Բայց այն հին ժամանակներում (ինչպէս ներկայում վայրենիների մէջ) ազգեր չկային, ազգային հաւաքականութիւններ դեռ չէին կազմուած: Ազգերը ծնունդ են առել միայն պատմական շրջանում, քաղաքակրթութեան որոշ բարձրութեան վրայ,— այսինքն՝ այն ժամանակ, երբ վաղուց արդէն խախտուած էին ցեղային միութիւնները:

Եւ այսօր ցեղային կազմը՝ ինքն ըստ ինք-

© National Library of Armenia

եան՝ չի կարող բացատրել «ազգի» էութիւնը եւ՝ առաւել եւս՝ չի կարող սահմանել «ազգ» զաղափարը:

Ցեղը ազգ չէ եւ ոչ էլ ազգը՝ ցեղ:

II

Եւրոպական լեզուների մէջ «ազգ» բառին տրւում է յաճախ պետական իմաստ. ազգը (ֆրանսերէն nation, *լատինական* natio *բառից) հասկացւում է իբրեւ պետութիւն կազմող ժողովուրդ, պետութեան քաղաքացիների կամ հպատակների հաւաքականութիւն:*

Գաղափարների մէջ տարբերութիւն մրցրելու համար XVIII *դարի վերջերում, ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ, գործածութեան մէջ դրուեց «ազգութիւն» բառը,—* nationalite (national *բառից, որ ինքը* nation*-ի ածականն է): Իսկ նորերումս գիտնականները* (R. Yohannet) *յօրինել են նոյն իսկ* nationalitaire *ածականը՝* national *ածականից տարբերելու համար:*

Բայց բառերի ձեւափոխումը չի վերացրել գաղափարների շփոթը: Այսօր էլ nationalite *բառը չունի հայերէն «ազգի» իմաստը, այսինքն՝ չի նշանակում մարդկային մի ուրոյն միութիւն, այլ նշանակում է՝ կամ* nation*-ին պատկանող յատկութիւնների դումար կամ նոյն ինքը* nation: *Իսկ* nation*-ի իմաստը մընում է նոյնը, ինչ եղել է* XVIII *դարում, այսինքն՝ պետութիւն կազմող մարդկանց հաւաքականութիւն: Կան հեղինակներ* (Ramsay Muir), *որոնք այսօր էլ ոչ մի տարբերութիւն չեն դնում* nation *ու* nationalite (*ազգ ու ազգութիւն*) *բառերի միջեւ: Իսկ* Encyclopaedia Britanica*-ն (աշխարհահռչակ Բրիտանական Բառարանը) ազգութիւն բառին (անգլիերէն՝* Nationality) *տալիս է— իբրեւ առաջի մեկնութիւն — ճիշտ նոյն իմաստը, ինչ որ ունի ֆրանսիական* nation*-ը:*

Ֆրանսիացու համար la nation francaise *ասել է պարզապէս ֆրանսահպատակ ժողովուրդ եւ* le Francais — *ֆրանսիական հանրապետութեան քաղաքացի: Ազգութիւնը որոշւում է պետական պատկանելիութիւնով:*

Բառի այս իմաստով, մինչեւ 1918 *թուականը հայ ազգը գոյութիւն չունէր, ինչպէս գոյութիւն չունէր նաեւ հայ մարդը. ֆրանսիացու համար տաճկահայը* le Turque *էր, ռուսահայը՝* le Russe *եւ պարսկահայը՝* le Persan:

Տարիներ առաջ ես փորձ եմ արել բացատրելու մի ոչ-տգէտ ֆրանսիացու, որ հայ եմ, ռուս չեմ,— եւ յաջողութիւն չեմ ունեցել: Ազգութեան գաղափարը, նոյն իսկ ծագումը ֆրանսիացին կապում է անքակտելիօրէն պետական գաղափարի հետ:

Պարիզի ոստիկանութիւնը մի յատուկ բաժանմունք ունի, ուր պարտաւոր են արձանագրուել բոլոր օտարականները: Այդ հիմնարկութեան մէջ ձեր nationalite*-ն արձանագրւում է ըստ ձեր անցագրի, որ պետութեան անցագիր որ ունիք ձեռներումդ, այն ազգութեան էլ պատկանում էք:*

Վերսայլի դաշնագրով հիմնադրուած la Ligue des Nations*-ը իրօք* nation*-ների (ազգերի) դաշնակցութիւն չէ, այլ պետութիւնների դաշնակցութիւն: Եթէ այդպէս չլինէր, Լիգին չէին մասնակցի Հարաւային Ափրիկայի կամ Զուէյցարական դաշնակցութիւնները, չէին հրաւիրուի մասնակցելու Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, եւ՝ դրան հակառակ՝ կը հրաւիրուէին իրանդացիները, ֆլամանները, հրէաները, բասքերը, որոնք «ազգեր» են, թէեւ պետութիւններ չեն կազմում:*

Գաղափարների շփոթը բղխում է այն սրխալ ենթադրութիւնից, թէ ամէն մի ազգ կազմում է մի առանձին պետութիւն եւ ամէն մի պետութիւն կազմուած է մի առանձին ազգից,— այսինքն՝ պետութիւնը ուրիշ բան չէ, քան կազմակերպուած ազգ եւ ազգը ուրիշ բան չէ քան պետական միութիւն:

Իրականութիւնը այդ չէ, սակայն:

Անշուշտ, կան պետութիւններ ու ազգեր (եւ դա մեծ բախտաւորութիւն է), որ բաւականին մօտ են այդ իդէալական տիպին: Օրինակ՝ Ֆրանսիան, Իտալիան, Սպանիան, Շուէդիան, Նորվեգիան ... Այս պետութիւնները կարելի է անուանել — աւելի կամ պակաս վերապահումներով — ազգային կամ միազգեան պետութիւններ: Կարելի է ասել,— դարձեալ որոշ վերապահումներով,— թէ Ֆրանսիան կամ Շուէդիան կազմող քաղաքացիները պատկանում են համարեա ամբողջովին Ֆրանսիա-

© National Library of Armenia

կան եւ չուէդական ազգերին: Եւ՝ միւս կողմից՝ ֆրանսիական ու չուէդական ազգերը կազմող համարեա բոլոր զանգուածները մտնում են ֆրանսիական ու չուէդական պետութիւնների մէջ:

Այս տիպի պետութիւնները կազմուած են մօտաւորապէս մէկ ազգից միայն եւ այս կարգի ազգերը համարեա ամբողջովին պարփակուած են մէկ պետութեան մէջ միայն: Ազգային եւ պետական սահմանները նոյնն են համարեա եւ համապատասխան զաղափարները մօտաւորապէս ծածկում են իրար:

Բայց միազգեան պետութիւնների կողքին գոյութիւն ունեն նաեւ բազմազգեան պետութիւններ եւ այստեղ արդէն անվիճելիօրէն հանդէս է գալիս «ազգ» եւ «պետութիւն» զաղափարների բացարձակ անկախութիւնը:

Թիւրքիան, Ռուսիան ու Աւստրօ-Հունգարիան մեծ պատերազմից առաջ, իսկ բրիտանական կայսրութիւնը, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Զուիցերիական Դաշնակցութիւնը նաեւ այսօր — բազմազգեան պետութիւններ էին ու են:

Օսմանեան կայսրութեան մէջ, օսման թուրքերի հետ միասին, մտնում էին նաեւ արաբներ, առնաւուտներ, չերքեզներ, քուրդեր, յոյներ, հայեր, հրէաներ... Սրանք բոլորն էլ տարբեր ազգեր են, թէեւ պարփակուած էին մէկ պետական չրջանակի մէջ:

Ռուսական լայնածաւալ կայսրութեան մէջ, բացի ռուսներից ու իրենց ազգակից ուկրայինացիներից, մտնում էին նաեւ ֆիններ, էստոններ, լատիշներ, լիտուանացիներ, լեհեր, հրէաներ, թուրքեր, կիրգիզներ, սարթեր, չերքեզներ, լեզգիներ, վրացիներ, հայեր, գերմանացիներ... Սրանք բոլորն էլ հպատակ էին միեւնոյն ռուսական պետութեան, բայց ոչ մի ազգային կապակցութիւն չունէին ոչ իրար մէջ, ոչ էլ ռուսների հետ:

Հաբսբուրգների կայսրութեան մէջ, բացի գերմաններից ու հունգարներից, մտնում էին նաեւ չեխեր, սլաւոններ, իտալացիներ, կրոատներ, խօրուատներ, ռուսիններ, լեհեր, հրէաներ... Դարձեալ՝ բազմազան ազգեր նոյն պետական կազմի մէջ:

Նոյնը եւ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում (անգլիացիներ, իրլանդացիներ, գերմանացիներ, իտալացիներ, մեքսիքացիներ, հնդիկներ, նեգրեր, հրէաներ...)

Նոյնը եւ փոքրիկ Զուիցերիայում (գերմանացիներ, ֆրանսիացիներ, իտալացիներ):

Որո՞նք են այս պետական միութիւնները կազմող ազգային միութիւնները:

Զուիցերիական ազգ չկայ, ինչպէս չկան Հիւսիս-Ամերիկեան կամ Հարաւ-Ամերիկեան ազգեր: Կարելի է ասել՝ Ռուսիայի, Թիւրքիայի կամ Աւստրիայի հպատակներ, քաղաքացիներ, բայց չի կարելի ասել՝ Ռուսիայի ազգ, Թիւրքիայի ազգ, Աւստրիայի ազգ:

Իրական պետութիւնները (նոյն իսկ միազգեան համարուողները) պարփակում են իրանց մէջ — բացի հիմնական, թուով գերիշխող կամ քաղաքականօրէն տիրապետող ազգից — նաեւ ուրիշ ազգեր, աւելի կամ պակաս մեծ զանգուածներով: Պետութիւնը մէկ է, բայց այդ պետութիւնը կազմող ազգերը — մէկից աւելի: Կան պետական միութիւններ, բայց այդ միութիւնների չրջանակում ազգային միութիւններ չկան:

Իրականութեան մէջ պետութիւնները ազգայնօրէն միատարր չեն,— նոյն իսկ այնպիսի ազգային պետութիւններ, ինչպէս որ են Ֆրանսիան, Սպանիան, Շուէդիան, Պրուսիան եւայլն: Եթէ Ֆրանսիայում ֆլամաններն ու պրովանսալները վաղուց արդէն կլանուել են, ձուլուել տիրող ազգի մէջ, բրետոնները հիւսիս արեւմուտքում եւ բասկերը հարաւ-արեւմուտքում մինչեւ այսօր էլ պահել են իրենց ազգային անհատականութիւնը: Սպանիան մասամբ կոտրել, մասամբ արտաքսել ու մասամբ էլ ազգայնօրէն չեղոքացրել է մաւրերին ու հրէաներին. բայց բասկերը դեռ մնում են իրանց լեռների մէջ: Շուէդիայում բացի չուէդներից կան ֆիններ, ինչպէս եւ Պրուսիայում՝ բացի գերմաններից՝ կային խոշոր զանգուածներով նաեւ լեհեր ու լիտուանացիներ:

Միւս կողմից՝ միեւնոյն ազգը՝ միեւնոյն ազգին պատկանող մարդիկ յաճախ բաժանուած են լինում տարբեր պետութիւնների մէջ:

Ֆրանսիական ազգին պատկանող հատուածները զոյութիւն ունեն նաեւ Ֆրանսիայի սահմաններից դուրս, օրինակ՝ Զուիցերիա-

© National Library of Armenia

յում (Ժրնեի, Վոլգ եւ Նիչատելի կանտոնները)· գերմանացիները՝ Աւստրիայում, Զուիցերիայում, Հիւսիսային Ամերիկայում, Ռուսիայում· անգլիացիները՝ նոյն Միացեալ Նահանգներում (եթէ հաշուի չառնենք Կանադան, Աւստրալիան կամ Նոր Զելանդիան, որոնք պետականօրէն դեռ մնում են կապուած Անգլիայի հետ, բայց արդէն կանգնած են անջատման համար վրան)· սպանացիներն ու պորտուգալացիները՝ կենտրոնական ու հարաւային Ամերիկայի հանրապետութիւններում· թուրքերը՝ Ռուսաստանում (Ղրիմ, Վոլգա, Թուրքեստան, Անդրկովկաս) ու Պարսկաստանում (Ատրպատական)...

Այսինքն՝ միլիոնոյն ազգերը բաժանուած են տարբեր պետութիւնների մէջ· ազգային միութիւններ կան, բայց համապատասխան պետական միութիւններ չկան:

Յետոյ՝ կան ազգեր, որ ոչ մի պետութիւն չեն կազմում (կամ չէին կազմում ամենամօտ անցեալում): Մեծ պատերազմից առաջ Ֆիններն, լատիշները, Կուռնները, լիտուանացիները, լեհերը, չեխերը, սլաւոնները, իրլանդացիները, հայերը, վրացիները չունէին պետութիւններ, ինչպէս չունեն մինչեւ այսօր բելգիական Ֆլամանները, բրետոնները, բասքերը, քուրդերը, լաղերը, չերքեսները, օսերը, լեզգիները, վօտեակները, բուրեատները եւ ուրիշ մանր ազգերը:

Ազգերը կային (ու կան), մինչդեռ համանուն պետութիւնները չկային (ու չկան):

Մի ուրիշ հանգամանք եւս· պետական սահմանները անկայուն են, ենթակայ ամէն տեսակ պատահարների ու յանկարծական փոփոխումների, մինչդեռ ազգը շատ աւելի հաստատուն եւ տեւողական երեւոյթ է: Մի պատերազմի ու դաշնագրութեան հետեւանքով (իսկ անցեալում նաեւ վեհապետների ամուսնութեան պատճառով կամ ժառանգական կարգով) պետութեան սահմանները կարող են փոխուել մի օրուայ մէջ, բայց այդ սահմանների մէջ ապրող մարդիկ մնում են ազգայնորէն նոյնը, ինչ որ եղել են:

Անգլիացի պատմաբան Green–ը ասում է, որ պետութիւնը պատահական երեւոյթ է, որ հեշտութեամբ կարող է կազմուել ու լուծուել· մինչդեռ ազգը իրականութիւն է, որ ոչ կարելի է չինել, ոչ էլ քանդել:

Արտայայտութիւնը՝ իր կորուստներով՝ ոչինչ չէ· պետութիւնը պատահական երեւոյթ չէ եւ այնքան էլ հեշտութեամբ չի կազմուում· միւս կողմից՝ ազգութիւններն էլ չինուում են ու քանդուում: Բայց անհերքելի է, որ վերջին պրոցեսների համար հարկաւոր են դերազանցօրէն մեծ ոյժեր եւ շատ երկար ժամանակ — դարեր ու սերունդներ:

Մեծ պատերազմից յետոյ, մի–երկու տարուայ ընթացքում, մի քանի դաշնագրերով, Եւրոպայի ու Մերձաւոր Արեւելքի քաղաքական քարտէզը հիմնովին փոխուեց, մինչդեռ ազգագրական քարտէզը (բացառութեամբ թուրքական նահանգների Փոքր Ասիայում) մնաց նոյնը կամ համարեա նոյնը:

Էլզասի բնակիչները, որ 1870 թուականին համարւում էին ֆրանսիացի, հօ չէ՞ին կարող յաջորդ տարին գերմանացի դառնալ եւ ապա՝ կէս դար գերմանացի լինելուց յետոյ՝ 1919 թուականին նորից ֆրանսիացի վերածուել: Կարելի՞ է ընդունել, որ Թրաքիայի թուրքը — մի մարդ, որ ամբողջ կեանքը թուրք է եղել ոտից մինչեւ գլուխ, հոգով ու մարմնով, իր բոլոր բնազդներով, բոլոր հասկացողութիւններով ու հակումներով, իր ամբողջ ինքնագիտակցութիւնով — որ այդ թուրք մարդը՝ այսինչ քաղաքում այնինչ թուղթը ստորագրելուց յետոյ՝ յանկարծ հելլէն դառաւ (հելլէն ազգութիւնով եւ ո՛չ հպատակութիւնով) ու երկու տարի չանցած՝ Մուսթաֆա Քեմալ Փաշայի յաղթութիւնների շնորհիւ՝ դարձեալ թուրքացաւ: Կարելի՞ է ընդունել, որ մինչեւ այսինչ թիւը լեհական ազգը գոյութիւն չունէր եւ մի դեղեցիկ օր՝ համաձայն այնինչ դաշնագրի՝ ծնունդ առաւ ու ասպարէզ իջաւ, կազմ ու պատրաստ:

Ի հարկէ, ազգերը անսկիզբ չեն, ոչ էլ յաւիտենական: Ազգերը (ինչպէս եւ պետութիւնները) ծնւում են, ապրում, զարգանում, ծաւալւում ու մեռնում: Բայց — ասացի արդէն — այդ պրոցեսը կատարւում է շատ դանդաղ եւ երբեք չի կարող նոյնացուել պետական կեանքի հետ:

Յետագայում կը տեսնենք, թէ ի՛նչ մեծ նշանակութիւն ունեն պետական կազմակերպութիւնները ազգերի գոյութեան համար:

© National Library of Armenia

Բայց որքան էլ մեծ լինի այդ նշանակութիւնը, այնուամենայնիւ չի կարելի չտեսնել, որ ազգն ու պետութիւնը — տարբեր երեւոյթներ են, ազգային դաղափարն ու պետական դաղափարը — տարբեր դաղափարներ:

Ազգը պետութիւն չէ, ոչ էլ պետութիւնը՝ ազգ:

III

Պետական դաղափարի փոխարէն երբեմն առաջադրւում է աշխարհագրական դաղափար եւ ազգային միութիւններին տրւում է տերրիտորիալ (երկրային) միութիւնների բնոյթ, — տերրիտորիալ անկախ պետական սահմաններից, որոնք յաճախ արհեստական են ու միշտ երերուն, մինչդեռ աշխարհագրական սահմանները բնական չրջանակներ են՝ երկիրն ու նրա վրայ ապրող մարդկութիւնը անջատ հատուածների բաժանելու համար:

Իրողութիւն է, որ ազգերը յաճախ ստանում են իրանց անունները երկիրներից կամ՝ հակառակը՝ իրանց անուններով կնքում են երկիրները: Մեր հին պատմագրերն ու աշխարհագէտները ասում են. Հայք, Վիրք, Աղուանք, որ նշանակում է՝ հայերի երկիր, վիրերի (վրացիների) երկիր, աղուաններ երկիր: Միւս կողմից, Ֆրանսիական ազգը ստացել է իր անունը Ile-de-France դաւառից, իտալականը՝ Իտալիա աշխարհագրական անունից եւայլն: Անունների այս նոյնութիւնը ցոյց է տալիս անշուշտ, թէ ո՛րքան սերտօրէն կապուած եւ մօտ են եղել իրար՝ անունները յօրինողների ըմբռնողութեան մէջ՝ ազգ ու երկիր դաղափարները:

Իրողութիւն է նոյնպէս, որ ազգերը (ոչ միայն իրրեւ ժողովուրդներ, այլ նաեւ իրրեւ ազգեր) խիստ սերտօրէն կապւում են իրանց երկիրների հետ: Ամէն ազգ ունի մի աշխարհագրական վայր, որ իրանն է համարում. եւ այդ վայրը դառնում է մի տեսակ ազգային սիմբոլ (խորհրդանիշ), սրբազան անուն, սիրոյ ու պաշտամունքի առարկայ,— այն աստիճանի, որ եթէ նոյն իսկ ինքը իրը այլեւս գոյութիւն չունի, կորցուած է ազգի համար (ինչպէս Պաղեստինան կորցուած է հրէաների համար), նա շարունակում է յամառօրէն ապրել իրրեւ սոսկ դաղափար (սիօնիզմ):

Թերեւս կարելի լինէր աւելացնել մի-երկու դիտողութիւններ եւս յօդուտ «երկրային» տեսակէտի, բայց եւ այնպէս թէզը կը մնար անպաշտպանելի:

Եթէ ազգը լինէր ազգակցական միութիւն (ցեղային հաւաքականութիւն) կամ քաղաքական միութիւն (պետական կազմակերպութիւն), պարզ է որ երկրի նշանակութիւնը կը դառնար վճռական. ցեղային ինքնուրոյնութիւնը կամ պետական կազմը պահելու համար, մարդկային խմբակցութիւնները անհրաժեշտօրէն պիտի կապուին որոշ հողամասի հետ եւ ամփոփուին նրա սահմանների մէջ. Երկրից պոկուած՝ ոչ ցեղ կարող է լինել, ոչ պետութիւն:

Բայց ազգը ցեղային միութիւն չէ, ոչ էլ պետական եւ նրա կապը որոշ աշխարհագրական վայրի հետ չի հանդիսանում իրրեւ conditio sine qua non. ապացոյց՝ ազգագրական քարտէզները:

Դանուբի կամ Վոլգայի աւազանները, Կովկասն ու Անդրկովկասը, Հայկական Բարձրաւանդակը ու Փոքր Ասիան, Բալքանեան թերակղզին ամբողջովին ու Մակեդոնիան մասնաւորապէս, Ալպեան լեռներն ու Մերձ-Բալտեան երկիրը, Հիւս-Ամերիկեան մեծ տափարակը ու Կենտրոնական Ամերիկայի պարանոցը — սրանք բոլորն էլ որոշակի սահմանուած աշխարհագրական միութիւններ են, բայց սրանց բոլորի էլ ազգագրական քարտէզը շատ բազմագոյն է:

Տերրիտորիան (երկիրը) չի բնորոշում ազգը:

Ազգերը չեն պարփակւում միայն որոշ աշխարհագրական սահմանների մէջ, յաճախ դուրս են գալիս այդ սահմաններից, նուաճում են ուրիշ աշխարհագրական միութիւններ, տարածւում են երկրի զանազան կողմերը, պահելով հանդերձ իրենց ազգային դէմքն ու գիտակցութիւնը: Եւ ընդհակառակը. նոյն աշխարհագրական սահմանների մէջ կենակցում են մէկից աւելի ազգեր,—կենակցում են կողք-կողքի, յաճախ անբաժանելիօրէն խառնուած իրրեւ ժողովուրդներ, բայց որոշակի անջատուած իրրեւ ազգեր: Օրինակ՝ Միջին Եւրոպան, Բալքանեան թերակղզին, Փոքր Ասիան, Կովկասը:

© National Library of Armenia

Չպիտի չփոթել «ժողովուրդն» ու «ազգաբնակութիւնը» «ազգի» հետ. սրանք տարբեր բաներ են: Կայ Կովկասի ազգաբնակութիւն, Մակեդոնիայի ազգաբնակութեան, բայց չկայ կովկասեան ազգ, մակեդոնեան ազգ:

IV

Անդրկովկասի թուրքերը իրանց «մուսուլման» են անուանում: Զեն սիրում — նոյն իսկ վիրաւորական են համարում — թուրք կամ թաթար անունները: Թուրքի, պարսիկի, քուրդի, դաղստանցի լեզդու եւ Ղազանի թաթարի միջեւ ոչ մի տարբերութիւն չեն ուզում դնել. բոլորն էլ հաւասարապէս «մուսուլման» են:

Ազգային գիտակցութիւնը բացակայում է կամ ամբողջովին կլանուած է, ծածկուած կրօնական գիտակցութիւնով: Այն աստիճանի, որ փոխարէն ասելու՝ թուրքական գրականութիւն, դպրոց, թատրոն եւայլն, ասում են՝ մուսուլմանական գրականութիւն, դպրոց, թատրոն: Աւելին եւս. ասում են «մուսուլմանական լեզու»: Եւ վերջապէս՝ «մուսուլմանական ազգ»: Այս տարօրինակ արտայայտութիւնը ինձ պատահել է լսել շատ յաճախ թուրք մտաւորականների բերանից եւ կարդալ Բագուի թուրքական թերթերի մէջ:

Անդեանքներում (ինչպէս եւ մինչեւ հիմա ժողովրդական լայն զանգուածների մէջ) սա պարզապէս գիտակցութեան պակասութիւն է եղել. իսկ վերջի շրջանում, քաղաքակրթուած թուրքերի կողմից, արդէն քաղաքական խաղ է, հութիւնների գիտակցական ու միտումնաւոր քողարկում:

Բայց եւ այնպէս՝ գիտակցական թէ անգիտակցական՝ չփոթը տեղի ունի. ազգը նոյնացուում է կրօնի հետ, ազգը հասկացուում է իբրեւ դաւանական միութիւն:

Օսմանեան կայսրութեան մէջ հայ ազգը ճանաչուում էր իբրեւ կրօնական համայնք եւ տաճկահայերի «ազգային» անուանուած սահմանադրութիւնը իրօք ազգային չէ, այլ դաւանական, ինչպէս եւ «ազգային» անուանուած իշխանութիւնները իրօք ազգային չեն, այլ կրօնական-եկեղեցական (ապացոյց՝ լուսաւորչական ու ոչ-լուսաւորչական հայերը ունեն տարբեր սահմանադրութիւններ ու տարբեր իշխանութիւններ):

Պարսկահպատակ հայերն ու ասորիները պարսկական պաշտօնական գրութիւնների մէջ անուանուում են հաւասարապէս «քրիստոնեայ»: Պարսկական անցագրից չէք կարող իմանալ, թէ ի՞նչ ազգութեան է պատկանում անցագրի տէրը (հա՞յ է թէ ասորի, պարսի՞կ է, թուրք թէ քուրդ): Իմանում էք միայն որ քրիստոնեայ է կամ իսլամ: Պարսկական օրէնքը չի տարբերում հայը ասորիից, պարսիկը քուրդից, չի ճանաչում ազգային բաժանումներ, փոխարինում է այն դաւանական բաժանումներով կամ նոյնացնում է երկուսն էլ: Մէջլիսի (պարլամենտի) ընտրութեան ժամանակ Ատրպատականի հայերն ու ասորիները կազմում են ընդհանուր ընտրողական կուրիա, տալիս են ընդհանուր ներկայացուցիչներ. իբրեւ քաղաքական գործօն ազգային բաժանումները Պարսկաստանում հաշուի չեն առնուում, փոխարինուում են կրօնական բաժանումներով:

Տաճկական պետական վիճակագրութիւնը կազմուում է նոյն կարգով: Տաճկական համարակալութիւններով չէք կարող պարզել՝ օրինակի համար՝ Մակեդոնիայի ազգային կազմը. բոլոր մահմեդականները (այրանացիներն ու բուլգար «պօմակները» օսմանեան թուրքերի հետ անխտիր) անուանուած են հաւասարապէս «մուսուլման» եւ կազմած են մի ընդհանուր խումբ. բոլոր «պատրիարքականները» (պատրիարքի վերհսկողութիւնը ընդունողները), հակադրուելով «էքսարխականներին», անուանուում են հաւասարապէս յոյն, թէեւ սրանց մէջ կան նաեւ սերբեր, վլախներ, բուլգարներ: «Յոյն» անունը, որ պիտի բնորոշէր անհատի ազգային պատկանելիութիւնը, դալիս է բնորոշելու պարզապէս նրա եկեղեցական պատկանելիութիւնը. ազգային միութիւնը չփոթուում է եկեղեցական միութեան հետ:

Չպէտք է կարծել, թէ գաղափարների այս չփոթը յատուկ է միայն մահմեդական երկիրներին, մահմեդական ըմբռնողութեան:

Իմ աշակերտութեան ժամանակ ռուսական դպրոցներում լեհ տղաները արձանագրուում էին իբրեւ «կաթոլիկ», հայ-լուսաւոր-

© National Library of Armenia

չականները՝ «դրիգորեան», իսկ վրացիները— ռուսների հետ անխտիր — «ուղղափառ»: Ռուսական դպրոցը չէր ուզում ճանաչել լեհի, հայի կամ վրացու գոյութիւնը, չէր ուզում արձանագրել ու վաւերացնել ազգային բաժանումները եւ խառնում էր վրացուն ու յոյնին ռուսի հետ, լեհին՝ հայ-կաթոլիկի հետ, հայ-բողոքականին՝ գերմանացու հետ:

Նոյնը չէ՞ր եւ մեր մէջ շատ մօտ անցեալում (իսկ խուլ անկիւններում նաեւ այսօր):

Ցիշում եմ, դատարանում, դատաւորի հարցին, թէ հա՞յ ես, վկայ — դիւղացին պատասխանեց. ոչ, աղա, Ֆրանկ եմ:

Այս դիւղացու հասկացութիւնով կաթոլիկ հայը հայ չէ, Ֆրանկ (Ֆրանսիացի է): Եւ այս սխալը շատ է տարածուած մեր դիւղերի մէջ:

Հայը սիրում է անուանել իրան «հայ-քըրիստոնեայ»: Եւ «քրիստոնեայ» ասելով լուսաւորչական հայը բաժանում է իրան ոչ միայն մահմեդականներից կամ հրէաներից, այլ նաեւ քրիստոնեայ կաթոլիկներից, քրիստոնեայ բողոքականներից:

Ցաճախ կարող էք լսել, թէ այսինչ դիւղում այսքան տուն «հայ» կայ, այսքան տուն «կաթոլիկ» եւ այսքան տուն «բողոքական»: «Հայ» բառը, որ ազգութիւն պիտի ցոյց տար, հակադրւում է «կաթոլիկին» ու «բողոքականին», որ սոսկ դաւանական տերմիններ են:

Եթէ մի հայ ընդունում է մահմեդականութիւնը, ասում են՝ թուրքացաւ, այսինքն թուրք դարձաւ: Որոշ ծիսակատարութեան ենթարկուելուց յետոյ, մարդը դադարում է «հայ» լինել, դառնում է «թուրք»:

Ազգը նոյնացւում է կրօնական դաւանանքի հետ: Բայց իրականութիւնը չի արդարացնում այդպիսի նոյնացում, իրականութիւնը ցոյց է տալիս, որ ազգն ու եկեղեցին տարբեր միութիւններ են:

Իրականութեան մէջ չկայ քրիստոնեայ ազգ (կան քրիստոնէութիւն դաւանող տարբեր ազգեր միայն), չկայ բուդդայական ազգ, մահմեդական ազգ, ինչպէս չկան նաեւ կաթոլիկ ազգ, բողոքական ազգ, օրթոդոքս ազգ...

Անգլիական ազգը կազմող մարդիկ պատկանում են մասամբ կաթոլիկ եկեղեցուն, մասամբ բողոքական (իր ճիւղաւորութիւններով): Նոյնը եւ գերման ազգը, նոյնը եւ ֆրանսիականը: Հայ մարդիկ ոչ միայն լուսաւորչական են, այլ նաեւ բողոքական, կաթոլիկ:

Միւս կողմից՝ միեւնոյն կաթոլիկ եկեղեցուն պատկանում են տարբեր ազգութիւնների մարդիկ,— իտալացիներ, Ֆրանսիացիներ, իրլանդացիներ, լեհեր: Օրթոդոքս եկեղեցուն՝ ռուսներ, յոյներ, բուլղարներ, վրացիներ: Մահմեդական կրօնը դաւանում են արաբներ, թուրքեր, պարսիկներ, քուրդեր, հնդիկներ:

Այսինքն՝ մի ազգ — տարբեր դաւանանքների բաժանուած, մի դաւանանք — տարբեր ազգեր միացրած:

Բոլոր հասկացողութիւնների կատարեալ յեղաշրջում կը լինէր, եթէ Բավարիայի գերմանացուն ազգայնօրէն անջատէինք Բրանդենբուրգի գերմանացիից ու միացնէինք Նորմանդիայի Ֆրանսիացու հետ այն պատճառաբանութիւնով, որ երկուսն էլ կաթոլիկ են, իսկ բրանդենբուրգցին լիւթերական է: Կամ Մկրտիչ Խրիմեանին ազգայնօրէն անջատէինք Ղեւոնդ Ալիշանից ու միացնէինք ամբողջովին ռուսացած հանգուցեալ իշխան Աբամելիք Լազարեւի հետ այն պատճառաբանութիւնով, որ երկուսն էլ լուսաւորչական են, իսկ Ալիշանը կաթոլիկ է:

Ազգը կրօնական համայնք չէ եւ կրօնական համայնքը ազգ չէ:

V

Իմ մանկութեան ժամանակ (70-ական եւ 80-ական թուականներում) ազգասիրական երգերի մէջ շարունակ ու միշտ կողք-կողքի երգւում էին «ազգը, կրօնն ու լեզուն»: Այն չըբջանում սա մի տեսակ անբաժանելի երրորդութիւն էր, արթնացնող ազգային գիտակցութեան «հաւատամք»ը: Ցետագայում, երբ մի քիչ հասունացանք, ըմբոստացանք «կրօնի» դէմ, յայտարարեցինք այն՝ յետադիմական տարր, վճռականօրէն դուրս ձգեցինք սրբազան երրորդութիւնից եւ աւելի եւս ծանրացանք «լեզուի» վրայ: Եւ լեզուն (ու նրա հետ կապուած դպրոցը, գրականութիւնը, թատրոնը, մամուլը) դարձաւ «ազգի» սիմբոլը, ազգային պաշտամունքի առարկան:

© National Library of Armenia

Մի նոր գիւտ չէր, որ արել էինք մենք: Գիտնական մարդիկ վաղուց արդէն գլխի էին ընկել ու մատնանիշ արել լեզուն, իբրեւ ամենակատարեալը ազգային տարբերից: Ոչ միայն ամենակատարեալը, այլ գուցէ եւ միակ էականը: Մինչ այն աստիճանի, որ եղել են մտածողներ, որոնք ամբողջովին նոյնացրել են «ազգը» «լեզուի» հետ.—

Ազգը լեզու է, ազգային միութիւնը՝ լեզուային միութիւն: Միեւնոյն լեզուով խօսող մարդիկ են, որ կազմում են «ազգ» կոչուած հաւաքականութիւնը:

Այս հասկացողութիւնը, որ մասաւորապէս նշանակում է նոր հետազոտողների կողմից, գոյութիւն ունէր դեռ շատ հին ժամանակներում:

Բաբիլոնեան աշտարակը՝ ըստ բիբլիական աւանդութեան՝ չկառուցուեց այն պատճառով միայն, որ մարդիկ բաժանուեցան զանազան «լեզուների» ու դադարեցին հասկանալ միմեանց: Այս աւանդութիւնը թերեւս ուրիշ բան չէ, քան ազգերի ծագումը բացատրելու մի փորձ: Աւանդութեան հեղինակները ենթադրել են, թէ եղել է մի ժամանակ, երբ ամբողջ մարդկութիւնը խօսել է մէկ լեզուով (կազմել է մի ազգ՝ Նոյ Նահապետի սերունդը): Այս միութիւնը այնպիսի մի մեծ ոյժ է ներկայացրել եւ ոյժի գիտակցութիւնը ա՛յնքան բարձր է եղել միալեզու — միատարր մարդկութեան մէջ, որ նա՝ ամբարտաւանացած՝ յանդգնել է հակադրել իր զօրութիւնը Երկնային Զօրութեան ու ձեռնարկել է Աշտարակի շինութեան: Եւ ահա՝ Աստուածային հրամանով (կամ անէծքով) ընդհանուր լեզուն բաժանւում է յանկարծ տարբեր լեզուների (մարդկութիւնը բաժանւում է միմեանց չհասկացող անջատ ազգերի), առաջ է գալիս շփոթ ու խառնութիւն եւ յանդուգն գործը (երկինք հասնելու փորձը) մնում է անկատար:

Լեզուն էր, որ միացնում էր մարդկանց: Լեզուներն էին, որ բաժանեցին մարդկութիւնը:

Ռուսական հին ժամանակագրողները յաճախ «ազգ» բառի փոխարէն գործ են ածել «լեզու» բառը: Այսպէս, օրինակ. «եւ զինուեցան Սուրբ Ռուսիայի դէմ, եկան հրով ու սրով տասներկու լեզուներ»... Պարզ է որ լեզուները չէին, որ զինուեցան ու յարձակուեցան Ռուսիայի վրայ, այլ այդ տասներկու տարբեր լեզուներ խօսող տասներկու տարբեր ազգերը:

Լեզուն ընկերային կեանքի ամէնից հիմնական տարրն է, լեզուն ամէնից պարզ, բացայայտ ու հեշտ ըմբռնելի նշանն է մարդկանց իրարից տարբերելու եւ իրար հետ կապելու համար: Եւ զարմանալի չէ, որ վաղուց արդէն մարդկային խմբակցութիւնները բնորոշուել ու ճանաչուել են իրանց լեզուներով:

Սրանից մօտ երեսուն տարի առաջ Ռուսաստանում կատարուեց ընդհանուր ու միօրեայ վիճակագրութիւն՝ ազգաբնակութեան թիւն ու կազմը ստուգելու համար: Անկետային թերթիկների մէջ չէր դրուած հարց, թէ ի՞նչ ազգութեան ես պատկանում, բայց կար մի ուրիշը. ո՞րն է քո մայրենի լեզուն: Եւ յետագայում՝ վիճակագրական գումարումների ժամանակ՝ կայսրութեան ազգային կազմը բնորոշուեց նրա լեզուային կազմով. «լեզուն» նշանակուեց իբրեւ հոմանիշ «ազգի»:

Թերեւս ռուս պետական վիճակագրողները ընտրել էին այս տեսակէտը զուտ քաղաքական (եւ ոչ գիտական) միտումներով: Բայց նոյնը անում են նաեւ գերմանական, աւստրիական, հունգարական ու բելգիական վիճակագրողները: Ի հարկէ, այստեղ եւս կարելի է ունենալ նոյն կասկածը (բացառութեամբ գուցէ միայն Բելգիայի, որը ճանաչուած է իբրեւ ամէնից բարեխիղճը՝ ազգագրական վիճակագրութիւններ կազմելու մէջ): Բայց անհաւանական չէ և՛ուրիշ բացատրութիւն,— այն, թէ ազգային պատկանելիութիւնը ճշգրէն որոշելու համար ամէնից վստահելի միջոցը՝ լեզուային պատկանելիութիւնն որոշելն է: «Ազգութիւն» բառը ինքն ըստ ինքեան այնքան անորոշ է, որ կարող է շփոթի մէջ ձգել հարցաքննուողին, մինչդեռ «լեզուն» շատ պարզ ու ամէնքի համար մատչելի գաղափար է:

Բայց արդեո՞ք այդպէս է, արդեո՞ք ամէն մարդ կարող է առանց տատանումների ասել, թէ ո՞րն է իր իսկական լեզուն (ենթադրելով, ի հարկէ, թէ այդ մարդը գիտէ ու գործադրում է մէկից աւելի լեզուներ):

Նախ պէտք է նկատել, որ ամէն տեղ միակերպ չի դրուում լեզուի խնդիրը. մի տեղ հար-

© National Library of Armenia

ցընում են քո մայրենի լեզուի մասին, միւս տեղ՝ գործածական լեզուի մասին: Բայց սըրանք արդէն տարբեր բաներ են եւ վիճակագրական եզրակացութիւնները մեծապէս կախուած են նրանից, թէ ի՞նչպէս է դրուած հարցը:

Ի՞նչպէս որոշել պոլսեցնակ հայի կամ յոյնի գործածական լեզուն, եթէ չուկայում ամբողջ օրը նա խօսում է թուրքերէն, իսկ Երեկոյեան, իր ընտանիքի մէջ, հայերէն կամ յունարէն:

Կարծես հէնց այս դժուարութիւնը վերացընելու նպատակով բելգիական վիճակագրողները, 1910 թուականին, երկու լեզու (ֆրանսերէն եւ ֆլամանդերէն) խօսողների համար աւելացրել են մի լրացուցիչ հարց. ո՞ր լեզուն գործածում ես ամէնից շատ: Ենթադրենք, թէ Բրիւսելում ապրող ֆլամանդացին (ինչպէս պոլսեցնակ հայը կամ յոյնը) կարողացաւ բարեխղճօրէն հաշուել ու ստուգել, որ նա չուկայում օրեկան աւելի ֆրանսերէն բառ է արտասանում, քան իր տան մէջ՝ ֆլամանդերէն: Կարո՞ղ է այս զուտ թուաբանական հաշիւը որոշել, թէ ուրեմն հարցաքննուողի լեզուն ֆրանսերէնն է եւ ոչ ֆլամանդերէնը: Չուկայում նա շարունակ գործածում է առեւտուրի վերաբերեալ միեւնոյն տեքնիքական բառերն ու դարձուածքները (ապրանքի տեսակը, գինը, քանակը, դրամի կուրսը, արտասահմանեան չուկաների դրութիւնը եւայլն), մինչդեռ իր տանը, իր ընտանիքի մէջ, սիրոյ խօսքեր է ասում կնոջն ու ծնողներին, կատակներ է անում երեխաների հետ, հէքաթներ է պատմում նրանց, խօսում է իր ցաւերից ու հոգսերից, քաղաքական նորութիւններ է հաղորդում, վերյիշում է անցեալը, ծրագրեր է յօրինում ապագայի համար... Այսինքն՝ հոգեկան ամենախորը, ամենամտերիմ ու ամենաբարդ ապրումները նա արտայայտում է ֆլամանդերէն լեզուով: Կարելի է՞ ասել, թէ այս մարդու լեզուն — իսկական լեզուն, այն լեզուն, որով պիտի բնորոշուի իր ազգային պատկանելիութիւնը — ֆլամանդերէնը չէ, այլ ֆրանսերէնը, որովհետեւ նա աւելի շատ խօսում է ֆրանսերէն:

Դժուարութիւնները չեն վերանում, եթէ գործածական լեզուի փոխարէն դրուի մայրենի լեզուն:

Ի՞նչ ասել է «մայրենի լեզու»:

Հունգարական վիճակագրողները, 1890 թուականին, տուին հարցին հետեւեալ բացատրութիւնը. մայրենի լեզուն այն լեզուն է, որ երեխաները սովորում են մայրերից կամ խօսում են ամէնից լաւ կամ խօսում են գերադասօրէն:

Բայց այդ «կամ»երը արդէն չփոթ են մտցնում զաղափարի մէջ: Ես, օրինակ, ամէնից լաւ խօսում եմ ռուսերէն: Բայց իմ մայրենի լեզուն ռուսերէնը չէ, հայերէնն է: Մի բրետոնացի, որի մայրենի լեզուն բրետոներէնը է, կարող է գերադասել խօսել ֆրանսերէն լեզուով: Ի՞նչ պատասխան տանք տրուած հարցին ես ու այդ բրետոնացին:

Դանեմարքի վիճակագրողները, Շլեզուիգ նահանգի ազգաբնակութեան ազգային կազմը մայրենի լեզուով սահմանելու համար, տուին «մայրենի» լեզուին այսպիսի մեկնութիւն. Ա) Լեզու, որ ամուսինները (ծնողները) խօսում են իրար մէջ, Բ) Լեզու, որ ծնողները խօսում են զաւակների հետ, եւ Գ) Լեզու, որ երեխաները խօսում են իրար մէջ:

Այս մեկնաբանութիւնով վերացա՞ն արդեօք դժուարութիւնները:

Լա՛ւ է, եթէ այս երեք կարգի խօսակցութիւնները կատարւում են միեւնոյն լեզուով,— հարցի պատասխանը պարզ է ու հեշտ: Բայց եթէ այդպէս չէ, երեք կամ երկու լեզուից ո՞ր-ը հաշուել «մայրենի»:

Զպիտի մոռանալ, որ հարցաքննութիւնը նպատակ ունի ստուգելու իրականութիւնը այն դէպքերում, երբ ազգաբնակութեան լեզուային (հետեւապէս եւ ազգային) կազմը դառնում է վէճի առարկայ: Ի հարկէ, Տամբովեան նահանգի ռուսի համար կամ Տօսկանի իտալացու համար այս կարգի խնդիրները զոյութիւն չունեն. նա գիտի մէկ լեզու միայն եւ իր ազգային պատկանելիութիւնը ոչ մի կասկածի կամ վէճի չի ենթարկուած: Խնդիրը վերաբերւում է ազգայնօրէն այն խառն վայրերին, ուր լեզուները խաչաձեւում են, մրցում են իրար հետ, ծածկում են մէկը միւսին: Եւ այստեղ է ահա, որ առաջ են գալիս դժուարութիւնները:

© National Library of Armenia

1906 թուականին, Էջմիածնում գումարուած ռուսահայերի ազգային «կենտրոնական ժողովի» մէջ, ուր ի միջի այլոց քննութեան էր դրուած նաեւ ծխական դպրոցների հիմնական ծրագիրը, երկարատեւ ու շատ բուռն վիճաբանութիւնների առարկայ դարձաւ լեզուի խնդիրը:

Ո՞րը պիտի լինի դասաւանդութեան լեզուն հայ ծխական դպրոցներում: Աւաջի ու միաձայն պատասխանն էր՝ մայրենի լեզուն: Սա մի ընդհանուր ըմբոստացում էր ռուսերէն լեզուի դէմ (մայրենին հակադրւում էր ռուսերէնին), որ ցարական կառավարութիւնը յամառօրէն պատւաստում էր մեր մանուկներին, եւ այս կէտում ոչ մի տարաձայնութիւն չկար ժողովականների մէջ:

Բայց ի՞նչ ասել է մայրենի լեզու: Ո՞րն է՝ օրինակ՝ Գօրիարնակ (Վրաստան) հայ երեխաների մայրենի լեզուն: Չէ՞ որ հայ ծխական դպրոցները գոյութիւն ունեն նաեւ Հայաստանից դուրս,— օրինակ՝ Վրաստանում, ուր հայերը վաղուց մոռացել են ազգային լեզուն եւ խօսում են համարեա բացառապէս վրացերէն: Ի՞նչ լեզուով պէտք է աւանդուեն դասերը այդպիսի դպրոցներում:

Եւ ահա այստեղ էր, որ կարծիքները արմատապէս բաժանուեցին: Զուտ մանկավարժական տեսակէտի վրայ կանգնածները պնդում էին, որ Կախեթիայի կամ Քարթալինիայի հայ երեխաների մայրենի լեզուն վրացերէնն է, ուրեմն եւ դպրոցի լեզուն էլ պէտք է լինի վրացերէնը. սա մանկավարժութեան տարրական պահանջն է: Հակառակորդները մատնանիշ էին անում, որ դպրոցը ազգային ու քաղաքական ամենամեծ ֆակտորներից մէկն է եւ որ հայ դպրոցը նպատակ պիտի ունենայ ոչ միայն ընդհանուր կրթութիւն տալու հայ մանուկներին, այլ նաեւ ամրացնելու ու տարածելու հայերէն լեզուն եւ՝ մասնաւորապէս՝ սովորեցնելու հայերէն այն գաղութներին, որոնք՝ կտրուած հայրենիքից՝ կորցրել են դարերի ընթացքում իրանց իսկական մայրենի լեզուն եւ իւրացրել են օտար լեզու:

Մայրենի եւ ազգային լեզուի վէճն է սա, որ հեշտութեամբ չի լուծւում, երբ առաջ են գալիս լեզուի հետ կապուած ազգային ու քաղաքական հակումները:

Ցիշում եմ մի դէպք, որ շատ հետաքրքրական է այս կարգի դէպքերը բնորոշելու համար:

Վերեւում յիշատակուած ռուսական ընդհանուր վիճակագրութեան ժամանակ, Թիֆլիսում երեք հարազատ եղբայրներ, երեքն էլ համալսարանաւարտ, լեզուի վերաբերուող հարցին տուել էին երեք տարբեր պատասխաններ: Աւագը (Գէորգը) պատասխանել էր թէ իր լեզուն ռուսերէնն է: Միջնակը (Կոստանդինը)՝ հայերէնը: Կրտսերը (Վասիլին)՝ վրացերէնը: Եղբայրները ծագումով ու դաւանանքով հայ են, բայց ծնուել են Վրաստանում (Գօրիի գաւառում) ու այնտեղ էլ անց են կացրել մանկութեան տարիները:

Հայերէնի մէջ շատ տկար են, հազիւ կարողանում են կապել մի-երկու պարզ նախադասութիւն: Իրանց առաջի լեզուն եղել է վրացերէնը, բայց յետագայում — ռուսական դպրոցի, գրականութեան, հասարակական կեանքի ու իրանց պարապմունքների ազդեցութեան տակ — իւրացրել են լիովին ռուսերէնը, որը եւ դարձել է իրանց առօրեայ լեզուն:

Այս իսկ պատճառով Գէորգը ասում է, որ իր լեզուն ռուսերէնն է: Ճիշտ է, որ իր ծագումով նա հայ է, ճիշտ է նոյնպէս, որ իր մօր խօսած լեզուն եղել է վրացերէնը: Բայց գիտակցութեան հասած շրջանից ի վեր նա խօսել է, մտածել, կարդացել ու գրել է համարեա բացառապէս ռուսերէն:

Կոստանդինը ուրիշ կերպ է դատում: Ճիշտ է, որ իր առաջի լեզուն եղել է վրացերէնը, ճիշտ է նաեւ, որ այսօր նա խօսում է առաւելապէս ռուսերէն ու հայերէնի մէջ շատ թոյլ է: Բայց եւ այնպէս նա հայ է եւ, իբրեւ հայ, չի կարող ունենալ ուրիշ լեզու, քան հայերէնը:

Վասիլին համաձայն չէ ոչ մէկի եւ ոչ միւսի հետ: Նրա լեզուն վրացերէնն է, որովհետեւ այդ լեզուով նա թոթովել է առաջի բառերը եւ այդ լեզուով է սնուել մանկութեան հասակում: Իր ազգային լեզուն (հայերէնը) նա կորցրել է արդէն եւ այն մի քանի վայրկվերոյ նախադասութիւնները, որ կարող է արտասանել հայերէն, լեզու չէ: Իսկ ռուսերէնը օտար լեզու է իր համար, թէեւ այսօր նա ա-

© National Library of Armenia

մէնից լաւ գիտէ այդ օտար լեզուն, շարունակ խօսում է, գրում ու կարդում ռուսերէն:

Այս երեք պատասխաններից ո՞րն է ամէնից ճիշտը: Եթէ հարցը վերաբերուէր միմիայն լեզուին եւ տակը թաքնուած չը լինէր մի յետին միտք, պարզ է որ Կոստանդինի պատասխանութիւնը ամէնից թոյլն է եւ վէճի առարկայ կարող էր լինել միայն Գէորգի եւ Վասիլի տարաձայնութիւնը: Բայց եթէ հարցի յետին նպատակն է՝ որոշել հարցաքննուողի ազգային պատկանելիութիւնը, Կոստանդինի տուած պատասխանն է միակ ճիշտը,— որովհետեւ եթէ նոյն Գէորգին ու Վասիլին ուղղակի հարցրած լինէին թէ ի՞նչ ազգութեան ես պատկանում դու, երկուսն էլ առանց տատանուելու կը պատասխանէին՝ հայ եմ:

Ազգային կապակցութիւնը չի սահմանափակւում միմիայն լեզուային կապակցութիւնով:

Յետագայում կ՝աշխատեմ ցոյց տալ, թէ ի՞նչ մեծ արժէք ու նշանակութիւն ունի լեզուն «ազգը» կազմելու եւ ապրեցնելու համար: Ակներեւ է սակայն, որ որքան էլ սերտ կապուած լինեն ազգն ու լեզուն, սրանք այնուամենայնիւ տարբեր կարգի երեւոյթներ են եւ՝ որոշ չափով՝ անկախ մէկը միւսից:

Իրականութիւնն այն է, որ միեւնոյն ազգի պատկանող մարդիկ կարող են ունենալ տարբեր լեզուներ, ինչպէս էլ՝ դրան հակառակ՝ միեւնոյն լեզուն խօսող մարդիկ կարող են պատկանել տարբեր ազգութիւնների:

Ամերիկայի հիւսիսային նահանգներում ապրող նեգրերը խօսում են բացառապէս անգլերէն, ուրիշ լեզու չունին: Բայց այդ նեգրերը անգլիացիներ չեն: Մեքսիքացիք խօսում են իսպաներէն, բրազիլիացիք՝ պօրտուգալերէն, իրլանդացիք՝ անգլերէն, բայց ոչ մեքսիկացիք իսպանացի են, ոչ բրազիլացիք՝ պօրտուգալացի, ոչ իրլանդացիք՝ անգլիացի:

Վրաստանում (Կախեթիա, Քարթալինիա, Իմերեթիա) հայերը խօսում են վրացերէն, Թիֆլիսի լեռներում՝ քրդերէն, Կեսարիայում եւ Աղանայում՝ թուրքերէն: Բայց եւ այնպէս հայ են,— ոչ վրացի, ոչ քուրդ եւ ոչ թուրք:

Հրէաները՝ զանգուածօրէն՝ դարերից ի վեր կորցրել են իրանց ազգային լեզուն (եբրայերէնը) եւ ամէն մի երկրում խօսում են այդ երկրի լեզուով (լեհերէն, ռուսերէն, գերմաներէն, պարսկերէն, թուրքերէն, անգլիերէն, ֆրանսերէն...), բայց մնում են հրէա:

Եթէ ազգը լեզու լինէր եւ լեզուն՝ ազգ, ազգագրական քարտէզները ուրիշ կերպ պիտի դունաւորուած լինէին եւ այնպիսի ազգեր, ինչպիսի են իրլանդացիք, հրէանե՛ը կամ վալոնները, պէտք է բոլորովին դուրս ձգուէին քարտէզներից: Բայց դա չէր համապատասխանի դոյութիւն ունեցող հասկացողութիւններին: Մենք չենք տատանւում անգլիերէն խօսող նեգրին կամ իրլանդացուն՝ նեգր եւ իրլանդացի անուանել, գերմաներէն խօսող չեխին՝ չեխ, ռուսերէն խօսող հրէային՝ հրէա, տաճկերէն խօսող վրացուն՝ վրացի, քրդերէն խօսող հային՝ հայ...

VI

Կայ մի տեսակէտ, որ առանձնապէս ծանրանում է պատմութեան վրայ: Պատմութիւնն է որ՝ մի կողմից՝ բաժանում է մարդկութիւնը տարբեր ազգերի, իսկ միւս կողմից՝ կազմում է ու ամրացնում ազգային միութիւնները: Ընդհանուր կեանքը անցեալում, անցեալից կենդանի մնացած յիշողութիւններն ու աւանդութիւնները, ընդհանուր ապրումները, յաջողութիւններն ու մանաւանդ տառապանքները,— ահա սրա՛նք են, որ կապում են մարդկանց ի մի, ստեղծում են մի ուրոյն մտերմութիւն, ծնունդ են տալիս «մենք»ի ու «մեր»ի գիտակցութեան:

Ազգը — պատմական անցեալն է, մի ուրոյն կաղապար, որի մէջ ձուլուել է եւ ձեւաւորուել դարերի կեանքը:

Այդ տեսակէտը շատ պաշտպանելի կը լինէր, եթէ միայն կարողանայինք համաձայնութեան գալ թէ ինչպէս պէտք է հասկանալ «պատմութիւնը»:

Ո՞րն է այն «պատմութիւնը», որ ազգեր է կազմել անցնալում, ապրելու սնունդ է տալիս նրանց այսօր ու յոյսեր ներշնչում ապագայի համար:

Դա «ազգերի պատմութիւնն» է կամ «ազգային պատմութիւնների» գումարը:

Իսկ ո՞րն է «ազգային պատմութիւնը»:

Այդ հարցին պատասխան գտնելու համար

© National Library of Armenia

պէտք է գիտենանք կանխապէս թէ ինչ է ինքը «ազգ»ը... Այսպիսով ընկնում ենք անելանելի շրջանի մէջ եւ «ազգ»ը բացատրելու համար չենք կարող դիմել «ազգային պատմութեան», որովհետեւ այդ պատմութիւնը բնորոշելու եւ սահմանելու համար պէտք է նախ բնորոշենք ու սահմանենք «ազգ» գաղափարը:

Իսկ եթէ «պատմութիւնը» հասկանանք իր սովորական իմաստով — այնպէս, օրինակ, ինչպէս աւանդւում է այդ գիտութիւնը դըպրոցներում եւ արձանագրուած է բազմահատոր գրքերի մէջ — մեզ հետաքրքրող հարցին պատասխան չենք գտնի այնտեղ:

Դպրոցական պատմութիւնը էապէս պետութիւնների պատմութիւն է (լաւագոյն դէպքում — եւ այն էլ մասամբ միայն — ժողովուրդների պատմութիւն): Այդ գիտութիւնը տեղեկացնում է մեզ թէ ի՞նչպէս են կազմուել, բարգաւաճել ու զօրեղացել կամ կազմալուծուել ու քանդուել պետութիւնները, լաւագոյն դէպքում՝ ի՞նչպէս են ապրել այդ պետական շրջանակների մէջ ժողովուրդները (ժողովուրդները, բայց ոչ ազգերը):

Ընդհանուր կեանք, ընդհանուր յիշողութիւններ... Այո՛, բայց ի՞նչ կարգի կեանք եւ ի՞նչ կարգի յիշողութիւններ:

Հրէաները՝ դարերով՝ շատ ընդհանուր ու անմոռանալի յիշողութիւններ են ունեցել իսպանացիների եւ լեհերի հետ: Բայց այդ յիշողութիւնները չեն կապել նրանց ոչ իսպանացիների եւ ոչ լեհերի հետ:

Լիտուանացիք լեհերի հետ, լեհերը պրուսացիների եւ ուկրայնական ռուսների հետ, իրլանդացիները անգլիացիների հետ, չեխերը, սլաւոնները ու իտալացիները աւստրիական զերմանների, նորուեգացիները դանիմարքցիների հետ, ֆինլանդացիները սուեդների հետ ...,— սրանք բոլորը շատ երկար ժամանակներով ունեցել են ընդհանուր պատմական կեանք, բայց ազգային միութիւններ չեն կազմել եւ մնացել են՝ իրար կողքի՝ ազգայնօրէն անջատուած:

Հայերը Վրաստանում, Թիւրքիայում եւ Պարսկաստանում ապրել են երկար դարերով ու շատ ընդհանուր յիշողութիւններ են ունեցել վրացիների, Թուրքերի եւ պարսիկների հետ, բայց եւ այնպէս մնացել են հայ, մինչդեռ նոյն հայ ազգին պատկանող հատուածները Գալիցիայում կամ Ռումանիայում վաղուց արդէն դադարել են հայ լինելուց, կորցրել են իրանց ազգային դէմքն ու գիտակցութիւնը:

Կայ մի ուրոյն «պատմութիւն», մի ուրոյն ընդհանուր կեանք (եւ դա «ազգային» պատմութիւնն է, «ազգային» կեանքը), որ անջատում է Քարթալինայի, Իսֆահանի, Մուշի եւ Սվասի հային իր անմիջական դրացի վրացիներից, պարսիկներից, քուրդերից ու Թուրքերից եւ հեռաւոր վայրերում գտնուող հայ հատուածները կապում է ի մի:

Անշուշտ, ազգը պատմութիւն է: Բայց այնպիսի մի «պատմութիւն», որ ինքը կարօտ է երկար լուսաբանութիւնների եւ ապացոյցների՝ թէ իրօք գոյութիւն ունի:

VII

Աշխարհագրական վայրի (տերրիտորիայի) եւ պատմութեան հետ սերտօրէն կապուած են մի շարք առանձնայատկութիւններ, որ ընդհանուր առմամբ կոչւում են էթնոգրաֆիական (ազգագրական). սովորութիւններ, վարք ու բարքեր, առօրեայ նիստուկաց, աշխատանքի եւ տնտեսութեան միջոցներ ու ձեւեր, իրաւահասկացողութիւն ու իրաւակարգ, ընտանեկան փոխյարաբերութիւններ, հանրային կենակցութեան ձեւեր եւայլն:

Ճանաչ «ազգ» գաղափարը կապում են այս կարգի առանձնայատկութիւնների հետ եւ ազգային միութիւնները նոյնացնում են էթնոգրաֆիական միութիւնների, այսինքն՝ ազգը հասկանում են իբրեւ մի հաւաքականութիւն, որի անդամները ունեն ընդհանուր կենցաղ, սովորութիւններ, տնտեսական ձեւեր, իրաւահասկացողութիւն եւայլն:

Բայց բաւական է մի թեթեւ ակնարկ ձգել իրականութեան վրայ, որպէսզի հասկանալ այս տեսակէտի սխալը,— հասկանալ որ կենցաղը ինքն ըստ ինքեան անզօր է սահմանելու ազգը:

Պարիզաբնակ Ֆրանսիացին՝ իր կենցաղով՝ շատ աւելի մօտ է վիեննաբնակ զերմանացուն, քան նորմանդական գիւղացուն: Կուբանի կազակը՝ իր սովորութիւններով եւ վարք ու բարքով՝ շատ աւելի մօտ է չերքեսին քան Գերմի

© National Library of Armenia

նահանգի ռուսին։ Կախեթցի հայը՝ իր նիստուկացով եւ տնտեսութեան ձեւերով՝ շատ աւելի նման է վրացուն եւ սասունցի հայը՝ քուրդին, քան չիրակեցի կամ պոլսեցի հային։

Բայց այս նմանութիւնները կամ այս տարբերութիւնները չեն, որ որոշում են ազգային պատկանելիութիւնը։ Գարիզի գրիզետկան եւ նօրմանդական գիւղացին՝ ֆրանսիացի են երկուսն էլ. Կուբանի կօզակը ռուս է եւ ո՛չ չերքեզ, կախեթացի այդեպանը, Մոքսի կամ Սասունի լեռնականը, Աղանայի առեւտրականը ու պոլսեցի վարժապետը,— սրանք բոլորն էլ՝ Շիրակի հողագործի հետ միասին՝ հայ են եւ ո՛չ վրացի, քուրդ կամ Թուրք։

Արտաքոյ եւ անկախ էթնօգրաֆիական կապերից կան ինչ որ ուրիշ կապեր, որ կապում են Նիու Եորքի կամ Ամստերդամի բանկիր-հրէային՝ Լեմբերգի մանր արհեստաւորի եւ Երուսաղէմի բաբիի հետ, Շուարցւալդենի գիւղացուն՝ պրուսական գործարանային բանուորի ու Օստզէյեան բառոնի հետ, լոմբարդական փարթամ բուրժուային՝ կէս-վայրենի կօրսիկացու հետ, Պոլսոյ Փէսաւոր «Թաղականին»՝ Սիւնիքի ժայռերի վրայ Թառած չինականի հետ։

VIII

Կայ մի տեսակէտ, որ էապէս տարբերւում է նախորդներից։ Նախորդ բոլոր բացատրութիւնները ձգտում էին գտնելու ազգութիւնը սահմանող որ եւ է առարկայական հիմնաւորում,— ցեղ, պետութիւն, տերրիտորիա, կրօն, լեզու, պատմութիւն, կենցաղ,— վերջապէս, այնպիսի մի հիմնաւորում, որ անկախ լինէր ազգը կազմող մարդկանց գիտակցութիւնից, կամքից, ցանկութիւններից, հակումներից։ Սրան հակառակ, կան մտածողներ, որոնք հարցի ծանրութեան կենտրոնը փոխադրում են ամբողջովին ինքնագիտակցութեան կամ ինքնազգացման աշխարհը, «ազգը» յայտարարում են գերազանցօրէն ենթայական (սուբեկտիւ) երեւոյթ եւ նրա հիմնաւորումները որոնում են մարդկային անհատական կամ հաւաքական հոգեբանութեան մէջ։

Այս տեսակէտը — սրանից կէս դար առաջ — ունեցել է E. Renan-ը, ըստ որի ազգութեան հիմքը՝ ազգայնօրէն զգալու եւ մտածելու եղանակն է։

Keleti (որ 80-ական թուականներում եղել է Հունգարիայի վիճակագրական բիւրօի պետը) նմանեցնում է ազգը եկեղեցուն, ազգային գիտակցութիւնը՝ կրօնական գիտակցութեան, եւ այն կարծիքին է, թէ ազգային պատկանելիութիւնը՝ ճիշտ ինչպէս դաւանականը՝ կարող է լինել ազատ ընտրութեան առարկայ։

Աշխարհագէտ Hauser կարծում է որ ազգութիւնը՝ վերջի հաշուին՝ ուրիշ բան չէ, քան «հաւաքական գիտակցութեան փաստ»։

Zangwill որակում է ազգը իբրեւ «հոգեբանական երեւոյթ»։

Ապա՝ ազգութեան ենթակայական բնոյթի վրայ ծանրանում են մասնաւորապէս աւստրիական սոցիալ-դեմոկրատները (Otto Bauer, Schpringer)։

Այս տեսակէտը պարունակում է իր մէջ խոշոր ճշմարտութիւն եւ արժանի է յատուկ ուշադրութեան։ Բայց եւ այնպէս, դժուար չէ գտնել նրա թոյլ կողմերը, նրա պակասաւոր ու պայմանական բնոյթը։

Իսկապէս, սա պատասխան էլ չէ տրուած հարցին։ Ինքնազգացման կամ ինքնագիտակցութեան փաստ ասելով, մենք չենք կարող բացատրուած համարել ազգութեան էութիւնը։ Ամէն մի ենթակայական երեւոյթ ունի իր առարկայական հիմքերը, պայմանաւորող պատճառները, եւ քանի որ հիմքերը չեն գտնուած ու հասկցուած, երեւոյթը մնում է հարցական։

Ահա մի մարդ, որ իրան հայ է ճանաչում եւ հայ յայտարարում. ահա մի ուրիշը, որ ասում է, թէ ինքը Թուրք է։ Անհերքելի է, որ ենթակայական գիտակցութեան արտայայտութիւն է սա։ Բայց ինչո՞ւ այս մի մարդը «հայկական» գիտակցութիւն ունի, իսկ այն միւսը՝ «Թուրքական». որո՞նք են մէկի «հայութեան» եւ միւսի «Թուրքութեան» նախապայմանները։

Զուտ քաղաքական կամ զուտ իրաւական տեսակէտից այդպիսի հարց կարող է եւ չդրուել։ Քաղաքագէտի եւ իրաւագէտի համար անհրաժեշտ չէ որոնել ու գտնել աղբիւրները, բաւական է միայն գիտենալ, որ

© National Library of Armenia

այս մէկը իրան հայ է ճանաչում, միւսը՝ Թուրք։ Էականը՝ ինքը գիտակցութեան փաստն է, որովհետեւ ազգութիւնը՝ իբրեւ քաղաքական գործօն ու իրաւական դէմք՝ գոյութիւն ունի այնչափ միայն, որչափ նա գիտակցուած է եւ ընդունակ է արտայայտուելու այս կամ այն ձգտումի, այս կամ այն պահանջի ու սրանցից բղխող գործողութիւնների մէջ։

Եթէ յիշողութիւնս չի դաւաճանում ինձ (վաղուց է որ կարդացել եմ եւ այժմ ստուգելու հնարաւորութիւն չունեմ), Renan-ին մտահոգողը եղել է գլխաւորապէս այն հարցը, թէ ո՞ր ազգութեան հատուած պէտք է համարել Էլզաս-Լօրէնցիներին՝ Ֆրանսիա՞ն թէ գերմանական, եւ հետեւապէս՝ Ֆրանսիայի՞ն պէտք է կցուած լինեն այդ երկու նահանգները թէ՞ Գերմանիային (ազգային սկզբունքով ու անկախ զէնքի յաջողութիւնից, որ այն ժամանակ Գերմանիայի կողմն էր)։

Հասկանալի է, որ այս տեսակէտից վճռական տեղ պէտք է տալ Էլզաս-Լօրէնցու ենթակայական գիտակցութեանը, նրա ազատ ինքնորոշմանը, պէտք է հարցնել, թէ նա ինքը իրան Ֆրանսիացի՞ է զգում թէ գերմանացի, որի՞ հետ նա ինքը կապում է իրան ազգայնորէն։

Հասկանալի է նաեւ, որ այս յատուկ խնդիրը լուծելու համար, ազգասէր ու հայրենասէր Renan-ը (ծագումով հրէա, բայց արդէն ամբողջովին ֆրանսիացած), գիտակցօրէն կամ անգիտակցօրէն, մոռացութեան է տուել ազգութիւն կազմող մնացած բոլոր տարրերը եւ ծանրացել է միայն այս մէկի վրայ։ Քաղաքական պայքարի հանգամանքը հասկանալի է անում Renan-ի միակողմութիւնը, իսկ խնդրի ուրոյն բնոյթը՝ նաեւ արդարացնում այն։

Գետական պաշտօնեայ Keleti (թերեւս կատարելով իր կառավարութեան հրահանգը) չահագրգռուած է ներշնչելու, որ ամէն մի հունգարահպատակ մարդ կարող է՝ ինքնորոշման ճանապարհով՝ յայտարարել իրան հունգարացի (ազգային պատկանելիութեան մտքով) եւ այդպէս էլ արձանագրուել պետական ցուցակների մէջ,— թէկուզ ծագումով լինի ռուս կամ բումանացի, դաւանանքով՝ հրէայ, լեզուով՝ լեհ, կենցաղով՝ գնչու։ Գետութիւնը չահագրգռուած է զօրեղացնելու գերիշխող ազգութիւնը ի հաշիւ օտար տարրերի եւ՝ հետեւապէս՝ տրամաղիր է տալու «ազգութիւն» գաղափարին այնպիսի մեկնութիւններ, որ հեշտացնեն ձուլումը (թէկուզ միայն վիճակագրական ադիւսակների մէջ)։

Աւստրիական սոցիալ-դեմոկրատները մօտենում են խնդրին դասակարգային ու կուսակցական տեսակէտներից եւ փորձ են անում սահմանելու ազգութիւնների իրաւական դրութիւնը պետութեան մէջ։ (Իսկ ռուս-հրէական բանուորական «սեբպ» կուսակցութիւնը, զարգացնելով նոյն տեսակէտը, մշակեց ազգային-կուլտուրական արտա-տերրիտորիալ աւտոնոմիաների ծրագիրը)։ Բազմազգեան վայրերի մէջ պայքարող սոցիալիստական կուսակցութիւնների համար ազգութիւնը այն գործոններից մէկն է, որ «մթացնում է» պրոլետարիատի դասակարգային գիտակցութիւնը, պառակտում է մտցնում միջազգային պրոլետարական բանակի մէջ եւ բարդացնում է քաղաքական կացութիւնը, պետութիւնների, ժողովուրդների ու դասակարգերի փոխյարաբերութիւնները։ Հասկանալի է, որ սրանց եւս հետաքրքրում է գլխաւորապէս երեւոյթի ենթակայական կողմը,— ոչ այնքան «ազգ»ը ինքն ըստ ինքեան, որքան ազգային գիտակցութիւնը, նրա չափն ու ոյժը, արտայայտուելու ձեւերն ու միջոցները։

Քաղաքագէտը պէտք ունի գլխաւորապէս գիտենալ ու հաշուի առնել, թէ ի՞նչպէս եմ ես արտայայտուելու, ի՞նչպէս եմ «ինքնորոշուելու» ազգամիջեան բնոյթ ունեցող պայքարների հանդէպ։ Եթէ, օրինակ, կատարուում են պարլամենտական ընտրութիւններ ազգային կուրիաներով, ո՞րին պիտի միանամ ես։ Եթէ կան իրար հետ մրցող ազգային թեկնածութիւններ, ո՞ւմ պիտի տամ իմ քուէն։ Եթէ կատարուում է համաժողովրդական քուէարկութիւն ազգային որ եւ է վէճ լուծելու համար, ո՞ր կողմը պիտի անցնեմ ես։ Եթէ՝ պետութեան սահմաններում պատահելու լինին ազգամիջեան արիւնահեղ ընդհարումներ (ինչպէս նա տեղի ունեցաւ, օրինակ, Անդրկովկասում, 1905-06 թուականներին, հայերի ու Թուրքերի միջեւ), ո՞ր բանակին եւ ի՞նչ չա-

© National Library of Armenia

փով ոյժ պիտի տամ ես: Եթէ պատերազմ է ծագելու պետութիւնների միջև, ո՞ւմ կողմը պիտի լինի իմ համակրանքը, ո՞ւմ հետ եւ ո՞ւմ դէմ պիտի դաշնակցեմ (դաշնակցեմ ազգայնօրէն, անկախ իմ պետական պատկանելիութիւնից, ինչպէս արին այդ՝ մեծ պատերազմի ընթացքում հայերը, չեխերը, լեհերը): Եթէ միջդասակարգային պայքարը բարդանալու է միջազգեան հակամարտութիւններով, ո՞րչափ իմ ազգային գիտակցութիւնը կաշկանդելու է դասակարգայինը եւ՝ դրա հակառակը:

Պարզ է, որ այս կարգի հարցերին կարող է պատասխան տալ միմիայն իմ ազգային գիտակցութիւնը, նրա չափը, բնոյթը եւ խորութիւնը:

Քաղաքագէտի համար ես հայ եմ այնչափ միայն, որչափ զգում եմ ինձ հայ, գիտակցում եմ իմ հայ լինելը, ուզում եմ հայ մնալ եւ ընդունակ եմ՝ իբրեւ հայ՝ այս կամ այն գործողութեան:

Բայց արդեօք բաւակա՞ն է այսքանը իմ ազգային պատկանելիութիւնը որոշելու եւ «ազգ» գաղափարը սահմանելու համար:

Ոչ, բաւական չէ: Որովհետեւ ազգութիւնը ոչ միայն քաղաքական գործօն է, այլ նաեւ (ու գերազանցօրէն) մշակութային գործօն: Եւ այստեղ ենթակայական տարրը — գիտակցութեան փաստը՝ կորցնում է արդէն իր վճռական նշանակութիւնը:

Ազգը կարող է գոյութիւն ունենալ, արտայայտուել ու ազդել չրջապատի վրայ՝ իբրեւ մշակութային գործօն՝ նոյն իսկ առանց ազգային գիտակցութեան: Վրացիները՝ նոյն իսկ չունենալով վրացական ազգային գիտակցութիւն՝ կարող էին պատուաստել իրանց լեզուն Կախեթիա գաղթած հայերին: Քուրդը չունի ազգային գիտակցութիւն (ունի միայն մանր-ցեղային, տոհմային, աշիրէթական գիտակցութիւն), բայց եւ այնպէս նա սովորեցրել է Շատախցի կամ Մոկացի հային իր երգն ու պարը: Հայը կարող էր և՛ առանց ազգային գիտակցութեան ներշնչել վրացուն իր ճարտարապետական ոճը, ինչպէս եւ պարսիկը՝ անկախ իր գիտակցութիւնից՝ կարող էր կրկնել տալ հային՝ Դաւթի ու Մհերի ընդհարման մէջ՝ Ռուստէմի ու Զոհրապի ընդհարումը: Լեզուն, երգը, պարը, ճարտարապետական ոճը, վէպը,— սրանք բոլորն էլ ազգային ստեղծագործութեան արտայայտութիւններ են, որ կարող են զոյութիւն ունենալ ու անդրադառնալ չրջապատի վրայ՝ անկախ ազգային գիտակցութիւնից:

Եթէ ուզենանք մի քիչ աւելի խորը նայել, կը տեսնենք, որ նոյն իսկ քաղաքականօրէն արտայայտուելու համար անհրաժեշտ չէ գիտակցութիւնը, որին կարող է փոխարինել (եւ փոխարինում է յաճախ) ազգային բնազդը: Գիտակցութի՞ւն էր արդեօք (կամ միա՞կ գիտակցութիւն էր), որ՝ 1918 թուականի ջախջախիչ պարտութիւնից յետոյ՝ զինեց ու կազմակերպեց Անատոլիի թուրքին եւ Անգորայի անապատներից բերեց հասցրեց նրան մինչեւ Մարիցայի ափերը:

Գիտակցութեան արժէքի հետ բնականօրէն կասկածի տակ է առնւում նաեւ ինքնորոշման սկզբունքի արժէքը: Հասկանալի է, որ եթէ «ազգը» միայն գիտակցութեան երեւոյթ չէ, ուրեմն եւ ազգային պատկանելիութիւնը չի կարող սահմանուել միայն ինքնորոշման ճանապարհով:

Հակառակ Keleti-ի կարծիքին, ազգային կապակցութիւնների եւ կրօնական միութիւնների միջև կայ էական տարբերութիւն: Կրօնը, դաւանանքը՝ անհատական խղճի, անհատական ըմբռնումների կամ անհատական հաւատի խնդիր է (այնչափ, ի հարկէ, որչափ մարդը առհասարակ ընդունակ է ունենալու անհատական հոգեկան ապրումներ, անկախ ժառանգութեան ու միջավայրի ազդեցութիւններից): Մինչդեռ ազգային առանձնայատկութիւնները շատ զգալի չափերով ժառանգական ստացուածքներ են: Կրօնը կարելի է փոխել (ինչպէս կարելի է փոխել հպատակութիւնը, քաղաքական դաւանանքը, կուսակցութիւնը)· բայց փոխել ազգութիւնը, վերացնել վրայից ազգային ուրոյն տիպարը, ազատուել ժառանգօրէն ստացուած ազգային առանձնայատկութիւններից, հոգու ուրոյն կաղապարումից — անկարելի բան է: Սերունդները միայն կարող են կատարել այդ աշխատանքը· անհատը չի կարող, որքան էլ ցանկանայ:

Հայը կարող է անկեղծօրէն ընդունել մահմեդականութիւն, կարող է դառնալ շատ

© National Library of Armenia

ՁԵրմեռանդ, խորը հաւատացող, իսկական ու կատարեալ մուսուլման. բայց երբեք չի կարող դառնալ թուրք կամ արաբ: Սա արդէն ազատ ընտրութեան, կամքի, ցանկութեան ու համոզմունքի խնդիր չէ, այլ մի ուրիշ բան՝ շատ աւելի խորն ու արմատական: Հայը՝ իբրեւ քաղաքական միաւոր՝ կարող է չէզոքանալ, մոռանալ կամ հրաժարուել իր հայութիւնից, իւրացնել քաղաքական իդէալներ, որ պատկանում են մի ուրիշ ազգութեան (օրինակ՝ հրէայ Renan-ը ներշնչուած է ֆրանսիական ազգասիրութիւնով). կարող է նոյնիսկ դաւանանել իր ազգին, անցնել հակառակորդի կողմը (ցարական Ռուսաստանի նորագոյն պատմութիւնը բազմաթիւ օրինակներ է տալիս հրէական հրէաների): Բայց՝ չէզոք թէ դաւանան, անտարբեր թէ թշնամի, թրքական լըրտես թէ աշխարհաքաղաքացիութեան առաքեալ՝ նա դարձեալ կը մնայ հայ:

(Շարունակելի)

ԱՊՐՈՒԱԾ ՕՐԵՐ

Գրեց՝ ԱՐՄԷՆ ԳԱՐՕ

Մեր հանգուցեալ ընկերը, անցած հոկտեմբերին Պոսթընէն մեկնելու ատեն, յանձնեց խմբագրութեանս իր ձեռագիր յուշերը ամբողջութեամբ: Այդ յուշերն է որ այժմ Հայրենիք ամսագիրը կը սկսի հրատարակել:

ԽՄԲ.

I

ԲՕՇԱ ՀԱՐՍԻՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

1910 թուականին, երբ կնոջս եւ որդուս հետ միասին Բաթում դուրս եկանք նաւէն, ոուս ժանտարմները մեզ շրջապատեցին եւ երեքիս ալ Թիֆլիս տարան, ուր ինձ բանտարկեցին ժանդարմներու վարչութեան չէնքին մէջ: 17 օր այնտեղ բանտին մէջ պահելէ յետոյ ինձ իբրեւ օսմանեան երեսփոխանի ետ ուղարկեցին Կ. Պոլիս:

Երկու տարի յետոյ, երբ գնացի Կարին՝ ամբողջ տարի մը անցնելու համար հայրենի տանս մէջ, ձմեռուայ երկար իրիկունները կը նստէի մայրիկիս կողքին եւ իրեն պատմել կուտայի մեր ընտանիքի անցեալ կեանքէն ու դէպքերէն:

Երեկոյ մը, երբ խօս[illegible] Թիֆլիսի բանտարկութեան վրայ, մայրիկիս հարցուցի, թէ չա՞տ վախեցաւ իմ բանտարկութեան լուրն առնելով: Մայրիկս, աչքերուս մէջ նայելով, ինքնավստահ կերպով ինձ յայտնեց, որ բոլորը շատ վախեցան, բացի իրմէն:

— Ես գիտէի, որ քեզի փորձանք չի կարող պատահիլ,— ըսաւ մայրիկս՝ ճակատս համբուրելով:

— Ինչէ՞ն գիտէիր, մայրիկ ջան,— հարցուցի իրեն:

Ահա թէ ինչ պատմեց ինձ իմ մայրը այն անմոռանալի իրիկունը:

«— Պալա ջան, երբ ես քեզմով երկու հոգիս էի, օգոստոս ամսին (1872) կօկոզ (մեծ մայրս) ու ես մեր տան դռանը կանգնած էինք ու փողոցը կը դիտէինք: Դռան առջեւէն երկու բօշա անցան. մէկը տարիքով կնիկ մ'էր, իսկ միւսը շատ գեղեցիկ հարս մը. գետինը մտնողին մազի հուսերը մինչեւ կրունկները կը հասնէին:

Կօկոզ դարձաւ ու հարցուց.

— Աղջի բօշա, ֆալ կը նայի՞ս:

— Ինչո՞ւ չէ, խանմ ջան, քառասուն փարա տուր՝ աչեմ:

Բօշաները մօտիկցան մեզի. կօկոզ ներսէն մէկ ման ջուր բերել տուեց ու այն սիրուն հարսը չոքեցաւ գետին եւ սկսաւ նայիլ ջրին մէջ: Բաւական երկար նայելէ յետոյ՝ մէկէն երեսը շուռ տուեց դէպի պատը եւ ըսաւ.

— Վա՛յ, խանմ ջան, շատ գէշ բան է տեսածս:

— Ի՞նչ է տեսածդ, ըսէ՛, գետինը մտնես, ըսէ՛:

— Չէ, չեմ կրնայ, խանմ ջան. այս տան գլխուն մեծ քեատիբ մը պիտի գայ,— ըսաւ

© National Library of Armenia

ու ամանին ջուրը չփրթեց հեռուն:

Կոկող շատ տխրեց: Բոշանները ոտքի ելան իրենց ճամբան շարունակելու: Բայց նա զբաղանքն նորէն քառուսունոց մը հանեց եւ, բոշային տալով, ըսաւ.

— Հիմա դնա՛, աղբիւրէն նոր ջուր բեր եւ այս անդամ հարսիս ֆալը նայէ:

Բոշան իսկոյն հրամանը կատարեց եւ քանի մը բոպէ ջրին մէջ նայելէ յետոյ ըսաւ.

— Խանում ջան, հարսդ մանչ է բերելու. շատ բախտաւոր աստղի տակ է ծնելու այս Երեխան. իր բախտը չը կտրելու համար մազէ մաղի վրայ առէք երեխան եւ մաղին վրայ էլ լուացէք: Ձեր գերդաստանին մէջ ամէնքէն բախտաւորն է լինելու, շատ փորձանքներ է տեսնելու իր կեանքին մէջ, բայց ամէն անգամ իր աստղը զինքը պահելու է: Շատ յայտնի մարդ է դառնալու, աշխարքէ աշխարք մանպիտի գայ...

Մէկ ամիս չ'անցաւ այդ օրէն, եւ Թուրքերը սպաննեցին պապդ՝ Խաչատուր էֆէնտին:

Վեց ամիս յետոյ դուն աշխարք եկար, եւ ես այսօրուայ պէս կը յիշեմ, թէ ի՞նչպէս կոկող ամուր ձայնով աղախիններուն կը հրամայէր, երբ ես քու ցաւերովդ էի.

— Աղջի Ըռձուն, վազէ խոհանոցէն մազէ մաղ մը բեր. այն բէմուրատ բոշային խօսքը դուրս եկաւ. երեխին մաղին վրայ առնենք, որ բախտը չկտրուի:

Եւ այդպէս էլ ըրին: Քեզ դրին մազէ մաղին վրայ եւ այնտեղ լուացին:

Ահա թէ ինչո՞ւ ես չէի վախնար, երբ լսեցի, թէ ռուսները քեզ բռնել էին. գիտէի որ պիտի ազատուէիր»:

Այս պատմութիւնը վերջացնելէն յետոյ մայրիկս ինձ տուաւ հետեւեալ հարցումը.

— Գալա ջան, այն ի՞նչ պաշտօն էր, որ Թուրքերը կ'ուզէին քեզ տալ եւ դուն չես ուզեցեր: Տղաքը ըսին, բայց լաւ չհասկցայ,— նպա՞ր թէ վէզիր, կ'ըսէին: Մտքովս կ'ըսէի, ահա՛ բոշային միւս ըսածներն էլ են լինելու:

— Բա՛ն չունիս, մայրիկ ջան. Թուրքին նպարն էլ իր գլուխն ուտէ, վէզիրն էլ. քու տղադ ափսոս չէ, որ երթայ Թուրքին նպիր դառնայ?

Իմ այս խօսքերուն վրայ մայրիկս ինձ մի կուշտ համբուրեց ու ըսաւ.

— Հա քու հոգուդ մատաղ, Թուրքն ո՞ւմ շունն է որ դուն անոնց նպիրը դառնաս:

Մայրիկիս այս պատմութիւնը ինձ համար պարզեց գաղտնիք մը եւս, որի համար շատ դլուխ էի յոգնեցուցած մանկութեանս օրերուն առանց հասկնալու: Տարիներ առաջ, երբ ես փոքրիկ երեխայ էի, ամէն անդամ, որ նոր լուսինը կ'երեւար հորիզոնին վրայ, Մամս, կոկոն, աչքերը կը փակէր եւ աղախինները կ'ուղարկէր որ գային ինձ գոնէին տանը կամ պարտէզին մէկ անկիւնը եւ ձեռքերէս բռնած տանէին Մամիս մօտ: Եւ, երբ նա կը զգար, որ ես իրեն մօտն էի, աչքերը կը բանար ու իմ աչքերուս մէջ կը նայէր երեք անդամ լուսինին նայելէն յետոյ եւ յետոյ գիս կը համբուրէր ու կ'ըսէր.

— Դէ՛ դնա, խաղա՛, մանչս:

Շատ անդամ Մամիս հարցուցեր եմ, թէ ինչո՞ւ տանը միւս երեխաներուն հետ էլ նոյն բանը չէր ըներ, եւ ամէն անդամ ինձ կը պատասխանէր.

— Քու աստղդ ուրիշ է, մանչս:

II

ՍԱՌԱՆ ՈՒ ՄԷՄՄԷՏ ԱԽՊԱՐԸ

Քանի որ այսքան հին բաներով սկսայ, պատմեմ նաեւ իմ ամենահին յիշողութիւններէս մէկը:

1876 Թուականի ամրան, երբ իմ հայրիկս Գոլսէն վերադարձաւ եւ ես հազիւ 3½ տարեկան էի, լաւ տփոց մը կերած եմ ինձ պահող աղախին Սառայէն: Այսօրուայ պէս կը յիշեմ, թէ ինչպէս մեր տան հաւատարիմ Մէմմէտ ախպարը ինձ ազատեց այն չար Սառային ձեռքէն:

Կիրակի օր էր, եւ ես հազել էի հայրիկիս Գոլսէն բերած բաց կապոյտ Թաւիշէ շինուած եւ ոսկի Թելերով ասեղնագործուած նոր հագուստներս: Սառան ձեռքէս բռնած ինձ կը պտտցնէր ամէն կողմ եւ ոչ մի բոպէ ինձ առանձին չէր Թողուր: Մեր դրացիներուն երեխաները, իմ սովորական խաղի ընկերներս, բոլորը հաւաքուած էին մեր դռան առջեւը եւ կը խաղային, ծառաստանին մէջէն անցնող ա-

© National Library of Armenia

ուներէն ջրաղացներ չինելով։ Իմ սիրելի ժամանցն էր այդ, բայց անիրաւ Սառան թեւս բոպէ մը բաց չէր թողուր, որ վազէի խառնուէի միւս երեխաներուն հետ։

Արդէն սկսել էի ատել նոր զգեստներս։ Սառայէն խնդրեցի փոխել հագուստներս, որպէսզի ես էլ մասնակցէի միւսներուն խաղին, բայց անկարելի եղաւ խօսք հասկցնել իմ բրոնապետ աղախինին։

Մինչ ես այս մտատանջութիւններուն մէջ էի, յանկարծ ներսէն Մամիս ձայնը եկաւ, որ Սառային կը կանչէր։ Սառան ուզեց ինձ իրեն հետ քարշ տալ դէպի ներս, բայց ես ապստամբեցայ եւ չգացի։ Ինձ թողնելէն առաջ նա մատը թափ տալով սպառնաց, որ, եթէ ես երթամ ջրին հետ խաղալու, վերադարձին իմ կաշիս պիտի քերթէ։ Բայց հազիւ նա ներս գնաց, ես վազեցի իմ խաղի ընկերներուս մօտ եւ ոտքով ձեռքով մտայ ցեխին ու ջրին մէջ՝ անոնց ցոյց տալու, թէ ի՞նչպէս չինելու էին ջրաղացին առուն։ Մէկ կողմէն իմ չինարար զործովն էի զրաղուած, միւս կողմէն աչքս դռանն էր, թէ ե՞րբ Սառան պիտի վերադառնայ ու հարամ ընէ իմ խաղս։

Եւ ահա դռան սեմին վրայ երեւցաւ իմ հողէաս հրեշտակս եւ՝ երկու ձեռքերը գլխին զարնելով՝ պոռաց.

— Վայ, քոռանամ. ծօ, ատ ինչ ըրիր վըրադ գլուխդ։

Սառային ձայնը լսածիս պէս ես վազեցի դէպի հեռուն. խելքովս կ՚ուզէի փախչիլ դէպի մեր դրացիներուն տունը, որ անոնք ինձ պաշտպաննեն։ Բայց Սառան հասաւ ետեւէս, զիս բռնեց մէջքէս եւ, գլուխս դէպի իր կոնակը դարձնելով, սկսաւ իր չոր ձեռքերով հարուածներ տեղալ փափուկ տեղերուս։ Երկու ձեռքերովս սկսայ իր մազերուն հուսերը քաշել բոլոր ուժովս եւ ոտքերովս աքացիներ տալ։ Բայց ինչ օգուտ. յաղթութիւնը Սառային կողմն էր։ Բարկութենէս, ցաւէս աչքերը սկսաւ մթնիլ աչքերուս։ Եւ ահա այս տուր ու տնփոցին մէջ իմ սիրելի Մէմմէտ ախպօրը ձայնը լսեցի.

— Աղջի, զետինը մտնես դուն, չան ծիծ կերած, խեղճ երեխին սպաննեցիր,— ըսաւ ու ինձ խլեց Սառային ձեռքէն, իրեն էլ լաւ ապտակ մը չփփացնելով։

Եւ այն օրէն սկսած մեր ծառաներուն մէջ ինձ համար ամենասիրելին Մէմմէտ ախպարն էր, եւ մեր այդ մտերմութիւնը շարունակուեց մինչեւ անոր մահը։

Երբ վերջին անգամ զինքը տեսայ 1908ին, իր մահուընէն քանի մը ամիս առաջ, մեր ծերունի Մէմմէտը զիս զրկեց համբուրեց եւ մի կուշտ լաց եղաւ, որ հայրիկս կենդանի չէր այլեւս՝ ինձ տեսնելու համար։

III

ՄԵՐ ՔԻՒՐՏ ՔԻՐՎԱՆԵՐԸ

Պապս՝ Փաստրմաճեան Խաչատուր էֆէնտին, որին Թուրքերը սպաննեցին 1872–ին, շատ տարօրինակ մարդ մ՚էր։ Ուսում չունէր, բայց բնականէն խելօք ու աշխատասէր էր եւ բնաւորութեամբ անվախ, տարտիման մէկն էր։ Իր ուզած չափով հարստութիւն դիզելէ ետքը, սկսած էր աջ ու ձախ բարերարութիւններ մշակել արեւելեան ձեւով։ Ի մէջ այլոց իր սրտին շատ մօտ էին բոլոր բանտարկեալները, ինչ ազգութեան էլ պատկանէին։ Սովորութիւն էր ըրած ամէն ուրբաթ եւ կիրակի օրերը քաղաքին բոլոր բանտարկեալներուն տընէն կերակուր ուղարկելու. ուրբաթ օրերը՝ իսլամներուն, իսկ կիրակի օրերը՝ քրիստոնեաներուն։ Եւ երբեմն էլ ինքը անձամբ կ՚երթար բանտարկեալներուն այցելութեան, իրեն հետը առնելով իր զրպարտն ու փաստաբանը։ Հարց ու փորձ կ՚ընէր բանտարկեալներուն թէ ինչու համար էին բռնուած, եւ երբ կը համոզուէր անոնց անմեղութեանը մէջ, իր փաստաբանին կը հրամայէր հետապնդել անոնց դատը եւ բոլոր անհրաժեշտ ծախսերը ինքը կը հոգար։

Իր այս սովորական այցելութեանց միջոցին, օրին մէկը կը հանդիպի քիւրտ բէգի մը որ 8-10 զօրամներովը, Խնուսի կողմերէն բերուած էր։ Հարց ու փորձ ընելով՝ կ՚իմանայ, որ շատ լուրջ մեղադրանքով էին բանտարկուած, իբրեւ ապստամբներ պետութեան դէմ։ Այդ այն ժամանակն էր, երբ Թուրք կառավարութիւնը, բէյերքաններուն ապստամբութիւնը զսպելէն յետոյ, սկսեր էր սիսթէմաթիք հա-

© National Library of Armenia

լածանք քիւրտ աշիրաթներուն դէմ Հայաստանի բոլոր գաւառներուն մէջ, եւ ամիս չէր անցներ, որ մի քանի քիւրտեր չկախուէին այս կամ այն քաղաքին մէջ:

Խաչատուր էֆէնտին դրամի եւ խաթրի միջոցով, երկար չարչարուելէ յետոյ, կ'ազատէ կախաղանէն Տալտան բէգն ու իր մարդիկը եւ կը տանի իր տունը, ուր շաբաթներով հիւրասիրելէ ետքը, վրանին գլուխնին կը նորոգէ ու ճամբու կը դնէ:

Շատ չանցած Տալտան բէգը քանի մը ձիաւոր կ'ուղարկէ Խաչատուր էֆէնտին մօտ երեք հատ Խնուսի պատուական ժոյգներ նուէր ղրկելով, եւ կը խնդրէ, որ մերոնցմէ մէկն ու մէկը երթայ իրենց մօտ Տալտան բէգի տղուն ամուսնութեանը քիրվա լինելու: Պապս իր փոքր եղբայրը՝ Սարգիս էֆէնտին կ'ուղարկէ այդ ծիսակատարութեանը ներկայ լինելու, եւ այսպիսով մեր երկու ընտանիքները քիրվայ դարձած էին 60-ական թուականներուն:

Մեր քիրվայութիւնը կը շարունակուէր կանոնաւոր կերպով: Պապիս սպանման առթիւ Տալտան բէգը 20 ձիաւորով եկած էր Կարին մեր տան պաշտպանութեանը համար: Յետոյ վրայ եկաւ ռուս-Թուրքական պատերազմը: Տալտան բէգը 800 ձիաւորով մտաւ Կարնոյ դաշտի մեր Բլուր գիւղը եւ ինքը 40 հոգիով եկաւ քաղաք, մեր տունը իջաւ, որպէսզի Թուրք կառավարութեան հետ, իր պայմանները որոշելէն յետոյ, քալէ դէպի Ղարս: Այդ օրերը Կարնոյ քաղաքը դրեթէ կտրուած էր Բասենէն, եւ հացի գները սկսած էին օր աւուր բարձրանալ: Ալիւրի լիտրը 5 դրուշէն քանի մը օրուան մէջ բարձրացաւ 50-60 դուրուշի: Քաղաքին ապրուստ ապրանակչութեանը համար այս գները համահաւասար էին սովի: Ճիշդ այդ միջոցին մեր ընտանիքի բոլոր ամբարները լիքն էին ալիւրով եւ ցորենով. նախորդ 2-3 տարին այնքան առատ հունձ էր եղած եւ գները այնքան ընկած էին, որ մերոնք պահել էին մեր կալուածներու 3 տարուայ եկամուտը լաւ գներով ծախելու յոյսով:

Քաղաքին մէջ վայնասուն էր: Հայ թէ Թուրք մեր բոլոր դրացիները թափեցան մեր տունը եւ Մամիս ոտքերն ընկան խնդրելու, որ հրամայէ մեր ամբարները բանան եւ սովորական գներով աղքատ ժողովուրդին բաժնեն:

Կոկօն հօրս յայտնեց այս եղածի մասին եւ իրմէն խօսք առաւ, որ օգտուելու չէր ժողովուրդի այս նեղ դրութենէն:

Յաջորդ օրը քաղաքին բոլոր թաղերուն մէջ մունետիկները սկսան յայտարարել, թէ Փաստրմաճոնց ամբարները բացուած են եւ պատերազմէն առաջուայ գներով պիտի ծախուին ալիւրն ու ցորենը: Մէկ ժամ չանցած մեր թաղը լեցուեցաւ հազարաւոր ամբոխով՝ հայ, Թուրք, կին, տղամարդ, ամէն մէկը մէկ աման առած վազեցին դէպի ամբարներուն դռները: Բոլորի բերանը օրհնութեան խօսք մը կար Խաչատուր էֆէնտիին եւ իր տանը հասցէին:

Հազիւ քանի մը հազար լիտր ցորեր էին ժողովուրդին, եւ ահա մեր թաղը շրջապատուեց Թուրք կանոնաւոր զինուորներով, որոնք հեռացուցին ամբոխը հրացանի կոթի հարուածներով: Հրամանատարը եկաւ, բոլոր ամբարներուն դռները փակեց եւ վրան էլ կնքեց կառավարութեան կնիքով: Յետոյ պարզուեց, որ քաղաքի զինուորական վարչութիւնը, լսելով մունետիկներուն յայտարարութիւնը, անմիջապէս մարդ կ'ուղարկէ հօրս մօտ յայտնելով, թէ զինուորական վարչութիւնը ինքը կ'ուզէ առնել մեր բոլոր ունեցածը կանխիկ վճարով ու առաջարկուած գներով: Հայրս կը մերժէ անոնց առաջարկը, ըսելով, թէ այդ գները աղքատ ժողովրդի համար են միայն, իսկ, եթէ զինուորական վարչութիւնը կ'ուզէ առնել, միայն չուկայի գներով կրնայ տալ: Ասոր վրայ զինուորական վարչութիւնը կը հրամայէ փակել տալ մեր ամբարները:

Ճիշդ այդ նոյն օրն էր, երբ Տալտան բէգը իր քառասուն ձիաւորներով իջաւ մեր տունը:

Բանակցութիւնները շարունակուեցին քանի մը օր զինուորական հրամանատարին եւ հօրս միջեւ: Բայց հայրս իր որոշումը չփոխեց եւ նոյնիսկ, ինչպէս կը պատմէին, իր դրասենեակին մէջ բաւական ծանր խօսքեր ալ ըրած էր հրամանատարին ու ճամբու դրած:

Երեկոյ մը, այսօրուայ պէս կը յիշեմ, երբ ընթրիքէն յետոյ մերոնք բոլորը՝ հաւաքուած մեր տան վարի յարկի մեծ-օտան՝ Տալտան

© National Library of Armenia

բէգի հետ կը խօսէին պատերազմի մասին, իսկ եւ՝ նստած Տալտան բէգի ղիրկը՝ կը խաղայի անոր դաշոյնի փղոսկրեայ կոթին հետ, յանկարծ դրսի դուռը շատ ուժով զարնել սկսան: Բոլորը իրար երես նայեցան: Քաղաքը պաշարման վիճակի մէջ էր, եւ ոչ ոք իրաւունք ունէր մութը կոխելէն յետոյ տնէն դուրս դալ:

Տալտան բէգը հրամայեց իր ծառաներուն երթալ եւ առանց դուռը բանալու հարցնել, թէ ո՞վքեր էին եւ ի՞նչ կ'ուզէին: Ծառաները բանի մը բոպէն եկան ու յայտնեցին, թէ զինուորական վարչութենէն էին եւ կը պահանջէին, որ Յարութիւն էֆէնտին անմիջապէս ներկայանայ քաղաքին հրամանատարին: Հայրը անմիջապէս հասկցաւ, որ իր եւ հրամանատարի կռուի շարունակութիւնն էր, իսկ Տալտան բէգը տեղէն վեր ցատկեց եւ, իրեն հետ առնելով իր ազգական Մէհրալի եւ Հաճի Մուսա բէգերը, դնաց դէպի դուռը: Տալտանը ինքը անձամբ կը բանայ դուռը եւ կը հարցնէ պահակախումբի հրամանատարին, թէ ինչո՞ւ կը պահանջեն Յարութիւն էֆէնտին:

Սպան, իր ձեռքի թուղթը ցոյց տալով, կ'ըսէ.

— Փաստրմաճեան Յարութիւն էֆէնտին կը մեղադրուի Ռուսաց բանակին հաշուոյն լրտեսութիւն ընելուն մէջ, եւ հրամայուած է, որ այս գիշեր եւեթ ներկայանայ պատերազմական ատեանին:

Տալտանը այս լսելով կը բացականչէ.

— Դէ՛ կորսուեցէք դնացէք, յիմար անասուններ, Փաստրմաճեաններու տնէն լրտես չի կարող դուրս գալ: Գնա՛ քեզ ղրկողներուն ըսէ, որ Տալտան բէգը այսպէս ըսաւ: Իսկ, եթէ չեն հաւատայ իմ խօսքին, թող գան ու զօրով առնեն Յարութիւն էֆէնտին:

Այս ըսելով դուռը ուժգին կերպով փակեց պահակախումբին երեսին եւ դառնալով իր ծառաներուն ըսաւ.

— Տղերք, հրացանները ձեռքերնիդ տանիք բարձրացէք եւ, ով որ մօտիկնայ դռանը, խփեցէ՛ք առանց հարցնելու:

Գիշերն անցաւ առանց միջադէպի: Յաջորդ առաւօտ, երբ արթնցանք, տեսանք, որ մեր ամբողջ թաղը շրջապատուած էր հետեւակ զինուորներով: Տանը մէջ սարսափը մեծ էր: Մեզ փոքրիկներուս տարան վարի յարկի ամենապաշտպանուած սենեակը, իսկ քիւրտերն ու մեր տան ծառաները, ամէն մէկը հրացան մ'առած, նստեր էին վերեւի յարկին պատուհաններուն դիմացը եւ կամ տանիքին ծխնելոյզներուն ետեւը ու կը դիտէին զինուորներուն շարժումները:

Այս պաշարեալ դրութիւնը տեւեց ճիշդ երկու շաբաթ. ոչ մեր ոնցմէ մէկը կը համարձակէր տնէն դուրս գալ եւ ոչ էլ անոնք կը փորձէին մօտենալ մեր տանը: Գիշերները երբեմն հատ ու կտոր հրացանաձգութիւն կը լսուէր, մեծ մասամբ մեր քիւրտերն էին կրակողը՝ ցոյց տալու համար, որ իրենք արթուն կը հսկէին:

Տան ներսը մեծ իրարանցում կար. մեծերը շատ մտահոգ էին եւ ջղայնացած, իսկ մեզ փոքրիկներուս շատ մեծ զուարճութիւն կը պատճառէր այս տակնուվրայութիւնը: Խոհանոցը առտուընէ մինչեւ երեկոյ գործունէութեան մէջ էր: Ամէն օր նոր հաց կ'եփէին մօտ 80 հոգու համար. 40 հոգի քիւրտերն էին եւ մօտ նոյնքան էլ մեր ընտանիքի անդամներն ու ծառաները: Երկու օրը անդամ մը մեր ախոռին կթան կովերէն մէկը եւ կամ հորթ մը կը մորթէին մսացուի համար:

Ըսելն աւելորդ է, որ մեր պաշարեալ «բերդի» ընդհանուր հրամանատարը Տալտան բէգն էր: Անձամբ կը պտտէր տանը ամէն կողմը եւ կարգադրութիւններ կ'ընէր՝ դուռ ու երդիք լաւ մ'ամրացնելու համար: Եւ, որովհետեւ ինձ շատ կը սիրէր, իր ետեւէն ամէն կողմ կ'երթայի: Օրական հազար անդամ կը կրկնէր նոյն հայհոյանքները Թուրք կառավարութեան հասցէին.

— Էշշեակ Թուրք, նամքէօր հայվաններ. ատոր համար է, որ այս պետութիւնը պիտի քանդուի:

Պաշարման ընթացքին քանի մը անգամ զինուորական վարչութեան կողմէն բանագնացներ եկան Տալտան բէգին մօտ զանազան առաջարկներով, բայց նա ոչ մի պայման չընդունեց՝ հօրս յանձնելու համար: Մինչ այս բանակցութիւնները կը շարունակուէին, անդին հայոց Առաջնորդարանը Պոլսոյ Պատրիարքի միջոցով, իսկ անգլիական քանիւլը

© National Library of Armenia

իրենց գեսպանին միջոցով այս հարցի լուծումը փոխադրեցին Պոլիս։

Վերջապէս, օրին մէկը պատերազմական նախարարութենէն հրաման կուգայ չեղեալ նկատել իմ հօրս դէմ եղած ամբաստանութիւնը, իսկ հօրս կը հրամայուէր զինուորական վարչութեանը յանձնել մեր բոլոր ամբարները եւ ստանալ պատշաճ ստացագիր յանձնուելիք ցորենին եւ ալիւրին համար, պատերազմէն յետոյ վճարուելու պայմանով։

Այսպէս վերջացաւ մեր տան պաշարումը։ Տալտան բէգը դժգոհ էր այս կարգադրութենէն, բայց մերոնք ուրախութեամբ ընդունեցին։ Եւ մինչեւ այսօր էլ Թուրք պետութեան գանձը մեզ պարտական է 36 հազար օսմանեան ոսկի։

IV

ԱՍԼԱՆԸ

1870 թուականին, Պապիս փոքր եղբայրը՝ Հաճի Սարգիս էֆէնտին, որը քանի մը անգամ ձիով ուղի տակ էր տուած ամբողջ Արեւելքը, Սպահանէն մինչեւ Կ. Պոլիս, Մըսրէն մինչեւ Թիֆլիս, Շամ գտնուած միջոցին ներկայ կը լինի պաշտօնական եւ սնանկացած Թուրք փաշայի մը ախոռին ձիերուն ամուրդին։ Մէկ օրուայ մէջ մօտ 200 ձիեր, Արաբստանի ամէն կողմերէն հաւաքուած սքանչելի նժոյգներ, կը ծախուին չափազանց էժան գներով։ Ատոնց մէջէն երեք ամենալաւերը Սարգիս էֆէնտին ինքը կ'առնէ, վճարելով ամենաբարձր գները։

Այդ ձիերէն ամենալաւին անունն էր Ասլան, որուն համար կը վճարէ 500 օսմանեան ոսկի եւ զոր կը յատկացնէ իմ հօրս Ցարութիւն աղային՝ իր մեծ եղբօր անդրանիկ որդուն։ Մնացած երկուսին կը վճարէ 120ական ոսկի։ Երկրորդը՝ Ցօլան, որ կաթի պէս սպիտակ ձի մըն էր, իր եղբօր Պաշատուր էֆէնտին կուտայ, իսկ երրորդը, որ ոսկեգոյն կարմիր էր եւ անունը Զափլան, չափազանց կատաղի, իրեն կը պահէ։

Ցօլանը ես չեմ յիշեր այն պարզ պատճառով, որ այդ ազնիւ կենդանին երկու տարի Պապիս ծառայելէն յետոյ ինքնասպան կը լինի, երբ իր տիրոջը Թուրքերը սպաննեցին 1872 թուականին։ Մէկ շաբաթ անընդհատ ոչինչ չի ուտէ իր տիրոջ մահուանէն յետոյ եւ այսպէս ինքնակամ կերպով սովամահ կը լինի։ Մինչեւ այս վերջին դէպքերը Ցօլանի զանկի ոսկորը պահուած էր մեր տան ախոռին մէջ իբրեւ նուիրական յիշատակ։

Ո՞վ գիտէ, դուցէ Թուրքերը այդ անմեղ ոսկորի կտորն եւս ոչնչացուցին։

Զափլանը երկար տարիներ Սարգիս էֆէնտիին ծառայելէն յետոյ իր բնական մահովը մեռաւ. բայց, որովհետեւ շատ հար էր, անկէ ոչ մի յիշատակ չպահեց մեր Մէմմէտ ախպարը։

Իսկ Ասլանին պատկերը մինչեւ այսօր էլ իմ աչքիս առջեւն է։ Արաբական ձիու կլասիկ ներկայացուցիչն էր նա, նրբակազմ եւ չափազանց աշխոյժ, գոյնը սիպտակ, մարմնի որոշ մասերը միայն սեւ սեւ խալերով ծածկուած։ Գեղեցիկ կնոջ մը պէս կը զգար իր գեղեցկութեան արժէքը եւ քօքէթ էր վերջին ծայր։

Մեր Մէմմէտ ախպարն էր անոր սպասաւորը։ Թէեւ այն օրերուն մեր ախոռին մէջ 4 հայ սպասաւորներ կային Վարդան էմու ղեկավարութեանը տակ, բայց Մէմմէտ ախպարը ոչ ոքին չէր թողու Ասլանին մօտիկնալու։ Իր կարծիքովը հայ ծառաները անընդունակ էին Ասլանին պէս ձիու մը հոգին հասկնալ։ Եւ յիրաւի, քանի՜ քանի՜ անգամներ մեր միւս ծառաները, մանաւանդ կառապան Գազօն, աքացիներ ու խածուացքներ կը ստանային միւս ձիերէն, իսկ Մէմմէտը իր աշխոյժ Ասլանին հետ ոչ մի փորձանքի չէր հանդիպած։

Կը յիշեմ, թէ ի՞նչպէս շատ անգամ, երբ Մէմմէտը դուրս կը քաշէր Ասլանը կազմ ու պատրաստ, որպէսզի հայրիկս նստէր, ձին կը սկսէր ուրախութենէն երկու ոտքի կանգնիլ ու կատակներ ընել Մէմմէտին հետ իր առաջի թաթերովը։ Եւ, որովհետեւ այդ կատակները շատ էլ դուրեկան չէին Մէմմէտին, շատ անգամ ինձ կամ իմ քրոջս ձեռքերէն կը բռնէր ու կը նստեցնէր Ասլանին վրայ։ Բաւական էր որ մեզմէ մէկը իր թամբին վրայ դըրուէր, ազնիւ կենդանին գառի պէս հլու կը դառնար, եւ Մէմմէտը անհոգ կերպով կը քաշէր դուռնը մօտ ետ ու առաջ ու Ասլանը զգոյշ

© National Library of Armenia

քայլերով կը հետեւէր անոր։

Իսկ երբ հայրս դուրս կուգար, եւ մեզ ձիու վրայէն վար կ'առնէին, վայրկենապէս կը փոխուէր մեր սիրելի Ասլանը։

Ահա թէ ի՞նչ կը պատմէր Ասլանի մասին Մէմմէտ ախպարը, մեր ախոռին սէգքիւն նըստած։

Ռուս–Թուրքական պատերազմէն մէկ տարի առաջ, երեկոյ մը, հայրիկս՝ Ասլանը հեծած՝ Իլիջէ գիւղէն ճամբայ կ'ելնէ Ոզնի երթալու համար։ Մեր մարարանէրէն Ուռում–Օղլէնց Աւագ Քեահեան շատ կը խնդրէ հայրիկս, որ մինակ չ'երթայ, բայց ի զուր. հայրիկս՝ իր ձիուն վստահած՝ կը մերժէ ճամբու ընկեր մ'ունենալ։

Ապրիլ ամիսն է եղեր, երբ Եփրատ գետը կը փոխուի լայնատարած լճի մը, իսկ Ոզնի երթալու համար պէտք էր անցնիլ Զարախչի կամուրջին վրայէն, որը թէեւ ջրէն բաւական բարձր է շինուած, բայց իր երկու թեւերը ծածկուած կը լինին յորդած գետի ջրերով, մօտ մէկ քիլոմէթր տարածութեան վրայ։ Հայրիկս, սովոր լինելով այդ տեղերուն, զգուշութեամբ ձին կը քշէ ջրով ծածկուած բարձր թումբովը, որը դէպի կամուրջը կը տանի։ Այդ տարին Եփրատը արտասովոր կերպով բարձրացած է եղեր. ջուրը կը հասնի եղեր ձիուն մինչեւ կուրծքը։

Ձիւղ այն միջոցին, երբ նա կը հասնի կամուրջի զառիվերին, կամուրջի միւս կողմէն ուրիշ ձիաւոր մը կ'երեւայ՝ վրան ծածկած սեւ եափունջի մը։ Արաբատանցի Ասլանը, որ բընաւ եափունջիով մարդ չէր տեսած իր օրուամը, յանկարծ կը խրտչի եւ քանի մը քայլ ետ ետ կ'երթայ եւ կ'ընկնի կամուրջի թումբէն վար ջրի խոր տեղը։ Հայրիկս առաջի բերան սոսկալի կը վախնայ եւ՝ ձիուն բաշերէն պինդ բռնած՝ կը թողու, որ Ասլանը իր գիտցածն ընէ։ Ձին կը սկսի լողալ դէպի առաջ կամուրջին ուղղութեամբ. բայց, երբ կուգայ կամուրջի բացուածքներուն դիմացը, ջրի հոսանքը կը քշէ զինքը դէպի վար շատ մեծ ուժով։ Հայրս կը տեսնի, որ Ասլանին համար անհնարին պիտի լինի այդքան երկար տարածութիւն կտրել լողալով, ուստի անոր գըլուխը կ'ուղղէ հոսանքն ի վար դէպի հին կամուրջի մը փլատակները, որոնք կղզիի պէս դուրս ցցուած էին գետին մէջտեղը. եւ, երբ այդ քարի կոյտերուն մէկին կը մօտիկնայ, ինքը մագլցելով կը բարձրանայ անոնց վրայ, իսկ Ասլանը կը մնայ ջրին մէջ մինակ։ Ասլանը կը սկսի այդ քարի կոյտին շուրջը լողալ եւ հօրս հոտուըտալ, իսկ հայրս անոր գլուխը կը շոյէ եւ կ'ըսէ «Ասլան, դո՛ւն գնա տուն»,— ձեռքով ցոյց տալով Իլիջէ գիւղը։ Ի վերջոյ Ասլանը կը սկսի լողալով հեռանալ, բայց ոչ դէպի Իլիջէ այլ դէպի Զարարզ։ Քիչ մը հեռանալէն յետոյ՝ հայրս այլեւս անկարող կը լինի Ասլանին տեսնել. ա՞յնքան մութը կոխած կը լինի։

Բաւական ժամանակ յետոյ հայրս կը լսէ Ասլանին խրխնձոցին անուշ ձայնը գետին միւս ափէն եւ անմիջապէս կը պատասխանէ։ Մի քիչ յետոյ նորէն կը լսէ Ասլանին ձայնը, բայց այս անգամ կամուրջին վրայէն, նորէն կը պատասխանէ։ Ասլանը կամուրջը քալելով անցնելէն յետոյ՝ անգամ մըն ալ այս կողմի ափէն կը խրխնձայ եւ, երբ նորէն հօրս ձայնը կը լսէ, կը սկսի քառասմբակ վազել դէպի Իլիջէ գիւղը, ուրկէ հայրս ճամբայ էր ելած։ Իսկ հայրս կը մնայ նստած այդ փոքրիկ կըղզիին վրայ այն յոյսով, որ յաջորդ առաւօտը ճամբորդները դինքը պիտի տեսնէին եւ նաւակով մը դային իրեն ազատելու։

Բայց Ասլանին ծրագիրը բոլորովին ուրիշ է եղեր։ Շնչասպառ ան կը հասնի Իլիջէի մեր տունը եւ կը սկսի աքացիներ տեղալ մեր բակի դռանը։ Գիւղացիք, այս աղմուկը լսելով, դուրս կը վազեն եւ կը տեսնեն, որ Ասլանը մեն–մինակ, գլուխը բարձր բռնած, քթի ծակերը լայն բացած շրջանաձեւ կը վազէ եւ կը ֆրռռացնէ։ Գիւղացի երիտասարդներէն մէկը կը փորձէ Ասլանին սանձը բռնել, բայց ան երկու ոտքի կանգնելով այնպիսի հարուած մը կ'իջեցնէ իր առաջի թաթերով տղուն գլխին, որ խեղճը ուշաթափ գետին կը փռուի։ Ասոր վրայ՝ Աւագ Քեահեան կ'ըսէ, որ ոչ ոք ձիուն չմօտիկնայ, այլ բոլորը ձիաւորուին եւ գնան Ասլանին հետ՝ ազան դնելու։

Քանի մը րոպէ յետոյ 3–4 գիւղացի տղերք ձիերը հեծած կը հետեւին Ասլանին, որը դարձեալ գլուխը ցից ֆրռռացնելով կը վազէ դէ–

© National Library of Armenia

պի գետակը, կը կանգնի ճիշդ այն տեղը, որուն դիմացը կը գտնուի հին կամուրջին փլատակը, ու կը սկսի ամուր ձայնով խրխնճալ։ Հայրս Ասլանին ձայնը առածին պէս կը պատասխանէ, իսկ գիւղացիք հօրս ձայնը լսածնուն պէս կը հարցնեն, թէ ո՞ւր է ինքը։ Ապա կ'ներթան ձկնորսի նաւակ մը կը բերեն ու հայրս կ'առնեն քարին վրայէն։

Մինչեւ հօրս ցամաք դուրս գալը՝ Ասլանը անդադար իր յուզուած դրութեանը մէջ չրջանաձեւ կը վազէ եւ ոչ ոքին չի թողու իրեն մօտիկնալու. իսկ, երբ հօրս ձայնը կը լսէ, կը վազէ վրան եւ մռութը հօրս դէմքին քսելով կուչտ մը կը հոտոտայ իր տիրոջը։

Այսպէս կը պատմէր մեր Մէմմէտ ախպարը Ասլանին մասին եւ, ամէն անգամ այս պատմութիւնը ընելէն յետոյ, ախ մը կը քաշէր ու կ'աւելցնէր.—

«Ասլանին պէս ձի էս աշխարքս ոչ եկեր է, ոչ էլ գալու է»։

Հիմա հետաքրքիր է իմանալ, թէ ի՞նչպէս իրարմէ բաժնուեցան մեր հաւատարիմ Մէմմէտն ու սիրելի Ասլանը 1878 թուականին։ Թէեւ ես 5 ու կէս տարեկան էի, բայց այսօրուայ պէս կը յիշեմ այդ յուզիչ տեսարանը։ Ես էլ արտասուեցի, Հերմոն քոյրիկս էլ արտասուեց՝ ինձ հետ միասին մեր ախոռին մէջ, երբ Մէմմէտ ախպօրը արտասուելը տեսանք Ասլանին մօտերքին առաջ։

Ռուս բանակը 1878ի ձմեռը անցուց Կարնոյ մէջ։ Մեր տունը լեցուն էր ռուսական բանակի հայ սպաներով եւ գեներալներով։ Մեր տան սովորական հիւրերն էին նաեւ յայտնի գեներալ Լազարէվը եւ Լօրիս-Մելիքովը։ Այս վերջինը քանի մը անգամ հօրս խնդրեր էր իրեն համար մաքուր Արաբական ձի մը գտնել՝ ռուսաց թագաժառանգին նուէր տանելու համար։ Հայրս շատ հարց ու փորձ էր ըրած, բայց յարմար բան մը չէր գտած, եւ որոշեր էր իր ձին տալ՝ հայազգի գեներալին ցանկութիւնը կատարելու համար։

Վերջին անգամ, երբ գեներալ Լօրիս-Մելիքովը մեզ էր եկած մնաս բարովի, մեր կանաչ սենեակին մէջ ընդունեցին զինքը։ Քոյրս եւ ես գնացինք իր ձեռքը համբուրելու։ Բաւական ժամանակ ինձ իր ծունկերուն վրայ պահելէն յետոյ՝ մեզ իրրեւ յիշատակ մէկ մէկ ոսկի խաչ տուեց, Քրիստոսի խաչելութիւնը վրան։ Իմ խեղճ Հերմոնէ քոյրիկս իր խաչը պահեր էր մինչեւ այս վերջերս, եւ հաւանական է, որ նահատակուելէն առաջ իր վզէն քաշեցին տարան Միջագետքի անապատներու քիւրտերը։ Իսկ ես իմինս վաղուց կորսնցուցեր եմ։ Այդ օրերէն մէկ նիւթական յիշատակ ունիմ միայն, այդ էլ գեներալ Լազարէվի կողմէ մօրս նուիրուած ազամանդեայ մատանին է։ Վերջին անգամ երբ Կարին էի 1913 թուականին, մայրիկս ինձ տուեց այդ մատանին իրրեւ յիշատակ։

Գեներալը հայերէն չգիտէր, թարգմանի միջոցով կը խօսէր մերոնց հետ։ Այսքանը կը յիշեմ այն օրուայ խօսակցութենէն, որ հայրս իրեն յայտնեց, թէ քանի որ յարմար ձի մը չգտաւ իրեն համար, իր սեփական ձին էր տալու։ Գեներալը սկիզբը չիմ ու չուզեր, բայց ի վերջոյ շնորհակալութեամբ ընդունեց հօրս առաջարկը։

Ես ու քոյրս՝ այս խօսակցութիւնը լսելուս պէս՝ վազեցինք սենեակէն դուրս դէպի խոհանոց եւ խապարը հասուցինք Մէմմէտ ախպօրը։ Նա չհաւատաց մեր խօսքին, բայց քանի մը րոպէ յետոյ հայրս դուրս եկաւ հիւրանոցէն եւ Մէմմէտին հրամայեց, որ Ասլանին զարնէ իր արծաթեայ սարքը եւ քաշէ դէռանը առաջ։

Մէմմէտը ապշած րոպէ մը հայրիկիս նայեց եւ հարցուց.

— Շիտա՞կ է, որ գեներալին ես տալու ձին?

— Քեզմէն հրամա՞ն պիտի առնէի, ախմախ, ըսաւ ու ներս գնաց հայրս։

Մէմմէտը դարձաւ Մամիս ու ըսաւ.

— Ոտքդ պագնիմ, խանում ջան. այս խենթ տղուդ խօսք հասկցու. էն հայվանը էս տնէն դուրս ղրկելը մեծ մեղք է. իմ ձեռքս վրայ չի երթայ։

Մէմմէտը նստած մնաց թոնիրին կողքին, իսկ Մամս լուռ էր։ Ես ու քոյրս մեր բոլոր հոգիովը Մէմմէտին հետ էինք։

Քանի մը րոպէ յետոյ հայրս նորէն դուրս եկաւ եւ բարկացած ձայնով բղաւեց.

— Ծօ էշչակ, քեզի չե՞մ ըսէ, որ ձին

© National Library of Armenia

դուրս քաշեց,— ըսաւ ու այնպէս խոժոռ նայեցաւ Մէմմէտին, որ ան անմիջապէս վեր կացաւ տեղէն ու դէպի Թամբերուն սենեակը ուղղեց իր քայլերը՝ առանց բան մ'ըսելու:

Հերմօնն ու ես հետեւեցանք Մէմմէտին. միասին դնացինք Թամբերու սենեակը, անկէ ախոռը եւ՝ կանգնած Ասլանի կողքին՝ կը դիտէինք, թէ ի՞նչպէս Մէմմէտ ախպարը մեր սիրելի Ասլանին վերջին Թուալէթը կ'ընէր: Երբ ամէն բան վերջացուց, Ասլանին երկու աչքերը համբուրեց, եւ արցունքները սկսան հեղեղի պէս հոսիլ իր մօրուքն ի վար: Նրա արտասուելը տեսնելով ես ու քոյրս իրար ձեռք բռնած սկսանք հեկեկալով լաց լինել: Խելքերնիս չատ բան չէր կտրեր, բայց չէ՞ որ Մէմմէտ ախպարը բնաւ լաց լինելիս չէինք տեսած: Եւ յետոյ՝ Ասլանը մենք էլ չատ կը սիրէինք:

Ճիշդ այդ միջոցին դրսէն կառապան Խաչօին ձայնը եկաւ, որ կ'չտապցնէր: Մէմմէտը իր կարմիր Թաշկինակովը երեսը սրբեց ու մեզ դառնալով, ըսաւ.

— Լաց մի լինիք, ես ձեր հոգուն մատաղ, — ու ձին դուրս քաշեց:

Աչքերնիս Թաց Թաց վազեցինք դուրս՝ մեր վերջին հրաժեշտը տալու մեր սիրելի Ասլանին:

Երբ գեներալը բարձրացաւ քարին վրայ Ասլանին հեծնելու, ձին ըստ սովորութեան երկու ոտքի ելաւ, իրրեւ բողոք, որ օտար մարդ մը կ'ուզէր իրեն մօտիկնալ: Հայրս սանձէն բռնեց, ու Ասլանը խեղճացաւ: Գեներալը հեծաւ եւ չարժուեց դէպի առաջ ռուսերէն բան մը ըսելով իր Թիկնապահին, որը ետ դառնալով Խաչօին ու Մէմմէտին բուռը մէկ մէկ հարիւրանոց Թղթադրամ դրաւ: Խաչօն ուրախութեամբ իր գրպանը կոխեց հարիւրանոցը, իսկ Մէմմէտը, երբ տեսաւ, թէ փող էր բուռին մէջինը, ճմռթեց եւ հեռուն նետեց լաւ մը հայհոյանք տալով գեներալի հասցէին:

Հայրս այս տեսնելով խիստ կերպով յանդիմանեց Մէմմէտին իր կոպտութեանը համար եւ, երբ նա իր խօսքը վերջացուց, Մէմմէտը պատասխանեց.

— Աղա, ես այլեւս այս տանը չեմ կրնայ մնալ. էս տանը պէրէքէթը գնաց. մնաք բարով,— ըսաւ ու քայլերը ուղղեց դէպի իրենց Թաղը:

Հայրս քանի մը րոպէ չուարած մնաց իր տեղը, իսկ Խաչօն Մէմմէտի չփրտած հարիւրանոցը գետնէն առաւ ու գրպանը դրաւ «ախմախ Թուրք» ըսելով:

Բոլորս միասին ներս դնացինք: Հայրս պատմեց Մամիս ու միւս տնեցոց Մէմմէտի ըրածը: Բոլորը տխրեցան, կարծես Մէմմէտի այդ խօսքերուն ճշմարիտ լինելը կը զգային:

Անցաւ մէկ օր, երկու օր, մէկ շաբաթ. Մէմմէտէն ոչ մի լուր: Մամս քանի մը անգամ մարդ ուղարկեց Մէմմէտին տունը ըսելու, որ մեծ խանումը կ'ուզէ զինքը: Ամէն դնացողին Մէմմէտը ճամբու կը դնէ եղեր ըսելով, որ այլեւս մեր տան հացը հարամ եղաւ իրեն համար:

Հայրս ամէն երեկոյ, երբ տուն կուգար, կը հարցնէր, թէ ինչ լուր կայ Մէմմէտէն: Ու, երբ կ'իմանար, որ չէ վերադարձած, կը հայհոյէր անոր հասցէին. բայց պարզ էր, որ ինքն էլ չատ գէշ տրամադրութեան մէջ էր: Մէմմէտը իր մանկութեան սպասաւորն էր եղած. նա ծառայ չէր, այլ մեր տան մէկ անդամը:

Վերջապէս օրին մէկը Մամս կանչեց Խաչօին եւ ըսաւ.

— Թոռներս ա՛ռ ու դնա Մէմմէտենց տունը. երեխաներուն որ տեսնի, էլ չի կրնայ թէրսութիւն ընել:

Խաչօն մեզ տարաւ մինչեւ Մէմմէտենց դուռը եւ ինքը փախաւ վախենալով, թէ մի լաւ ծեծ կ'ուտէ անկէ: Դուռը բացողը Մէմմէտի կինն էր, Եաղութ պաջին: Մեզ տեսնելուն պէս փաթաթուեցաւ երկուսիս եւ տարաւ ներս: Մէմմէտ ախպարը՝ իր տան փոքրիկ սէքիւին վրայ նստած՝ կը ծխէր. անմիջապէս ծխախոտը մէկ կողմ դրաւ ու մեզ առաւ իր գիրկը:

Մամս իրաւունք ունէր մեզ ուղարկելու. կէս ժամ չանցած մենք երեքով վերադարձանք տուն: Մէմմէտը գնաց Մամիս ձեռքը համբուրեց եւ ներողութիւն խնդրեց իր ըրածին համար. իսկ մենք բոլորս չատ ուրախ էինք, որ Ասլանը կորսնցնելէն յետոյ՝ գոնէ մեր հաւատարիմ Մէմմէտ ախպարը ետ եկաւ:

Բայց հօրս եւ Մէմմէտին յարաբերու-

© National Library of Armenia

թիւնները բնաւ առաջուայ պէս չեղան այլեւս։ Քանի քանի անգամներ, երբ պատերազմէն յետոյ դժբախտութիւն դժբախտութեան վրայ կուգար մեր ընտանիքին գլխին, Մէմմէտը գլուխը կը շարժէր։

— Եա՛ աղա, էն զավալլի հայվանին մեղքն է որ կը քաշենք,— կ'ըսէր՝ ակնարկելով Ասլանին։

Եւ ամէն անգամ նոյն պատասխանը կը ստանար հօրմէս.

— Դէ՛հ, ձայնդ կտրէ, ախմախ։

Եւ այսպէս անցան տարիներ, տարիներ նեղութեան եւ դժբախտութեան։ Մեր հին ծառաներէն միայն երկուսը մնացին մեզ մօտ՝ Մէմմէտն ու Աւօն եւ մէկ աղախին։ Իսկ ախոռը դատարկուեց իր սքանչելի նժոյգներէն. երեք ձի միայն մնացին, կառքերն ու սարքերը ծախուեցան բոլորը։ Եւ ահա օրին մէկը, 1886 թուին, երեկոյ մը հայրս տուն եկաւ շատ ուրախ տրամադրութեամբ եւ ընթրիքի ժամանակ Մէմմէտին կանչեց եւ մեզ բոլորին պատմեց Ասլանի մասին նոր լուրեր, որ նոյն օրը իմացեր էր Կարապետ Եղեանէն։ Եղեանը Փեղրոկրատէն եկեր էր Սանասարեան վարժարանը տեսնելու, որին խնամատարն էր։ Հօրս պատմեր էր, թէ ինչպէս Լօրիս Մելիքովը իր նուիրած ձին տուեր էր Ռուսաց Ալեքսանդր III ցարին, որը այն ժամանակ թագաժառանգ էր։ Եղեանի ըսածին նայելով Ռուսաց ցարը մեծ խնամքով կը պահէր Ասլանը կայսերական ախոռներուն մէջ, իբրեւ նմուշ Արաբական ձիու։

Մէմմէտը հետաքրքրութեամբ լսեց այս բոլորը եւ բացականչեց.

— Է՛հ աղա, ախմախ ռուսն ո՞վ է որ Ասլանին զատրը գիտնայ։

(Շարունակելի)

ԴՐՈՒԱԳՆԵՐ ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ

Գրեց՝ Մ. ՇԱՔԻՐԵԱՆ

ԻՆՉԷՍ յայտնի է, Անդրկովկասում մենք հայերս՝ համեմատած վրացիների ու Թուրքերի հետ՝ միշտ խորթ զաւակներ էինք նկատուել ռուս կառավարութեան կողմից, որպէս աւելի առաջադէմ, յեղափոխական եւ ազատասէր տարր։ Ամէն տեսակ ճնշում, խստութիւն, անարդարութիւն եւ արհամարհանք գործադրուում էին դէպի մեզ։ Մենք գրեթէ զրկուած էինք մեր երկրի սահմաններում պաշտօններ ունենալու իրաւունքից որեւէ պետական հիմնարկութեան մէջ։ Մինչդեռ այդ պաշտօնները հեշտութեամբ տրամադրուում էին վրացիներին եւ Թուրքերին։

Երբ բռնկուեց եւրոպական պատերազմը եւ պարզուեց, որ կովկասեան ազգերից միայն մենք՝ հայերս էինք Անտանտայի կողմը, իսկ վրացիք եւ Թուրքերը, երկդիմի չէզոքութեամբ քօղարկելով իրենց համակրութիւնը դէպի Գերմանիան եւ Տաճկաստանը, դաւեր էին լարում յօգուտ Տաճկաստանի, ռուս կառավարութեան վերաբերմունքը մի փոքր մեղմացաւ դէպի մեզ։ Մենք պաշտօնապէս մասնակցում էինք պատերազմին, կազմելով ռուս բանակին կից կամաւորական խմբեր, որոնց քանակի, որակի եւ կատարած պատերազմական գնահատելի սխրագործութիւնների մասին ապագայում աւելի ճեռնհաս մարդիկ մանրամասն կը գրեն։

Մեր այս բռնած դիրքը եւ զոհաբերութիւնները հարկաւ մեզ որոշ քաղաքական իրաւունքներ էին տալիս, եւ մենք չէինք թագցնում, որ այդ զոհաբերութիւնները անում էինք յանուն մեր ազգային իտէալների, յանուն մեր բազմատանջ ժողովրդի ապագայ ազատ, խաղաղ եւ կուլտուրական կեանքի։ Այն ժամանակ մենք դեռ երազում էինք միայն Տաճկահայաստանի ազատագրման մասին։

Երբ Կովկասի փոխարքայ նշանակուեց մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը, ռուս իշխանութեան վերաբերմունքը դարձեալ վատացաւ դէպի մեզ։ Կամաւորական խմբերին այլ եւս ոչ

© National Library of Armenia

մի ակնկալութիւն չէին ցոյց տալիս, աշխատում էին ամէն կերպ նսեմացնել նրանց ռազմական նշանակութիւնը եւ, վերջապէս, կարդադրուց ձուլել նրանց ռուսական մեծ բանակի հետ, որպէսզի նրանցով հայութեան զոհաբերութիւնը առանձին չերեւցած չլինէր:

Այս բոլորը արւում էր այն մտադրութեամբ, որ խորտակուէին մեր բարոյական իրաւունքները, որ մենք ձեռք էինք բերել այնպիսի ծանր զոհաբերութիւններով:

Միւնոյն ժամանակ Նիկոլայ Նիկոլայեւիչը արդէն ծրագիր էր պատրաստել Տաճկահայաստանի որոշ մասերում կոզակների բնակավայր հիմնել: Այդ ծրագրի իբրեւ ապացոյց ես անձամբ կարդացել եմ այն յայտարարութիւնը, որը տարածել էր ռուս իշխանութիւնը Հիւս. Կովկասի կոզակների գիւղերում: Կոզակները հրաւիրում էին պատրաստուել տեղափոխուելու դէպի Եփրատի հովիտը, նոր «Եփրատական կոզակութիւն» հիմնելու, ինչպէս իր ժամանակին հիմնուել են Կուբանի, Դոնի եւ Տէրեկի կոզակութիւնները: Այս ձեւով է, որ ռուսները ցանկանում էին, տաճիկներից գրաւելով Տաճկահայաստանը, «լուծել» հայկական հարցը եւ առմիշտ խորտակել մեր բոլոր յոյսերը՝ երբ եւ իցէ անկախ հայրենիք ունենալու:

Դժուար է հասկանալ, թէ ի՞նչու էին այս քաղաքական դժոխային խաղերը դուր գալիս վրացիներին: Հաւանական է, որ դէպի հարեւանը ունեցած կոյր ատելութիւնն էր խօսում նրանց մէջ:

Սակայն պէտք է ասել, որ թուրքերը այնքան էլ ուրախ չէին: Նրանց համիսլամական ծրագիրներին չէին համապատասխանում ռուսաց այս ոտնձգութիւնները: Նրանք հասկանում էին, որ, եթէ Տաճկահայաստանը տաճիկներից անցնի ռուսաց ձեռքը, մահմեդականութիւնը այլ եւս երբեք չպէտք է կարողանայ կըրկին վերագրաւել այդ երկիրը ռուսներից:

Այսպէս էր դրութիւնը, երբ վրայ հասաւ 1917 հոկտեմբերի բոլշեւիկեան յեղափոխութիւնը, որը ոչ միայն ջուրը նետեց այդպիսի մանր-մունր ծրագիրներ, այլ միանգամայն կազմալուծեց ռուսական մեծ բանակը, որի շնորհիւ միայն Ռուսաստանը կարող էր ծրագիրներ ունենալ եւ իր կամքը թելադրել թէ՛ իր մեծ թշնամիներին եւ թէ՛ իր հպատակ մանր ազգութիւններին:

Ռուսաստանը, որը դեռ փետրուարեան յեղաշրջումից յետոյ թուլացել էր ռազմական տեսակէտից, այս երկրորդ յեղաշրջման հետեւանքով ընկաւ այնպիսի ողորմելի, քաոսային դրութեան մէջ, որ կենտրոնական իշխանութիւնը այլ եւս ինքն իրան չէր զգում դրութեան տէր: Զօրքերը խելագար թափով փախչում էին պատերազմական ճակատներից, ճանապարհին թալանելով ու աւերելով ամէն ինչ, եւ ցուցադրելով անասնային դաժանութիւն եւ անխնայութիւն: Նրանք շարժւում էին դէպի Ռուսաստանի խորքերը բոլոր ճանապարհներով. մանաւանդ ամբողջապէս նրանց ձեռքն էին բոլոր երկաթուղիները: Նրանց յետեւից քայլ առ քայլ գալիս էին թշնամիները՝ գերմանացիք, թուրքերը եւ աւստրիացիք:

Կովկասը ալեկոծուեց. սոսկալի կերպով բռնկուեցին զանազան ազգերի մրցութիւնները, փոխուեցին դերերը եւ դիրքերը:

Վրացիք հանդիստ կերպով սպասում էին իրենց բարեկամ գերմանացիների եւ տաճիկների գալստեան, իսկ մինչ այդ լուռ ու մունջ իւրացնում էին մեծ Ռուսաստանից մնացած բոլոր հարստութիւնները:

Թուրքերը (գլխաւորապէս Գանձակի եւ Բաղուի) խենթի պէս ուրախ էին, որ Ռուսաստանը փախչում է Կովկասից, արդէն Կովկասը Տաճկաստանին միացած էին համարում եւ հոգիների մէջ տօնում համիսլամականութեան փայլուն յաղթանակը: Նրանք այն աստիճան համարձակութեան հասան, որ շատ տեղերում կանգնեցնում էին երկաթուղու գնացքները եւ զինաթափ անում ճակատից վերադարձող ռուս զօրքերին եւ այդ զէնքերով զինում իրանց ժողովրդին, զգալով, որ Կովկասում միջազգային հարցերը դեռ եւս զէնքով պէտք է վճռուին:

Ամենից ծանր եւ ողբերգական էր հայերիս վիճակը: Ռուսաց զօրքերը դատարկում էին Տաճկահայաստանի գրաւած հողամասերը, այնտեղից վերադառնում էր բազմաթիւ հայ գաղթականութիւն, որը այդպիսի տարերային դէպքերում ոչ միայն կորցնում է ամէն ինչ եւ անհամար մարդկային զոհեր է տալիս քաղցի եւ հիւանդութիւնների պատճառով, այլ եւ յուսահատութեան է հասցնում այն զօրքերին, որոնք պէտք է պահպանեն նրա նահանջը քայլ

© National Library of Armenia

առ քայլ հետեւող Թշնամու դէմ։ Հայ զինուորները, որոնք այդ պատմական ազէտի միջոցին գտնուում էին կովկասեան բանակի մէջ եւ որոնց Թիւը դժբախտաբար շատ քիչ էր*), մեծ եւ փառաւոր դեռ ունէին կատարելու. նրանք պէտք է պաշտպանէին կովկասեան ճակատը Թրքական զօրքերի առջեւ, որով չափազանց պիտի Թեթեւացնէին Տաճկահայաստանի հարցի լուծումը։

Տարաբախտաբար նրանք այդ դերը չկարողացան կատարել. չկարողացան, որովհետեւ կազմալուծուած էին իրրեւ կանոնաւոր զօրամասեր, որովհետեւ նրանց մի մասը վարակուել էր արդէն բոլշեւիկեան Թունաւոր պրոպագանդով եւ առհասարակ ստեղծուած մթնոլորտը առաջ էր բերել ընդհանուր լքում։ Հայոց Ազգային Խորհրդի եւ մեր նշանաւոր խմբապետների եւ անձնուէր սպաների ջանքերը բաւական չէին, որ կարողանային նրանց կազմակերպել ու ոգեւորել։ Այդպէս, մէկը միւսի յետեւից տաճիկների ձեռքը անցան Երզնկան, Բաբերդը, Կարինը...

Վրացիների եւ Թուրքերի ուրախութեան չափ չկար. նրանք մեզ հետ քաղաքականութիւն էին վարում Տաճկաստանի Թելադրանքով։

Մենք մտահոգուած էինք պաշտպանել գոնէ Կարսը, բայց դրա համար անհրաժեշտ էր, որ ամէն տեղից ցրուած հայութիւնը օգնութեան հասնէր, մանաւանդ այն հայ զինուորականները, որոնք վերադառնում էին հիւսիսից եւ հաւաքւում էին Բագուում։

Բագուն դառնում էր զինուած հայերի փոքրիկ բանակ։ Սակայն Բագուն չէր կարող օգնութեան հասնել։ Նա կտրուած էր Կովկասի միւս մասերից. Թուրքերը երկաթուղիներով Թոյլ չէին տալիս հայերին երթեւեկելու։

Կովկասի կենտրոնական իշխանութիւնը, «Սէյմ»ը, որ կազմուած էր վրացիներից, Թուրքերից եւ հայերից՝ Ռուսաստանից ժամանակաւորապէս կտրուած Կովկասը համերաշխութեամբ եւ խաղաղ կառավարելու համար, չընդունկացաւ նոյնիսկ կռուել Թուրքերի կողմից երկաթուղիները կտրելու անհանդուրժելի գործողութեան դէմ։ Մեր հարեւանների բոլոր ցանկութիւններն ու ջանքերը կայանում էին նրանում, որ, որքան կարելի է շուտ, անջատեն Կովկասը Ռուսաստանից, Կովկաս բերեն տաճիկներին, ռուսական Աղրբէյջանը միացնեն Տաճկաստանի հետ, ստեղծեն Անկախ Վրաստան եւ Թաղեն Հայկական Հարցը։

* * *

Այդ միջոցներին Գանձակի եւ Բագուի հայերը, որոնք ապրում էին Թուրքերի հոծ բազմութեան մէջ եւ կտրուած էին միմեանցից եւ ուրիշ տեղերի հայութիւնից, շատ ծանր օրեր էին ապրում։ Մի կողմից՝ նրանց տանջում էր այն հանգամանքը, որ այսպիսի դաժան պատմական րոպէում չէին կարող օգնութեան հասնել Կարսի ճակատին, միւս կողմից՝ մտահոգուած էին մերձաւոր ապագայի արիւնահեղ սպասելիքներով։ Նրանք տեսնում էին, ինչպէս մահմեդականութիւնը տենդոտ կերպով զինւում է, ինչպէս Տաճկաստանից եկած տարօրինակ քարոզիչներ գրգռում ու ոգեւորում են իրենց տգէտ ու ֆանատիկոս զանգուածները, ինչպէս յանախակի զանազան տեղերում հայերը խորհրդաւոր կերպով անյայտանում են եւայլն։

Մթնոլորտը թանձրանում էր օրէցօր։ Բագուում հայերը թէպէտ թուով անհամեմատ քիչ էին Թուրքերից*), բայց շատ լաւ զինուած ու կազմակերպուած էին ինքնապաշտպանութեան համար՝ շնորհիւ Հ. Յ. Դաշնակցութեան։

Առհասարակ Բագուի հայութիւնը միշտ ականաւոր դեր է խաղացել Կովկասի հայ-Թուրքական փոխյարաբերութիւնների խնդրում։ Նոյնը պէտք է ասել եւ Բագուի Թուրքերի մասին։ Երկու ազգութիւնների Թէ՛ մտաւոր եւ Թէ՛ քաղաքական իդէալների հետեւող մասսա-

*) Հայ զինուորների մեծ մասը գտնուում էին գերմանական եւ աւստրիական ճակատներում։

*) Մօտաւորապէս Բագուի մէջ 1918 թուին կար 322,000 բնակիչ, որից 160,000 Թուրք, 80,000 ռուս, 70,000 հայ եւ 12,000 միւս ազգութիւններ. վերջինների մէջ 7,000 հրէա։ Իսկ շրջակայ գիւղերը բացարձակ Թուրքական են։

© National Library of Armenia

ներբ ղլխաւորապէս այդ քաղաքումն էին շրջուում միմեանց հետ։ Եւ այդ էր պատճառը, որ այդ քաղաքում են տեղի ունեցել նրանց միջեւ թէ՛ արիւնահեղ կռիւները եւ թէ՛ բոլոր կարեւոր խորհրդակցութիւններն ու բանակցութիւնները «համերաշխութեան», «բարի հարեւանութեան», «եղբայրութեան» մասին։

1905–1906 թուականների հայ-թաթարական ընդհարումների ախուր յուշերը զգուշութիւն էին մտցրել թուրքերի մէջ ղէպի հայերը։ Նրանք չէին մոռացած, որ հայերը, բոլորովին անպատրաստ լինելով հանդերձ, կարողացան յաջողութեամբ իրենք իրենց պաշտպանել հարիւրաւոր յարձակուող թուրքերի դէմ, երբ վերջիններին ակներեւ կերպով օգնում էր նոյնիսկ այն ժամանակուայ ռուս կառավարութիւնը։ Այժմ, թէեւ թուրքերը աւելի լաւ էին պատրաստուած իրենց Մուսաւատ կուսակցութեան միջոցներով, բայց եւ՝ հայերը աւելի լաւ էին զինուած ու կազմակերպուած՝ Հ. Յ. Դաշնակցութեան դեկավարութեամբ։ Մանաւանդ այդ միջոցին, այսինքն՝ 1918 թուականի սկիզբին, երբ Բաքու էին հասել մի քանի հազար հայ զինուորներ դեման-աւստրիական հակառակներից եւ շնորհիւ հանապարհների կարուելուն մնացել էին քաղաքում։

Հայ զինուորներից շատերը ուզում էին զբաղուել Կասպի հանքերը, միւսները վերադառնալ տուն։ Եւ այն հանգամանքը, որ թուրքերը կարել էին հանապարհը եւ թոյլ չէին տալիս դնալ, չափազանց դրդում եւ կատաղեցնում էր նրանց։

Նրանք յուրջ սպառնալիք էին Բաքուայ հարուստ թրքութեան, եւ թուրքերը այդ զգում էին։ Այդ ժամանակ թուրքերի ծրագիրը այս էր։ կարել հայաբնակ վայրերը միմեանցից — Երեւանը — Ալեքսանդրապոլից, Ալեքսանդրապոլը Թիֆլիսից, վերջինս՝ Գանձակից եւ, վերջապէս, Գանձակը՝ Բաքուից,— եւ այդպիսով հայութիւնը ոչ միայն կը կաչկանդուի եւ չի կարողանայ օգնութեան հասնել տաճկական ճակատին, այլ եւ կը մատնուի նիւթական, բարոյական եւ ֆիզիքական մեծ զոհաբերութիւնների ու զրկանքների։

Բայց թուրքերը այդ ժամանակ ոչ մի կերպ չէին ուզում բացարձակ ոնդհարում ունենալ հայերի հետ։ Ժամանակ չէին, թէ կարող են յաջողութիւն ունենալ։ Ընդհակառակը, նրանց ներկայացուցիչները յանախակի հրաւիրում էին մեզ խորհրդակցութեան եւ անուշ խօսքերով խոստանում էին տալիս թէ՛ հանապարհների բացման մասին եւ թէ՛ հայ անհատների անյայտացման վերանալու մասին, վերադրելով այդ բոլորը «աւազակային» խմբերին եւ իրենց ժողովրդի ապիտութեան։

Մենք շատ լաւ էինք հասկանում Մուսաւատի այս ամարդի մեքենայութիւնները, բայց մենք բնաւ հաշիւ չունէինք կովկասում միջազգային արիւնահեղութիւններ առաջ բերել։ Հեշտ էր աշխատել, որ Ճանկասանը Կովկաս չմտնէ։ Եւ մենք միամտաբար կարծում էինք, թէ թուրքերն ու վրացիք, որ Թիֆլիսում ընդհանուր կովկասեան «Սէյմ»ի մէջ պարտաւորուել էին պաշտպանել Կովկասի 1914 թուականի սահմանները, դոնէ մեզ չեն խանդարի այդ ծանր պարտականութիւնը մինակ կատարելու։ Բայց այդ նրանց հաշուին չէր դալիս, եւ նրանք խարում ու խանդարում էին մեզ եւ հեշտացնում տաճիկների ներխուժումը Կովկաս։

Մակայն դէպքերը յաջորդում էին մէկը միւսին դահավէժ ընթացքով, եւ չափազանց դժուար էր այդպիսի պայմաններում խաղաղութիւնը պահպանել Կովկասի զանազան մասերում։

1918 (փետրուարի սկիզբին մի օր*) ինձ մօտ հաւաքուած էին Ց. Բ., Ա. Գ., Ս. Ա., խմբապետ Վ. եւ «Պապաչան»։ Մենք ծանր տրամադրութեան տակ խօսում էինք իրերի անյայտ դառնալու մասին, երբ յանկարծ ժամը չորսին հեռախօսով Գանձակից յայտնեցին, որ այնտեղ արդէն սկսուել է հայ-թուրքական ընդհարում եւ որ պէտք է օգնութեան հասնել։ Հեռախօսը կարողացաւ միայն այդքան հաղորդել։

Մի ժամից աւել մենք աշխատում էինք դարձեալ կապուել Գանձակի հետ։ Վերջապէս, այնտեղից յայտնեցին, որ մի 25-ի չափ հայ զինուորները, որոնք յայտնի չէ որտեղից հասել էին Գանձակի կայարանը եւ ուզում ճանապարհուել էին դէպի քաղաքի հայկական մա-

*) Թիւը չեմ յիշում։

© National Library of Armenia

սը*), յարձակման են ենթարկուել Թուրքերի կողմից եւ 12 կորուստ տուել: Հայ զինուորները պաշտպանուել են եւ նոյնպէս սպանել մի քանի Թուրքեր: Երբ մեզ յայտնում էին այդ դէպքի մասին, դեռ հրացանաձգութիւնը շարունակւում էր քաղաքում. բայց արդէն տեղական հայկական եւ Թուրքական Ազգային Խորհուրդները աշխատում էին համաձայնութեան գալ եւ խաղաղացնել քաղաքը: Ժամը 8ին յայտնեցին, որ հրացանաձգութիւնը դադարել է եւ յոյս կայ, որ տեղական կոմիտէները համաձայնութեան գան:

Այս տեղեկութիւնները ստացել էր Ե՛ւ Թուրքերի Ազգային Խորհուրդը Բազում, որը շտապեցնում անհանգիստ էր այս դէպքի առթիւ, կարծելով թէ Գանձակի դէպքը կարող է անդրադառնալ Բազումի վրայ, որտեղ հայերը նրանց կարծիքով շատ ուժեղ էին:

Ա՛յս էր պատճառը, որ Թուրքերի առաջարկութեամբ դարձեալ սկսուեցին մի շարք ժողովներ՝ սպառնացող արիւնահեղութիւնների առաջը առնելու նպատակով:

Այդ ժողովների եւ խորհրդակցութիւնների բնոյթը, չհաշուելով տրտատանուող դեղցիկ ճառերը, միշտ միւնոյնն էր:

Անկեղծօրէն համերաշխութեան եւ խաղաղութեան կողմնակից լինելով, մենք պահանջում էինք.

1) Բանալ երկաթուղու ճանապարհը եւ ապահովել հայերի երթեւեկութիւնը:

2) Վերջ տալ հայերի վրայ կատարուող յարձակումներին՝ քաղաքներում եւ գաւառներում:

Թուրքերը կեղծ եւ սուտ խոստումներով աշխատում էին մեզ հանգստացնել եւ զարմանալի լսիրչ անբնականութեամբ չէին քաշւում բուռն մեղադրանքներ բառնալ մեզ վրայ, երբ պարզւում էր, որ տասնեակ սպանուած հայերի փոխարէն մի տեղ մի Թուրք է սպանուած:

Նրանք ասում էին՝

ա) Մենք կազմակերպուած չենք. (սուտ էր, նրանք սպանութիւնների համար լաւ էին կազմակերպուած). ինչ որ անում են մերոնք, դա առանձնայնի խմբերի գործն է, որոնց դէմ դժբախտաբար մենք շատ դժուարութեամբ ենք կարողանում կռուել, որովհետեւ թէ՛ զինուած չենք, թէ՛ ազքատ ենք: (Բացարձակ սուտ էր. թէ՛ լաւ զինուած էին եւ թէ՛ մեզնից անհամեմատ նիւթապէս հարուստ էին):

բ) Դուք որպէս աւելի լաւ կազմակերպուած ու քաղաքակրթուած ազգ, պարտական էք օգնել մեզ, որ մեր ժողովուրդը նոյնպէս կազմակերպուի քաղաքականապէս ու թողնէ իր առանձնարարոյ հակումները:

գ) Մենք ամէն ջանք գործ ենք դնում եւ կ՝աշխատենք խաղաղացնել մեր առանձնեալներին, բայց դուք էլ մեզ օգնեցէք:

Այս «դուք էլ մեզ օգնեցէք»-ով նրանք մասամբ մեզ էլ մեղսակից էին անում իրենց «առանձնարարոյ» ժողովրդի արարքներին եւ անմիջապէս էին դնում, որ մենք քաղաքակրթենք Կովկասի Թուրքերին:

Մի խորհրդակցութեան ժամանակ էլ, երբ մենք կտրուկ պահանջ դրինք, որ նրանք միջոցներ ձեռք առնեն Բազու հասած հայ զինուորներին զինուած անվտանգ հասցնել Թիֆլիս, նրանք յայտարարեցին, որ այդ ցանկալի չէ, որ մեծ դիրախտութիւններ կարող են յառաջ գալ դրանից, որ հնարաւոր է նրանց անզէն կերպով, վագոններով հասցնել նշանակուած տեղը եւ որ դրա համար նրանք կարող են երաշխաւորել:

Բայց ի՞նչ արժէք ունէին նրանց երաշխաւորութիւնները. նրանք արդէն բաւականին նոյնիսկ զինուած ոուս զինուորների կոտորել էին Թիֆլիս-Բազուի ճանապարհի վրայ, նոյնը կ՝անէին եւ մեր անզէն զինուորների հետ եւ կ՝արդարանային «առանձնային խմբերով»:

Սակայն Բազում գտնուած հայ զինուորները, ինչպէս վերեւ յիշեցի, մեծ սպառնալիք էին Բազուի Թուրքերի համար: Վերջիններս շատ կ՝ուզենային նրանցից ազատուել եւ միւնոյն ժամանակ թոյլ չտալ, որ նրանք զինուած՝ Կարսի ճակատը հասնին:

Ժամանակ վատնելու եւ մեր զինուորներին ու մեզ հանգստացնելու համար Թուրքերը

*) Գանձակի կայարանը գտնւում է քաղաքից մօտ հինգ վերստ հեռաւորութեան վրայ եւ հայկական մասը հասնելու համար պէտք է անցնել համարեա ամբողջ Թուրքական քաղաքամասի միջով: Երկու մասերը, հայկական եւ Թուրքական, բաժանւում են մեծ կամուրջով:

© National Library of Armenia

հետեւեալ առաջարկութիւնը արին մեզ փետր. 28-ին.

— Անհրաժեշտ է մի պատգամաւորութիւն ուղարկել Գանձակ, որը կը հարթէ այնտեղի հայերի եւ Թուրքերի միջեւ ծագած թիւրիմացութիւններն ու վէճերը եւ որը մեծապէս կ'օգնէ «աւազակային խմբերի խաղաղացման» եւ ճանապարհների բացման:

Թուրքերը կ'ներաշխաւորէին մեր պատգամաւորների անձեռնմխելիութիւնը:

Ճարահատեալ մենք համաձայնութիւն տուինք: Թէեւ յոյս չկար, որ այդպիսի միջոցներով կարելի է համաձայնութեան գալ, բայց, որպէսզի մեզ չմեղադրեն ամբարիշտութեան մէջ, համաձայնուեցինք:

Երկու կողմէն ընտրուած պատգամաւորութիւնը դուրս եկաւ Բագուից մարտի 2-ին եւ հասաւ Գանձակ 4-ին:

Նրա կազմը հետեւեալն էր.

Թուրքերի ներկայացուցիչները՝ ա) Բէյրուր բէգ Ջիւանշիր*), բ) Միրզա Ասադուլլա եւ, գ) Աղա Աշուրով (բոլորը Մուսաւաթականներ, դ) Սաֆարալի (անկուսակցական) եւ ե) Բժ. Ռափիեւ (կարծեմ համակիր Մուսաւաթի):

Հայերի ներկայացուցիչներն էին՝ ա) Հայկ Տէր-Միքայէլեան (Ժողովրդական կուսակց.), բ) Գ. Նւանգուլեան, գ) Գերասիմ Շահնազարեան, դ) Յակոբ Մանանդեան (անկուսակցականներ) եւ ե) Մ. Շաթիրեան (համակիր Հ. Յ. Դաշնակցութեան):

Երբ հասանք Գանձակ, կայարանում ընդունեցին «զինուորական» պատիւներով: Երեւում էր, որ Գանձակի «Մուսաւաթական» կառավարութիւնը ամէն ջանք թափել էր՝ մեզ վրայ ձգող տպաւորութիւն գործելու իր ռազմական ուժով: Քաղաքի եւ իշխանութեան ներկայացուցիչները, որոնց մէջ չկար եւ ոչ մի հայ, առաջարկեցին մեզ, հայ պատգամաւորներիս, իջեւանել Թուրքական մասում առանձին պատրաստուած հիւրանոցում, բայց մենք հրաժարուեցինք, որովհետեւ մեզ յարմար էր իջեւանել հայկական մասում, որտեղ հնարաւորութիւն կ'ունենայինք ազատ յարաբերութեան մէջ մտնել տեղական հայկական կոմիտէի եւ կուսակցական մարմինների հետ:

Կառքերով եւ զինուած բազմաթիւ ձիաւորներով մեզ տարան Թուրքական թաղամասի միջով մինչեւ կամուրջը, որ բաժնում է Թուրքական մասը՝ հայկականից: Սկզբում մենք լաւ չէինք ըմբռնում, թէ ինչո՞ւ են մեզ ուղեկցում ա՛յդքան զինուած մարդիկ: Կարծում էինք, որ դա առանձին պատուոյ նշան է: Բայց, երբ անցնում էինք քաղաքի միջով եւ նկատում էինք զինուած կատաղի ամբոխի չթաքնուած ատելութիւնը դէպի մեզ, հասկացանք, որ այդ նախազգուշութիւնը՝ մեզ անվտանգ տեղ հասցընելու համար աւելորդ չէր: Երբ հասանք մինչեւ կամուրջը, մեզ կանգնեցրին եւ Թուրք պահապանները երեք անգամ սուլեցին: Կամուրջի միւս կողմից հայ պահապանները պատասխանեցին նոյնպէս սուլոցով: Մեզ ուղեկցող զինուած Թուրքերից մի մասը մնաց, եւ միայն տաս հոգի մեզ ուղեկցեցին մինչեւ կամուրջի մէջտեղը, որտեղ սպասում էին տասը զինուած հայեր: Թուրքերը մեզ յանձնեցին հայերին եւ մենք, վերջինների ուղեկցութեամբ հասանք այն հիւրանոցը, ուր պէտք է իջեւանէինք:

Անմիջապէս մի կարճատեւ խորհրդակցութիւն ունեցանք տեղական Ազգային Խորհուրդի Գործադիր Մարմնի անդամների հետ:

Մեզ համար պարզուեց հետեւեալը.—

Յունուարի կէսից սկսած, ինչպէս որ երկաթուղիներով հայերի համար երթեւեկութիւնը կտրուած էր, բոլորովին կտրուել էր նաեւ Գանձակի հայերի եւ Թուրքերի փոխյարաբերութիւնը, որովհետեւ կայարանում, չուկայում եւ առհասարակ Թուրքական մասում (որ քաղաքի մեծ մասն է) բոլոր պատահած հայերին Թուրքերը սպանում էին: Դրանից յետոյ թէ՛ Թուրքական եւ թէ՛ հայկական մասերը դարձել էին երկու թշնամի զինուած բանակներ, որոնք պաշտպանւում էին խրամատներով սահմանի ամբողջ երկարութեամբ, մշտական պահակներով եւ պատերազմական բոլոր օրէնքներով:

Կայարանը եւ երկաթուղին Թուրքերի մասումն էին, ուստի Թուրքերը ազատ կապուած էին արտաքին աշխարհի հետ եւ օգտւում էին ամէն յարմարութիւններից, ստանալով զինա-

*) Սա այն Ջիւանշիրն է, որ վերջերս ըսպանուեց Պոլսում:

© National Library of Armenia

մթերք եւ ուտեստի պաշար։ Իսկ հայերը պաշարուած բերդի նման, սպառում էին իրենց վերջին պաշարները. նրանք չափազանց ծանր եւ պատահական կապ կարող էին պահպանել լեռների հայկական գիւղերի միջով Դիլիջանի եւ Շուշուայ հետ։

Քաղաքի բնակչութեան երկու մասի փոխյարաբերութիւնների ընդհանուր պատկերն էր այս։ Բայց կար եւ վէճի կոնկրէտ առարկան էլ, որ հետեւեալն էր.—

Թիֆլիսի կենտրոնական զինուորական խորհրդի որոշմամբ (եւ մեր Ազգային Խորհուրդի համաձայնութեամբ) Թուրքերը պէտք է ստանային ռուսական 269-րդ գնդի բոլոր ունեցուածքը։ Այդ ունեցուածքի մէկ մասը՝ ռումբերը եւ փամփուշտները եղել են Թուրքական մասում եւ Թուրքերը իւրացրել էին արդէն, իսկ միւս մասը՝ հրացաններ (հայերի ասելով 2800 հատ, իսկ Թուրքերի ասելով 5200 հատ), բազմաթիւ զինուորական շորեր, ճոթեղէններ, վրաններ, պայտեր, մեխեր եւն. եղել են հայկական մասում. զինուորական այս իրերին ալ տէր էին դարձել հայերը եւ չէին ուզում յանձնել Թուրքերին։

Այս կարեւոր վէճն էր, որ կատաղեցրել էր Թուրքերին։

Հետեւեալ օրը, մարտի 5-ին, քաղաքային ինքնավարութեան դահլիճում նշանակուած էր ընդհանուր ժողով, որ տեղի պիտի ունենար հայ եւ Թուրք Ազգային Խորհուրդի անդամների եւ մեր (պատգամաւորներիս) ներկայութեամբ։ Ժողովը, յարաբերութիւնների երկարատեւ խզումից յետոյ, պէտք է ամենայն մանրամասնութեամբ պարզէր վիճելի խնդիրները, դիւրացնելու համար համերաշխութեան եւ համաձայնութեան գործը։

Ժողովը բաց արեց 70-ամեայ մի ծերունի Թուրք, Ռաֆիբէգով անունով, որ կովկասեան Թուրքութեան մէջ եզակի դէմքերից մէկը կարող էր նկատուել։ Հարուստ, խելօք, գեղեցիկ խօսող, տակտով, նենգամիտ, ֆանատիկոս, համիսլամական, նա շատ ազդեցիկ էր Գանձակում, ինչ որ Հաջի Արդին Թաղիեւը Բագուում։

Ես չեմ պատահել հայերիս մէջ այդ տարիքի տէր այդպիսի դէմքեր։ Հայերը այդ տարիքում չեն հետաքրքրւում քաղաքական, ազգային կամ հասարակական հարցերով այդպիսի անվերապահութեամբ եւ եռանդով։

Ռաֆիբէգովը մի գեղեցիկ ճառ արտասանեց համերաշխութեան եւ եղբայրութեան մասին եւ հրաւիրեց հակառակ կողմի ներկայացուցիչներին պարզաբանել ներքին թիւրիմացութիւնները եւ, դիմելով մեզ, խնդրեց ամենայն անաչառութեամբ, արդարութեամբ ու փոխադարձ զիջումներով հաշտեցնել թշնամի կողմերը։

Նրանից յետոյ խօսեց Հայկական Կոմիտէի Գործադիր Մարմնի նախագահ Արշակ Մալխասեանը, որը ամենայն մանրամասնութեամբ եւ ուժեղ չեչտերով պարզեց այն բոլոր ոճրագործութիւնները, որ կատարել էին Թուրքերը վերջին մի քանի ամիսների ընթացքում հայերի վերաբերմամբ, ներկայացրեց մի երկար ցուցակ մարդկային զոհերի (յականէ անուանէ) եւ նիւթական ու բարոյական կորուստների, որ հայերը կրել էին, եւ յայտարարեց, թէ այս բոլորը Թուրքերի կողմից գիտակցաբար ու ծրագրուած գործունէութեան արդիւնք են։

Արշակ Մալխասեանին պատասխանեցին Թուրք ներկայացուցիչներ, որոնցից աչքի էին ընկնում փաստաբան Սաֆաքիւրդսկին եւ Խասամէտովը։

Սաֆաքիւրդսկին մանաւանդ աշխատում էր յոգնեցնել մեզ երկար ճառով, ջանալով ազդել մեզ վրայ սարսափելի նկարագրութիւններով մի որեւէ Թուրքի սպանութեան մասին, թէկուզ այդ Թուրքի սպանութիւնը կատարուած լինէր հինգ հայի սպանութեան փոխարէն։

Ժողովը տեւեց շատ երկար. երբեմն նա ընդունում էր տաք վիճաբանութեան եւ նոյնիսկ կրքերի սուր բռնկման բնոյթ, մանաւանդ երբ խօսքը հասնում էր 269-րդ գնդի ունեցուածքը Թուրքերին յանձնելու մասին։

Երկու կողմերն էլ խօսք տուին հպատակուել մեր որոշման։ Մենք նոյն ձեւով վերադարձանք մեր հիւրանոցը, պայմանաւորուելով Թուրք պատգամաւորների հետ՝ օրեկան մի կամ երկու նիստ ունենալ հերթով Թուրքական եւ հայկական մասերում։

Նոյն երեկոյեան մենք Գործադիր Մարմնի անդամների հետ վերջնականապէս պարզեցինք իրերի դրութիւնը։

Հայերը ունէին մօտաւորապէս 2000 զինուած մարդ, որոնցից 500 հոգի կանոնաւոր

© National Library of Armenia

զինուորներ էին 269-րդ գնդից, 400 Դաշնակցական մարդուած կուսակցներ եւ հազարից աւելի խառնիճաղանճ զինուորներ՝ քաղաքացիներից եւ գիւղացիներից: Ոչ մի թնդանօթ չըկար հայերի մօտ. կային միայն երեք գնդացիրներ:

Թուրքերը ունէին 5000ից աւելի զինուած, որոնցից կէսը կիսամարդուած էր (նրանք մարդանոցներ կատարում էին ամէն օր կանոնաւոր կերպով), բազմաթիւ կիսազինուած թալանչիներ, 11 թնդանօթ (սահմանափակ ռումբերով) եւ շատ գնդացիրներ: Նրանց մէջ կային մի քանի ռուս սպաներ ինստրուկտորների պաշտօնում, չնայելով որ նրանք անհաշտ թշնամիներ էին ռուսներին: Նրանց կողմն էին նոյնպէս Ելիզենդօրֆ գերմանական մեծ ու հարուստ գիւղի զինուորները, որոնք առ երեսս միայն պահպանում էին չէզոքութիւն:

Ուժերի անհաւասարութիւնը ակներեւ էր, եթէ հաշուի չառնենք այն հանգամանքը, որ հայերի մէջ կային արդէն պատերազմին մասնակցած 500 զինուորներ իրենց սպաներով: Բայց դժուար էր սրանց վրայ առանձին յոյսեր դնել. նրանք վերջին բոպէին կարող էին հրաժարուել կուսակցից, որովհետեւ արդէն որոշ չափով վարակուած էին բոլշեւիզմի թունաւոր սիստով:

Ուրեմն բացի ընդհանուր պայմաններից, որոնք անխոյլատրելի էին դարձնում այն ժամանակ առաջ բերել որեւէ արիւնահեղ ընդհարում թուրքերի հետ, տեղական պայմանները պէտք էր նկատել միանգամայն անբարեյաջող մեզ համար:

Երբ մնացինք մենք պատգամաւորներս միայնակ՝ որոշեցինք.—

ա) Նկատի ունենալով, որ Անդրկովկասի բարձր զինուորական ատեանը (կենտրոնական զինուորական խորհուրդը) որոշել է եւ Հայկական Ազգային Խորհուրդը համաձայնել է 269րդ գնդի ունեցուածքը յանձնել թուրքերին, արդարացի նկատել թուրքերի պահանջը:

բ) Բայց նկատի ունենալով, որ այդ որոշումից յետոյ թուրքերը, հակառակ Անդրկովկասի ընդհանուր շահերին՝ 1) հրաժարուել են պաշտպանել 1914 թուականի սահմանները Տաճկաստանի ներխուժման դէմ, 2) մեզ, հայերիս խանգարում են այդ անել, կտրելով ճանապարհները, 3) Տեղուոյ կերպով զինուում են, որպէսզի օգնեն տաճիկներին՝ Կովկաս մըտնելու, 4) ամէն կերպ խանգարում են մեզ ստանալ նոյն կենտրոնական զինուորական խորհրդի որոշման համաձայն մեզ հասնելիք ռազմամթերքը (օրինակ, Մուսաւաթը Բաքուում արգելք էր լինում Սալեանակի գնդի զինամթերքը ստանալու) եւ, վերջապէս, 5) թուրքերը զինուած պատերազմական դրութեան մէջ են գտնուում մեզ հետ,— հայերը իրաւունք ունին շատոյ թուրքերին 269-րդ գնդի ունեցուածքը:

գ) Սակայն որովհետեւ ներկայումս անմտութիւն կը լինէր խորացնել հայերի եւ թուրքերի թշնամութիւնը եւ անհրաժեշտ է որոշ զիջումներով համաձայնութեան գալ,— մենք կարող ենք յանձնել թուրքերին այդ 269-րդ գնդին պատկանող բոլոր նիւթական արժէքաւորութիւն ներկայացնող առարկաները (զինուորական շորեր, վրաններ, ճոթեկէն եւն., մօտաւորապէս 3½ միլիոն ռուբլու ոսկով), իսկ 2800 հրացանները առայժմ, մինչեւ թշնամական դրութիւնը մեր մէջ շարունակում է, պահել մեզ մօտ:

դ) Դրա փոխարէն պահանջել թուրքերից այն բոլոր կենսամթերքների բաժինը, որը հասնելու էր Գանձակի հայկական թաղին, համաձայն քաղաքային վարչութեան որոշման եւ որը մօտ երկու ամսից աւել թուրքերը, տիրելով երկաթուղիներին, չեն յանձնել հայերին՝ զլխաւորապէս ալիւր, շաքար եւ նաւթ:

ե) Անմիջապէս դադարեցնել յարձակումները հայերի վրայ, բանալ բոլոր ճանապարհները եւ ապահովել հայերի երթեւեկութիւնը երկաթուղիներով:

զ) Ընդմիշտ մոռացութեան տալ սպանութիւնների վէճը եւ վնասների հատուցումների հարցը, չնայելով որ հայերի տուած զոհերը անհամեմատ աւելի էին, քան թուրքերինը:

Այս պայմանները մենք գտնում էինք խղճի եւ տրամաբանութեան տեսակէտից իրական դրութեան համապատասխան: Սակայն պէտք էր մեզ ունենալ եւ Գանձակի հայերի համաձայնութիւնը, մանաւանդ նրա զինուած մասի: Այդ պատճառով նշանակուեց հետեւեալ օրը, երեկոյեան, մի բազմամարդ ժողով, որտեղ պէտք է ներկայ լինէին Ազգային Խորհրդի ամբողջ կազմը, բոլոր կուսակցութիւնների ղեկա-

© National Library of Armenia

վարները, բոլոր սպանները, խմբապետները եւ հասարակութեան ներկայացուցիչները:

Ժողովը բացուեց ժամը ութին Երեկոյեան: Նախագահում էր Հայկ Տէր-Միքայէլեանը: Բոլոր պատգամաւորները առանձին-առանձին մանրամասն բացատրեցին մեր Գանձակ զալու պատճառները, Անդրկովկասի եւ մասնաւորապէս հայերի դրութիւնը թէ՛ քաղաքական, թէ՛ ռազմական եւ թէ՛ տնտեսական տեսակէտներից: Յետոյ Տէր-Միքայէլեանը յայտարարեց վերեւ բերած մեր որոշումները, որ մշակել էինք Թուրք պատգամաւորներին առաջարկելու համար:

Մենք միանգամայն զարմացած եւ հիասթափուած մնացինք, երբ ժողովականները միաձայն եւ ամենակտրուկ կերպով իրանց ճառախոսների բերանով յայտնեցին, որ մեր որոշումները չեն ընդունում եւ որ այդ որոշումները անպատուաբեր են մեզ համար: Նրանք ոչ միայն չէին համաձայնում որեւէ բան տալ Թուրքերին 269-րդ գնդի ունեցուածքից, այլեւ պահանջում էին Թուրքերից ահագին դրամական տուգանք սպանուած հայերի ընտանիքների ապահովութեան համար:

Ժողովը, որ տեւեց մինչեւ զիշերուայ ժամի մէկը, չափազանց ազմկալի էր եւ թշնամական դէպի մեզ՝ պատգամաւորները: Մանաւանդ մենք այդ նկատեցինք, երբ դուրս եկանք փողոց, որտեղ բազմաթիւ զինուած մարդիկ զանազան բացագանչութիւններով պահանջում էին Թուրքերին ոչինչ չտալ եւ նոյնիսկ սպառնում էին մեզ:

Մեր դրութիւնը ծանր էր: Մի կողմից՝ մենք դեռ վստահ չէինք, թէ Թուրքերը կ'ընդունին մեր առաջարկութիւնները, միւս կողմից՝ մեր ժողովուրդը, գազազուած Թուրքերի դաւանութիւններից ու խարդախութիւններից, կորցրել էր իր հաւասարակշռութիւնը եւ չէր ուզում ինքը արդար որոշման հպատակուել:

Ամսի 7-ին առաւօտեան նշանակուած էր հայ եւ Թուրք պատգամաւորների նիստը: Մենք խոստացել էինք այդ նիստին ներկայացնել համաձայնութեան պայմանագրի ուրուագիծը: Բայց ի՞նչ կարող էինք ասել մեր Թուրք ընկերներին այդ ազմկալի ժողովից յետոյ:

Որոշեցինք այդ օրը նիստը յետաձգել եւ յայտնել Թուրք պատգամաւորներին, որ դեռ հարցերը լիակատար կերպով չենք կարողացել պարզել: Մեր կողմից Հայկ Տէր-Միքայէլեանը պէտք է գնար եւ յայտարարէր այդ որոշումը Թուրք պատգամաւորներին:

Վերջիններս շատ զժգոհ էին եւ որովհետեւ շատ չտատում էին վերադառնալ Բագու (նրանք բոլորն էլ մեծ գործերի տէր մարդիկ էին), այդ պատճառով յայտնել էին Տէր-Միքայէլեանին, որ նրանք երկար չեն կարող սպասել, բայի դրանից, աւելացրել էին, իբրեւ սպառնալիք.— «Թուրք ամբոխը սաստիկ զրգռուած է եւ նրան երկար այդ դրութեան մէջ պահել չի կարելի»: Խնդրել էին հետեւեալ օրը հարցը վերջացնել:

Դրութիւնը բարդանում էր: Երբ Տէր-Միքայէլեանը վերադարձաւ, մենք երկար խորհրդակցութիւն ունեցանք: Պարզուեց, որ միայն ես կարող էի ազդել տեղական Դաշնակցական կոմիտէի վրայ, եւ որ միայն այդ կոմիտէն իր հեղինակութեամբ կարող է փրկել դրութիւնը:

Ես անմիջապէս հրաւիրեցի Դաշնակցական կոմիտէի նիստ: Ներկայ էին 28 հոգի: Նախապէս ես պատրաստել ու համոզել էի կոմիտէի մի քանի անդամներին: Կրկին մանրամասն բացատրեցի գործերի դրութիւնը, մեր մեկուսացած դրութիւնը, Կարսի ճակատին օգնելու անհրաժեշտութիւնը եւ ուրիշ շատ կարեւոր հարցեր, որոնք հրամայողական կերպով թելադրում էին ներքին խաղաղութեան պահպանումը Անդրկովկասում:

Երբ վիճաբանութիւնից յետոյ քուէարկութեան դրուեց հարցը, 21 հոգի ձայն տուին յօդուտ հայ պատգամաւորների որոշման, իսկ 7 հոգի՝ հակառակ: Բայց այդ դեռ բաւական չէր. քաղաքում պատերազմական դրութիւն էր եւ վճռական խօսքը պատկանում էր զինուած ուժերին, իսկ նրանք բոլորը Դաշնակցականներ չէին, ուրեմն կարող էին եւ չհպատակուել վերջինիս, կոմիտէի կարգադրութեան:

Այդ օրը մեզ համար պարզուեց մի չափազանց անախորժ հանգամանք: Լուր կար, որ Մոսկուայի բոլշեւիկեան կառավարութիւնը իբր թէ մի դեկրետ է հրատարակել, որով ճակատից վերադարձած զինուորների սեփականութիւնն է դարձրել իրենց գնդերին պատկանող ամբողջ գոյքը: Եղե՞լ էր արդեօք այդպի-

© National Library of Armenia

սի դեկրետ՝ — չգիտեմ: Գիտեմ միայն, որ կարգադրուած էր վերադառնալ տուն՝ հրացաններով ու փամփուշտներով:

Այդ կարգադրութեան հիման վրայ 269րդ գնդի հինգ հարիւր զինուորները համարում էին գնդի ունեցուածքը իրենց սեփականութիւնը եւ չէին համաձայնում հպատակուել կենտրոնական զինուորական խորհրդի կարգադրութեան եւ յանձնել Թուրքերին այդ գոյքը: Նրանք իրենց այս սոսկ նեակաան չահասիրութիւնը պարուրում էին մի քիչ բոլշեւիզմով, մի քիչ հայրենասիրութիւնով եւ միամիտ ժողովրդի մէջ, որը սաստիկ դրդուած էր Թուրքերի դէմ, գտնում էին համակրողներ:

Այսպիսով Գանձակի հայութեան եւ նոյնիսկ կուսակցական դիտակից չրջանների մէջ զարգացել ու ամրացել էին վտանգաւոր ու հակահասարակական տարօրինակ հասկացողութիւններ, որոնց հետեւանքը սովորապէս լինում է անիշխանութիւն: Եւ իսկապէս այդ միջոցին Գանձակում տիրում էր հայերի մէջ անիշխանութիւն. եւ եթէ թերեւս կարելի էր նկատել որոշ կարգապահութեան նշաններ, այդ պէտք էր բացատրել այն ընդհանուր Թուրքական վտանգով, որ կախուած էր հայերի գլխին, իբրեւ սպառնալիք:

Հայը երկար տարիներ զէնք կրելու իրաւունքից զրկուած, յանկարծ զէնքի տէր է դարձել: Այս երկու հանգամանքները առաջ էին բերել այնպիսի մտայնութիւն նրանց ուղեղների մէջ եւ այնպիսի քաոսային տրամադրութիւն հոգիների մէջ, որ նրանք կորցրել էին առողջ մտածելու եւ արդար վերաբերուելու բոլոր ընդունակութիւնները: Ո՛վ փորձէր համոզել նրանց արդար ու հեռատես լինել, կը նկատուէր թշնամի նրանց «սրբազան» իրաւունքների: Այդպիսի բոպէներում ամբոխը հպատակում է միայն ֆիզիքական ուժին: Բայց ո՞ւրտեղ կարելի է գտնել ուժ, երբ բոլորի մէջ մեռել էր կարգապահութեան անհրաժեշտութեան զգացումը:

Պէտք էր խորհրդակցել Դաշնակցական խմբապետների հետ: Այդ միջոցին Գանձակ էին գտնուում երկու խմբապետներ,— մէկը «Բարի Լոյս» մականունով, տաճկահայ, որը ունէր 220 հոգի, մեծ մասամբ տաճկահայեր, միւսը՝ Օհանէս անունով, Ղարաբաղցի, 160 լաւ զինուած ու մարզուած Ղարաբաղցի ձիաւորներով:

Երբ հրաւիրեցի նրանց առանձին-առանձին խորհրդակցելու, ներկայ էին կոմիտէի անդամներից Արշակ Մալխասեանը եւ Արմենակ Բորեանը: Վերջինս մի համակրելի, խելօք եւ կրակոտ երիտասարդ էր:

Առաջինը եկաւ «Բարի Լոյս»ը: Մեր միջեւ տեղի ունեցաւ հետեւեալ տիալոգը:

— Ո՞րքան տղաներ ունիս ձեռքիդ տակ,— հարցրի ես:

= 220 հոգի:

— Լա՞ւ տղաներ են, քա՞ջ են, լաւ մարզուա՞ծ են:

= Լաւ են, քաջ են եւ կատաղած են Թուրքերի դէմ:

— Քեզ հպատակո՞ւմ են:

= Այո՛, ի հարկէ:

— Ի՞նչ է քո կարծիքը, գնդի գոյքը՝ բացի հրացաններից, Թուրքերին յանձնելու մասին:

= Ես կարծում եմ չպէտք է տալ:

— Իսկ եթէ կոմիտէն քեզ հրամայէ՞:

= Իմ խղճի դէմ է այդ բանը:

— Այստեղ խղճի հարց չկայ: Ես հարցնում եմ, եթէ կոմիտէն հրամայէ, ի՞նչպէս կը վարուես դու:

= Չգիտեմ, պէտք է խորհրդակցեմ տղաների հետ:

— Չէ՞ որ դու ասացիր, որ տղաները քեզ հպատակուում են այնպայման:

= Այո՛, բայց այդ հարցում կարող են չը-հպատակուել:

— Ինչպէս. դու չգիտե՞ս, որ զինուորական կազմակերպութեան մէջ այդպիսի կամայականութիւններ անթոյլատրելի են:

= Այդ հարցը ուրիշ հարց է, զինուորական հարց չէ: Տղաները կարող են ուրիշ կերպ վերաբերուել:

— Ես ուզում եմ իմանալ քո վերաբերմունքը. ի՞նչպէս կը վարուես, եթէ կոմիտէն հրամայէ:

= Մինչեւ տղաների հետ չխօսեմ, չեմ կարող պատասխանել:

— Լաւ: Քեզնից պատասխանի կը սպասեմ մի երկու ժամից յետոյ: Քո խումբը հպատակում է կոմիտէին՞, թէ ըմբոստների մի խումբ

© National Library of Armenia

է, որ միայն իր ցանկացած գործերին է ծառայում:

Ներս մտաւ Օհաննէսը, մի բարձրահասակ, վայելչակազմ, նիհար, բայց ուժեղ տըղամարդ:

— Որքան մարդ ունիս, Օհաննէս:

= 160 ձիաւոր:

— Քեզ յայտնի է, որ մենք ստիպուած ենք որոշ զիջումներ անել Թուրքերին, որպէսզի արիւնահեղութեան առաջն առնենք: Եւ գիտե՞ս՝ թէ ի՞նչ զիջումներ ենք ուզում անել: Դու ի՞նչ ես կարծում սրա մասին:

= Ես կարծում եմ Թուրքերին ոչինչ չըպէտք է տալ:

— Իսկ եթէ կոմիտէն վճռէ տալ, դու ի՞նչ դիրք կը բռնես:

— Ես կը հպատակուեմ կոմիտէի վճռին:

— Իսկ քո տղանե՞րը:

= Նրանք, ինչպէս ես կը հրամայեմ, այնպէս էլ կ'անեն:

— Ուրեմն ես քեզ յայտնում եմ, որ կոմիտէն այսօր վճռեց ընդունել պատգամաւորների որոշումը: Անհրաժեշտ է այդ բանը իրագործել, եթէ Թուրքերը եւս համաձայնեն: Ի՞նչ ես կարծում, ինչպէս պէտք է գործել, որպէսզի ներքին խռովութիւններ առաջ չգան մեր ժողովուրդի մէջ:

= Ինձ թւում է, թէ ժողովուրդի մէջ ոչ մի խռովութիւն առաջ չի գայ: Մեր ժողովուրդը արիւն թափել չի սիրում եւ ամէն կերպ ուրախ կը լինի խուսափիլ դրանից: Հարցը միայն վերաբերում է այն 500 զինուորներին, որոնք 269-րդ գնդի գոյքը համարում են իրենց սեփականութիւնը: Նրա՞նց պէտք է զսպել:

— Իսկ ի՞նչպէս զսպել: Աւելի լաւ չէ՞ համոզել:

= Ո՛չ, նրանց համոզել անկարելի է: Նրանք բոլշեւիկներ են, ո՛չ ազգ են ճանաչում, ո՛չ գաղափար: Եթէ նրանք այս բոպէին մեզ հետ են, այդ նրանից է, որ իրենց գնդի գոյքը այստեղ է: Եթէ այդ չլինէր, նրանք կարող էին նոյնիսկ Թշնամու կողմը անցնել, եթէ Թշնամին լաւ վարձատրէր նրանց:

— Այդ վատ բան ասացիր, Օհաննէս:

= Բայց սա ճշմարտութիւն է:

— Ուրեմն նրանք առանց կռուի չե՞ն յանձնի գոյքը, ուրեմն եղբայրասպան կռիւ պէտք է առաջ գայ մեր մէջ:

= Պէտք է աշխատել, որ այդպէս չլինի. եթէ ոչ, մենք կորած ենք:

— Բայց եթէ մենք Թուրքերի հետ համաձայնութեան չգանք, այն ժամանակ էլ մեր դըրութիւնը շատ ծանր կը լինի:

= Միանգամայն ճիշդ է: Այդ զինուորները կռուողներ չեն. հէնց որ սկսուի կռիւը, նրանք փախչելու են սարերը, գնալու են իրանց տները: Մենք հազիւ 3-4 հարիւր հոգի մնանք տասնեակ հազարաւոր Թուրքերի դէմ: Այնպէս որ, եթէ ոչ մի տեղից մեզ օգնութիւն հասնելու չէ, ես էլ կարծում եմ պէտք է Թուրքերին զիջել:

— Բայց ի՞նչպէս զիջել, երբ ասում ես որ այդ զինուորները կը հակառակուեն:

= Նրանց պէտք է զինաթափ անել. ուրիշ միջոց չկայ:

— Զինաթա՞փ անել. 500 հոգու զինաթա՞փ անել. այդ ի՞նչպէս մենք կարող ենք անել:

= Եթէ կոմիտէն հրամայէ, ես կ'անեմ:

— Բայց ի՞նչպէս:

= Այդ իմ բանն է:

Մալխասեանը եւ Բորեանը վկայեցին, որ Օհաննէսին կարելի է վստահանալ:

Օհաննէսը խօսք տուեց, որ հետեւեալ գիշերը (ամսոյս 9-ին) նա զինաթափ կ'անի զինուորներին, եւ այն ժամանակ կոմիտէի բոլոր կարգադրութիւնները կանոնաւոր ու առանց ներքին դժգոհութիւնների կը կատարուեն: Նա խնդրեց, որ այդ բանը, մինչեւ զինուորներին զինաթափ անելը, խիստ գաղտնի մնայ:

Երբ ես գնացի միւս պատգամաւորների մօտ, որոնք անհամբեր սպասում էին ինձ, նրանք չափազանց այլայլուած էին երեւում: Տէր-Միքայէլեանը ինձ տուեց Թուրք պատգամաւորներից ստացած մի գրութիւն, որ կըրում էր ուլտիմատումի (վերջնագրի) բնոյթ: Նրանք գրում էին, որ չեն հասկանում, ինչո՞ւ ենք մենք գործը ձգձգում, որ նրանք այլ եւս սպասել չեն կարող, որ ամսոյս 9-ին իրենց Ռամազանն է եւ որ այդ օրը նրանք պէտք է լինեն Բագւում. ուրեմն, նրանք վաղը ճաշից յետոյ պէտք է մեկնեն: Խնդրում էին առաւօտեան (ամսոյս 8-ին) մինչեւ ժամը 12-ը հարցը վերջացնել:

Ես նրանց բացատրեցի, որ Դաշնակցական

© National Library of Armenia

կոմիտէն համաձայն է մեր որոշումներին, բայց անհրաժեշտ է գտնում կատարել որոշ զործողութիւններ եւ միայն վաղը չէ միւս օրը (մայիս 9-ին) կարելի կը լինի մեր պայմանները առաջարկել Թուրքերին:

Թուրքերի ուլտիմատումը դարձեալ փոխեց դրութիւնը: Խնդրել Թուրքերին դարձեալ մի օրով յետաձգել, չէր կարելի: Նրանք անկասկած պիտի մերժէին եւ մեզ անել դրութեան մէջ ձգէին:

Մնում էր միայն, որ մենք դիմէինք Թիֆլիս, մեր Ազգային Խորհրդին եւ խնդրէինք, որ այնտեղից կամ համոզէին Թուրքերին այդպէս չշտապել, կամ Անդրկովկասեան Սէյմի կողմից նոյնպէս ներկայացուցիչներ ուղարկէին՝ մեզ հետ միասին Գանձակը խաղաղացնելու:

Անմիջապէս գնացինք հեռագրատուն եւ հեռագրով խօսեցինք մեր Ազգային Խորհրդի հետ: Այնտեղից խոստացան առանց յետաձգելու բանակցել «Սէյմ»ի նախագահութեան հետ: Դրա հետեւանքը այն եղաւ, որ նոյն օրը Թուրքերին Թիֆլիսից յայտնել էին, որ «Սէյմ»ը ուղարկում է իր երեք անդամներին՝ Բաղուի պատգամաւորների հետ Գանձակի թիւրիմացութիւնները վերջ տալու համար, եւ խնդրում է սպասել այդ պատգամաւորներին:

Թուրք պատգամաւորները մեծ դժկամակութիւն յայտնեցին, բայց պէտք է սպասէին:

Ամսոյս 8-ը անցաւ սպասողական դրութեան մէջ:

Այդ օրը, դիշերուան ժամը 11-ին, եկան ինձ յայտնեցին, որ 269-րդ գնդի զինուորները թալանել են այն պահեստները, որտեղ գտնուում էր Թուրքերին յանձնուելիք դոյքի մեծ մասը:

Դա բացարձակ լրբութիւն էր զինուորների կողմից: Եւ անմիջապէս ուղարկեցի Օհաննէսի յետեւից. նա չէր կարողացել դալ ինձ մօտ եւ յայտնել էր, որ ամէն միջոց գործ կը դնի թալանուած ապրանքը գտնելու: Գիշերը մեզ համար անցաւ շատ անհանգիստ:

Առաւօտեան ժամը 4-ին Օհաննէսի տղաներից մէկը եկաւ եւ նրա կողմից յայտնեց, որ թալանի ապրանքը ամբողջապէս գտնուած եւ յետ է դարձուած, զինուորները զինաթափ են արուած եւ նրանց զլխաւորները, 12 հոգի, բանտարկուած են:

Այդ օրը առաւօտեան եկան Թիֆլիսից «Սէյմ»ի երեք անդամները՝ Գեւորգիսի Մախարաղձ, Աւետիք Սահակեան («Հայր Արարատեան») եւ Շախխախտինսկի: Սրանց հետ եկել էր եւ Խորէն Համասիւրը, որ Գանձակեցի էր եւ իրաղեկ տեղական գործերին:

Մի ժամից յետոյ մենք նիստ ունեցանք թուրք պատգամաւորների հետ, որին նախագահում էր վրացի Մախարաձէն*):

Մենք ներկայացրինք մեր մշակած համաձայնութեան պայմանագիրը: Երբ վերջացրինք պայմանագրի ընթերցումը, Ջիւանշիրը մի այնպիսի կատաղութեամբ յարձակուեց մեզ վրայ, որ մենք բոլորովին ապշած մնացինք: Նա մեզ մեղադրում էր բոլոր դժբախտութիւնների եւ ոճրագործութիւնների մէջ, ռուսասիրութեան մէջ: Մեղադրում էր, որ մենք դաւաճանեցինք Տաճկաստանին, այնտեղ յեղափոխութիւն առաջ բերելով, որ բոլորովին զարմանալի չէ, որ Տաճկաստանը կոտորեց միլիոնից աւելի հայեր: Եւ վերջն էլ աւելացրեց, իբրեւ սպառնալիք, որ միւնոյնն է, տաճիկները պէտք է դան եւ տիրեն Կովկասին, որ հայերին փրկութիւն չկայ եւ որ ի զուր ենք մենք պայքարում Թուրքերի դէմ. Թուրքերը տաճիկների հետ են, որոնք արդէն դալիս են Կովկաս:

Եւ այս զայրոյթի պատճառն այն էր, որ մենք հրաժարւում էինք հրացաններ տալ մեր թշնամուն եւ ուզում էինք օգնութեան հասնել Կարսի ճակատին:

Նրան ջղայնացած պատասխանեցին Տէր-Միքայէլեանը եւ Համասիւրը: Մախարաձէն եւ ես հասկցրինք Ջիւանշիրին, որ նա իրեն պատգամաւորի անվայել կերպով է պահում եւ Մախարաձէն աւելացրեց, որ «Սէյմ»ի ցանկութիւնն է այստեղ հաշտութիւն կայացնել, իսկ Ջիւանշիրի վերաբերմունքը չի կարող խաղաղացնել թշնամի կողմերը: Յետոյ աւելացրեց. «Որովհետեւ միակ հարցը հրացանների հարցն է, ես հասկանում եմ, որ ներկայ պայմաններում հայերը չեն կարող իրանց դէմ կանգնած թշնամուն հրացաններ տալ: Ես խոս-

*) Նա Թիֆլիսի զինապահեստի պետն էր այդ ժամանակ:

© National Library of Armenia

տանում եմ Թիֆլիսի զինապահեստից որոշ քանակութեամբ հրացաններ տալ Գանձակի Թուրքերին: Երևկոյեան կը յայտնեմ, թէ քանի՞ հրացան կարող եմ տալ»:

Այս խոստումը հանգստացրեց Թուրքերին, բայց Ջիւանշիրը մեր տրամադրութիւնը շատ փչացրեց: Որոշուեց երևկոյեան հաւաքուել եւ վերջնականապէս խմբագրել հաշտութեան պայմանագիրը: Նիստը փակուեց:

Մտանում է ինձ Միրզա Ասադուլան եւ խնդրում է, որ մենք նրանց հետ գնանք մզկիթ, որտեղ Ռամազանի պատճառով մեծ բազմութիւն է հաւաքուել:— «Սա մի առիթ է, որ դուք շնորհաւորէք մեր տօնը եւ մենք միասին յայտարարենք հաշտութիւն կայանալու մասին»:

Մախարաձէն էլ խնդրեց, եւ մենք գնացինք մզկիթ, որտեղ հաւաքուած էր Թուրքերի մեծ բազմութիւն:

Մերունի Ռաֆիրէդովը, Մախարաձէն եւ Համասիւրը յայտարարեցին հաշտութեան մասին եւ յորդորեցին այսուհետեւ սիրով ու բարեկամութեամբ ապրել հայերի հետ: Խօսեց և՛ Ջիւանշիրը, որը այդտեղ էլ չկարողացաւ զսպել իրեն եւ ակնարկեց, որ թէպէտ հաշտութիւն կայացել է, բայց սա միայն ձեւական եւ ժամանակաւոր հաշտութիւն է, մինչեւ որ հայերը իրենց դիրքը եւ դերը դէպի հարիւր միլիոնաւոր մահմեդականութիւնը չփոխեն...

Թուրքերը շատ խնդրեցին, մեզ այդ օրը մնալ իրենց մօտ ճաշի, բայց մենք կտրուկ կերպով մերժեցինք: Նրանց մօտ մնաց ճաշի միայն Մախարաձէն, որը իջեւանել էր մեր հիւրանոցում:

Երևկոյեան հէնց նոր էինք հաւաքուել Թուրքերի մօտ խմբագրելու պայմանագիրը, երբ դուրս կանչեցին Ջիւանշիրին: Վերջինս շուտով վերադարձաւ եւ յայտնեց, որ Թիֆլիսից պատահմամբ(?) եկել է Խան-Խոյսկին*). «Եթէ հակառակ չէք — ասաց,— խնդրում եմ, որ նա ներկայ լինի մեր այսօրուայ նիստին»: Թուրքերը առանձին պատրաստակամութիւն յայտնեցին նրան ներս հրաւիրելու: Մենք լուռ էինք, լուռ էր և՛ Մախարաձէն:

Մեզ համար պարզ չէր՝ Խոյսկին իսկապէս պատահմա՞մբ էր եկել, թէ Թուրքերի առանձին հրաւէրով՝ պայմանագիրը խմբագրելու համար:

Խան-Խոյսկին ներս մտաւ եւ, պէտք է ասել, որ նա ոչ միայն ներկայ եղաւ, այլ նիստը ամբողջութեամբ ինքը ղեկավարեց, թէպէտ նախագահում էր Մախարաձէն: Նա ընդհանրապէս կովկասի ամենալաւ փաստաբաններից էր համարւում: Մերոնք՝ Եւանդուլեանը եւ Մանանդեանը, որ ներկայ էին, աւելի թոյլ էին: Նա անմիջապէս հարցը ընդարձակեց եւ, Գանձակին ու Բագու-Թիֆլիս երկաթուղուն երկրորդական նշանակութիւն տալով, վէճի առարկան դարձրեց Երեւանը, Նախիջեւանը, Ալեքսանդրապոլը, որտեղ հայերը աւելի բազմաթիւ են եւ որտեղ նրանք մի քանի սպանութիւններ էին կատարել ի պատասխան Թուրքական անվերջ խժդժութիւնների:

Վերջապէս, ահագին աղմուկից եւ վիճաբանութիւններից յետոյ պայմանագիրը խմբագրուեց ու ստորագրուեց: Մեր մշակած պայմանագրին աւելացրուեց միայն մի քանի կէտեր Երեւանեան նահանգի եւ Կարսի շրջանի ճանապարհների ու Թուրք գիւղերի տեղահանութեան մասին:

Հետեւեալ օրը հայկական մասից արդէն տարուում է 269-րդ գնդի զոյգերը դէպի Թուրքական մասը, իսկ վերջինից ալիւր, շաքար եւ նաւթ էր տեղափոխուում դէպի հայկական մասը: Ժողովուրդը նոյնպէս, վախվխալով, սկսեց երթեւեկել հակառակ քաղաքամասերում եւ վերականգնել հին ծանօթութիւնն ու հարեւանութիւնը:

Մայիսի 11-ին մենք գնում էինք Բագու: Մեծ գնացք էր եւ մենք տանում էինք մեզ հետ մօտաւորապէս 300 հայեր, գլխաւորապէս երեխաներ ու կանայք, որոնք ամիսների ընթացքում կորուած էին իրենց հարազատներից:

Այսպիսով մեծ դժուարութեամբ կարողացանք Գանձակի արիւնահեղութեան առաջն առնել: Եւ մեզնից ո՞վ կարող էր դուշակել, որ միայն մի շաբաթ յետոյ, մայիսի 18-ին, պէտք է բռնկուէին Բագուի սոսկալի կռիւները, որոնք տեւեցին մինչեւ տաճիկների Բագու հասնելը եւ որոնք այնպիսի մեծ պատմական նշանակութիւն ստացան:

*) Որին սպանեցին անցեալ տարի Թիֆլիսում:

© National Library of Armenia

ԱՐՄԷՆ ԳԱՐՕ

Գրեց՝ ԱՍԱՏՈՒՐ

Ո՛չ ողբալ, ո՛չ արտասուել, այլ ճանչնալ: Այս կեղրոնական, անվանելի, հալածող միտքն է որ կը տանջէ զիս Գարօի թարմ հողակոյտին առջեւ: Կորուստը մեծ է եւ թերեւս անդարմանելի, բայց մարդիկ, որքան ալ մեծ ըլլան անոնք, մահկանացու են: Եւ մեծ մահկանացուներու դագաղին առջեւ մեր պարտքն է՝ խոր ցաւը մեր սրտերուն եւ սեւ սուգը մեր հոգիներուն՝ սերտել, քննել անոնց կեանքն ու գործը եւ ըմբռնել, ճանչնալ զանոնք:

*

* *

Գարօն մարդ մըն էր, ամէն բանէ առաջ: Ծնունդով, կերտուածքով, խառնուածքով, իղձերով, հակումներով, մտածումներով, ապրումներով եւ առաւել եւս բնազդով բարձրագոյն տիպ մը մարդու: Զեմ ճանչցած ուրիշ մէկը, որ անոր չափ մարդկային տիպը ազնուական գեղեցկութեան մը, կատարելութեան մը հասցուցած ըլլայ: Ծնած էր այդպէս. առաքինի, վճիտ, բիւրեղ: Իր ազնուականութիւնը ըստացական չէր, այլ բնածին: Իր խմորը տարբեր էր:

1917-ին ճանչցայ զինքը այստեղ, Ամերիկայի մէջ: Կովկասէն էր եկած հայութեան ճակատագրին մէջ Մ. Նահանգներու կատարելիք դերը բնազդաբար եւ ամենէն կանուխ ըմբռնելով: Արդարացա՞ն իր կապած մեծամեծ յոյսերը այս երկրին հանդէպ: Այդ արդէն ուրիշ հարց է: Հանրային դէմքի մը մեծութիւնը իր աշխատանքներուն տուած անմիջական արդիւնքէն չափել սխալ պիտի ըլլար:

Առաւօտ մը, երբ Պէնէք փողոցի խմբագրատան մէջ զբաղուած էինք մեր առօրեայ աշխատանքով, ներս մտաւ հասակագեղ, յաղթանդամ, տպաւորիչ արտաքինով եւ բարեհամբոյր արտայայտութեամբ մարդ մը: Անմիջապէս ճանչցանք զինք: Եկած էր անաղմուկ, առանց իր հասած ըլլալու մասին կանխաւ լուր տուած ըլլալու: Տարիներ առաջ ալ, Պանք Օթոմանի դէպքէն ետք, եղած էր Ամերիկա, Վռամեանի օրերուն, եւ այժմ՝ անոր եղերական նահատակումէն ետք՝ իր դիւրազգած հոգին անգամ մըն ալ կը փոթորկուէր «Հայրենիք»ի այս մտերիմ միջավայրին մէջ: Խօսեցանք երկար, կարօտով, սիրտ սրտի: Անկէ ի վեր ան եղաւ մեր չիտակ, ազնիւ, բարի, նուիրուած առաջնորդը, միանգամայն մտերիմը՝ սրտրաց, անկեղծ, հայրական գորովով եւ եղբայրական ջերմութեամբ տոգորուն: Անկէ ի վեր ամբողջ վեց տարիներ, մինչեւ իր վաղաժամ մահը, այդ հոգեկից մտերմութիւնը ոչինչով չաղօտեցաւ:

ՏՕՔԹ. Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ
(ԱՐՄԷՆ ԳԱՐՕ)

Այդ շրջանին էր որ պատերազմական դէպքերը ստացան զահավէժ ընթացք մը: Ռուսա-

© National Library of Armenia

կան յեղափոխութեան յորձանքները մէկ կողմէն, Մ. Նահանգներու մուտքը կռիւի կրկէսին մէջ միւս կողմէն դրին հիւծած, սպառած մարդկութիւնը մեծամեծ յոյսերու, դրախտային քաղցր տեսիլքներու անդիմադրելի ցնորքին առջեւ։ Արիւնլուայ, նահատակուած հայութիւնն ալ, մանաւանդ անոր ցիրուցան բեկորները արտասահմանի մէջ, տոգորուեցան նոր ոգեւորութեամբ, նոր խանդավառութեամբ։

Այսօրուան պէս կը յիշեմ, թէ ի՞նչպէս այդ բախտորոշ օրերուն Գարօն ամէն առաւօտ կուգար խմբագրատուն, յաւիտենական ժպիտը իր աչքերուն, կը նստէր մեր մօտ եւ քաղաքական ու ազգային իրադարձութիւններուն չուրջ կ'ունենար մեզ հետ զրոյցներ։ Իր մէջ կար հոգեխառով, աննուաճելի անհանգստութիւն մը,— ռուսական իրականութեան եւ մանաւանդ կովկասեան աշխարհի մէջ տեղի ունեցող փոթորկումներուն առթած յարաճուն անհանգստութիւնը։ Իրատես էր եւ բնազդով հոտառու. երեւոյթներու խաբուսիկ արտաքինէն աւելի անոնց խորը կը նայէր եւ այդ պատճառով ալ երբեք խանդավառուած չէր ռուսական յեղափոխութեան համատարած արբշռանքէն։

Կը ճանչնար ռուսը չափով մը, լաւ կը ճանչնար կովկասեան իրականութիւնը. գիտէր որ հայ ժողովուրդը համակուած է գաղափարական աննուաճ բոմանթիզմով եւ անգամ մըն ալ կրնայ զոհուիլ, անդարմանելի կորուստներու ենթարկուիլ այդ բոմանթիզմէն, ինչպէս եղած էր 1905-ին Կովկասի մէջ եւ 1908ին Թուրքիոյ մէջ։

— Մեր տղերքը յիմարացել են. ճառեր խօսելով են զբաղուել երբ անդին Փրօնտը դատարկուում է, կ'ըսէր յաճախ երբ ուշի ուշով աչքէ կ'անցնէր կովկասահայ մամուլը։ Այս էր այն ծանր մղձաւանջը, որ կը ճնշէր իր հոգին։ Կը վախնար, որ Մոսկուայէն փչող քամին չափէն աւելի կրնար շլացնել մեր «սալոնի մտաւորականները», որոնք հայ գիւղացիին ու աշխատաւորին անունով օրն ի բուն ճառեր արտասանելով հանդերձ անոր իղձերուն ու ապրումներուն մասին ոչինչ գիտէին, կամ անոր իրական վիճակը բարւոքելու համար ոչինչ տրամադիր էին ընել։

Այդ օրերէն մինչեւ 1918 մայիսի վերջը ի՞նչ տառապանքներ, ի՞նչ դառն հոգեկան ալեկոծումներ ունեցաւ մեր խեղճ Գարօն։ Ամէն օր բարի լուրի մը, ձգտումը անհետացնող, կացութիւնը պայծառացնող խաբրիկի մը կը սպասէր։ Ճիշդ է, մեծ էր իր հաւատքը իր զինակից ընկերներուն ողջմտութեան, հայրենասիրութեան վրայ. ունէր անսահման վստահութիւն Երեւանի եւ անմիջական շրջականներու մէջ գործող մեր աշխատաւոր ընկերներու զգաստութեան հանդէպ, բայց Թիֆլիսի, Պաքուի եւ այլ կեդրոններու մէջ գաղափարաշունչ փայլուն ճառեր խօսողներու վրայ կը նայէր ծանր կասկածանքով։ Կը վախնար որ հայութեան յամառ ռուսասիրութիւնը մէկ կողմէն եւ Անդրկովկասեան Սէյմի մէջ հարեւան ժողովուրդներու միջեւ խաղցուած աչքակապուքը միւս կողմէն մոռցնել կուտային իրական վտանգը մերիններուն, երբ Տաճկաստան անարգել կ'առաջանար Հայաստանի դիակին վրայէն դէպի հիւսիս եւ պոլշեւիզմի խելագարութեամբ վարակուած ռուս զինուորներ ոչխարներու նման կը վազէին տուն։

Այդ անհանգստութիւնը մասամբ մեղմացաւ իր մէջ, երբ բախտաւոր օր մը հեռագրաթերթը հաղորդեց, որ Հայաստան անկախութիւն է հռչակած եւ Քաջազունի նշանակուած է անդրանիկ նախարարապետ։ Ուրախացաւ մանկունակ, երջանիկ, անմեղունակ ցնծութեամբ մը։ Աւելի քան վեց դարերէ ի վեր մարած արեւը կը ծագէր հայկական հորիզոնի վրայ եւ իր ջերմութեամբ կը լեցնէր անոր հայրենասէրի բարախուն սիրտը։ Անկէ վերջ իր ամբողջ մը-տասեւեռումը, ապրումը, էութիւնը այդ եղաւ։ Այդ մեծ, պատմական իրողութիւնը այնքան համապարփակ, այնքան լիացնող էր հայ անհատի համար, որ Գարօն ամբողջապէս տարուեցաւ անով, արբեցաւ անով, ապրեցաւ անով։

Կը յիշէր յաճախ մեր մեծ ընկերներու՝ Ռոստոմի, Սիմոնի, Քրիստափորի, Զարդարեանի, Հրաչի, Ղէչօի, Քեռիի, Մուրատի, մանաւանդ Վոսմեանի, Ղաժակի եւն. անունները եւ դառնութեամբ կ'ըսէր.—

— Ափսո՜ս, տղերքը այս մեծ օրը չտեսած գացին։ Մենք մնացողներս աւելի բախտաւոր եղանք։

© National Library of Armenia

*
* *

Անկէ վերջ, մինչեւ 1920ն աշուն Գարօն մնաց խանդավառ, հաւատաւոր, միխիթարուած մարդ մը մեր մէջ։ Քանի մը անգամ ալ Նոյ Եւրոպա դարձով ու վերադարձաւ։ Քաղաքական աշխարհի եւ մեր իրականութեան մէջ տեղի ունեցան նշանակալից դէպքեր. բայց ոչինչ կրցան փոխել անոր մտքամբ զոհացած, հայկական անառաձման զոհաբերութիւններու վարձքը ձեռք ձգած մարդու ներքին զոհունակութիւնը։ Առանց ասոր ալ Գարօն հաւատաւոր մարդ էր, ծանօթ ըլլալով մեր ազգային պատմութեան եւ մանաւանդ մօտիկ ապրած ըլլալով մեր ժողովուրդի իսկական խաւերուն, մեծ հաւատք ունէր հայութեան վրայ եւ վայրկեան մը իսկ տարակոյսի չէր ենթարկեր անոր վերջնական յաղթանակը։ Այդ հաւատքն ալ կը բղխէին այն ջերմ խանդավառութիւնն ու ցնծութիւնը, զոր Գարօ կը յայտնաբերէր ի տես երկրի մեր ժողովուրդի շարքէ, տոկուն, բանեցաղարծոց աշխատանքին եւ արտասահմանեան դպրութիւններու ատատ նուիրաբերումներուն։ Միայն մէկ սեւ բիծ մեր նկարագրին մէջ ուղղակի զայրոյթ կ՚առթէր իրեն,— հայկական որոշ հատուածներու պաշտպանութիւնը եւ մեր մտաւորականներէն ոմանց հատուածամոլական սնոսիզմը։

Եւ երբ Հայաստանի Հանրապետութեան շուրջ ծաղեցան ծանօթ վէճերը եւ խրամատը արտասահմանեան մամուլի մէջ, ան շատ անպտուղ զայրոյթով յուզուեցաւ եւ իր հայրենակէր մարդու բովանդակ ուժով ջանաց առաջքը առնել այդ աղէտին։

Այդ օրերուն էր, որ յաճախ զաւն ու արիւր չեչաբով կը կրկնէր.

— Տեսէ՛ք, տեսէ՛ք սա՝ մուտրիկները. սա՛ ափ մը միլլիթը երկու կտորի կ՚ուզեն վերածել։ Նուպար մը Փարիզի մէջ, կասեան մը Կոփկասի մէջ կամ անոնց նմանները հոս հոն։ Ովքե՞ր են ասոնք. հայ ժողովուրդի հետ աղ ու հաց կերած ու ջուր խմա՞ծ են. անոր տառապանքներու մասնակից ու պայքարներուն բաժնեկից եղա՞ծ են։ Երկ ո՞ւր էին Եւրոպայի մայրաքաղաքներու մէջ թափառող այս «ինտելիգենտ» պարոնները, երբ մենք մէկ կողմէն հայ գիւղացիին ոջիլը կը մաքրէինք, միւս կողմէն դան այսօրուան կը պատրաստէինք։ Այսօր եկեր են հրապարակ, երբ իշխանութիւն ու աթոռներ կան մէջտեղ, եւ իրենց մայրաքաղաքեան թէորիաներով սարսափեցնելիս կ՚ուզեն փոքրել հայ ժողովուրդի գլխուն։

Կուսակցամոլութիւնը չէր որ կը խօսէր իր մէջ, ընդհակառակը։ Գարօն երբեք մոլի կուսակցական մը չէ եղած, որքան ես կրցած եմ ճանչնալ դայն։ Ան կուսակցական ըլլալէ առաջ հայ հայրենասէր մրն էր, եւ հայրենասէրի բնազդն էր, որ կը խօսէր այդ բաժանականութեան մէջ պայծառօրէն տեսնելով ապէտայի հետեւանքներ։

Այս հիմնական տեսակէտն առաջնորդուած էր, որ Փարիզի համագումարի ընթացքին հայկական դատի մէջ երկուութիւն մտցնելու փորձը անհետացնելու համար ամենարուն ու ամենանկեղծ ջանքեր բրաւ եւ ջանաց նուպարն ու նմանները զղուշացնել այդ երկուութենէն։ Երբ չյաջողեցաւ, տաքութեամբ, ցասումով եւ պժգանքով լեցուեցաւ անոնց հանդէպ եւ այնուհետեւ ամէն կապ խզեց անոնց հետ։

*
* *

Էկաւ վերջապէս 1920 ապէտայի տարին եւ իր հետ բերաւ մեզ համար անսահման սուգ, արցունք ու տառապանք։ Պոլշեւիկեան յաղթանակը զէպի հարաւ փոխադրեց մեր մանուկ պետութիւնը եւ խրախուսեց թիմարական թուրքիան, որ արշաւէ դէպի Արարատեան աշխարհ։

Այդ անմոռանալի տարին ես կը գտնուէի Ֆրէզնօ եւ յաճախ կը թղթակցէի Գարօի հետ։ Հայ-թրքական ընդհարումներու սկիզբին իսկ՝ ան կանխագուշակեց դալիք աղէտը եւ գրեց ինձ, որ պիտի պարտուինք այս պատերազմին մէջ, բայց ջիղերը ամուր բռնելու եւ դլուխ չըկորսնցնելու ժամանակ է։ Մեր պարտութենէն ետք, այնուհետեւ ունեցաւ հոգեկան բուռն ցնցումներ, տառապանքներ եւ յուզումներ։ Բայց միշտ մնաց պայծառատես եւ յուսալից։

— Այս հարուածն ալ կ՚անցնի, կ՚ըսէր յաճախ ինձ. անխուսափելի է, նորէն պիտի ձեռք ձգենք այն ինչ որ կորուսինք։ Այս անգամ սակայն մօտիկ անցեալի դասերը պէտք է խրա-

© National Library of Armenia

տական բլյան եւ խեղբերնիս գլուխնիս ժողվենք։ Ինչ որ մեր սերունդը իրականացուց, բայց չկրցաւ պահել, գուք պէտք է պահէք, նոր սերունդի ուժերդ։ Յոյս ձեր վրայ է։

Եւ հայրական քնքշութեամբ կը ծնծէր թիկունքս՝ կարծես վախնալով, որ նորերը չեն կարող դրաւել հիներու տեղերը, կամ այլասերումը մեր մտաւորական դասի մէջ մոռցնել կուտայ անոնց մեր պատմական արիւնոտ անցեալը։

*
* *

Եւ օր մը ալ, հազիւ 4–5 ամիս առաջ, ճամբայ ելնելէ զինք դէպի ուրիշ օտար աշխարհ մը, Ժընեւ իր ընտանիքին մօտ։ Գնաց հիւանդ, բայց բայց ուած, յոգնած եւ իր մէկ հատիկ որդւոյն, Հրանդին կարօտը սրտին։ Իր Լաւէն կը բարէր արդէն մահուան սիրտ։

— Աճապարեմ որ հասնիմ տեղ, բոլոր մեկնելէն առաջ։ Գիտեմ որ վերջս մօտ է, ա՛յլ քաջութարեկ եմ։ Աչքերս փակեմ Գուպլիս (իր զաւակը այսպէս կ՝անուանէր) մօտ։

Եւ փակեց իր աչքերը օտար հորիզոնի տակ, ձիւղ այնուհետ, որուեղէն որ սկսեր էր ուելի քան քառորդ դար առաջ իր յեղափոխականի, հերոսի մարդու, անբասիր կեանքը։

*
* *

Ի՞նչքան անհամանում յիշատակներ, ի՞նչքան ներշնչող ու տպաւորիչ դրուագներ իրմէն։ Ո՞ր մէկը պատմել։ ո՞ր տեղէն սկսիլ եւ ո՞ր վերջացնել։ Ա՛յնքան բեղմնաւոր, վիպական, արկածալից կեանք մը կարելի՞ է պատկերացնել քանի մը հապճեպ տողերու մէջ։

Գարօն ծնած է Կարին, Փաստրմաճեան յայտնի գերդաստանէն։ Իր մանկութեան ուսումը ստացած է տեղական նախնական դպրոցի եւ յետոյ Սանասարեանի մէջ։

15–16 տարեկան եղած ատեն, անգամ մը իր հօրեղբայրը զինք կը տանի Պոլիս։ Ընելով հարուստ եւ ծանօթ ընտանիքի անդամ՝ ծանօթները ու բարեկամները զինք կը մոցնեն Պոլսոյ հայկական հայ լայֆի մէջ։ Բարձր դասակարգի բարքերուն յատուկ պչրանքները, ճոխութիւնը, ծեքծեքումները, սեթեւեթները, կեղծիքն ու պայմանագրական կենցաղաձեւերը ծանր տպաւորութիւն կը թողուն իր պարզունակ, անկեղծ, անապակ հոգիին վրայ։ Շուտով կը ձանձրանայ, կը խորշի, կը դղրդի այդ արիստոկրատիկ չրջապատէն եւ հոգիս քանի մը ամիս անցած, կը բանուի հայրենարարձութեան գրաւոր անդէ։ Ամէն խրատ, թելադրութիւն, ապաշանք ի դուր կ՝անցնին։ Փոքրիկ Գարեգինը կ՝ուզէ տուն վերադառնալ եւ կը վերադառնայ։

Այս փոքրիկ դրուագը ինքնին չափազանց յատկանշական է պարզելու համար Գարօի նրկարագրին ու խառնուածքը։ Կեանքին մինչեւ վերջն ալ մնաց այդպէս։ թէեւ միշտ ալ լաւ ապրեցաւ եւ նիւթական դժուարութիւններ չըկրնց, բայց միշտ ալ իր չարժումներով, կենցաղով մնաց ուսմիկ հայ։ Միշտ ալ արհամարհեց այս անիրաւ դարուն մարդերու փոխյարաբերութիւնը դառնացնող պայմանագրական բարքերը, կեղծիքներն ու սեթեւեթները։

Երկրորդական ուսումը ստանալէ ետք կը դրկուի Նանսի, հետեւելու գիւղատնտեսութեան և քիմիաբանութեան։ Այդ երկու հիւղերն ալ կ՝ուսումնասիրէ եւ կը ստանայ ոսկեթաղի աստիճան։ Լաւագոյն համար էր, որ զինքը «Ֆաքիքը» կ՝անուանէին՝ «ընկեր» որակումը խիստ հաստակ–տեղիք դանելով եւ զինքը իր առաջին անունով կոչելէ պատկառելով։ Հիներուն համար պարզապէս «Գարօ Ջան» էր ան, բայց մեզ՝ նորերուս համար քիչ մը խրատիչ էր այդ։ Երբ մինակ կ՝ելլայինք իրեն հետ եւ կը փորձուէի «Գարօ Ջան»ով խօսիլ իրեն, կը նկատէի որ թարուն հրամանք մը կը լեցնէր իր էութիւնը։ Հին սերունդի, իր սերունդի ապրումներուն, վերաբերմունքին, փոխադարձ յարաբերութեան ձեւերուն չարունակումը նորերու մէջ ուղղակի մխիթարութիւն էր իրեն համար։

Իր ուսանողական չրջանը աւարտելու ժամանակուան կը զուգադիպի Պանք Օթոմանի ցոյցին կազմակերպումը։ Համալսարանէն ճանչցած էր արդէն ողբացեալ Հրաչը (Հայկ Թիրեաբեան) եւ ուժդին սէրով մը կապուած անոր։ Ինքը դեռ Եւրոպա էր, երբ ցոյցը կը պատրաստուէր։ Ժընեւի մեր կուսակցութեան ղեկավար դէմքերուն հետ ծանօթանալէ ետք՝ կը չտապէ Կ. Պոլիս, մասնակցելու համար ցոյցին։ Իր ժամանումէն օր մը ետք տեղի կ՝ունենայ դէպքը, Գարօն կը յաջողի Հրաչին հետ

© National Library of Armenia

մտնել Պանք եւ այնուհետեւ դառնալ մեր ազգային մեծ գործիչներէն ու մեր կուսակցութեան մեծագոյն ղեկավարներէն մին:

— Դեռ ջահիլ էինք բոլորս ալ, կ'ըսէր երբեմն երբ կը թախանձէինք, որ պատմէր իր կեանքէն հետաքրքրական դրուագներ: Անփորձ ու տաք գլուխ: Մեզ մղողը միայն մեր ժողովուրդին համար բան մը ընելու բուռն, անդիմադրելի զգացումն էր: Կեանքն էր որ մեզ քշած էր այնտեղ, ուրիշ ոչինչ:

Եւ իսկապէս՝ իր մէջ ամէն ջիղ, ամէն երակ կը բաբախէր հայ ժողովուրդին համար: Ընկերարանական թէորիաներ կամ կուսակցական ծրագիրներ ուսումնասիրելով չէր, որ նետուած էր յեղափոխութեան հոսանքին մէջ, ո՛չ ալ այդպիսի շարժառիթներէ մղուած կուսակցական էր դարձած: Կեանքը, իրականութիւնը դարձուցած էին զինք Դաշնակցական: Այդպէս ալ մնաց մինչեւ վերջ եւ երբեք հետաքրքրութիւն ցոյց չտուաւ մեր կուսակցական մտաւորականութիւնը յուզող տեսաբանական հարցերուն հանդէպ: Գիրք կարդալով, ճառեր լսելով կամ կուսակցական գործիչներու անձնական հմայքէն տարուելով չէր, որ մտած էր շարքերու մէջ շատ շատերու նման, այլ կեանքի բնական, անարուեստ կերպով նետած էր զինքը այդտեղ: Եւ իր ամբողջ գործունէութեան ընթացքին՝ ան կրցաւ ըլլալ աղղային գործիչ եւ կուսակցական, բայց երբեք կուսակցական տեսաբան, երբեք կուսակցական զաղափարախօս:

Պանքի ցոյցին մանրամասնութիւնները յայտնի են: Թողլով որ հետաքրքիր ընթերցողները ուրիշ աղբիւրներ որոնեն լիովին ծանօթանալու այդ պատմական ցոյցին, ես կը բաղձայի յիշատակել այստեղ մէկ դրուագ միայն, որ խորապէս տպաւորած էր մեր անմոռանալի Գարոն եւ զոր շատ անդամներ ան պատմած է ինձ մանկական հպարտութեամբ մը:

Կռիւով ու մեծամեծ, դժնդակ, յուսահատական դժուարութիւններէ ետք երբ կը յաջողին ցուցարարները մտնել դրամատան մեծ շէնքէն ներս եւ երկաթեայ դուռը կղպել, ներսի պաշտօնեաները բոլորն ալ սարսափահար ծակուծուկ կը մտնեն, եւ խլացուցիչ ճիչն ու աղաղակը չփոթ ու իրարանցում կը յառաջացնէ ամէն կողմ: Գարոն անմիջապէս իր տրամադրութեան տակ գտնուած տղաքներու գլուխը անցած կը հրամայէ բոլոր պաշտօնեաներուն հաւաքուիլ վարի յարկի մեծ սրահի մէջ եւ դուռը անոնց վրայ փակելով պահակ մը կը կանգնեցնէ: Այդ բանտարկեալներուն մէջ աչքի կը զարնէ Ֆրանսացի սպիտակահեր, բարեհամբոյր, ազնուական արտաքինով ծերուկ մը, որ անօրինակ շուարումի եւ սարսափի կը մատնուի: Երբ բաւականաչափ հանդարտութիւն կը տիրէ, Գարօ կը փութայ հանդստացնել բանտարկեալները եւ կը յայտարարէ անոնց, որ ցուցարարները ո՛չ պարզ աւազակներ են, ո՛չ ալ անիշխանականներ, այլ հայ յեղափոխականներ, որոնք վճռած են ռումբերով օդը հանել դրամատունը, եթէ Եւրոպայի ճնշման տակ սուլթանը դրական երաշխիքներ չտայ հայերու վիճակը բարւոքելու:

Ֆրանսացի ծերուկը, տեսնելով Գարօի կորիճ, անվարան, պաղարիւն եւ անձնազոհ արտայայտութիւնը, ապշանքով կը դիտէ զայն եւ հայրական դորովով մը կը լեցուի այս գեղեցկադէմ, պարթեւ, ազնուական երիտասարդին հանդէպ: Եւ երբ կը հետաքրքրուի, կը ծանօթանայ ցոյցին նպատակներուն եւ ցուցարարներու մահը արհամարհող, աւելի ճիշդը հարսանեկան տրամադրութիւններով մահը դիմագրաւող վճռականութեան՝ կը հարցնէ.

— Իրա՞ւ պանքը օդը պիտի հանէք:

— Այո՛, կը պատասխանէ Գարօն, ուրիշ ելք չկայ:

— Բայց հապա դո՞ւք: Ի՞նչպէս պիտի փրկէք ձեր կեանքները:

— Մենք ալ միասին օդը պիտի ելնենք. ո՞վ ըսաւ որ մենք այս բոպէին զրաղուած ենք մեր կեանքը փրկելու հարցով: Հայ յեղափոխականներ ենք մենք եւ հայ յեղափոխականին համար ասկէ աւելի պատուաւոր մահ չի կրնար ըլլալ:

Այս պատասխանին վրայ ծերուկը խոր տխրութեամբ կը համակուի, աչքերը կը լեցուին եւ յուզումը կ'ընկճէ զայն:

— Կը կարծէի, որ կ'ըսէր Գարօն, մահէն էր որ կը դողար կամ թերեւս իր ընտանիքին ու զաւակներուն մասին մտածելով էր որ մոայլ յուսահատութեան էր մատնուած: Բայց ո՛չ, ծերուկը բարի էր եւ կեանքը ապրած մարդ մը: Յետոյ պատմեց, որ դէպքին սկիզբէն մինչեւ

վերջը, մտահոգուեր է իմ մասին։

— Ես կեանքը ապրած, աղէկ գէշ կեանքէն բաւական համ առած մարդ մըն եմ, ըսեր է ան. մէկ ոտքս արդէն գերեզմանն է։ Զաւակներուս մասին ալ շատ մտահոգուած չեմ. անոնց համար գէշ աղէկ ապագայ մը ապահոված եմ։ Միայն քու վրադ կը ցաւիմ ու սիրտս կը լեցուի, տեսնելով որ քեզ նման պարթեւ, ազնիւ, գեղեցիկ, արեւի պէս երիտասարդ մը, դեռ ա՛յդքան դեռատի հասակին մէջ՝ պիտի մեռնի։ Քեզ նման տպաւորիչ, գրաւիչ, սիրուն դէմքեր շատ քիչ կը ծնին. ափսոս չէ՞։ Եթէ եւրոպայի դիւանագիտութեան ու հանրային կարծիքի բարձր առաջնորդները ճանչնան ձեզ այնպէս, ինչպէս ես ճանչցայ այսքան կարճ ժամանակի մէջ, վստահ եմ որ հայ ժողովուրդի պահանջները կ՚իրագործուին։

Եւ այնուհետեւ այս ծերունին մեծ խանդաղատանքով ու գուրգուրանքով կը կապուի Գարօի անձնաւորութեան։

— Երբ կարդադրուեցաւ, որ մեզ պանքէն պիտի փոխադրեն շոգենաւ, կ՚ըսէր Գարօն, տեսայ որ այս խեղճ ծերունին ուրախութենէն կուլար։

Եւ իսկապէս գրաւիչ էր Գարօն ու ուրինքնոր։ Իր հոգիի անապակ, զուլալ անկեղծութիւնը եւ իր ֆիզիքական պարթեւ, տպաւորիչ կազմը մեծապէս սիրելի կը դարձնէին զինքը որեւէ մէկուն, որ հեռուէն կամ մօտէն կը ճանչնար զայն։

Կրնայ ըլլալ որ շատերը համակարծիք չըլլային իր տեսակէտներուն, բայց չեմ կարծեր, որ իր համախոհներէն կամ հակառակորդներէն որեւէ մէկը առնուազն չյարգէր, չպատկառէր, եւ իր հայրենասիրութեան ու շիտակութեան հանդէպ հիացումով չլեցուէր։

Գանքի ցոյցէն ետք, Գարօն կարճ ժամանակ մը կը մնայ Ամերիկա եւ յետոյ կ՚ուղեւորի Կովկաս։ Այնտեղ կը զբաղի իր մասնագիտութեամբ մի առժամանակ, մինչեւ որ վրայ կը հասնին հայ-թաթարական ընդհարումները։

Այդ կռիւներու ընթացքին մեծ դեր կը կատարէ ան իբրեւ Թիֆլիսի հայկական ուժերու հրամանատար։ Իր ամբողջ կորովով կը նետուի յորձանքին մէջ եւ մէկէ աւելի անգամներ իր ողջմիտ ու հոտառու խառնուածքին ուժով կը փրկէ Թիֆլիսի եւ շրջանի հայութիւնը ըստոյգ կոտորածէ։

Դժուար է լրիւ պատկերացնել Գարօի խաղցած մեծ դերը կովկասահայ իրականութեան մէջ։ Միայն սա չափը տեղին է ըսել, որ տաճկահայ մտաւորական-յեղափոխական ուժերէն ո՛չ ոք անոր չափ մօտէն չփում ունեցած է կովկասահայ ժողովուրդի բոլոր խաւերուն հետ, եւ առաւել եւս՝ ո՛չ ոք ռուսահայ պուրժուազիան կրցած է հետաքրքրել, կապել յեղափոխական տարրին, որքան Գարօն։

Ակէ զատ, ան հանդիսացած է մեր կուսակցութենէն ներս տեսակ մը օղակ մեր մտաւորական ու մարտական ուժերը իրար զօդող։ Ո՛չ մէկ մտաւորական մեր շարքերուն մէջ այնքան սիրուած չէ մեր կռուող տղերանց կողմէ որքան Գարօն։ Ան կրցած է ըլլալ հաւասարապէս մտերիմը ինչպէս համալսարանական Զաւարեանին, Ռաժակին, Թոփչեանին եւն., նոյնպէս անգրագէտ Ռէչօին, Քեռիին եւն.։

*
* *

1908-ի օսմանեան խարուսիկ սահմանադրութեան շրջանին՝ Գարօն կ՚ընտրուի Կարինի երեսփոխան։ Իր ուզելով չէր։ Ընկերները ստիպած էին։

— Ա՛լ բեզարել էի. ուզում էի իմ գործերով զբաղուիլ եւ դեռ հազիւ ինձ համար տընտեսութիւն էի հիմնել, երբ տղերքը պնդեցին որ ընդունիմ այդ պաշտօնը եւ փոխադրուիմ Կ. Պոլիս։ Թուրքերու հետ բօլիթիք խաղալու սիրտ չունէի, մանաւանդ պոլսական անհրապոյր, մեղկ, կեղծիքներով լեցուն միջավայրին մէջ։ Ի՞նչ արած։

Իբր երեսփոխան, ան կրցաւ ըլլալ օսմ. բարլամենդի հայկական ֆրակցիայի կեդրոնական դէմքը, թէեւ ո՛չ ազմուկ կը հանէր, ո՛չ ալ ճառ կը խօսէր։ Արդէն կը խորշէր այդպիսի գործունէութենէ։ Քաղաքական դէմք էր ան, բայց երբեք politicie'n, բառին հասարակ առումով։

Իր երեսփոխանութեան շրջանին էր, որ ջանաց օգտուիլ Թուրքիոյ Թոյլ վիճակէն եւ Հայաստանի հողամասերը օժտել երկաթուղագծով՝ նախ եւրոպական, յետոյ ամերիկեան դրամագլուխի միջոցաւ։ Այդ ուղղութեամբ

© National Library of Armenia

անխոնջ, յարատեւ, չափուած ձեւուած աշխատանք կատարեց երկար ատեն. մշակուեցան ծրագիրներ եւ բարլամենթը զբաղուեցաւ անոնցմով: Այդ բոլոր ծրագիրներու ստացած վերջնական ձեւն էր Զեսթերի ծրագիրը, որուն շուրջ ա՛նքան աղմուկ բարձրացաւ ժամանակին եւ որ ուեւ դրական վերջաւորութեան չյանգեցաւ մեծ պատերազմին վերահաս պայթումին պատճառով:

Այդ ժամանակները Գարօն ամենէն անկեղծ ջատագովներէն մէկը եղաւ հայ-թուրք մերձեցումին ու համագործակցութեան: Իթթիհատի չէֆերուն հետ մշակեց անձնական բարեկամութիւն, եւ Թալէաթէն սկսած բոլոր թուրք ղեկավարները յարգանքով ու պատկառանքով վերաբերուեցան իրեն: Թալէաթ քանի՛ քանի անգամներ փորձեց նախարարական աթոռներու հրապոյրով աչքը շլացնել անկաշառ, շիտակ, առաքինի եւ անկախ նկարագրի տէր Գարօին, բայց չյաջողեցաւ եւ այդ պատճառով ալ մինչեւ վերջ խորին պատկառանք զգաց անոր անձնաւորութեան հանդէպ:

Բայց երբ Գարօն տեսաւ թուրքերու անուղղելիութիւնը, մէկ անգամէն խզեց իր բոլոր կապերը անոնց հետ, դատ, ոսանկցնող, հոգեխռով, ըմբոստ ու վրէժխնդրական խօսքեր շպրտեց Թալէաթի երեսն ի վեր ու հրաժարեցաւ օսմ. պետութեան հաւատարմօրէն ծառայելու իր բաղձանքէն:

Երեսփ. ժողովի մէջ մէկ անգամ միայն ճառ է խօսած եւ այդ ալ՝ Զեսթերի ծրագրին առթիւ: Այդ ճառով ան հրապարակ դրաւ այդ ժամանակուայ հանրօգուտ չինութեանց նախարար Խուլուսի պէյի կաշառակերութիւնը Գերմանիայէն եւ պատճառ դարձաւ անոր պաշտօնանկութեան: Ինք չէր խօսեր, բայց պէտք եղած ատեն առաջ կը քշէր Զոհրապը, որ թուրք փարլամէնթի մեծագոյն հռետորներէն մին էր եւ Գարօի ամենամօտիկ մտերիմը:

Թալէաթին հանդէպ կը տածէր պժգանքի, նողկանքի անպատում զգացում մը:

— Ամէն անգամ որ անունը կը լսեմ, աչքիս առջեւ կը ներկայանայ սաղայէլի պատկերը, կ'ըսէր յաճախ. նենգ, վարպետ, կեղծաւոր, արեւելքցիի սեւ հոգի մը՝ արտաքնապէս յղկուած եւ ջնարակուած արեւմուտքցիի երանգով: Մէֆիստոֆէլի տիպն է չան որդին:

Երբ հայկական նեմեսիսի վրիժառու բազուկը գետին փռեց այդ հրէշին դիակը Պերլինի մէջ, ի՜նչ մեծ ցնծութիւն, ի՜նչ անսահման երջանկութիւն զգաց մեր բարի Գարօն: Ո՛չ ոք անոր չափ հպարտանալու, ցնծալու իրաւունքը ունէր թերեւս: Ո՛չ ոք անոր չափ չէր ըմբռներ վրէժին սրբութիւնը:

— Աչքս նեռեւս չպիտի մեռնիմ. այս սուգի ու տառապանքի օրերուն՝ ասկէ աւելի մեծ մխիթարութիւն չէր կրնար ըլլալ ինձ համար, կը կրկնէր, ամէն անգամ որ Թալէաթի սպանման մասին խօսք կ'ըլլար:

Եւ իրաւ, բոլոր հայերը, բայց մանաւանդ ամէնքէն առաջ ի՛նք իրաւունք ունէր այդ սպանութեամբ հրճուելու: Պիտի անցնին այս օրերը, շատ շատերու բերնին դրուած կղզպանքները պիտի վերնան եւ այն ատեն յաջորդ սերունդները պիտի իմանան, թէ ինչո՞ւ Գարօն ամէնքէն շատ իրաւունք ունէր հրճուելու, երջանիկ, մուրատին հասած մարդու զոհունակութիւնը զգալու:

Երբ 1914-ի աշխարհաւեր պատերազմը չպթայաղերծուեցաւ, Գարօն փութաց Կովկաս եւ իր գործն, եռանդուն մասնակցութիւնը բերաւ կամաւորական շարժման: Եղաւ անոր ամենասիրուած կազմակերպիչներէն մին, մըտաւ կամաւորներու շարքը եւ Դրօի հետ վարեց խմբապետի պատասխանատու դերը մեծ յաջողութեամբ:

Երբ 1915-ին ես կը գտնուէի Թիֆլիս, հայ կամաւորներու շտապին մէջ տիրը ունեցայ տեսնելու կամաւորներու անուանացանկի արձանագրութեան տետրակը: Աչքիս հանդիպեցան Գարօի եւ Խէչօի անունները՝ անուանացանկին սկիզբը դրուած: Խէչօի անուան սիւնակին մէջ պարզապէս դրուած էր՝ «Դաշնակցական Խէչօ»:

Հայ մարտիկներու գլուխը անցած, թրքական պետութեան դէմ պայքար մղած եւ հայկական աղէտին պատճառ դարձած ըլլալու ամբաստանութիւնները նետուեցան Գարօի հացէին: Իբրեւ թէ Թալէաթ Գարօի նկարը ցոյց է տուեր Զաւէն Պատրիարքին յանդիմանութեամբ եւ մեղադրեր է հայերը ըմբոստութեան ու անհաւատարմութեան մէջ:

Հայ մամուլի եւ հայ անհատներու բերնին մէջ այս ամբաստանութիւնը շատ կը յուզէր,

© National Library of Armenia

կը վրդովէր Գարօն։

— Ես կը ճանչնամ Թուրքերը եւ խիղճս հանդարտ է. ով որ անմեղ է հայու արեան մէջ, առաջին քարը ան թող նետէ, կ'ըսէր եւ կը տաքնար, կը զայրանար որ անխորհուրդ, յիմար հայեր այսպիսի տոնքիչօթիւններով փրոփականտի զէնք կը հայթայթեն Թուրք բարեկիներուն։

*
* *

Երբ զինքը առաջին անգամ ճանչցայ Պոսթընի մէջ 1917–ին, ան հետաքրքրութեամբ հարցուց.

— Ո՞ր տեղացի ես։

— Կեսարացի։

— Կեսարիոյ մասին շատ բաներ գիտե՞ս։

— Շատ բան չեմ գիտեր, բացի այն, որ մեր հայրենակիցները լաւ առեւտրականներ են եւ մեր չրջանէն լաւ բաստրմա կ'արտադրուի։

— Միայն այդ չէ. քեզ պատմեմ դրուագ մը, որ աւելի լաւ ծանօթանաս քու նախահայրերուդ։

Եւ պատմեց, թէ հռչակաւոր Ցովսէփ Էմինի սահմանափակ հատորներով հրատարակուած անդլիերէն դրքին մէջ կարդացած է, որ Ցովսէփ Էմին, այդ մեծ հայը Հայաստանը ազատագրելու իր ճիգերուն ու թափառումներուն ընթացքին կը հասնի Կեսարիա, տեղին հայ երեւելիներուն հետ կը խորհրդակցի եւ անոնց աջակցութիւնը կը խնդրէ իր սկսելիք յեղափոխական շարժման։ Անոնք կը պատասխանեն, որ իրենք ի վիճակի չեն մարդով կամ զէնքով օգնել, բայց պատրաստ են մեծաքանակ դրամ հայթայթել եւ նիւթական մեծ զոհողութիւններ ստանձնել։

— Տե՛ս հայ ժողովուրդը, կ'ըսէր ան. ասկէ աւելի քան դար մը առաջ Կեսարիոյ խորերուն մէջ, կորսնցուցած իր մայրենի լեզուն եւ հայկական ամէն ինչ, դեռ այն ատենէն կը մըտածէ հայու ազատագրութեան վրայ եւ պատրաստ է զոհաբերութիւններու։ Այս մէկ հատիկ փաստը պատմականօրէն արժէքաւոր չէ՞ մեզի համար։ Եւ տակաւին մարդիկ կան, որոնք յեղափոխականները կը մեղադրեն հայ ազէտին իբր դրդապատճառներ։ Մենք ովքե՞ր են. մենք պարզապէս հայ ժողովուրդի զգացումներուն մէկ արտայայտութիւնն ենք, ուրիշ ոչինչ։ Յեղափոխական շարժումը ո՛չ ոք քարոզած կամ զօրով ներմուծած է մեր մէջ։ Ախպա՛ր, զօրով մարդ արի՞ւն կը թափէ. այդ շարժումը եղած է ինքնաբուղխ, բնածին, անարուեստ։ Մեր իրականութեան թելադրութիւնն է, ուրիշ ոչինչ։ Մեր ըրածը ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր ժողովուրդի ապրումներուն ընթացք տալ։

Եւ ժողովուրդի այդ ապրումներուն ամենէն հարազատ արտայայտիչը եղաւ ինքը, իր ամրողջ կեանքի ընթացքին։ Ո՛չ ոք Գարօի չափ լաւ չըմբռնեց, աւելի ճիշդը բնազդաբար չզգաց հայութեան բազկերակը։ Եթէ Զաւարեան խիղճն էր հայ ժողովուրդին, Գարօն անտարակոյս եղաւ անոր բազկերակը։

*
* *

Վերջին տարին շատ էր ընկճուած եւ ֆիզիքապէս հիւծած։ Իր կոր ու քչիկ մը ուռած կոպերուն տակ սիրուն աչքերը հետզհետէ կը կորսնցնէին իրենց նախկին ոյժն ու փայլը։ Իսկապէս «բեզարած» էր, ինչպէս ինք կ'ըսէր, ու մեծ անձկութիւն մը ունէր օր առաջ հասնելու իր Պուպլին մօտ։

Իր մէկ հատիկ որդւոյն սիրովն ու հայրենիքին տառապանքովն էր, որ կ'ապրէր։ Ասոնցմէ զատ կեանքը ա՛լ ուրիշ հրապոյր չունէր իրեն համար։

— Մուրատիս չպիտի՞ հասնիմ արդեօք, Ախլաթի մէջ ազարակ մը, քանի մը կովեր, քանի մը հաւ եւ քանի մը ձի պահել։ Բնութեան մօտիկ, կեղծիքէ հեռու, հալալ վաստակով ապրիլ։ Երբ ինձ հիւր գաք այնտեղ, ձեզ կը կերցնեմ մածուն եւ թանապուր։ Հերի՛ք այսքան թափառեցանք։ Աչքերնիս Հայաստանի մէջ պէտք է փակենք։

Պետական կեանքի մէջ մնալու, վարչապետ կամ նախարար դառնալու ո՛չ մէկ տրամադրութիւն ունէր։ Այդ կեանքը խորթ կուգար իրեն։ Եւ այս բանի մէջ շատ անկեղծ էր ան։

— Պուպիս չեմ ուզեր որ փաստաբան կամ բժիշկ ըլլայ, կ'ըսէր խանդաղատանքով. այդ երկու ասպարէզներն ալ ինձ դուր չեն գալիս։ Ուրիշներու թշուառութիւնը պիտի ընել հա-

© National Library of Armenia

լալ գործ չէ: Լաւ է որ ան գիւղատնտես ըլլայ եւ հալալ վաստակով ապրի:

Խեղճ Գարօ: Աչքերը փակեց օտարութեան մէջ: Ասիկա թերեւս իր ամենէն ծանր ցաւն ու տառապանքը եղաւ:

Բայց անոր ամիսնը, աւելի բախտաւոր օրերու մէջ, պէտք է փոխադրել Հայաստան, որուն համար այնքան անձնուիրութեամբ, այնքան անչահասէր, այնքա՛ն անքաւիր նուիրուածութեամբ ծառայեց:

Ասիկա նոր սերունդին պարտքն է եւ միանգամայն արժանաւոր յարգանք մը մեծ հայուն յիշատակին:

ՀԱՅԵՐԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Գրեց՝ ԳԷՈՐԳ ՄԵՍՐՈՊ

«Հայուն ծառայելը, քաղաքակրթութեան ծառայել է»:
ԿԼԱՏՍԹՈՆ

I

ԱՐԵՒՄՈՒՏՔԷն անջատուած, հայը եղեր է արեւելքի մէջ լոյսի ջահակիր մը: Արեւելեան բոլոր ժողովուրդներու համար, բացի Ճաբոնէն ու Չինաստանէն, հայը եղած է առաջ քան Ռուսերն ու Եւրոպացիները, քաղաքակրթիչ տարը: Արեւմտեան գաղափարներն ու յառաջդիմական շարժումը Արեւելքի մէջ փոխադրողը ու տարածող ժողովուրդը եղեր է Արարատի ստորոտը ապրած ցեղը:

Հայը չէ ճանչցուած·— Հայուն կատարած այս դերը սակայն՝ ամենէն աւելի անծանօթ մնացած իրողութիւններէն մէկն է: Հայ մըտքին ու հանճարին բոլոր արտադրութիւնները յաճախ վերագրուած են ուրիշներու՝ Թուրքին, պարսիկին, մինչդեռ իրականին մէջ այս վերջինները եղեր են ո՛չ միայն յափշտակիչ, այլեւ քանդիչ հայ արտադրող ցեղին նկատմամբ: Արեւելեան ոճ, արեւելեան ճարտարապետութիւն, Թատրոն, յառաջդիմութիւն, արեւելեան նկարչութիւն, գեղարուեստ, քաղաքակրթութիւն կը կոչուին յաճախ հայուն արտադրութիւնները· իսկ Արեւելեան ըսելով կը հասկցուին թուրք կամ պարսիկ:

Եւրոպայի ու Ամերիկայի մէջ Արեւելք ըսելով, Մերձաւոր Արեւելք ըսելով, յաճախ կը հասկնան Թուրքիան, եւ ինչ որ կայ հոն հետաքրքրական ու արժէք ներկայացնող, այդ Թուրքինը կը համարուի: Արեւելցի Հայը, Ցոյնը, Ասորին, Քիւրտը, ամէնքն ալ «Թուրք» են: Թուրիստներն իսկ, որ ամէն տարի խումբերով կ՚այցելեն Մերձաւոր Արեւելք, Պոլիս, Երուսաղէմ, իրենց բոլոր տեսած՝ այցելած չէնքերը կը նկատեն Թուրքական, արեւելքի բոլոր գեղեցկութիւնները — բացի բնութենէն — կը համարեն Թուրքական: Անոնց ձեռքը տրուած առաջնորդ գրքոյկներն իսկ (guide books) այդ գաղափարը կը զօրացնեն անոնց մէջ: Իսկ Արեւելքի մէջ Հայը կամ Ցոյնը կը նկատուին միայն խարերայ միջնորդներ, խարդախ վաճառականներ, մակաբոյծ ու կեղեքող դրամատէրներ, որոնք կը ծծեն երկրին կենսունակութիւնը, ստորին միջոցներով կը մրցին Եւրոպացի վաճառականին հետ, տզրուկի պէս կը քամեն միամիտ ու վեհանձն... Թուրքը:

Իրենք Թուրքերն ալ վարպետ են այս ուղղութեամբ քարոզելու եւ այն գաղափարը ներշնչելու օտարին, թէ իրենք Թուրքերը կեղեքուածներ են, իսկ քրիստոնեաները՝ կեղեքիչներ, իրենք աղքատ են, իսկ քրիստոնեան՝ Ցոյնը, Հայը, Հրէան հարուստ, իրենք կ՚աշխատին եւ քրիստոնեան կը հարստանայ ու հանգիստ կեանքը կը վայելէ: Եւ, կը յարեն Թուրքերը, այդ է պատճառը, որ իսլամ կեղեքուած ու ընչազուրկ հասարակութիւնը ատեն ատեն կ՚ըմբոստանայ եւ կը յարձակի քրիստոնեային վրայ, որուն դէմ ատելութեամբ լեցուած է իբրեւ իր կեղեքիչին ու յափշտակիչին վրայ:

Այս կերպ փրոփականտ մը, որ միակ զէնքը եղած է Թուրքերուն, կարելի է նմանցնել գայլի ու գառնուկի առակին, ուր վառակին վերին

© National Library of Armenia

կողմը կեցած դայլը կ'ամբաստանէ քիչ վարը ջուր խմող գառնուկը՝ ջուրը պղտորելու յանցանքով։

Հայաստանի դիրքը եւ հայ նկարագիրը.— Որպէսզի հասկցուի թէ հայը ի՛նչպէս կրցեր է կատարել իրեն ինկած դերը, հարկ է նկատի առնել ամենէն առաջ Հայաստանի աշխարհագրական դիրքը։ Յայտնի է թէ ժողովուրդ մը երբ հաւաքական կերպով կը ներկայացնէ ընդհանուր մտայնութիւն մը, երբ իր պատմութեան բոլոր ընթացքին ցոյց կուտայ որոշ ընդունակութիւններ եւ կը կատարէ ինքնայատուկ գործեր, այդ կը մեկնուի անով, որ այդ ժողովուրդը մղող հաստատուն ազդակներ կան։

Արդ, հայուն Արեւելքի մէջ խաղացած դերը կարելի է բացատրել միայն երկու պատճառներով. ա) Հայ ժողովուրդը ընդունակ ցեղ մըն է եղեր, որ կը պատկանի հնդեւրոպական ժողովուրդներու դասին, եւ ունի եւրոպական–ամերիկեան ժողովուրդներու բոլոր ընդունակութիւնները։ բ) Հայը ապրելով Հայաստանի մէջ, անկարելի էր որ չի կատարեր իրեն ինկած գեղեցիկ գործի բաժինը։ Հայաստանով կարելի է բացատրել հայուն բովանդակ նկարագիրն ու ճակատագիրը։

Հայաստան երկիր մըն է, որ ոչ Ասիայի կը պատկանի եւ ոչ Եւրոպայի։ Երկուքին միջեւ ձգուած կամուրջ մըն է։ Հասարակածէն ու բեւեռական գօտիէն հաւասար հեռաւորութեան վրայ, հակայական տափարակութիւններու միջեւ կը դտնուի։ Հիւսիսային կողմի տափարակութիւնները մինչեւ բեւեռ կ'երկարին, իսկ հարաւային դաշտերը մինչեւ Հնդկաց ովկիանոս կը տարածուին։ Հայաստան քառուղի մըն է, ուրկէ կ'անցնին բոլոր հովերը, արեւելեան ու արեւմտեան, հիւսիսի սառնամանիքն ու հարաւի խորշակը։ Հայաստան մեկուսի երկիր մը չէ, ծովերով կամ այլ միջոցներով բաժնուած ուրիշ երկիրներէ, որ կարենայ իր ուրոյն զարգացումն ունենալ։ Հայաստանի վրայ անպայման պիտի ազդեն չրջապատի պայմանները։ Եւ այս է պատճառը, որ Հայուն պատմութիւնը կապուած է Ափրիկէի, Ասիայի, Եւրոպայի պետութիւններու եւ ժողովուրդներու պատմութեան հետ։ Չի կայ ժողովուրդ մը, որ Հայուն չափ բազմաթիւ ազդերու հետ չափման մէջ եղած ըլլայ։

Հայուն պատմութեան մէջ իրենց էջերն ունին Հին Ասորեստանեան, Քաղդէական, Փիւնիկեան, Մարական, Պարթեւական պետութիւնները, Ասիայի բոլոր հին եւ նոր ժողովուրդները, Եգիպտոսը, Եթովպիան, Արաբիան, Հին Յունաստանը, Հռոմը, Բիւզանդիոնը, Եւրոպայի գրեթէ բոլոր ժողովուրդներն ու պետութիւնները, նոյնիսկ Ամերիկան իր որոշ տեղն ունի Հայուն նորագոյն պատմութեան մէջ։

Այս բոլորը միմիայն եւ ամենէն առաջ այն պատճառով, որ Հայաստանը աշխարհի մէջ իր եզական դիրքն ունի։

Հայ ժողովուրդին նկարագիրը եւս բացարձակապէս կը ներկայացնէ իր աշխարհագրական դիրքին ազդեցութիւնը։ Հայը ոչ ասիացի է իր մտայնութեամբ եւ ոչ եւրոպացի։ Երկուքին համախառնուրդն է ան։ Անոր մէջ կը յայտնուին թէ՛ արեւմուտքի յատկութիւնները, թէ՛ արեւելքի խառնուածքը։ Արեւմուտքի միտքն ունի ան, յառաջդիմութեան սիրահար, եւրոպական դրական մտքի հարազատ ըմբռնողութեամբ, դիտութեան լոյսը կը փնտռէ ու կը սիրէ ան, բայց հայուն մէջ ի յայտ կուգան նաեւ արեւելքի թերութիւնները։

Եթէ այսպէս չըլլար, տարօրինակ պիտի ըլլար անշուշտ։ Հայը իրրեւ արեւմուտքի առաքեալ, ստիպուած էր հաղնիլ արեւելքի պատմութեանը, խօսիլ արեւելքի լեզուով, վարուիլ անոնց նման բարքերով։ Այսպէս այլ եղած է։ Հայը միջնորդ մըն է Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ, եւ այս՝ ո՛չ թէ որովհետեւ Հայը կամեցեր է որ այդպէս ըլլայ, այլ որովհետեւ իր ընդունակութիւններով ժողովուրդ մը ուրիշ բան չէր կրնար ըլլալ Հայաստանի նման երկրի մը մէջ։

Հայաստանի դիրքը, Հայուն համար եղած է ե՛ւ չարիք ե՛ւ բարիք։ Չարիք մը եղած է, որովհետեւ չէ կրցած իր ինքնուրոյն եւ անկախ զարգացումն ունենալ, ինչպէս կրցեր են ունենալ օրինակ՝ Մեծն Բրիտանիա, Շուեյցարիա, Նորվեկիա, Աւստրալիա, Ճապոն եւն. եւն.։ Իր վրայէն անցեր են բազմաթիւ հորդաներ, որոնք աւեր են սփոեր ու քանդեր են իր չինած բոլորը։ Հայուն ցաւն է այս։ Բայց Հայաստանի դիրքը նաեւ ապահոված է հայուն համար

© National Library of Armenia

բարգաւաճումի ուրիշ պայմաններ. արեւմտեան ու արեւելեան գեղեցիկ քաղաքակրթութիւններն ու գաղափարները, չուտով մտնելով Հայաստան, լուսաւորեր են զայն, չունչ տուեր են անոր: Եւ հայը գիտցեր է օգտուիլ անոնցմէ: Աւելին կայ:

Հայը ոչ միայն օգտուեր է իր շուրջ երեւան եկած ու ծաղկած գեղեցիկ քաղաքակրթութիւններէ, այլ եւ եղեր է անոնց իւրացնողը եւ տարածողը հեռաւոր հորիզոններ: Ան եղեր է միջնորդ: Ցառաջ իրմէն բան մը դրեր ու տուեր է ուրիշին:

Հետեւաբար մարդկային քաղաքակրթութեան պատմութեան մէջ հայը իր կարեւոր դերն ունի. եւ մենք պիտի տեսնենք, որ այդ տեղը լաւ տեղ մըն է, բարձր ու պատուաւոր:

Եթէ Հայուն դերը ճանչցուած չէ, եթէ անոր անունը չկայ արեւմտեան դասական լեզուի մէջ, այդ չի միտեր Հայուն դերը: Ո՞վ չգիտեր, որ Քրիստափոր Քոլոմպոսի գտած երկիրը իր անունովը չէ որ կը կոչուի այժմ: Ո՞վ չգիտեր, որ աշխարհի ամենաղեղեցիկ ու էն շրեղ հին շինվերը կոչուած են ոչ թէ դիրենք յայտցող, կերտող հանճարին, այլ սա կամ նա մեծատունին, տէրային կամ իշխանին անունով: Ս. Սոֆիա եկեղեցին — այժմ Այա Սոֆիա մզկիթը — իրրեւ շինող կը փառաբանուի պատմութեան մէջ Մեծն Յուստինիանոս, բայց ոչ ոք կը յիշէ այն երկու հանճարները՝ Անթէմիոս Թրալլացին եւ Իսիդորոս Միլիտացին, որոնք յայտնի ու հրաշակերտեցին զայն: Շատ շատերը կը հիանան Փարիզի Նոդր Տամին վերայ, բայց զրեթէ ոչ ոք գիտէ անոր հանճարեղ ճարտարապետին անունը: Շատ շատեր կը սքանչանան Հռոմի Ս. Պետրոսին, Ուեստմինստերի մէջ Մեծ Յուստինիանոս, բայց զրեթէ ոչ ոք կը յիշէ անոնց ստեղծագործ մեծ հանճարներուն անունը: Նոր ժամանակներու մէկ քանի բախտաւորներն են, ինչպէս Էյֆէլ, որոնց անունով կը յիշատակուին իրենց հրաշակերտները:

Հետեւաբար, եթէ պատմութեան մէջ Հայուն հանճարը յիշատակութիւն չունի, եթէ անոր հանճարի երկերը ուրիշ մեծատուններու կը վերագրուին, այդ իր յանցանքը չէ:

Հայ Դաղութները.— Հայ ժողովուրդը պատմութեան մէջ իրեն ինկած բաժինը կատարելու համար կարծես պատրաստուած է նախապէս: Անտեսանելի երկնային ձեռք մը վարած է անոր ճակատագիրը, ոչ միայն բնակեցուցած է զայն աշխարհագրական մասնաւոր կէտի մը վրայ, այլ եւ ցրուած է զայն աշխարհի բոլոր ծայրերը: Ինչպէս քրիստոնէութիւնը հաստատուեցաւ ու տարածուեցաւ այն ժամանակ, երբ հրեայ ժողովուրդը ցրուած էր հին ծանօթ աշխարհի բոլոր կողմերը, այնպէս ալ արեւմտեան քաղաքակրթութիւնը տարածուելու համար պէտք է ունեցեր կարծես հայ ցեղին արեւելքի մէջ, ճիւղաւորուեր ու տեղաւորուեր է յաճախ իր կամքին հակառակ: Հայը Արեւելքի մէջ իրրեւ քաղաքակրթիչ տարր կրցած է դառնալ միմիայն անոր շնորհիւ, որ ցրուեր է ամէն տեղ կամայ եւ ակամայ, որ ունեցեր է գաղութներ: Հայ գաղութները մէյ մէկ վառարաններ են, որոնց շուրջ ճառագայթեր է քաղաքակրթութիւնը:

Հետեւապէս Արեւելքի մէջ հայուն դերը հասկնալու համար անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ նաեւ հայ գաղթականութեան երեւոյթը, հայ գաղութներու ծագումը, պատճառները եւ նկարագիրը: Ուստի մեր նիւթին համար քանի մը հակիրճ ծանօթութիւններ պէտք է տանք հոս:

Հայերը աշխարհի ամէն անկիւնները ճիւղ արձակած են բազմաթիւ պատճառներով: Հայերը երբեմն կամովին, երբեմն բռնի հեռացած են իրենց հայրենիքէն, երթալ հաստատուելու համար օտար երկնքի տակ: Հայը, իրրեւ վաճառական ժողովուրդ, շատ կանուխէն տարածուեր է ամէն կողմ: Յոյն պատմիչ Հերոդոտոսի օրերուն իսկ Հայերը առեւտրական յարաբերութիւններ ունէին Եփրատ եւ Տիգրիս գետերով Միջագետքի, Բաբելոնի եւ հարաւային ուրիշ երկիրներու հետ: Առեւտրական բոլոր ճամբաները, որ կապուած են Հայաստանի հետ, տեսեր են հայեր: Թէ՛ ցամաքէն, թէ՛ ծովէն ամէն կողմ հաստատուեր են անոնք:

Բայց հայ գաղութներու միակ պատճառը վաճառականութիւնը չէ եղած: Հայաստանի անապահովութիւնը, կեանքի, ինչքի, պատիւի դէմ գործուած ոճիրները, աւարառու ցեղերու արշաւներն ու նախճիրները, բռնակալ իշխաններու կեղեքումները, բնական աղէտները՝ ինչպէս երկրաշարժները, քանդումները եւն.

© National Library of Armenia

ասոնք բոլորը պատճառ եղեր են, որ հայը ըստիպուի օտար հորիզոններ փնտռել, աւելի հանգիստ ու արդար միջավայր որոնել, հեռանալ իր քամբախտ հայրենիքէն այնպէս, ինչպէս Իրլանդացին դիմեր է Ամերիկա՝ հեռանալով իր հայրենիքին մէջ մղուած կրօնական-ցեղային հալածանքներէն:

Հայ զաղութներու պատճառներէն մէկն ալ եղեր է օտար իշխաններու հրաւէրն ու քաջալերութիւնը:

1062 *թուականին Ռուսիոյ Իզեասլաւ իշխանին հրաւէրով 20,000 հայեր Անի քաղաքէն անցան Ռուսիա կռուելու Բոլովցիացիներուն դէմ, որոնք կը նոյնացուին Լեհերուն հետ ոմանց կողմէ, Ռումանացիներուն հետ՝ ուրիշներու կողմէ: Այս 20,000 Հայերը կանչուած էին այն պայմանով, որ երեք տարիէն աղատ պիտի ըլլային վերադառնալու կամ Ռուսաստանի մէջ բնակելու, եթէ փափաքէին: Ահա այս Հայերն էին, որ Քիէվի մէջ հայ զաղութի մը հիմունքը դրին, եւ անկէ տարածուեցան նաեւ Լեհաստան:*

Նմանապէս 1280-ին Լեւոն Տանիլովիչ իշխանը կանչեց Հայերը, որ Երթան ու Լէմպէրկ քաղաքը բնակին, ուր տուաւ անոնց սեփական վարչութիւն:

ԺԲ. դարուն սկիզբը ուրիշ բազմաթիւ Հայեր Եղիպտոս հրաւիրուեցան Խալիֆային կողմէն եւ հայ հաշակաւոր իշխաններէն մէկը, Վահրամ, 1132-ին օգնութեան հասաւ Հաֆէտ Լէտին Ալլահ Խալիֆային ու եղաւ անոր ընդհ. սպարապետն ու վէզիրը: Վահրամ իշխանը, զոր կոչած էին Պէհրամ Թակէտ Տէօվլէ (Վահրամ Գեւորեան Թագ), մինչեւ վերջը մնացեր էր քրիստոնեայ: Ահա այդ օրերուն էր որ Եգիպտոսի Հայոց Թիւը կը հասնէր 30,000ի, որոնց վրայ առանձին պատրիարք մը դրուեցաւ իշխանազուն հայ եպիսկոպոս մը՝ Գրիգոր Պահլաւունի:

Թուրքիոյ Հայ Գաղութները.— *Հայերը միայն իրենց կամքով չէ որ ցրուեր են օտար երկիրներ: Ուրիշ ազգեր, բռնակալ ու աշխարհակալ պետեր, տեսնելով Հայ Ժողովուրդին չինարար նկարագիրը, ուզեր են օգտուիլ անկէ. ո՛չ միայն ուզեր են գրաւել Հայաստանը, այլ եւ իրենց երկիրներուն մէջ տեղաւորել Հայը, ամէն դիւրութիւն տալ անոր՝ երկիրը բարգաւաճեցնելու համար: Այդպիսի բռնակալ իշխաններ շատ են եղեր:*

Հայոց պատմութեան մէջ կը յիշուին այդպիսի բազմաթիւ իշխաններու եւ պետութիւններու գործերը: Հին Պարսից Սասանեան թագաւորները, ինչպէս Շապուհ, Յազկերտ Ա., Բ., եւ ուրիշներ, Բիւզանդական կայսրեր՝ ինչպէս — Մորիկ, Յովհաննէս, Զմշկիկ, Կոստանդին Ժ. եւ այլք, բոնի տարագրած են Հայերը հեռաւոր սահմաններ: Եգիպտոսի Ֆաթիմեանները ԺԴ. դարուն եւն.:

Բայց ամենէն աւելի մեծ տեղ կը բռնեն երկու դէմքեր, որ Հայ զաղութներու պատմութեան մէջ անջնջելի պիտի մնան. այդ դէմքերն են մին՝ Կ. Պոլիսը գրաւող Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ՝ ԺԵ. դարուն, իսկ միւսը՝ Պարսիկ մեծ աշխարհակալ Շահ Աբաս՝ ԺԸ. դարուն սկիզբները: Եւ որովհետեւ բռնի տարագրումներու այն եղանակը, զոր կիրարկած են այդ երկու միապետները, դրեթէ նոյնն է եղած ուրիշ իշխաններու կիրարկած մեթոդին, ինչպէս նաեւ անոնց ծանօթացումը բուսական պիտի ըլլար առհասարակ բոլոր բռնի տարագրումներու մասին զաղափար մը կազմելու համար, համառօտ կերպով պիտի ծանօթացընենք այս երկու դէմքերուն գործերը, որ մեր նիւթին հետ կապ ունին:

Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ, երբ Պոլիսը գրաւեց եւ առաջին անգամ Ս. Սոֆիայի մէջ իր աղօթքը կատարելով վոխեց զայն մզկիթի, Պոլիսը գտաւ դատարկուած: Ուստի հրամայեց բազմամարդել, եւ որովհետեւ Հայ Ժողովուրդին չինարար ընդունակութեան ծանօթ էր, քաջալերեց զանոնք որ հաստատուին Պոլիս: Հայերը արդէն հինէն Պոլսոյ մէջ բնակութիւն հաստատած էին եւ պատերազմի պատճառով ցրուած էին: Ֆաթիհ Հայոց տուաւ կարգ մը առանձնաշնորհումներ, դիւրութիւններ, որպէսզի կարենան տեղաւորուիլ ու զարգացնել Օսմանեան երկիրը: Այս բուսական չէ. ուրիշ գրաւուած քաղաքներէն ու երկիրներէն, ինչպէս Թէոդոսիայէն, Ղրիմէն, Սեւ Ծովի եզերքներու հայաբնակ քաղաքներէն, բռնի կերպով հայեր բերաւ ու տեղաւորեց Պոլսոյ պարիսպներուն շուրջ եւ հաստատեց նաեւ Հայոց Պատրիարքութիւնը, առաջին պատրի-

© National Library of Armenia

արք ընելով Պրուսայի առաջնորդ Յովակիմ Եպիսկոպոսը, որ իր մտերիմ բարեկամն էր։(1)

Ֆաթիհ 1475 յունիսին փճացուց Ղրիմի 100,000 հայութիւնը, որ ճենովական հանրապետութեան տակ կիսանկախ ու բարգաւաճ վիճակ մը կը ներկայացնէր ու ձեռք էր անցուցած ամբողջ Հարաւային Ռուսիոյ եւ Սեւ Ծովի վաճառականութիւնը։ Կոտորածի ենթարկեց չուրջ 30,000 հայեր երեք օրուան մէջ, նոյնքան մը գերի դարձուց եւ դերեվաճառներու չուկաներն հանեց, եւ նոյնքան մըն ալ տարաբնակեցուց Պոլիս։

Ֆաթիհէն յետոյ նոյն դրութիւնը շարունակեց մասնաւորաբար Եավուզ Սուլթան Սէլիմ. Ֆաթիհի որդին, որ ամբողջ Կիլիկիան, արեւելեան հայութիւնը ենթարկեց իր տիրապետութեան. ջարդեց, գերեց ու մէկ մասը բերաւ բնակեցուց Բիւզանդիոն եւ իր շրջակաները։

Պարսկաստանի Հայ Գաղութը։— Հայոց բռնի տարագրման տեսակէտով աւելի նշանաւոր է սակայն Շահ Աբաս (1585–1627)։ Պարսից այս մանուկ թագաւորը, որ իր խնամակալին սպանութեամբ իր գահը ամրացուց, զարձաւ մեծ անձնաւորութիւն։ Նկարագրի այլայլան գծերով մէկն էր ան։ Ցոյց տուաւ բռնակալութեան ու արեւելեան գազանութեան բովանդակ կատաղութիւնը, բայց եւ չինարար ու վարչական իշխանի մը հաղուագիւտ յատկութիւնները։ Օսմանցիներու հետ մղած երկարամեայ կռիւներու ընթացքին, տեսնելով Այրարատեան ժողովուրդին ընդունակութիւնները, ուզեց գանոնք փոխադրել իր երկիրը՝ Պարսկաստան։ Հայոց մէջ ամենէն հարուստ եւ ընդունակ քաղաքներէն մէկն էր Ջուղա, այժմեան ռուս եւ պարսիկ սահմանագլխուն վրայ Ջուլֆա կոչուած քաղաքը, ուրկէ կ'անցնի հնդեւրոպական եւ անդրաւստրալեան հեռագրական մեծ գիծը։

Ջուղայի բնակիչները շատ հին օրերէն ի վեր արեւելքի ու արեւմուտքի միջեւ օղակ մը դարձեր էին, Հայուն հարազատ տիպարն էին. դիրեր էին առասպելական հարստութիւններ, մշակոյթի բարձր աստիճանի մը կրցեր էին հասնիլ։ Շահը, երբ օսմանցիներու դէմ մղած արշաւանքի միջոցին կ'այցելէ Ջուղա, հայ մեծատունները մեծ պատիւներով կ'ընդունին զինքը, կը սարքեն չքեղ խնջոյքներ, կուտան մեծ պարգեւներ(1)։ Այդ վայրկեանին իսկ Շահը միտքը կը դնէ այս հարստութիւններուն տիրանալ եւ մանաւանդ այսպիսի գործունեայ բնակչութիւնով մը օժտել իր մայրաքաղաքը՝ Սպահանը։

Օսմանցիներու դէմ մղած պատերազմին մէջ Շահ Աբաս զինուորական նպատակներ ալ կը հետապնդէր, Այրարատեան դաշտը մարդաթափ ընելով. ան կ'ուզէր երկիրը ամայացընել, որպէսզի Օսմանցիները չկարենան օգտուիլ Հայուն հարստութենէն։ Այսպէս, կրկ-

(1) Տե՛ս Գէորգ Մեսրոպ, Պատմ. Հայ Եկեղեցւոյ, Պոլիս 1914, հատոր Բ. էջ 369–372։

(1) Ժամանակակից պատմիչ մը, Առաքել Դաւրիժեցի, հետեւեալ կերպով կը նկարագրէ Ջուղայեցւոց կատարած ընդունելութիւնը Պարսից Շահին. «Երբ հասան Ջուղա գիւղաքաղաքը, Ջուղայի բոլոր բնակիչները, բազմաթիւ՝ զանազան ու այլազան յօրինուածներով պատրաստութիւններ տեսած ելան Շահին առջեւ, ինչպէս կը վայելէ թագաւորի մը։ Իշխանները, ծերերն ու երիտասարդները, ոսկեհուռ սիրատեսիլ զգեստներով, զէնքերով, զարդերով պճնուած ընդառաջ կ'ելնէին։ Դեռատի նորաբողբոջ մանուկներ ոսկի բաժակով անուշահամ ու աղնիւ գինի կը մատուցանէին։ Վառուած մոմերով, խունկերով ու կնդրուկներով քահանաներն ու աշխարհիկ երգիչներ առջեւէն երթալով պատշաճ եղանակներ կը հնչեցնէին։ Թագաւորին անցնելիք ճամբաները զարդարեցին. դետեղերքէն մինչեւ Խոճա Խաչիկի ապարանքը փայտաղ (ոսքի տակ ձգուած գորգ) սփռեցին արքայի ոտքերուն տակ, ինչպէս նաեւ թանկագին ու գեղեցիկ կերպասներ, որոնց վրայէն անցաւ թագաւորը եւ գնաց Խոճա Խաչիկին տունը։ Տան մէջ Խոճա Խաչիկ ոսկիով լեցուն ափսէ մը իր տղուն ձեռքը տուաւ եւ մատոյց թագաւորին առջեւ։ Նոյնպէս Ջուղայի բոլոր մեծամեծները ընծաներ մատուցին, ինչպէս որ կը վայելէ թագաւորի մը։ Շահը հոն մնաց երեք օր, եւ Ջուղայեցիք պատուեցին զայն համաղամ կերակուրներով եւ ծաղկահամ գինիով»։ Պատմ. Առ. Վարդ. Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ 1896 Գ. Տիպ. Գլ. Գ. էջ 24–25։

© National Library of Armenia

նակ նպատակներով իր բանակներուն կը հրամայէ հաւաքել բոլոր հայերը եւ քշել դէպի Պարսկաստան։

Հայերը որքան ցրուած ժողովուրդ են, որքան աշխարհի ամէն կողմերը կը դիմեն, նոյնքան իրենց հայրենի հողին կապուած ժողովուրդ են. մանաւանդ զգացում մը զիրենք չափազանց կը կապէ իրենց բնավայրին։

Երբ Շահ Աբասի հրամանն իմացան, Հայերը սկսան վախնալ. ամէն միջոցներու դիմեցին, նոյնիսկ տեղ տեղ զէնքի դիմեցին, Շահին հրամանը ետ առնել տալու համար, բայց անկարելի էր։ Պարսիկ զինուորները չուտով թափեցան հայ գիւղերու եւ քաղաքներու վրայ, բռնի դուրս քշեցին բնակիչները եւ ապա հրդեհեցին ամէն ինչ, բնակարան, հացի պաշար, խոտ, յարդ։ Բոլոր ազգարնակչութիւնը հաւաքեցին Այրարատեան դաշտը, Երասխի ափին։ Ականատեսներէն մէկը՝ «Թողուցինք, կ՚ըսէ, տունն ապրանքով լի, հօտը դաշտին մէջ, հայրը որդին ուրացաւ, մայրը դուստրը մոռացաւ. այդպիսի ժամ Աստուած չտայ իր արարածներուն։ Դուրս ըրին ամէն մարդ իր երկրէն որպէս նախիր, եւ իրենք դարձան սուրով ու նիզակով քշուողներ. մէկդմէկու խառնուեցան, ինչպէս դաւնուկը աշխարին կը խառնուի. լացն ու հառաչանքը մինչեւ երկինք բարձրացաւ»։

Գեսեղերքը հարիւր հազարաւոր ընտանիքներ խմբուած են։ Շահ Աբասի բանակին մէջ լուր կը հասնի, թէ օսմ. բանակը՝ Սինան փաշայի առաջնորդութեամբ առաջ կը քալէ։ Պէտք է, ուրեմն, չուտով քշել ժողովուրդը։ Խիստ հրամանը կը տուին. պէտք է զետէն անցնիլ։ Բայց փոխադրութեան միջոցներ չկան. զետը խորունկ է եւ արագահոս։ Ժողովուրդը պէտք է զետէն անցնի, պէտք է զետը թափի, անցնի միւս ափը, ինչպէս որ կրնայ։

Կը սկսին հեծելազօրքի եւ բանակի սարսափները, խարազաններով, սուրերով կը հալածուին խեղճերը. ազատում չկայ. առջեւը զետն է կլանող, ետեւը՝ սուրը։ Ով կը յանդգնի փախչելու, տեղն ի տեղը կը սպաննուի. ապաշանքի փոխարէն ականջները կը կտրեն, քիթը կը կտրեն։ Սարսափահար ժողովուրդը կը նետուի զետը, ադիոդորմ ճիշերը երկինք կը բարձրանան, արցունքը կը խառնուի զետի ջուրերուն։

«Մինանք կը բռնէին նաւակներու եզերքներէն, կը զրէ Առաքել Դաւրիժեցի, ոմանք տաշտերու եզերքներէն, եւ ուրիշներ ձիերու, եզներու եւ գոմէշներու պոչերէն, իսկ ոմանք լողալով կ՚անցնէին։ Անոնք որ անվարժ էին լողալու եւ անզօր, ծերերն ու պառաւները, տղաներն ու աղջիկները եւ մատաղ մանուկները լեցուցած էին ջուրին երեսը։ Եւ գետը կ՚առնէր կը տանէր զանոնք, որպէս խուռ զարնան ժամանակ։ Ու զետն քշուած մարդերով ծածկուած էր զետին երեսը։ Թէեւ անցան, անոնք որ անցան, բայց աւելի շատ էին անոնք, որ ջրահեղձ եղան»։(1)

Տառապանքը հոս չէր վերջանար սակայն։ Պարսիկները այդ թոհուբոհին մէջ չեն մոռնար իրենց կիրքերուն յաղուրդ տալ։ Կը սկսին զեղանի աղջիկներն ու մանուկները յափշտակել, գետէն անցընելու պատրուակով կը փախցնեն կը տանին։ Գետէն անցնելէ ետք եւս դաղար, հանկիստ չեն տար ժողովուրդին. հետի անլուր տաժանդով կը քշեն դէպի երկրին ներսերը։ Ճամբան շատերը չեն դիմանար տաժանքին, անօթութեան ու կեղեքումներուն. բազմութիւններ են մեռնողները։

«Երեկոյեան որ իջնէաք, կը զրէ այդ քշուածներէն մէկը, ի վաղն ելնէաք՝ բազում մեռեալք մնային ի ջուրեանն. եւ բազում հիւանդք. մարդի օժանդակութիւն չկայր, որ թաղէր մեռեալն։ Այս ճանապարհս տեսնէաք եւ հայէաք ի աջ կողմն եւ ահեակն (ձախ), եւ ամենայն կողմ, ամենայն քարի քով եւ ամենայն քոլի քով երախայք լալիս, մեկն չկայր, որ դիւցուցանէր զնոսա»։

Գաղթականները այսպէս տասանորդուած, կոտորուած եւ հիւծած, կը տարուին հաստատուելու իրենց սահմանուած վայրերը։ Ջուղայեցիները կը բնակեցուին Սպահան մայրաքաղաքին կից գետնի մը վրայ, ուր կը չինեն գեղեցիկ շէնքեր եւ իրենց նախկին քաղաքին անուամբ կը կոչեն Նոր Ջուղա։ Իսկ մնացեալ Հայութիւնը կը ցրուեն զանազան տեղեր, Պարսկաստանի արեւմտեան, հիւսիսային եւ հարաւարեւմտեան կողմերը։

Շահը կը ջանայ ամէն դիւրութիւն շնորհել տարագիր հայոց։ Կ՚աշխատի երկիրը սիր-

(1) Առաքել Դաւրիժեցի, անդ, էջ 43–44։

© National Library of Armenia

ցընել։ Մինչեւ իսկ կը ջանայ հայրենի սրբութիւնները, ինչպէս Էջմիածնի նուիրական անօթներն ու քարերը, փոխադրել Պարսկաստան։ Գիւղացի երկրագործ դասակարգին կը բաժնէ մշակելի հողեր։ Առեւտրական դասը կը քաջալերէ երկրին վաճառականութիւնը ձեռք առնելու համար. անոնցմէ ոմանց հետ կը կազմէ ընկերակցութիւն Պարսից Ծոցի մարգարտի որսարանները շահագործելու եւ Հնդկաստանի հետ առեւտրական յարաբերութիւն ընելու համար։ Ոմանց կուտայ դրամագլուխ։ Փոխադրուած ապրանքներէ ստացուելիք մաքին համար կուտայ անհամամետ դիւրութիւններ։

Շահ Աբասի նկարագրի ու հայոց հանդէպ ցոյց տուած վարմունքի մասին զաղափար մը տալու համար կ'արժէ մէկ երկու պզտիկ անեկդոտներ պատմել հոս։

Շահը անդամ մը ձիով պտոյտի ելած ատեն կը հանդիպի հայու մը, որ գինով էր։ Այս վերջինը կ'երթայ, կը բռնէ Շահին ձիու սանձէն եւ պահանջէ, որ ձին իրեն ծախէ։ Շահ Աբաս կը հրամայէ հայը տանիլ իր տունը եւ յաջորդ առաւուն պարձնել իրեն։ Սթափելով, երբ կ'իմանայ պատահմունքը, հայը կը սկսի դողալ։ Սակայն իր կնոջը մէկ խորհուրդը միտքը պահելով, յաջորդ առաւուն կը դիմէ պալատ։ Շահը կը հարցնէ անոր. «Ձիս քանի՞ դնեմ կ'ուզես»։ Այն ատեն հայը իր մէջքէն գինիի շիշ մը կը հանէ, կը դնէ մէջ տեղ եւ կը պատասխանէ. «Ձեր արքայ, Ձեր վեհափառութեան երիվարը գնողը ես չեմ, այլ այս շիշն է, իսկ վաճառողը Ձերդ վեհափառութիւնը. ես միջնորդ մըն եմ միայն այդ առեւտուրին մէջ. համաձայնեցէք, եւ եթէ միջնորդիս շնորհ մը ընէք, այդ Ձեր բարեշնորհութիւնն է»։ Շահը զոհ մընալով անոր տուած պատասխանէն, պարգեւներ կուտայ անոր եւ կ'արձակէ։

Շահը պարտէզ մը տնկած էր, հազուագիւտ բարունակ-տունկեր տնկել տուած էր հոն։ Ժամանակէ մը ի վեր կը տեսնուի, որ ծառատունկերը կ'անհետանան, կը պակսին։ Թագաւորը կը հրամայէ քննութիւն կատարել։ Կը հասկցուի, որ զաղթական հայերն են որ գիշերով կուգան բարունակներէն առնելու եւ կը տանին իրենց պարտէզներուն մէջ կը տնկեն։ Շահը իմանալով փոխանակ պատժելու Հայերը, կը դովէ զանոնք իրենց շինարարութեան բուռն փափաքին համար եւ կը յանձնարարէ պակաս տունկերուն տեղ նորերը դնել։

Աւանդութեան մը համեմատ, հայ մը կը սպաննէ իսլամ մը։ Այդպիսի արարք մը իսլամներուն համար նկատուած է միշտ ամենածանր ոճիր եւ պէտք է քաւել փոխ վրէժով, արիւնով։ Հայը կը ձերբակալուի եւ կը տարուի Շահին առջեւ։ Ան կը հարցնէ.

— Դո՞ւն սպաննեցիր այլազգին թէ ոչ։

— Այո՛, ես սպաննեցի, կը պատասխանէ հայը։

Շահ Աբաս կը հրամայէ այդ օրը արձակել զայն, որովհետեւ, կը վճռէ, գինով է։ Յաջորդ օրը կրկին կը հարցաքննէ, նոյն հարցումով։ Հայը դարձեալ չուրանար գործած ոճիրը։ Շահը կրկին կ'արձակէ զայն, վճռելով թէ այդ օրն ալ գեռ գինովութեան թմրութեան մէջ է։ Երրորդ օրը, երբ նոյն հարցումին նոյն պատասխանը կը ստանայ, կը դառնայ բողոքարկու այլազգիին եւ կ'ըսէ.

— Ես ամէն մէկ հայու համար ծախսած եմ հազար թուման, մինչեւ որ հասցուցած եմ հոս, տո՛ւր ինձ հազար թուման եւ ես քեզ կը յանձնեմ մահապարտ հայը, որ սպաննուի։

Դատախազը որ եւ ոչ իսկ 100 թուման չէր կարող վճարել, կը քաշուի դլխիկոր. իսկ հայը կ'արձակուի ազատ։ Այդ օրուընէ մինչեւ այսօր Պարսիկներուն մէջ համոզում է, թէ հայը սուտ չի խօսիր։

Այս աւանդական պատմուածքները կը ցուցընեն սակայն մեծապէս մէկ կողմ միայն։ Միւս երեսը կարդալ անհրաժեշտ է։

Գաղթական տարուած Հայերէն երկու համայնք յետին չքաւորութեան մատնուած էին. աւուր պարեն անդամ անկարող էին հոգալ. իրենց ամէն ինչը կողոպտուած էր, եւ ոչ մէկ աշխատանք կար իրենց համար։ Իրենց կարօտութիւնը կը յայտնեն Շահին պաշտօնեաներուն։ Շահ Աբաս կը կոչէ այդ ժողովուրդին առաջնորդները (Մէլիքները) եւ կը յայտնէ, թէ ինք պատրաստ է արքունի գանձարանէն փոխ դրամ տալ, առանց տոկոսի, երեք տարի վերջ վճարելու պայմանով։ Եթէ՝ սակայն՝ այդ գումարը չկարենան վճարել, պարտաւոր պիտի ըլլան պարտականները մահմետական դառնալ, եւ կամ աղջիկն ու տղան տալ թագաւորին իբրեւ ծառայ՝ գերի։ Մանչը պիտի գնահատուի

© National Library of Armenia

4 Թումանի, աղջիկը՝ 3 Թումանի։

Հայերը իրենց կարօտութենէն ստիպուած եւ յոյս ունենալով Շահին հայասիրութեան վրայ, կ՚ընդունին տրուած փոխ դրամը։ Ժամանակը լրանալէն եւ անցնելէն ետք, երբ Հայերը չկրցան վճարել, Շահը պահանջեց գործադրել դրուած պայմանները։ Աղիոզորմ տեսարան մը բացուեցաւ այն ատեն. մայրեր, հայրեր ըստիպուեցան արցունքներով հետեւիլ իրենց զաւակներուն, որոնք կը խլուէին իրենց գրկէն։ Շահը տեսնելով այս աղէկտուր տեսարանը, հրամայեց զաւակները վերադարձնել, բայց պահանջեց պարտքը։ Հայերը սկսան այնուհետեւ դեղերիլ քաղքին մէջ դռնէ դուռ փոխ մուրալով, որպէսզի կարենան իրենց պարտքը վճարել։ Այս ցաւալի կացութենէն ազդուած, Պապական նուիրակը իր դանձէն 250 Թուման կը յանձնէ հայ մէյիքներուն, իբրեւ ողորմութիւն։ Շահը երբ կ՚իմանայ, թէ Հայերը այս գումարը ստացեր են կարտինալէն ու ենթադրելով, որ Հայերը իրենց կրօնը փոխած են, վերադարձուց այդ գումարը եւ պահանջեց, որ ամէնքն ալ ընդունին իսլամական կրօնը։ Հրամանը սարսափներով գործադրուեցաւ։

Շահ Աբաս սովոր էր ծպտուած պտտիլ։ Անգամ մը կ՚այցելէ հայարնակ դաւառ մը. Դարբնի կոչուած գիւղէն անցած ատեն, կը հանդիպի հայ կնոջ մը, որմէ կ՚ուզէ հաւ մը գնել։ Թաղաւորը կնոջ դառնալով կ՚ըսէ.

— Ի սէր Շահին հաւն ամ ծախէ։

— Շահն ի՞նչ բարիք ըրաւ մեզի,— կը պատասխանէ կինը,— որ ի սէր անոր ամ ծախեմ։

— Ուրիշ ի՞նչ բարիք ընելու է ձեզի Շահը, որովհետեւ վայելուչ ու լաւ երկրի մէջ բնակեցուց ձեզ եւ ազգը կը պահէ նեղութիւններէ ապահով։

— Երանի՛ թէ,— կը պատասխանէ կինը,— մեզ բերած չըլլար մեր հայրենիքէն եւ այս օտար երկրի մէջ իբրեւ պանդուխտ բնակեցուցած չըլլար։

Այդ միջոցին ծերունի մը կ՚անցնէր, սայլը առջեւը ձգած։ Շահը կանչեց զայն եւ հարցուց.

— Ո՞վ ես։

— Հայ եմ,— պատասխանեց ծերունին,— եւ այս գիւղին քահանան եմ։

— Մահմետական եղիր,— առաջարկեց Շահը քահանային։

— Ես տգէտ մարդ մըն եմ,— յարեց քահանան,— եւ մանաւանդ ծերացած եմ, ուստի չեմ կրնար մահմետական կրօնքի արարողութիւնները կատարել։

Զայրացաւ Շահը։ Ծառային ձեռքէն առաւ կացինը, զարկաւ եւ վիրաւորեց քահանան գլուխէն, որ ինկաւ ուշաթափ։ Հրամայեց թլփատել զայն։ Այնուհետեւ հրաման հանեց բոլոր այդ դաւառը բռնի իսլամացնել։ Հայերը դիմադրեցին երկու տարի. մինչեւ իսկ դիմեցին զէնքի։ Հալածանքը սաստիկ էր։

Գրեթէ բոլոր դաւառը տասանորդուեցաւ, կիսուեցաւ։ Շատերը մարտիրոսացան։ Շահը խոստացեր էր իր բաքանչիւր իսլամացած քահանայի տալ 40 ոչխար եւ բոլոր իսլամացած գիւղացիներուն պարգեւներ տալ։ Բայց հայերը չէին ուզեր թողուլ իրենց կրօնը։ Ոչ որ կամաւոր քրիստոնէութիւնն ուրացաւ։ Ի վերջոյ, Շահը թոյլատրեց, որ Հայերը բռնի չիսլամացուին, բայց քաջալերուին անոնք, որ կ՚իսլամանան։ Այդ հրովարտակէն յետոյ իսկ հալածանքը չդադրեցաւ բնաւ, որովհետեւ Շահը հրամայեց այդ դաւառին վրայ տուգանք դնել նազար թուման։

Այս բոլորէն կը հասկցուի, թէ Շահը արեւելքի բարբարիկ իշխան մըն էր, մոլեռանդ, թէեւ ունէր քիչ շատ քիներարական ոգի։ Բայց այս միջավայրը, ուր Հայերը կը հաստատուէին, անտանելիօրէն խաւար ու բարբարոս էր։ Շահ Աբասի թոյլատու կարգ մը արարքները Հայոց նկատմամբ, Հայերու ճարպիկութիւնն ու աշխատանքի փարումը, առեւտրական գործերու Հայոց ձեռք կեդրոնանալը, օտար ու արհամարհուած երկրի մը եկած հաստատուած Պարսից մայրաքաղաքին մէջ ու տնտեսապէս տէր դարձած ըլլալնին եւն. պատճառ եղան, որ Պարսիկները ատեն Հայերը եւ թշնամի դառնան անոնց։ Ճիշդ է, որ Շահ Աբասի մահէն ետք քանի մը տարիներ եւս Հայերը կրցան շարունակել իրենց յարաբերական խաղաղ կեանքն ու բարգաւաճումը, եւ սակայն շուտով Պարսկաստանը կը դառնայ սպանդանոց մը։

Աֆղանները ապստամբական դրօշ պարզած կը յարձակին Պարսկաստանի վրայ, կը

© National Library of Armenia

գրաւեն Սպահանը եւ կը սկսին կողոպտել: Հայոց հարստութիւնները կը գրգռեն ընչաքաղց Աֆղաններու բնազդները: Անկուշտ ու անյագուրդ, տուգանք տուգանքի վրայ, տուրք տուրքի եռեւէն կը պահանջեն, կը սպաննեն, կը նահատակեն, կը լակեն, կ'իսլամացնեն: Նոր Զուղայի բովանդակ հարստութիւնը եւ բարբրիկ կեանքը կը փճանայ(1): Այնուհետեւ Հայերը կը ստիպուին հետզհետէ խմբովին տեղափոխուիլ օտար սահմաններ. կը հաստատուին Պարսպատ, Պարսից Մոգին եղերքները, Հնդկաստան, Հնդկաչին, Սունտի կղզիները եւն.: Աչքերնին կը դարձնեն նոյնպէս դէպի Ռուսաստան եւ խումբերով կը դաղթեն դէպի Կասպից Մովին արեւմտեան ու հիւսիսային եզերքները, ուր սկսեր էր հետզհետէ ռուսական տիրապետութիւնը անդորրութիւն բերել:

Այսպէս անդամ մը եւս կը ցրուի Հայութիւնը դէպի ասիական երկիրներ:

Հայ վանատականութիւնը.— Արեւելքի մէջ Հայը եթէ կրցեր է քաղաքակրթիչ դեր մը կատարել, ինչպէս պիտի ապացուցանենք փաստերով, ատոր ամենագլխաւոր պատճառ մըն ալ այն է որ, իբրեւ վանատական ան քայլ առ քայլ չրջեր է ամբողջ արեւելքի ու արեւմուտքի երկիրները, չփում ունեցեր է տեղացի ցեղերու հետ, ուսումնասիրեր է զանոնք, ու աշխատեր է ոչ միայն անոնց նիւթական պակասները հայթայթել հեռաւոր աշխարհներէ, այլ եւ անոնց մտաւորական, բարոյական, քաղաքական ու զեղարուեստական պահանջներուն գոհացում տալ. տեղ տեղ մինչեւ իսկ աշխատեր է իր յանախորդներուն ճաշակը կրթել, նոր պահանջներ զգացնել անոնց մէջ, յանախ առեւտրական նպատակներով:

Այս բոլորը կարենալ լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է, որ մենք ընդհանուր ուրուագիծ մը տանք հայ վանատականութեան ծագման, սահմաններուն, տարողութեան եւ նկարագրի մասին:

Օտարներու վկայութիւնը.— Հոս կ'արժէ, որ եւրոպացի մէկ երկու ճանապարհորդներու եւ հեղինակներու խօսք տանք ամենէն առաջ, գիտնալու համար, թէ հայը ինչ համբաւ կը վայելէր ու կը վայելէ իբրեւ վանատական, դրական ժողովուրդ:

Երկու հարիւր տարի առաջ եւրոպացի հեղինակ մը՝ (Martinier) Մարտինիէ, կը գրէր.

«Հայերը դրեթէ բոլորովին տուած են ինքզինքին վանատականութեան, որուն ընդունակ ալ են. անոնք արուեստապետներ են ոչ միայն արեւելքի վանատականութեան, այլ նաեւ ձեռնտուներ վանատականութեան Եւրոպայի մեծամեծ քաղաքներուն: Կը տեսնենք ամէն ատեն անոնց դալը Պարսկաստանի խորքէն մինչեւ Լիվոռնոյ: Դեռ շատ չքներ, որ անոնք հաստատուեցան Մարսիլիոյ մէջ ալ: Կը գտնուին նաեւ Հոլանտա, Անգլիա, Վենետիկ: Կը համբորդեն Մոսկովիա, Սիամ, Ճաւա, Փիլիպեան կղզիները եւ արեւելքի բոլոր աշխարհները՝ բացի Չինաստանէն»:(1)

(1) Մեսրոպ Թաղիադեանց իր Պատմութիւն Պարսից զործին մէջ այսպէս կը նկարագրէ Աֆղաններու սարսափը եւ Զուղայեցիներու կրածները. «Համբաւ մեծադանձ հարբաստութեան Զուղայեցւոց, հրդեհեալ զընչաքաղց մոլութիւն ագահութեան եւ վայրենաբարոյ կատաղութեան Մահմուդայ (Աֆղաններու առաջնորդը), չարժեաց զնա յաղէտեալին կոտորած առհասարակ ամենայն երեւելեաց մերոց, որ անդ: Ցորս երեւելի բարեպաշտութեամբ եւ մարմնաւոր փարթամութեան ճանաչեին ծերունին Խաչիկ Պայազատ, Սարգիս Խալ զարեանց, եւ Մանուկն Սամուրեան. եւ առաջնորդ Տէր Մովսէս: Ե՛րթ դու ի Զուղա. ի զնին կա՛ց քանդակաց դերեզմանաց եւ չիրմաց որ ի դաւիթս եկեղեցեաց եւ ի դիրս հանդիստեան. եւ նշմարեա տակաւին ի մաշուածս դրօշելոց զեօթինիսին ասա չղթայեալ, չորենին անց ցլիսատեալ. թիւ մի՝ ասա կախաղանեալ եւ թիւ մի՝ անդ խոշտանդեալ եւ հարուածեալ: Հա՛րց ի Մերունեաց մնացորդացն եւ ասասցին թէ «Աղուանք արարին զայս ամենայն»: Ի սոցա խաւարային աւուրս՝ անչքացեալ Զուղայ՝ ո՛ր մահուամբ, ո՛ր փախստեամբ, չկարաց այլ եւս յոտն կանգնել մինչ ցայսօր ժամանակի»: Կալկաթա, 1846, հտր. Ա., էջ 183–184:

(1) Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, Ասիա, հտր. Ա. Վենետիկ, 1806, էջ 47, Մրմրեան (Յ. Գ.) Մասնական Պատմ. Հայ Մեծատուններու, Պոլիս, 1909, էջ 28: Մարդինիէ չգիտեր որ Հայերը հինէն մտած են նաեւ Չինաստան, մէկ կողմէն Թիւրքիստան, Թիւ-

© National Library of Armenia

Պիշենկ մեծ աշխարհագիրը, նոյնութեամբ կրկնելով Մարդինիէի խօսքերը, կը գրէ.

«Ասիայի մէջ չի կայ նաւահանգիստ մը կամ առեւտրական քաղաք մը, ուր չգտնուին բազմաթիւ վաճառական հարուստ Հայեր»:

Մորէր (Maurere) անուն մատենագիր մը ալ կը գրէ.

«Հայերուն գլխաւոր գործն է վաճառականութիւն: Կարտինալ Ռիշլիէօ (Richlieu) մտադիր էր բնակեցնել Հայերը Ֆրանսայի մէջ՝ զարգացնելու համար վաճառականութիւնը, եւ ա՛յս միտքով էր որ տպագրել տուաւ քանի մը գիրք»:

Հնդկաստանի եւրոպեան վաճառականութեան վրայ գրած մեծ հեղինակ մը՝ Ռայնալ, Հայերը կը կոչէ «Տէր կամ ուսուցիչ Ասիայի ներքին վաճառականութեան. աշխուրջ եւ ներհուն ազգ մը, որ գիտէ արեւելքի բովանդակ բարքն ու սովորութիւնները. դրամատէր մի-անգամայն վերջին աստիճանի ժուժկալ ու խնայող. դաշնակից Պարսկաց եւ Հնդկաց. մանրազնին քննող եւ ընդարձակամիտ»:

Սկովտիացի նշանաւոր ճանապարհորդ Յակոբ Պրիւս (Jaques Bruce), Նեղոսի աղբերակունքներուն խուզարկուն, ԺԸ. դարու կիսուն կը գրէր.

«Արեւելքի մէջ սփռուած բոլոր ժողովուրդներէն Հայերը անժխտելիօրէն ամենէն աչքառուներն են իրենց համբերատարութեան եւ ողջախոհութեան համար: Ընդհանրապէս կը խօսին այդ կողմերու բոլոր լեզուները: Յաղթանդամ, ուժեղ, չափազանց խնամածու կենդանիներուն եւ իրենց յանձնուած ապրանքներու, համարձակ ու հաւատարիմ: Կը գոհանան թեթեւ շահով մը»:

Թուրնըֆոր (Pitton de Tournefort) Ֆրանսայի համբաւաւոր բուսաբանն ու ճանապարհորդը, ԺԸ. դարուն սկիզբը (1727) կը գրէր.

«Հայերը աշխարհի ամենալաւ մարդիկն են, պարկեշտ, քաղաքավար, ողջամիտ եւ ուղղամիտ: Երջանիկ պիտի համարէի զանոնք ղէնք գործածել չգիտնալնուն համար, եթէ անհրաժեշտ չըլլար երբեմն գործածել զայն զերծ մնալու համար մարդոց անգթութենէն, ըստ որում մարդիկ այս կերպ չինուած են: Ամէն պարագայի տակ Հայերը կը զբաղին միայն վաճառականութեամբ եւ կը նուիրուին անոր այնքան ուշադրութեամբ, որուն ընդունակ են: Ոչ միայն Արեւելքի վաճառականութեան տէրն են, այլ եւ մեծ բաժին մը ունին Եւրոպայի ամենէն մեծ քաղաքներու առեւտուրին մէջ»:

Երկար խօսելով Ջուղայի եւ Շահ Աբասի մասին, ապա կը շարունակէ. «Հայերու պարզասիրութիւնը, անոնց խնայասիրութիւնը, հաւատարմութիւնը, ձեռներէց ոգին ու երկար ճամբորդութիւններու դիմանալու կորովը, իրեն թուեցան յարմար տաղանդներ իր ծրագիրներուն համար: Քրիստոնէական կրօնը, որ կը դիւրացնէր իրենց յարաբերութիւնը Եւրոպայի բոլոր ազգերուն հետ, իրեն երեւցաւ բաւական պատշաճ յարմարութիւն մը իր նպատակներուն հասնելու համար: Մէկ խօսքով՝ երկրագործներէ, ինչ որ էին Հայերը, չինեց վաճառականներ, եւ այս վաճառականները դարձած են երկրի ամենէն հռչակաւոր թանգարները»:

Ուրիշ նոյնքան նշանաւոր եւ աւելի հին ճանապարհորդ մը, Թաւէրնիէ (Y. B. Tavernier), որ ԺԷ. դարու երկրորդ կիսուն շրջեցաւ Թուրքիա, Հայաստան, Պարսկաստան ու Հնդկաստան, սա տողերը կը նուիրէ Հայոց՝ մեզ շահագրգռող հարցին շուրջ.

«Հայերը որքան ընդունակ են վաճառականութեան, նոյնքան կ'ապրին մեծ խնայասիրութեամբ, եւ յոյժ սակաւապետ են, ինչպէս ըսի, կամ առաքինօրէն եւ կամ կծծութեամբ: Երբ իրենց տուներէն կը մեկնին երկար ճամբորդութիւններու համար, պաշար կը վերցնեն իրենց հետ պիսկիւիտ (պաքսիմաթ), գոմէշի միս չորցուած, սոխ, չոր կարագ, աւիւր, գինի եւ չոր միրգեր... Երբ քաղաք մը հասնին, ուր քանի մը օր պիտի մնան, հինգ վեց հոգի կը միանան, կը վարձեն պարապ սենեակ

պէտ, Մոնկոլիա, միւս կողմէն Հարաւային Չինաստան. ԺԴ. դարուն Քանդոն քաղաքին մէջ, հարուստ հայ տիկին մը չինել տուած էր մեծ ու գեղեցիկ եկեղեցի մը, զոր Բեքինի Յովհ. Արքեպիսկոպոս Ֆրանչիսկեան կրօնաւորը, յիշեալ տիկնոջ կամքով՝ դարձուց եպիսկոպոսանիստ եկեղեցի, ուր կը պաշտօնավարէին Կղիմէս Ե. (Cle'ment V. 1305—1314) Պապին դրկած երեք եպիսկոպոսները յաջորդաբար. Մրմրեան, նոյն անդ, էջ 26:

© National Library of Armenia

մը, զոր անմիջապէս կը կահաւորեն, իւրաքանչիւրը բերելով իր անկողինն ու վերմակը եւ տնական անօթները, ինչ որ մեծ խնայողութիւն մըն է: Արդէն դիտեն այնքան տնտեսել իրենց պաշարները, որ յաճախ կը պատահի որ Ֆրանսայէն կամ Իտալիայէն վերադարձին իրենց հետ կը բերեն: Երբ քրիստոնեայ երկիրներ մեկնին, իրենց հետ կ'առնեն քրքում (saffran), պղպեղ, հնդկընկոյզ եւ ուրիշ համեմներ եւ ասոնցմով կը վճարեն գիւղերուն մէջ հացը, գինին, կարագը, պանիրը, կաթնեղէնները եւ ուրիշ ուտեստեղէններ, զորս կը դնեն խեղճ կիներէն: Իսկ երբ կը դառնան քրիստոնեայ երկիրներէն, կը վերցնեն ամէն տեսակ փերեզակի ապրանքներ եւ Վենետիկեան ու Նիւրէնպէրկեան մանր երկաթեղէններ, ինչպէս հայելիներ, լեմոնեան մատանիներ, կիտուածանկարներ, կեղծ մարգարիտներ եւ այս կարգէն ուրիշ նիւթեր»:

Եղած են նաեւ ճանապարհորդներ, որոնք հայ ցեղին նկատմամբ շատ լաւ չեն խօսիր, մէկ քանի հայ անհատներէ կրած իրենց տպաւորութիւններն ընդհանրացնելով: Եւ սակայն այդ կարգի մատնադիրներն իսկ չեն կրնար չխոստովանիլ Հայոց առեւտրական ընդունակութիւնը: Այդպիսի հեղինակներէն մէկն է Ճորն Ֆորսթէր անգլիացին: 1783-ի կատարած իր մէկ ճամբորդութեան մէջ ան կը հանդիպի Հայոց, որոնց վաճառականի ընդունակութիւններու մասին չի կրնար խոստովանութիւններ չընել: Հնդկաստանէն Աֆղանիստան-Թուրքիստան, Ռուսաստան ճամբորդութեան միջոցին կը ստիպուի հագնիլ հայկական տարազ, առնել հայու անուն եւ հայ վաճառական ձեւանալ: Եւ այս՝ կը ստիպուի կատարել այնպիսի ատեն մը, երբ ինքը իսլամական տարազ հագած էր, հակառակ ատոր ենթարկուեր էր բուռն հալածանքի եւ անարգանքի(1):

Հայու տարազը Ասիա ու Ափրիկէ թափանցելու միջոց.— Այսպիսի դէպքեր շատ են պատահած հին ատեն: Յիսուսեան Հ. Կոէս Պէնէտ, ուզելով Չինաստան մտնել, 1603-ին ստիպուած է հայու տարազ հագնիլ եւ անուն առնել: Ուրիշ լատին երկու վարդապետներ, Յիսուսեան (Je'suites) Հ. Մելքոն Սիլվոս (1577-ին եւ Պետրոս Պախ, Pays) 1603-ին հայազգեստ կը մտնեն Եթովպիա, չի կրնալով ուրիշ տարազով թափանցել այս երկրին մէջ:

Հայը կրցեր էր թափանցել ուրեմն այդ երկիրներէն ներս՝ շնորհիւ այն յատկութիւններուն, զորս ունէր, եւ մանաւանդ շնորհիւ այն յարաբերութիւններուն, զորս ստեղծած էր առեւտուրի համար:

Բայց աւելին կայ. արեւելեան տարազով ամբողջ Եւրոպայի մէջ տարածուած ու ճանչցուած ժողովուրդ զրեթէ միայն հայը եղեր է, այնպէս որ եւրոպացիներ յաճախ, երբ ուզեր են նմանիլ Արեւելքին, ընդօրինակեր են Հայը: Այսպէս Ժ. Ժաք Ռուսօ, ուզելով արեւելեան տարազով պտտիլ, հագած է հայ վաճառականի հագուստ:

Հայ վաճառականութիւնը՝ հին դարերուն.— Բոլոր այն վկայութիւնները, զորս յիշեցինք, եւ զորս կրնայինք դեռ այնքան երկարել, որ հատորներ լեցնէր, նոր դարերու յատուկ էին, բայց մասամբ կրնային փաստ ծառայել, թէ Հայերը նոր չէր որ վաճառական դարձեր էին: Միմիայն «երկրագործ» ժողովուրդ մը, Շահ Աբասի մը կամքին առջեւ մէկէն չէր կարող վաճառական դառնալ, եթէ այդ բանին ընդունակութիւն ունեցած չըլլար, այդ ասպարէզին մէջ արդէն թրծուած չըլլար: Հայը ամենահին դարերէ ի վեր եղեր է նաեւ վաճառական:

Դեռ Ս. Գրքին մէջ, Եզեկիէլ մարգարէի կողմէ կը յիշուին, թէ Հայաստանի ձիերով, հեծելանիւերով ու ջորիներով Տիւրոսի վաճառատեղիները լեցուած էին:

Քսենոփոն, յոյն պատմիչը եւ զօրապետը, որ 401-ին Հայաստանէն անցաւ, նոյնպէս կը յայտնէ, թէ Հայերը Պարսկաստանի եւ Հընդկաստանի հետ առեւտրական յարաբերութեան մէջ էին:

Հերոդոտոս, ուրիշ յոյն պատմիչ մը, զարմանքով կը յիշատակէ Հայոց չինած նաւերը՝

(1) George Forster, Voyage du Bengale a Pe'tersbourg, trad. Paris, 1802. տես մասնաւորաբար Բ. հատոր, էջ 143, ուր Հերաթի մէջ Քարվանսարայի չրջափակէն ներս կը հանդիպի Հայու մը, որուն կը յայտնէ թէ եւրոպացի մըն է, բայց ապահովութեան համար հայու անուն մը առեր է:

© National Library of Armenia

Եփրատն ի վար, դէպի Բաբելոն առեւտուրի համար։(1)

Ստրաբոն եւ Պլինիոս, նոյն հին դարերու աշխարհագիր եւ մատենագիր, կը յայտնեն, թէ Հնդկաստանի ապրանքները Ցունաստան ու Եւրոպա կը տարածուէին Բակտրեայով (այժմ Թուրքէստան) Կասպից Ծով, Կուր գետի վրայով մինչեւ Փասիս՝ Ճորոխ, ուրկէ Սեւ Ծովի վրայէն։ Այս բոլոր ապրանքներուն մեծ մասը փոխադրողներն էին Հայերը։

Հայ Վաճառականութիւնը Միջին Դարերուն։— Երբ Արաբները գրաւեցին ամբողջ Մեջադետքը, Պարսկաստանը, Սիւրիան, Հայաստանը եւ անոնց շրջապատի երկիրները, առեւտրական նոր ուղիներ եւ նոր շուկաներ բացուեցան աշխարհի առջեւ։ Հայերը կրցան օգտուիլ այս նոր կացութենէն։ Է. դարէն մինչեւ ԺԴ. դար, Հայաստան երկու դուռներով եւ երկու որոշ ժամանակամիջոցներու մէջ կրցաւ համաշխարհիկ տուրեւառի մասնակցիլ։ Առաջին ժամանակամիջոցին Մեծ Հայքն ու Փոքր Հայքն են, որ կը դտնուին առեւտրական ճամբու վրայ։ Պաղտատի շահաստանէն ճամբաներ կը բացուէին դէպի Ատրպատական, Եփրատի հովիտը, դէպի Դուին, Անի, Կարս, Ճորոխի հովիտով՝ Սեւ Ծով։ Այս ատեններուն է որ Դուինը, Անին, Կարսը, կը դառնան Հայոց մէջ հարուստ շահավաճառ կեդրոններ, ուր կը հոսին հարաւի ու արեւելքի հարստութիւններուն հետ արեւմուտքի եւ հիւսիսի ապրանքները։ Շնորհիւ այդ բարգաւաճման, արքայական թագ կը ստանան Անիի եւ Կարսի հայ իշխանները ու. կը հիմնեն Բագրատունեաց եւ Կարուց թագաւորութիւնները։ Կարսէն դէպի Սեւ Ծով առեւտրական բանուկ ճամբայ մը կ'անցնէր դէպի Բասենի դաշտը, դէպի Էրզրում։ Այդ մարդին մէջ հայ շահաստանները եղան Արծն եւ Կարին կամ Էրզրում քաղաքները։

Արծն քաղաքին համար հայ մատենագիրներ գովեստներ ունին լիարուն. «Հոյակապ եւ հռչակաւոր էր ան, բոլոր աշխարհի ծանօթ, ծով ու ցամաք կ'երկնէր եւ կ'առատանար՝ անոր մէջ բովանդակելու համար իր զօրութիւնը... Կը նմանէր նորահարս կնոջ մը, որ իր վայելուչ դեղեցկութեամբ ու պայծառ զարդերով ամենուն ցանկալի կը դառնայ» (Արիստակէս Լաստիվերտցի)։ «Հռչակաւոր ու բազմամարդ քաղաք հայոց... որ ունէր անհամար չափերով ոսկի եւ արծաթ» (Մատթէոս Ուռհայեցի)։

Նման բացատրութիւններ, բազմամարդութիւն, ոսկւոյ՝ արծաթի առատութիւն, դիպակի՝ դամասկեան կերպասներու՝ զանձերու ճոխութիւն, առատ ու փարթամ սեղաններ, շքեղ պալատներ, կը յիշատակուին նաեւ Կարնոյ, Մելիտինէի (Մալաթիա), Բաբերդի, Երզնկայի, Սեբաստիոյ, Կեսարիոյ համար եւն.։

Առեւտուրի այս զարգացած վիճակն էր պատճառը, որ դարձեալ հայ իշխաններուն եւ իշխանուհիներուն թոյլ կուտար շքեղ շէնքեր կառուցանելու, կանգնելու Անիի հոյակապ եկեղեցիներն ու հսկայական պարիսպները, Աղթամարի հրաշակերտ պալատն ու եկեղեցին, Կարսի մայր եկեղեցին, Սեբաստիոյ Ս. Նշանը, եւն., եւն.։ Հայ իշխանուհիներէն մէկը Բիւ-

(1) Հերոդոտ. Ա. գլ. 194.— Ահա Հերոդոտի խօսքերը. «Պիտի խօսիմ ուրիշ հրաշալիքի մը մասին, որ դէթ Բաբելոն քաղաքէն ետքը ամենէն մեծն է այս երկրին մէջ տեսնուածներուն։ Այս նաւերը, զորս կը գործածեն Բաբելոն հասնելու համար, շինուած են կաչիով եւ բոլորաձեւ։ Զանոնք կը շինեն Ասորեստանի հիւսիսային կողմը գտնուած Հայկական երկրին մէջ։ Նաւուն կողերը կը կազմէին ուռիի ճիւղերը եւ դուրսի կողմը ամբողջապէս մոլթով կը պատէին։ Նաւուն ցոուկը յետսակողմէն մեծ տարբերութիւն մը չունէր, որովհետեւ երկու կողմն ալ բոլորակ կը շինէին։ Մէջը կը դնէին այլ եւ այլ տեսակ վաճառքներ, մանաւանդ գինի։ Այս նաւերու մեծերը մինչեւ 5000 տաղանդ, այսինքն 725,000 լիտր ծանրութիւն կը տանէին եւ ամենուն մէջն ալ էշեր կը դնէին։ Երբ Եփրատի վրայով Բաբելոն կը հասնէր նաւը՝ որուն կառավարողները երկու հոգի էին միայն, մէկը առջեւէն միւսը ետեւէն, կը պարպէին նաւը, կը ծախէին բոլոր վաճառքը, ինչպէս նաեւ նաւուն ուռիէ կողերը, նաւուն վրայ պատած կաչին առնելով կը բեռցնէին էշերու վրայ ու կը դառնային Հայաստան, եւ դարձեալ կը շինէին նոյն կերպով ուրիշ նաւեր, որովհետեւ Եփրատն ի վեր նաւարկելը անկարելի է սրընթացութեան պատճառով։

© National Library of Armenia

րեղ՝ Տիկին Սիւնեաց, Է. դարու սկիզբները արքայաբար կը հիւրընկալէր Հերակլ կայսրը ոսկեպատ կառքերով, կը նուիրէր անոր 1000 զրահ, 1000 սաղաւարտ, 400 ոսկեկուռ զէնքեր, ձիեր, ջորիներ եւ 3000 մարտիկ ուժ։ Կարուց վերջին թագաւոր Գագիկ Բ.ը Սելճուքեան Սուլթանին կոչունք մը կուտար, որ 100,000 ոսկի կ'արժէր. «Լսեցինք թէ, կ'ըսէ Մատթէոս Ուռհայեցի, մէկ մէկ գառին վրայ, զոր խորովեց, 1000 դահեկան ծախք ըրաւ»։

Կիլիկիոյ վաճառականութիւնը.— Բայց միջին դարերու հայ վաճառականութեան ամենէն աչքառու ոստանները հարկ է փնտռել Կիլիկիոյ մէջ։ Կարմիր ծովի, Եգիպտոսի, Պաղեստինի դրաւումը Ֆաթիմեաններու կողմէ կը փակէր Եւրոպայի առջեւ Հնդկաստանի ճամբան։ Իսլամներու հետ հաղորդակցութեան միջոցը գիտէին միայն հայերը։ Հայոց Ռուբինեան իշխանութեան ժամանակ՝ Եւրոպայի ամենէն մեծ վաճառական-քաղաքներուն՝ Ճենովայի, Վենետիկի, Լիվոռնոյի եւ ուրիշներուն առջեւ Արեւելքը կը բանան միմիայն Հայերը։ Կիլիկիան այն մարզը կ'ըլլայ, ուր կը փոխանակուին Արեւելքի ու Արեւմուտքի ապրանքները։

Հայոց թագաւորները դաշնադրութիւններ կը կնքեն յիշեալ հանրապետութիւններու հետ, առեւտրական փոխադարձ համաձայնութիւններ, որոնք չունչ կուտան Եւրոպայի ու Հայաստանի։ Վենետիկի արխիւներէն եւ հայ ու օտար պատմագիրներու յիշատակներէն գիտենք այսօր, թէ Կիլիկիա դէպի Եւրոպա կ'արտահանէր Հնդկաց, Զինաց, Ասորւոց ու Պարսից երկիրներու ապրանքներ, զորս կարաւաններ ցամաքի ճամբով կը բերէին Հայոց այն ատենի մեծ նաւահանգիստը՝ Այաս, այժմեան Հայոց ծոցի վրայ, Ալեքսանդրէտի դիմաց։ Նմանապէս կ'արտահանէր բամբակ, ցփսի՝ այծի ստեւէ չինուած կերպաս, հայկական աղ (Sal Armiago = Armenian Salt), որ այժմ կը կոչուի ընդհանրապէս (sel ammoniaque)։ Կ'արտածէին նոյնպէս երկաթ, պղինձ, պղոլեղ, ձի, ջորի; էշ, տրջատ եւ մանաւանդ մուշտակ եւ գամէշի մորթ. ասոնցմէ զատ պէտք է յիշել նաեւ ցորեն, չամիչ, խաղող, գինի, ատաղձ, խոտ, տորոն, խէժ, իւղ, մետաքս եւն., եւն.։ Իսկ Վենետիկէն ու Ճենովայէն փոխադրուած կամ ներածուած ապրանքներն էին՝ ասուեղէն, կտաւեղէն, ոսկեդիպակ (samiti), համեմներ, ապակեղէն, նաւու կազմածներ, նաւեր, զէնք, կահ կարասի եւլն.։

Գաղափար մը կազմելու համար Կիլիկիոյ առեւտրական գործառնութիւններու մասին, կ'արժէ փոքրիկ օրինակ մը միայն։ 1312-ին Իտալացի Գր. Տոլֆի, որ Այասի մէջ Վենետիկեան ներկայացուցիչ մըն էր (Պայլ), Վենետիկի դուքսին կը գրէ, թէ իր վարած տարի ու կէսուայ Պայլութեան միջոցին Այաս մտած վենետական վաճառքներուն ½ առ հարիւր ստացած տոկոսի գումարն է եղած 60 լիրա կրոսի։ Այս գումարէն կը հետեւի, թէ միմիայն վենետական ներածութիւններու գումարը եղած է չուրջ 2 միլիոն տոլար, այժմեան դրամով, եթէ այժմեան կուրսի արժէքը համեմատութեան դնենք հինին հետ, թերեւս աւելի ճիշդ ըլլար այս գումարը բարձրացնել 100 միլիոն տոլարի։

Սանուտոս, ԺԴ. դարուն ականատես Այասի պայծառութեան, Այասի վաճառքները աւելի պատուական կը համարէր քան Աղեքսանդրիոյ ապրանքները։

Մարքօ Բօլօ ալ կը վկայէ, թէ Կիլիկիոյ այս նաւահանգիստը միակ մեծարգի շահաստանն էր Խաչակիրներու Անտիոքի եւ Պաղեստինի տիրելէն առաջ։

Այս շրջանին Հայերը արեւելքի ամենէն դիւրամուտ թանգարաններն էին, այնպէս որ իշխանասպան աւազակներ — (հաշիշները) Հայոց տարազով ծպտուած՝ համարձակ մտան Տիւրոս քաղաքը եւ սպաննեցին անոր իշխանը՝ Քոնրատ Մոնֆերրատոյ (Conrad Monferrado)։

Հոս հաճոյքով կ'ուզէի տեղ տալ Հ. Բ. Սարգիսեանի, Վենետիկի միաբանութեան հմուտ հայրերէն մէկուն, որ մեր նիւթին չուրջ սա տողերը կը գրէ.

«Վաճառականք Հայոց, որոնց ընկերակցութիւնն յաւէտ փափաքելի էր եւ շահաւէտ արեւմուտցիներուն համար՝ մեծագոյն դեր խաղացողներ կը համարուէին ամենուրեք։ Անոնց առաջնորդութեամբ կարող էին Լատինք ոտք կոխել արեւելեան երկիրներու եւ անծանօթ ժողովուրդներու մէջ։ Հայք տարածուած էին Հնդկաստանի, Ասորւոց եւ Պարսից գերխաւոր շահաստաններուն մէջ,— կ'ըսէ Գանէսդրինի։ Անոնք կը յաճախէին Քիւրտիստա-

© National Library of Armenia

նի, Կիլանի, Խորասանի, Դաւրէժի, Հալէպի եւ Գրուսայի մէջ։ Միջին Ասիոյ մէջ փոխանակելով արեւմտեան եւ Փոքր Հայքի վաճառքները, դարձին կը բերէին այն արեւելեան երկիրներու արտադրութիւնները դէպի Արեւմուտք։ Մեծ Գողոտան, որ կը հանէր ի մեծագոյն շահաստանը՝ ուր Դաւրէժէն, Միջին Ասիայէն, Գարսկային ծոցէն, Հնդկաստանէն եւ Չինաստանէն եկած բոլոր վաճառքները կ՝ամփոփուէին, էրզրում՝ Բարձր Հայքի մէջ։ Անկէ յետոյ արքունի երկու ճամբաներ կը բաժնուէին, մէկը կը տանէր մեծ շահաստանը՝ Այաս, իսկ միւսը՝ Տրապիզոն... Հոն, Բեկոլոդդիի վկայութեան համեմատ, ամէն տարի կը վաճառէին 14,000 կուինդալ (= 100 քիլօ)։ Տարեւոր տօնավաճառով մը բոլոր քաղաքը ճոխ վաճառատեղի կը դառնար Գաղտատէն ու Գահիրէէն բերուած ոսկի հիւսուածներու, Հնդկաստանէն եւ Գարսկաստանէն եկած թանկագին քարերու, Չինական ու Հնդկական մետաքսէ եւ բամբակէ կերպասներու եւ Փլորինտեան (Ֆլորանսեան) կարմրագոյն կտաւներու եւ այլ եւ այլ վաճառքներու։ Բազմավէպ, 1882, էջ 122։

Մարինի, Վենետիկեան վաճառականութեան վկայ մատենագիրներէն մին, Վենետիկի վաճառականութեան պատմութեան Ե. հատորին մէջ, կը յայտնէ, թէ ամէն տարի 6–էն 7 նաւեր կը ղրկէին Տրապիզոն եւ նոյնքան մըն ալ Կիլիկիա, դէպի Այաս նաւահանգիստը։ Իւրաքանչիւր ցոկանաւ կը վերադառնար արեւելեան վաճառքներով, որոնց գինը առ նուազն 100,000 ծէգէնի կը հասնէր. ուստի Վենետիկի միայն Այասի ու Տրապիզոնի հետ ըրած առեւտուրին շահը մէկ ու կէս միլիոնի կը հասնէր։ Ինչ որ այն ատենուան դումարով 30,000,000 ֆրանքի կը հաւասարէր, իսկ այժմեան արժէքներով աւելի քան 60,000,000 տոլար։

Արդ, եթէ Վենետիկի շահը այսքանի կը հասնէր, հապա ի՞նչ կրնար ըլլալ արեւելեան վաճառքներու միջոցաւ ձեռք բերուած շահը՝ Եւրոպայի համար, երբ նկատի ունենանք որ Վենետիկցիներէն շատ առաջ եւ ա՛լ աւելի մեծ իրաւունքներով առեւտուր կ՝ընէին Հայոց հետ Ճենովացիները, Բիզացիները. Բերուցցի կոչուած ընկերութիւնը, Ֆլորանսցիները, մանաւանդ Գարտի կոչուած ընկերութիւնը, եւ առանց նման Բրովենսալցիները, Մարսիլիացիները, Ֆռանկները, Կատալանցիները, Սիկիլիացիները, Գերմանացիները եւլն.։ Այս ժողովուրդները ամբողջ հինգ դար, ժ. դարէն մինչեւ 1453, Օսմանցիներու Գոլիսը գրաւելու թուականը, իրենց նաւերը կը պտտցնէին Հայկական ջուրերուն մէջ եւ արեւելքի ոսկին ու արծաթը կը հոսէր Եւրոպա։

Իրենք, Եւրոպացի վաճառականներն ալ գիտէին անոր կարեւորութիւնը եւ գիտէին, թէ Հայերուն շատ բան կը պարտին։ Նոյնիսկ Գոլոսոյ առումէն յետոյ Հայերը դեռ կը մնային Վենետիկի վաճառականութեան ամենէն մեծ ազդակը։

1591-ին Վենետական կառավարութիւնը պատուէր կուտար իր բոլոր կոմսերուն եւ պաշտօնեաներուն «խնամքով վարուիլ Հայոց հետ»։ Քանի քանի անգամներ պաշտօնական շրջաբերականներու եւ թուղթերու մէջ կոչուած են «երախտաւորք եւ դրամաբերք» (Nationa Armena benemerita, e che traffica summe rilevanti di denaro. 1640 օգոստ. 28)։

Ուրիշ պաշտօնագրի մը մէջ կ՝ըսուի (1651, յունիս 7). «Այս ժամանակիս գրեթէ միակ Հայոց առուտուրն է մեր քաղաքին մէջ, զոր կ՝արժէ աւելի եւս քաջալերել, դիւրութիւններ տալ անոնց»։

Եօթը տարի ետք (1658, օգոստ. 8) Վենետիկի Մերակոյտը կը յայտարարէր թէ «Հայերը կուգան հեռաւոր սահմաններէ եւ կը պահեն Վենետիկի առեւտուրը»։

Այսպիսի վկայութիւններ շատ կան, զոր աւելորդ կը նկատենք խճողել։

Բայց հոս կ՝ուզենք բան մը աւելցնել, այս գլուխը վերջացնելու համար։ Խաչակիրներէն յետոյ Եւրոպա հարստացաւ, արուեստները ծաղկեցան։ Եւրոպա շատ բան սորվեցաւ Արեւելքէն։ Բայց այդ ամենէն աւելի կը պարտի Հայերուն, որ Ճոյներուն հետ Եւրոպայի դաստիարակները եղան։

Հէտէն, Խաչակիրներու ազդեցութեան վերայ յօրինած իր երկասիրութեան մէջ կը համառօտէ Եւրոպայի Արեւելքէն ընդունած արուեստներն ու ազդեցութիւնները եւ կը համրէ. ա) մետաքս գործելու արուեստը, բ) ներկարարութիւնը կամ թափչութեան արուեստը, գ) շաքարագործութիւնը, դ) պաղլեղի, քրքումի եւ լեղակի կիրառութիւնը, ե) նարտարապե-

© National Library of Armenia

տութիւն, զ) քանդակագործութիւն, է) նկարչութիւն, ը) գիտութեանց, գեղարուեստից եւ մատենագրութեան նաշակ:

Արդ, բացի վերջին երեք արուեստներէն, որոնց մէջ Յոյներու ազդեցութիւնը առաջին տեղը կը բռնէ, միւս բոլոր արուեստներու միջնորդն ու տարածիչը Հայերը եղան Արեւմուտքի մէջ:

Հայ վաճառականութիւնը ԺԵ. — ԺԹ. դարերուն — *Անտարակոյս Շահ Աբասեան արշաւանքներն ու անոնցմէ առաջ Բագրատունեան, Կարսոյ, Վանայ թագաւորութիւններու կործանումն ու գաղթը դէպի Փոքր Ասիա ու Եւրոպա, նոյնպէս Կիլիկեան թագաւորութեան քանդումը ԺԴ. դարուն եւ Հայոց զունդագունդ դիմելը դէպի Եւրոպայի կեդրոնները, պատճառ եղան, որ Հայ վաճառականութիւնը առնէ համաշխարհային նկարագիր: Զատազանց երկար պիտի ըլլար այդ դարերու եւ անոնց միջեւ զարգացած վաճառականութեան մասին մանրամասն խօսիլ: Միայն սա չափն ըսենք, որ Ասիայ եւ Եւրոպայի մէջ չի կար անկիւն մը, ուր Հայերը իրենց առեւտրական ներկայացուցիչներն ունեցած չըլլային:*(1)

Այս չրջանի Հայ վաճառականին, անոնց բարքերուն եւ մասին զարգացած մը կազմելու համար հետաքրքիր պիտի ըլլար խօսնիլ ժամանակակից վաճառական մը՝ իր սովորական բարքերով: Խօսողը Հայ վաճառականն է Զուղայի կարեւոր դիմքերէն մէկը՝ խոջայ Սաֆար, որ կը պատասխանէ Գաղղիացիի մը հարցերուն:

«Գաղղիացի.— *Ի՞նչ գլխաւոր սանիաթ (արհեստ) կայ Հայոց մէջ:*

«Խոջայ Սաֆար.— *Ամենայն հասարակ սանիաթ մեր ազգին մէջն կայ, ինչպէս ասենք դերձակ, գթակարար, բարուչկար (կօշկակար), դպլրաք (սափրիչ), խառատ (հիւսն), դուրկեար (առաղձագործ), որմնադիր, ոսկերիչ, դարբին, ջուլհակ, գրագիր, կազմարար, ծաղկարար, ներկարար, մաղադաթագործ, ապրշումագործ (մեւսաքսագործ), զառբաթ (արծաթագործ) նաղդաբու (արծաթեղէն չինող), ասիաթասազ (մամագործ), տպագիր, բամաշի եւ այլ բազում:*

«Գաղղիացի.— *Հիմա չաղավաթ (հնարք) արա մեր վաճառականներուն առ ու ծախան ինձ ասա. ինչ բարաթ (սեսակ) ապրանք կուրանեցրնեն ու ինչ երկիր կ'երթան:*

Սաֆար.— *Մեր ազգին մէջն բարաթ բարաթ բազրկան (վաճառական) կան, որն երկրէն դուրս չեն գնալ մա զուքանումն (խանութը) նստած, այլ եւ ամէն երկրի հոր (բամբակեղէն, վերք) կու ծախէ, որն Հնդստան, Աբրաստան, Հոմայստան, Ֆրանկստան, Ռուսաստան, եւ այլ ուրիշ երկրի խրիզ (վաճառք) կը բերեն, Լատոնց մօտ ամէն բարաթ ապրանք կ'ելնի, ջամաչիր մարգարիտ, շուխա, չիթ, ապրշմեղէն, տան զինուար (տան զարդեր), ձեռագործ, եւ այլ մանր մունր ապրանք:*

«Գաղղիացի.— *Մա Պարսն Սաֆար, ձեր*

---

(1) *Պարսկահայ (Զուղա) վաճառականութեան սահմանները տալով Զուղայեցի ուսուցիչ մը՝ Կոստանդ Վարժապետ իր աշակերտներուն կ'ուսուցանէր կշիռներն ու չափերն այն երկիրներուն, ուր կը յաճախէին Զուղայեցի թանգարանը. եւ կը յիշատակէ այդ քաղաքներուն կամ երկիրներուն անունները հետեւեալ կերպով. «Մոլիան՝ Լանոն՝ Սրճընդէ՝ Զանապատ՝ Աբրարապատ՝ Խուրմայ եւ Հնդման, Բանկալայ, Բիար, Բաթանայ, Բնարիս, Մոմն, Ղայիմուս, Զարատուս, Շահզատափուս, Խէրարաղ, Դարբարաղ, Դորմաթարաղ, Բէրանիուս, Սուրաթ, Գուջրաթ, Սվռանկարաղ, Շապան, Հէյդարարաղ, Մուչիբանդար, Փէզոս՝ Հավայ՝ Բուիանդ. Խաթայ եւ Խուիթայ, Զիրպատ, Գոչին, Սէնան, Մալաղայ, Զաֆաթիր, այսր ոմանք Բիաւիոյ կ'ասեն. Թոնատ, Ամբուան, Մուքասար, Թիմուան, Սլհօան, Մանիլայ, Շարինով, Հաբաշատան: Սպահան, Բիր աթրաֆինրումն. Մաշատ, Բայիրուխարայ, որ է Օղրկիստան. Ղանատահար, Ղազնի, Քաբուլ, Աֆղանի, Փէշաւար, Քիշմիր: Դառնամբ գամբ, Թարվէզ, Երեւան, Գիլան, Մազանդրան, Գասկան եւ Քէմամայ Բոէշտ, եւ Լաֆիշան եւ Լաշաարնշան, Գանջայ. եւ Ղարաբաղ, Շիրվան, Շամախի, Մոսկով, Լեհ ու Մաշար: Դառնամբ, Բասրայ, Արաղստան, Բաղդադ, Հալապ, Կոստանդնուպոլիս, Բուրսայ, եւ Անդրանայ, Մար, Արզրում, Թօղաթ, Իզմիր, Մանիսայ, Այիզոնայ, Վանատիկ, Այաման, Զէնեվայ, Մարսիլիայ եւ Ֆրանսայ, Ընկլիթէռ, Ամստէրտամ, եւ Տանձկայ, Ասպանիա եւ Ենկիտանք երկիրն»:*

(Այս գրուածքը կ'ասնէ ձեռագիր մատեան մը Յ. Տէր Յովհաննէսեան, Պատմ. Զուղայու, էջ 159–160):

© National Library of Armenia

վաճառականքն ի՞նչպէս ճանապարհ կանեն այնքան ապրանք էն ձեր մեծ եւ լայնատարած երկրումն դէպի Հնդկաստան՝ Թուսելի՝ Արաբստան եւ այլ աշխարհ, չուն որ (որովհետեւ) ձեր երկրումն ծով եւ նաւագնացութիւն չկայ:

«Սափար·— Խիստ հեշտ եւ սաֆայով (հանոյքով), զարա (որովհետեւ) երբ որ շատվոր են եւ շատ ապրանք կայ կարաւան կու դառնան, եւ ունին իւրեանց բեարվան բաշին (կարաւանապետ), չավուշն (առաջնորդող կարաւանապետ), թֆանգչին (հրացանակիր պահապան), ամէն փուսաթոմն (պարաղաներով) ապրանքն՝ ուղտերն՝ ձի կամ ջորի կու բառնան. եւ իւրեանք ձիաւորք ինչպէս մին մեծ օրդու (բանակ) կու գնան ու ամէնքն քնավանրաչու հրամանաւն ասղ կամ անղ իջեւանին. ունին իւրեանց հետ ամէն թուրլու (տեսակ) թոչակ եւ զախիրայ (պաշար), ինչ տեղ որ կ'ուղեն, վրան եւ չադիր (վրան) կուտան, եւ իւրեանց պէտքն կամ կարիքն լիուլի կատարեն՝ յետոյ իւրեանց ճանապարհն յառաջ գնան:

«Գաղդիացի·— Զարմանալի ճանապարհայ, եւ առաւել մեզ որ չենք տեսել, մա էդ խսաքդ կարաւան ինչ լեզու այ կամ ինչ ասել:

«Սափար·— Մեզ էլ մեծ զարմանք այ, երբ որ նաւի հսքաթ (պատմութիւն) կը լսենք: Կարաւան որ Թուրքն բեարվան կասէ Հայոց լեզու այ, ասելն սաքի (այսինքն) կարող վանելոյ, որ աշխարհօրէն կասեն շարշու կենալու (դիմադրելու) կարող: Ես էլ Սպահանայ կարաւանի հետ եկի Թարվէզ: Տեղն Արզրում, Թոխաթ, մինչեւ Իզմիրն եւ Իզմիրու նաւ մտայ չորս ամսումն հասանք Թասիլն. ինչ տեղ է էս օր ինն օր այ որ քաղաքս (Մարդամ) եմ մտել:

«Գաղդիացի·— Տեղս շատ կու մնաս:

«Սափար·— Պիտի մնամ մինչեւ որ ապրանքս ծախեմ. թէ որ ծախս հետացաւ, ընկերիս մօտ ապրանքս կու թողնում, խրիդ կանեմ, Մոսկովի վերան Ասուծով ասուն կերթամ»:

Հայ վաճառականներու նկարագիրը.— Մեր բրած նկարագրութիւններէն, յիշատակած օտար հեղինակներու տուած նկարագիրէն, բաւական հասկնալի եղան անշուշտ հայ վաճառականներու նկարագրի մէկ քանի գծերը:

Հոս յաւելում մ'ընելու համար պէտք է յիշենք անոնց նկարագրի ուրիշ ընդհանուր գծերը եւս, որոնք անոնց յաջողութեան դաղտնիքը կը լուսաբանեն:

Անոնց առաջին եւ ամենակարեւոր առաքինութիւնն էր առեւտուրի մէջ անխարդախ հաւատարմութիւն: Միւս յատկութիւններն էին գործի մէջ աշխատասիրութիւն, անխոնջ եւ արիաջան աշխատասիրութիւն, հաշուապահութեան հմտութիւն, իրարու նկատմամբ սէր:

Այս առաքինութիւնները տարօրինակ կը թուին, թերեւս, մանաւանդ որ վերջին դարու համաշխարհիկ անբարոյացումը պատճառ եղած է որ շատ մը հայ խարդախ վաճառականներ եւս երեւան գան: Բայց մասնաւորապէս հայ վաճառականներու նկատմամբ դէշ խօսուած են առելութենէ, նախանձէ առաջնորդուած: Երբ ուշադիր կը քննենք բոլոր անոնց գործառնութիւնները, երբ ուշադրութեամբ կը հետեւինք անոնց մասին եղած նոյնիսկ օտար յայտարարութիւններուն, կը տեսնենք, որ մեր վերոյիշեալ առաքինութիւնները հայ վաճառականին անվիճելի եղած են: Ոչ ոք կը ժխտէ անոնց անխոնջ արիաջան աշխատասիրութիւնը, համբերութիւնը ամէն տառապանքի, դրկանքի ու նեղութեանց: Ամէն ոք կը խոստովանի անոնց լեզուագիտութիւնն ու հմտութիւնը: Անոնք ունէին ամէն երկրի կլիմաներու, չափերու, դրամներու, վաճառքներու, արժէքի մաքսի օրէնքներու, բոլոր քաղաքներու առեւտրական կանոններու ծանօթութիւնը:

Այսպիսի տեղեկութիւններու դիւրութեան համար ունէին բազմաթիւ միջոցներ, ուսուցիչներ: Նոյնիսկ տպագրական առաջին աշխատանքներու միջոցին Զուղայեցի Պ. Պետրոսի որդի Խաչատուրի շնորհիւ տպագրուեցաւ Ամստէրդամի մէջ 80-էջեայ տետրակ մը, ուր այդպիսի մանրամասն տեղեկութիւններ կան: Անոր նման ձեռագիր ու տպագիր տետրակներ դրեթէ չեն պակսիր, որոնք կը ծառայէին Զուղայեցի վաճառականներու հմտութեան:

Հայ վաճառականներու՝ մասնաւորապէս Զուղայեցի վաճառականներու մէկ ուրիշ գեղեցիկ կողմն ալ այն էր, որ դիտէին ընկերովի գործել. հաստատած են բազմաթիւ ընկերութիւններ, առեւտրական ժամանակաւոր միութիւններ, յետոյ շահը բաժնելու համար իրենց մէջ՝ դրուած պայմաններու համեմատ: Անոնց հարուստներէն շատերը դրամ փոխ կուտային պզտիկ մարդոց, երբեմն հակայական գու-

© National Library of Armenia

մարներ ու ապրանքներ, վստահելով անոնց ուղղամտութեան վրայ, եւ տարիներ ետքը կը ստանային իրենց դրամագլուխը մանրամասն չահով միասին: Շատ քիչ անգամներ դժգոհութիւն ունեցած են կամ բնաւ չեն ունեցած, ու չեն զղջացած իրենց ընկերական այս վերաբերմունքին համար:

Տարակոյս չկայ, որ հարստութիւնը իրեն հետ կը բերէ ճոխութիւն, չռայլասիրութիւն, հպարտութիւն, այլամերժութիւն եւլն. եւլն.: Հայ թանգարներուն մէջ, այս եւ ուրիշ մոլութիւններ սկսան հետզհետէ մուտ գործել, բայց եւ անոնց կողքին երեւան եկան ուրիշ առաքինութիւններ. չինարարութիւն, բարեգործութիւն, տիրասիրութիւն, եւ սէրն ու ճաշակը զեղեցիկին, գիտութեան, արուեստներուն,

Անոնք սկսան բնակիլ շքեղ պալատներու մէջ: «Նոր Ջուղան չինուած էր, կ'ըսէ Հայ հարուստներու ճոխութեան ականատես պատմիչ մը, հրաշալի յօրինուածքներով եւ կամարակապ փողոցներով, թիւաւոր ապարանքներով եւ ամարաստուն հովանոցներով, զարդարուած ու յօրինուած ոսկի ու լազվարդ ծաղիկներով ու գոյնզգոյն երանգներով, որոնք դիտողին աչքերը կը խաղացնէին: Նմանապէս չինեցին եկեղեցիներ հրաշազուն յօրինուածով՝ Աստուծոյ փառքին արժանի, երկնանման խորաններով, դերամբարձ կաթողիկէներով, ամէնքն ալ ծաղկուած պէսպէս ու երփներանգ գոյներով՝ ոսկիով ու լազվարդով»: (Առաքել Դաւրիժեցի):

Անթիւ են անունն այն մեծահարուստ պարոններուն, խօճաներուն կամ իշխաններուն եւ ամիրաներուն, որոնք կառուցած են եկեղեցիներ, վանքեր, պալատներ, կամուրջներ, քարվանսարայներ, տպարաններ, բարենպատակ կալուածներ: Մինչեւ իսկ օտար հաստատութիւններու եւ օտար կրոններու չռայլած են մեծ նուիրատուութիւններ:

ԺԸ. դարու կիսուն Մադրասի մէջ մեռած հայ մը, Պետրոս Ոսկան, ոչ միայն չինել տուած է հսկայ կամուրջ մը ձգուած նոյն քաղաքի գետին վրայ, եւ Մամլան գիւղին մէջ չինել տուած էր 133 աստիճաններով քարեղէն սանդուղ մը, որ Լատինաց եկեղեցին կը բարձրացնէր, այլ եւ կտակեց 60,000 ռուփի Հռոմի Ս. Պետրոս Կաթողիկէին, նոյնքան Էջմիածնի տաճարին, 50,000 Երուսաղէմի Ս. Փրկիչ եկեղեցիին, 30,000 Մշոյ Ս. Կարապետի վանքին եւ 30,000 Մէքքէի իսլամներուն:

Երբ խոստովանահայրը կը հարցնէր, թէ ինչո՞ւ այդ կտակը կ'ընես այլակրօններուն, պատասխանեց. «Ես այդ (գերեզմանիդ) կընկով միլիոն մի վաստկեր եմ, թող այս ալ անոր»: Եւ իր տապանին վրայ գրել տուաւ այսպէս, իր նախանձորդները խայթելու համար.

«Ես կ'ասէի՝ ես ես եմ, դու ալ կ'ասես՝ ես եմ.

Արա՛ ընդոր ես եմ, դու ալ կ'ըլնաս զոր ես եմ»:

Ուրիշ մեծահարուստ հայ մը, Խօճա Շաֆրազ, իր սեփական ծախքով չինել սկսած էր Սպահանի եւ Նոր Ջուղայի միջեւ անցնող Զէնտէրուտ գետին վրայ ընդարձակ ու քարաշէն կամուրջ մը: Շահ Ապպաս Վեհեռիկի դեսպանը հետն առած, ըստ այլոց Անգլիոյ դեսպանն է այդ (1629ին), կ'ուզէ այցելել նորաշէն կամուրջին, առաջին անգամ անցնիլ անոր վրայէն եւ ցոյց տալ դեսպանին իր հպատակին մեծագործութիւնը: Երբ կը մօտենան, Շահը կը տեսնէ, որ կամուրջը դեռ 3-4 կամար աւարտած չէ: Շահը կատակելով, կ'ըսէ Շաֆրազին.

— Այսպէս կիսա՞տ կը ձգես. չե՞ս գիտեր, որ պիտի անցէինք:

— Նորին վեհափառութիւնը կը բարեհաճի՞ թոյլատրել, կը պատասխանէ Շաֆրազ, որ Ձեր պատուոյն համար փողով լեցնեմ մնացած բացը, որուն վրայէն կարենաք անցնիլ:

Շահը կը թոյլատրէ թէ՛ փորձելու եւ թէ՛ դեսպանին առջեւ ժեստ մ'ըրած ըլլալու համար:

Շաֆրազ չուտով բերել կուտայ իր տուներ՝ որ կամուրջին գլուխը կը գտնուէր, պարկերու մէջ լեցուած շահի ըսուած պղինձի փողերը, եւ կը սկսի թափել ջուրին մէջ: Դեսպանին միջամտութեան վրայ, Շահը կը հրամայէ վերջացնել այդ գործողութիւնը: Շաֆրազ կը մերժէ ետ վերցնել ջուրը թափուած գումարները եւ կը խնդրէ, որ Շահի զինուորներուն պարգեւ տրուին անոնք: Շահն ու դեսպանը կ'անցնին կամուրջէն. կը մտնեն Շաֆրազի տունը, ուր կը տրուի իրենց ոսկի սպասներով, խնջոյք: Շահը այդ օրը Շաֆրազը կը կոչէ

© National Library of Armenia

Սերֆերազ, որ կը նշանակէ բարձրագլուխ կամ գեղեցիկ:

Այսպիսի մեծափարթամ առատաձեռնութեան ու հպարտ նուիրաբերումի օրինակներ շատ են: Դժբախտաբար Հայ հարուստներու մէջ ակնաւ հետզհետէ երեւան գալ դասակարգը, որ ոչ թէ վաճառականութեամբ, այլ դրամատիրական միջոցներով, տոկոսներով, հանդիսաւոր դրամական գործառնութիւններով ճոխացաւ. այսպիսիները մանաւանդ բազմացան թուրք անբարոյացնող տիրապետութեան տակ եւ կը կոչուին ամիրաներ: (Շարունակելի)

ԴԱՇՆԱԳՐԵՐ

Գրեց՝ ԱՐՏԱՇԷՍ ԱՐԵՂԵԱՆ

Ի ՈՐՀՐԴԱՑԻՆ Ռուսաստանի արտաքին գործոց ժողովրդական կոմիսարիատը հրատարակել է Ժողովածու Գործող Դաշնագրերի եւ համաձայնագրերի, որ կնքել է Ռուսաստանի ընկերով. խորհ. դաշն. հանրապետութիւնը՝ օտար պետութիւնների հետ:

Առ այժմ լոյս են տեսել երեք պրակներ: Առաջինը, համաձայն վերտառութեանց, պարունակում է մինչեւ 1921 թ. յունուար 1-ը ոյժի մէջ մտած դաշնագիրը. Երկրորդը՝ մինչեւ 1921 թ. դեկտեմբեր 1-ը, եւ երրորդը 1921 թ. դեկտեմբեր 1-ի եւ 1922 թ. յուլիս 1-ի միջոցում ոյժի մէջ մտած դաշնագրերը:

Ժողովածուի հրատարակիչները յառաջաբանի մէջ ասում են.

«Խորհրդային Ռուսաստանը՝ իր գոյութեան համար մղուած կռուի առաջին շրջանը վերջացրած է: Ներկայիս «շունչ առնելու» միջոց է, ուստի եւ արտաքին գործոց ժող. կոմիսարիատը ժամանակը եկած է համարում՝ դրի առնելու պատերազմների եւ աւերածութեանց մեծ դարաշրջանի արդիւնքները»:

Ապա նոյն յառաջաբանի մէջ ասուած է, թէ ներկայ ժողովածուի մէջ չեն մտած այն դաշնագրերը, որոնց բռնադատուել է խորհ. Ռուսաստանը, որոնք սակայն յետոյ ընդունել են (օրինակ՝ Բրեստ-Լիտովսկի դաշնադիրը եւայլն): Այդ կարգի դաշնագրերը, ասում են նրանք, առանձին հրատարակութեան նիւթ պիտի կազմեն, եւ դրանք պիտի ունենան զուտ պատմական, եւ ոչ թէ գերազանցապէս գործնական նշանակութիւն, ինչ որ ունի ներկայ ժողովածուն:

Հայաստանի քաղաքական կեանքով ի մօտոյ հետաքրքրուող ընթերցողը բնականաբար մեծ ուշադրութեամբ պիտի մօտենայ նման մի հրատարակութեան՝ յուսալով նրա մէջ գտնել այն բոլոր վաւերագրերը, որոնք անմիջապէս կամ միջնորդապէս վերաբերում են Հայաստանի ճակատագրին, խորհրդային Ռուսաստանի հետ ունեցած առնչութեան մէջ:

Այդ տեսակէտից, թւում է մեզ, շատ թերի է ներկայ ժողովածուն: Մեզ կենսապէս շահագրգռող դաշնագրերից այդտեղ մենք առաջին անգամ պաշտօնապէս հրատարակուած ենք գտնում 1920 թ. դեկտեմբեր 2-ի, ինչպէս նաեւ Կարսի դաշնագիրը:

Նոյնպէս մեզ կենսապէս շահագրգռող դաշնագրերից է նաեւ 1921 թ. մարտին Մոսկուայում Ռուսաստանի եւ Տաճկաստանի միջեւ կնքուած դաշնագիրը, որ առաջին անգամ հրատարակուել է խորհ. կառավարութեան պաշտօնական օրգան «Իզվեստիա» թերթի մէջ (22 մարտի 1921): Կան նաեւ մեզ համար բաղդատարար երկրորդական նշանակութիւն ունեցող դաշնագրեր եւ համաձայնագրեր:

Բայց, բնականաբար մարդ իրեն հարց է տալիս այդ երեք հատորների ընթերցումից յետոյ: Մի՞թէ դրանցից դուրս կնքուած չե՞ն եղել նաեւ ուրիշ դաշնագրեր, որոնք կարող էին մեզ դարձեալ կենսապէս շահագրգռել: Մի՞թէ, յիրաւի, ըստ էութեան ընդամէնը մէկ դաշնագիր է կնքել խորհ. Ռուսաստանը Քեմալական Տաճկաստանի հետ (մարտ 1921 թ.) եւ ո՛չ նաեւ՝ ուրիշները:

Արտաքնապէս մինչեւ իսկ աչքի է զարնում այդ պարագան:

© National Library of Armenia

Խորհր. Ռուսաստանի կառավարութիւնը, օրինակ, համաձայն այս հրատարակութեան, հանրապետական Վրաստանի կառավարութեան հետ իսկ (մենշեւիկների օրով) երեք դաշնագիր է կնքել կարճ ժամանակուայ ընթացքում, սակայն նոյն Ռուսաստանը, դուրս է գալիս որ, աւելի քան երկու տարուայ բարեկամական սրտագին յարաբերութիւններ մշակելով Քեմալի հետ, ամէն տեսակ նիւթական, ռազմական եւ բարոյական աջակցութիւն ցոյց տալով նրան, այդ բոլորը ընդամէնը մէկ դաշնագրի նիւթ է դարձրել:

Հաւատա՞լ որ այդ իրօք այդպէս է եղել, թէ՞ ենթադրել այն, որ Խ. Ռուսաստանի եւ Քեմալի միջեւ անչուշտ ուրիշ դաշնագրեր եւս կնքուել են, մեզ մեծապէս շահագրգռող, բայց որոնք Զիչերինի կառավարութեան կողմից հրատարակութեան չեն տրուել: Գուցէ ա՞յն պատճառով, որ դրանք ոչ թէ «գործնական», այլ պատմական նշանակութիւն ունին միայն: Անչո՛ւշտ՝ ոչ: Ամենայն հաւանականութեամբ դրանք դիւանագիտութեան մէջ, «գաղտնի» կոչուող դաշնագրերի շարքի՞ն են պատկանում,— մի սիստէմ, որի դէմ ծառացան բոլշեւիկները դեռ իշխանութեան գլուխը չանցած, բայց որը — նորութիւն չէ — ա՞յնչափ մեծ չափերով եւ խնամքով մշակուեց յետոյ նրանց կողմից:

Մի՞թէ, յիրաւի, Քեմալի յարձակողական արշաւանքը 1920 թ. Հայաստանի վրայ կատարուեցաւ առանց Ռուսաստանի հետ նախապէս եթէ չասենք դաշնագիր, այլ համաձայնագիր կնքելու:

Մամուլի եւ գրականութեան մէջ մէկից աւելի անգամներ չօշափելի փաստեր են առաջ բերուել այդ մասին: Գուցէ կ'անցնի ժամանակ, եւ արդէն իրը սոսկ «պատմական» արժէք ներկայացնող դաշնագրերի մի նոր ժողովածու կը տայ այդ հարցին այս կամ այն ձեւի պատասխանը: Յետոյ, ներկայ ժողովածուի մէջ հրատարակուած եւ դեկտ. 2, 1920 թ. Երեւանի մէջ կնքուած դաշնագիրը, որ խորագրուած է իրրեւ մի վաւերագիր Հայաստանի անկախութեան ճանաչման՝ Խորհր. Ռուսաստանի կողմից, իրը այդպիսին ժողովածուի մէջ ներկայանում է միակը: Նախ՝ որ՝ դեկտ. 2-ի ակտը Հայաստանի խորհրդայնացման վաւերագիրն է: Եւ երկրորդ՝ յայտնի է, որ դրանից դեռ շատ առաջ քանիցս — որքան յիշում ենք՝ առաջին անգամ տակաւին 1918 թ. սկիզբը — Լենինի կառավարութիւնը Հայաստանի անկախութեան ճանաչման ակտեր է հրատարակել, որոնք սակայն չկան ժողովածուի մէջ: Վերջապէս, 1920 թ. օգոստոս 10ին Խ. Ռուսաստանի ներկայացուցչի (Լեգրան) եւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչների (Ջամալեան եւ Բաբալեան) միջեւ Թիֆլիսում կնքուած համաձայնութիւնն*) եւս բացակայում է ներկայ ժողովածուի մէջ:

Այս եւ ուրիշ տուեալներ ուրեմն մեզ իրաւունք են տալիս յայտնելու այն տարակուսանքը, թէ թերի է այս ժողովածուն, գոնէ Հայաստանին վերաբերող վաւերագրերի տեսակէտից: Բայց եւ այնպէս, իրը այդպիսին եւս նա կարեւոր նշանակութիւն ունի մեզ համար,— ոչ, ի հարկէ, գործնական, այլ պատմական տեսակէտից: Պատմական ոչ այն մըտքով, որ նա անցեալին է վերաբերում եւ ներկային համար քիչ շահագրգռութիւն է ներկայացնում, այլ պատմական ուսումնասիրութեան տեսակէտից:

Հենց այդ տեսակէտով էլ մօտենալով խնդրին, մենք Երեւանի, Կարսի եւ Մոսկուայի դաշնագրերը**) ամբողջութեամբ կամ էական մասերով առաջ ենք բերում այստեղ: Հայրենիք ամսագրին այդ ուղղութեամբ ահագին դեր է վիճակուած: Մեր հին եւ մանաւանդ նորագոյն անցեալին վերաբերեալ վաւերագրերի հրատարակութիւնը կենսական անհրաժեշտութիւն է: Մանաւանդ մեր նոր, աճող սերունդը պէտք է լաւ եւ հիմնովին ուսումնասիրէ իր հեռաւոր եւ մօտաւոր անցեա-

---

*) Այդ համաձայնութեան մասին պարզ յիշատակութիւն կայ դեկտեմբեր 2-ի (յօդ. 3) ակտի մէջ (տես վարը):

**) Մամուլի (օրաթերթերի) մէջ այդ դաշնագրերի յիշատակութիւնը եղել է հարկաւ, բայց շատ թերի: Այն եւս մատչելի չէ ուսումնասիրութեան համար: Ա.

© National Library of Armenia

լը։ Դա նախապայմանն է լրջմիտ եւ հեռատես գործունէութեան հայրենի ասպարէզում։ Մի բան որ, դժբախտաբար, մեծապէս պակասել է մեր հին սերունդին — անշուշտ նաեւ առարկայական պատճառներով,— եւ որը փոքր սբխալների դուռ չէ բաց արել մեզ համար։

Ի դէպ, այս առիթով մենք հասունացած և անհրաժեշտ դարձած պահանջ ենք համարում, որ վերջապէս մէկ կամ աւելի ամբողջական հատորների մէջ լիակատար հրատարակութեան տրուին Հայկական Հարցին վերաբերող բոլո՛ր վաւերագրերը անխտիր, սկզբից մինչեւ այժմ, թէ՛ բնագիրներով եւ թէ՛ նրանց հայերէն թարգմանութեամբ։ Իսկ դա նախ եւ առաջ Հ. Հ. Պարիզի պատուիրակութեան պարտականութիւնն է։ Մինչեւ օրս պէտք էր անել այդ։ բայց ճիշտ է ասուած, թէ աւելի լաւ է ուշ քան երբեք։

Մեր հարցի ճգնաժամային, անդամ ողբերգական վիճակի մէջ մենք չպիտի դադարենք նաեւ պատմական ճշմարտութիւնը որոնել եւ նրանցից խրատներ առնել։

I

Համաձայնութիւն Ռուսաստանի ընկերվարական ֆեդերատիվ խորհրդային Հանրապետութեան եւ Հայաստանի խորհրդային ընկերվարական Հանրապետութեան միջեւ՝ Հայաստանի անկախութեան ճանաչման մասին, 2 դեկտեմբերի 1920 թ.։

1920 թ. դեկտեմբեր 2-ին մէկ կողմից ընկեր Լիդրանը՝ Ռ. Ը. Ֆ. Խ. Հ. լիազօր ներկայացուցիչը, Ռուսաստանի խորհրդային կառավարութեան անունով, իսկ միւս կողմից ընկ. Դրօ եւ Հ. Տէրտէրեան Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան անունով համաձայնութիւն կայացրին հետեւեալի մասին.

1. Հայաստանը յայտարարւում է անկախ Ընկերվարական Հանրապետութիւն.

2. Մինչեւ Հայաստանի խորհուրդների Համագումարի գումարումը կազմւում է Ժամանակաւոր Ռազմա-Յեղափոխական Կոմիտէ, որին փոխանցւում է ամբողջ իշխանութիւնը Հայաստանում։

3. Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը ճանաչում է իբրեւ Հայաստանի ընկերվարական խորհրդային հանրապետութեան տերիտորիայի անվիճելի մասը — Երեւանի նահանգը՝ նրա կազմի մէջ մտնող բոլոր զաւառներով միասին, Կարսի նահանգի մէկ մասը, որ պիտի ազատուէ զայն զինուորական տնտակէտից, տէր լինելով երկաթուղագծին՝ Ջաջուր կայարանից — Արաքս կայարանը, Գանձակի նահանգի Զանգեզուրի զաւառը, նոյն նահանգի Ղազախի զաւառի մէկ մասը — օդոստոս 10-ի Համաձայնութեան սահմաններում — եւ Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք գտնւում էին Հայաստանի տիրապետութեան տակ մինչեւ 28 հոկտեմբերի 1920 թ.։

4. Հայաստանի բանակի հրամանատարական կազմը չի ենթարկւում որեւէ պատասխանատուութեան՝ բանակի շարքերում կատարուած գործողութեանց համար, մինչեւ Խորհրդային իշխանութեան հռչակումը Հայաստանում։

5. Դաշնակցութիւն կուսակցութեան եւ Հայաստանի միւս ընկերվարական կուսակցութեանց անդամները չեն ենթարկուի ոչէ հալածանքի՝ այդ կուսակցութեանց պատկանելու պատճառով։

6. Ռազմա-Յեղափոխական կոմիտէի մէջ մտնում են՝ հինգ անդամ Կոմմունիստական կուսակցութեան կողմից նշանակուի եւ երկու անդամ ձախակողմեան դաշնակցականների խմբակից, Կոմմունիստների կուսակցութեան հետ համաձայնութեան գալով։

7. Ռուսաստանի Խորհրդային Կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կեդրոնացնելու զինուորական ոյժեր, որոնք անհրաժեշտ են Հայաստանի ընկերվարական խորհրդային Հանրապետութեան անկախութիւնը պաշտպանելու համար։

8. Այս համաձայնութիւնը ստորագրուելուց յետոյ, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը քաշւում է իշխանութիւնից։ Իշխանութիւնը ժամանակաւորապէս, մինչեւ Յեղափ. Կոմիտէի ժամանումը, անցնում է Զինուորական Հրամանատարութեան, որի գլուխն է անցնում ընկ. Դրօն։ Ռ. Ը. Ֆ.

© National Library of Armenia

Խ. Հ. կողմից Հայաստանի պինուորական հրամանատարութեան կից կոմիսար է նշանակուում ընկ. Սիլինը:

Պատրաստուած է երկու օրինակներով.

Լիազօր ներկայացուցիչ Ռ. Ը. Ֆ. Խ. Հ.
(Ստորագրեց) ԼԻԳՐԱՆ
Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան լիազօրութեամբ
(Ստորագրեցին) ԴՐՕ, ՏԷՐՏԷՐԵԱՆ*)

Չէ յիշատակուած ստորագրման վայրը, որ, ինչպէս յայտնի է, Երեւանն է:

II

Բարեկամութեան դաշնագիր մէկ կողմից՝ Հ. Ը. Խ. Հ., Ա. Ը. Խ. Հ. եւ Վ. Ը. Խ. Հ. եւ միւս կողմից՝ Տաճկաստանի միջեւ, կնքուած Ռ. Ը. Դ. Խ. Հ. մասնակցութեամբ, 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում:

Հայաստանի, Ադրբէջանի եւ Վրաստանի ընկերվարական խորհրդային Հանրապետութեանց կառավարութիւնները մէկ կողմից եւ Տաճկաստանի Ազգային Մեծ Ժողովի կառավարութիւնը միւս կողմից, ազգութիւնների եղբայրութեան եւ ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը յարգելով, իրենց միջեւ մշտական սրտագին փոխ-յարաբերութիւններ եւ անընդհատուող անկեղծ բարեկամութիւն հաստատելու ցանկութեամբ ոգեւորուած, որ հիմնուած է երկու կողմերի փոխադարձ շահերի վրայ,— որոշեցին, Ռուսաստանի ընկերվարական դաշնակցային խորհրդային Հանրապետութեան մասնակցութեամբ, կնքել բարեկամութեան դաշն եւ այս նպատակով իրենց լիազօրները նշանակեցին.—

Հայաստանի ընկ. խորհ. Հանրապետութեան կառավարութիւնը՝ արտ. գործ. ժող. կոմիսար Ասֆանազ Մռատեանին եւ ներք. գործոց կոմիսար Պօղոս Մակինցեանին:

Ադրբէջանի խորհ. հանր. կառավարութիւնը պետակ. վերահսկ. ժող. կոմիսար Շախտախտինսկիի:

Վրաստանի ընկերվ. խորհ. հանրապետութեան կառավարութիւնը՝

Ռազմա-ծով. ժող. կոմիսար Շաղվա Էլիավային եւ արտ. գործ. ժող. կոմիսար Ալեքսանդր Սվանիձէին:

Տաճկաստանի Ազգ. Մեծ Ժողովի կառավարութիւնը՝ Ազգ. Մեծ Ժողովի անդամ եւ արեւել. ճակատի հրամանատար Քեազիմ Կարա-Բեքիրին, Ազգ. Մեծ Ժողովի անդամ Վելի-Բէյին, Հանրային աշխատանքների պետական քարտուղարի նախկին օգնական Մուստար Բէյին, Տաճկաստանի լիազօր ներկայացուցչին Ադրբէջանում՝ Մէմտու Շէվրէթ-Բէյին:

Ռուսաստանի ընկ. խորհ. դաշն. հանրապետութեան կառավարութիւնը՝ իր լիազօր ներկայացուցչին Լատվիայում՝ Եակով Գանեցկի-ին,

Որոնք փոխանակելուց յետոյ օրինական ճանաչուած լիազօրութիւնները, համաձայնութեան եկան հետեւեալի մասին.—

ՅՕԴՈՒԱԾ 1.

Տաճկաստանի Ազգ. Մեծ Ժողովի կառավարութիւնը եւ Հայաստանի, Ադրբէջանի ու Վրաստանի ընկերվ. խորհ. հանրապետութեանց կառավարութիւնները համարում են վերացուած եւ ոյժ չեն ներկայացնում այլեւս այն դաշնագրերը, որոնք կնքուել են իրենց վերապետական իրաւունքները կիրառող պետութիւնների միջեւ այն տերրիտորիայի վրայ, որ ներկայիս մտնում է պայմանագիր կողմերի տերրիտորիաների մէջ եւ այն դաշնագրերը, որոնք կնքուել են երրորդ պետութեանց միջեւ՝ Անդրկովկասեան Հանրապետութիւններին վերաբերեալ:

Հաստատուած է համարում, որ ներկայ յօդուածը կիրառելի չէ 1921 թ. մարտ 16-ին Մոսկուայում կնքուած ռուս-տաճկական դաշնագրի վերաբերմամբ:

ՅՕԴՈՒԱԾ 2

Պայմանագիր կողմերը համաձայնում են՝ չճանաչել որեւէ հաշտութեան դաշնագիր կամ

---

*) III Պրակ, Մոսկուա, 1922, No. 79, էջ 14–15):

© National Library of Armenia

այլ կարգի միջազգային ակտ, որը ընդունելու համար նրանցից մէկն ու մէկը այժմ հարկադրուած պէտք է լինէր։ Ըստ այսմ՝ Հայաստանի, Ադրբէջանի եւ Վրաստանի ընկերվ. խորհ. Հանրապետութեանց կառավարութիւնները համաձայնութիւն են տալիս չճանաչել որեւէ միջազգային ակտ, որ վերաբերում է Տաճկաստանին, բայց որ չէ ճանաչուած Տաճկաստանի ազգային կառավարութեան կողմից, որ այժմ ներկայացնում է Ազգային Մեծ Ժողովով։

(Տաճկաստան դաղափարի տակ, ներկայ դաշնագրի մէջ, հասկացուում են այն տերրիտորիաները, որոնք մտած են Տաճկաստանի Ազգային Ուխտի մէջ 1920 թ. յունուար 8-ին (1336 թ.) եւ որ մշակուել ու հռչակուել է օսմանեան պատդամաւորական խորհրդարանի կողմից Կ. Պոլսում եւ տեղեկացուել է մամուլին եւ բոլոր պետութիւններին)։

Իր կողմից Տաճկաստանի Ազգ. Մեծ Ժողովի կառավարութիւնը համաձայնում է չճանաչել որեւէ միջազգային ակտ, որ չէ ճանաչուած Հայաստանի, Ադրբէջանի եւ Վրաստանի խորհուրդների կողմից ներկայացուող համապատասխան կառավարութիւնների կողմից։

ԾՕԴՈՒԱԾ 4

Տաճկաստանի հիւսիս-արեւելեան սահմանը (համաձայն ռուս. ընդհ. սպայակոյտի քարտէզի՝ չափանիշ 1|21.000— 5 վերստ 1 մատնաչափի մէջ) որոշում է այն գծով, որ սկսում է Սեւ Ծովի եզերքը գտնուող Սարփ գիւղի մօտ, անցնում է Խեղիս-Մթա լերան վրայով, Շավշէթ լերան ջրբաժան գիծը, Քանլի-Դաղ լեռը. այդ սահմանը յետոյ հետեւում է Արտահանի եւ Կարսի սանճակների նախկին վարչական սահմաններին, Զայ (Արփաչայ?) եւ Արակ (Արաքս?) գետերի հովտով, ներքին Կարսայ գետի գետաբերանը (սահմանների մանրամասն նկարագրութիւնը, ինչպէս եւ նրանց վերաբերող հարցերը որոշուած են 1-ին եւ 2-րդ յաւելուածներով եւ դաշնագրին կցուած քարտէսի վրայ, ստորագրուած պայմանագիր երկու կողմերից)։

Դաշնագրի եւ քարտէզի միջեւ տարաձայնութիւն լինելու պարագային վճռական նշանակութիւն տրուում է բնագրին։

Մանրամասն որոշումը եւ պետական սահմանը անցկացնելը իրականութեան մէջ, ինչպէս նաեւ սահմանային նշաններ դնելը կատարուում է խառն յանձնաժողովի ձեռքով, անդամների հաւասար թուով պայմանագիր կողմերի եւ Ռուսիոյ ներկայացուցչի մասնակցութեամբ։

ԾՕԴՈՒԱԾ 5

Տաճկաստանի կառավարութիւնը՝ եւ խորհրդային Հայաստանի ու Ադրբէջանի կառավարութիւնները համաձայնում են, որ Նախիջեւանի շրջանը այն սահմաններում, որ որոշուած են այս դաշնագրի 3-րդ յաւելուածի մէջ, կազմում է ինքնավար տերրիտորիա՝ Ադրբէջանի հովանաւորութեան տակ։

Այս յօդուածներն են Կարսի դաշնագրի մէջ, որոնք անմիջապէս վերաբերում են Հայաստանին։ Միւս յօդուածները վերաբերում են Վրաստանին եւ կամ չօշափում են ընդհանուր խնդիրներ։

Տալիս ենք նրանց համառօտ բովանդակութիւնը միայն.—

Ծօդ. 3-ով «կապիտուլյացիոնների» վերացումն է հռչակուում։

Ծօդ. 6-ով «Տաճկաստանը համաձայնում է Վրաստանին զիջել Բաթումի եւ շրջակայքի վերադարձութիւնը», ապահովելով իրեն համար «ազատ տրանզիտ ամէն տեսակ ապրանքների համար» եւ առանց որեւէ վճարի Բաթումի նաւահանգստից օգտուելու իրաւունք։

Ծօդ. 7 եւ 8 վերաբերում են Տաճկաստանի եւ Վրաստանի սահմանակից բնակիչներին տեղափոխութեան, ինչպէս նաեւ քոչի համար գիւրութիւններ տալու խնդրին։

Ծօդ. 9-ը վերաբերում է նեղուցների խնդրին։

Ծօդ. 10-ով պայմանագիր կողմերը պարտաւորուում են իրենց հողամասերի վրայ թոյլ չտալ այնպիսի կազմակերպութիւններ, որոնք ձգտում են «միւս երկրի կառավարութիւնը ձեռք բերելուն»։

Ծօդ. 11-ով ճանաչուում է երկու կողմերի

© National Library of Armenia

հպատակների քաղաքացիական իրաւունքը:

Յօդ. 12-ով կողմերը համաձայնում են կիրառել, իրար վերաբերմամբ «ամէնից աւելի նպաստաւորուածի սկզբունքը»:

Յօդ. 13-ով կցուած հողամասերի բնակիչները ստանում են հեռանալու իրաւունք, տանելով իրենց հետ սեփական զոյքերը:

Յօդ. 14–19 վերաբերում են գաղթականական, ընդհանուր ներման, պատերազմական գերիների, հաղորդակցութեանց միջոցների, առեւտրական, հիւպատոսարանների խնդիրներին:

Յօդ. 20-ի տրամադրութեամբ դաշնագրի վաւերացումը (ռատիֆիկացիան) նշանակում է Երեւանում, հնարաւորութեան չափ կարճ ժամանակում:

Այնուհետեւ գալիս են վերոյիշեալների ստորագրութիւնները:

Յաւելուած 1-ի մէջ նշանակուած են սահմանների մանրամասնութիւնները:

Տալիս ենք Հայաստանին վերաբերեալը. (սկզբում գրուած է Տաճկաստանի եւ Վրաստանի սահմ. նկարագրութիւնը)... Ուշ-Թափալար (9,783), որ վերջանում է Տաճկաստանի սահմանը Վրաստանի հետ եւ սկսւում է նրա սահմանը Հայաստանի հետ.— Թայակալա (9,716), 9065 գաղաթը, որ թողնում է Արտահանի շրջանի նախկին սահմանը եւ անցնում է Բոլ-աղ-Բաքա (9,73 կամ 9,963) լերան վրայով,—8,828 կամ 8,827–7,602. այդտեղից ուղիղ գծով դէպի 7,518 գաղաթը — անցնելով Իքիշ գիւղից դէպի արեւելք. այնուհետեւ Կիզիլդաշ (7,439 կամ 7,440 եւ կամ 7,490) լերան մօտ նոր Կազիլ-Դաշ գիւղը. այդտեղից այն գետի ուղղութեամբ, որ հոսում է Նոր Կազիլ-Դաշի միջով մինչեւ նրա թեքումը, որ գտնւում է Կարամէմէտից դէպի հիւսիս-արեւմուտք, հետեւում է ջրբաժան գծի ուղղութեամբ եւ դուրս է գալիս Ջամուշբու-չայ գետի մօտ, որ գտնւում է Դելավէր, Մեծ Ղմլի եւ Թիքնիս գիւղերից արեւելք Վարդանլու եւ Բաչ-Շորագեալ գիւղերի միջով, հետեւելով յիշեալ գետի ընթացքին, դուրս է գալիս Արիդ-չայ գետի մօտ, Կիսալաշի Կալալիից հիւսիս. այնտեղից շարունակ անցնելով Արփաչայ գետի մօտ, անցնում է Երասխի գետահովտով մինչեւ Ուրմիա գետը, ուր վերջանում է սահմանը Հայաստանի եւ սկսւում է սահմանը Ադրբէջանի հետ եւ անցնում է Երասխի գետահովտով մինչեւ ներքին Կուրա-Սու գետի նրա մէջ թափուելը, ուր վերջանում է սահմանը Ադրբէջանի հետ:

Ըստ ինքեան հասկանալի է, որ սահմանն անցնում է վերոյիշեալ բարձունքների ջրբաժան գծերով:

Յաւելուած 2. «Նկատի ունենալով որ սահմանագիծը անցնում է Արփաչայ եւ Երասխ գետերի հովիտներով, ինչպէս որ այդ ցոյց է տրուած յաւել. 1-ի մէջ, Տաճկաստանի Ազգային Մեծ Ժողովի կառավարութիւնը պարտաւորում է յետ տանել միայն պահակների գիծը 8 վերստ տարածութեան վրայ Ալեքսանդրապոլ-Երեւան երկաթուղագծից Արփա-Զայի ոլորտում, եւ 4 վերստ էլ վերոյիշեալ գծից՝ Երեւանի ոլորտում:

Այն գծերը, որոնք սահմանաւորում են վերոյիշեալ շրջանները, ցոյց են տրուած ստորեւ («Արփաչայի գօտի» եւ «Երասխի գօտի» վերնագրերի տակ առաջ են բերուած գրքանք*):

Յաւելուած 3-ը կրում է «Նախիջեւանի տերրիտորիան» վերնագիրը, ուր եւ առաջ են բերուած սահմանների մանրամասները*):

III

Դաշնագիր Ռուսաստանի եւ Տաճկաստանի միջեւ, կնքուած 1921 թ. մարտի 16-ին Մոսկուայում: Ռուսաստանի կողմից ստորագրել են արտ. գործ. կոմիսար Չիչերինը եւ Համառուս. կենտր. Գործադիր կոմիտէի անդամ Զէլալէդդին Ղորխմազովը: Իսկ Տաճկաստանի կողմից՝ ժող. տնտես. կոմիսար Իւսուֆ Քեմալ-Բէյը, Դոկտոր Ռիզա-Նուր Բէյը եւ Ալի Ֆուադ Փաշան*):

---

*) Տե՛ս պրակ III, Մոսկուա 1922:

*) No. 87, էջ 49–57:

*) Պրակ II, Մոսկուա 1922, No. 52, էջ 72–77:

© National Library of Armenia

Ինչպէս յառաջաբանը, այնպէս նաեւ միւս յօդուածները մեծագոյն մասով կամ բառացիօրէն եւ կամ բովանդակութեան կողմից գրեթէ նոյնն են պարունակում, ինչ որ պրակ III No. 87 (Կարսի) դաշնագրի յօդուածները: Որովհետեւ արդէն առաջ բերինք Կարսի դաշնագրի կարեւոր յօդուածները ամբողջութեամբ, միւսների էլ բովանդակութիւնը տուինք, ուստի եւ այստեղ բաւականանում ենք դնելով իրար մօտ համապատասխան յօդուածների թուերը:

Դաշնագիր No. 52 (Մոսկուայի)	Դաշնագիր No. 87 (Կարսի)
Յառաջաբան	Յառաջաբան
Յօդ. I	Յօդ. 1 եւ 4
Յօդ. II	Յօդ. 6
Յօդ. III	Յօդ. 5
Յօդ. V	Յօդ. 9
Յօդ. VII	Յօդ. 3
Յօդ. VIII	Յօդ. 10
Յօդ. IX	Յօդ. 17
Յօդ. X	Յօդ. 11
Յօդ. XI	Յօդ. 12
Յօդ. XII	Յօդ. 13
Յօդ. XIII	Յօդ. 16
Յօդ. XIV	Յօդ. 19
Յօդ. XVI	Յօդ. 20

Մոսկուայի դաշնագրի վերոյիշեալ յօդուածներից դուրս — որոնք նոյնանում են Կարսի դաշնագրի յիշատակուած յօդուածներին — առանձնայատուկ դիրք ունին IV, VI եւ XV յօդուածները, որ եւ առաջ ենք բերում ամբողջութեամբ, մանաւանդ որ XV յօդուածը սերտ վերաբերում ունի նաեւ Հայաստանին:

ՅՕԴՈՒԱԾ IV

Երկու պայմանադիր կողմերը, հաստատելով առնչութիւնը արեւելքի ժողովուրդների ազգային ազատագրական շարժման եւ Ռուսաստանի աշխատաւորների՝ ընկերային նոր կազմ ստեղծելու կռուի միջեւ, հանդիսաւորապէս ճանաչում են այդ ժողովուրդների իրաւունքը ազատութեան եւ անկախութեան համար, հաւասարապէս նաեւ նրանց իրաւունքը՝ ընտրելու կառավարական այնպիսի ձեւեր, որոնք համապատասխան կը լինին նրանց ցանկութիւններին:

ՅՕԴՈՒԱԾ VI

Երկու պայմանադիր կողմերը ընդունում են, որ երկու երկիրների միջեւ մինչեւ օրս կնքուած դաշնագրերը չեն համապատասխանում փոխադարձ շահերին: Նրանք համաձայն են այդ պատճառով ճանաչել այդ դաշնագրերը վերացուած եւ ոյժից դուրս:

Ռուսաստանի ընկերվ. Դաշնակցային Խորհ. Հանրապետութեան կառավարութիւնը ի մասնաւորի յայտարարում է, թէ նա Տաճկաստանը ազատ է ճանաչում այն բոլոր դրամական կամ այլ կարգի պարտաւորութիւններից, որոնք հիմնուած են միջազգային ակտերի վրայ, նախապէս կնքուած Տաճկաստանի եւ ցարական կառավարութեան միջեւ:

ՅՕԴՈՒԱԾ XV

Ռուսաստանը պարտաւորւում է Անդրկովկասեան Հանրապետութիւնների վերաբերմամբ անել անհրաժեշտ քայլերը, որպէսզի այդ հանրապետութիւնները ընդունին իրենց եւ Տաճկաստանի միջեւ կնքելիք դաշնագրերի մէջ ներկայ դաշադրի այն յօդուածները, որոնք անմիջապէս նրանց են վերաբերւում:

Մոսկուայի դաշնագրին կցուած I (ա), I (բ) եւ I (գ) յաւելուածները նոյնն են, ինչ որ Կարսի դաշնագրի յաւելուածները, եւ որոնց մէջ առաջ են բերուած Տաճկաստանի եւ Վրաստանի, Տաճկաստանի եւ Հայաստանի, ինչպէս նաեւ «Նախիջեւանի տերրիտորիայի» սահմանագծերի մանրամասները:

Այստեղ տալիս ենք Մոսկուայի դաշնագրի III յօդուածի (Նախիջեւանի վերաբերեալ) առաջին պարբերութիւնը, որի վերջին՝ ստորագծած բառերը պակասում են Կարսի դաշնագրի (յօդ. 5) մէջ: Ահա այն.

«Երկու պայմանադիր կողմերը համաձայն են, որ Նախիջեւանի Շրջանը այն սահմաններում, որ ցոյց են տրուած ներկայ դաշնագրի 1-ին (բ) յաւելուածում, կազմէ ինքնավար (աւտոնոմ) մէկ տերրիտորիա (հողամաս) Ադրբէջանի հովանաւորութեան տակ, այն

© National Library of Armenia

պայմանով, որ Ադրբէջանը այդ հովանաւորութիւնը (պրոտեկտորատ) չգիջէ որեւէ երրորդ պետութեան:

Մեզ հետաքրքրող միւս վաւերագրերից կարեւոր է 1921 թ. սեպտեմբեր 30-ին (ստորագրութիւններ՝ Զիչերին եւ Գարբիէլեան) Մոսկուայում կնքուած «Համաձայնագիրը ելեւմտական խնդիրների մասին» (II հատոր, No. 44), *որով «Ռուսաստանի ելեւմտական կոմիսարիատը Հայաստանում պիտի ունենայ իր մշտական լիազօրը յանձին Հայաստանի ելեւմտական ժողով. կոմիսարի, որ ընտրուելու է ընդհանուր հիմունքներով, միւս ժող. կոմիսարների նման, եւ նշանակուելու է Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտէի կողմից, Ռուսաստանի ընկերվ. դաշն. խորհր. հանրապետութեան ելեւմտից ժող. կոմիսարի համաձայնութեամբ* (յօդ. I):

Երկրորդ յօդուածի մէջ ասւում է. «Դրամական նոր տուրքերի եւ հասոյթների հաստատումը Հայաստանի ընկերվ. խոր. հանրապետութեան մէջ կատարւում է Ռուսաստանի Ը. Խ. Դ. Հ. ելեւմտից ժող. կոմիսարի համաձայնութեամբ»:

Յօդ. VIII-*ը ասում է, թէ երկու երկիրների դրամանիշները հաւասարապէս կիրառելի են պայմանագիր հանրապետութիւնների միջեւ:*

No. 77 *եւ* 78 (III *հատոր*) *համաձայնագրերը* (16 *ապրիլ*, 1921) *վերաբերւում են անդրկովկասեան Հանրապետութիւնների պոստ-հեռագրական եւ երկաթուղային վարչութիւնների միացման:*

Համաձայն յօդ. 5-ի «Ադրբէջանի, Վրաստանի եւ Հայաստանի սահմաններում անմիջապէս լուծւում են հաղորդակցութեանց ճանապարհների առանձին կոմիսարիատները» եւ հիմնւում է նոյն նպատակով «Անդրկովկասեան Շրջան» (*հմմտ.* No. 78, *Մոսկուա*, 21 *մայիսի* 1922):

No. 74 (Գ. *հատոր*) *արձանագրութեամբ* (*Մոսկուա*, 22 *փետրուար*, 1922 *թ.*) *Հայաստանի եւ խորհրդային միւս հանրապետութիւնների ներկայացուցիչները լիազօրութիւն են տալիս Ռուսաստանին, հանդէս գալ Ճենովայի կոնֆերանսում նաեւ իրրեւ իրենց՝ այդ միւս խորհրդային հանրապետութիւնների ներկայացուցիչ:*

III *հատորի* No. No. 95, 98, 76, 96 *վաւերագրերը* (*մայիս* 1922, *Ճենովա*) *պարունակում են տնտեսական մի շարք բանաձեւեր, որոնց տակ Ռուսաստանի ներկայացուցիչը ստորագրել է նա՛եւ իրրեւ ներկայացուցիչը Հայաստանի եւ խորհրդային միւս հանրապետութիւնների:*

Ահա այն բոլոր վաւերագրերը, որոնք վերաբերւում են Հայաստանին եւ որոնք տեղ են բերուած Ժողովածուի մէջ:

ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ

Գրեց՝ *ԱՐՍԷՆ ՄԻՐՋԱՅԵԱՆ*

Ա.
ԱԴՐԲԷՋԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա՛ՆԴՐԿՈՎԿԱՍԻ հայերու եւ Թուրքերու յարաբերութեանց լարումը, ինչպէս յայտնի է, կը սկսուի ո՛չ թէ մեծ պատերազմի ընթացքին տեղի ունեցած իրադարձութիւններէն, այլ տասնամեակ մը առաջ՝ հայ-թաթարական ընդհարումներէն:

Դեռ 1903 *թուին, ցարական կառավարութիւնը որդեգրած էր հակահայ ուժեղ քաղաքականութիւն մը: Այդ նպատակին հասնելու համար նա դիմեց հետեւեալ երկու արմատական միջոցներու.* ա) *գրաւել հայ եկեղեցապատկան կալուածները, որով նիւթական աղբիւրներէ կը զրկուէին հայոց ծխական եւ թեմական դպրոցները, որոնց մէջ հայ մատաղ սերունդը ազգային դաստիարակութիւն կը ստանար. եւ* բ) *զրգռել թաթարական բէկերը հայ բուրժուազիայի դէմ, իսկ թաթար*

© National Library of Armenia

զանգուածներու կրօնական մոլեռանդութիւնը՝ հայ ժողովրդի դէմ, որով ֆիզիքական ճնշում գործ կը դրուէր հայ ժողովրդի վրայ եւ կը մղէր զայն ռուսական ցարիզմի դիրքը՝ իր գոյութիւնը պաշտպանելու համար:

Ռուս կառավարութեան այդ քայլերուն դէմ հայութիւնը ըմբոստացաւ եւ եկեղեցական կալուածներու գրաւման ատեն բաւականաչափ զոհեր տուաւ, իսկ Թուրքերու դէմ պաշտպանուելու համար զէնքի դիմեց: Այդ ատեն տեղի ունեցած կռիւները բորբոքեցին երկու հարեւան ցեղերու խոր ատելութիւնն ու թշնամական յարաբերութիւնները:

Հայ-թաթարական ընդհարումներէն յետոյ, նոյնիսկ 1905 թուի ռուսական յեղափոխութենէն վերջ, ցարական կառավարութիւնը չարունակեց հայերու հանդէպ հալածանքի, բանտարկութեան, աքսորի եւ կախաղաններու քաղաքականութիւն մը, որ վերջացաւ Հ. Յ. Դաշնակցութեան պատմական դատավարութեամբ:

Պալքանեան պատերազմի ատեն սակայն, եւ դեռ ատկէ քիչ մը առաջ, Ռուսաստանը՝ արտաքին քաղաքական դէպքերու ազդեցութեան տակ, նահանջի ճամբայ բռնեց եւ իր սահմաններուն մէջ ապրող հայ տարրի հանդէպ աւելի մեղմ քաղաքականութեան դիմեց ու ակտիւ մասնակցութիւն բերեց Տաճկահայաստանի բարենորոգումների խնդրին մէջ: Անդրկովկասի թաթարները չէին կարող հաշտ աչքով նայել ռուս կառավարութեան այդ «հայասիրական» ընթացքին, մանաւանդ որ այդ ուղղուած էր յատկապէս Տաճկաստանի դէմ, որի հետ կապուած էին ո՛չ միայն կրօնական, այլ եւ քաղաքական համակրութիւններով եւ համիսլամական երազներու կապերով:

Այդ ատելութիւնն առաւել եւս զարգացաւ համաշխարհային պատերազմի նախօրեակին, երբ կովկասահայութիւնն անվերապահօրէն եւ խանդավառ տրամադրութեամբ նետուեց ռուսական քաղաքականութեան դիրքը իր կամաւորական խմբերով:

Հայ եւ Թուրք շահերու հակամարտութեան կարողական ուժը հրապարակ եկաւ մանաւանդ Անդրկովկասի մէջ Զեմստվօ (տեղական ինքնավարութիւն) կազմելու համար եղած խորհրդակցութիւնների ատեն, երբ անհրաժեշտ կը նկատուէր գաւառներու եւ շրջաններու աշխարհագրական – ցեղագրական սահմանները գծել եւ երբ հայութիւնն իր ներկայացուցիչներու միջոցով՝ կը կամենար ապահովել հայկական շրջանակները՝ իբրեւ զեմստվոյական միութիւն, իսկ թաթարներն ու վրացիները միացեալ ճակատ կը ներկայացնէին՝ պահելու արդէն գոյութիւն ունեցող վարչական բաժանումները, որոնց մէջ իրենք Թուական մեծամասնութիւն կը կազմէին: Ռուսական մեռնող ցարիզմն իր վերջին պաշտպանութիւնը չինայեց թաթար զանգուածին եւ նորէն իր դիրքը թեքեց դէպի հակահայ քաղաքականութիւն:

Երբ տապալուեց ցարական բռնակալութիւնը եւ անոր աւերակներու վրայ բարձրացաւ ժամանակաւոր Կառավարութեան դրօշակը, որի վրայ գրուած էր ազգութիւններու լայն ինքնորոշման սկզբունքը, հայութիւնը մեծ յոյս ունէր, թէ իր դատի ջերմ բարեկամ Կերենսկու միջոցով նա կարող էր վերջապէս ազատ չունչ քաշել: Այդ ոգեւորութիւնն ալ, սակայն, երկար չտեւեց, որովհետեւ բոլշեւիկեան յեղաշրջումով Անդրկովկասը կտրուեց Ռուսաստանէն եւ մնաց ինքն իր իւղի մէջ՝ տապկուելու համար:

1917 թուականը ամենադժնդակ եւ սարսափներով լի տարի մը եղաւ, մինչեւ 1918 թուի մայիս 28-ը: Անդրկովկասի մէջ եւ թրքական ճակատի վրայ գտնուած ռուսական զօրքերը լքեցին իրենց դիրքերը, հեռացան դէպի Ռուսաստան՝ իրենց զէնքերու, ռազմամթերքի եւ պահեստներու մեծ մասը թողնելով Վրաստանին ու Ադրբէջանին, իսկ Հայաստանին մնացին՝ ճակատի վրայ թրքական արշաւող զօրամասեր, իսկ Թիկունքը՝ գաղթականութիւն եւ ատելութեամբ լեցուած Ադրբէջանի մահմեդականութիւնը:

Այդ ժամանակամիջոցում Կովկասի մէջ գոյութիւն ունեցող երեք ազգութիւններու միացեալ Սէյմը իրական ուժ չունէր իր տրամադրութեան տակ եւ ոչ ալ բաղձանք՝ թաթարներու եւ վրացիներու թրքասիրական քաղաքականութեան պատճառով՝ դիմադրելու արտաքին թշնամուն՝ գլխաւորապէս Տաճկաստանին: Անդրկովկասեան Սէյմը ոչ միայն կրաւորական համակրանք ցոյց կուտար անոր հանդէպ, այլ փաստօրէն եւ անուղղակի կերպով

© National Library of Armenia

կ'օժանդակէր Տաճկաստանի յառաջացման։ Տաճկական կանոնաւոր զօրաբանակներն աստիճանաբար առաջ կ'ընթանային, չհանդիպելով ոչ մի կազմակերպուած եւ ուժեղ դիմադրութեան։ Իրար հետեւ ընկան Երզնկան, Էրզրումը եւ այլ կարեւոր դիրքեր եւ թուրքերը հասան Ռուսաստանի նախկին սահմանին, գրաւեցին Սարիղամիշը եւ պատրաստուեցան Ղարսի ամրոցներուն տիրանալ։ Հայութիւնը յոյս ունէր որ կիսանկախ Անդրկովկասը՝ իր սահմանները պաշտպանելու համար, անհրաժեշտ զինուորական միջոցներու պիտի դիմէր յետ մղելու արտաքին թշնամուն եւ թոյլ չտալու, որ ոանակոր ըլլայ իրենց դաշնակից Հայաստանը եւ անոր մէջ ապաստանած տեղացի եւ գաղթական հայերու բազմութիւնը։

Այս դիմադրութիւնը սակայն տեղի չունեցաւ։ Ադրբէջանը ամէն կերպ կը ջանար զիջումներ ընել Տաճկաստանին եւ հաշտութիւն կնքել։ Հայաստանը կը զղար այդ զիջումներէն զայիր հետեւանքը, իսկ Վրաստանն ալ բարեկամական չէզոքութիւն կը պահպանէր։ Իրերու այս դրութեան մէջ, զիտենք, անկարելի էր երեւան հանել մէկ եւ ուժեղ ճակատ եւ ահա, Անդրկովկասեան Սէյմի կառավարութեան անունից, հրաման է տրուում Ղարսը յանձնելու թուրքերուն։

Միաժամանակ Կովկասի զանազան վայրերու մէջ տեղական բնոյթ կրող բազմաթիւ հայաթափարական բնոյհարումներ են տեղի ունենում։ Նուխի, Գանձակ, Բաղու, Ղազախ, Շամախի եւն. չրջաններում հայութիւնն ապրում էր սարսափի եւ մահուան օրեր։ Թաթարական հորդաները, զինուած ռուսական զէնքերով, ոգեւորուած Տաճկաստանի յաջողութիւններով եւ լեցուած տենդութեամբ դէպի հայերը՝ ըլլուի էին բարձրացրել։ Տաճիկներն իրենց դրբիաւոր ուշադրութիւնը դարձնում են Բաղուի վրայ եւ լաւագոյն զինուորները կեդրոնացնում այդ ճակատի վրայ եւ ի վերջոյ, դրաւում են Բաղուն։

Այդ դրաւման արդիւնքը եղաւ մօտ 20,000 հայերու կոտորածը։ Բաղուի դէպքերէն յետոյ սկսեցին «վրէժ» լուծել հայերէն եւ դաւառներու մէջ՝ Շամախի, Նուխի եւ Գանձակ, ուր մահմեդական տարրը մեծամասնութիւն է կազմում։

Տաճկաստանի հետ հաշտութիւն կնքելէն յետոյ, որ արդիւնք էր Միջագետքի ուղղութեամբ զարգացող զինուորական գործողութիւններուն, Անդրկովկասի մէջ կազմուեցան երեք անկախ հանրապետութիւններ՝ Վրաստանի, Ադրբէջանի եւ Հայաստանի։

Հրապարակ նետուեցան բազմաթիւ կընճռոտ հարցեր՝ սահմանագծային խնդիր, փոքրամասնութեանց հարց, ռուսական հարստութեան բաժանման եւլ. հարցեր։ Վերանորոգուեցան Զեմստվոյական խորհրդակցութեան ատեն եղած վէճերը։ Առաջ քչուեցան նահանգներու եւ գաւառներու ըստ ազգութիւններու մեծամասնութեան բաժանման կէտեր։ Եւ նորակազմ հանրապետութիւնները ունեցան Ախալքալակի, Ախալցխայի, Լոռու, Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջեւանի, Ղարսի եւ այլ բազմաթիւ վիճելի հարցեր։

Ոչ ոք կը կամենար զիջիլ։ Բոլորն էլ պատրաստ էին համաձայնութեան եղր մը գտնել՝ առանց զիջումի սակայն։

Վրաստանը հրապարակ նետեց Լոռու եւ Ախալքալաքի խնդիրը, որոնք Թիֆլիսի նահանգին կը վերաբերուէին։ Իսկ Ադրբէջանը ամէն կերպ կը ջանար իր թաթը դնել Ղարաբաղի եւ Զանգեզուրի վրայ, որոնք Գանձակի նահանգի մասերն էին՝ հին բաժանումով։ Հայաստանը կը ձգտէր այդ չրջաններն ունենալ, նկատելով որ պատմականօրէն եւ ազգագրական տեսակէտով ատոնք հայկական չրջաններ էին։

Եւ ահա ծայր տուաւ նոր ատելութիւն, նոր թշնամութիւն, սկսուեցան նոր կռիւներ ու ընդհարումներ։ Եւ կոտորածներն ու հայածանքները դարձան սովորական եւ առօրեայ երեւոյթներ։

Ղարաբաղին ու Զանգեզուրին տէր դառնալու եւ Հայաստանի հանրապետութիւնը զիջումի մղելու համար՝ Ադրբէջանը գործակալներ կ'ուղարկէր Նախիջեւանի, Զանգիբասարի եւ Ղարսի չրջանները, ըմբոստութեան կը դրդէր զանոնք՝ Հայաստանի կառավարութեան դէմ եւ միաժամանակ իր բարեկամութեամբ Տաճկաստանի հետ՝ մշտական սպառնալիք կը հանդիսանար Հայաստանի համար։ Այդ աշխատանքներէն բացի, ան կը նեղէր իր սահմաններուն մէջ ապրող հայերը՝ մշտական եւ պարբերական կոտորածներով, թալաններով եւ սպա-

© National Library of Armenia

նութիւններով՝ ազդելու համար Հայաստանի քաղաքականութեան վրայ: Ան Բաքուի մէջ կուտակուած նաւթի արտահանութիւնը կ'արգիլէր դէպի Հայաստան՝ երկաթուղիներու շարժական կարողութիւնը նուազեցնելու դիտումով եւ Վրաստանի հետ համախոհուրդ՝ չուկայի մէջ հայկական դրամներն անարժէք կը դարձնէր՝ տնտեսապէս ճնշելու եւ զիջման պարտադրելու Հայաստանի կառավարութիւնը:

Դաշնակից պետութիւններու յաղթանակէն վերջ, երբ ամբողջ հայութիւնը ուրախութեան մէջ էր, Հայաստանի կառավարութիւնը բնականօրէն կամեցաւ օգտուիլ այդ հանգամանքէն եւ վերջ տալ չտապ կերպով Կովկասի իր սահմաններու խնդրին (Ղարս, Նախիջեւան, Ղարաբաղ, Զանգեզուր, Լոռի) եւ կազմակերպուած ու պատրաստ ըլլալ խաղաղութեան վեհաժողովի որոշման համար Տաճկահայաստանի խնդրի վերաբերեալ:

Եւ, ի հարկէ, Հայաստանն ալ պարապ նստած չէր: Ան իր տրամադրութեան տակ ունէր Բաքուի, Գանձակի եւ Թիֆլիսի հայութեան բարոյական եւ թուական ուժը, ան Լոռիի, Ղարաբաղի եւ Զանգեզուրի մէջ ունէր իր կազմակերպուած համակիրներու հոսանքը, որուն վրայ կրթնած՝ առաջ կը տանէր սահմանային վէճերու վերաբերեալ իր քաղաքականութիւնը:

Ան իր սահմաններուն մէջ ունէր եւ բաւական թուով թաթարական շրջաններ, ուր կրնար Ադրբէջանի ակրեսիւ քայլերին պատասխանել իր խստութիւններով:

Եւ ահա այսպէս զարգացաւ փոխադարձ ոչնչացման քաղաքականութիւնը:

Ղարաբաղն ու Զանգեզուրը զինուած պատրաստ էին՝ Ադրբէջանի դէմ: Նախիջեւան, Վեսի-բազար, Ղարս եւ Ղազախ զինուած էին՝ Հայաստանի կառավարութեան դէմ: Եւ շարունակական ընդհարումներն անպակաս էին անդրկովկասեան իրականութեան մէջ:

Ադրբէջանի եւ Հայաստանի այս անոր մալ եւ կիսապատերազմական յարաբերութիւններն արդիւնք էին զլխաւորապէս երկու խոշոր եւ հակընդդէմ ձգտումներու՝ համիսլամական միութեան եւ ազգային անկախութեան գաղափարներուն: Սահմանային վէճերը, փոքրամասնութեանց իրաւունքներու պաշտպանութիւնը, տնտեսական բոյկոտն ու ճնշումները — միջոցներ էին միայն՝ իրականացնելու այդ երկու գաղափարները:

Համիսլամական տենչանքներ.— Տաճիկներու ազդեցութիւնը շատ խոշոր էր Ադրբէջանի վրայ, իսկ վերջինս արդէն կը կամենար ռուսական տիրապետութեան տակէն դուրս գալ եւ իր հարազատի գիրկը նետուիլ: Այդ արշաւանքի ընթացքին եւ յետոյ՝ թաթարական բոլոր կեդրոններում կազմակերպուեցան համապատասխան զինուորական եւ քաղաքացիական կորիզներ, համիսլամական գաղափարը տարածելու եւ ամրապնդելու համար:

Տաճիկները, Դաշնակից պետութիւններու յաղթանակէն յետոյ, երբ լքեցին Կովկասը, շրմոռցան Ադրբէջանը եւ իրենց ռազմամթերքի, թնդանօթներու, հրացաններու, սպաներու եւ հրամանատարներու մէկ մասը թողուցին Բաքուի մէջ եւ հեռացան: Նահանջի ատեն անոնք մոռացութեան չտուին նաեւ Զանգիբասարի, Վեսի-բասարի, Նախիջեւանի եւ Ղարսի շրջաններու մահմեդական տարրերը, կազմակերպեցին անոնց Ազգային Խորհուրդները՝ իրենց տեղական անկախ շրջանները վարող օրգաններ, կազմակերպեցին զօրամասեր ու զրին իրենց իսկ սպաներու ղեկավարութեան տակ եւ թողուցին բաւական խոշոր քանակութեամբ զրամատլուխ եւ հրահանգներ:

1918-էն մինչեւ 1921, երեք տարուայ ընթացքին, շատ պարզ կերպով կը նկատուէր ձգտում՝ իրագործելու որոշ ծրագիր մը — Ադրբէջանի միջոցով: Այդ ծրագրի նպատակն էր տիրանալ Ղարաբաղ – Զանգեզուրին եւ այդ ճանապարհով կապ պահպանել Նախիջեւանի թաթարներուն հետ եւ Հայաստանի հարաւային սահմաններով միանալ Տաճկաստանին, մէկ խօսքով, զինուորապէս եւ մահմեդական տիրապետութեամբ օղակել Հայաստանի հանրապետութիւնը, նեղցնել անոր սահմանները, թուլցնել անոր զիմադրական ուժերը, պահել զայն տնտեսական նեղ կացութեան մէջ, որպէսզի Տաճկաստանը կարող ըլլայ ապահովուիլ իր թիկունքէն եւ իրագործել իր ձգտումները՝ վերակազմելու բանակը, վերադրաւելու կորսուած շրջանները եւ դիմադրաւելու անդլո-յունական սպառնացող լուրջ վը-

© National Library of Armenia

տանգը։

Հայաստանի վերջին տարիներու անցուդարձին ծանօթ անձնաւորութիւնները գիտեն, որ այն ժամանակ, երբ Ադրբէջանի հետ մեր հողային վէճերը սուր բնաւորութիւն կը ստանային եւ կը սպառնային ռազմական բարդութիւններով, տկարացած Տաճկաստանը իր փոքրիկ եւ յաճախակի յարձակումներով՝ Սարի-Ղամիշի, Օլթիի, Կողբ-Կաղզուանի եւ այլ ուղղութիւններով՝ օգնութեան կուգար իր հոգեզաւակ Ադրբէջանին։ Նկատելի էր, որ այդ նոյն ատենները Զանգիբասարի, Վեսի-Բասարի, Շարուր-Նախիջեւանի զինուած թաթարական խմբերը գլուխ կը բարձրացնէին Հայաստանի կառավարութեան դէմ՝ զբաղեցնելու համար զայն ներքին խնդիրներով, երբ արտաքին վտանգը օրը ըստ օրէ կ'ուժգնէր։

Ազգային Անկախութիւն։— Մահմեդական տարրերուն այդ վտանգաւոր եւ սպառնացող զաղափարին դէմ դարերով ստրուկ եւ փոքրաթիւ հայ ժողովուրդը կը պայքարէր իր ազգային անկախութիւնը պաշտպանելով։ Մեր բնական փափաքն էր ունենալ անկախ Հայաստան մը, որի մէջ պարփակուած ըլլային Տաճկահայաստանն ու Ռուսահայաստանը։

Հայաստանի ժողովուրդը եւ կառավարութիւնը կը մտածէին որ մինչեւ Տաճկահայաստանի խնդրի լուծումը, անհրաժեշտ է վերջացնել մեր հանրապետութեան սահմանային խնդիրները, ապահովել զայն տնտեսապէս, վերակազմել եւ ուժեղացնել մեր բանակը, կանոնաւորել մեր պետական մեքենան, վարժեցնել ժողովուրդը օրինապահութեան եւ սեփական իշխանութեան։

Բնական է, որ Հայաստանի կառավարութիւնը չէր կարող ինքնաբերաբար, դիւրութեամբ զիջիլ այնպիսի կարեւոր շրջաններ՝ ինչպէս են Ախալքալաքը, Ղարաքիլիսան եւ Լոռին, ուր հայերը մեծամասնութիւն կը կազմեն։ Ան չէր կարող լքել եւ՝ այդ շրջաններու մէջ ապրող 400,000-էն աւելի հայ ազգաբնակութիւնը, որ մեծ պատերազմի ընթացքին համեմատաբար անվթար մնացած էր՝ տնտեսապէս եւ ֆիզիքապէս։ Արդէն առանց այդ շրջաններու ալ Ադրբէջանի եւ Վրաստանի սահմաններուն մէջ կը բնակէին մօտ կէս միլիոն ընդունակ, առողջ եւ ձեռներէց հայեր, որոնց պէտքն այնքան զգալի էր Հայաստանի վերաշինութեան գործին մէջ։

Պէտք չէ մոռնալ, որ Հայաստանի հանրապետութեան սահմաններուն մէջ կը մտնէին Ղարսի եւ Ալեքսանդրապոլի տնտեսապէս աւերուած գաւառները, Երեւանի շրջանը՝ որ պատերազմի ճակատին մօտ ըլլալով՝ ենթարկուած էր տնտեսական քայքայման, քանի մը հարիւր հազար գաղթականներ՝ անտուն եւ անգործ եւլն., Բայազէտի սակաւահող շրջանը, որոնցմով ոչ մի կառավարութիւն չէր կարող իր գոյութիւնը երկարատեւ դարձնել։

Պէտք չէ մոռնալ նաեւ, որ վիճելի հողամասերու մեծագոյն մասը Հայաստանի լեռնային շրջաններն էին, մեր բնական յենարաններն ու սահմանները, որոնց մէջ կը բնակէին կռուի եւ զէնքի համար ամենէն ընդունակ ու համեմատաբար ամենէն աւելի առողջ հայ տարրերը, որոնց պէտքն այնքան զգալի էր՝ հանրապետութեան մանուկ բանակի վերակազմութեան եւ ամրացման համար։

Վերջապէս պէտք չէ մոռնալ, որ մեզի համար կենաց եւ մահու չափ անհրաժեշտ էր խափանել Ադրբէջանի եւ Տաճկաստանի Ղարաբաղ — Զանգեզուրի վրայով միանալու ծրագիրը, ապահովելու համար հանրապետութեան սահմանները։ Մենք անտարբեր չէինք կրնար ըլլալ հանդէպ աճող համիսլամական շարժման, որուն մէկ կարեւոր արտայայտութիւնն էր Տաճկաստանի եւ Ադրբէջանի միջեւ 1919 թուի հոկտեմբերի 29ին կնքուած զինակցութեան դաշինքը։

Ահա այդ դաշինքի քանի մը, մեզ համար կարեւոր յօդուածները.—

Յօդ. 1.— Իսլամի Խալիֆայութեան ներկայացուցիչ օսմանեան կառավարութիւնն եւ Ադրբէջանի միջեւ, որ ճգնում է ձեռք բերել իր անկախութիւնը, սկզբունքով համաձայնութիւն կայացաւ, որ որեւէ յարձակման կամ Ադրբէջանի բնական սահմաններու պահպանման տեսակէտով առաջանալիք որեւէ վտանգի դէպքում՝ օսմանեան կառավարութիւնը կարիք եղած պարագային իր զինուորական աջակցութիւնը պիտի տայ, եւ երկու մահմեդական երկիրներն իրար փոխադարձաբար նեցուկ պիտի ըլլան։

Յօդ. 3.— Երբ պայմանաւորուող կողմե-

© National Library of Armenia

րէն մէկը իրօք յարձակում կրէ կամ զտնուի ուղղակի սպառնալիքի տակ, փոխադարձ զինուորական օգնութիւն պիտի տրուի:

Յօդ. 5.— Այն պարագային, երբ Ադրբէջանի հանրապետութեան ճանաչումը, Աստուած մի՛ արասցէ, ձեռք չբերուի, եւ օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնը կամ անկախութիւնը կորսուելու վտանգին ենթարկուի, պայմանաւորուող երկու կողմերը չպիտի ստորագրեն հաշտութիւն եւ զէնքերը վար չպիտի դնեն՝ առանց նախնական փոխադարձ հաւանութեան եւ համաձայնութեան:

Յօդ. 9.— Օսմանեան կայսրութիւնը յանձն կ'առնէ եւ կը կատարէ Ադրբէջանի հանրապետութեան բանակի կազմակերպումը եւ, երկու երկիրներու համապատասխան սպայակոյտներու զնահատումներուն համաձայն, կը պարտաւորուի Ադրբէջանի բանակին համար սպաներ ու զինուորական հրահանգիչներ ուղարկել...

Շատ պարզ եւ որոշ է, որ այս զինակցութիւնը ուղղուած էր Հայաստանի հանրապետութեան դէմ եւ որ Ադրբէջանը առաջ կը տանէր ոչ թէ իր, այլ Տաճկաստանի ընդհանուր քաղաքականութիւնը, հանդիսանալով անոր համիսլամական չղթայի կարեւոր օղակներէն մէկը:

Բ.

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ԱՆԴՐԱՆԻԿԸ ԵՒ ԻՐ ԱՐՇԱՒԱՆՔԸ

1918 թուին, երբ տաճկական զօրքը Կովկաս մտաւ, մոռացութեան չտուեց եւ Ղարաբաղը, որ տեսակ մը սպառնալիք էր դէպի Բաղու արշաւող Թրքական բանակի համար: Անհրաժեշտ կը նկատուէր վերջ տալ այդ շրջանի ըմբոստ գիւղացիութեան վտանգին նաեւ այն պարզ պատճառով, որ այդ ուղղութեամբ կարելի պիտի ըլլար նաեւ անցնիլ Զանգեզուր, միանալ Նախիջեւանին եւ ամէն կողմէ շրջապատել Հայաստանի հանրապետութիւնը՝ վերջինս միշտ ենթակայ դրութեան մէջ պահելու համար:

Դէպի Ղարաբաղ շարժուելու համար Թուրքերը անմիջական դրդապատճառ ալ ունէին,— Անդրանիկն իր զօրամասով տէր էր դարձած Զանգեզուրին եւ կը սպառնար տէր դառնալ նաեւ Ղարաբաղին:

Տաճիկները, թէեւ հաւատացած էին, որ Հայաստանի հանրապետութիւնը զօրական օժանդակութիւն չի կարող հասցնել Ղարաբաղին, բայց չգիտէին, թէ Հայաստանի հանրապետութեան եւ Անդրանիկի միջեւ որեւէ համաձայնութիւն չկայ:

Յայտնի է, որ 1918 թուի ապրիլին, Թրքական յառաջխաղացման առեն, Ալեքսանդրապոլի մէջ կազմուեցաւ Անդրանիկի հրամանատարութեամբ Հայկական Առաջին Հարուածող Զօրամասը, որը պիտի ենթարկուէր Զօր. Նազարբէկեանին:

Երբ սակայն դահավէժ ընթացքը հարկադրեց Հայոց Ազգային Խորհուրդը հաշտութիւն կնքել Թուրքերուն հետ, Անդրանիկ բաղձողներէն մէկն եղաւ եւ այդ օրուընէ ի վեր կապը կտրեց հայկական ազգային-քաղաքական եւ զինուորական մարմիններուն հետ, առաջ տարաւ անջատ, անհատական քաղաքականութիւն, թողուց հայկական հանրապետութեան սահմանները, իր զօրամասի հետ շարժուեց դէպի Նախիջեւան — Պարսկաստան՝ արդէն դէպի հիւսիս յառաջացող անդլիացիներու հետ միանալու՝ հակընդդէմ Թուրքերուն:

Իր այդ ճամբորդութեան ընթացքին, սակայն, արտաքին եւ ներքին պայմաններու փոփոխութեան պատճառով եւ Զանգեզուր—Ղարաբաղի ժողովուրդի դիմումի հիման վրայ, Անդրանիկը հրաժարեցաւ իր նախկին ծրագրէն եւ մնաց Զանգեզուր, որուն հայութիւնը կ'ապրէր օրհասական օրեր: Նոյն թուի օգոստոսի 3-ին, Անդրանիկն իր զօրամասով մտաւ Գորիս քաղաքը:

Այդտեղ քիչ մը մնալէն վերջ, ան ստիպուեցաւ փոխադրուիլ Սիսիանի շրջանը, որ աւելի հարուստ եւ բարեբեր է ու ի վիճակի էր կերակրելու անոր զօրամասը:

Անդրանիկի ներկայութիւնը Զանգեզուրի մէջ ոգեւորեց նաեւ Ղարաբաղի հայութիւնը, որ իր ներկայացուցիչներու միջոցով խընդրեց Անդրանիկէն անցնիլ անմիջապէս Ղարաբաղ, մանաւանդ որ Գանձակ նստած Նուրի փա-

© National Library of Armenia

չայի զօրքերն արդէն կը յառաջանային դէպի Ակնարան–Շուշի եւ Ղարաբաղի հայաշատ այլ կեդրոններ:

Ղարաբաղի հայութեան առաջարկն ու պատրաստակամութիւնը՝ օգնելու իրեն, անդրիտացիներու յառաջխաղացքը, Դաշնակից պետութիւններու յարձակման լուրերը, իր զօրամասի անտեսական վատթար պայմանները ելնելով դարձան, որ Անդրանիկը փոխէ իր սկզբնական ծրագիրները եւ իրեն նպատակ դնէ արագիւլ թուրքերը Զանգեզուր արշաւել, հեռացնել թուրքերը Շուշիի շրջանէն եւ աւելի յառաջ երթալ Ելիսաւ... Գանձակ... Բաղու, ո՞վ գիտէ: (Տե՛ս Հայկական Առաջին Հարուածող Զօրամասը գիրքը, էջ 124):

Միաժամանակ Հայաստանի հանրապետութիւնն դժգոհ զօրավարի շուրջը հաւաքուած անձնաւորութիւնները կը տեսնէին, որ չէր թաք է ժամանակ կորսնցնել, այլ պէտք է ակտիւ քայլեր առնել, որովհետեւ «ներքին ձայնը կ'ըսէր, թէ մօտ է մեծ վայրկեանը, երբ արդէն դրութիւնը փոխուած պիտի տեսնենք եւ նոյնիսկ ուշ մնացած՝ գործելու համար»: (Նոյն գիրքը, էջ 116):

Այս պայմաններուն մէջ Անդրանիկ զգաց ծառայութիւններ մատուցեց Զանգեզուրի հայութեան, կասեցնելով թաթարական քանի մը շրջաններու վտանգը, ինչպէս, օրինակ, Աղուտի–Վաղուտինը, որով Գորիսը կը կտրուէր Սիսիանէն:

Թրքական արշաւանքը, սակայն, դէպի Ղարաբաղ, պակուեց որոշ յաջողութեամբ: Տաճկական զօրքերն անարգել հասան մինչեւ Ակնարան եւ վերջնագիր ներկայացրին Շուշի քաղաքի եւ շրջանի հայութեան՝ անձնատուր լինելու: Քաղաքը ընդառաջ ղնաց այդ ուլտիմատումին, իր ներկայացուցիչներու միջոցով հաւատարմութիւն յայտնեց եւ նոյնիսկ խոստացաւ յատուկ մարդկանց միջոցով ազդել նաեւ Զանգեզուրի հայութեան վրայ:

Ղարաբաղի գիւղացիութիւնը, հակառակ քաղաքի այդ հաշտարար տրամադրութեան, չկամեցաւ ճանչնալ թուրքերի իշխանութիւնը եւ իր կազմակերպած ինքնապաշտպանութեան մարմիններու միջոցաւ շարունակեց իր դիմադրութիւնը եւ բանակցութիւններն Անդրանիկի հետ:

Սեպտ. 25–ին թուրքերը գրաւեցին Շուշին:

Դաւաճան սակայն դիմադրեց թուրքերուն եւ նոյնիսկ նշանակալից յաղթանակներ տարաւ: Վարանդայի Մամնայ գիւղի մօտ շրջապատեց 400–ի մօտ թրքական ասկեարները, ջարդեց զանոնք, գրաւեց երկու թնդանօթ եւ քանի մը գնդացիրներ: Այդ դէպքը ոչ միայն ոգեւորեց Ղարաբաղի մէջ գտնուող հայութիւնը, այլ եւ Անդրանիկն ու իր զօրամասը, որուն մէջ բաւական թուով զինուած Ղարաբաղցիներ ալ կային:

Հոկտեմբեր 26–ին Ղարաբաղէն եկած սուրհանդակները կը յայտնեն, թէ այնտեղի հայութիւնը պատրաստ է օգնելու եւ ամէն ինչ զոհելու, որ 15.000 կուռողներ կարելի է զէնքի տակ կանչել եւ որ «ամէնքը պատրաստ են եւ կը սպասեն «Աղայի (Անդրանիկի) գալուն»: (Նոյն գիրքը, էջ 135):

Այս ժամանակներն էր, որ Զանգեզուրի ժողովուրդը իր համագումարների միջոցով անխախտ վճիռք յայտնած էր օգնելու Ղարաբաղի հայութեան՝ Անդրանիկի անոր օգնութեան հասնելու ատեն:

Եւ այսպէս երկու կողմերէն ալ կը տեսնուին համապատասխան պատրաստութիւններ: Բոլորն ալ կը զգան Ղարաբաղի գրաւման անհրաժեշտութիւնը, որովհետեւ թէ՛ հայաշատ կեդրոն է, թէ՛ բաւական թուով կռուողներ կուտայ եւ թէ՛ հայաշատ է եւ, որ ամենակարեւորն է, պէտք է օգտուիլ հանգամանքէն եւ յայն վերտով կապ պահպանել Զանգեզուրի հետ՝ Հէրբեաթի գետի երկու կողմերը գրաւած թրքական շրջաններն անվտանգ դարձնելու համար:

Երկար բանակցութիւններէ եւ պատրաստութիւններէ յետոյ, Անդրանիկն իր Հարուածող Զօրամասով եւ Ղարաբաղցիներու գընդով, նոյեմբերի 29–ին, կը շարժուի դէ՛ Զարուղ եւ նոյեմբերի 30–ին կը սկսի կատաղի եւ օրհասական կռիւներ՝ Մարգիզ լերան բարձունքները գրաւելու եւ բանալու Շուշի–Ելիսաւ խճուղին:

Դեկտեմբեր 1–ին այդ չատ կարեւոր դիրքը, բաւական թանկագին զոհերով, կը գրաւուի եւ շրջանի թրքական դիւղերը կ'ենթարկուին յառաջացող զօրամասի կրակի վտանգին: Այդ

յաջողութեան հնարաւորութեամբ կը բացուի Գորիս–Աւտուլլար–Ղարաղշլաղ–Թթուֆուր եւ Շուշի ճամբան:

Ղարաբաղը զրաւելու աշխատանքի դժուարագոյն մասը կը վերջանար: Պէտք կար քիչ մը եւս ճիգ ու վճռականութիւն, որպէսզի հայկական երկու կարեւոր շրջանները, Ղարաբաղն ու Զանգեզուրը, միանային եւ յետագային այնքան դժուարութիւններու եւ զոհերու դուռ չբանային: Սակայն Դաշնակից պետութիւններու հանդէպ ունեցած մեր, ինչպէս նաեւ Անդրանիկի հաւատքը աւելորդ անգամ չեղեց մեզ չիտակ ճամբայէն: Ադրբէջանի կառավարութիւնը, զգալով որ Անդրանիկի արշաւանքով Ղարաբաղը պիտի կորսուի եւ դառնայ Հայաստանի հանրապետութեան յենարաններէն մին, Բաղուի մէջ գտնուող անգլիական ներկայացուցիչ Գէն. Թամսընի միջոցով յատուկ սուրհանդակներ ուղարկել տուեց Զանգեզուր, Անդրանիկի մօտ, վերջ տալու կռիւներուն եւ անոր յառաջխաղացման:

Թաթարները հասան իրենց նպատակին:

Հեռագիրներ, նամակներ եւ ներկայացուցիչներ կը փութան Զանգեզուր, կը հաղորդեն Դաշնակիցներու յաղթանակի մասին, ոգեւորիչ եւ յուսադրիչ ճառեր կ'արտասանեն՝ Հայաստանի ազատութեան մասին, կը գովեն հայերու եւ, մանաւանդ, Անդրանիկի մատուցած ծառայութիւնները: Տեղի կ'ունենան ճաշկերոյթներ, կը հնչեն հուռռաներ ու կէցներ, կը ստեղծուի իսնդալաւ տրամադրութիւն, որուն արդիւնքը կ'երլայ Ղարաբաղի հարցի մոռացում:

Անդրանիկը կամաց կամաց կը քաշուի: Իր գինուորները, ուրախութեամբ տեսնելով իրենց յաղթանակը, կը թողնեն իրենց դիրքերը, կը վերադառնան Գորիս, ապա կ'անցնին Հայաստան եւ կը ցրուին: Թաթարները կամաց կամաց կը վերադառնան իրենց նախկին տեղերը, կը դրաւեն կարեւոր դիրքերը, կը կտրեն Ղարաբաղի եւ Զանգեզուրի հաղորդակցութեան կապը եւ նոր յոյսերով լի պատրաստութիւններ կը տեսնեն՝ այս անգամ տարբեր ճանապարհներով եւ միջոցներով իրագործելու համար իրենց նպատակը:

Այսպիսով, հակառակ այդքան աշխատանքներուն եւ յաջողութիւններուն, Ղարաբաղ–Զանգեզուրի հարցը մնաց առկախ եւ կուսախնձոր՝ Ադրբէջանի եւ Հայաստանի կառավարութեանց միջեւ:

ՕԳՈՍՏՈՍԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Դաշնակիցներու յաղթանակով հայութիւնը շատ խանդավառուած էր: Մենք բոլորս ալ այն յոյսը ունէինք, թէ այժմ, 1918–էն վերջ, խօսքը ո՛չ թէ զէնքին կը պատկանի, այլ ճարպիկ դիւանագիտութեան, եւ անհրաժեշտ է, որ մեր վիճելի խնդիրները ռազմաճակատներէն տանինք դէպի խորհրդաժողովներու կանանչ սեղանները:

Եւ մինչ մեր պետական եւ քաղաքական շրջանակներու մէջ կը տիրապետէր կրաւորական մտայնութիւն եւ վստահութիւն Դաշնակիցներու վրայ, Ադրբէջանի մէջ առաջ կը տարուէր աւելի գործօն քաղաքականութիւն մը թէ՛ կոտորածներով, թէ՛ տեղական բնոյթ կրող կռիւներով եւ թէ՛ Զօր. Թամսընի վրայ ազդելու իրենց աշխատանքով:

Պէտք է հոս շեշտել, որ անգլիական կառավարութեան ներկայացուցիչներն Անդրկովկասի մէջ եւ յատկապէս Զօր. Թամսընը, առաջ կը տանէին Թուրքերուն հետ հասկացողութեան եզր մը գտնելու իրենց որոշ քաղաքականութիւնը, որուն պատճառով ալ չէին կամենար վերջ տալ Անդրկովկասի հանրապետութիւններու միջեւ եղած վիճելի հողամասերու խնդրին, մինչդեռ այդ կարող էին իրենց ակտիւ միջնորդութեամբ, որ ա՛յնքան ազդեցիկ էր 1919 թուին:

Օգտուելով Անգլիայի թուլութենէն եւ Հայաստանի կառավարութեան անտեսական եւ դպրոցական նեղ կացութենէն, Ադրբէջանն աստիճանաբար, աննկատելի կերպով, սկսաւ իր յարձակողական քաղաքականութեան:

Ամենէն առաջ ան տեսորի ենթարկեց Շամախու, Նուխու եւ Գանձակի շրջանների մէջ գտնուող հայութիւնը եւ իր կազմակերպած ոստանութիւններով Բաղու–Թիֆլիս երկաթուղիի վրայ, կտրեց որեւէ կապ Հայաստանի եւ Ադրբէջանի միջեւ: Զգուշութեամբ եւ խորամանկութեամբ բազմաթիւ խոստումներ ըրաւ անդլիացիներուն՝ Բաղուի նաւթահորերը շահագործելու համար, աւելի ամրապնդեց իր եւ

Վրաստանի միջեւ արդէն գոյութիւն ունեցող բարեկամական կապը եւ իր գործակալներու միջոցով՝ հայերուն եւ Թուրքերուն, Շուշի-Ագդամ եւ ն. չրջաններու մէջ, ջանաց ներշնչել Ղարաբաղը Ադրբէջանի տնտեսական անրաժանելի մաս ըլլալու գրաւիչ գաղափարը: Ապացուցանելու համար իր այդ տեսակէտի ճշմարտութիւնը, ան սարսափի տակ պահեց Եւլախ-Շուշի խճուղին, որպէսզի հայերը չկարողանան ազատ երթեւեկիլ եւ տնտեսապէս զարգացնել չրջանը. կազմակերպեց նաեւ տնտեսական բոյկոտ՝ Ղարաբաղի հայ գիւղացիութեան նաեւ, հաղուստեղէն եւն. չծախելով: Եւ այդ միջոցներով ջանաց թեքել այս չրջանի հայութեան տրամադրութիւնը դէպի Ադրբէջանի տիրապետութիւնը:

Իրերու այս վիճակին մէջ Հայաստանի կառավարութիւնը ֆիզիքական հնարաւորութիւն չունէր իրական օժանդակութիւն հասցնելու Ղարաբաղին, մանաւանդ որ ինքն ալ մը-տահոգուած էր բազմաթիւ արտաքին եւ ներքին ծանրակշիռ խնդիրներով, եւ կը բաւականանար միայն դիւանագիտական միջոցներու դիմելով՝ նոթերով եւ բողոքներով:

Երկու պետութիւններու այս հակամարտութիւնը, ինչպէս նաեւ այն, որ Դաշնակից պետութեանց ներկայացուցիչներն ամէն կերպ կը խուսափէին վերջ տալու վիճելի հարցերուն եւ կը թելադրէին սպասել խաղաղութեան վեհաժողովի աշխատանքներու վերջաւորութեան, առաջ բերին Ղարաբաղի հայութեան մէջ երկու հոսանք: Մէկը կը ձգտէր Ղարաբաղը ժամանակաւորապէս կցել Ադրբէջանին, իսկ միւսը՝ վերջնապէս Հայաստանին:

Ադրբէջանի կառավարութեան պրովոկացիաներուն հետեւանքով եւ անգլիական իշխանութեան օժանդակութեամբ Ղարաբաղէն աքսորուեցան վերջին հոսանքի ղեկավարները: Այս պայմաններուն մէջ է, որ տեղի կ'ունենայ Ղարաբաղի հայութեան 7-րդ համագումարը: Վերջինս տեսնելով, որ Դաշնակից պետութիւնները չեն ուզեր Ղարաբաղը Հայաստանին միացնել, իսկ Հայաստանն ալ այնքան ուժ չունի, որ զէնքի ուժով լուծէ կնճիռը, հետեւեալ համաձայնութիւնը կայացուց Ադրբէջանի կառավարութեան հետ.—

«Նկատի ունենալով, որ լեռնային Ղարաբաղի վիճակը պիտի որոշուի հաշտութեան վեհաժողովի կողմէն, որ ամէն ընդհարում կործանարար ազդեցութիւն կ'ունենայ Ղարաբաղի ազգարնակութեան համար, որ Ղարաբաղի հարցը որեւէ տեսակ վճռուելով հայերը եւ Թուրքերը պէտք է ապրին միասին, Ղարաբաղի հայերու 7-րդ համագումարը, 1919, օգոստ. 15-ին, իր առաւօտեան նիստին մէջ, որոշեց կանգառնել Ադրբէջանի հանրապետութեան կառավարութեան հետ ունեցած հետեւեալ ժամանակաւոր համաձայնութեան վրայ.—

ա) Ներկայ ժամանակաւոր համաձայնութիւնը կ'ընդունուի երկու կողմերէն, մինչեւ այդ հարցի հաշտութեան համաժողովի կողմէն վճռուիլը, որ պարտադիր է երկու կողմերուն համար այ:

բ) Ղարաբաղի լեռնային մասի՝ Շուշիի, Զիւանչիրի եւ Զիրբայլի (Դիզակ, Վարանդա, Խաչէն, Զրաբերդ) գաւառները, իրենց հայ ազգաբնակութեամբ, ժամանակաւորապէս պիտի մնան Ադրբէջանի հանրապետութեան սահմաններուն մէջ:

գ) Շուշիի, Զիւանչիրի եւ Զիրբայլի նահանգները կ'անջատուին Ղարաբաղի գիներալ-նահանգապետութենէն, որպէս վարչական առանձին միութիւն, եւ հայոց լեռնական կազմակերպութեան վարչութիւնը կը կազմուի հայերէն, այն պայմանով, որ ի նկատի առնուին փոքրամասնութեան իրաւունքները:

դ) Ղարաբաղի լեռնային մասի (Դիզակ, Խաչէն, Վարանդա եւ Զրաբերդ) վարչական պաշտօնատար անձերը կը նշանակուին Հայոց Խորհրդի անդամներու առաջարկութեամբ:

ե) Ղարաբաղի գիներալ-նահանգապետութեան մէջ կը հիմնուի խորհուրդ մը վեց հոգիէ բաղկացած,— երեք հայ եւ երեք Թուրք:

զ) Խորհրդի հայ անդամները կ'ընտրուին լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակութեան համաժողովի կողմէն: Համաժողովները վերընտրութեան իրաւունք ունին:

է) Միջազգային բնոյթ կրող բոլոր սկզբունական հարցերը չեն կարող կեանքի մէջ մտնել առանց ենթարկուելու Խորհուրդի քննութեան:

ը) Խորհուրդը չինարարական եւ գենահ.-եան կառավարութեան հարցերու մէջ նախաձեռնութեան իրաւունք ունի:

թ) Խորհուրդը իրաւունք ունի վերահսկե-

© National Library of Armenia

լու դեն.—նահանգապետութեան վարչութիւնը, առանց խառնուելու վարչութեան գործունէութեան մէջ:

ժ) Կը հիմնուի դեն.—նահանգապետի քաղաքացիական օգնականի պաշտօն, եւ այդ պաշտօնի համար կը նշանակուի հայ մը:

ժա) Դեն.—նահանգապետի քաղաքացիական օգնականի համար համաձայնութիւնը Ադրբէջանի կառավարութեան կ'առաջարկէ երկու թեկնածու, որոնցմէ մէկը պիտի հաստատուի պաշտօնի մէջ:

ժբ) Ղարաբաղի հայերը ունին կուլտուրական ինքնորոշման իրաւունք:

ժգ) Կուլտուրական ինքնորոշումը կ'իրականացուի Ղարաբաղի Ազգային Խորհուրդի կողմէն, որ կ'ընտրուի հայերու պարբերական համաժողովներէն:

ժդ) Ադրբէջանի հանրապետութեան կառավարութիւնը կը վերահսկէ հայոց Ազգային Խորհուրդի գործունէութիւնը՝ լիազօրուած հայերու միջոցով:

ժե) Զինուորական մասերը կը բնակին Խանքենդի եւ Շուշիի մէջ, խաղաղ ժամանակուայ կազմով:

ժզ) Զօրամասերու ամէն մէկ տեղափոխութիւնը դէպի Ղարաբաղի լեռնային մասը՝ Շուշիի, Ջիբրայիլի եւ Ջիւանշիրի գաւառները, ուր կը բնակին հայեր, կարող է տեղի ունենալ Խորհուրդի անդամներու երկու-երրորդի համաձայնութեամբ:

ժէ) Քաղաքական համոզման համար ոչ ոք չի կրնար հետապնդուիլ, ոչ դատական եւ ոչ ալ վարչական կարգով:

ժը) Բոլոր հայերը, որոնք քաղաքական պատճառներով ստիպուած են եկեր հեռանալ Ղարաբաղէն, կարող են նորէն իրենց տեղերը վերադառնալ:

Այս համաձայնութիւնը, որի կազմութեան մէջ Հայաստանի կառավարութիւնը ոչ մէկ մասնակցութիւն եւ ազդեցութիւն ունեցաւ, եղաւ Ադրբէջանի դիւանագիտական յաղթանակներէն մէկը:

Անոր մէջ չեչտուած այն կէտերը, թէ «Ղարաբաղի լեռնային մասի գաւառները, իրենց հայ ազգաբնակութեամբ, ժամանակաւորապէս պիտի մնան Ադրբէջանի հանրապետութեան սահմաններուն մէջ», «քաղաքացիական օգնականի համար համաձայնութիւնը Ադրբէջանի կառավարութեան կ'առաջարկէ երկու թեկնածու, որոնցմէ մէկը կը հաստատուի պաշտօնի մէջ», և «Ադրբէջանի հանրապետութեան կառավարութիւնը կը վերահսկէ Ազգային Խորհրդի գործունէութիւնը՝ լիազօրուած հայերու միջոցով», պարզ եւ որոշ տրամադրութիւններ էին, որոնք կ'ապացուցանէին, թէ Ադրբէջանը չատ ակտիւ մասնակցութիւն պիտի ունենայ Ղարաբաղի հայերուն կեանքին մէջ եւ կարելի բոլոր միջոցներով պիտի ջանայ թեքել անոր տրամադրութիւնը դէպի իր օրիէնտացիան:

ԱԿՏԻՒԻՍՏՆԵՐ

ԱԴՐԲԷՋԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Այս երկու երկիրներու քաղաքական-հասարակական եւ պետական գործիչներու մէջ գոյութիւն ունէր ակտիւիստներու հոսանք մը, որ կը դեկավարէր թէ՛ հասարակական կարծիքը եւ միաժամանակ կ'ազդէր իր կառավարութեան ընթացիկ քաղաքականութեան վրայ:

Ադրբէջանի մէջ այդ հոսանքի գլուխ կանգնած էին Իթթիհատ կուսակցութեան պարագլուխները եւ Մուսավաթ կուսակցութեան դեկավար անհատները, որոնց մէջ էին Խանխոյսկին եւ Խոսրով բէկ Սուլթանովը:

Դեռ 1920 թուի փետրուարին, Իթթիհատի Բաղու կայացած համագումարը, հետեւեալ որոշումներն անցուց.—

«Համագումարը բարձրաձայն կը յայտարարէ եւ կը պահանջէ՝ մինչեւ պատերազմը գոյութիւն ունեցած Տաճկաստանի տերիտորիայի լիակատար անձեռնմխելիութիւնը»:

Եւ «Պահանջել Ադրբէջանի կառավարութենէն, որ վերջին ամենակտրուկ միջոցներ ձեռք առնէ լիկվիտացիայի ենթարկելու Զանգեզուրի դէպքերը»:

Դեռ Ղարաբաղի դէպքերէն առաջ, 1920 թուի յունուարի սկզբին, Զէլիլ Սուլթանովը, Ադրբէջանի պարլամենտի անդամ, կը հեռագրէր Բաղու՝ իր կառավարութեան. «Գաւառի դժբախտ ազգաբնակութեան անունէն կ'աղերսեմ, թղթի վրայ բողոքներէն անցնիլ ակտիւ գործունէութիւններու եւ Ադրբէջանի լաւագոյն անկիւնը փրկել կործանումէ: Զանգեզուրէն յետոյ հերթը Ղարաբաղինն է»:

© National Library of Armenia

Այդ ժամանակները Թրքական «Ադրբէջան» թերթի մէջ, Խալիլ Իբրահիմ կը գրէր. «Հայերու զինուած ուժը բաղկացած է 10.000ից, որուն կը մասնակցի Երեւանի կառավարութեան կանոնաւոր զօրքը: Զանգեզուրը կոտորելով վերջացնելէ յետոյ՝ այնտեղի զօրքը անմիջականօրէն կարող է ձեռք երկարել Շուշի-Ջիւանշիրի հայերուն»:

Եւ այդ ատենի նոյն թերթը, յունուար 26ի իր խմբագրականի մէջ կ'ըսէր.

«Զանգեզուրը Ադրբէջանի ամենէն արժէքաւոր եւ անրաժան մասն է: Անոր վրայ ամէն մի ոտնձգութիւն ամբողջ Անդրկովկասի մէջ յուզում կ'առաջացնէ կայծակի արագութեամբ»:

Ծայրայեղներու թիւը շատ էր Ադրբէջանի թէ՛ վերին եւ թէ՛ ներքեւի խաւերուն մէջ: Անոնք նպատակ ունէին զէնքի միջոցով եւ անմիջական կերպով վերջ տալ Ղարաբաղ-Զանգեզուրի հարցին եւ միշտ ալ խիստ կերպով քննադատութեան կ'ենթարկէին իրենց կառավարութեան թոյլ քաղաքականութիւնը: Ասոնք իրենց հերոսն ունէին՝ յանձինս Խ. Սուլթանովի, որ, երբեմն անկախ կառավարութեան կամքէն, կ'աւերէր հայկական գիւղեր եւ իր կազմակերպած աւազակային խմբերով սարսափի մէջ կը պահէր Եւլախ-Շուշի թէ՛ խճուղին եւ թէ՛ անոր բոլորտիքը բնակող հայ գիւղացիութիւնը:

Ծայրայեղներու կամ ակտիւիստներու նման հոսանք մը գոյութիւն ունէր նաեւ Հայաստանի մէջ:

Դաշնակից պետութիւններու յաղթանակէն վերջ ասոնք անցան եռանդուն գործունէութեան, պահանջեցին Հայաստանի կառավարութենէն անմիջական քայլերու դիմել՝ Ղարաբաղ-Զանգեզուրի հարցին վերջ տալու համար եւ որեւէ առիթ չէին փախցներ՝ քննադատելու կառավարութեան թոյլ քաղաքականութիւնը: Այդ հոսանքն աւելի ուժեղացաւ 1919 թուի ամառը, Ղայբալիքենի հայ գիւղի կոտորածէն վերջ, որով Ադրբէջան իր ճամբան կը հարթէր դէպի Զանգեզուր, սկիզբ դնելով իր նուաճողական քաղաքականութեան: Այդ հոսանքն աւելի ծաւալուեցաւ Ղարաբաղի Ազգային Խորհուրդի քանի մը անդամներու եւ քաղաքական գործիչներու բռնի աքսորի շնորհիւ:

1919 թուի Զանգեզուրի տարած յաղթանակը՝ Ադրբէջանի զօրամասերի վրայ, անգամ մը եւս եկաւ ուժ ներշնչելու հայ ակտիւիստներուն եւ արդարացնելու անոնց պատճառաբանութիւնը թէ՝ միայն զէնքի միջոցով պիտի լուծուի Ղարաբաղի հարցը, հետեւաբար կառավարութիւնն ալ այդ ուղղութեամբ որոշ քայլեր առնելու է:

Օգոստոսեան ժամանակաւոր համաձայնութիւնը քննադատութենէն բաժակը լեցուց: Ադրբէջանը տարած էր խոշոր դիւանագիտական յաղթանակ մը: Սուլթանովի իշխանութիւնը կամացուկ եւ խաղաղ կերպով մտադրած էր Ղարաբաղի հայութեան տրամադրութիւնը քանդել: Բաղուի կառավարութիւնը 50 միլիոն ռուբլու դրամագլուխ էր յատկացրել հայ գիւղացիներու զէնքերը դնելու եւ խոշոր գումար մը ալ՝ հայ ինտելիգենցիայի որոշ մասի աջակցութիւնը ապահովելու համար, անոնց համապատասխան պաշտօններ տալով: Կազմակերպուած էր Թրքական լրտեսական ցանց մը Ղարաբաղի գիւղերու մէջ, եւ ճարթն ու աղը կը հանդիսանային միջոցներ՝ հայ բնակչութեան քաղաքական տրամադրութեան վրայ ազդելու:

Այս համաձայնութեամբ Ղարաբաղը կիսով չափ կը մտնէր Ադրբէջանի հանրապետութեան մէջ եւ իր Ազգային Խորհուրդն ալ կ'ենթարկուէր անոր քոնթրոլին, մանաւանդ որ բոլոր պաշտօնեաներուն Ադրբէջանը դրամ կուտար:

Ակտիւիստներու այդ հոսանքը չէր պարփակուեր միայն Հայաստանի մէջ գտնուած Ղարաբաղցի եւ այլ քաղաքական-պետական գործիչներով, այլ եւ կը տարածուէր զինուորական շրջանակներու մէջ եւս, յատկապէս 2րդ գնդի Ղարաբաղցի զինուորականներուն մէջ, որոնք առաջարկ ներկայացուցին կառավարութեան՝ թոյլ տալու, որ իրենք երթան Ղարաբաղ՝ արդիւնաւորելու անոր ենթարկումը Ադրբէջանի լուծին:

Դեռ Ղարաբաղի դէպքերէն առաջ, Երեւանի Ղարաբաղցիներու Հայրեն. Միութիւնը, իր նախագահ Գ. Բալայեանի միջոցով, դիմեց Հայաստանի կառավարութեան բողոքով մը, որ կը վերջանար հետեւեալ խօսքերով.—

«Անտանտի ներկայացուցիչներու գերագոյն կոմիսարներու աչքի առաջ պատրաստուում է Հայաստանի վերջին անվնաս մնացած

չրջանի ոչնչացումը... Խնդրում ենք վճռական քայլեր առնել Թրքական էմիսարների եւ Ադրբէջանի չովինիստական շրջանների արիւնալի ակրեսիւ նպատակների առաջն առնելու համար»:

Հայաստանէն դուրս ակտիւիստներու հոսանք կար ե՛ւ Վրաստանի հայերի մէջ, որոնց արտայայտութիւնը կը դառնար «Զախակողմեան Սոցիալիստ» անունով մեր հակառակորդներէն մկրտուած «Աշխատաւոր» Դաշնակցական թերթի 1920 թուի թիւ 52-ի մէջ.—

«Մարդարէ չպէտք է լինել զուշակելու համար, որ Ղարաբաղը կանգնած է արիւնալի նախճիրների նախօրեակին, որովհետեւ կասկածից դուրս է, որ տեղացի հայութիւնը երբեք կամովին չի համաձայնի իր վիզը թեթեւ թրքական եաթաղանի հանդէպ... Ինչպէս անցեալում, այնպէս եւ այժմ Ղարաբաղի փրկութիւնը նրա կազմակերպուած կամքն է եւ կատարեալ վճռականութիւնը՝ ամէն գնով ապահովել իր ազատութիւնը, միանգամայն հաւատացած լինելով, որ իր հետ է այդ գործում ամբողջ հայութիւնը»:

Ակտիւիստներու, ինչպէս նաեւ հայ հասարակական ու պետական շրջաններու համար, Ղարաբաղի խնդիրը եղած էր կենսականօրէն անհրաժեշտ հարց մը՝ երկու գլխաւոր պատճառներով, ի բաց առեալ ազգային-պատմական նկատումները.—

1) Ղարաբաղի գրաւումով Ադրբէջանը շատ դիւրութեամբ կրնար իր թաթը դնել ե՛ւ Զանգեզուրի վրայ եւ անոր վրայով կապուիլ Թաթարական Նախիջեւանի հետ եւ այդ ճանապարհով Թուրքիոյ հետ եւ մշտապէս սպառնալ Հայաստանի հանրապետութեան գոյութեան:

2) Ղարաբաղի հայ ազգաբնակութեան ֆիզիքական եւ ռազմական առողջ ուժը անհրաժեշտ էր Հայաստանի կառավարութեան եւ յատկապէս անոր բանակը զօրացնելու համար, որովհետեւ Ղարաբաղը կարող էր մօտ 10,000 կռուող զինուորներ հայթայթել, որ համեմատաբար խոշոր ուժ մըն է, մանաւանդ որ Հայաստանի միւս շրջանների տնտեսական վատթար կացութիւնը կը պարտադրէր աւելի երիտասարդ ուժեր պահել թիկունքը՝ տնային եւ դաշտային կարեւոր աշխատանքներու համար:

Ահա այս պայմաններու մէջ էր, որ ես եւ ընկերս՝ Գնդ. Զ. Մ., ճամբայ ելանք դէպի Ղարաբաղ՝ հակազդելու Ադրբէջանի ազդեցութեան եւ կազմակերպելու ժողովրդի ինքնապաշտպանութիւնը:

(Շարունակելի)

ՀԱՅ ԾԵՂԱՓՈԽԱԿԱՆԻՆՄԸ ՑԻՇԱՏԱԿՆԵՐԸ՝

Գրեց՝ Ռ.

VII

Սասունը ընկնուելէ ետք.— *Մինչ Սասունը մեն-մինակ կը պայքարէր իր գոյութիւնը պաշտպանելու համար, շատ քչերը կային, որ կը մտածէին անոր մասին. ան միայնակ էր բաւին բուն իմաստով եւ ո՛չ մէկ տեղէն օգնութիւն ստացաւ իր պայքարի ընթացքին, ո՛չ բարոյական, ո՛չ նիւթական: Թէեւ իր անմիջական հարեւան գաւառները, ինչպէս Դուրանը, Սալնոր Զորը (Գիթլիսը), Վիշապաձորը (Տիարպէքիր), Վասպուրականը եւ Բարձրաբերդը (Կարինը) տեղեակ էին Սասնոյ անցուդարձին, բայց անոնցմէ եւ ո՛չ մէկը որեւէ օգնութիւն տուաւ: Զկամութիւնը չէր պատճառը եւ ո՛չ ալ անհամակիր վերաբերմունքը: Ընդհակառակը, բոլորն ալ ոգեւորուած էին Սասնոյ ըմբոստ կեցուածքով եւ ջերմ համակրութիւն ունէին Սասունցիներու հանդէպ. բայց ի՞նչ կրնային ընել. իրական օգնութիւն մը պիտի պատճառ դառնար, որ այդ շրջաններն ալ ծանրապէս տուժէին, մանաւանդ որ անոնք պատրաստութիւններ ալ չունէին այդպիսի վըտանգաւոր պայքարի մը մէջ մտնելու համար թէ՛ կառավարութեան եւ թէ՛ քրտերու դէմ:*

Բացի այդ, պէտք է նկատի ունենալ թէ կառավարութիւնն ալ, վախենալով հայկական ընդհանուր ըմբոստութենէ, նախօրօք արդէն նախազգուշական միջոցներ ձեռք առած էր Սասնոյ հարեւան հայկական շրջանները եւ

© National Library of Armenia

զսպելու համար: Միաժամանակ մեղմացնելու համար այդ չրջաններու տրամադրութիւնը հանդէպ իշխանութեան, որպէսզի անոնք չմիանան ապստամբ Սասունին, կառավարութիւնը կը ջանար սանձել քրտերը:

Հարկաւ, Սասունցին չէր կարող ըմբռնել դրսի հայութեան վիճակը եւ անոր անտարբերութեան պատճառները, ուստի եւ կոիւներէն յետոյ խորունկ հիասթափումով մը, նոյնիսկ երբեմն նաեւ ատելութեամբ համակուեցաւ հանդէպ դրսի հայութեան: Մինչ այդ, Սասունցին իր լեռնային պարզամտութեամբ կը հաւատար, թէ քանի որ բոլոր հայերը իրեն աղրբտիքն են, ուրեմն եւ վտանգի պահուն իրեն օգնութեան պիտի փութան: Եւ, երբ այդ տեղի չունեցաւ, սասունցին խռովեցաւ դրսի հայութենէն, որոնցմէ առաջ այնքան մեծ ակնկալութիւններ ունէր: Այսպէս թէ այնպէս անոր սրտին մէջ մնաց դէշ դառնութիւն մը, որ ապագային բաւականին դժուարութիւններու պատճառ պիտի դառնար:

Ո՛չ միայն չրջակայ գաւառները, այլ եւ ամբողջ հայութիւնը թէ՛ Տպէկաստանի, թէ՛ Կովկասի եւ թէ՛ զաղութներու մէջ ցնցուած էր Սասնոյ դէպքերէն եւ կ՚ապրէր Սասունով: Ամենուրեք կ՚երդէին Սասնոյ քաջագործութիւնները, եւ դժուար էր այն ատենները հանդիպիլ հայու մը, որու սիրտը անտարբեր ըլլար դէպի Սասունը: Անտոքի մէջ որոտացող թնդանօթները, շէշխանաներու ծուէնը, սրերու չաչիւնը արթնցուցեր էին հայութեան ազգային զգացումները, աւելի շուտ արթնցուցեր էին հայուն թմրած առնականութիւնը:

Սասունը իր ըմբոստութեամբ չազատագրեց Հայաստանը, բայց ազատագրեց հայութիւնը իր անտարբերութենէն եւ ստրկական հոգեբանութենէն: Առանց դասակարգի եւ դաւանանքի խտրութեան, հայկական բոլոր խաւերը «եղբայր ենք մենք», «ազատութիւն կամ մահ» եւ «Հայաստան» կ՚ըսէին ու կ՚երդէին: Այնպէս որ Սասնոյ նահատակներու եւ մարտիկներու արիւնը ի զուր չթափուեցաւ: Հայութիւնն էր որ իր թմրած վիճակէն ոտքի կը կանգնէր:

Եւրոպայի ուշադրութիւնը.— Արտասահմանի հայութեան, ինչպէս եւ ամբողջ հայ ժողովուրդի միահամուռ բողոքը, աղմուկը եւ դիմումները պատճառ դարձան, որ օսմ. կառավարութիւնը հաշուի առնէ հայութեան մէջ կատարուող փոփոխութիւնը, իսկ Եւրոպական պետութիւններն ալ իրենց հանրային կարծիքի ճնշման տակ ուշադրութիւն դարձնեն Սասնոյ դէպքերուն վրայ:

Մեր նիւթէն դուրս է խօսիլ Սասնոյ դէպքերու առիթով ծագած դիւանագիտական միջամտութիւններուն եւ արտասահմանի կարծիքներուն ու արտայայտութիւններուն մասին: Միայն այսքանը յիշենք, որ օսմ. կառավարութեան մէջ առաջ եկաւ, թէեւ թոյլ, հոսանք մը յանձին Սուլէյա եւ Օսման փաշաներու, որոնք դէմ էին Սասունի մէջ գործադրուած հալածական միջոցներուն: Իսկ Եւրոպական պետութիւններն ալ, Սասնոյ անցքերը առիթ բռնելով, առաջ քշեցին Պերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը եւ բարենորոգմանց ծրագիրներ սկսան մշակել՝ միաժամանակ քննիչ յանձնախումբեր ղրկելով դէպի Սասուն: Կառավարութիւնն ալ Եւրոպայի աչքին փոշի ցանելու համար «բարենորոգիչներ» ուղարկեց Հայաստան Շաքիր փաշայի առաջնորդութեամբ՝ պարզապէս կարգը վերահաստատելու համար:

Սասունը եւ Դուրան-Բարգրաւանդակը 1894-95.— Կոիւներէն ետքը Սասունը գրեթէ աւերակ էր եւ ժողովուրդի ողջ մնացած մասն ալ, փախստական վիճակի մէջ, ապաստանած էր լեռներն ու չրջակայ գաւառները: Դուրանի չրջանը գրեթէ չէր տուժած: Թէեւ հոն տեղի կ՚ունենային դարձեալ մանր մունր բռնութիւններ, բայց կացութիւնը աւելի խաղաղ էր եւ տանելի քան առաջ:

Նկատելի է, որ կառավարութեան վերաբերմունքը դէպի ամբողջ հայութիւնը զգալապէս կը փոխուի Սասնոյ կոիւներէն յետոյ. աւելի կը մեղմանայ եւ արտաքուստ բարեացակամ ու գթոտ կը դառնայ: Փաստ է, որ կառավարութիւնը օգոստոսի դէպքերէն յետոյ անմիջապէս դադրեցուց ամէն հալածանք հայերուն դէմ. Զէքի փաշան, որու ղեկավարութեամբ էր քանդուած Սասունը, հեռացուեցաւ այդ չրջանէն. հայերուն ներում յայտարարուեցաւ եւ առաջարկուեցաւ վերադառնալ իրենց տները: Կառավարութիւնը ամէն կերպ ջանաց այն համոզումը առաջ բերել, թէ կատարուածը պարզ թիւրիմացութիւն մըն է եւ

© National Library of Armenia

քրտական անիրաւութեանց արդիւնք։ Ասկէ զատ՝ կառավարութիւնը նիւթական օժանդակութիւն ալ ըրաւ յատկացնելով Սասունի վերականգման 50,000 դահեկան։ Եւ վերջապէս նոյնիսկ քրտերը պատժելու գէթ առ երեսս փորձեր ալ ըրաւ։

Կառավարութեան նպատակը պարզ էր. նախ հայերը սատնեց. երբ ապմուկ բարձրացաւ, մեղքը ձգեց քրտերուն վրայ ու առիթէն օգտուելով այժմ ալ սկսաւ հալածել քրտերը, որոնք նոյնպէս հայերէն թերեւս ոչ նուազ վըտանգաւոր տարր մըն էին օսմ. պետութեան համար։

Պէտք է նկատի ունենալ, որ քրտերու միայն մէկ մասն էր ենթարկուեր կառավարութեան հրամանին եւ մտեր Համիտիէ զունդերուն մէջ, իսկ անոնց բաւական հոծ բազմութիւնը, չուզելով բաժնուիլ իրենց գրեթէ անկախ վիճակէն, մերժած էր Համիտիէ զառնալ։ Ահա այդ ըմբոստները պատժելու լաւ առիթ մը կը ստեղծուէր Զէյթի փաշային համար։ Եւ իրապէս, 1894-ի վերջերը, մենք կը տեսնենք որ կառավարութեան զօրքերը կը թալանեն, կը ձերբակալեն, կը սպաննեն Ճիպրանցի, Ռաշկոտանցի, Փանջարանցի աշիրէթները եւ կ'աքսորեն ոմանք դէպի հարաւ։

Այսպէսով բոլորովին անսպասելի կերպով նպաստաւոր վիճակ մը կը ստեղծուի հայերու համար. Սասունցիք դուրս կուգան իրենց անտառներէն ու ժայռերու խութերէն, նորէն կը հաւաքուին իրենց գիւղերուն մէջ, կը վերաշինեն իրենց տները կառավարութեան, հիւպատոսներու, Առաջնորդարանի եւ «ազգի մարդոց» նպաստներով։ Եւ Սասունը, որ օգոստոսին կարծես մեռած էր, նորէն կեանք կ'առնէ։

Քննիչ Յանձնախումբեր։— Մինչեւ 1894-ի վերջերը, Դուրանի մէջ կը պահպանուի խաղաղ վիճակ մը, իսկ Սասունն ալ կը վերաշինուի եւ կը վերակենդանանայ։ Քննիչ յանձնախումբերը, որոնք բաղկացած էին Վանի եւ Պիթլիսի եւրոպական հիւպատոսներէն եւ կամ անոնց քարտուղարներէն, կը շրջին Մուշի եւ Սասունի մէջ։ Անոնց ներկայութիւնը աւելի եւս սիրտ կուտայ փախստականներուն, որոնք վերադառնալով կը վերաշինեն իրենց քանդուած օճախները։

Ժողովուրդը շատ փափուկ վիճակի մը մէջ էր դրուած։ Կառավարութիւնը ամենամեղմ վերաբերմունք ցոյց կուտար անոր հանդէպ եւ ամէն տեսակի խոստումներ կ'ընէր, բայց միւնոյն ատեն սպառնալիքներով կը հասկցնէր, որ բողոքագիր չներկայացնեն քննիչ յանձնախումբերուն։ Ընդհակառակը, կը պահանջէր որ հանրագրութիւններ կազմեն եւ շնորհակալութիւն յայտնեն կառավարութեան, Սասնոյ դէպքերուն մեղքը բարդելով յեղափոխականներուն եւ քրտերուն վրայ։ Այսպէս, օրինակ, կը վարուէր Պիթլիսի մէջ Թահսին փաշան հայ երեւելիներէն շնորհակալութեան հանրագրութիւն պահանջելով, թէեւ նոյն փաշան էր որ քրտերը մղեր էր Սասունի դէմ եւ իր զօրքերով յարձակում էր գործած անոր վրայ։ Պիթլիսի հայ երեւելիները, Աւետիս էֆէնտիի գլխաւորութեամբ, ո՛չ միայն կը մերժեն Թահսին փաշային ներկայացնել այդպիսի հանրագրութիւն մը, այլ՝ միացած Թուրքերուն հետ՝ բողոքագիր մը կ'ուղարկեն Թահսին փաշայի դէմ, վեր հանելով անոր կաշառակերութիւնները եւ բռնութիւնները։ Միայն Խաչիկ էֆէնտի անունով մէկը եւ քանի մը ուրիշ հայեր կը ներկայացնեն Թահսին փաշային պահանջուած հանրագրութիւնը։

Կառավարութիւնը նոյնանման փորձեր կ'ընէ նաեւ Ախլաթի, Մուշի, Դաշտի, Սասունի եւ շատ մը այլ վայրերու մէջ ու ամէն տեղ կը հանդիպի հայերու նոյն մերժողական վերաբերմունքին։ Շատ քիչ բացառութեամբ հայեր կը խարուին տալու շնորհակալական փաստաթղթեր, որոնցմէ առանձին յիշատակութեան արժանի է Տէր Բարսեղի եւ Կարապետ ու Եսայի վարդապետներու շնորհակալական ուղերձը։ Այդպէս վարուողները դաւաճան կը նկատուէին ժողովուրդին կողմէ։ Հակառակ բանտարկութեանց, սպառնալիքներու, ծեծերու եւ ամէն տեսակի ճնշումներու, ժողովուրդը գրեթէ ամէն տեղ շնորհակալութեան փոխարէն բողոքագիրներ ուղարկեց կառավարութեան եւ դուռը դանդատներ՝ եւրոպական հիւպատոսներուն։ Այդ ուղղութեամբ ահագին աշխատանք է թափած Վարդան վարդապետը։

Այդ ատենները Կովկասէն եկած էր Թաքուլը, որ կը թելադրէր ժողովուրդին չխաբուիլ կառավարութեան խոստումներէն, չվախ-

© National Library of Armenia

նալ բանտէ ու սպառնալիքներէ եւ ամենայն մանրամասնութեամբ իրենց դառն վիճակի պատկերը ներկայացնել Եւրոպական ու կառավարական յանձնախումբերուն, պահանջելով արդարութիւն: Կառավարութիւնը, տեսնելով հայերու ըմբոստ յամառութիւնը, քանի մը տեղ փորձեր բրաւ զործադրելու իր սպառնալիքները զանազան պատրուակներով բանտարկելով շարք մը աչքի ինկող մարդիկ: Բայց ի զո՞ւր: Հայերը, մտածելով որ ամէն մէկ նպաստաւոր արտայայտութիւն կառավարութեան հանդէպ դատանութիւն է հայ ազգին նկատմամբ, արդարութիւն եւ բարենորոգում կը պահանջէին անդադար: Անոնք հաւատացած էին, որ Եւրոպայի ներկայացուցիչները անպատճառ պիտի փրկեն զիրենք:

Իրրեւ բնորոշ մէկ նմոյշ կը բերենք հետեւեալ դէպքը: Կառավարական ներկայացուցիչները օր մը կուզան Սասնոյ Շէնիկ գիւղը, որ այրուած էր. հոն աւերակներու մէջ կերպ մը տեղաւորուած էին Շէնիկցիներու մնացորդները, որոնք նոր էին վերադարձեր իրենց հեռաւոր թաքստոցներէն: Կառավարութեան մարդիկ քիչ մը նպաստ բաժանելէ ետքը կ'աշխատին համոզել այդ թշուառները, որ ստորագրեն թուղթ մը, թէ Սասնոյ դէպքերու ամբողջ մեղքը կ'իյնայ դրսեցի խռովարարներուն վրայ եւ յարձակողները եղած են քրտերը, ոչ թէ կառավարական զօրքերը: Առանց տատանումի Շէնիկցիք կը յայտնեն, թէ անկարող են այդպիսի թուղթ մը ստորագրել ու դաւաճանել իրենց նահատակներուն: Ընդհակառակը, կըռուեր են կառավարութեան դէմ ինքնապաշտպանութեան համար, որովհետեւ կառավարական զօրքերն են եղած իրենց գիւղը քանդողը: Այս համարձակ պատասխանը կուտան Շէնիկցիք բեաթիպ Միքայէլի միջոցով: Թուրքերը կը վրդովուին եւ բռնելով Միքայէլը կը տանին Մուշ ու բանտ կը նետեն իրրեւ յեղափոխական եւ խռովարար: Ջարդուած ու փչրուած Շէնիկցիք չէին կրնար առաջուան պէս թուրք ոստիկաններու գլուխը կտրել եւ ազատել Գրգօր յաջորդ Միքայէլը: Բայց ամբողջ գիւղով — կին, երեխայ, տղամարդ — կը հետեւին ոստիկաններուն, կը մտնեն ձերբակալուած Միքայէլի ետեւէն Մուշ քաղաքը եւ ահագին գոռում գոչիւնով կը պահանջեն անոր ազատ արձակումը: Բողոքողներուն շուկային մէջ կը միանան ուրիշները, որոնք ահագին ամբոխ մը կազմած կ'երթան կառավարութեան դուռը եւ հիւպատոսներու բնակարանները արդարութիւն պահանջելով: Ոստիկանութիւնը կը միջամտէ եւ «խռովարար» Շէնիկցիները կ'առաջնորդէ զօրանոցի մօտերը, ուր անոնց կ'առաջարկէ հաց, պանիր եւ այլ ուտելիքներ: Անոնք կը մերժեն ուտել «բօմի» հացը, այլ կը պահանջեն բարենորոգում եւ իրենց Միքայէլի ազատումը:

Հետաքրքրական է, որ Շէնիկցի ամբոխի հետ կնոջական շրջերով ծպտուած քաղաք է մտած նաեւ Շէնիկցի Առաքելը, որ քանի մը կիներու հետ միասին նախօրօք պատրաստուած բողոքագրով մը կը մօտենայ անգլիական հիւպատոսի վրանին, կը յանձնէ բողոքագիրը եւ իրր ապացոյց կառավարական զօրքերու յարձակման ցոյց կուտայ իր մարմնի վրայ եղած սուինի բազմաթիւ վէրքերը (միայն զօրքն էր որ սուին ունէր):

Այսպէսով Սասունը, թէեւ անզէն ու մուրացիկ վիճակի մէջ, կը շարունակէր ըմբոստ մնալ պահանջելով արդարութիւն եւ ազատութիւն:

Բանտարկեալները.— 1894-ի ամառը եթէ յուզումնալից էր, աշնան փոթորիկը անցած էր եւ կը տիրէր խաղաղութիւն: Քրտերը, կառավարութենէն վիրաւորուած եւ մասամբ ալ զգուշանալով եւրոպացիներու ներկայութենէն, որեւէ շարժում չէին ըներ: Հայերը, լեցուած յոյսով ու հաւատով լաւագոյն ապագայի նկատմամբ, նոյնպէս հանդիստ էին: Սասունցին զբաղուած էր իր օճախի վերանորոգութեամբ եւ ունէր միայն մէկ մտահոգութիւն,— բանտարկեալները, որոնք Մուրատի գլխաւորութեամբ կը տառապէին տակաւին տանջանաց եւ յուսոյ անձկութեան մէջ:

Մուրատը երբ կը ձերբակալուի իր ընկերներու հետ, չուզեր հրաժարիլ իր յեղափոխական նպատակներէն: Ոստիկաններու հարցին թէ «դո՞ւ ես Մուրատ էֆէնտին», ան կը պատասխանէ. «Այո, Մուրատը ես եմ, բայց դեռ չհասայ Մուրատիս»: Տաճկական բոլոր չարչարանքները անկարող եղան սանձ դնելու անոր լեզուին, որ առիթէն օգտուելով կը շարունակէր գրգռիչ կերպով մերկացնել կառավա-

© National Library of Armenia

բութեան յոռի ընթացքը հայ ժողովուրդի հանդէպ։ Նոյն կերպ կը պահէին ինքզինքին ա-նոր ընկերները՝ Յովհաննէսը, Գէորգը, Աւօն եւ միւսները։

Բանտարկեալները Մուշէն Թիֆլիս եւ ապա դարձեալ Մուշ փոխադրուեցան դատական քննութեան նպատակներով։ Անոնք հայերու համար դարձած էին կենդանի նահատակներ, իսկ իսլամներու որոշ խաւերուն համար ալ համակրութեան առարկայ։ Թիֆլիսէն Մուշ փոխադրուելու ճանապարհին Գէորգը կը յաջողի ձեռք ձգել երկաթի երկու կտոր եւ կը պահէ պանոնք իր հագուստներուն տակ սեւ օրուայ համար։ Զմեռուայ վերջը կը ծակէ այդ երկաթի կտորներով բանտի պատը, լուր կուտայ Աւօին եւ ուրիշ երկու ընկերներու ու բոլորը միասին, մերկ ու բոպիկ, կը փախչին դէպի լեռները եւ կը ծածկուին դիշեր ատեն այրի մը մէջ, Առաքելոց վանքի շրջակայքը։ Դեռ Արաբօի ժամանակներէն ծանօթ ըլլալով Առաքելոց վանքի բոլոր ծակուծուկերուն, Գէորգ աննկատելի կերպով կը մտնէ վանքը ու կը ներկայանայ Յովհաննէս վարդապետին, որ ուրախութեամբ կը պահէ զայն ու ընկերները նկուղներու մէջ քանի մը օր, կը գտնէ անոնց համար հրացաններ եւ ապահով կերպով ճամբու կը դնէ զանոնք դէպի Սասնոյ լեռները։ Կառավարութիւնը ի զուր ջանաց ձեռք ձգել այդ վտանգաւոր մարդը, որ դեռ երկար տարիներ մեծ գլխացաւանք պիտի պատճառէր անոր։

Գալով Մուրատին, ան իբրեւ օտարական այդ աշխարհի մէջ, չէր ցանկար փախչիլ։ Որոշած էր, թէկուզ կախաղանի գնով, փրոփականտ ընել կառավարութեան դէմ։ Դատարանը կ'որոշէ 101 տարուան բանտարկութիւն եւ աքսոր դէպի Տրիպոլիս, որտեղէն ազատուեցաւ օսմ. սահմանադրութեան օրերուն եւ դարձաւ օսմանեան Երեսփոխան։ Յետոյ, 1915ի մեծ եղեռնին կախուեցաւ։

1895–1897

Աբրօի եւ Վարդան Վարդապետի շրջանը։— 1895 թիւէն հայութեան համար կը սկսի յուսոյ եւ յուսախաբութեան շրջան մը։ Մէկ կողմէն՝ բարենորոգմանց ծրագիրներ, եւրոպական միջամտութիւններ յօգուտ հայ ժողովուրդի, հասարակական կարծիքի հետաքրքրութիւն հայկական դատով. միւս կողմէն՝ այդ բոլոր սպասելիքներու ցնորականութիւնը, շարունակուող հարստահարութիւնները եւ տեղ տեղ կոտորածներ Տաճկաստանի մէջ։ Այս երկունքի շրջանին մէջ հայ ժողովուրդի առջեւ դրուած էր ցարդ եղած յեղափոխական գործունէութեանց վերագնահատման հարցը։ Ժողովրդական զանգուածները յուսալքման ենթարկուելով բոլոր դժբախտութեանց եւ անյաջողութեանց մեղքը փաթթեցին Հնչակեան կուսակցութեան վրայ։ Տեղի ու անտեղի քննադատութեանց կ'ենթարկուի մինչ այդ ղեկավարող կուսակցութիւնը, որ չունենալով խոր արմատներ ժողովուրդի մէջ եւ չդիմանալով աջէն ու ձախէն եկած հարուածներուն, կը քայքայուի եւ միայն անուանապէս կը շարունակէ իր գոյութիւնը։ Բազմաթիւ են այն պատճառները, որոնք 1895 թուականէն յետոյ կործանեցին այդ կուսակցութիւնը։ Մեր նիւթէն դուրս է այդ հարցի հետազօտութեամբ զբաղուիլ, այստեղ պիտի յիշենք միայն, որ ճիշդ այդ թուականէն իր ամբողջ հասակով հրապարակ կը նետուի երիտասարդ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ իր երկրորդական դիրքէն դուրս գալով տիրաբար կը խլէ հայ ժողովուրդի ղեկավարութիւնը։

Ռոստոմը։— Սասնոյ կռիւներէն եւ Էրզրումի ցոյցերէն յետոյ, երբ ամէն մարդ չուարման ու վհատումի մէջ էր, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն Ռոստոմը, թողլով Ժընեւը, ուր կը խմբագրէր Դրօշակ-ը, կ'անցնի Էրզրում։ Անոր գալով նոր թափ եւ նոր ուղղութիւն կը ստանայ յեղափոխական գործունէութիւնը Էրզրումի եւ Թիֆլիսի նահանգներուն մէջ։ Անոր գալէն վերջն է եւ անոր աշխատանքի հետեւանքով է, որ այդ նահանգներէն իսպառ կը վերնայ Հնչակեան կուսակցութիւնը եւ կը սկսի Հ. Յ. Դաշնակցութեան միահեծան գործունէութեան շրջանը։

Այդ անհերեւոյթ մարդու անշօշափելի գործերը դժուար է ճշդել, կարելի է զգալ կամ առաւել գիտնալ, բայց գրեթէ անկարելի է փաստել։ Հասարակ ուսուցիչ մըն է ան Էրզրումի մասնաւոր դպրոցի մը մէջ. համեստ է իր ապրուստով ու հագուստով եւ ոչ ոքի ուշադրութիւնը կրնայ գրաւել իր պարզ շարժուձեւերով.

© National Library of Armenia

չատ քիչ կը խօսի եւ գրեթէ բնաւ չի ճառեր. կը խուսափի ամէն տեղ իր մտքերը արտայայտելէ. զինքը շրջապատողներէն շատերը յաճախ չեն ալ հաւատար, թէ ան յեղափոխական կրնայ ըլլալ եւ նոյնիսկ երբեմն յեղափոխութեան ու ըմբոստութեան դասեր ալ կուտան այդ ամէն բանէ անտեղեակ թշուառ վարժապետին:

Բայց այդ մթութեան մէջ թագնուող մարդը խումբ մը գործիչներ էր ընտրած իրեն հետ երկիր, որոշ հրահանգներով զանոնք ցրուած էր Հայաստանի գաւառները եւ անոնց միջոցով է որ կը տարածէր իր եւ իր կուսակցութեան գաղափարները: Ան կարողացեր էր յեղափոխական գործիչներէն ընտրել այնպիսիները, որոնք ժողովուրդի մօտ ըլլալով իրենց հասկացողութեամբ, վարք ու բարքով եւ միաժամանակ մարսած ըլլալով Դաշնակցութեան սկզբունքները, ընդունակ էին հասկցնելու ժողովուրդին յեղափոխական գաղափարները: Ռոստոմը կրցած էր գտնել այնպիսի մարդիկ, որոնք պատրաստ էին մոլեռանդօրէն կռուիլ եւ զոհուիլ իրենց գաղափարներուն համար:

Թագնուած այդ տեսակ գործիչների եւ, Ռոստոմ աննկատելի կերպով կը ղեկավարէ անոնց գործունէութիւնը եւ հիմք կը դնէ գործի մը, որ անշեղ կերպով կը շարունակուի մինչեւ մեր օրերը: Անոր՝ գաւառները ղրկած գործիչներու շարքին մէջ կը գտնուէին Հրայրը (Բասեն), Թաթուլը (նախ Էրզրում, ապա Սասուն), Տուրպախը եւ Ջալլադը (Խնուս եւ Սասուն), Սերոբը (Ախլաթ), Աբրօն եւ Թումասը (Տարօն, Սասուն):

Ահա ասոնք են գլխաւոր գործիչները, որոնք 1895-էն սկսած, Ռոստոմի ներշնչումով, կը գործեն Էրզրումի եւ Պիթլիսի վիլայէթներուն մէջ:

Տեսնենք թէ ի՛նչ գաղափարներ է որ Ռոստոմ կը քարոզէ իր այս ժողովրդական գործիչներու միջոցով:

Առաջին, Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը պէտք է դարձնել ժողովուրդին համար սրբութիւն մը, որ համազօր ըլլայ կրօնական ըզգացումներուն եւ նոյնիսկ գերազանցէ զանոնք:

Երկրորդ, Հ. Յ. Դաշնակցութեան դրօշին տակ պէտք է կազմակերպել ըստ կանոնագրի քչերը միայն, որոնք ո՛չ միայն կը հասկնան ու կը համակրին ծրագրին, այլ նաեւ պատրաստ կ՚ըլլան անձամբ գործադրելու զայն եւ հարկ եղած պարագային նոյնիսկ զոհաբերել իրենց կեանքը:

Երրորդ, հայկական դատը Թուրքիոյ մէջ միայն ազգային եւ կրօնական դատ չէ, այլ եւ դասակարգային, դատ ճնշուածներու ընդդէմ ճնշողներու: Եւ քանի որ Թուրքերու եւ քիւրտերու մէջն ալ ճնշուածներ կան, պէտք է ջանալ անոնց հետ միանալ ընդհանուր ուժերով պայքարելու համար կառավարութեան դէմ, որ բոլոր ճնշող ուժերու՝ ազգային, կրօնական, դասակարգային՝ մարմնացումն է:

Չորրորդ, հայ ժողովուրդը որպէս հարբստահարուած տարր միայն զէնքով կրնայ փրկութիւն գտնել եւ միմիայն անոր զինուած դիմադրութիւնն է, որ կարող է կասեցնել կամ սահմանափակել բռնութիւններն ու կոտորածները:

Հինգերորդ, յեղափոխական գործիչը, մարտիկը, իր անձնական օրինակով, կարգապահութեամբ, տառապանքով, հերոսութեամբ եւ նահատակութեամբ պիտի դաստիարակէ ժողովուրդը ու պատրաստէ զայն ազատութեան պայքարին համար:

Ասոնք են ահա այն գլխաւոր սկզբունքները, որոնցմով կ՚առաջնորդուին Դաշնակցական գործիչները երկրի մէջ:

Մեր նիւթէն դուրս ըլլալով դրաղուիլ Էրզրումի նահանգի գործունէութեամբ, մենք կանգ կ՚առնենք միայն Պիթլիսի վիլայէթի, այսինքն Դուրան-Բարձրաւանդակի կեդրոնական Կոմիտէութեան շրջանի վրայ:

Թաթուլ.— Ճիշդ այն օրերուն, երբ Սասնոյ մէջ, աղէտալի կռիւներէն յետոյ, ընդհանուր վհատութիւն կը տիրէր եւ ամենուրեք խիստ հալածանք կար յեղափոխականներու դէմ, Թաթուլը Էրզրումէն կ՚անցնի Մուշ: Սկսնակ գործիչ մը չէր ան. 1890-էն սկսած աշխատած էր Էրզրումի շրջանին մէջ. Կերեկցեանի տէրօրը կատարելէ ետքը ստիպուած կ՚ըլլայ հեռանալ Կովկաս, ուրկէ Ռոստոմի թելադրութեամբ նորէն կ՚անցնի Բասեն, ուր կը մնայ մինչեւ Մուշ գալը:

Թաթուլը մինակ չէ. անոր կ՚ուղեկցին շարք մը ուրիշ ընկերներ, որոնք, բաժնուելով Դու-

© National Library of Armenia

ԳԻՒՂԱՇԷՆ (ՍԱՍՈՒՆ) ԳԻՒՂԱՑԻՆԵՐ
ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԾՆՈՂԲՆԵՐ

բան–Բարձրաւանդակի զանազան շրջանները, հիմք կը դնեն Հ. Յ. Դաշնակցութեան: Դժուար էր Թաթուլի եւ ընկերներուն գործը յուսալրման այդ օրերուն, եղած անյաջողութիւնները պատճառ էին դարձած, որ շատոնց լրտեսներն ու մատնիչները: Ժողովուրդը նախկին հաւատով չէր վերաբերուեր յեղափոխական գործիչներուն ու դպրոցներուն, իսկ ժողովուրդին առողջ մասն ալ դրական դրդապատճառներ կը պահանջէր շարունակելու համար յեղափոխութեան գործը:

Սասնոյ կռիւները ցոյց էին տուած, որ նոր քան զէնքի գործածութեան դիմելը անհրաժեշտ է զինել ժողովուրդը, ունենալ բաւականաչափ ռազմամթերք, դրամ եւ ամէն տեսակի պատրաստութիւն: Ատկէ զատ, ակներեւ կը դառնար, որ անհրաժեշտ է շահմանափակուիլ մէկ շրջանի մէջ, այլ ընդարձակել գործը ամբողջ երկրի մէջ: Այդ պարագային միայն պայքարը կրնար յաջողութեան աւելի մեծ հաւանականութիւն ներշնչել: Վերջապէս կը պարզուէր, որ մեծ յոյսեր կարելի չէ դնել Եւրոպայի վրայ, եւ այդ իսկ պատճառով անհրաժեշտ է լեղու գտնել հարեւան ճնշուած տարրերուն հետ ու անոնց հետ համագործակցաբար մղել պայքարը: Թաթուլը իր ձեռքի տակ չունէր հարկ եղած միջոցները դրուած պահանջներուն բաւարարելու համար. ան կը յաջողի միայն կազմել փոքրիկ խմբակցութիւններ եւ դնել զանոնք Վարդան վարդապետի ղեկավարութեան տակ, իսկ ինքը, մէկ երկու ամիս մնալէ վերջ, կը շտապէ անցնիլ Կովկաս, այն տեղէն ռազմական ուժ եւ դրամական միջոցներ հայթայթելու համար: Իրեն տեղը կը մնայ Արբոն քանի մը ընկերներով, որոնք կը քարոզեն Դաշնակցութեան ծրագիրը եւ առաջ կը բերեն կազմակերպութիւններ:

Թաթուլը չի հասնիր իր նպատակին: 1895ի վերջերը գնուած խմբերով Հրայրի հետ կը վերադառնայ Կովկասէն Բասէն: Թէև քանի մը կռիւներ կ'ունենան սահմանագլխի վրայ, բայց այնու ամենայնիւ կը կարողանան որոշ քանակութեամբ զէնք անցկացնել Բասէն: Սակայն վերջի վերջոյ ձերբակալուելով, 1896–ի յուլիսին Թաթուլը կ'առաջնորդուի Էրզրումի բանտը: Թուրքերը երկար շաբաթներ յետոյ զայն հանդիսաւոր կերպով կախաղան կը բարձրացնեն: Թաթուլ կը մեռնի կախաղանի վրայ դոշելով. «Կեցցէ՛ յեղափոխութիւնը, կեցցէ՛ ազատութիւնը. այս կախաղանով կը սպաննէք զիս միայն, բայց չէք կրնար սպաննել ազատութիւնն ու յեղափոխութիւնը: Այս կախաղանի միջոցով դուք պիտի տարածէք միայն իմ գաղափարները»:

Թաթուլը, որու մէկ ուրիշ կեղծանունն էր Աչոտ եւ իսկական անունը Արամ Արամեան, ինքը իր ձեռքով իր վիզը անցուց կախաղանի շուանը Էրզրումի հրապարակին վրայ 1899 օգոստոս 9–ին եւ թաղուեցաւ նոյն քաղաքի հայկական գերեզմաններուն մէջ, դիակը երեք օր ժողովուրդին ցուցադրուելէ վերջ:

Աբրօ — 1895–ի սկիզբները Պաքուէն ճամբայ կ'ելնայ դէպի Մուշ–Սասուն՝ Շապին–Գարահիսարցի նախկին ուսուցիչ մը Աբրօ անունով: Դաշնակցութեան հանգանակած գումարներէն դրամ վերցուցած իր հետ, ան կը փութայ առաջին օգնութիւնը հասցնել քանդուած Սասունին: Ան ալ Թաթուլին պէս կ'աշխատի Ռոստոմի ընդգրկած ուղիով: Անվտանգ հասնելով Մուշ, Թաթուլի եւ Վարդան վարդապետի հետ խորհրդակցելէ ետք, կը բաժնէ նպաստ Սասնոյ կարօտեալներուն գլխաւորապէս Մշոյ Առաջնորդարանի միջոցով: Թաթուլի հեռանալէն ետք ան կը մնայ մինակ եւ տեղական ուժերու հետ միասին կը զբաղի Սասունցիներու

© National Library of Armenia

քանդուած օճախներու վերաշինութեան գործով. կը պայքարի ժողովուրդի յուսալքման դէմ. հաւատ եւ յոյս կը ներշնչէ անոր եւ կը խանդարէ կառավարութեան էնթրիկները՝ հայերէն թրքանպաստ հանրագրեր կորզելու համար:

Արրօն կը յաջողի թէ՛ Մուշ քաղաքի եւ թէ՛ Մշոյ դաշտի մէջ բազմաթիւ համակիրներ հաւաքել Դաշնակցութեան դրօշին տակ եւ ստեղծել առաջին կանոնաւոր (ըստ կանոնագրի) Դաշնակցական կազմակերպութիւնը: Այդ շրջանին մէջն է որ Հ. Յ. Դաշնակցութիւնը արդէն կը դառնայ միահեծան քաղաքական ուժ մը Դուրան-Բարձրաւանդակի մէջ: Հնչակեանները դրեթէ կատարելապէս կ'անհետանան: Եւ այդ ամբողջական անհետացման պատճառներէն մէկն ալ այն էր, որ Հնչակեանները երբեք չի կրցան կանոնաւոր կազմակերպութիւն ստեղծել. անհատներն էին որ կը գործէին, որոնք կը կապէին զանգուածները աւելի իրենց հետ անհատապէս քան իրենց կուսակցութեան: Ասոր համար ալ երբ Տամատեաններն ու Մուրատները մէջտեղէն վերցան, կուսակցութիւնն ալ իրենց հետ անհետացաւ: Հնչակեան տեղական գործիչներն անգամ գաղափար չունէին Հնչակեան կուսակցութեան ծրագրի եւ նպատակներու մասին:

Հասկնալու համար մինչեւ 1895 թ. Դուրան-Բարձրաւանդակի շրջանին մէջ եղած կուսակցական պայքարը, արժէ կարդալ Դժոխքի (Հրայր կամ Արմենակ) նամակները «Դրօշակ»ի մէջ (տե՛ս թիւ 4 եւ 9, 1895 թ.): Դժոխքը, որ Հնչակեան կուսակցութեան սիւներէն մէկն էր եւ դեկավարը 1893ի Սասնոյ շարժումներուն, աննպատակայարմար եւ նոյնիսկ կորստաբեր կը դտնէ կուսակցութեանց զոյութիւնը. ան կ'ըսէ թէ Տամատեան եւ Մուրատ գործած են ո՛չ թէ Հնչակեան կուսակցութեան, այլ ժողովուրդի անունով: Դժոխքը ինքզինքը Հնչակեան չի սեպեր եւ ո՛չ ալ Դաշնակցական: Իր նամակներուն մէջ ան կ'ըսէ նոյնիսկ, որ Մուրատն (Սալը) ալ Հնչակեան չէ եղած. այդ պատճառով ալ թէ՛ ինք եւ թէ՛ Մուրատը թղթակցած են միաժամանակ թէ՛ «Հնչակ»ին եւ թէ՛ «Դրօշակ»-ին:

Հասկնալի է հետեւաբար, որ Հնչակեան դեկավարները չէին կրնար կազմակերպուած հնարքեր թողնել երկրի մէջ, որոնք շարունակէին իրենց գործը: Այդ պատճառով ալ 1895-ին, նոյնիսկ ամենաանպատաստ պայմաններու մէջ, դժուար չէր Արրօի եւ ընկերներուն համար միանգամայն վերցնել մէջտեղէն Հնչակեան կուսակցութիւնը Դուրան-Բարձրաւանդակի մէջ:

Արրօի առաջ բերած Դաշնակցական կազմակերպութիւնը լայնածաւալ չէր, շատ քչերը, ընտրեալները միայն կը մասնակցէին անոր. խիստ գաղտնի էր. անմիջական յեղափոխական քայլեր չէր առներ, այլ տենդագին թափով կը պատրաստուէր ապագայ գործունէութեան համար:

Դուրան-Բարձրաւանդակի գրեթէ բոլոր կեդրոններն ալ ունէին իրենց դեկավար Դաշնակցական անձնաւորութիւնները եւ Դաշնակցութիւնը, 1895-ի կէսերէն սկսած, արդէն կանոնաւոր կերպով ճիւղաւորուած էր բոլոր գաւառներու եւ գաւառակներու մէջ:

Արրօն ալ, ինչպէս Թաթուլը, գործի նախնական մասը կատարելէ ետք եւ գլխաւոր դեկավարութիւնը թողլով Վարդան վարդապետին, կ'երթայ Կովկաս՝ դրամ եւ զէնք հայթայթելու նպատակով: 1895-ի վերջերը յաջողութեամբ կը վերադառնայ բերելով իրեն հետ բաւականաչափ դրամ ու ռազմամթերք եւ կը ձեռնարկէ այժմ ալ Սասունի կազմակերպման:

Սասունը դեռ նոր էր աղատուած անցեալ տարուայ փորձանքէն: Դժուարութեամբ ընդառաջ կ'երթար յեղափոխական գործիչներուն եւ այնքան ալ հեշտութեամբ չէր հաւատար անոնց քարոզներուն: Արրօն կը յաղթահարէ այդ դժուարութեանց եւ կը յաջողի Սասնոյ գլխաւոր կեդրոններու մէջ եւս ստեղծել Դաշնակցական կորիզներ: Բայց Սիմալ գիւղի մէջ ընդունելութիւն չի դտներ: Երբ այդ գիւղէն կ'ուղեւորի դէպի Գեալիզուզան մարտ ամսու մէջ, սոսկալի բուք ու բորանի մը կը բռնուի եւ Գեալիզուզան չհասած՝ Թումասի հետ միասին փոթորիկի զոհ կ'երթայ: Յետոյ, երբ ձիւնը կը սկսի հալիլ, գիւղացիք կը դտնեն Արրօի եւ Թումասի դիակները եւ կը թաղեն զանոնք Գեալիզուզանի մէջ:

Վարդան վարդապետ.— Վարդան վարդապետի յեղափոխական կեղծ անուններն էին Յեսու եւ Վկայ: Եւ իրօք այս կեղծ անունները կը

© National Library of Armenia

ՓՈՒՐԻ ԳԻՒՂԻ (ՏԱԼԻՈՐԻԿ) ՈՒՍՈՒՑԻՉԸ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՎ

համապատասխանէին անոր: Խրիմեանի ժամանակներէն սկսած մինչեւ 1915 ան եղած է բոլոր գործերու եւ դէպքերու վկան ու միաժամանակ Յեսուի նման ժողովրդական առաջնորդ: Մնուած էր Ահարոնք գիւղը. իր վանական կրթութիւնը ստացած էր Սբ. Կարապետ վանքին մէջ եւ, ներշնչուած Հայրիկէն ու յետագայ յեղափոխականներէն, դարձած էր ո՛չ միայն հաւատոր, այլ նաեւ յեղափոխական առաջնորդ: Խարբանեան Ներսէս վրդ.-ի աբսորուելէն յետոյ Կինճի առաջնորդական հովութիւնը թողած ան կը շտապէ Ս. Կարապետ, Մուշը թափուր չթողելու համար եւ Ներսէս վրդ.-ի տեղը բռնելու, մանաւանդ որ Սասնոյ դէպքերը կը պատրաստուէին: Սասնոյ կոիւներէն յետոյ, երբ ընդհանուր վհատութիւն եւ լրում կը տիրէր, ան կը ջանայ պահպանել ժողովուրդի մէջ ապատատենչ ոգին եւ ամէն միջոցներով նպաստել Սասնոյ վերաշինութեան:

Սկիզբները ան կ'ընթանար Հայրիկի եւ Սարեանի ընդդէմ շաղով, յետոյ ծանօթանալով Տամատեանին, Ներսէս վրդ.-ի հետ միասին կ'օժանդակէ Հնչակեաններուն. իսկ 1895-ին, ծանօթանալով Թաթուլի եւ Արբոի միջոցով Դաշնակցութեան ղեկավարներուն, կը դառնայ ամենաջերմ կուսակիցը Հ. Յ. Դաշնակցութեան եւ Դուրան-Բարձրաւանդակի շրջանի դաշնակցութեան ամենախոշոր կեդրոնական անձնաւորութիւնը:

Ներսէս վրդ.-էն յետոյ, ըլլալով Երբեմն Սբ. Կարապետի եւ Երբեմն Մուշի փոխ-առաջնորդը, ան իր ձեռքին մէջ էր կեդրոնացուցեր ո՛չ միայն յեղափոխական, այլ նաեւ ժողովրդական կրթական եւ հոգեւոր գործերը: Եթէ հնար լինէր լրիւ կերպով ներկայացնել Վարդան վրդ.-ի կենսագրութիւնը, ատով արդէն պիտի պատկերանար Դուրան-Բարձրաւանդակի ժողովուրդի ամբողջ կեանքը:

Շատերը պիտի զարմանան, թէ ի՞նչպէս այդ վարդապետը, լինելով ամէն ինչ այդ շրջանի մէջ, միշտ խուսափած է բանտէն եւ աքսորէն, հակառակ անոր որ երբեք դադրած չէ գործելէ: Անոր անվտանգ մնալու գաղտնիքը իր բնաւորութեան մէջ պէտք է փնտռել: Ամէն տեղ ամէն բանի մասին չէր խօսեր. առհասարակ հրապարակով չէր խօսեր յեղափոխութեան մասին. համեստ էր արտաքնապէս. կապոյտ կտաւի ֆարաճա մը հագած, եէմէնիները ոտքին, դեղնած կապոյտ ֆէսը գլխին՝ զինք տեսնողը երբեք չէր կարծեր, թէ ան է Սբ. Կարապետի առաջնորդը: Աւելի կը նմանէր մեծակեաց վարդապետի մը. ուտելիքը նոյնպէս համեստ էր,— միշտ թանապուր, մածուն ու պանիր: Եւ ատիկա ո՛չ թէ աղքատութենէն էր կամ ժլատութենէն, այլ իր սովորութիւնն էր: Շատերը կը կարծէին, թէ մոլեռանդ կրօնական է եւ տեսնելով անոր համեստ կենցաղը, ջերմեռանդութեամբ նուէրներ կուտային: Շատերը սուրբի պէս կը պաշտէին զայն: Միաժամանակ ան շտապել էր եւ նոյնիսկ վատնող եւ ատոր համար ունէր անսպառ միջոցներ. ամբողջ ժողովուրդի լիակատար վստահութիւնը կը վայելէր եւ կարող էր անկէ ստանալ իբր նուէր կամ պարտք որքան որ կ'ուզէր: Բացի այդ, Սբ. Կարապետի հարուստ վանքն ալ իր բոլոր եկամուտներով իր տրամադրութեան տակ էր: Բայց այս միջոցները ան չէր ծախսեր իր վրայ եւ ո՛չ ալ թոյլ կուտար, որ միւսներուն կամ որեւէ կուշտ փորով մէկը վատնէ զանոնք: Հարիւրներով եւ հազարներով դեղին ոսկիներ կը բաժնէր ան թուրք պաշտօնեաներուն, քիւրտ աղաներուն, մեծին ու փոքրին. ջորիներով պանիր ու իւղ, ցորեն ու գարի, տասնեակներով ոչխարներ ու այծեր կը դրկէր ան Սբ. Կարա-

© National Library of Armenia

պետն նուէր ասոր ու անոր, ինչպէս ինք կ'ըսէր՝ «աչք քորցնելու» համար:

Եւ իրաւ Վարդան վարդապետ «նուէր» անուան տակ իր տուած կաշառքներով կը «քորցնէր» աչքը բոլոր անոնց, որոնք օգուտ կամ վնաս կարող էին հասցնել հայ ժողովուրդին եւ իրեն դէրի կը դարձնէր զանոնք: Լաւ ճանչնալով թուրքն ու քիւրտը, ան շարունակ կը կրկնէր. «Փամփուշտից, թոմ ու թֆանգից աւելի զօրեղ է դեղին, դեղին ոսկին: Տուր դու ինձ խարմարներով ոսկի, առանց կռուի ու դարմադալի հայոց թաղաւոր իսկ հաստատեմ»:

Այդ էր պատճառը, որ ղրկելով ինքզինքը եւ իր չքնաղատը, ան կը շոայլէր այս ձեւով վանքի եւ իր ինայողութիւնը: Սակայն դեղին ոսկին իր կարծիքով փրկութեան միակ զէնքը չէր. «Ապերախտներին, դաւաճաններին եւ թվ որ դրամին չի ենթարկուում, պէտք է վերացնել մէջտեղից. այդպիսիներին էլ արձիճ ու երկաթ կամ սապօնած շուան նուէր պէտք է տալ», կ'ըսէր յաճախ: Այդ պարադային ան կը դառնար անողոք եւ, կանգ չառնելով ո՛չ մէկ միջոցի առջեւ, ամենանենդ միջոցներով վերջ ի վերջոյ կորստեան կը մատնէր հակառակորդները:

Այդ կը զղային շատերը. ոմանք կ'ակնածէին անկէ տեսնելով անոր մէջ բարի, սուրբ, ողորմած վանական մը միայն. իսկ շատերն ալ կը վախնային իրմէ եւ հաւատարմօրէն կը ծառայէին իրեն, տեսնելով անոր մէջ վրիժառու, դաժան ու անթաղթելի հրէշ մը: Ան դաւադիր էր եւ ներող եւ անոր ոսկիին ու դաւերուն շնորհիւ շատ մը վալիներ, միթէսարիֆներ ու կառավարիչներ տապալուած են. շատ աշիրէթներ երկպառակտուելով կոտորած են զիրար եւ շատ ու շատ թշնամիներ դերեզման իջած անոր մեքենայութեանց հետեւանքով: Իսկ անոնք, որոնք իր նպատակներուն կը ծառայէին, կ'արժանանային դիրքի, փառքի եւ հարստութեան:

Այսպէսով այս համեստ մարդը իր ձեռքին մէջ կը պահէր թուրք պաշտօնեաներու, քիւրտ աշիրէթներու եւ պէկերու սանձը. կը կառավարէր զանոնք՝ առանց զղալ տալու անոնց այդ: Իսկ հայ ժողովուրդը փարած էր անոր իբր իր միակ ուժեղ պաշտպանին. անսահմանօրէն կը հաւատար անոր եւ կը սիրէր այդ տարօրինակ ու խորհրդաւոր վարդապետը:

ԼԵՒՈՆ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԸ

Գրի առաւ՝ Ն. ՀԱՆԴՈՅՑ

Լեւոն Թադէոսեան (Պապաչան*) Հ. Յ. Դաշնակցութեան վաստակաւոր գործիչներից մէկն է, որ գլխաւորապէս աշխատել է Բագուում: Նրա յուշերը վերաբերում են մեր կուսակցութեան պատմութեան վաղագոյն տարիներին: Նա մեզ տալիս է ժամանակագրական տեղեկութիւններ Վրաստանի եւ Անդրկասպեան երկրի մեր կազմակերպութեանց սկզբնաւորութեանց մասին, ինչպէս եւ կարեւոր մանրամասնութիւններ Գր. Միքայէլեանի կեանքից:

Գալով իր կենսագրական յուշերին՝ նրանք մեզ պատկերում են 90-ական թուերի միջին հայ մտաւորական կեանքի մի նմուշ՝ հետաքրքրական եւ արժանի արձանագրութեան, իբր նիւթ մեր մտայնութեան զարգացման պատմութեան համար:

Ես ծնուել եմ Գողթն գաւառի վերին Աղուլիս գիւղում 1865 թ.: Հայրս առեւտրական էր եւ համարեա միշտ բացակայ մեր գիւղից: Սկզբնական կրթութիւնս ստացել եմ ծխական դրպրոցում, որ երկդասեան էր (հինգամեայ դասընթացք ունէր): Իմ դասատուներն էին Բաֆֆին, Նիկ. Տէր-Ղեւոնդեանը, որ մի չարք դասագրքեր ունի յօրինած, մեր վանքի (Թոմա Առաքեալի) միաբան Գէորգ վարդապետ Սուրէնեանը, որ այսօրուան մեր կաթողիկոսն է եւ մի քանի ուրիշներ: Բաֆֆին աւանդում էր հայոց լեզու եւ պատմութիւն: Նա շուտով ընդհարում ունեցաւ հոգաբարձութեան հետ, հեռացաւ պաշտօնից եւ ազուլեցիներին ծաղրեց իր յու-

*) Ռուսերէն բառ է, որ կը նշանակէ հայրիկ:

© National Library of Armenia

չերի մէջ։ «Ոսկի Աքաղաղ»ի մէջ բերած անեկդոտն այն մասին, թէ մի հայ վաճառական կամենալով ուսերէն արտայայտել, որ ինքը մեծ օջախի որդի է, ասել է թէ՝ ես մեծ խոհանոցի որդի եմ, վերաբերում է մի աղուլեցու, եւ իրօք պատահած դէպք է։ Գէորգ վարդապետն աւանդում էր ընդհանուր պատմութիւն իր դասագրքով, որ թարգմանել էր ուսերէնից։

Նոյն դպրոցումն էր ուսանում եւ Քր. Միքայէլեանը։ Երբ ես առաջին բաժանմունքը մտայ՝ նա վերջին դասարանի աշակերտ էր եւ աւարտեց նոյն տարին։ Ամբողջ դպրոցում նա առաջին աշակերտն էր համարւում։ Աշխարհագրութեան դասատուն հիացած էր նրանից եւ չիմանալով ինչպէս արտայայտէ իր զոհունակութիւնը՝ ամսական թուանշանը վեց (6) էր նշանակել։

Քրիստափորն իմ մօրեղբայրն էր։ Մնողներին շատ վաղուց կորցնելով՝ նա մնաց իր հօրեղբայր Օհանէսի մօտ իր քոյր Մանուշակի հետ, որ դեռ կենդանի է։ Նրան պահում էին իբր որբ եւ տանն աշխատեցնում. ամառն ուղարկում էին 2—2½ վերստ հեռաւորութեամբ այդուց ջորիով խոտ ու թթի տերեւ բերելու։ Հայրս սովորաբար մնում էր Զաքաթալայի շրջանի կախ աւանում եւ երկու-երեք տարին մէկ անգամ էր տուն գալիս։ Երբ մայրս երեխաներին սաստել ուզէր՝ Քրիստափոր քեռու անունը կը տար։ Նա տասներեք տարեկան էր, մենք՝ եօթ-ութ, բայց բաւական էր, որ մայրս ասէր թէ՝ «տեսէ՛ք, Քրիստափոր քեռուն կ'ասեմ»— մենք անմիջապէս սոսկում էինք։ Թէեւ նա ո՛չ բարկանում էր մեզ վրայ եւ ո՛չ էլ ծեծում, բայց ազդում էր հասակաւոր մարդու պէս. մենք նրանից պատկառում էինք։

Մինչեւ այսօր էլ չգիտեմ, թէ ի՞նչն էր այդ ազդեցութեան պատճառը։ Պէտք է կարծել, որ նա ազդեցիկ էր նաեւ դպրոցում։

Թէեւ մեր տան մեծ երեխան ես էի, բայց չափազանց անհամարձակ եւ ամաչկոտ էի։ Այն ժամանակ երեխաներն ամբողջ օրը մնում էին դպրոցում, որ գտնուում էր Թոմայ Առաքեալի վանքում, գիւղի վերի ծայրին։ Ում տունը մօտ էր դպրոցին՝ ճաշին տուն էր գնում, իսկ ովքեր մեզ նման հեռու էին ապրում՝ մնում էին դպրոցում։ Առաւօտները մայրս ուտելու շատ բան էր դնում հետս. բայց ես մի մեծ դասընկեր ունէի, որ չարունակ զօրով խլում եւ ուտում էր ճաշերս։ Մի օր դանդատուեցի Քրիստափորին. ի՛նչ ասաւ կամ ի՛նչ խօսեց՝ չգիտեմ, բայց տղան վերջ տուաւ իր յափշտակութեան։

Քրիստափորը չորս քոյր ունէր, չորսն էլ նրան շատ էին սիրում. միակ եղբայրն էր։ Որի տունը գնում էր՝ լաւ նայում էին. բայց ամենից շատ մեր տունն էր գալիս. նախ՝ մեր տունը մօտ էր եւ յետոյ՝ մայրս էր մեծ քոյրը։ Մինչեւ վերջն էլ մեր տան հետ սերտ կապով մընաց. մեր տան անդամն էր, շատ էր հոգում մեր մասին եւ փոխարինում էր հօրս։

Դպրոց մտածս տարին Քրիստափորն աւարտեց ու գնաց Թիֆլիս ուսումը շարունակելու։ Տաս տարեկան էի, որ հայրս մեռաւ. ենք եղբայր ու մի քոյր մնացինք որբ։ Հօրս պարտքերը վճարելուց յետոյ մեզ մնաց 4000 ռուբլի։ Մայրս կամենում էր, որ մի գործի մտնեմ եւ աշխատանք անեմ ու տունը պահեմ։ Ես չէի հաշտւում այդ մտքի հետ, մանաւանդ որ Քրիստափորի օրինակն ինձ հանգիստ չէր տալիս. ե՛ս էլ ուզում էի ուսումս շարունակեմ։ Այս մասին շարունակ մեր տանը վէճ ու լաց էր լինում։

Այդ ժամանակ էր, որ Դոք. Տէր-Միքայէլեանի*) հայրը՝ Բաղդասարը վիճակահանութեան 200.000-նոց տոմս չահեց։ Կարծում էինք, թէ ինձ կ'օգնի ուսումս շարունակելու. այդ յուսով մնացի գիւղում եւ երկրորդ տարին նստեցի վերջին դասարանում, թէեւ աւարտել էի։ Բանակցութիւնն անյաջող անցաւ, մերժեց. եւ ես տարիս կորցրի։ Երբ մայրս նորից պընդեց, որ մի գործի մտնեմ՝— ասացի. «Ուղարկիր Թիֆլիս քեռու մօտ. ինչ գործի յարմար տեսնի՝ թող տայ»։ Միտքս այն էր, որ գնամ ասեմ, թէ ուրիշ բան չեմ ուզում բացի ուսումս շարունակելուց։ Մայրս համաձայնեց եւ ես 1879 թ. ապրիլի վերջերին հասայ Թիֆլիս։

Այն ժամանակ Քրիստափորն ապրում էր Մուշտայիդի**) մօտ, ուսանում էր ուսուցչա-

*) Երեւանի քաղաքային խորհուրդի նախագահ։

**) Քաղաքային այգի Թիֆլիսում, Կուր գետի ափին։

© National Library of Armenia

կան ինստիտուտում և փոխադրուել էր 3րդ դասարանից 4-ը: Սեւ մազերն երկար թողած, մի գիրք ձեռին, պատչդամում նստած էր ինչ որ օրիորդի հետ, երբ ես բակը մտայ:

Իմ դալն անսպասելի էր. ինձ թուաց, որ չուրախացաւ ինձ տեսնելով: Նրա սառնութիւնն ազդեց վրաս: Հարցրեց. «Ո՞ր ես եկել»: Ասի. «Եկել եմ, որ ուսումի տաս» եւ յանձնեցի մօրս նամակը: Կարդաց եւ ասաւ. «Եթէ ուզածդ ուսում է՝ պատրաստ եմ օգնելու. իսկ եթէ միտքդ վաճառական դառնալ է, ինչպէս մայրդ է գրում, կարող ես եկածդ ֆուրգոնով յետ դառնալ»:

Յետոյ իմացայ թէ ինչո՞ւ ինձ տեսնելով մտահոգ դարձաւ: Նա ապրում էր մի մասնաւոր դասով, որի համար ամսական ստանում էր 25 բուրլի: Գիշերօթիկ էր մի գերմանացու մօտ: Ինձ պահելու համար նա պիտի ստիպուէր մի նոր դաս գտնելու, որ դժուար չէր իրեն համար, քանի որ հռչակուած էր իբրեւ լաւ պարապող, — բայց իր ժամանակը նա շատ թանկ էր գնահատում:

Ես շատ նիհարած էի եւ ճամբից նեղուած. մեծ խնամք ունեցաւ վրաս: Նա հոգաց ապրուստ եւ տուաւ իր հին հագուստները: Ասաւ, որ ինձ կը պատրաստէ Ներսիսեան դպրոցի երրորդ դասարանի համար: Մեր գիւղից եկել էին եւ մի քանի ուրիշ աշակերտներ, սրանց թւում էր հօրեղբօրս որդին՝ Քրիստափոր Թադէոսեանը (բանաստեղծ, «Երբ Ալեկոծ Ծովի Վրայ» երգի հեղինակը): Ամենքն էլ մտադիր էին երկրորդ դասարանը մտնելու: Քրիստափորն ինձ դժուարութեամբ համոզեց, որ երրորդի համար պատրաստուեմ: Վախենում էի ամօթով մնամ: Նա թէ՝ «կարո՛ղ ես, մի՛ վախենայ» եւ հետս սկսեց պարապել գլխաւորապէս ռուսերէն, ֆրանսերէն եւ թուաբանութիւն:

Յետագայում ռուսերէնին ես լաւ աշակերտ էի համարւում դպրոցում. դրանով պարտական եմ Քրիստափորին, որ շատ լաւ ըմբռնել տուեց քերականութիւնը: Նա շատ լաւ էր պարապում. նեարդային էր. զգում էի, որ ժամանակը սիրով չի կորցնում ինձ համար. բայց զոհ էր մնում ինձանից: Օգոստոսը մօտենում էր. վախենում էի չյաջողեմ. ընկերներս ծաղրում էին, որ պատրաստուում եմ երրորդի համար. անյաջող ելքից զարհուրում էի եւ երբ մենակ էի մնում՝ շոքում աղօթում էի, որ չը-կորուեմ քննութեան ժամանակ:

Դեռ Ադուլիս եղած ժամանակ ինձ վրայ խորին տպաւորութիւն էր արել Արդար Գուլամիրեանը, որ յետագայում քահանայ դարձաւ Մեսրոպ անունով. նա մեզ կրօն էր աւանդում, ամենաբարձր ոգեւորութեամբ պատմելով Քրիստոսի կեանքը: Նա դրաւ իմ մէջ բարոյական կեանքի բոլոր հիմքերը եւ Քրիստոսին դարձրեց մի իդէալ, որին պէտք էր ձգտել: Նրա ազդեցութեան տակ՝ մեր հարեւաններին շուրջս հաւաքած՝ երեկոները ես պատմում ու կարդում էի Քրիստոսի կեանքը:

Ներսիսեան դպրոցի հինգերորդ դասարանումն էի, երբ առաջին անգամ իմացայ, որ Քրիստոս աստուած չէ: Ընկերներից մէկը՝ Հմայեակ Մամիկոնեան՝ մի օր ինձ ասաւ, թէ մի գիրք է կարդացել Ռենանի գրած, ուր ասուած է, որ Քրիստոսը մարդ է եղել, մեզ պէս ծնուել ու մեծացել է, մեզ պէս էլ մեռել... Այս յայտնութիւնը շատ ծանր ազդեց ինձ վրայ, բայց Քրիստոսի հմայքը դրանով չպակսեց:

Քննութիւնս շատ թեթեւ անցաւ: Ստեփ. Պալասանեանը մի երկու նախադասութիւն հարցրեց Ֆրանսերէնից, մի քանի բան Հայոց Պատմութիւնից եւ զոհ մնաց: Ինձ թուաց, որ ուզենայի՝ կարող էի չորրորդ դասարան մըտնել: Քրիստափորը լսելով յաջողութիւնս՝ ասաւ. «Տեսա՞ր. իսկ դու վախենում էիր. քաջ պէտք է լինել»:

Ես ապրում էի Քրիստափորի մօտ: Ինձ պահելու համար նա ստիպուած եղաւ մի նոր մասնաւոր դաս գտնելու, որից ստանում էր 25 բուրլի եւ 20-ը տալիս էր ինձ պահելու վարձ: Մեր ապրած ընտանիքը մի աղջիկ ունէր — Սոֆիա Բոգդանովնա — որ սիրում էր Քրիստափորին. կարծեմ լաւ աղջիկ չէր. Քրիստափորն յետագայում ասում էր, թէ դրա համար չամուսնացաւ նրա հետ: Եւ իրօք, Քրիստափորի հեռանալուց յետոյ՝ նա մի ուրիշի հետ ընկաւ:

1880 թ. Քրիստափորն աւարտեց ուսուցչական ինստիտուտը եւ դնաց Ադուլիս: Մեր գիւղի հոգաբարձութիւնը նրան դրամ էր տուել իր ուսումը շարունակելու այն պայմանով, որ աւարտելուց յետոյ չորս տարի ծառայէ հայրենի գիւղի դպրոցում. տուած դրամը ռոճիկից

© National Library of Armenia

դուրս չէին գալու։ Մինչեւ 1884 թ. նա մնաց Ազուլիս իբր ուսուցիչ։

Այնտեղ նա նոյնանման մի պայման է կապում հողաբաշխութեան հետ նաեւ իմ մասին. ես պէտք է վերջին 6րդ եւ 7րդ դասարանների համար ստանայի 400 ռուբլի եւ աւարտելուց յետոյ չորս տարի ծառայէի մեր դպրոցում՝ տարեկան ստանալով 300 ռ., որից պէտք է ամէն տարի դուրս գային 100-ական ռուբլի։

Ներսիսեան դպրոցում ես մնացի մինչեւ 1884 թ. վեւտրուար ամիսը, երբ ծնոր հիւանդացայ։ Դասատուներից աշակերտների վրայ ամենալաւ տպաւորութիւն էր թողնում Արիստոդոմ Յովհաննիսեանը, որ աւանդում էր ֆիզիքա եւ մաթեմատիկա։ Հայոց լեզուն աւանդում էր Մկրտիչ Պալեան։

Իմ ժամանակ Ներսիսեան դպրոցն երկու տեսուչ ունեցաւ. Պրոֆ. Սողոմոն Եղիազարեան եւ Արշակ Նահապետեան. առաջինն աւելի սիրով էր աշակերտների հետ, եւ սրանք նրան համակրում էին եւ ակնածում նրանից։ Արշ. Նահապետեանը, որ յետոյ կուսակրօն դարձաւ, պաշտօնական մարդ էր։

Պետրոս Սիմոնեանը, «Մեղու» թերթի խմբագիրը, աւանդում էր ընդհանուր պատմութիւն. սովորաբար նստում էր ծունկը ծալած եւ կանֆէտը բերանում. լաւ պատմող էր։

Շիշմանեանը (Ծերենց) դասաւանդում էր ֆրանսերէն եւ հայոց պատմութիւն։ Աշակերտները նրան շատ էին սիրում. երբ դաս չէին իմանում՝ խօսեցնում էին։ Դասաւանդել չգիտէր. սիրում էր երկար պատմութիւններ անել եւ դասից դուրս խօսել։ Թէեւ հիւանդոտ՝ բայց շատ ժիր ծերուկ էր. խօսում ու պատմում էր վարակիչ ոգեւորութեամբ։

Կրօնն աւանդում էր Սուսանաջեան քահանան։ Սկզբի երկու տարին նրա դասերը շատ լաւ էի սովորում։ Բայց նա հերթով հարցնելու սովորութիւն ունէր եւ ամէն մարդ իր հերթին էր դաս պատրաստում։

Մի օր Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսը, որ Թիֆլիսի թեմի առաջնորդն էր, եկել էր մեր կրօնի դասին։ Կարծելով թէ առաջուան պէս դասերս լաւ գիտեմ՝ Սուսանաջեանն ինձ կանչեց, որ դաս պատմեմ։ Ասի.— «Չգիտեմ»։ Սրա վրայ եպիսկոպոսը հարցրեց թէ ո՞րտեղացի եմ։ Ասի.— «Ազուլեցի»։ Զարմանց զայրացաւ եւ սկսեց մի կրքոտ յարձակում մեր գիւղացի աշակերտութեան վրայ. «Դուք ապշ ու եկեղեցի չէ՛ք ճանաչում»... եւն.

Յետոյ երեւաց, որ վերջին դասարաններում ինչ որ խառնակութիւն է եղած, ուր ազուլեցի Ներսէս Դաւթեանը մեծ մասնակցութիւն է ունեցած եւ Սրբազանին այդ կարծիքին է բերած մեր մասին։

Թէեւ ուսանում էի Ներսիսեան դպրոցում, բայց դպրոցի կեանքով չէի ապրում։ Իմ կեանքն անցնում էր տանը, Քրիստափորի չրջանում, ուր սովորութիւն ունէին ընկերովի կարդալու եւ զրուցելու։ Գիտեմ, որ այն ժամանակ զանազան խմբակներ կային։ Ես մասնակցում էի աշակերտական մի երկսեռ խմբակի, ուր միայն ես էի մեր դպրոցից։ Գլխաւորապէս կարդում էին ռուս հեղինակների եւ քննադատների գործերը, յատկապէս Դոբրոլիւբով*)։ Այս խմբերը կազմում էին Նարոդովոլցիները**)։ Յիշում եմ, որ Քրիստափորն այն ժամանակ յայտնի Նարոդովոլց Նիկոլայ Երմաուի հետ շատ մտերիմ էր. յաճախ գալիս էր Քրիստափորի մօտ եւ ժամերով վիճում էին։ Իմացայ նաեւ, որ այդ ժամանակ Քրիստափորը պարապում էր ինչ որ բանուորական խմբի հետ։ Թէ՛ աշակերտական խումբը եւ թէ՛ դպրոցն ինձ շատ բան չտուին։ Ինձ շատ աւելի օգնեց ինքնաչխատութիւնս։ Յիշում եմ, որ երկու տարի շարունակ յափշտակուած էի Ուշինսկու հռչակաւոր գրքի ընթերցումով — «Մարդն իբր դաստիարակութեան առարկայ»։

Ժամանակի բարոյական մթնոլորտը բնորոշելու համար հետաքրքրական է իմ հիւանդութեան դէպքը։ Քննութիւնները մօտ էին. ես շատ էի թուլացել մարմնով. տանից դպրոց գնալիս ու գալիս երկու-երեք տեղ նստում էի, որ հանգստանամ։ Մի օր Սող. Եղիազարեանը տեսաւ ու հարցրեց.— «Ի՞նչ է, հիւանդ ե՞ս»։ Ասի.— «Ո՛չ մի տեղս չի ցաւում, բայց շատ թոյլ եմ»։ Մեր աշակերտներից Մկ. Մանու-

*) Ռուս մեծանուն քննադատ 1858—1861 թ. թ.։

**) Ռուս յեղափոխականներ, «Նարոդնայա Վոլեա» — Ժողովրդական Ազատութիւն — կոչուած կազմակերպութեան անդամները։

© National Library of Armenia

զարեանին պատուիրեց, որ ինձ տանի բժ. Գասպարեանի մօտ:

Գնացինք. մարդ շատ կար: Երբ ներս մըտանք՝ առանց ինձ ձեռք դիպցնելու, սեղանի միւս կողմից ուշադիր ու երկար նայեց եւ ասաւ կողիս. (բժ. Գասպարեանը շատ բարի, բայց միաժամանակ եւ շատ բուռ մարդ էր):— «Քեզ դրկողին կ'ասես, որ մի լաւ, արեւոտ սենեակ ճարի քեզ համար, յետոյ ես կը բժըշկեմ. դու շատ ծանր հիւանդութիւն ունես»:

Դուրս եկանք: Ճամբին ուշաթափ եմ լինում եւ ուշքի գալիս երեք ամիս յետոյ: Յետոյ երեւաց, որ որովայնի տիֆ եմ ունեցել:

Երբ ապաքինեցի, ինձ պատմեցին, թէ տես նելով հիւանդ վիճակս՝ ընկերներս մտածում են ո՞րն է լաւ՝ տա՞նը խնամել թէ՞ հիւանդանոց տանել: Բժ. Գասպարեանն ասում է. «Եթէ լաւ նայէք, կանոնաւոր հերթապահութիւն անէք եւ բոլոր ասածներս ճշդութեամբ կատարէք՝ տանը բժշկելն աւելի լաւ է, այլապէս՝ պէտք է հիւանդանոց տանէք»: Ընկերներս ժողով են անում. ձայները բաժանւում են: Մանուշարեանն ասում է. «Մի՞թէ չենք կարող ամէն մէկս մի փոքր նեղութիւն յանձն առնել մեր ընկերոջ համար եւ կանոնաւոր հերթապահութիւն սահմանելով՝ խնամել նրան»: Որոշում են այդպէս անել:

Եւ իրօք, չնայելով, որ քնութիւններ ունէին եւ ժամանակը թանկ էր ամէնքի համար, բայց եւ այնպէս սահմանում են կանոնաւոր հերթապահութիւն: Իմ խմբակի անդամուհիներից մէկի մայրը, Տիկ. Դէզարրի, որ մի չքաւոր ֆրանսուհի էր, յաճախ մասնաւոր էր ուղարկում ինձ համար: Ես սպիտակեղէն չունէի. երբ ուշքի եկայ՝ տեսայ մի դէզ սպիտակեղէն են բերել ինձ համար: Ընկերներս պատմել էին դասատուներին իմ վիճակը եւ նրանք, յատկապէս Սող. Եղիազարեանը, հոգացել էին պէտքերս: Բժ. Գասպարեանն օրն երեք անգամ եկել էր այցելութեան, հարկաւ առանց որեւէ վարձատրութեան: Երբ առաջին անգամ աչքերս բացի՝ բժիշկն ասաւ. «Համա ճակատ ունես հա՛...»: Երեւաց, որ երկու թոքի բորբոքում եմ ունեցել...

Երբ անկողնից վեր կացայ՝ ասին, տեսուչը կանչում է: Գնացի: Ասաւ. «Պէտք է քեզ քննենք, որ աւարտման վկայական տանք»: Ասի. «Ես ի՞նչ կարող եմ պատասխանել այս երկարատեւ հիւանդութիւնից յետոյ: Ասաւ. «Վնաս չունի, կ'ասես՝ ինչ որ գիտես. եթէ չքննենք՝ դպրոցի կէսը կը հիւանդանայ եւ առանց քննութեան՝ վկայական կ'ուզի»: Քննեցին. ամէն մէկը մի թեթեւ բան հարցրեց. աւարտման վկայական տուին, շնորհաւորեցին եւ պատուիրեցին անմիջապէս մեկնել գիւղ: Բժիշկն էլ նոյն խորհուրդն էր տուել: Մի ամսից յետոյ վերադարձայ Ագուլիս:

Գիւղ մեկնելուցս առաջ Քրիստափորից նամակ ստացայ, որով յայտնում էր, թէ ինքը հեռանում է Ագուլիսից, որ սկսած գործեր կան, ուստի պէտք է շտապեմ գիւղ եւ որ ուսուցչական խումբն սպասում է ինձ. «Ե՛կ, քանի այստեղ եմ»,— գրում էր նա:

Այդ ժամանակները մեր մտաւորականութեան մէջ իշխում էր մի տրամադրութիւն, որ գալիս էր Ռուսաստանից. «դէպի գիւղ»: Ամէնքն երազում էին գնալ գիւղ եւ ծառայել ժողովուրդին: Ես նոյնպէս իմ կեանքի նպատակը գիւղացիներին ծառայելն էի համարում:

Մի ուրիշ գաղափար, որ նոյնպէս տիրական էր եւ նոյնպէս գալիս էր Ռուսաստանից՝ ասում էր, թէ ով ուխտում է ծառայել ժողովուրդին՝ պէտք է հեռու մնայ սիրուց եւ ընտանիքից, պէտք է դրանցից բարձր լինի: Ես էլ այդպէս էի մտածում:

Հասնելով Ագուլիս՝ տեսայ Քրիստափորին. լսեցի, որ երկու խումբ է կազմել. մէկը՝ կանանց, միւսն արհեստաւորներից, որոնց հետ պարապել է կանոնաւոր ընթերցանութեամբ եւ որոնց քարոզել է ազատ գաղափարներ ընդդէմ ռուս բռնապետութեան: Իր նոր գաղափարները տարածելու համար Քրիստափորը մի ձեռագիր գրքոյկ էր կազմել հարց ու պատասխանի ձեւով: Յիշում եմ՝ այնտեղ պարզաբանուած էր Աստծու գաղափարը եւ թէ որքան յետադիմական ու վնասակար է այն վարդապետութիւնը, որ քարոզում է յոյսն Աստծու վրայ դնել:

Քրիստափորն ինձ զգուշութեան հրահանգներ տուաւ եւ ծանօթացրեց իր խմբերի հետ: Զարմացայ այն մեծ հեղինակութեան վրայ, որ ձեռք էր բերել թէ՛ գիւղում եւ թէ՛ դպրոցում: Այսպիսի հեղինակութեան յետագայում ոչ ոք չհասաւ: Աչքովս տեսայ այն անօրինակ հա-

© National Library of Armenia

մակրանքը, որ կար դպրոցում նրա հանդէպ եւ նա վարանքով հարցնում էր ինքս ինձ՝ ի՞նչպէս պէտք է նրան փոխարինեմ:

Դպրոցում հայ երեխաների հետ դաս էին առնում եւ երեք թուրք տղայ: Լսեցի, որ այդ նորօրինակ երեւոյթը Քրիստափորի գործն է, որի համար երկար ու յամառ կռիւ էր մղել հասարակութեան եւ հոգաբարձութեան դէմ, մինչեւ որ կարողացել էր համոզել, թէ իրենց իսկ շահն է պահանջում տեղացի թուրք երեխաներին մեր դպրոցում դաստիարակելը:

Հետաքրքրական է մի միջադէպ. Քրիստափորն աշակերտներից մէկին թոյլ է տալիս դասի ժամանակ դուրս գալ ջուր խմելու: Ժամանակի տեսուչը՝ Լ. Թիւսիկեան, այդ «անկարգ» աշակերտին ծեծում է. Քրիստափորը պայրացած դուրս է գալիս դասարանից եւ ձեռնափայտով թակում է տեսչին... Պարզ է աշակերտութեան համակրանքը... ինքը զղջում էր արածի համար: Տեսուչը դանդաղով դիմում է Օրդուբաթ: Քրիստափորին համակրողները միջամտում են եւ գործին ընթացքը դադարեցնում:

Ադուլիսի հասարակ ժողովուրդը պաշտում էր Քրիստափորին. միջին խաւն ու վերին խաւի խոշոր մասը մեծ համակրանք ունէին նրա հանդէպ. նրան չէին սիրում մի քանի «տուղեր» միայն, որոնց դէմ նա չարունակ պայքար էր մղել, թէեւ սրանք եւս խոստովանում էին նրա կարողութիւնն ու բարոյական մաքրութիւնը:

Չորս տարի չարունակ մնացի Ադուլիս ուսուցչի պաշտօնով: Առաջին տարուայ կիսին փակուեցին Կովկասի հայոց դպրոցները, այդ հաշւում է մերը (առաջին փակումն, 1855 թ.):

Մի օր գաւառապետն եկաւ Օրդուբաթից եւ հոգաբարձուների հետ մտնելով դպրոց՝ կարգադրեց երեխաներին տուն ուղարկենք, քանի որ հայոց դպրոցները փակելու հրաման է արձակուած: Բարձրացաւ մի անպատմելի լաց ու կոծ: Երեխաներն ամուր բռնում էին նստարաններն ու պոկ չէին գալիս. ստիպուած եղանք ուժով հեռացնելու եւ տներն ուղարկելու:

Այդ ժամանակ Վերին Ադուլիսում երկու դպրոց կար. մէկը տղաների, որ գտնւում էր Ս. Թադէոս Առաքեալի վանքի բակում եւ ունէր չորս դասարան եւ 110–120 աշակերտ. միւսն աղջիկների, որ գտնւում էր Ս. Քրիստափոր եկեղեցու բակում, ունէր հինգ դասարան եւ 150–160 աշակերտուհի:

Դպրոցում ես աւանդում էի գլխաւորապէս հայերէն: Շաբաթական երեք ժամ ձրիաբար աւանդում էի ֆիզիքա դպրոցն աւարտած աշակերտուհիներին եւ կանանց (գիւղի տղաները, դպրոցն աւարտելով՝ հեռանում էին օտար վայրեր գործ ու ապրուստ ճարելու), միաժամանակ տարածում էի ժամանակի գաղափարները կրթուած մայրերի անհրաժեշտութեան մասին եւ արծարծում էի ընթերցանութեան սէր: Գաղտնի պարապում էի եւ Քրիստափորի կազմած խմբերի հետ. կարդում էինք որեւէ գիրք կամ յօդուած քաղաքական բովանդակութեամբ եւ վիճաբանում յարուցուած խնդրի մասին:

Մնողներն արգելքներ էին յարուցանում այդօրինակ պարապմունքների դէմ եւ աղջիկները հաւաքում էին ծածուկ: Սկզբում 15–20 հոգի էին, յետոյ նրանց թիւը պակասեց. պատճառը մասամբ թաղերի հեռաւորութիւնն էր: Իմ առաջարկով օրիորդների խմբակը ձեռնարկեց մի թերթ՝ շրջակայ գիւղերի գրագէտ կանանց հետ կապ պահելու համար: Թերթի անունը դրինք «Ցառաջ»: Խմբագրում էի ես. խմբի անդամները յօդուածներ էին գրում, պատրաստւում էր 20–25 խմորատիպ օրինակ եւ տարածւում շրջակայ գիւղերը: Այսպէս լոյս տեսան 6–7 համար: Յօդուածները վերաբերում էին աղջիկների դաստիարակութեան, կրթուած մայրերի անհրաժեշտութեան, եւն.:

Քանի որ դրսից եկած դասատուները շուտ-շուտ փոխւում էին՝ մենք մտածեցինք տեղացի ընդունակ, բայց չքաւոր աշակերտուհիներից մի քանիսին պատրաստենք եւ ուղարկենք Թիֆլիս ուսաց լեզու եւ ձեռագործ սովորելու, որ վերադառնալով գիւղ՝ մնայուն դասատուներ ունենանք: Այս մտքի կողմնակից ուսուցիչներս որոշեցինք իրագործել մեր մտադրութիւնը: Ընտրեցինք երկու հոգի. Օր. Ղարիբեան եւ Օր. Յուստիանէ Տէր-Մկրտիչեան, որ յետոյ իմ կինն եղաւ: Ես պարապում էի Օր. Տէր-Մկրտիչեանի, իսկ ընկերս՝ Օր. Ղարիբեանի հետ:

1887-ին թէ 88-ին նրանց ուղարկեցինք Թիֆլիս, ուր իմ պատրաստածը մտաւ գիմնազ, որ եւ աւարտեց, իսկ միւսը՝ մանկաբարձական

© National Library of Armenia

դպրոց: Օր. Յուստինէն մի տարի միայն վարժուհի եղաւ Ազուլիս, իսկ Օր. Ղարիբեանը վերադարձաւ, բայց իրր մանկաբարձուհի: Այսպիսով մեր մտադրութիւնը կիսով չափ միայն իրագործուեց: Յիշեմ նաեւ, որ կանանց խմբի անդամները դրամ հանգանակեցին, որով հիմնեցին մի դրադարան, բերել տուին «Մշակ» լրագրի հին համարները եւն.:

Օր. Յուստինէն պատրաստելիս մենք սիրահարեցինք իրար: Այդ զգացումն ինձ տառապանք էր պատճառում. մտածում էի, որ դաւաճանում եմ սկզբունքներիս. ու երբ օրիորդն ուղարկեցինք Թիֆլիս՝ ուրախացայ թէ՝ ահա՛, գնաց, հիմա կը մեռցնեմ զգացումս: 1888-ին վերադարձայ Թիֆլիս եւ իջայ Քրիստափորի մօտ: Գնացի Բագուն յուսով՝ հանդիպելու սիրածիս, միաժամանակ յոյս ունէի միջոցներ գտնեմ՝ անցնելու Մոսկուա եւ մտնելու Պետրովսկի գիւղատնտեսական ճեմարանը: Քրիստափորն ասաւ. «նամակ չե՞ս բերել»: Ասի — «կայ»: Յետոյ չեմ յիշում, թէ ո՛ւր գնացի:

Բացակայութեանս ժամանակ բացել էր պայուսակս, որ բերածս նամակը գտնի, տեսել էր այն նամակների կապոցը, որ Օր. Յուստինէն գրել էր ինձ Ազուլիս եղած ժամանակ, ուր ղժուարութեամբ էինք պատահում իրար, եւ ձեռքից ճանաչել էր, թէ ո՛վ է գրողը, քանի որ օրիորդը Քրիստափորի աշակերտուհին էր եղած:

Միւս օրը Քրիստափորը բարի հեգնանքով հարցրեց.— «էֆ՛, ասա՛ տեսնենք, օրերդ ի՞նչպէս անցան Ազուլիս. ի՞նչ արի՛ր, ի՛նչ չարիր. պատմիր տեսնենք»: Պատմեցի: Յետոյ թէ՝— «Հա՛, տեսայ ի՞նչ բանի ես եղել, սիրահարութի՛ւն, նամակնե՛ր»...

Սաստիկ չփոթուեցի: Ասի. «Եկել եմ խորհուրդ հարցնեմ» եւ պատմեցի հոգեկան տառապանքս:

Ասաւ.— «Ո՛չ ամէնքը կարող են դաղափարի համար սիրուց հրաժարուել. եւ եթէ մինչեւ իսկ յաջողեն զսպել իրանց՝ դեռ խնդիր է, թէ պիտանի կը լինի՞ն կեանքին: Եթէ իրօք անկեղծօրէն սիրում էք իրար՝ լիովին անձնատուր եղիր զգացումիդ. դա կը բազմապատկէ եռանդդ, որով շատ աւելի պիտանի կը լինես թէ՛ քեզ, թէ՛ հասարակութեան»:

Մինչ դեռ ես Ազուլիս էի (1884–1888), Քրիստափորը գնացել էր Մոսկուա՝ Պոտրովսկի ճեմարանը մտնելու: Յիշում եմ՝ մի նամակ էր գրել, որից իմացայ թէ նիւթական նեղ կացութեան մէջ է: Չնայած սուղ միջոցներիս՝ չեմ յիշում 15 թէ՞ 25 ռուբլի ուղարկեցի նրան: Ստացել էր եւ խիստ նեղացել: Գրեց՝ թէ ուզեցայ ետ ուղարկեմ, վախեցայ վշտանաս. չլինի թէ ուրիշ անգամ նորից այդպէս բան անես. ես այստեղ ընկերներ ունեմ, որ կարող են ինձ օգնել: Մոսկուա մնացել էր մէկ ու կէս թէ երկու տարի, եղել էր ազատ ունկնդիր եւ վերադարձել Թիֆլիս, ապրուստի հնար չունենալով:

Քրիստափորն ապրում էր Միքայէլեան հիւանդանոցի մօտ: Սկսեցի ապրել նրա մօտ եւ նրա հաշուին. սովոր էր հօր պէս հոգալու իմ մասին: Նրա խորհուրդով սկսեցի պատրաստուել բէալական դպրոցի վերջնական քննութիւն տալու համար, որ յետոյ գնամ Մոսկուա:

Այդ ժամանակ նրա մօտ շատ մարդիկ էին գալիս՝ ռուս ու հայ. Վալ. Լունկեւիչ, Քրիստափորի ապագայ կինը՝ Եւգինիա Կոնստանտինովնա իր ամուսնու հետ եւն.: Լունկեւիչն ամիս ու կէս ինձ քիմիա աւանդեց, սակայն անյաջող. միտքս ուրիշ տեղ էր. ես ապրում էի իմ սիրոյ զգացումով, այս պատճառով ինչպէս պէտքն էր պատրաստուել չկարողացայ: Սեպտամբերին գնացի Բագու, որ քննութիւն տամ. հիւանդացայ, քննութեան չգնացի եւ Մոսկուա անցնելու մտադրութիւնս անկատար մնաց:

Ինձ հրաւիրեցին Գանձակ ուսուցչութեան պաշտօնով (1889–90) ուսումն. տարի): Աւագ ուսուցիչ էր Ներսէս Դաւթեանը, դասատու էր նաեւ Ենովք Դանդուրեանը: Գանձակում կար թէ՛ տղայոց եւ թէ՛ օրիորդաց դպրոց. երկու տեղն էլ դաս էինք տալիս: Դասատուների մեծ մասն այն մարդիկն էին, որ յետոյ մտան Դաշնակցութեան շարքերը: Մեր ծրագիրն էր. առաջին տարին լիովին անձնատուր լինել դպրոցական գործին, չահել հասարակութեան համակրանքը եւ յետոյ միայն խառնուել հասարակական գործերին: Մենք անծանօթ էինք Գանձակի անցուդարձին: Երեւաց, որ հին ու նոր հոգաբարձութեան կռիւ է եղած. նորերը յաղթում են եւ մեզ վարձում, իսկ հներն ամէն կերպ աշխատում են նոր հոգաբարձուներին

© National Library of Armenia

պաշտօնանկ անել։ Դասատուներից մէկն է եւ Խաչումեանը, որ տեղացի էր եւ ճեմարանցի, կուսակից էր հին հոգաբարձութեան, մտերիմ՝ առաջնորդին եւ իր ազգական երեխաների միջոցով լրտեսութիւն էր կազմակերպել՝ դպրոցների անցուդարձին լաւապէս տեղեակ լինելու համար։

Ժամանակի բարքերը բնորոշելու համար հետաքրքրական է ինձ հետ պատահած մի միջադէպ։ Հինգերորդ դասարանի աշակերտներին մի անգամ բացատրեցի թէ կրօն եւ ազգ տարբեր դաղափարներ են, որ կարելի է հայ լինել եւ միաժամանակ ոչ-քրիստոնեայ։ Խաչումեան իմանալով այս մասին, տարածել էր այն մեղադրանքը, որ ես իբր ասում եմ թէ լուսաւորչական դաւանանքն անարժէք է եւ քարոզում եմ մահմեդականութիւն։ Մի ուրիշ օր, հայ լեզուի դասին, խօսելով նախապաշարումների մասին՝ ասում եմ, որ սատանայ չըկայ։ Միւս օրն աշակերտներն ինձ յայտնում են, թէ պարոն Խաչումեանն ասում է, որ սատանայ՝ կա՛յ։ Ցանկանալով դուրս գալ անյարմար կացութիւնից՝ ասում եմ. «Պ. Խաչումեանի ասածը կրօնի մէջ յիշուածն է, իսկ ես խօսում եմ պառաւ տատերի պատմած սատանների մասին»։ Սկսեցին մեղադրել, որ հերքում եմ չարչհրեշտակների գոյութիւնը։

Ներսէս Դաւթեանի մասին ասում էին թէ նա կատուներ է մորթում (իրօք արել էր բնագիտութեան դասին), իսկ նրա կնոջը մեղադրում էին, որ խօսում է պասին հակառակ եւ դէմ է կրօնին։ Ներսէս Դաւթեանին Թիֆլիսից ուղարկել էին «Ենիչէրի» գրքոյկը տարածելու. նա էլ տուել էր երեխաներին, որ տանեն տուն եւ ծնողներից հինդական կոպէկ բերեն։ Այս տիպով մեղադրանք բարդեցին, թէ ուսուցչական խումբը դէմ է եկեղեցուն եւ հոգեւորականութեան։ Կաթողիկոսի կարգադրութեամբ Թիֆլիսից եկաւ Խարազեան քահանան իբր յատուկ քննիչ, որի ներկայութեան բոլոր մեղադրանքները հերքեցինք։

Գանձակեցիներից շատերը բազմաթիւ մեղադրանքներ բարդեցին Խաչումեանի վրայ եւ յայտնեցին, թէ նրա կազմած հանրագրութիւնը կեղծ է եւ։։ Քննիչ քահանան այնպիսի զեկուցում էր ներկայացրել անցուդարձի մասին, որ էջմիածնից կարգադրութիւն եկաւ դպրոցները փակելու. դասատուներից Ներսէս Դաւթեան, իբր կինն ու ես ընդմիշտ զրկւում էինք հայոց դպրոցներում դասաւանդելու իրաւունքից, իսկ միւսներին թոյլատրում էին պաշտօն ստանձնել, բայց սեպտեմբերին։ Բոլոր դասատուները դրկում էին իրենց մնացորդ ռոճիկներից։ Դպրոցները փակուեցին 1890 մարտ 8ին։

Գանձակում ինձ եւ Ներս. Դաւթեանին համարում էին յեղափոխական։ Մինչեւ այնտեղից մեկնելը՝ մեզ հետ կապուած աշակերտութիւնը զայիս էր մօտներս, մենք էլ նրանց համար զրքեր էինք կարդում եւ խօսում։ Սիմ. Շխեանը, որ պետական դպրոցի դասատու էր, մեզ յայտնեց մի օր, թէ ժանդարմական շրջանակներում մտածում են, որ հայրենի եկեղեցուն դէմ գնացողները դիւրութեամբ կարող են եւ պետութեան դէմ գնալ։ Խաչումեանի խմբակն ամէն բան կարող է անել։ Գանձակից հեռանալը դերազանցելի է։ Թէեւ վարձուած էի մինչեւ աշուն, բայց մնալս աւելորդ եւ վտանգաւոր նկատելով՝ հեռացայ Գանձակից եւ դընացի Թիֆլիս։ Սիմ. Զաւարեանի միջնորդութեամբ Ստարոսելսկին ինձ առաւ իր խմբի մէջ, որի նպատակն էր Վրաստանի այդիներին աւերածութեան ենթարկող ֆիլոքսերան ոչնչացընել։ Գործին ծանօթանալու համար ինձ ուղարկեցին Իմերէթ, Զովրէթ գիւղը։

1890 թ. աշնան վերջերին Քրիստափորն ինձ ուղարկեց Անդրկասպեան երկիրը կազմակերպելու տեղական հայերին եւ դրամ հանգանակելու։ Պէտք է հայաբնակ վայրերում խմբեր կազմակերպէի թէ՛ դրամական եւ թէ՛ մարտական։ Եղայ Ուզունադա (որ նաւահանգիստ էր այն ժամանակ), Ղըզլարուադ, Ախաբադ, Մերվ։

Հաւաքումները լինում էին գաղտնի։ Ներկայացնելով թիւրքահայերի ծանր կացութիւնը՝ կոչ էի անում, որ դրամ հանգանակեն եւ մարտիկներ պատրաստեն նրանց օգնելու համար։ Ամէն տեղ հայերը սիրով եւ խանդավառութեամբ ընդառաջում էին իմ կոչին, կազմակերպում էին հանգանակութիւն եւ առաջարկում, որ հաւաքուած դրամը հետս առնեմ. ես տալիս էի Թիֆլիսաբնակ մի քանի յայտնի հարուստների հացէներ եւ առաջարկում, որ դրամն իրանք ուղարկեն։ Ժողովներին զալիս էին մեծ ոգեւորութեամբ։

© National Library of Armenia

Մերվից վերադառնալիս՝ տեղական հայերը չէին թողնում, որ հեռանամ, չատերն ուզում էին ինձ հետ զէնքով գալ Թիֆլիս՝ երկիր անցնելու համար... բայց ես հրահանգ ունէի միմիայն կամաւորներ արձանագրել, յորդորել, որ պատրաստուեն, զինավարժուեն՝ ի պահանջել հարկին երկիր անցնելու համար: Ամէն հայաբնակ վայրում կազմուեցին կոմիտէներ, որոնց նպատակն էր խմբեր կազմել, կարդալ նրանց հայրենասիրական բովանդակութեամբ գրքեր, կազմակերպել երեկոյթներ եւ ներկայացումներ՝ իրր դրամական հասոյթի եւ պրոպագանդի միջոց, կազմել մարտական խմբեր եւ զինավարժել նրանց: Մեր կազմակերպութեան մէջ մտնում էին մեծ մասամբ արհեստաւորներ. տեղական հարուստները խուսափում էին, թէեւ դրամ տալիս էին:

Այն ժամանակ մեր կազմակերպութիւնը դեռ նոր էր ծաւալ ստանում եւ դրամական միջոցները մեծ չէին: Երբ Թիֆլիսից մեկնում էի՝ այնքան չնչին գումար էին տուել մինչեւ Բագու հասնելու համար, որ ոմանք խորհուրդ էին տալիս առանց տոմսակի գնալ: Տուել էին նաեւ մի նամակ Բագուաբնակ Մանուէլեան ազգանունով մէկի վրայ, որից ստացայ 25 ռուբլի: Պատրաստի հագուստ վաճառող Ղոնդաղսազեան անունով մէկը իր վերարկուն տուաւ ինձ:

Սրանից կարելի է եզրակացնել, որ այդ թուականին Բագուում կային ընկերներ, բայց կո՞ր մարմին թէ ոչ՝— չգիտեմ: Թիֆլիսից Անդրկասպեան երկրի համար մի քանի անուններ էին տուել եւ հաստէներ՝ ասելով թէ «լաւ տղաներ» են: Ախաբաղում պէտք է տեսնուէի Սարուխանեան ազգանունով մէկի հետ, որ ինքն անձամբ բան չարաւ, բայց չատերի հետ ծանօթացրեց ինձ: Գեներալ Կուրապատկինի իշխանութեան ժամանակն էր եւ հայերն իրանց չատ ճնշուած էին զգում Անդրկասպեան երկրում:

Ախաբաղում նախ հաւաքեցի երիտասարդներին եւ յայտնեցի գալուս նպատակը: Ասին՝ քանի որ խնդիրը դրամի է վերաբերում՝ պէտք է «տուղերից» մի ժողով գումարել: Հարուստներին, որ 8–9 հոգի էին, ժողովի հրաւիրեցի: Եկան մեծ ահ ու դողով, սենեակի գուռն ու պատուհանները գոցել տուին, ասին՝ «լա՛ւ, դրամ կը հաւաքենք, միայն դուք այստեղ երկար մի՛ք մնայ»...

Վերադարձին տեսայ, որ հանգանակութիւն սկսել էին եւ յաջողութեամբ առաջ էին տանում: Տղաներն ասին, որ իմ մեկնելուց յետոյ ոստիկանութիւնն սկսել է տեղեկութիւններ հաւաքել եւ խորհուրդ տուին չուտով մեկնել Կովկաս, քանի որ կարող էին ձերբակալել:

1891 թ. փետրուարին վերադարձայ Թիֆլիս եւ նորից անցայ պաշտօնիս: Այս ծառայութեան ընթացքում խմբեր կազմակերպեցի Միխայլովո*) կայարանում 1890ին, Սուրամում**) 1892 թէ՞ 93–ին՝ լաւ չեմ յիշում, Քութայիսում***) 1893–ին, ուր ապրեցի չորս տարի մինչեւ 1897 թ. Նոյն թուականի գարնանը պաշտօնով տեղափոխուեցի Գորու գաւառը եւ ապրում էի Գորի****) քաղաքում: Այստեղ մի քանի անհատ ընկերներ կային. կազմակերպեցի խմբեր եւ մարմին ընտրել տուի:

Վրաստանի հայութիւնն այս կազմակերպութեանց չնորհիւ սկսեց հայ կեանքով եւ հայոց հարցով հետաքրքրուիլ, հայերէն սովորել եւ կարդալ հայերէն: Իմ պաշտօնի բերումով յաճախակի այցելում էի մեր նորակազմ խմբերին, խօսում հեռները, գրքոյկներ կարդում, գրքեր բերել տալիս ու ցրում նրանց, կազմում փոքրիկ գրադարաններ, նամակագրութեամբ կենդանի կապ էի պահում թէ՛ նրանց եւ թէ՛ Թիֆլիսի հետ: Դարձել էի մի տեսակ Թիֆլիսի կենտրոնական մարմնի ներկայացուցիչ այդ շրջանի հայութեան համար:

1898 թ. մայիսի սկզբին պաշտօնով անցայ Թելաւ****): Կնոջս (որի հետ ամուսնացայ 1892

*) Կայարան Թիֆլիս–Բաթում երկաթուղու գծի վրայ:

**) Հայաբնակ աւան եւ ամարանոց՝ Միխայլով կայարանից երկու վերստ դէպի հիւսիս:

***) Իմերեթիայի կենտրոնը:

****) Հայաչատ քաղաք Թիֆլիսից–Բաթում գծի վրայ:

****) Վրաստանի քաղաքներից մէկը, ուր հայերը չատ խոշոր թիւ են կազմում վրացիների համեմատութեամբ:

© National Library of Armenia

թ.), երեք երեխաներով ուղարկեցի Ադուլիս, ուր նա մի տարի վարժուհի եղաւ։ Ցիշատակեմ այստեղ, որ կինս Թիֆլիսում ուսաւ հինգ տարի։ Թէև Ադուլիս եղած ժամանակս պաշտօնակիցներս խոստացել էին նրա ուսման ծախսերը հոգալ, բայց օգնել կարողացան միայն երկու ամիս։ Այնուհետեւ օգնում էինք գլխաւորապէս ես ու Քրիստափորը։

Թելաւում կազմակերպական գործն աւելի լայն չափեր ստացաւ։ Տեղացի Արտէմ Տէր-Գաբրիելեանի միջոցով ծանօթացայ եւ մօտեցայ տեղական երիտասարդութեան։ Կազմակերպութեան գործին օգնել է իմ դպրոցական ընկեր Աստվմեան Թադէոսը, որ քահանայ էր դարձել Թելաւում։ Տղամարդկանց շրջանում մեծ յաջողութիւն չունեցանք։ այդ գիներէտ քաղաքում նրանք շարունակ քէֆ էին անում։ Դրա փոխարէն՝ կանայք մեծ հետաքրքրութիւն ցոյց տուին։ Հաւաքեցի մօտ քսան դպրոցաւարտ աղջիկներ եւ մի քանի տիկիններ, որ մեծ ոգեւորութեամբ զալիս էին հաւաքոյթների, ուր խօսք էր լինում հայ ժողովուրդի, նրա արդի քաղաքական կացութեան, նրա ապագայի մասին։ Կազմեցին գրադարան, «Կարմիր Խաչի» միութիւն։

Այստեղ էին այն ժամանակ Համօ Օհանջանեան եւ իմ եղբայր Յովս. Թադէոսեանը, որ նոյնպէս ծառայում էին Փիլոքսերայի գործում։ Սրանց ես տանում էի իմ կազմած խմբի ժողովներին խօսելու։

Թելաւում մնացի մինչեւ հոկտեմբերի ըսկիզբը։ Քանի որ մեր գործի պաշտօնէութիւնը կրճատուելու էր, իսկ ես մասնագէտ գիւղատնտես չէի, Քրիստափորն ինձ խորհուրդ տուեց անցնել Բաղու։— «Գնա՛, ասաւ. մի պաշտօն գտիր, հարստացիր, տունդ պահիր ու մեզ էլ օգնիր, եթէ կարող ես»։

Հոկտեմբերի 10ին Քրիստափորն իր կնոջ ու որդու հետ ռազմավիրական ճանապարհով մեկնեց Ժընեւ, որքան իմացայ՝ «Դրօշակ»ի հրատարակութեան եւ արտասահմանի պրոպագանդի գործը կազմակերպելու։ Հետեւեալ օրը ես մեկնեցի Բաղու։

Արժէ այստեղ մի քանի խօսք ասել Քրիստափորի կնոջ մասին, որ մի արտասովոր կին էր։

Նրա հօրական ազգանունն էր Բաբուշկինա. ազնուական տոհմից էր, գեներալի աղջիկ, լաւ կրթութիւն ստացած եւ խիստ զարգացած։ Նոր գաղափարների ազդեցութեան տակ՝ նա պայքարում է սեփական ընտանիքի դէմ, թողնում է հօր տունն ու ապահով ապրուստը, եւ անհատական ազատութեան ու անկախութեան հետամուտ՝ իր օրապահիկը վաստակելու համար մասնաւոր դաս է տալիս, բեմ բարձրանում, աղախինի պաշտօն կատարում։ Թէ ի՞նչ պայմաններում է ծանօթանում իր ապագայ ամուսին Լաւրուսեւիչի հետ եւ ե՞րբ է ամուսնանում — չգիտեմ։ Այսքանը գիտեմ, որ Լաւրուսեւիչը համարւում էր յայտնի յեղափոխական։

1888 թուին տիկինը ծանօթ էր Քրիստափորի հետ։ Կարծեմ հետեւեալ տարին տիկինն իր ամուսնու եւ փոքրիկի հետ ամառն ապրում էր Աղբուլաղ հայարնակ գիւղում, որ Թիֆլիսցիների ամարանոցներից մէկն է՝ քաղաքից մօտ 25 վերստ հեռու։ Այստեղ տիկինը հիւանդանում է որովայնի տիֆով։ հիւանդանում է նաեւ երեխան, որ մեռնում է՝ դեռ տիկինն ուշքի չեկած։ Զառանցանքի ժամանակ տիկինը Քրիստափորի անունն է տալիս։

Տիկնոջ հիւանդութեան լուրն առնելով՝ Քրիստափորը մի քանի ընկերներով գնում է Աղբուլաղ՝ Լաւրուսեւիչին օգնելու։ Երբ բժշկին հարցնում է, թէ յոյս կա՞յ, որ տիկինն ապրի։— պատասխանում է. «Չի ապրի, եթէ երեխայի կորուստն իմանայ. պէտք է հոգեկան մի զօրեղ հակացնցում նրա կեանքը փրկելու համար»։

Լաւրուսեւիչը, որ կնոջ զառանցանքից գուշակել էր, թէ նա անտարբեր չէ դէպի Քրիստափորը, խնդրում է սրան, որ տիկնոջ կեանքը փրկելու համար՝ երբ նա ուշքի գայ՝ Քրիստափորը սէր արտայայտէ։ Քրիստափորն ասում է՝ ճի՛շդ է, համակրում ենք իրար, բայց մէջներս լուրջ զգացում չկայ։ Լաւրուսեւիչը թախանձում է վարուել այնպէս, ինչպէս ինքն է խնդրում, յայտնելով որ կնոջ կեանքը փրկելու համար նա պատրաստ է ամէն զոհողութեան։

Լաւրուսեւիչն առաջնակարգ կարեւորութիւն էր տալիս կամքի կրթութեան, այդ կողմից նա զօրեղագոյն մարդկանցից մէկն էր։ Նա ասում էր. բոլոր զգացումները, ինչպէս նաեւ սէրը մարդ պէտք է ենթարկէ կամքին։ Եթէ

© National Library of Armenia

պէտք լինի, ասում էր, կարող եմ դադարել սիրածիս սիրել եւ ընդհակառակը՝ հարկադրել ինձ, որ սիրեմ մէկին: Վերին աստիճանի ազնիւ, մաքուր եւ անձնուէր մարդ էր:

Քրիստափորի հետ ծանօթանալուց յետոյ եւ իր հիւանդութիւնից առաջ տիկինը մի օր ասում է մարդուն.— «Գիտե՞ս, շնեղանաս, ես հիմա այլ եւս այն չեմ զգում դէպի քեզ, ինչ որ առաջ. ապրի՛նք քոյր եւ եղբօր նման»:

Առանց պատճառը հարցնելու՝ ամուսինը համաձայնում է: Զառանցանքի ժամանակ միայն պարզում է, թէ տիկինն ո՛ւմն է սիրում. ուստի Լաւրուսեւիչն այն դիրքն է բռնում, որ վերն ասի: Նա ամէն կերպ աշխատում է նպաստել Քրիստափորի եւ իր կնոջ կապին, մանաւանդ երբ տիկինն ուշքի գալով՝ խոստովանում է իր զղացումը: Նա երկուսին էլ համոզում է, որ անձնատուր լինին իրենց զգացումին եւ իր մասին չհոգան:

Այդ ժամանակ լրանում է Լաւրուսեւիչի 27 տարին եւ կանչւում է զինուորական ծառայութեան (նա համարւում էր ուսանող, ուստի արտօնութիւն ունէր ուշ կանչուելու զինուորական ծառայութեան): Երբ վերադարձաւ՝ ասում էր, որ «բուժուած» է սիրոյ զղացումից եւ չարունակում էր Քրիստափորի եւ իր նախկին կընոջ հետ ամենասերտ յարաբերութիւն պահպանել իրր մտերիմ եւ ընկեր:

Մի թէ՞ երկու տարի յետոյ Ռուսաստանից նա մի նամակ էր գրել իր կնոջը, յայտնելով, թէ սիրահարել է գիմնազն աւարտած մի աղջկայ եւ խնդրում էր, որ կինն ապահարզան տայ՝ մեղքն առնելով իր վրայ. «Շուտով պըսակուելու եմ, գրում էր. շնորհաւորէ՛ք ամուսնութիւնս»: Այդպէս էլ եղաւ:

Լաւրուսեւիչը յարգում էր Դաշնակցական շարժումը. նա մեզ օգնում էր, ինչով կարող էր: Տուլայում*) մեզ համար զէնք էր գնում, որի հետեւանքով եւ ձերբակալուեց: Թէ վերջն ինչ եղաւ այդ հաղուագիւտ մարդը — չգիտեմ:

Տիկին Լաւրուսեւիչը շատ աշխոյժ եւ ուժեղ կին էր. անպատմելի նեղութիւններ էր քաշել իր անկախութեան եւ յեղափոխական գործի համար եւ շատ երկար թափառումներ ունեցել: Կեանքի մէջ նա առաջին տեղը տալիս էր գաղափարին. ընտանիք եւ նման ըմբռնումներ նրա աչքին անարժէք էին գաղափարի համեմատութեամբ: Բայց երբ մայր դարձաւ՝ այլ եւս ոչ մի գործի չէր մասնակցում. իր զօրեղ կամքով եւ զղացումի թափով նա անձնատուր եղաւ երեխայի խնամքին: Տղան հիւանդացաւ տիֆտէրիայով, որի հետեւանքով կոկորդն անդամատեցին: Կատարեալ անձնուիրութեամբ հսկեց երեխային ամենալարուած ուշադրութեամբ եւ հոգածու խնամքով ու փրկեց նրա կեանքը: Զաւականց չիտակ կին էր. իր մտածումը՝ թէ՛ լաւ, թէ՛ վատ՝ առանց քաշուելու կ'ասէր մարդկանց երեսին:

Բագու գնալուցս առաջ Քրիստափորն ինձ մի նամակ տուեց Աբր. Դաստակեանի անունով, որ իր մօտ ընկերն էր: Նամակի մէջ խնդրել էր ինձ մի գործ տալ, նկատելով որ ընտանիք ունիմ պահելու: Դաստակեանն ասաւ. «պէտք է սպասէք»: Ասի՝ չեմ կարող, քանի որ տունս նեղութեան մէջ է: Խոստացաւ մի բան անել: Խօսել էր Մկ. Բալանթարեանին, որ ինձ մի պաշտօն տայ, ասելով թէ ինքն ազատ տեղ չունի: Համաձայնել էր: Պաշտօնս Բալախանի էր. պէտք է գրասենեակը կառավարէի եւ նրա եղբօր՝ Յովհ. Բալանթարեանի օգնականը լինէի: Մանօթացայ նաւթաշխարհին եւ իր գործերին: Այդ պաշտօնում մնացի մի տարի:

Մեր կազմակերպութիւնն այդ ժամանակ քայքայուն վիճակ ունէր Բագուի շրջանում: Մի քանի ընկերներ կային՝ Աւետ. Վաշեան եւ Արամայիս (Միասկ Տէր-Դանիէլեան): Երբեմն տեսնում ու խօսում էինք, թէ ի՛նչ անենք. մեր հաւաքատեղին Վաշեանների «Անդրանիկ» արհեստանոցն էր: 1899ի վերջի՞ն թէ 1900ի սկզբին կազմեցինք մի մարմին՝ «Բալախանի կոմիտէ», որի անդամները երեքս էինք եւ չորս ուրիշ, որոնց անունը մոռացել եմ: Ռէակցիայի ուժն զգալի էր մեր շրջանում. վերակազմութեան գործն ընթանում էր շատ դանդաղ: Անձնական զրաղումներն էլ ժամանակ չէին տալիս:

Կարծեմ քաղաքում եւս մեր կազմակերպութիւնը քայքայուած էր. մի մարդ կար Բագու, որի հետ տեսնւում էինք — Ներս. Դաւթեան: Թէ ո՞րքան խումբ կարողացանք կազմել եւ քա-

*) Կենտրոնական Ռուսաստանի քաղաքներից մէկը, ուր գտնւում են պետական զինագործարանները:

© National Library of Armenia

նի՞ անդամ ունէինք՝ լաւ չեմ յիշում։ Գիտեմ, միայն, որ խմբեր կազմում էինք բանուորներից, արհեստաւորներից եւ զրասենեկային ծառայողներից. այդ խմբերն այնուհետեւ ընտրում էին ենթակոմիտէներ։ Իմ տպաւորութիւնն այն է, որ մինչեւ 1902 թ. մեծ գործ չը-կատարուեց։

1900 թ. անցայ Ղեւոնդ Մարգարեանի եւ Սկրիպինսկու հանքերը, որ նոյնպէս Բալախանումն էին (Բոզբոզան), ուր մնացի մէկ ու կէս տարի կառավարչի պաշտօնով։ Այնուհետեւ փոխադրուեցի Բիբիհէյբաթ, ուր մնացի մի տարուց աւել, իբր Մարգարեանի օգնական, որ կառավարիչ էր։ Զդացի, որ այդ պաշտօնն իմ տեղը չէր. նախ՝ պահանջում էին բաներ, որ ես չէի կարող. ապա՝ կապիտալի եւ բանուորութեան սուր հակադրութիւնն անտանելի էր ինձ համար։

Մարգարեանն ասում էր.— «Լա՛ւ մարդ ես, բայց Բալախանին քո տեղը չի»։— Ինչո՞ւ, հարցրի։— Ո՞ւր է քո ծեծած բանուորը...

1900 թ. ընտանիքս գիւղից փոխադրուեց Բաքու։ Պաշտօնս թողի եւ անցայ քաղաք, «Նաւթարդիւնաբերողների Խորհուրդի» գրասենեակը, ուր եւ մնացի մինչեւ 1919 թ.։ Այստեղ համեմատաբար շատ աւելի ժամանակ ունէի աշխատելու։ Ես դարձայ մնայուն անդամ Բաքուի կենտր. կոմիտէի, գրաւոր ու բանաւոր կապ պահելով ընկերների եւ մարմինների հետ։

1901 թ. Քրիստափորը կազմակերպական գործով նկաւ Բաքու եւ իջեւանեց մօտս։ Քաղաքում նա մնում էր նաեւ Գիւլմորեանների տանը։ Եկած էր «Փոթորիկ» խմբի գործով, որ կազմակերպուած էր բռնի հանգանակութեանց համար։ Ասում են Քրիստափորը հակառակ էր եղած «Փոթորիկ»ի կազմութեան, բայց տեսնելով, որ որոշումն անցնելու է՝ ինքը մտել էր այդ խմբի մէջ, վախենալով, որ այդպիսի փափուկ մի գործ կարող է վատ ընթացք ստանալ։ Բաքու մնաց մօտ տարի եւ կէս, ուր Ժամհարեանից պահանջ էին արել, բռնել եւ պահանջածը հատուցանելու ազնիւ խօսք առնելով՝ արձակել, սպառնալով ահաբեկում, եթէ կառավարութեանը յայտնէր եղած պահանջի մասին։ Ժամհարեանը իր խոստումը չէր կատարել, եւ նա վերջը սպանուեց Մոսկուայի մէջ։ «Փոթորիկ» խմբի անդամ էր և Շահրիկեանը։

Մի յիշողութիւն եւս Քրիստափորի մասին։ Յիշում եմ Բաքուում մի հրէա բժիշկ մի ժողովում շատ մեղմակի կպաւ Դաշնակցութեան։ Քրիստափորն առանց ձայն խնդրելու, բարձրացաւ մի աթոռի վրայ եւ սկսեց խօսել չափազանց յուզուած, որ խոր տպաւորութիւն արաւ ունկնդիրների վրայ։ Քրիստափորը հռետոր չէր, բայց խօսում էր զդացումով եւ զօրեղ տրամաբանութեամբ, որով եւ ազդում էր։

1903 թ. նա հեռացաւ Բաքուից բաւական խոշոր գումար ձեռք բերած, անցաւ արտասահման՝ Սուլթանի մահափորձը կազմակերպելու, որին եւ զոհ գնաց։

Բաքուն եղած է Հ. Յ. Դաշնակցութեան կարեւորագոյն կենտրոններից մէկը, ուր տարիների ընթացքում շատ բան է արուած։ Այն ժամանակուայ ընկերներին է մնում պատմել հանգամանօրէն իրենց չրջանի գործունէութեան մասին։ Ես աշխատեցի մոռացումից ազատել այն տեղեկութիւնները, որ ունէի Քրիստ. Միքայէլեանի կեանքի եւ կազմակերպութեան վաղագոյն չրջանի մասին։

1923, Փետրուար

© National Library of Armenia

ՅՈՒՇԵՐ

Գրեց՝ ԱՐԱՄ

VI

Կազմակերպութիւնն ունէր յատուկ ծախսարարներ՝ խմբի պէտքերը հոգալու համար: Կեանքը աժան էր, մանաւանդ երբ 8–10 հոգի միասին պիտի ճաշէին: Առաւօտեան թէյ, պանիր, հաց էր. կէսօրին՝ 1 կամ 2 տեսակ կերակուր. երեկոյեան՝ թէյ, նորից 1–2 տեսակ կերակուր: Ամէն ընկերոջ վրայ օրական 60 փարա ծախք էր նշանակուած. կամ խմբի գործակատար — առաջնորդն էր ծախսերը անում. իսկ, երբ նրա ելք ու մուտքը անկարելի էր, ծախս անողները տանտէրերն էին:

Շահագործման դէպքեր, ի հարկէ, լինում էին, մանաւանդ որ սարսափելի անգործութիւն կար եւ եկամուտների չորացում: Մեր ժամանակ 4–5 հոգուց բաղկացած ընտանիքի համար ամսական մի ոսկի եկամուտը համարւում էր բաւարար եւ տանելի. կային եւ կէս ոսկով ապրող ընտանիքներ:

Այսպէս, ընտանիքների տեւական սնունդն էր,— առաւօտ–երեկոյ թանապուր, ձուկ, ժաժիկ (թանից են պատրաստում) եւ քիչ անդամ իւղեղէն: Միսը, կարծեմ, տարին մի քանի անգամ հազիւ էին տեսնում խեղճերը: Դրա փոխարէն շատ բուսակեր էին. ամէնքը ձմեռուայ համար բռնուած բուսեղէն ունէին՝ մանդակ, երնջնակ, լբխանա (կաղամբ), ճակընդեղ (բազուկ), չողգամ եւայլն: Գարուն, ամառ եւ աշուն սնւում էին զանազան բոյսերով, որ խաշում էին սովորական ջրով ու աղով: Այս է թերեւս մասամբ, պատճառը, որ վանեցիների մարմինը բաւական տգեղ է, մանաւանդ կիներունը, որոնց տգեղութիւնը կարելի է վերագրել մեծ մասամբ եւ տնտեսական աշխատանքների ձեւին,— այն բանին, որ միշտ թոնրի վրայ էին կերակուր եփում, հազար անգամ օրական կախուում–բարձրանում, իսկ ամբողջ ձմեռն էլ նստում էին թոնրի վրայ, քուրսիի տակ:

Բուսական կերակուրը մեծացնում է փորը: Գեղերում եւ քաղաքներում ուռած փորով երեխաներն ընդհանուր երեւոյթ են:

Այն տանը, ուր մենք էինք լինում, ընտանիքի անդամներն էլ մեզ հետ եւ մեր հաշուին էին կերակրւում. գուցէ մեզ տուն տուողների մեծ մասը շահագրգռուած էր հէնց դրանով:

Պէտք է խոստովանել ե՛ւ այն, որ կային բազմաթիւ ընտանիքներ էլ, որոնք միշտ, քանի անգամ էլ ամսական կամ տարեկան հանդիպէինք, պահում էին իրենց հաշուին, այն էլ շատ լաւ, տնական կերակուրներով, խմորեղէններով եւայլն:

Խմբի զինուորները ժամանակի մեծ մասը անցնում էին կարդալով, նոր գրել կարդալ սովորելով, թուղթ խաղալով: Ժամերով խաղում էին, մանաւանդ դիշերները, երբ ստիպուած էին պահապան լինել:

Դառնանք սակայն մեր պատմութեան: Հարկաւոր էր հարթել Տիգրանի եւ Կոմսի միջեւ եղած թիւրիմացութիւնները՝ ընկերական ներդաշնակ կեանք ստեղծելու եւ գործ կատարելու համար:

Միւս օրը կրկին գնում եմ Կոմսին եւ նրան եմ հարցնում թիւրիմացութիւնների պատճառները:

— Տիգրանը լաւ, մաքուր եւ գաղափարական տղայ է, բայց նրա հետ աշխատել անկարելի է: Գէթ ես չեմ կարող. խենթութեան է հասցնում ամէն բան: Ամենավիրաւորականը այն է, որ դիմացինի մէջ միշտ ուզում է տեսնել կասկածելի, ոչ մաքուր մարդ. այդ արդէն անտանելի է այսպիսի պայմաններում:

Բացատրում եմ, որ ինտելիգենտ մարդկանց սով է, որ ամէն եկող տեղ չի հասնում: Ինքը լաւ գիտէ, որ անցեալ աշնան՝ 1904 թ. Նարմանից մինչեւ Կօտօլ հարիւրներով զոհեր տուինք, ամենալաւ, պատրաստուած գաղափարական ընկերներ — Թումանը, Թորգոմը, Ալէքսանդրօպոլցի Վաղօն, Որսորդ Գէորգը, Կայծակ Վաղարշակը, Ռուս Գէորգը, Նեվրուզը, Խանը, Մեր Մենակը, Հմայեակը, Աչոտ Երկաթը, Քղեցի Գօղոսը, Գայլ Վահանը, Թոխմախը եւ ուրիշները:

© National Library of Armenia

Կոմսը այդ բոլորը ինձանից լաւ էր հասկանում. բայց նորից առարկում է, որ իր կարծիքով բոլոր միջոցներն սպառուած են:

— Ցաւում եմ, որ այս դէպքից յետոյ մի գործնական որոշում տուինք,— այն է, որ ամէն մի նոր եկող եւ անգործ ընկեր խսկոյն կ. Կոմիտէի մէջ չառնենք եւ ղեկավար դեր չտանք: Թո՛ղ մի վեց ամիս կամ մի տարի մընայ: Եթէ ընկերները գտնեն, որ արժանիք ունի, թո՛ղ նոր ընդունին:

Որոշումը ցանկալի եւ նոյնիսկ ընդունելի էր եւ ինձ համար, թէեւ բիւրօն ինձ յանձնարարել էր իբրեւ հաւասար ընկեր, բայց ես զգում էի, որ անհրաժեշտ էր նախ տեղական գործերին ծանօթանալ եւ ապա միջամտել:

Որոշում ենք կ. Կոմիտէի ժողով հրաւիրել, հարցը այնտեղ քննութեան դնել եւ մի վերջնական որոշում տալ:

Ժողովը գումարուում է շուտով, ինձ բացառաբար թոյլ են տալիս ժողովին մասնակցելու: Այն ժամանակ մարմնի անդամներն էին Կոմսը, Իշխանը, Վարդան-Շահբազը, Տիգրանը, Թէոսը, Ալէքսն ու Արմենակը:

Երկար ու բարակ, սուր ու ջղային վէճերից յետոյ գտնում ենք միայն մի ելք,— այն է, որ կազմակերպական գործերը քաղաքում եւ բոլոր գաւառներում բաժանուեն ընկերների միջեւ, ըստ ընդունակութիւնների:

Տիգրանին տալիս ենք Հայոց-Ձորերի եւ Թիմարի շրջանի կազմակերպական, զինական ամբողջ գործերը. նա պիտի շրջէր եւ մեծ մասամբ քաղաքից բացակայէր:

Իմ մասին որոշում են, որ ես մնամ քաղաք Կոմսի մօտ՝ զբաղուելու համար քաղաքի խմբերի պրոպագանդի եւ կազմակերպութեան խնդիրներով:

Կոմսը մնում է քաղաքում ընդհանուր ղեկավար ներկայացուցչի դերում:

Իշխանը նորից պիտի դառնայ գաւառ, Վարդան-Շահպազի հետ: Նրա շրջանն էր Շատախը, Մոկսը, Կառկառը, Կարճկանը եւ Գեւաշը, որ այն ժամանակ ընդհանուր կեղծ անունով կոչւում էր Լեռնպատ:

Իշխանի հետ պիտի լինէր եւ Մակուեցի Մեսրոպը, որը մեր հին եւ փորձուած ընկերներից էր՝ զինուորական ընդունակութիւնների տէր, կրթուած եւ լաւ բնաւորութեամբ մի մարդ:

Ինչպէս առաջ ասացի, Իշխանի եւ Կոմսի յարաբերութիւններն էլ լաւ չէին: Իշխանի դժգոհութիւններն յիշատակել եմ արդէն, եւ ժողովումն էլ պարզուեցին նոր խնդիրներ:

Վանում, ինչպէս եւ բոլոր կենտրոնական քաղաքների եւ յարակից գաւառների միջեւ, անվերջ եւ յարատեւ կռիւ կար, գաւառի եւ քաղաքի կռիւ: Այդ կռիւը փոխադրուել էր ե՛ւ մեր կազմակերպութեան մէջ:

Գաւառացիք գանգատուում էին, որ արտասահմանից եկած բոլոր զէնքերը, ռազմամթերքն ու դրամները մնում են քաղաքում. գործիչների մեծ մասն էլ քաղաքում են գործում եւայլն... Գաւառը մոռացութեան է տրուած, այն ինչ՝ իսկական, վստահելի յեղափոխական եւ կռուի ընդունակ տարրերը գաւառի մէջ էին: Այս յաւակնութիւններն ունէին մանաւանդ շատախցիք:

Քաղաքացիք, ընդունելով հանդերձ գաւառի նշանակութիւնը եւ արժէքը, պնդում էին, որ գործի ղեկն ու կենտրոնը քաղաքն է. եթէ քաղաքում ուժեղ չլինինք, գաւառն էլ կը լքուի:

Գաւառացիք մնում էին իրենց կարծիքի մէջ՝ միշտ արհամարհոտ եւ կասկածոտ քաղաքացիների մասին:

— Այս քաղաքի ջոջ աղաները ձեր գլուխը պիտի ուտեն եւ մեր տունը պիտի աւրեն:

Այս էր ամէն անգամ գաւառից քաղաք եկող գաւառացի գործիչ ընկերոջ վերջին խօսքը:

Դէպքերը յետոյ ցոյց տուին, որ գաւառացիք էլ իրաւունք ունէին ամբողջապէս վանեցոց չվստահելու, ինչպէս եւ վանեցիք՝ գաւառացիներին:

Իշխանի եւ գաւառացի ընկերների պահանջներին գոհացում տալու համար որոշում ենք, որ արտասահմանից եկող եւ երկրի ներսը գտնուող զէնքի-ռազմամթերքի կէսն ուղարկենք գաւառ, ինչպէս եւ դրամի եւ եկող ինտելիգենտ ոյժերի:

Լեռնապատի համար էլ ստեղծում ենք

© National Library of Armenia

զատ մարմին,— Իշխան, Վարդան–Շահրազ եւ Մեսրոպ։ Այսպիսով Վասպուրականում ունենում ենք 1905–906 թ. երկու կենտր. կոմիտէներ. Շամիրի.— Վան, որի մէջ մտնում էին Վան, Հայոց–Զորեր, Խոշապ, Նորդուզ, Բաշկալէ, Արճակ, Սարայ, Աբաղայ, Բերկրի, Թիմար, Արճէշ, Ալշաւաղ եւ արուարձանները, եւ Լեռնապատի կ. Կոմիտէն, որի մէջ մտնում էին Վասպուրականի միւս լեռնային գաւառները։ Արտասահմանի եւ միւս քաղաքների հետ յարաբերութիւն եւ կապ պահելու էր, ի հարկէ, քաղաքը։

Գործն այսպէս փակուած էինք համարում, երբ մի քանի օրից յետոյ, Կոմսը, տեղական ընկերների հետ առանձին խորհրդակցութիւն ունենալով, յայտնեց, թէ այլեւս չի կարող մնալ,— յոգնել է, ինքը մի տարով էր եկել, երկրորդ տարուան մէջն է եւ աշխատել, մանաւանդ այդ պայմաններում, անկարող է։

Ցիմար կացութիւն էր ստեղծւում. աչքը չինելու տեղ՝ յոնքն էլ աւրեցինք. իմ գալը, փոխանակ օգտակար լինելու, վնասակար եղաւ։

Կոմսը ղեկավար ընկեր էր, գործերին ծանօթ, մարդկանց, գործիչներին կապել էր իր հետ. յանկարծ, թողնել ու հեռանալ... Մեղ թւում էր, թէ գործը կը քայքայուի, մանաւանդ Վանի ժողովուրդը մեծ վստահութիւն ունէր նրա վրայ, որ երկու բանով կարելի էր բացատրել։

Նախ՝ որ կարճ ժամանակում նա գործը դրել էր լաւ հիմքերի վրայ եւ որ, գլխաւորն է, հետեւել էր խոհեմ եւ չրջահայեաց գործելակերպի։ Վանեցիք այն համոզմանն էին, ու թերեւս մասամբ իրաւունք ունէին, որ եթէ Կոմսի ներկայութիւնը չլինէր, երբ Անդրանիկը Վան էր եկել 1904 թ. ամառը մեծ խմբով, անպատճառ խոշոր ընդհարում պիտի լինէր եւ կոտորածը անխուսափելի դառնար։

Անդրանիկի Վան եղած միջոցին կարծեմ մի փոքրիկ ընդհարում է միայն տեղի ունեցել Մեծ Քանտրչի փողոցի մէջ, որը Վանում յայտնի է «Մարօի դէպք» անունով։

Գիշերային մի տեղափոխութեան ժամանակ Սեպուհի, Մուրատի եւ միւսների խմբերը երբ փողոց են իջնում եւ դիմացի տունից ներս մտնում, յետնապահ տեղացի ընկերը՝ կարծելով, թէ ամէնքը անցել են արդէն, ինքն էլ ներս է մտնում եւ դուռը փակում։ Զինուորներից մէկը, կարծեմ, Մուռ Դաւիթը, (տեղացի մի շատ կտրիճ զինուոր) դուրս է մնացել։ Ցանկարծ, դիմացից գալիս են «դաւրիաները», գիշերը պտտող պահակները, որոնք հեռուից թասլիմ են ըղաւում։ Դաւիթը կրակում է եւ իր վրայ յարձակուող առաջին ասկիարին սպանում։ Միւսները յետ են փախչում եւ, ծառերի մէջ դիրք բռնելով, սկսում են կրակել։ Մերոնք էլ յետ են դառնում եւ պատերից կրակում։ «Դաւրիաները», ի հարկէ, փախչում են. մերոնք էլ քաշւում են իրենց տեղերը։

Միւս առաւօտ Այդեսատանը չրջապատւում է զօրքերով՝ խուզարկութիւններ անելու պատրուակով։ Ընկած զինուորի դիակը տեսնելով թուրքերը զրդռւում են եւ սկսում աչ ու ձախ կրակել անզէն մարդկանց վրայ։ Այդ ժամանակ սպանւում է մի խենթ կին, «Մարօ» անունով, եւ դէպքը կոչւում է «Մարօի դէպք»։

Հայ հարուստների, միսիոնարների եւ եւրոպական հիւպատոսների միջամտութեամբ սպանութիւնները դադարում են։ Ժամանակի վախկոտ եւ խաղաղասէր կուսակալ Թահիր փաշան հիւպատոսների հետը համաձայնւում է, որ խուզարկութիւններ չպիտի կատարուին, եթէ Անդրանիկն իր խմբով Վանի չրջանից հեռանայ կամ դէպի Պարսկաստան եւ կամ դէպի Մուշ։

Բնորոշ է, որ Սասունի դէպքերի առթիւ Բիթլիսի կուսակալը մեղադրում է Թահիր փաշային, որ նրա թուլութեան երեսից յեղափոխականներն արտասահմանից անցնում են Վան եւ այնտեղից՝ Մուշ։

Ինչ եւ է. հիւպատոսներն ու քաղաքացիները դիմում են Կոմսին եւ Անդրանիկին, որոնք, երկար եւ բարակ խորհրդակցութիւնից յետոյ, համաձայնւում են եղած առաջարկին։

Ուրիշ ելք չկար. արդէն կռիւ անելու ոչ տրամադրութիւն եւ ոչ էլ ոյժ կար։ Մեր ամբողջ ռազմական ոյժը, նոյն իսկ Վանի չրջա-

© National Library of Armenia

նի, սպառուած էր Սասնոյ եւ ապա՝ Մշոյ դաշտի դէպքերի ժամանակ: Նոր դէպքեր առաջացնելու ժամանակը չէր, հարկաւոր էր տեղի տալ: Այդպէս էլ լինում է. Անդրանիկն իր գլխաւոր ընկերներով մեկնում է Վանից: Զինուորներն էլ կամաց-կամաց անցնում են Պարսկաստան: Այսպիսով խնդիրը վերջանում է:

Այս անցքերը մեծ տպաւորութիւն էին թողել Վանի հասարակութեան վրայ: Ամբողջ պատիւը վերագրում էին Կոմսին, եւ նրան պաշտելու չափ սիրում էին իրը փրկարար:

Կար եւ երկրորդ հանգամանքը: Կոմսը տեղացի էր, որը նոյնպէս մեծ տեղ է տուել վստահութեան: Դրսեցիների մասին կարծիք կար, թէ նրանք ի՞նչ պիտի ցաւին իրենց վերայ. ոչ կապեր ունին եւ ոչ սէր. ուրիշ բան է վանեցին, որ Վանի աւերման պատճառ չի դառնայ:

Կոմսի որոշումը անդարձ էր: Չէր ուզում լսել որեւէ առարկութիւն: Պահանջում էր, որ գործերը շուտով յանձն առնենք, հաշիւները փակենք, որ ինքը շուտ մեկնի, քանի «քրշա» կայ, քանի քիւրտերը դեռեւս գիւղերից դէպի սար չեն քչուել:

Ցաւալին այն է, որ տեղացի ընկերներն էլ — Ալէս, Արմենակ եւ Թէոս— նոյնպէս հրաժարւում էին եւ յայտնում, որ իրենք էլ ուզում են մեկնել արտասահման: Ցիմար կացութիւն էր. Իշխանը չէր կարող գաւառը թողնել, որովհետեւ այնտեղ ահագին գործ էր ստեղծել. մեր յոյսը այն ժամանակ իսկապէս գաւառի վրայ էր: Տիգրանը չէր կարող գործի ղեկավարութիւնը իր վրայ վերցնել: Նոյնը եւ Վարդան-Շահբազը: Իսկ ես դեռ նոր էի եկել. ինչպէ՞ս կարող էի ղիսկ անել: Բայց «անձաթը կերել է բանջարը». ստիպուած էինք տեղի տալ: Իշխանը խորհուրդ տուաւ ինձ չվախնալ գործից, այլ վերցնել. ինքը նամակներով ինձ կ'օգնէ, իսկ մինչ այդ՝ ինձ մօտ կը թողնէ Վարդան-Շահբազին, որ լաւ ծանօթ է տեղական պայմաններին, մանաւանդ որ Տիգրանն էլ կուգայ հոն:

Ստիպուած եմ համակերպիլ: Շուտով ծանօթանում եմ բոլոր գործերին: Կազմում

ՏԻԳՐԱՆ – ԱՐԱՄ – ՎԱՐԴԱՆ ՇԱՀԲԱԶ

ենք զինական հաշիւները, պատրաստում ենք դրամական հաշիւները: Բայց առաջ է գալիս մի բարդութիւն. դրամական հաշիւների մէջ 42,000 ղրուշի բաց է նկատւում: Կոմսը ինքն անձամբ չէր վարել հաշիւները եւ լաւ էլ չէր հասկանում. մի երկու շաբաթ էլ դրա վրայ ենք շաբաշաբում: Այն ժամանակ դրամ չկար. այդ բոլորը պարտ էինք չուկային. վախենում էինք, թէ Կոմսի մեկնելուց վերջը կազմակերպութեան ունեցած դրամական վարկը, որը միշտ բարձր է եղել, յանկարծ կոտրուի: Հարկաւոր էր գործը շարունակել, բայց ո՞րտեղից ճարել 42,000 ղրուշի բացը եւ ի՞նչպէս ապրել: Մի գումար, որ այն ժամանակուայ հաշուով 4000 ր. (2000 դոլար) էր:

Ստիպուած ենք բաւականանալ նրանով, որ արձանագրութիւններ ենք կազմում, ամէնքս ստորագրում եւ ուղարկում Արեւելեան Բիւրօին ի գիտութիւն: Այն ժամանակ բացի հանգամանքը պարզ էր. ծախսեր էին արուել առանց գրելու թէ ինչի վրայ. սա կամ նա դրամ էր ուզել: Գիտէին, որ ծախս էին արել, բայց ի՞նչ, ե՞րբ, որի՞ համար, արդարացու-

© National Library of Armenia

ցիչ թղթեր չկային։ Եւ պէտք է ասել, որ այդ պայմաններում թղթեր էլ չէինք պահում դիտմամբ, այլ դրում էինք միմիայն մանրամասնաբար ելքի եւ մուտքի հաշիւները. անունները՝ կեղծ եւ համառօտուած, շատ շատ ծախսարարների կեղծ ստորագրութեամբ հաստատուած արդարացուցիչ թղթերով։

Վերջապէս, Կոմսը մեկնեց 1905 թ. գարնան, իսկ մենք ձեռնարկեցինք գործի։ Բայց, ինչպէս ասացի, դժգոհութիւն կար այս առթիւ տեղացի ընկերների մէջ. ոչ-իսխտական ընկերները խաբար չունէին, իսկ ժողովուրդը ուշ իմացաւ Կոմսի մեկնումը։

Եղած դժգոհութեան արտայայտութիւններից կ՝ուզենայի երկու բնորոշ դէպք մէջբերել. մէկը՝ ներքին, տեղացի ընկերների կեանքից, միւսը՝ ժողովրդի։

Մեր զինուորներից Գրիգորը, որ եղել է Սասուն օգնութեան գնացող Թումոի խմբի մէջ եւ կարծեմ մասնակցել է այնտեղի կռիւներին եւ անցել է Վան, բաւական խօսել գիտէր եւ ձեռքից էլ գործ կը գար. յայտնի ամբոխավար էր եւ խիստ ծեծի կողմնակից։ Կարծեմ՝ ինքնաղլուխ մի սպանութեան եւ կամ մի այլ յանցանքի համար ինձնից առաջ նրան աքսորել էին Լիմ անապատ, «Սասն քաւութեան մեղաց»ը, բայց իրան այնտեղ էլ հանդիստ չէր պահել. դուրս էր եկել մօտի գիւղերը, դատեր կտրել, ճգնաւորների, վարդապետների գլխին օրիններ սարքել, անապատի մէջ իր խելքով բարեփոխութիւններ մտցրել։ Եւ այդ բարեփոխութիւնների վկան էլ այն էր, որ վերցրել էր բոլոր հին մեծ հնագիտական, դեղարուեստական արժէք ունեցող պատկերներն ու վարագոյրները լուանալ էր տուել՝ կեղտերը մաքրելու համար, բայց, ի հարկէ, ամէն բան փճացրել էր։ Կարծեմ աքսորը դեռ չլրացած՝ Կոմսի ժամանակ վերադարձել էր քաղաք։ Իմ ժամանակ գիտէի, որ կազմակերպութեան հաշուին ապրում էր. ունէր տուն եւ կարծեմ երկու քոյր թէ երկու եղբօր աղջիկներ, որոնք ապրում էին Միրզօեան կարօի տունը։

Դրամական տագնապի պատճառով, ծախսերը կրճատել եւ որոշ սահման էինք դրել։ Մի օր Գրիգորը գրգռուած մտաւ ինձ մօտ գոռում գոչումով. յայտնեց, որ ինքը չի կարող ապրել որոշուած գումարով, որ ես բռնութիւն եմ անում, հին գործիչներին քշել եմ ուզում, եւայլն։ Պահանջեցի, որ սենեակը թողի։ Աւելի կատաղեց։ Ուրիշ ելք չկար, վար գտնուող տեղացի ընկերներին կարգադրեցի, որ քշեն։ Նրանք էլ, փոխանակ հեռացնելու, ուզեցին հանդստացնել եւ հարցնել, թէ՝— թողէ՛ք, տես ենք ի՞նչ է պատահել, Գրիգորը ի՞նչ է ուզում եւայլն։ Այս բանը ինձ վրայ աւելի ազդեց։

Այդ օրը մենք «Փաշի Փողան» «Դրախտն» էինք. մեր տան դէմը գտնուում էր ինձ հետ պտտող զինուորական խումբը, Յարութիւնը, (ինձ հետ Պարսկաստան եկած եւ այնտեղից Մօսիի հետ հասել էր Վան), Մօսօն, ծուռ Դաւիթը։ Ստիպուած եղայ վազել նրանց մօտ եւ կանչել։ Նրանք եկան, ի հարկէ Գրիգորին հեռացրին, բաւական անհամ միջադէպերից յետոյ։

Այս, ի հարկէ, ցոյցի պէս մի բան էր, ինձ փորձել էին ուզում, կամ, աւելի ճիշդ, վախեցընել։

Նոյն դիշերը տեղական ընկերներով ժողով ունեցանք Վարդան Շահրազի հրաւէրով։ Գանգատուեցի, որ Ալէքսը, Արմենակը եւ միւսները չէին ենթարկւում ինձ, որ իմ դէմ դաւ կայ, որ այս պայմաններում աշխատել չեմ կարող, ինչպէս եւ ամէն մարդու քմահաճոյքին տեղի տալ։ Թէոսն երդում, պատառ եկաւ, թէ եղածը թիւրիմացութիւն է, թէ նման դէպք էլ չի կրկնուի եւ թէ ինքն իր գլխով պատասխանատու է...

Դէպքը սրանով էլ փակուեց, եւ իրօք ուրիշ «ցոյց» իմ դէմ էլ տեղի չունեցաւ։

Ժողովրդական հոգեբանութեան տեսակէտից շատ բնորոշ է եւ հետեւեալ կուրիոզը։

Բանտում մենք ունէինք բազմաթիւ քաղաքական յանցաւորներ,— ոմանք վճիռ կերած, ինչպէս Վարդգէսը, Մուշեղը եւլն., ոմանք էլ դեռ դատի տակ։ Վերջինների համար զանազան միջոցների էինք դիմում՝ ազատելու կամ թեթեւ պատիժ վճռել տալու։

Պէտք էր լինում բռնել Թուրք փաստաբան, հայ դատաւորներին տեսնել եւ խնդրել կամ, աւելի ճիշդ, ասել, որ խայտառակութիւն չանեն։ Շատ անգամ Թուրք դատաւորներին հարկ էր լինում կաշառել կարեւոր ընկերներ ազատելու համար։

© National Library of Armenia

Այսպիսի աշխատանքները մեզ համար կատարում էր Նշան էֆ. Գալֆեան՝ մի ինքնոյս փաստաբան, բայց ընդունակ եւ ճարպիկ մարդ: Եւ պէտք է խոստովանել, որ բաւական ժամանակ նա շատ մեծ ծառայութիւն է արել մեզ համար: Ազատութեան ժամանակ Դաշնակցական դարձաւ եւ կուլտուրական ու պետական գործերի մէջ կուսակցութեան կողմից լաւ աշխատում էր: Վերջը ինքնագլուխ կերպով իր թեկնածութիւնը դրեց պարլամենտական ընտրութիւնների ժամանակ ու կուսակցութիւնից հեռացուեց: Մեռաւ Կարին, պատերազմի ատեն, 1915 թ.:

Այդ օրերին բանտումն էր մեր ընկերներից Բիթլիսցի Արմենակ Ցօխիկեանը, Սլաք կեղծ անունով: Նա բռնուել էր Ալաշկերտի Միրզաջան գիւղում, մեր քիւրդ բարեկամ Մահմուտ բէյի տանը, կարծեմ Մօսուն և Զառանի արշաւանքի հետեւանքով: Նա ներկայացել է, որպէս Պարսկաստանցի բժիշկ, իբր թէ Միրզաջան է գնացել Մահմուտ բէյի կնոջ բժշկութեան համար: Այս բանի համար վկայութեան էր կանչել Աբաղայի Մուսդաֆա բէյին՝ Հայոտարանցի աշիրաթի բէյերից մէկին, որը եկել եւ վկայում էր, թէ իրօք, Սլաքը Կարանի բժշկութիւն էր անում, եւ ինքը գիտէ, որ նա Պարսկաստանցի է... Արմենակն իրօք, Կարանի «բժշկութիւն» էր արել Մուսդաֆա բէյի մօտ, երբ վերջինը 1900–902 թ. Կարանի էր քաշուած՝ Թուրքերից խռոված լինելու պատճառով: Կարանի «բժշկութիւն» էր անում, ի հարկէ, մեր փոխադրական գործերը տեսնելու համար:

Հարկ կար Նշան էֆ. տեսնել Արմենակի դատական գործի կազմակերպման համար: Բանտի գործը վարում էր մեծ հմտութեամբ Թէոսը, ինչպէս եւ նամակային կապը նա էր պահում: Նշան էֆ. Թէոսի ազգական էր եւ անձնական բարեկամը: Ամէն անգամ՝ նրան տեսնելու համար՝ պէտք էր լինում Նշան էֆ. քաղաքամիջից Այդեստան հրաւիրել:

Տեսակցութիւններն, ի հարկէ, գիշերներն էին լինում: Կամ Նշան էֆ. էր գալիս Թէոսենց տունը, որ շատ կասկածելի էր, որովհետեւ Թէոսը յայտնի փախստական գործիչ էր եւ նրա տան վրայ միշտ հսկողութիւն կար: Կամ մենք էինք գնում իր անեռանց տունը՝ Արարուց կողմ Բազար Գիւրիկենց ճոճ աղենց տունը:

Երեկոյեան դէմ ես եւ Թէոսը մի քանի զինուոր ընկերներով գնում ենք Նշան էֆ. մօտ որոշուած տունը: Նոր են ընթրիքը վերջացրել (Վանում օրական երկու անգամ են ճաշում,— առաւօտեան վաղ, երբ չուկայ են գնում, եւ մէկ էլ երեկոյեան՝ չուկայից վերադարձին): Նստում ենք, երկար ու բարակ «բարի եկաք», «բարի տեսանք», «վըր մեր աչաց», վըր մեր գլխուն» եւայլն:

Նշան էֆէնտուն առաջին անգամ եմ տեսնում. հաճելի դէմքով մի երիտասարդ է: Երեւում է, որ մեր ներկայութիւնը ջղայնացնում է նրան, մանաւանդ վախեցնում է, թէեւ տաճկական նուրբ քաղաքավարութեամբ աշխատում է սքօղել: Ինքը գիտէր, թէ ով եմ ես, իսկ տեսեցիք՝ ոչ...

Խօսակցութիւնը, քանի որ ընդհանուր է, կատարում ենք տնեցոց ներկայութեամբ: Մէկ էլ տան պառաւը, որ Թէոսին բարեկամ էր դալիս, հարցրեց Թէոսին.

— Թէոս աղա, քե մեռնիմ, ճի՞շդ է, որ Պ. Բժիշկը (Կոմս) գնացել է. խա՞...

— Հա, մայրիկ, գնացել է, ամա շուտով կը գայ:

— Արար, մեր տունը աւրեց. ափսոս չէր մեր Պ. Բժիշկ: Սա նոր եկածը, կ'ըսեն, ծուռ է, վեր վար չի ճանչնայ, պիղծ է (խիստ իմաստով), մեր անուշ Վանը աւրել պիտի տայ...

Ամէնքս ծիծաղից մեռնում ենք: Խեղճ պառաւը չգիտէ, որ «պիղծը» եւ «ծուռը» դէմը նստած է... Ուշ գլխու ընկաւ...

— Արար... քէօռնամ ես... Ինչ ըրի. մեղայ քեզ, Աստուած: Աս էլ աղէկ կ'երեւայ: Աստուած բարի յաջողութիւն տայ:

Բայց կարծեմ առ ի քաղաքավարութիւն էին ասուած այս խօսքերը: Ժամանակ չկորցնելու համար անցնում ենք միւս սենեակը մեր գործին:

Նախ քան գործերի ընդհանուր ընթացքը պատմելը, կ'ուզէի տալ այն փախստական եւ ոչ փախստական գործիչների համառօտ կենսագրականները, որոնք Վան մտած ժամանակ գործօն մասնակցութիւն ունէին կազմակերպական աշխատանքների մէջ:

Սկսինք փախստական ընկերներից:

© National Library of Armenia

ԻՇԽԱՆ, ՆԻԿՈԼ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ. — Իշխանը Շուշեցի էր. կրթութիւնը ստացել էր Շուշուայ թեմական դպրոցում, շարունակել էր Երեւանի թեմականում, վերջին կարգից աւարտական քննութիւն տալով դուրս էր եկել:

Պատանեկան հասակից մտել էր յեղափոխական ասպարէզ. եկել էր գործիչ Ալեքսանդրապոլի եւ Կարսի շրջաններում: 1903 թ. մտել էր Երկիր՝ Բասէն, Մենակի հետ: Անցել է սահմանը՝ տաշնորդելու Նեվրուզի խումբը: 1904 թ. մասնակցել է Ուզունվէրանի եւ Բասէնի դաշտի կռիւներին, Նեվրուզի խմբի հետ: Խումբի մնացորդների հետ վերադարձել էր Կովկաս եւ նոյն թուին (1904), Կոմսի հետ խմբով անցել էր Վան:

Իշխանին, ինչպէս իր տեղում ասել եմ, ես ճանաչել եմ դպրոցական օրերից: Նրան առաջին անգամ աշակերտական զարգացողական (որ յետոյ դարձաւ յեղափոխական) խմբի մէջ մրցընկերս ես եմ եղել: Նրանց խմբի հետ պարապել եմ 2–3 տարի: Փոքր ժամանակից ըմբոստ բնաւորութիւն ունէր. բայց չնորհիւ ընկերական ոգիին եւ ընդունակութիւններին, բոլորի համակրութեան էր արժանացել, թէեւ իր հասակակից ընկերները նրանից ոչ միայն ակնածում էին, այլ եւ վախենում: Դեռ աշակերտական սեղանի վրայ հայրենասէր էր եւ փորձել էր փախչել Հայաստան:

Նրան ես հանդիպել էի ե'ւ Կարս: Սովորական միջակ եւ ճարպիկ մի երիտասարդի տպաւորութիւն էր թողել վրաս, մի քիչ յաւակնութիւններ էր ստացած:

Ուրիշ բան էր Վանի տպաւորութիւնը: Այդ մի տարի–տարի ու կէսը կարծես բոլորովին փոխել էր նրան: Աւելի լուրջ էր եւ հասունցած, թէեւ 22–23 տարեկան լինէր:

Արդէն իրեն համար ստեղծել էր հասարակական դիրք յեղափոխական ասպարէզում. կարողացել էր կարճ ժամանակում ամբողջ Լեռնապատի շրջանի գիւղերը կազմակերպել, ժողովուրդը բաւականին զինել. ստեղծել էր հրաշալի զինուորական խմբեր. իսկ իր Թռուցիկ խումբը, Վասպուրականի ամենաընտիր եւ ամենակտրիճ խումբն էր: Բազմաթիւ կռիւների էր մասնակցած: Զարմանալի ղեկավարելու, թելադրելու, կազմակերպելու շնորհք ունէր: Նոյն շրջանում կային 10–15 տարուայ անցեալ ունեցող գործիչներ (ինչպէս Շատախցի Յովսէփը, Նորգեղցի Հաջին Եւն.), որոնք բոլոր ենթարկում էին նրան եւ մտել էին, իբրեւ հասարակ զինուորներ, նրա խմբի մէջ: Քրտերի մէջ արդէն անուն հանել էր իր կռիւներով և գործունէութեամբ. իսկ կառավարութիւնը Վասպուրականի յեղափոխական գործիչների մէջ ամենաչատը Իշխանից էր վախենում եւ նրան հետեւում: Նարեկի երկու կռիւների առթիւ, արդէն դատի տակ էր եւ «դիպաի» (ի բացակայութեան) «հիւրմ» (վճիռ) կայացրին մահուան կամ 101 տարուայ բանտարկութեան, իբրեւ «էշկեա» (աւազակ): Այսպէս էին կանչում Թուրքերը հայ յեղափոխականներին անարգելու համար:

Նրանից պատկառում էին ե'ւ Վանի մեր ընկերները ու զինուորները, իսկ ժողովուրդը ոչ միայն պատկառում էր, այլ եւ սիրում: Արդէն սկսել էին երգել նրա քաջագործութիւնները՝ «Իշխան եկաւ ձեռ մավիզէր»...

Կարճ. իմ Վան մտած ժամանակ Իշխանը, կարելի է ասել, ամենահեղինակաւոր զինուորական յեղափոխականն էր:

Իշխանի մասին կենսագրական դիծեր եւ յիշողութիւններ տես «Հորիզոն». 1916, թիւ 78, ապրիլ 7:

ՎԱՐԴԱՆ ՇԱՀԲԱԶ. — Սա Սվազի վիլայէթի Տիվրիկ գաւառից էր, արդէն հասակաւոր, ճերմկած մարդ էր, մեր մէջ ամենահասակաւորը: Դրա համար էր որ «Բիձա Վարդան» էինք ասում. արհեստով լաւ ատաղձագործ է եղել: 90-ական թուականներից Պօլսում մտել է Հ. Ց. Դաշնակցութեան մէջ. Բանք Օսման մտնողներից մէկն էր, ապա աքսորուել էր Ամերիկա:

Ամերիկայից անցել էր Պարսկաստան կազմակերպական գործով: Շնորհքով եւ հմուտ արհեստաւոր լինելով՝ մտել էր Թաւրիզի մեր զինագործական արհեստանոցը եւ մի երկու տարում սովորել էր զինագործութիւն:

Զգիտեմ, ո՞ր թուականին էր մտել Վան, իբրեւ արհեստաւոր գործիչ: Աշխատակցել էր Վարդգէսին, իսկ նրա բռնուելուց յետոյ, մի առժամանակ կատարել էր կուսակցութեան ներկայացուցիչի դեր: Վարդգէսի ձերբակալուելուց վերջը, սոսկալի ռէակցիա է եղել Վանում. ոչ ոք չի ուզեցել տուն տալ, դրամ չեն

© National Library of Armenia

տացել արտասահմանից, յարաբերութիւնները եւ կապերը խզուել են: Վարդգէսի բանտարկուելու պատճառով հացկները բռնուել եւ փնացուել էին: Երկար ժամանակ սոսկալի նեղութիւն են քաշել ինքը՝ Թէոսը, Ալէսը, Արմենակը, Կառկաոցի Եղիշը եւ ուրիշները. շաբաթներով ընկած մնացել են մի խոնաւ նկուղում, առանց տաք կերակուրի, ոջիլների եւ կեղտերի մէջ կորած: Այդ էլ բաւական չէ. ստիպուած են եղել ձմեռով քաղաքից ելնել եւ ապաւինել Վարագայ լեռը. շաբաթներով պատրսպարուել են այրերի մէջ, անօթի, մերկ:

1903-ին իբր պատդամաւոր գնացել էր Բուլգարիա տեղի ունեցած Դաշնակցութեան Ընդհ. Ժողովին, վերադարձել էր Երկիր 1904 թ., ինչպէս իր տեղը ասացի, Տիգրանի, Մանուելի Մեսրոպի եւ ուրիշ ընկերների հետ:

Վան մտած ժամանակս Վարդանը քաղաքումն էր: Նրանից ստացած առաջին տպաւորութիւնս հրաշալի էր: Խաղաղ դէմքով, ճերմկած մազերով, միջահասակ մի մարդ էր, շատ ուժեղ եւ պինդ ջղերով, երկաթի պէս դիմացկուն: Ձմեռը գլխաբաց եւ մի շապիկով էր պտտում:

Օրերով մարդերու հետ չէր խօսում. որեւէ գործիք էր քանդում, դիտում, փորձում կամ արհեստանոցում աշխատում: Առ հասարակ ձմեռը մնում էր գաւառ — Խնձորուց, սոսկալի նեղութեան եւ կարիքների մէջ: Կերածը եղել է կորեկ եւ վայրենի խնձոր. շատ անգամ հասարակ թէյ անգամ չի եղել:

Վարդանը իմ աչքում միշտ եղել է մեր ժողովրդի տիպարը,— համեստ, աշխատասէր, չինարար եւ լուսեաց:

Վարդանը մնաց Վան մինչեւ Թուրքական սահմանադրութեան հրատարակութիւնը, որից յետոյ մեկնեց դէպի իր հայրենի տունը, ուր կին ունէր, որ 20 տարի էր չէր տեսել, եւ որդի ունէր, որին չէր ճանաչում:

Ազատութեան օրերին նա մի կողմից իր պարէնն էր հոգում, միւս կողմից շարունակում էր կազմակերպական յեղափոխական գործը: Նա մեծ քանակութեամբ զէնք է մտցրել Սվազի եւ Տիվրիկի շրջանը:

1915 թ. մեծ եղեռնի օրերին՝ Վարդանին, ինչպէս եւ միւս յեղափոխական գործիչներին, կառավարութիւնը ուզեցել է թակարդ գցել, բայց նրանք, իբրեւ փորձ եւ հին յեղափոխականներ, կռահել են եւ խուսափով լեռը քաշուել:

Տարի ու կէս թէ որքան նա ապրել էր իրենց գաւառի լեռները: Լեռների գագաթը չինել էր մի գաղտնի տուն եւ իր ճակատագրին վայել ամէն սոսկումներով ապրել էր ու տոկունութեամբ սպասել, մինչեւ որ ոուսները մտել էին Երզնկա:

Վարդանին տեսայ 1917 թ. գարնան. նոյն դիմացկուն, սառն եւ հանդարտ մարդն էր... Մի քանի շաբաթ ընկերներին եւ գործերին ծանօթանալով, նա նորից վերադարձաւ Երզնկա. փորձեց մի քանի անգամ Տէրսիմից անցնել Տիվրիկ, այնտեղ եղած մնացորդները փրկել բերելու համար, բայց չյաջողուեց:

Այսօր էլ դեռ նա պատնէշի վրայ է, Թուրքերի մէջ մնացած հայերի փրկութեան գործով է զբաղուում:

Ճիշդ հայ ժողովրդի նման. զլխուն հարուածում են, իսկ նա շարունակում է ապրել, մանաւանդ՝ չինել...

ՏԻԳՐԱՆ – ՑԱՐՈՒԹԻՒՆ.— Տիգրանի մասին արդէն վերը մի քանի խօսք ասացի. շատ գաղափարական եւ մաքուր մարդ էր, բայց բաւական անգործնական եւ ջղային. ժողովրդի հետ վարուել չգիտէր, հակառակ իր թափած բոլոր ջանքերին: Պէտք է խոստովանել, որ թէեւ աւելի էր զոհողութիւն անում եւ ջանքեր թափում, քան մեզանից որեւիցէ մէկը, բայց մեծ արդիւնք չէր դուրս գալիս:

Բաւական կանոնաւորութիւն էր մտցրել թէ՛ կենտրոնական Կոմիտէի եւ թէ՛ գաւառական ու գիւղական հաշուետուութեան մէջ: Կոյր աղիքի հիւանդութիւն ունէր. երբ ցաւը բռնում էր, դժոխային տանջանքներ էր ունենում. լաւ չէր քայլում, այնպէս որ գործերն էլ դանդաղ էր տանում:

Մէկ անգամ Թիմար՝ Ալիւրի մէջ քիչ մընաց, որ դէպքի հանդիպի: Թէեւ ինքը ռուսական բանակում ծառայած էր եւ լաւ նշանաձիգ էր, բայց հետը շատ փորձառու զինուորներ չըկային: Երբ, յանկարծ, լուր ստացանք, որ Ալիւրը պաշարուած է, քաղաքից զէնք եւ թընդանօթներ էին տարել, կարգադրութիւններ արինք, որ մօտի գիւղերից օգնութեան գնան, իսկ քաղաքից՝ գիշերը: Մինչ այդ, ճարպիկ Ալիւրցիք ունենում են մի ամբողջ պահարան

© National Library of Armenia

սենեակ, որի մէջ տեղաւորում են Տիգրանին եւ խմբին: Գիւղը թափուած զինուորներին լաւ խմցնում եւ հիւրասիրում են: Խուզարկութիւնը արդիւնք չի տալիս:

Երեկոյեան լուր ենք առնում, որ տղաները ազատուել են: Տիգրանը պատմում է, թէ ինքն ու ընկերները վեց ժամ չան հալ են քաշել թաղրստարանի մէջ: Շատ յուզիչ է եղել մի պառաւ կնոջ տրածը: Երդիքի մօտ տանիքը նըստած՝ ինքն իրեն միշտ խօսել է. տղաներին հաղորդելով գիւղի մէջ զօրքի շարժումների մասին՝ միշտ յուսադրել է, թէ բան չկայ. կամ հրահանգել է, որ պատրաստ լինին, դէպի իրենց են գալիս:

Հակառակ իր հիւանդութեան եւ քաշած անտանելի ցաւերին, Տիգրանը երկու տարի տոկաց երկրի անտանելի դժուարութիւններին: 1906-ի վերջը, ընկերների ստիպման տակ, դուրս եկաւ եւ գնաց Եւրոպա վիրահատութեան: Ընտանեկան պատճառներով Տիգրանը մի առժամանակ քաշուեց յեղափոխական ասպարէզից՝ միշտ ընկերների հետ նամակային կապ պահելով եւ միշտ երազելով երկիրը եւ ցաւելով, որ հեռու է անմիջական ակտիւ գործից: 1913-ին, երբ Ռուբէնը պիտի երթար Մուշ, իր հետ էր վերցնում նաեւ Տիգրանին, որ այնտեղ յայտնի էր Վարդան անունով:

1913 թուականին, դպրոցական, հասարակական եւ յեղափոխական գործունէութեան մէջ, աջակից եւ փոխարինող է եղել Ռուբէնին:

1914 թուականին, երբ պատերազմը պայթեց, Կոմսը (Վահան Փափազեանը), իբրեւ մէրաուս, կուսակցական ընկերների որոշումով ճամբել էին Մուշ՝ ընկերներին օգնելու: Ճակատագրի բերմունքով այն մարդիկ, որոնք երբեմն իբրեւ թշնամի են բաժանուել, ազգային մեծ ճգնաժամին միասին են ընկնում, միատեղ աշխատելու հարկին տակ դրուում:

Սասունի կռիւներից առաջ Տիգրանը (Վարդանը) միւս ընկերների հետ քաշւում է սար, իբրեւ փախստական: Մասնակցել է Սասունի կռիւներին, եղել է ռազմամթերքի եւ պահեստի ընդհանուր կառավարիչ եւ մեծ հմտութեամբ է ղեկավարել գործը:

Երբ եկել է ճգնաժամային բոպէն, երբ ռազմամթերքը սպառուել է ու կռուի ղեկավարները ժողովրդական մեծ ժողովում յայտներ են, որ ընդհանուր դիմադրութիւնն այլեւս անհնարին է, երբ իրար տուել են վերջին համբոյրներ, որոշելով միմեանցից բաժանուել եւ իրենց ճակատագիրը յանձնել կոյր պատահականութեանց, Տիգրանը սաստիկ ազդւում է ժողովրդի այդ յուզումնալից դրութիւնից եւ բացագանչում է. «Հապա ի՞նչպէս թողնենք ժողովրդին մենակ ու անպաշտպան»...

Անփոյթ դէպի սեփական կեանքը, անյոյս դէպի մօտիկ ապագայի արշալոյսը՝ նա առիթներ է փնտռում սպանուելու: Եւ այդ առիթը չի ուշանում... Տիգրանը նահատակւում է Սասունի ապստամբութիւնը ճնշուելուց մի քանի օր վերջ, մի պատահական կռուի մէջ:

ՄԱԿՈՒԵՑԻ ՄԵՍՐՈՊ.— Այն ժամանակ նա յայտնի էր Մաշտոց կեղծ անունով:

Մեսրոպ բնիկ Մակուեցի էր. իր կրթութիւնը ստացած է իրենց գիւղի տարրական դպրոցում. զարգացած եւ առաջ է գնացած կուսակցական կեանքի մէջ: 90-ական թ. սկըսած՝ եղել է կազմակերպութեան մէջ. մասնակցել է առանձնապէս Թաղէի վանքի շրջանի փոխադրութեան: Մոկացի Աղբեր եւ Սլաքի հետ երկար ժամանակ վանքում աշխատել է փոխադրական գործի մէջ,— Կովկասից դէպի վանք եւ վանքից դէպի երկիր: Կորիճ եւ լաւ նշան զարկող տղայ էր, Պարսկաստանցի ընկերների մէջ աչքի էր ընկնում եւ յարգուած: 1904 թ. աշնանը Վարդանի եւ Տիգրանի հետ խմբով անցել է Վան: Այնուհետեւ եղել է Իշխանի հետ Լեռնապատի շրջանի մէջ, մասնաւորապէս Մոկս, Կաղկաղ եւ Գաւաշ: Կազմակերպական զինման եւ զինուորական կազմակերպութեան մէջ մեծ դեր է կատարել:

Սա Տիգրանի պէս դժբախտութիւն ունէր հիւանդ լինելու. փայծաղի հիւանդութիւն ունէր, որը աւելի սոսկալի ցաւեր ունէր, եւ թոյլ էր ֆիզիքապէս:

Հիւանդութիւնը յեղափոխական փախստական կեանքի մէջ աւելի վատ է, քան մահը:

Փախստական կեանքի սարսափը, ամէն օր փոխադրուելու անհրաժեշտութիւնը, յարատեւ կեանքը ոչ թէ քրոնիք սուր հիւանդութիւն ունեցող, այլ եւ մի քիչ ֆիզիքապէս տրկար ընկերների համար անտանելի էր. իսկ սուր հիւանդութիւն ունեցողների համար՝ դըժոխք:

© National Library of Armenia

Դրութիւնը բարդանում է մանաւանդ հիւանդի դիրքի աստիճանով: Եթէ հիւանդը աչքի ընկած, կառավարութեան հետապնդած կենտրոնական գործիչ է, նրա բանը պրծաւ, որովհետեւ ոչ մի տեղ ոչ հանդիստ կարող է առնել եւ ոչ պառկել: Այդպիսի հիւանդներին՝ սիֆ, սուր յօդացաւ, ծաղիկ եւն., որ հանդիստ պառկել է պահանջում, ընդհակառակը շալակած, կատուի ձագի նման ամէն օր տեղափոխութիւն պէտք է անել տնից տուն: Երբ կառավարութիւնը լսում է, որ այս ինչ գործիչը հիւանդ է, հետապնդութիւնները եւ խուզարկութիւնները խստացնում է:

Բժշկական օգնութիւնը տալիս են ընկերները մեծ մասամբ իրենք: Ամէն երկիր մտնող գործիչ սովորում էր բժշկական առաջին օգնութիւն հասցնելու չափ դիտութիւն: Շարժական դեղարանը միշտ մեզ հետ կար, նոյնպէս եւ «ընտանեկան բժշկարանը», որ կարդում էին եւ բժշկում իրար եւ ժողովուրդը:

Այդ ասպարէզի վրայ մեծ յաջողութիւն ունէր Կոմսը: Վանում նրան անուանում էին «Բժիշկ»: Նա յայտնի էր նաեւ «Բժիշկ» կեղծ անունով եւ կարգին բժշկութիւն էր անում: Ամէն տուն մտնելիս, ով փորի ցաւ, աչքի ցաւ կամ 20 տարուայ ոսկրացաւ ունենար, գալիս էր Վահանից իլաջ (դեղ) ուզելու: Վահանն էլ կամ մեր ունեցածներից էր տալիս, կամ «ընտանեկան բժշկարանից» դեղատոմս գրելով՝ Ամերիկեան դեղարան էր ճամբում:

Մի ժամանակ տեսանք, որ Վահանի բժշկութիւնը մեր վրայ թէ թանգ էր նստում եւ թէ պիտի վտանգի, որովհետեւ իրրեւ բժիշկ իմաց էին տալիս դրացի բարեկամներին, եւ գալիս էին գտնում: Մի օր Իշխանի հետ գաղտուկ որոշեցինք բժշկի «ընտանեկան բժշկարանը», այսինքն՝ գիտութեան ամբողջ դրամագլուխը գողանալ: Նա գիրքը պահում էր իր պայուսակի մէջ: Մի օր յարմար առիթ գտանք, գիրքը թոցրինք եւ ուղղակի ճամբեցինք Աղթամար, որ այլեւս ձեռք չընկնի: Սրանով էլ վերջացաւ Վահանի բժշկութիւնը:

Մեր հիւանդ ընկերներից համեմատաբար երջանիկ էին նրանք, որոնց անունը չէր տարածուած: Այդպիսի դէպքում հիւանդին համար գտնում էինք մի վստահելի տուն, եւ ամէն դիրութիւն ստեղծում էինք, որ բժշկութի:

Բժշկական օգնութեան գործում մեզ մեծ ծառայութիւն են մատուցել ամերիկեան բժիշկները, մանաւանդ տոքթ. Աչքը, որն անվախ միշտ յամախում էր մեր հիւանդներին, ձրիաբար բժշկում եւ ոչ մի անգամ, ոչ ցերեկ եւ ոչ գիշեր չէր մերժում գալ: Նա կատարել է նաեւ վիրաւոր ընկերների վիրաբուժական գործողութիւն եւայլն: Բացի իր անձնական օգնութիւններից նա թոյլատրել էր իրենց հիւանդանոցի ֆելդշերներին եւ հիւանդապահներին, որ յամախեն մեր հիւանդներին եւ բժշկեն: Դեղերն էլ, ի հարկէ, նրանց դեղատնից էին գնում: Ամերիկեան հիւանդանոցի եւ շրջանի տղաներից այդ տեսակէտից մեծ դեր են կատարել Վաղարշակ Տէր Ցարութիւնեանը, դեղագործ Ստեփանը, հիւանդապահ Արմենակը, իսկ վերջերը նաեւ հիւանդապահ Կարապետը:

Աւելին կար. Ամերիկայի միսիոնար բժիշկներն ա՞յնքան բարի էին, որ թոյլ էին տալիս մեր փախստական յեղափոխական գործիչներին,— ի հարկէ, ոչ աչքի ընկնողներից, եւ զինուորներին տեղաւորուելու իրենց հիւանդանոցում: Ամերիկեան հիւրընկալ հիւանդանոցի յարկի տակ ամիսներ հանդիստ պառկել եւ բժշկուել են մեր Տիգրանն ու Մեսրոպը եւ ուրիշ շատ զինուորներ: Մենք էլ մէկ մէկ, զինուած խմբով, գիշերը գնում էինք նրանց՝ այցելութեան:

Մեսրոպը կարծեմ մի կէս տարուց աւելի չկարողացաւ մնալ երկրի մէջ հիւանդութեան պատճառով: Նա էլ անցաւ Պարսկաստան եւ այնտեղ շարունակեց յեղափոխական գործունէութիւնը: Կամաւորական շարժման ժամանակ նա Դրօի գնդում վաշտապետ էր: Դրօի հետ առաջինն էր, որ մտաւ Շատախ: Նա էր, որ գնաց իր ծանօթ շրջանները, Սպարկերտի եւ Մամրտանքի ժողովուրդը փրկեց բերաւ Մոկս, որ եւ պաշտպանեց մինչեւ նահանջի օրը. ամենավերջինը եղաւ, որ վաշտով Վանից դէպի Բերկրի նահանջեց:

Ցարութիւն Միրաքեան.— Սա Ամերիկայից եկած ընկերներից էր: Սասուն գնալու համար Աղէքսանդրապօլից միացաւ ինձ: Պարսկաստանում բաժանուեցինք: Ցետոյ Մո-

© National Library of Armenia

ասի եւ Նիկոլի հետ եկաւ Վան։ Սրան ինձ ընկեր էին տուել Ալէքսանդրապոլում, իբրեւ պայթուցիկ նիւթերի վարպետ։ Սկզբնական շրջանում ինձ հետ էր Վանում. յետոյ, կամաց-կամաց ծանօթանալով շրջանի գիւղերին, մեծ ընդունակութիւն ցոյց տուեց ժողովրդական կազմակերպութեան եւ զինական-զինուորական ասպարէզում։

Շուտով նրան տուինք մի ամբողջ ու մեծ շրջան, Արճակի գաւառը, որ 35-40 գիւղ ունէր, ինչպէս նաեւ Բոզաղ-Գեւասանի շրջանը։

Ցարութիւնը դարձաւ Վանի շրջանում ամենաժողովրդական անհատը։ Կարող եմ ասել, որ մեր ժամանակում, մեր ընկերներից ոչ որի հետ ժողովուրդն ա՛յնքան սերտ կերպով չէր կապուած, որքան՝ Ցարութիւնի հետ։ Նա ունէր ժողովրդական գործչի բոլոր բարեմասնութիւնները. դիմացկուն էր, խաղաղ բնաւորութիւն, մեծ գաղափարականութիւն եւ զոհողութեան ոգի ունէր, ինչպէս եւ ժողովրդի հետ խօսելու փայլուն լեզու, համբերատարութիւն, կազմակերպելու եւ ղեկավարելու ընդունակութիւն։

Ցարութիւնը Վանում մնաց երկու տարի։ 1907 թ. հիւանդութեան պատճառով դուրս գնաց մի քանի ամսով, 1908 թ. սահմանադրութեան գարձաւ երկիր, երբ արդէն հիւանդութիւնը յաղթել էր նրան։ Լաւ բժիշկների բացակայութեան պատճառով մնաւ 1909 թ. ամեռը։ Նրա յուղարկաւորութեան հանդէսը Վանի մէջ ոչ մի ժողովրդական գործիչ չէ ունեցել։ Ամբողջ գաւառը թափուել էր քաղաք իր վերջին յարգանքն ասելու իր սիրեցեալ գործչին։

Ցարութիւնի մասին կենսագրական յօդուած կայ «Դրօշակ»ի 1912 թուերի մէջ։

Թէոս Տեղտրիկեան։— Սա տեղացի ամենահին ընկերներից է։ Կազմակերպութեան մէջ եղել եւ գործել է 90-ական թուականներից։ Առաջին անգամ պատանի հասակում, դեռ 16-17 տարեկան, Մեծ Վարդանի եւ Վազգէնի հրահանգով, տեղորի է ենթարկում մի դաւաճան հայի։ Բայց առաջին փորձն անյաջող է անցնում. հեռուից մի քանի անգամ կրակում է զոհի վրայ, թեթեւ վիրաւորում ու փախչում է։

Այնուհետեւ փախստական է դառնում։ 96 թ. Վարդանի խմբի հետ հազար ու մի նեղութիւններով, ինչպէս այդ նկարագրուած՝ է Վարդանի յիշողութեանց մէջ, անցնում է Պարսկաստան, այն տեղից էլ Կովկաս։ Այստեղ էլ աշխատում է կուսակցութեան շարքերում, բայց, երբ ընդհանուր ներման լուրը լսում է, վերադառնում է կրկին Վան։

Այդ ժամանակ Վազգէնը նահատակուել էր։ Վանում սոսկալի բէակցիա կար. դեռ Վարդգէսը նոր էր մտել Վան. ոչ որ կար գործիչներին օգնող եւ հիւրընկալող։ Այն աստիճան էր հալածանքը, որ մի ռուսահայ, Լեւոն Գիլումեան անունով, եկել էր Վան. հասել էր Աւանց, ուր այնքան էին վախեցրել նրան, որ յետ էր փախել, առանց Վան իսկ մտնելու։

Վարդգէսը շնորհիւ Ալէքսի, Արմենակի եւ վերջը Թէոսի աշակցութեան կամաց-կամաց շրջանակ եւ կազմակերպութիւն է ստեղծում Վանում եւ շրջաններում։ Կարճ ժամանակում կազմակերպութիւնը ոտքի է կանգնում եւ այն աստիճան, որ դառնում է կամուրջ Մուշ փոխադրուող գործիչների եւ ռազմամթերքի համար։ Այդ ժամանակները Մուշն է անցնում Սասունի Վահանը Հրայրի հետ, որ Վան էր քաշուել Վարդգէսի մօտ, Մշոյ հալածանքներից չուշ առնելու։ Վան էր հասել Ամերիկայից եւ՝ Աշոտ Երկաթը, որը նոյնպէս գնաց Մուշ-Սասուն եւ ապա տեղաւորուեց Ախլաթ։

Վարդգէսի օրով սկսւում է փոխադրական գործը, որի ժամանակ մեծ դեր է կատարում Թէոսը։ Վերջինն այդ ժամանակ լեռալ էր։ Վանի մէջ ապահով եւ լաւ վաճառականի որդի, ինքն էլ խանութ էր բացել, որը յետոյ դարձել էր Դաշնակցութեան դրասենեակ, ինչպէս ասում էին տղաները։ Ի հարկէ շուտով աչքի է ընկնում եւ փախստական դառնում։ Այնուհետեւ լինում է Վարդգէսի թեւ ու թիկունքը, բաժանում է նրա հետ բոլոր դառնութիւնները, նրա հետ բանտարկւում է եւ կաչառքի ոյժով ազատւում՝ նորից մտնելու համար յեղափոխական ասպարէզը։

Վարդան Շահբազի մասին խօսելիս, ասացի, թէ ի՞նչ նեղութիւններ են քաշած Վանում։ Վարդգէսի դաւաճան Սէմէրջեան Խաչիկի տեռորը «Մուռ» Դաւիթի ձեռքով կազմակերպողն եւ ղեկավարը եղել է ինքը Թէոսը։

Երբ Կոմսը Վան է մտնում, Թէոսը Կոմսի

© National Library of Armenia

ամենալայն օժանդակողը և լաւ աշխատող ընկերներից մէկն է դառնում: Այնուհետեւ Վանում ոչ մի դաւադրութիւն, ոչ մի յեղափոխական եւ տեղական գործ չի կատարւում առանց Թէոսի անմիջական ղեկավարութեան, հսկողութեան կամ մասնակցութեան:

Շատ խոշոր ձեռնարկ է եղել 1904 թ. Վարդգէսին բանտից փախցնելու փորձը: Բանտից 100–150 մետր երկարութեամբ ական էին փորել Վարդգէսի բանտարկուած մասնարաժնի տակ. հասցրել էին մինչեւ պատի մօտ. մնացել էր մի դիշերուայ աշխատանք, որ հասնեն սենեակի յատակին: Այդ օրը սակայն անձրեւ է գալիս, ջուրը ծծում է եւ կասկածանքի տեղիք է տալիս, որով եւ բացւում է դաւադրութիւնը:

Թէոսը դրա վրայ ամիսներ է չարչարուել: Ամէն դիշեր, ինքն անձամբ գնացել է ականի մէջ քանքաններին սիրտ տալու, օժանդակելու եւ պաշտպանելու: Եւ այդ բոլորը Այդնստանից հեռու բերդի տակ՝ ձիշտ պահապանի քթին տակ: Ինչպէս ինքն էր ասում շատ անգամ, երբ թուրք պահապանը բանտի տանիքից միզում էր, ջուրը թափւում էր ուղիղ իրենց գլուխի վրայ: Այդ ձեռնարկը Վանի այն ժամանակուայ ամենափայլուն գործերից մէկն էր, որի մեծ պատիւը առաւելապէս պատկանում է Թէոսին:

Այնուհետեւ Թէոսը կազմակերպել է եւ կատարել անձամբ մի քանի նշանաւոր տէրորներ, ինչպէս օրինակ, փոլիս Մխիթարի, Ոստանի գայմագամ Արմենակ էֆ. Եւայլն: Թէոսը էլ իմ ժամանակուայ գլխաւոր դերակատարներից մէկն էր, միակն էր, որ քաղաքում մեծ կապեր ունէր, ամէնքին լաւ ճանաչում էր, խիստ վարպետ էր եւ խելք ու մանաւանդ լեզու ունէր մարդկանց համոզելու համար:

Թէոսը ուժեղ տիպ է, բայց նրա մէջ ապրել է միշտ կողք կողքի երկու մարդ,— քանդող ու աւերող եւ շինարար: Քանդողը շատ անգամ նրան տանում էր անկման, մօտեցնում ոճրագործի, ըմբոստացնում էր ամէն մի հեղինակութեան եւ սրբութեան դէմ. միայն ատրճանակով էր, որ պիտի խօսուէր այդ ժամանակ նրա հետ... Այս ներքին անդուսպ հրբէշի մէջ սակայն նստած էր եւ մի շինարար, աշխատասէր, հայրենասէր, դէպի Դաշնակցութիւնը անհուն զոհողութեամբ լեցուած մի հոգի:

Թէոսը մինակ սոսկալի էր. նրան հաւասարակշռութեան մէջ պահել են նրա ընկերներից մանաւանդ Ալէքսը: Երբ նրա վրայ եղել է մի ուժեղ եւ լաւ ձեռք, նա միշտ դէպի լաւն է աշխատել: Իսկ երբ այդպիսի ազդեցութիւնը թուլցել է, նա գնացել է դէպի անկում: Վասպուրականի յեղափոխութեան պատմութիւն գրողը, երբ հասնի 1896 թուին 1915 թուականների չրջաններին, անկարող է կանգ չառնել Թէոսի հարուստ գործունէութեան վրայ:

Ալէս Պարսամեան.— Սա Թէոս–Ալէս–Արմենակ երրորդութեան երկրորդ անձն է, բնիկ վանեցի: Ժամանակին եղել է արհեստով դերձակ, իսկ հիմա «յեղափոխական», ինչպէս ինքն էր ասում իր մասին: Դեռ պատանի, 98–99–900 թուերին, կազմակերպութեան մէջ գործել է մանաւանդ Վարդգէսի նոր եկած ժամանակը:

«Կ'երթայինք ցորեկը օրական 2–3 դրուշով կ'աշխատէինք Արմենակի հետ: Երեկոյեան հաց ու պանիրի կուտայինք, կը բերէինք կ'ուտէինք Վարդգէսի հետ, որը՝ ամբողջ օրը ասոթի նստած՝ ակնդէտ մեր գալուն կը սպասէր... Դիշերը զէնքեր կը կապէինք, պ. Վարդգէսի հետ խումբերուն կ'երթայինք: Առանձին զայն տեղաւորելով՝ մենք կրկին գործի կը շտապէինք մի քանի դուրուշ հացի դրամ վաստակելու...»

Ալէքսին վիճակուել էր, իր բնաւորութեան բերմունքով, Վանի յեղափոխական կեանքի մէջ խլուրդի գործունէութիւն: Ալէքսը զէնքի, ռազմամթերքի մասնագէտ եւ պահեստապան էր Արմենակի հետ: Վասպուրական մտած հազարաւոր զէնքերն ու միլիոնաւոր փամփուշտները մէկիկ մէկիկ անցել են Ալէքսի ձեռքով, մաքրուելու, դասաւորուելու եւ խնամքով պահուելու համար: Բոլոր պահարանների տեղը գիտէր, եւ բոլորը համարեա ինքն էր շինել իր ձեռքով:

Առաւօտեան վաղ, երբ խումբը հասնէր որեւէ տեղ, թէյ խմած կամ առանց թէյի՝ Արմենակի հետ պիտի շտապէին իրենց բոյնը (Դրախտը) առաձեռն պահարանից զէնքեր հանելու, մաքրելու, նորոգելու եւ դասաւորելու համար: Խուլ մի տան մէջ, ներսով ներս, ա-

© National Library of Armenia

բեւից եւ լոյսից զուրկ այդ խլուրդային կեանքը խորապէս ազդեց նրա ֆիզիքականի վրայ։ Այժմ նա տառապում է լեղիի քրոնիկական հիւանդութիւնից։ Բնականից սակաւախօս եւ լռակեաց՝ սովորական մարդու տպաւորութիւն է թողնում առաջին պատահողի վրայ, իսկ շատերի էլ ուշադրութեան չէ արժանանում. միշտ հայեացքը դէպի վար, եւ միշտ կարծես ինչ որ դաւեր է որոնում։ Զափազանց պաղարիւն, սոսկալի զգոյշ է եւ չրջահայեաց։

Երբ առաջարկում էի խումբ կառավարել, հեգնաբար ու հազիւ խնդալ բարեհաճելով կ'ասէր. «Ես մէկապետ եմ՝ հազիւ ինձ կառավարեմ. Աստուած պակաս չանի՝ խմբապետները շատ ունինք...»։

Մեզրս չթաղցնեմ, ոչ ես եւ ոչ էլ մեզնից որեւէ մէկը չէր սպասում, որ Ալէսը վերջը կը դառնայ մեծ ռազմական չրջանի հմուտ զինուորական դեկավար...

Բայց անկարելին եղաւ։ 1915-ի ապրիլեան հերոսամարտին Ալէսը Դարդանէլի չրջանական էր, եօթանասունից աւելի փորձ ու անցեալ ունեցող զինուորների կառավարիչ։

Կարծես դիտմամբ իր վրայ էր վերցրել պաշտպանութիւնը Վանի ամենախեղճ թաղի, որ Վանի ամբողջ յեղափոխական պատմութեան մէջ եղել է մեր միջնարերդը։

Դա մեր շարդաղն էր, որին պիտի անդրադառնամ առանձին։

Դարդանէլի արեւելեան կողմից, Այգեստանի դաշտի ամենավտանգաւոր դիրքն էր, չորս կողմը բաց, Հաջի Բէքիրի կէլան իր դիմաց, թուրքական թնդանօթները միշտ ուղղուած իր դէմը. բայց ոչ մի հաւար, ոչ մի խուճապ, օգնութեան ո՛չ մի ջղային ձիչ, միշտ պաղարիւն, միշտ խնայող եւ մինչեւ վերջը անխոցելի։ Դարդանէլում թշնամին չկարողացաւ բազմաթիւ յարձակումներից յետոյ մի թիզ իսկ առաջանալ։ Ալէսի չրջանն էր այդ...

Բայց նա դարձեալ լուռ էր, սակաւախօս։ Եւ, կարծեմ, Վան մտնողներից ոչ ոք իմացաւ, որ Դարդանէլի պաշտպանողը Ալէսն էր։

Արմենակ Շալջեան.— Արհեստով ոսկերիչ է եղել։ Ընտանեկան արհեստ է. հայրը լաւ վարպետ էր. չորս եղբայրներն էլ իրենց հօր մօտ ոսկերչութիւն էին սովորում։ Ինչ որ ասացի Ալէսի մասին սկզբում, պիտի կրկնեմ եւ Արմենակի մասին։ Երկուսը մի խնձոր են՝ երկու կէսի բաժանուած. միայն կարմրաթուշ կողմը Արմենակն է, ճերմակ կամ դալուկ կողմը՝ Ալէսը։

Միշտ ժպտադէմ, երեխայի պէս մաքուր, հարսի պէս ամաչկոտ ու կարմրող, միշտ սիրող ընկերական փայփայանքը, միշտ պատրաստակամ եւ միշտ լռակեաց...

— Թո՛ղ Թէոս աղէն փչի, բաւական է. մեր երկուսի ներկայացուցիչը նա է։ Մեզ գործ տուէք՝ անենք... Եւ պէտք է խոստովանել, որ Թէոսը երկուսի փոխարէն էլ խօսում, արտդութիւն եւ քէֆ էր անում։

Արմենակը սահմանադրութիւնից յետոյ գնաց Պոլիս եւ մնաց հոն։ 1910–12 թուերին Պոլիս հանդիպեցի մեր սիրելի Արմենակին. ծառայում էր լիմոնադի գործարանում։

Խօշ բէշից յետոյ, երբ քէֆը հարցրի, պատասխանեց.

— Բօշ է, պ. Արամ, օրը այն օրն էր, երբ փախստական էինք Վանում։ Այժմ ամէն բան փոխուել է։ Եւ ընկեր եւ դաղափար՝ ամէն բան. երէկուան ամենամօտ ընկերդ այժմ քու երեսին չի նայում...

Բացատրում եմ, որ պայմանները փոխուել են։ Այն ժամանակ ուրիշ էր։ Մենք բացի իրարից ոչ ոք ունէինք։ Գործը՝ մէկ, ձգտումը՝ մէկ, նպատակը՝ մէկ։ Բոլորս հաւասար էինք։ Բոլորս անդրամ եւ մի ամանից կ'ուտէինք։ Այժմ դիրքերը եւ տէրերը փոխուել են։

— Քեզ կ'ասեմ, բօշ է։ Գրել եմ, որ Ալէսը դայ, միասին գործ գտնենք, ապրինք...

— Չէ, Արմենակ, ինչալլահ երկիր կ'երթանք, նորէն գործ կը լինի։

— Այդ ուրիշ բան է. եթէ յեղափոխական գործ եղաւ, գլուխս նրա օղուրին է...

Խե՜ղճ Արմենակ, գործ եղաւ. մէկ էլ, թերեւս վերջին անգամ, ծառացանք թուրք բռնակալութեան դէմ քո սիրած Վանում, բայց դու չկայիր...

Ախալցխացի Հաջի Լեւոնը.— Հաջի Լեւոնը երկիր է մտել 1904 թ. Ֆլէի ջոջ Աղայի հետ։ Վերջինը Բուլգարիայի ընդհանուր ժողովին գնացող երկրորդ պատգամաւորն էր։ Վերադարձել են ձիաւոր խմբով, մեր յայտնի քիւրդվալատ Մատօի առաջնորդութեամբ։ Լիմ գիւ-

© National Library of Armenia

դի մօտ եղած կուում Ջոջ–Աղան սպանուում է, եւ Լեւոնը միւսակ տղաների հետ կուում է: Մեծ քանակութեամբ բեռներով զէնք է եղել. ազատելով հասնում է քաղաք:

Հաջի Լեւոնը արհեստով զինագործ էր: Քաղաքի արհեստանոցի մէջ գլխաւոր վարպետը նա էր: Նրա հետ աշխատում էին Ալէքսն ու Արմենակը, միւս Ջոջ–Աղան եւ Վարդան–Շահրաղը:

Շատ հետաքրքիր է այդ արհեստանոցը, որ, ի հարկէ, շարժական էր եւ գտնուում էր «Ղարաղաղում»՝ մեր յայտնի «Դրախտում»: Դա ներքնայարկի մի փոքրիկ, նեղ ու երկար մառան է եղել, մի դուռն ուղղակի դէպի դուրս, որը չէր բացուում աշխատանքների ժամանակ, եւ մի դուռն էլ դէպի ներսը, ուր կատարուում էր երթեւեկութիւնը: Դրսի տան կից կար մի փոքրիկ պատուհան, որի վերեւի մասը շարժական պահարան ունէր՝ զորձիքներն ու կիսատ մնացած զէնքերը տեղաւորելու:

Արհեստանոցում առհասարակ զիշերում էր Հաջի–Լեւոնը: Մառանի ներսի կիսում, վերեւի առաստաղի մօտ, չինել էր մի վերնայարկ եւ այնտեղ պառկում էր:

Շրջանի զիւղական, ինչպէս եւ կազմակերպական զէնքերը դալիս էին հոնտեղ նորոգուելու եւ յետ դառնալու:

Հաջի Լեւոնը կարողացաւ երկաթի կազմուածքով այդ տեղ տոկալ միայն մէկ ու կէս տարի, երբ հիւանդացաւ «դեղնացաւով», ինչպէս եւ Ալէքսը: Ստիպուած եղանք արհեստանոցը փակել: Լեւոնը երկար պառկեց ամերիկեան հիւանդանոցում. ոչինչ չ'օգնեց, ստիպուեցանք ուղարկել Կովկաս:

Հաճի Լեւոնին երկրորդ անգամ ես հանդիպեցի կրկին Վանում, 1915 թուին, երբ կամաւորները Վան մտան: Առաջին մտնողներից մէկն էլ Հաճի Լեւոնն էր. Քեռու ձիաւոր խմբի զեկավարն էր: Այնուհետեւ նրա խմբի զբոսների առջեւ տեղի տուեց Թշնամին դէպի Ռստան, Սարէ եւ Զէյվա, ուր եղաւ հռչակաւոր ճակատամարտը: (Շար.)

Հայ Քաղաքական Մտքի Դեգերումները

Գրեց՝ Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ

XXVII

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ

ԱՂԱՔԱԿԱՆ կազմակերպութեան մը ոյժին աղբիւրը ոչ թէ անոր տեսական, աշխարհայեցողական կառուցուածքը կամ ծրագիրն է, որ, ինչպէս ալ ըլլայ, միշտ թերի, խոցելի, շարունակ փոփոխութեանց ու վերաձեւաւորութեանց կարօտ պիտի ըլլայ, այլ անոր բարոյական դրամագլուխը, որ կարող է կուտակուիլ միմիայն զեկավար անհատներու եւ հետեւորդ զանգուածներու տոկուն ու անձնուէր աշխատանքի եւ անչափելի զրկանքներու ու զոհողութեանց միջոցով:

Բարոյական այդ դրամագլուխը անժխտելի, անվիճելի եւ բացարձակ արժէք մըն է, որ ժամանակի հետ կ'աճի եւ միշտ աւելի տիրական ու անդիմադրելի կենսագործ զօրութիւն մը կը դառնայ յետագայ սերունդներուն համար, եթէ միայն կուտակուած բարոյական դրամագլուխը շարաչար կերպով սիստեմատիկ վատնումի չենթարկուի զեկավարող տարրերու կողմէն:

Մեր քաղաքական կեանքի մէջ քիչ չեն եղած եւ այսօր ալ տակաւին շատ կան միամիտ մարդիկ, որոնք կը կարծեն, թէ բաւական է ունենալ քանի մը «գիտական» գաղափարներ ու կամենալ զանոնք շրջանառութեան մէջ դնել եւ արդէն կարելի է առանձին կուսակցութիւն մը կազմել, բազմութեանց համակրանքը շահիլ եւ զանոնք գործի մղել: Մինչդեռ մարդկային պատմութիւնը բիւրաւոր կենդանի օրինակներով ցոյց կուտայ, որ կարեւորը ոչ այնքան իրենք գաղափարներն են, որքան այդ գաղափարներու համար պայքարող անհատներու զոհողութեան ատիճանը եւ զօրութիւնը: Ով իր գաղափարին ընդունակ չէ նուիրելու իր ամբողջ կեանքը անվերապահօրէն, ով իր գաղափարի համար պատրաստ չէ մեռնելու, երբեք չի կարող շարժել ժողովրդական զանգուածնե-

© National Library of Armenia

ը, հետեւաբար անկարող է նաեւ կենսունակ կուսակցութիւն մը կազմել եւ տիրական դեր կատարել քաղաքական կեանքի մէջ: Զրկանքի, զոհաբերութեան, անձնուիրութեան անընդունակ մարդիկ, որքան ալ բարձր ըլլան իրենց գաղափարները, որքան ալ մեծ մտաւոր պաշար, հմտութիւն ու ձիրքեր ունենան, երբեք չեն կարող սեւական եւ խորունկ վստահութիւն ներշնչել իրենց շրջապատին եւ ուրիշները զոհաբերութեան ու անձնուէր գործի մղել:

Հայ իրականութեան մէջ, վերջին երեսուն-քառասուն տարիներու ընթացքին առաջ են եկեր բազմաթիւ քաղաքական կուսակցութիւններ, բայց քանի՞ն է անոնցմէ արմատ ձգել մեր ժողովուրդին մէջ, քանի՞ն է անոնցմէ բնդմնաւոր ու յարատեւ կեանք ունեցեր, վերջապէս քանի՞ն է անոնցմէ յարաճունորէն զարգացեր ու ամբողջ հասակով հասեր մինչեւ մեր օրերը:

Ոմանք՝ հաղիւ ծլած՝ թառամեր են: Ոմանք աշխոյժ մանկութեան օրերուն ինկեր են, կոտրեր են իրենց ձեռքն ու ոտքը եւ շարժելու համար անընդունակ դարձեր: Ուրիշները անունով են միայն գոյութիւն ունեցեր: Իսկ ոմանք ալ ջերմոցներու մէջ բուսած ծաղիկներուն պէս չեն կրցած դիմանալ բնութեան դաժան պայմաններուն եւ պէտք են ունեցած միշտ արհեստական միջոցներու՝ իրենց խղճուկ ու ամուլ գոյութիւնը կերպով մը քարշ տալու համար:

Այսօր ալ դեռ կան հրապարակի վրայ քանի մը կուսակցութիւններ, որոնք անվերջ բաժնուեր են, միացեր են, նորէն բաժնուեր են, նորէն միացեր են, փոխեր են շարունակ իրենց անունները, կարծելով, թէ անուններու մէջն է յաջողութեան գաղտնիքը: Բայց, աւա՜ղ, ոչինչ կրցեր է օգնել անոնց. միշտ մնացեր են խորթ, անհարազատ մեր ժողովրդի լայն զանգուածներուն, միշտ անկարող՝ անոնց սրտին խօսելու, միշտ անընդունակ՝ զանոնք շարժելու եւ նուիրաբերող աշխատանքի մղելու:

Միմիայն Հ. Յ. Դաշնակցութիւնն է, որ, երեսուն եւ երեք տարի առաջ ծնունդ առնելով, կարողացաւ զարգանալ անդադար եւ յարաճուն կերպով, շարունակ ծաւալուիլ, միշտ աւելի խոր ու հաստատուն արմատներ ձգել մեր ժողովրդի մէջ ամէն տեղ, թէ՛ Հայաստան եւ թէ՛ արտասահման, միշտ իր ափերուն մէջ պահել պայքարող հայութեան բազկերակը եւ տիրական թափով մը ստեղծագործել հայ ազգի նորագոյն պատմութիւնը,— առանց նուազագոյն չափով իսկ կորսնցնելու իր կենսունակութիւնը, հմայքը եւ ազդեցութիւնը մեր քաղաքական կեանքի մէջ:

Այսօր ալ, ինչպէս միշտ վերջին տասնամեակներու ընթացքին, Հ. Յ. Դաշնակցութիւնը միակ հայ քաղաքական կազմակերպութիւնն է, որ անբակտելի կապերով կապուած կը պահէ իրեն հայ ժողովրդի ամենէն գործօն, ամենէն ազատատենչ, ամենէն զոհաբերող եւ ամենէն մարտական տարրերը: Այսօր ալ, ինչպէս միշտ, Հ. Յ. Դաշնակցութիւնը միակ շարժիչ քաղաքական ոյժն է հայ ամբողջ իրականութեան մէջ կովկասէն սկսած մինչեւ Ամերիկա:

Հակառակ մեր կրած բոլոր դժնդակ ձախողանքներուն Հայաստանի մէջ, հակառակ տիրող ծանրագոյն պայմաններուն, որոնք աներեւակայելի չափով անպաստ են մեր կուսակցութեան համար, դարձեալ Հ. Յ. Դաշնակցութիւնը այն միակ ոյժն է այսօր, որուն կուրօրէն կը հաւատայ ու կը վստահի իր բախտը պայքարող հայութիւնը թէ՛ երկրի եւ թէ՛ գաղութներու մէջ: Մասնաւորապէս Հայաստանի սահմաններուն մէջ ապրող մեր ժողովուրդը այսօր աւելի, քան երբ եւ է, իր բոլոր ազգային բաղձանքներու իրագործումը կը ըսպասէ Հ. Յ. Դաշնակցութենէն՝ միշտ պատրաստ անձնուիրաբար հետեւելու անոր առաջին մարտահրաւէրին:

Վերցուցէք նոյնիսկ գաղութները, ուր այլասերման ազդակները այնքան զօրաւոր են եւ ուր այսօր մանաւանդ ա՛յնքան լճացած է հայ հանրային կեանքը, ա՛յնքան յուսալքուած է հայ մարդը: Եւ դարձեալ կը տեսնէք, որ նորէն Հ. Յ. Դաշնակցութիւնը ամենէն աւելի քիչ է ենթարկուեր յուսալքման եւ բարոյալքման, ամենէն աւելի մեծ չափերով է պահպաներ իր մարտական կորովը, նուիրաբերող ոգին, ազատութեան կրակը եւ լաւագոյն ապագայի հաւատքը:

Հետաքրքրուեցէք անգամ մը հայ կուսակցութիւններու տարբեր հանգանակութիւններով, ըրած նիւթական զոհաբերութիւններով,

© National Library of Armenia

որոնք նուիրաբերութեան գրեթէ միակ ձեւն ու անոնց տիրող ոգիին միակ չափանիշն են գաղութներուն մէջ, եւ դուք կը տեսնէք, որ անոնցմէ եւ ո՛չ մէկը կրնայ բաղդատուիլ Հ. Յ. Դաշնակցութեան ահագին զոհաբերութեանց հետ, եւ դուք կը համոզուիք, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը ընդունակ է ոչ միայն մեծագոյն բարոյական, այլ եւ մեծագոյն նիւթական զոհաբերութիւններ ընելու։ Անժխտելի իրողութիւն է, որ առանց Հ. Յ. Դաշնակցութեան գործօն մասնակցութեան անկարելի է որեւէ յաջող ձեռնարկ ազգային որեւէ ասպարէզի մէջ։ Ասիկա աղաղակող փաստ մըն է, զոր ի վիճակի չեն չխոստովանիլ նոյնիսկ մեր ամենէն կատաղի հակառակորդները։

Հ. Յ. Դաշնակցութիւնը իր անթիւ ու անհամար հերոսներու, անձնուրաց գործիչներու եւ գաղափարական մարտիկներու կենդանի օրինակով աննախընթաց խորութեամբ ու ընդարձակութեամբ մշակեց մեր ժողովրդի մէջ զոհաբերութեան կենսազործ ոգին, որ ամենէն մեծ աղբիւրն է ազգային ամէն յաղթանակի, հանրային ամէն առաջդիմութեան։ Իսկ զոհաբերութեան ու անձնուիրութեան յարատեւ զարգացման միջոցով բարոյական հսկայ յեղաշրջում մը առաջ եկաւ դարերու ստրկութենէն բթացած, անասնացած ու փոքրացած հայ մարդուն հոգիին մէջ։

Ազատութիւն, անկախութիւն, ընկերային արդարութիւն եւ շատ մը ուրիշ գեղեցիկ ու հրապուրիչ գաղափարներ քարոզած են եւ դեռ այսօր ալ կը քարոզեն գրեթէ բոլոր հայ քաղաքական կուսակցութիւնները։ Թո՛ղ տարօրինակ չթուի, եթէ ըսենք, որ Հ. Յ. Դաշնակցութեան եւ միւս հայկական կուսակցութիւններու միջեւ եղած գլխաւոր տարբերութիւնը իրապէս ոչ այնքան անոնց հետապնդած քաղաքական նպատակներու եւ գաղափարներու մէջ կը կայանար եւ կը կայանայ, որքան բարոյական ոյժի, յեղափոխական խառնուածքի, չինարար հաւատքի, ստեղծագործ վճռականութեան, նուիրաբերութեան եւ անձնազոհութեան չափին ու աստիճանին մէջ։

Կարելի է, առանց ծայրայեղութեան մէջ իյնալու, ըսել, թէ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրին, նպատակներուն եւ գաղափարներուն մէջ չկայ բան մը, զոր ունեցած չըլլան եւ քարոզած չըլլան կամ չունենան ու չքարոզեն նաեւ հայկական միւս կուսակցութիւնները։

Խօսքով կամ թղթի վրայ բոլորն ալ հայ ժողովրդի գոյութեան, ազատութեան եւ երջանկութեան համար կ'աշխատին. բայց գործով, արիւնի եւ զրկանքի, նուիրաբերութեան եւ անձնազոհութեան գնով վերջին երեսուն տարիներու ընթացքին միմիայն Հ. Յ. Դաշնակցութիւնն է, որ ծառայեր է եւ կը ծառայէ հայութեան ու անոր իտէալներուն։

Ասոր համար է, որ հայ ժողովուրդը ա՛յնքան անսահման հաւատ եւ վստահութիւն ունի հանդէպ Հ. Յ. Դաշնակցութեան, հակառակ վերջինիս գործած պատմական շատ մը սխալներուն, հակառակ մեր բոլոր անյաջողութիւններուն եւ յուսախաբութիւններուն. որովհետեւ ամէն մէկ հայ փորձով գիտէ, որ, եթէ հայ ազգի ամենէն դաժան պարտութիւնները կապուած են Հ. Յ. Դաշնակցութեան հետ, անոր հետ են կապուած նաեւ հայութեան մեծագոյն, հոյակապ յաղթանակները. որովհետեւ հայ մարդը բնազդով կ'ըմբռնէ, թէ վաղն ալ դարձեալ Հ. Յ. Դաշնակցութիւնն է, որ պիտի առաջնորդէ հայ ժողովուրդը դէպի նոր յաղթանակներ, դէպի նոր վերելքներ...

XXVIII

ԵՐԿՈՒ ՄՏԱՀՈՍԱՆՔՆԵՐ

Սկզբունքները, աշխարհահայեցողութիւնները, տեսական ծրագիրներն ու վերացական կառուցումները սովորաբար, եթէ չըսենք՝ միշտ, կը զբաղեցնեն, կ'ոգեւորեն, կը յափշտակեն ու կը շարժեն ժողովրդի մը շատ փոքրիկ, շատ բարակ շերտը միայն — անոր մտաւորական կոչուած տարրը, այն ալ աւելի՝ այդ տարրի երիտասարդ մասը գերազանցապէս։ Մինչդեռ հերոսական գործերը, զրկանքի ու նուիրումի, տանջանքի ու զոհողութեան կենդանի օրինակները կը վարակեն, կը ցնցեն, կը խանդավառեն ու կը շարժեն ժողովրդական լայն զանգուածները, երբեմն ամբողջ ժողովուրդը։

Մեր մտաւորականութիւնը, մասնաւորապէս Կովկասի մէջ, ռուսական ազդեցութեան տակ, հզօրապէս ենթակայ էր եւ դեռ է, թէեւ այժմ աւելի թոյլ չափով, ռացիոնալիստական

պատրանքներու եւ մեծապէս կը դերագնահատէ բանականութեան ու գիտակցութեան դերը հասարակական կեանքի մէջ։

Շատերու մէջ միամիտ ու պարզունակ հաւատք մը կար եւ մասամբ կայ տակաւին, թէ յաջողութեան, յաղթանակի ամենէն մեծ գրաւականն է լաւ մշակուած ծրագիրը, լաւ կազմուած բանաձեւը, լաւ սկզբունքը եւ լաւ աշխարհահայեցողութիւնը։

Այդպիսիներու աչքին ամէն մէկ թերութիւն կուսակցական ծրագրի մէջ գրեթէ բախտորոշ նշանակութիւն կը ստանայ։ Պէտք է ամէն բան յստակ եւ որոշ ըսուած ըլլայ, որպէսզի որեւէ թիւրիմացութիւն չպատահի, որեւէ տարակուսանքի տեղիք չտրուի։ Պէտք է ամենայն մանրամասնութեամբ կանխատեսուած ու ճշգուած ըլլան կուսակցական ծրագրին մէջ ոչ միայն ներկայի ու մերձաւոր ապագայի հրատապ խնդիրները, այլ եւ հեռաւոր ապագայի ընթացքը զծող բոլոր կէտերն ու հանգրուանները։ Չըլլայ թէ բան մը մոռցուի, կամ կէտ մը այդ հեռաւոր ապագային մշուշի մէջ մնայ։

Եւ ծրագիրը այսպիսով կը դառնար իրատեսակ աւետարան մը, որ կոչուած էր բոլոր հարցերուն պատասխան տալ (նաեւ հեռաւոր ապագայի մասին, միշտ այնպէս, ինչպէս աւետարանը հանդերձեալ կեանքի մասին) եւ ամէն մէկ պատասխան ալ դաւանանքի վերածել։

Մինչդեռ իրականին մէջ կեանքը կ՚ընթանայ իր սեփական ճանապարհով, անկախ՝ կուսակցական ծրագիրներէ, իսկ յաճախ նաեւ հակառակ՝ անոնց։

Ոչ միայն հեռաւոր ապագայի վերաբերեալ եղած կանխատեսութիւնները, այլ եւ մերձաւոր ապագայի մասին եղած ենթադրութիւնները յաճախ օդը կը ցնդին. կեանքը կը վազէ յանկարծ տարբեր ուղիով մը, հրապարակ հանելով նոր խնդիրներ, նոր պահանջներ, իսկ այնքան խնամքով ու հաւատքով կազմուած ծրագիրները անսպասելի կերպով կը մեռնին երբեմն ամբողջութեամբ, իսկ երբեմն իրենց կարեւոր մասերով։ Եւ այսպէս անհրաժեշտ կը դառնան ծրագրային վերանորոգումներ, տեսական նոր կառուցումներ, արժէքներու հիմնական վերագնահատութիւններ։

Այս բոլոր ճիգերու եւ փորձերու գլխաւոր ձգտումն է ամէն անգամ աւելի մօտենալ իրական կեանքին, աւելի որոշ կերպով ընդգրկել անոր մէջ թաղնուած հնարաւորութիւնները, աւելի ճշգրիտ ըմբռնել ու բանաձեւել անոր պայմանները, պահանջները եւ ուղիները։

Մեր տպրած ահաւոր փոթորիկներու եւ ցնցումներու հետեւանքով անհրաժեշտ դարձած վերագնահատումներու շարքին մէջ շատ կարեւոր տեղ մը կը բռնէ նաեւ կուսակցական ծրագիրներու վերագնահատութիւնը, որ հասկընալի պատճառներով կը կատարուի աւելի կուսակցական փակ ժողովներու մէջ, քան հրապարակի վրայ, մամուլի մէջ։ Պահանջը սակայն այսօր այնքան զօրաւոր է, որ վերագնահատութիւնը երբեմն անզուսպ կերպով դուրս կուգայ հրապարակ եւ համազգային քննութեան ընոյթ կը ստանայ։ Մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեան շարքերուն մէջ վերագնահատութեան պահանջը այսօր տիրական է դարձած, որովհետեւ Հ. Յ. Դաշնակցութիւնը միշտ ալ ամենէն աւելի մօտ է եղած մեր իրականութեան, հետեւաբար ամենէն աւելի սուր ու ստիպողական կերպով կը զգայ անոր մէջ կատարուած փոփոխութիւնները եւ այդ փոփոխութիւններէն բղխող անհրաժեշտութիւնները։

Վերջերս մեր մամուլի մէջ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի եւ աշխարհահայեցողութեան նուիրուած քանի մը ուշագրաւ փորձեր եղան։ Անոնք բոլորն ալ յատկանշական են այն տեսակէտով, որ կ՚արտայայտեն մեր կուսակցութեան մէջ գոյութիւն ունեցող եւ իրարու հետ հաշտ ապրող, բայց հիմնապէս տարբեր երկակիտերէ բղխող երկու գլխաւոր մտահոգութիւններ,— մէկը, որ գերազանցապէս ազգային է, եւ միւսը, որ գերազանցապէս ընկերվարական է։

Առաջին հոսանքի սքանչելի ձեւակերպումը կուտան Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ վարչապետ Յովհ. Քաջազնունին (իր՝ Ճակատամարտի մէջ անցեալ տարի տպուած «Ի՞նչ պէտք է ըլլայ մեր ուղին» յօդուածաշարքով եւ Հայրենիք ամսագրի այս թիւին մէջ սկսուած «Ազգ եւ Հայրենիք» գեղեցիկ ուսումնասիրութեամբ) եւ մեր տաղանդաւոր գրող Լեւոն Շանթը՝ Հայրենիք ամսագրի եւ օ-

© National Library of Armenia

բաթերթի մէջ այս տարի տպուած ա՛յնքան յափշտակիչ աշխատութիւններով՝ «Ի՞նչ է Ազգութիւնը» եւ «Մեր Անկախութիւնը»։

Իսկ երկրորդ հոսանքի արտայայտիչն է մեր շնորհալի երիտասարդ ընկեր Վահան Նաւասարդեանը՝ Հայրենիք ամսագրի մէջ հրատարակած իր «Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Ընկերվարական Վարդապետութիւնը» յօդուածով։ Ընկ. Նաւասարդեան կը ներկայացնէ կովկասի Դաշնակցական երիտասարդութեան մէկ խոշոր մասին մտայնութիւնը։

Ընկ. Լեւոն Շանթ անուղղակի կերպով միայն կը քննադատէ Հ. Յ. Դաշնակցութեան դրուած ծրագրին այս կամ այն մասը։ Անկախ որեւէ դրուած ծրագրէ, ան կը զարգացնէ իր մտքերը, արտայայտելով այն, ինչ որ զգացեր, խորհեր ու կամեցեր են իրապէս եւ այսօր ալ իրենց սրտի խորքին մէջ կը զգան, կը խորհին ու կը կամենան Հ. Յ. Դաշնակցութեան ամենալայն զանգուածները։ Այն, ինչ որ այնքան զմայլելի պարզութեամբ կ՚արտայայտէ Շանթ, եղած է եւ է իրօք Հ. Յ. Դաշնակցութեան իսկական, թէեւ թղթի վրայ չգրուած, բայց գրեթէ բոլոր Դաշնակցականներու սրտին մէջ դրոշմուած ծրագիրը, որ գործնականապէս, յաճախ անգիտակցօրէն, ղեկավարեր է մեր կուսակցութիւնը, երբեմն նոյնիսկ բացայայտօրէն հակառակ՝ գրուած ծրագիրներու թելադրութեանց։

Ընկ. Յովհ. Քաջազնունի սակայն, իր «Ինչ պէտք է ըլլայ մեր ուղին» յօդուածաշարքով, ուղղակի կերպով կը մօտենայ մեր ծրագրային խնդիրներուն եւ անմիջականօրէն կը ջանայ զանոնք հիմնական վերաձնահատութեան մը ենթարկել։ Յ. Քաջազնունի, ըստ երեւոյթին, մեծ կարեւորութիւն կուտայ գրուած ծրագրին եւ անհրաժեշտ կը սեպէ անոր փոփոխութեամբ զբաղիլ հանգամանօրէն, աշխատելով նոր ձեւակերպութեամբ մը աւելի մօտեցնել զայն մեր իրականութեան։

Յովհ. Քաջազնունի ընկերվարութիւնը աւելորդ կը նկատէ մեր ներկայ իրականութեան համար եւ նոյնիսկ պատրաստ է անկէ հրաժարիլ, եթէ մեր ազգային-քաղաքական ընթացիկ կեանքի պահանջները ստիպողական դարձնեն այդ։

Իսկ Վ. Նաւասարդեան, ընդհակառակը, ոչ միայն չի գոհանար Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի մէջ եղած սոցիալիստական տեսութիւններով եւ պահանջներով, այլ եւ կ՚ուզէ ճոխացնել զանոնք ամէն տեսակի մանրամասնութիւններով ու լրացումներով, թէկուզ ատոնք վերաբերուին մեզի համար չատ հեռաւոր ապագայի մը։ Այդպէս է, որ ընկ. Նաւասարդեան կը ջանայ առաջն առնել ապագայ ամէն թիւրիմացութեան եւ, այժմէն իսկ յստակօրէն ճշդելով ծրագրի ամէն մէկ կէտը, չատ որոշ եւ հաստատուն ընթացք մը տալ մեր յետագայ քաղաքական զարգացման։

Այն մտախմորումներու համար, որոնք տեղի կ՚ունենան մեր կուսակցութեան ծոցին մէջ, առանձնապէս բնորոշ են Յովհ. Քաջազնունիի եւ Վ. Նաւասարդեանի պատճառաբանութիւնները։ Ուստի աւելորդ չենք նկատեր քիչ մը աւելի հանգամանօրէն կանգ առնել անոնց արտայայտած մտքերուն եւ առաջարկներուն վրայ։

XXIX

ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ ՄԸ

Ընկ. Յ. Քաջազնունիի քաղաքական աշխարհահայեցողութիւնը հիմնական գծերով համապատասխան է ընկ. Լ. Շանթի մտքերուն։ Սակայն, ինչպէս պիտի տեսնէք, ընկ. Յովհ. Քաջազնունի, սնուած ըլլալով ռուսական միջավայրէն եւ Շանթէն աւելի հզօրապէս ենթարկուած ըլլալով ռուսական մշակոյթի ու ոգիի ազդեցութեան, տակաւին կրցած չէ իր վրայէն թօթափել այդ ազդեցութեան այն բոլոր հետքերը, որոնք հարազատ չեն հայութեան եւ նոյնիսկ Ռուսիոյ համար ալ ցնորական են։ Այս պատճառով է, որ իր այնքան առողջ ու խոհուն դատողութիւններուն մէջ երբեմն կը հանդիպինք ցաւագին հակասութիւններու եւ անհետեւողականութիւններու, որոնք չափով մը կը վնասեն իր չատ գործնական եւ չատ նպատակայարմար առաջարկներու ամբողջականութեան։

«Մեր երկիրը — կ՚ըսէ մեր պատկառելի ընկերը «Ի՞նչ պէտք է ըլլայ մեր ուղին» յօդուածաշարքի 4-րդ գլխուն մէջ (Տե՛ս Ճակատամարտ, 2 յունիս, 1922 թ.) — տնտեսապէս վերաշինելու, ուրեմն եւ պետական կեանքը ա-

© National Library of Armenia

պահովելու միակ միջոցն ու ճանապարհը՝ անհատական տնտեսութեան վերականգնումն ու բարգաւաճումն է:

«Անհատական տնտեսութիւնը պահանջում է մասնաւոր կապիտալի անձեռնմխելիութիւն, իսկ մեր ձախորդ պայմաններում՝ ոչ միայն անձեռնմխելիութիւն, այլ նաեւ խրախուսանք ու պետական պաշտպանութիւն:

«Ահա այն հրամայական պահանջը՝ որ հակառակ մեր բնակերվարական դաւանանքին՝ պէտք է կատմի այսօրուայ մեր ներքին, բնակերային քաղաքականութեան հիմքը:

«Եւ մենք պէտք է բռնենք այդ ճամբան վըճռականօրէն, առանց տատանումների»:

Ապա, զարգացնելով իր միտքը, Յ. Քաջազնունի կը շարունակէ քիչ մը վարը. «Մեր պայմանների մէջ կուիւ յայտարարել շահագործող կապիտալին՝ կը նշանակէ պարզապէս ինքնասպանութիւն կատարել: Ոչ միայն չպիտի յայտարարենք կուիւ, այլ ինքներս պիտի որոնենք, կանչենք, շահագրգռենք կապիտալը»:

Նոյն յողուածաշարքի 5-րդ գլխուն մէջ մեր ալեղարդ ընկերը, զգալով, որ, եթէ այդպէս վարուինք, ընկերվարութիւնը մեզի համար բոլորովին աւելորդ եւ նոյնիսկ անմարսելի բան մը պիտի ըլլայ, կը տրամաբանէ.

«Կուսակցութիւնը եւ իր ծրագիրը ինքնանպատակներ չեն: Երէ հայ ժողովուրդի եւ մանաւանդ հայ աշխատաւորութեան կենսական շահերը պահանջում են, որ Դաշնակցութիւնը, այսօրուայ համար, մի կողմ դնի իր դաւանանքներն ու ծրագիրը,— նա քաջութիւն պէտք է ունենայ այդ եւս անելու»:

Եւ այս զոհողութիւնը, կամ, ինչպէս ինք կ'ըսէ, կոմպրոմիսը Հ. Յ. Դաշնակցութիւնը պարտաւոր է ընել յանուն այն միակ գաղափարին, որուն վրայ պիտի կենդրոնացած ըլլան ոչ միայն մեր կուսակցութեան, այլ եւ հայութեան ծառայող բոլոր քաղաքական խմբակցութեանց ամբողջական ջանքերը, մինչեւ որ այդ գաղափարը իրականութիւն դառնայ:

Այդ հրատապ գաղափարն է ազատել հայ ժողովուրդը «օտար գերութիւնից» եւ ստեղծել «անկախ քաղաքական կեանք»:

Այս առողջ մտքերը, որոնք արտայայտուած են այնքան պարզ, որոշ եւ խտացեալ կերպով, միանգամայն հետեւողական են եւ ընդունելի, իսկ մեր խորին համոզումով, նոյնիսկ անվիճելի:

Բայց ընկ. Յ. Քաջազնունի կը չեղի իր բռնած չիտակ ուղիէն եւ հակասութիւններու մէջ կ'ինկնայ, երբ կ'ուզէ պահպանել ռուս սոցիալիստա-յեղափոխականներէն վերցուած մեր ծրագրի ամենէն ձախորդ, ամենէն անդործնական եւ ամենէն հակակապիտալիստական մէկ կէտը՝ հողի համայնացման պահանջը:

«Հայաստանում կայ մի կապիտալ միայն, — կ'ըսէ մեր յարգելի ընկերը,— որ կարող է եւ պէտք է սեփականացուի այսօր եւեթ, ապագայում համայնացնելու հեռանկարով:

«Այդ կապիտալը հողն է, իր վրայ եւ իր մէջ պարունակուող բոլոր բնական հարստութիւններով...»

Եւ աւելի յստակօրէն բանաձեւելով իր միտքը, կ'եզրակացնէ.

«Ուրեմն հողը, իբրեւ կապիտալ պիտի յայտարարուի ու մնայ պետական կամ ժողովրդական սեփականութիւն եւ միայն օգտագործելու անվարձ իրաւունքն է, որ պիտի յատկացուի աշխատաւոր գիւղացիութեան»: (Տե՛ս Հակատամարտ, 2 յունիս, 1922 թ.)

Բայց, ըստ երեւոյթին, հեղինակի մտքին մէջ արդէն կասկած մը կայ այս պահանջի նըպատակայարմարութեան մասին:

Այդ կասկածը պարզապէս կը յայտնուի ընկ. Յ. Քաջազնունիի հետեւեալ յատկանշական վերապահումէն. «Եթէ այս ընկերվարական սկզբունքը (հողի համայնացումը կամ պետականացումը) իր կիրառութեան մէջ չի յարուցանի անմիջական եւ իրական արգելքներ կամ դժուարութիւններ անհատական մանր տնտեսութիւնը վարելու համար,— այսինքն՝ եթէ հողային օրէնքը մշակուած լինի այնպէս, որ չկաշկանդի անհատ արդիւնաբերողի նախաձեռնութիւնը, չկասեցնի արդիւնաբերութիւնը զարգացնելու եռանդն ու տենչը, նա անխոով կ'ընդունուի գիւղացիութեան կողմից ու լիովին կը բաւարարի նրա հասունացած պահանջը»:

Բայց ոչ նուազ ուշագրաւ է ե՛ւ հետեւեալ նախադասութիւնը. «Նոյն նպատակի (այսինքը՝ երկրի տնտեսութիւնը վերաշինելու եւ ապահովելու) համար անհրաժեշտ է, որ՝ գիւղացիական մանր տնտեսութեան հետ միասին

ու զուգընթացաբար՝ մեր երկրում ծիլ տայ խոշոր կապիտալիստական գիւղատնտեսական արդիւնաբերութիւն»:

Իր այն կատարելապէս ճիշդ հիմնական մտքին դէմ, թէ միմիայն կապիտալի եւ անհատական տնտեսութեան միջոցով կարելի է վերաշինել մեր երկիրը, ընկ. Յ. Քաջազնունի չարաշար կը մեղանչէ, երբ կ'ուզէ անմիջապէս իրականացուած տեսնել հողի համայնացումը կամ պետականացումը,— այսինքն՝ շատ կասկածելի պայման մը, որ եղեր է եւ է այսօր ալ ամենէն վիճելի հարցը ընկերվարական եւ տնտեսագիտական գրականութեան մէջ:

Հողի համայնացման պահանջը, որ ռուսական մտքի ազդեցութեան ենթակայ ընկերվարական շարք մը կուսակցութեանց, ինչպէս նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան նուազագոյն ծրագրի մէջ ալ մտած է նոյնիսկ, բղխած է այն մեկնակէտէն, թէ Ռուսիոյ նման երկիրներու մէջ, ուր գոյութիւն ունի հողային համայնք, ընկերվարութիւնը կարող է դիւրութեամբ իրականանալ հողային տնտեսութեան մէջ եւ անոր միջոցով ալ ազդել ճարտարարուեստի վրայ:

Ռուս ժողովրդասէրներուն համար, որոնցմէ առաջ եկան սոցիալիստ յեղափոխականները, հողային համայնքը դարձած էր ֆետիշ մը, պաշտամունքի սրբազան առարկայ մը, որու պահպանումը եւ զարգացումը Ռուսիոյ ընկերային տնտեսական առաջադիմութեան գլխաւոր հիմքը կը նկատուէր: Ռուս սոցիալիստները կը հաւատային, թէ կարելի է, օգտակար է, հետեւաբար եւ անհրաժեշտ է արգիլել կապիտալիզմի մուտքը ռուս գիւղի մէջ: Անոնք կը կարծէին, թէ Ռուսիոյ ընկերային-տնտեսական զարգացման ճամբաները հիմնապէս տարբեր են Արեւմտեան Եւրոպայի երկիրներէն եւ թէ Ռուսիա, չնորհիւ իր հողային նախնական համայնքի գոյութեան, կարող է, առանց ճաշակելու կապիտալիզմի բոլոր չարիքներն ու բարիքները, ուղղակի անցնիլ ընկերվարական տնտեսութեան:

Ճակատագրի տարօրինակ հեգնանքով ռուս բոլշեւիկներն էին, որ տարիներ շարունակ կատաղիօրէն պայքարելէ ետքը սոցիալիստ-յեղափոխականներու ոչ-մարքսիստական ըմբռնումներուն դէմ հողային հարցի նկատմամբ, երբ իշխանութեան գլուխ անցան, իւրացուցին իրենց հակառակորդներու ծրագիրը հողի սոցիալիզացիայի կամ համայնացման մասին եւ բռնի ոյժով ջանացին իրագործել զայն:

Այս փորձի տխուր արդիւնքները յայտնի են այնքան, որ աւելորդ կը նկատենք անոնց վրայ կանգ առնել: Հողի համայնացումը վիժեց եւ ոչ միայն չդարձուց գիւղացիի վիճակը, այլ ընդհակառակը, վերջնականապէս քանդեց, քայքայեց անոր խղճուկ տնտեսութիւնը:

Ճիշդ է, ընկ. Յ. Քաջազնունի առ այժմ կ'ուզէ հողի անհատական սեփականութեան իրաւունքը միայն խլել գիւղացիէն եւ հողը պետական սեփականութիւն դարձնել միայն, այսինքն՝ հողը դուրս հանել կապիտալիստական շրջանառութենէն, արգիլել ամէն առուծախ անոր մասին: Այնպէս մինչեւ հողի կատարեալ համայնացումը, այսինքն՝ ոչ միայն համայնական ձեւով հողին տիրելու, այլ եւ մշակելու դրութիւնը, դեռ շատ մեծ ու թերեւս անանցանելի ճամբայ մը կայ, բայց այսու հանդերձ ընկ. Քաջազնունի այժմէն իսկ հնարաւոր կը համարէ հարթել այդ ճամբան:

Եւ հոս է գլխաւոր վտանգը:

Տնտեսագիտութեան մէջ արդէն անվիճելիօրէն հաստատուած իրողութիւն մը կարելի է նկատել, որ հողային մանր սեփականատիրական տնտեսութիւնը կապիտալիստական երկիրներու մէջ ոչ միայն քայքայուելու որեւէ հակում ցոյց չի տար, ինչպէս ճարտարարուեստի մէջ, այլ ընդհակառակը երեւան կը բերէ ապշեցուցիչ կենսունակութիւն:

Հողագործութեան մէջ հողի մասնաւոր, անհատական սեփականութիւնը տնտեսութեան ամենէն կարեւոր ազդակներէն մէկն է: Զրկել գիւղացին իր կտոր մը հողին անհատական սեփականութեան իրաւունքէն կը նշանակէ մէջտեղէն վերցնել այն գլխաւոր մղիչ ոյժը, որ կը ստիպէ զայն ոչինչ խնայել իր հողը մշակելու եւ չէնցնելու համար: Ուրիշի, թէկուզ պետութեան հողին գիւղացին բոլորովին տարբեր աչքով պիտի նայի, քան իր սեփական հողին:

Գիւղացին ամէն պարագայի տակ միշտ պիտի ձգտի հողին սեփականատէրը դառնալ: Մասնաւոր սեփականութիւնը անոր բնազդն է եւ միաժամանակ իտէալը, եւ չի կայ որեւէ

© National Library of Armenia

ոյժ, որ կարենայ խեղդել անոր մէջ այդ բը-նազդն ու խոչալը:

Բոլշեւիկեան իշխանութիւնը ճնշման իր անհաւոր միջոցներով անդամ չկրցաւ համայնական զգացումները ամրացնել ռուս գիւղացիին մէջ, այլ ընդհակառակը աննախընթաց թափով զօրացուց անոր մէջ անհատական սեփականութեան ձգտումը:

Երբեք պէտք չէ մոռնալ, որ գերազանցապէս հողագործական երկիրներու մէջ, ինչպիսին է նաեւ Հայաստանը, ուր գիւղացիութիւնը բնակչութեան ահագին մեծամասնութիւնը կը կազմէ, եթէ տիրող կարգերը դեմոկրատական են, չի կարող ըլլալ քաղաքական ոյժ մը, որ ի վիճակի ըլլայ պարտադրել գիւղացիութեան հրաժարուելու հողի անհատական իրաւունքէն ու ձգտումէն: Անդամ բռնապետական կարգերու մէջ իշխանութիւնը անկարող է այդ ընել յարատեւօրէն:

Կապիտալիզմը կամ դրամատիրական տընտեսութիւնը չի կարող անարգել կերպով զարգանալ երկրի մը մէջ, որուն ամենէն մեծ կապիտալը՝ հողը պետականացման թէ համայնացումի միջոցով անշարժ վիճակի մէջ է դրուած, այսինքն՝ դրամատիրական շրջանառութենէն դուրս է հանուած կատարելապէս:

Հողի պետականացումը կամ համայնացումը այն ձեւով, ինչպէս կ'ուզէ ընկ. Ց. Քաջազնունի, անկարելի կը դարձնէ նաեւ խոշոր հողագործական տնտեսութեան զարգացումը եւ նոյնիսկ գոյութիւնը:

Ինչո՞ւ: Որովհետեւ, հողի պետականացման կամ համայնացման պարագային, ինչպէս կ'ըսէ մեր յարգելի ընկերը, «գիւղացին պէտք է ունենայ իր տրամադրութեան տակ այնքան հող, որքան ի վիճակի է մշակելու, առանց հողի գինը հատուցանելու եւ առանց հողային տուրք վճարելու»:

Ուրիշ խօսքով, եթէ մէկը կամենայ աւելի շատ հող ունենալ, քան կարող է ինքը մշակել, խոշոր հողագործական տնտեսութիւն մը առաջ բերելու համար, իսկոյն պիտի հանդիպի անյաղթելի արգելքի յանձին ամենազօր պետութեան, որ պիտի առաջարկէ բաւականանալ միայն այնքան հողով, զոր մէկը կարող է մշակել իր ընտանիքի հետ միասին, առանց վարձու աշխատանք գործածելու:

Զարմ է, որ այսպիսի պայմաններու մէջ չի կարող զարգանալ խոշոր հողային տնտեսութիւն: Մինչդեռ ընկ. Ց. Քաջազնունին անհրաժշտ կը գտնէ, որ «մեր երկրում ծիլ տայ նաեւ խոշոր կապիտալիստական գիւղատնտեսական արդիւնաբերութիւն»:

Եւ յետոյ ի՞նչպէս պատկերացնել գերազանցապէս հողագործական երկրի մը պետական բիւջէն, եթէ պետութիւնը՝ ամբողջ հողին տէրն ըլլալով հանդերձ՝ իրաւունք չպիտի ունենայ ոչ վարձ առնել հողէն եւ ոչ ալ որեւէ հողային տուրք նշանակել: Ի՞նչպէս պիտի կառավարուի ֆինանսապէս հողագործական երկիր մը, եթէ պետութիւնը տուրքերէ ազատ կամ գրեթէ ազատ պահէ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը՝ գիւղացիութիւնը:

Եթէ ընկ. Ց. Քաջազնունի քիչ մը աւելի հետեւողական ըլլար եւ բոլորովին ազատ ռուս ընկերային ցնորքներէ, կասկած չունինք, որ անհատական սեփականութեան եւ կապիտալի մասին ունեցած իր առողջ մտքերը պիտի տարածէր նաեւ հողի վրայ ու թերեւս ամենէն առաջ հողի վրայ: Այն ատեն իր միւս այնքան գործնական եզրակացութիւններու վրայ պիտի աւելցնէր և՛ կատարեալ հրաժարումը հողի պետականացման կամ համայնացման ուտոպիական պահանջէն, քանի որ այդ պահանջը անհաշտելի է կապիտալիզմի բնականոն ու անարգել զարգացման հետ, որ ամէն տեսակ կապիտալի կատարեալ ազատութիւն կը պահանջէ:

Եթէ ճիշդ է ընկ. Քաջազնունի հիմնական միտքը, որ միմիայն անհատական սեփականութեան եւ կապիտալի միջոցով կարելի է վերաշինել մեր երկիրը, ապա ուրեմն պէտք է մէկ կողմ դնել նաեւ հողի պետականացման կամ համայնացման պահանջը:

Այսպէս է, որ կարելի է կատարեալ պարզութիւն մտցնել մտքերու մէջ եւ միանգամայն յստակ, հետեւողական ու շիտակ ուղի մը գծել մեր ապագայ քաղաքականութեան համար:

Հողի համայնացումը ամենամեծ ընկերային ցնորքներէն մէկն է, որմէ պէտք է հրաժարիլ օր առաջ՝ մեր երկրի տնտեսական զարգացման առջեւ եղած արգելքները վերցնելու համար:

Այժմ անցնինք ընկ. Վ. Նաւասարդեանին:

(Շարունակելի)

© National Library of Armenia